

Լ. Մ. ՄԱՐԿԻԱՆՈՎ, Բ. Հ. ԽՈՉՈՅԻՐՅԱՆ
Բ. Ա. ԵՍԻՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՀԱՅՈՐ

1

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРИА

В. Д. АРАКЕЛЯН, А. А. ХАЧАТРЯН,
С. А. ЭЛОЯН

СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК

ТОМ I

ФОНЕТИКА
И ЛЕКСИКОЛОГИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1979

U. 70

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ՀՐ. ԱՅՈՒՅՅԱԿ ԱՆՈՒՆ ԼԵՁՊ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Գ. ԱՐԱԲԵԼՅԱՆ, Ա. Հ. ԽԱԶՍԲՅԱՆ,
Ս. Ա. ԷԼՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ

ՀԱՏՈՐ I

ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

863



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՈ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1979

«ժամանակակից հայոց լեզու» աշխատության անպիս հաստատում ընդգրկված են «Հնչյունարանություն» և «Բառագիտություն» բաժինները, որոնք ժամանակակից հայերենի հնչյունարանական ու բառագիտական ուսումնասիրությունների յուրատեսակ ամփոփումն են: Այստեղ լեզվական նոր և հարուստ փաստերով քննվում են ժամանակակից հայերենի հնչյունարանությունը, հնչյվաբանությունը, հնչյունափոխությունը, այլև իմաստարանությունը (բառի կեր և իմաստի փոխարարելությունը, բառիմաստի փոփոխությունը), բառապաշարը և բառակազմությունը (բառաբարդումն ու երա սեռանկերը, ածանցումը, հարգումը): Աշխատության մեջ, մասնավորապես ընդգրկված են հնչյունարանության, իմաստարանության և բառակազմության մեջ կատարված անդաշարների սովետական շրջանում, բացահայտված և՛ մի շարք նոր իրողություններ, և շատ հարցեր առանձին նոր մեկնություն ու լուսարանություն:

«Հնչյունարանության և բառագիտության» հատորը գրել են՝
Ա. Ա. ԿԱԶՏՏՅԱՆԸ (Հնչյունարանություն և Հնչյվաբանություն):
Վ. Գ. ԱՌԱՔՆՅԱՆԸ (Հնչյունափոխություն), Ս. Ա. ԷՍՅԱՆԸ (Բառագիտություն):

Պատասխանատու խմբագիր բանասիրական գիտ. դրկտոր Ե. Ա. ՊԱՌՆԱՅԱՆ

Իրերը հետադարձագրված են Երեւանի գրախաներ բանասիրական վիտ. ինկնամունը Ք. ՂԱՐԱՅՑՑՅԱՆԻ և Հ. ՕՂՆՅԱՆԸ

Հ Ն Զ Յ ՈՒՆ Ա Ր Ա Ն ՈՒ Ք Յ ՈՒՆ

1. ՀՆԶՅՈՒՆԱՐԱՆՈՒՅՑՈՒՆԸ, ԵՐԱ ԿԵՒՈՐՆԵՐՆ ԵՒ ԿՊԱՏԱՆԵՐԸ

§ 1. Լեզվի հնչյունային կողմը նրա արտահայտության պլանն է կամ նրա նյութական կողմը՝ ի հակադրություն բովանդակության պլանի, որը զործ ունի իմաստների, մտքերի, փաստերի, իրադարձությունների, այսինքն այն ամենի հետ, ինչին աննշվում է մարդիկ իր ստորյա կյանքում և արտացոլում լեզվի մեջ:

Հնչյունարանությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է մարդկային լեզվի բոլոր արտասանական միջոցները, որոնցով կազմավորվում է խոսքը: Սրանց թվին են պատկանում հնչյուններն ու նրանց միացությունները, վանկի ու հնչաբառի կառուցվածքը, հնչերանդը և այլն:

§ 2. Նեղ առումով հնչյունարանությունը զբաղվում է հնչյունների արտաբերման, նրանց ձայնարանական հատկանիշների ուսումնասիրությամբ, այսինքն՝ հնչյունների նկարագրմամբ ու դասակարգմամբ: Մինչդեռ լայն առումով հնչյունարանության ոլորտի մեջ մտնում են ոչ միայն հնչյունների կազմախոսությունը և ձայնարանությունը, այլև հնչյվաբանությունը, այն դիտաճշույթը, որը զբաղվում է հնչյունների գործառական կողմով, այլ կերպ ասած՝ ուսումնասիրում է հնչյունների գերբ լեզվի իմաստակիր միավորների կազմավորման գործում:

§ 3. Լեզվաբանության զարգացման շնորհիվ փաստորեն առաջացել են երկու առանձին դիտաճշույթեր՝ հնչյունարանություն և հնչյվաբանություն, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես ուսումնասիրման առարկայի նպատակադրմամբ, այնպես էլ կիրառվող ուսումնասիրման եղանակների օգտագործումով: Ի՞նչն հնչյունարանության օբյեկտը խոսքն է իր տարրի ու բազմապիսի գրանորոշմերով, այսպ հնչյվաբանու-

ժ 703(ՅԶ)-79 62-27
70101

թյան ուսումնասիրության առարկան լեզուն է, նրա օրինաչափություններն ու կառուցվածքը: Այս է պատճառը, որ որոշ լեզվաբաններ (Քոլոնն դե Կուրտենն, Ֆ. Մուչյալը, Ն. Տրուբեկովը, և. Ոլմսկն) առաջ են քաշել այս երկու գիտաձևադերի ինքնուրույնության ու անկախության գրույթը:

Հնչյութաբանությունը նոր գիտություն չէ: Կարելի է ասել, որ այբուբանների ստեղծումը և ուղղագրությունը հնում գոյացվեցում էին երբեմն շատ մանրամասն ու հմուտ հնչույթական վերլուծությունների հետ: Այնուամենայնիվ հնչյութաբանությունը որպես ինքնուրույն գիտաձևույ սկսեց դարգանալ Եվրոպայում ու Ռուսաստանում միայն XIX դ. վերջերիս և XX դարի սկզբներին:

§ 4. Հնչյունաբանությունը պրազմում է ոչ միայն հնչյունների նկարագրումը ու դասակարգումը, այլև ուսումնասիրում է խոսքային ավելի մեծ միավորները՝ վանկը, հնչարարը, հնչաշարույթը, հնչադասությունը և դրանց ամենատարբեր գրեւ-բաները՝ կապված խոսքի տեսչի ու սիմիլի հետ, դադարները և այլն: Այն բոլոր երևույթները, որոնք հանդես են գալիս վանկի, բառի և շարույթի սահմաններում (կցույթ, շեշտ, հնչերանգ), մրտնում են օպրոտոգրիա հասկացության մեջ: Դրանց արտասանվում են ոչ մեկ ինքնուրույն, այլ հնչյունների հետ միասին, կարծես ալե-լանալով նրանց, և միայն որոշ լեզվաբանական վերացարկմամբ է հնարավոր նրանց առնատումը հնչյունական շղթայից: Քերևս այս է պատճառը, որ լեզվաբանության մեջ վերջերս ավելի դորժամական է վերահասույթային միավորների անբովինի գործածությունը այս երևույթների ընդհանուր բնութագրման համար:

Այսպիսով, հնչյունաբանությունը այս առումով պրազմում է լեզվական իմաստների արտահայտման քոլոր հնչյունային միջոցների ուսումնասիրությամբ ու նկարագրմամբ, ինչպես նրանց լեզվական դերի, այնպես էլ նրանց արտաբերության ու հնչման տեսակետից:

§ 5. Վերջին տասնամյակներում տեխնիկայի ու ճշգրիտ գիտությունների աննախընթաց առաջընթացի հետևանքով մեծ զարգացում ստացավ և հնչյունաբանությունն այն մասնաճյուղը, որը սերտորեն կապված է քնական գիտությունների հետ: Դա վորժանապկան հնչյունաբանությունն է, որը նկարանով նոր մեթոդներ ու սարքեր, թափանցեց խոսքի շուսումնասիրված խորքերը, առաջ

քաշեց նոր պրոբլեմներ և հարցադրումներ, ճշտեց ու պարզարանեց հնչյունաբանական շատ կիճուտ հարցեր:

§ 6. Մյուս մասնաճյուղը, որը սերտորեն կապված է լեզվի պատմության հետ, պատմական հնչյունաբանությունն է, որի նպատակն է վեր հանել հնչյունական համակարգի փոփոխությունները լեզվի զարգացման տարրի փուլերում: Մեզանում հնչյունական փոփոխությունները հնչույթայիններից տարբերակելու առաջին լուրջ ուսումնասիրությունը կատարել է պրոֆ. է. Ազալանը իր «Գրարարի բերականությունն աշխատության մեջ, որտեղ բացահայտվել են հնչույթային այն բոլոր փոփոխությունները, որոնք օտեն համակարգային բնույթ և կարևորագույններն են լեզվի զարգացման տեսակետից»:

§ 7. Տարբեր լեզուների հնչյունական կազմի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, նրանց նմանությունների ու տարբերությունների հայտնաբերումը, ինչպես նաև լեզվի հնչյունական փոփոխությունների, օրինաչափությունների բացահայտումը մշտնում է ընդհանուր հնչյունաբանության խնդիրների մեջ: Արդեն գոյություն օտենն առանձին հազող փոքր բնդհանուր հնչյունաբանության ուղղություն, սակայն ժամանակակից լեզվաբաններից շատերի կարծիքով անհրաժեշտ է ոչ թե ձգտել գտնելու լեզուների միջև գոյություն ունեցող և երբեմն էլ ընդդժմող տարբերությունները, այլ բնդհակասակը՝ գտնել լեզվի համընդհանուր առանձնահատկությունները (այսպես կոչված ունիվերսալները): Այդ ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս դանելու լեզվի հիմքում բնկած համամարդկային լեզվական օրինաչափությունները, որոնք հետզհետե մասնապատվելով առանձին լեզուների հնչյունային տարբերություններով՝ ստեղծել են գոյություն ունեցող լեզվավիճակը:

§ 8. Ի տարբերություն ընդհանուր հնչյունաբանության, մի որևէ լեզվի հնչյունական համակարգի նկարագրությունը, նրա օրինաչափությունների բացահայտումը կազմում է ավլալ լեզվի հնչյունաբանության առարկան:

Ներկա ուսումնասիրության մեջ մանրամասն քնվում են հաներին հնչույթային համակարգի միավորները, ինչպես նաև նրանց հիմքում բնկած տարբերակչ հատկանիշները: Ժամանակակից գրական հայերենի հնչույթաբանական վեր-

յութությունը կատարվել է հազվի առկելով հնչյունների իմաստա-տարրերի փոփոխությունները, որոնք լեզվի գործառնության մեջ, խոսքում նրանց կրած փոփոխությունները, նման վերլուծությունը հնարավորու-թյուն է ապահովել բացահայտելու ոչ միայն լեզվի հնչյունական մա-կարգովում կատարված փոփոխությունները, այլև նշելու նրա կարգավորում միտումները: Ընդհանրապես առանց հելլոնաքանա-կան վերլուծության հնարավոր չէ ներկայացնել որևէ լեզվի հնչյու-նական պատկերը:

Եթե մենք այժմ կատարված հնչյունաբանական ուսումնասի-րություններում արվում էր հնչյունների նկարագրությունը և դա-սակարգումը բառ արտաբերության և անտեսվում էր հնչյունների ֆիզիկական կողմը, ապա այստեղ խոսքի հնչյունները ներկայաց-վում են թե՛ որպես արտասանվող միավորներ և թե՛ որպես ձայ-նալիքի տառանդաններ:

Վերջին տասնամյակում ՀՍՍՀ ԳԽ լեզվի ինստիտուտի հըն-չյունաբանության լաբորատորիայում կատարված ուսումնասիրու-թյունների շնորհիվ հնչյունների արտաբերական կողմի նկարա-գրություն մեջ նույնպես արվել են որոշ ճշտումներ ու փոփոխու-թյուններ, որոնք վերաբերում են ինչպես հայերենի ձայնավորնե-րին, այնպես էլ կիսաշփականների ու շփականների մի մասին: Մանրամասն ուսումնասիրվել են հայերենի հնչյունական համա-կարգի բոլոր անդամների ձայնաբանական հատկանիշները, ինչ-պես նաև հնչյունական շղթայում նրանց կրած փոփոխությունները:

§ 9. Արտասանվածք մարզու խոսողական գործարանների կողմից կատարվող մի շարք բարդ գործողությունների արդյունք է Ուսումնասիրության նպատակով խոսողությանը կարելի է ներ-կայացնել որպես իրար հետ շաղկապված, բայց որոշ առումով ինքնուրույն փուլեր, որոնք հիմնականում չըբան են:

Ամենից առաջ մարզու ուղեղում առաջանում է մի որևէ միտք, որը ձևավորվում է աշխարհ լեզվի քերականական կանոններով:

Այնուհետև նյարդային համակարգի միջոցով այդ միտքը հա-ղորդվում է այսպես կոչված արտասանական գործարաններին, որոնք բնօրնելով որոշակի զիջքեր և կատարելով սովորական գարձած շարժումներ՝ առաջացնում են խոսքի հնչյուններ: Այս նկերող (արտաբերական) փուլը լեզվաբանության մեջ կոչվում է ձայնաթոսություն կամ հնչյունների կառավարություն (ֆիզիո-

լոգիա): Ենեք, որ մինչև այժմ հնչյունների լեզվաբանական դա-սակարգում համար հիմք է ծառայել հենց արտաբերական կողմը:

§ 10. Խոսքը, լինելով երկհղմանի գործողություն, չի առ-մանափակվում այս երկու փուլերով: Արտասանական գործարան-ների շարժումների հետևանքով առաջանում են օդի ալիքան նա-տանդաններ, որոնք ընկալվում են լսողի կողմից որպես որոշակի ձայնի: Ինչպես բնության մեջ զբոսիչը ունենցող այլ ալիքները, այնպես էլ ձայնալիքը օդի մեխանիկական տատանում չէ, այլ օդի մնչման և խտացման փոփոխություն: Ձայնալիքի տարածումը օդում նման է այն ալիքներին, որոնք առաջանում են ջրի մակերև-սին նրա մեջ որևէ առերկա գցելու հետևանքով: Ի տարբերություն ջրի ալիքների, ձայնալիքը տարածվում է ոչ միայն մակերեսով, այլև՝ խորությամբ:

§ 11. Հարցող կարևոր փուլը արտասանվածքի ընկալումն է լսողի կողմից: Վերջին տասնամյակներում զգալի առաջընթաց է նկատվում այս հարցի ուսումնասիրման գործում: Մակայն ձայնա-լիքի ընկալման և խոսքի համազորման պատկերը մարզու ուղեղում դեռևս լիովին պարզ չէ: Եվ մինչև այժմ էլ վիճելի հարց է, թե արդյոք ընկալման նվազագույն միավորը հնչյունն է, թե վանկը:

Հայտնի է, որ մարզու ուղեղում ընկալվող խոսքը ենթարկ-վում է սկզբում կոպիտ, այնուհետև ավելի նուրբ վերլուծության: Հայտնի է նաև՝ որ մարզու մտա խոսողությունը և լսողույնու-նը անմիջապես հետադարձ կապի մեջ են, և մարդը խոսողության ընթացքում միշտ լսում է իրեն, իսկ հարկ եղած դեպքում կատա-րում համապատասխան ճշտում:

Եթե ուղեղի գործունեությանը զբաղվում են հոգեբանությունը և ֆիզիոլոգիան, ապա լեզվաբանություն հետաբերություն անի-ջական առերկան արտասանվածքի արտաբերական և ֆիզիկական նկարագրությունն է, ինչպես նաև հնչյունների գործողությունը լեզվական համակարգում: Մակայն լեզվի հնչյունային համակարգի ուսումնասիրությունը չի կարելի կատարել առանց հստակ պատ-կերացում ունենալու արտասանական գործարանների և նրանց աշ-խատանքի մասին: Այդ իսկ պատճառով տալիս ենք նրանց հա-մառու նկարագրությունը:

2. ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ


§ 12. Մարդը հասուկ արտասանական գործարաններ չունի: Երբեմնքները, թորերը, ատամները, քիթը և լեզուն մասնակցում են ֆիզիոլոգիական կարևոր գործունեության՝ շնչառությանն ու մարսողությանը, իսկ խոսողությունը նրանց երկրորդական ֆունկցիան է: Միայն խոչափն է, որի հիմնական գերը ձայնի արտաբերությունն է: Մարդու աստիճանական զարգացման ընթացքում խոչափը զարգացել է և հարմարվել խոսողության պահանջներին: Չնայած խոչափ կամ դրա մոտավոր նմանությունը մի օրջան ունեն նաև շատ կենդանիներ, սակայն կենդանիների մոտ այն զարգացած չէ և հարմարված չէ առանձին հոդաբաշխ հեղուկներ արտաբերելուն:

Խոսողության կարևոր նախապայմանը թորերից արտամզվող օդի հոսքն է, որը, անցնելով խոսողական գործարանների միջով, ձևավորվում է որպես մարդկային լեզունըրին հասուկ հեղուկներ: Ենչառությունը կատարվում է կրծքավանդակի կծկումով ու թայնացումով, նախապես թորերում օտեղծվում է նոսրացում, որի հետևանքով դրան օդը մղվում է դեպի թորերը (նկ. 1) և այստեղից դուրս ելնում ձնչումն ավելանալու և կրծքավանդակի մկանների կծկման շնորհիվ:

Սովորական շնչառության մասնակց օդի ներշնչման ու արտաշնչման ժամանակը հավասար է և տևում է մոտավորապես 3—4 վայրկյան: Այլ հարաբերություն է ստեղծվում խոսելու ժամանակ: Օդի ներշնչումը կատարվում է արագ, իսկ արտաշնչումը՝ դանդաղ, քանի որ արտամզվող օդը բաշխվում է վանկերի և խոսքի ավելի մեծ միավորների արտաբերման համար: Այդ հարաբերությունը սովորաբար 1:6 է, իսկ ձայնագույն զեղջրում կարող է հասնել մինչև 1:14:

§ 13. Թորերից արտամզվող օդը այնուհետև շնչափողով (նկ. 1, (2)) անցնում է դեպի խոչափը (ларинкс), որը գտնվում է շնչափողի վերջնամասում: Խոչափը բաղկացած է երկու մեծ կրծքիկներից՝ մասնաձև և վանաձև (նկ. 2), վերջինիս երկու պատերը պարանոցի առջևում միանալով, կազմում են սուր կամ րուբ սուր անկյուն, որը հայտնի է աղամախիճոս անունով (epiglottis) (5), որը կոճիկի վերևում գտնվում է մակակոտիլոց (epiglottis) (5), որը մտնում մասնական փակում է դեպի շնչափող տանող Հանապարհը: վահանաձև կոճիկը ունի երկու զույգ ելուստներ, որոնք ներքևում

միանում են, իսկ վերևում ամրանում հայտարյան ոսկորին (նկ. 2): Մասնաձև կոճիկին անմիջապես միացած են շատ շարժուն երկու շերտաձև կոճիկներ, որոնց ամրացած են ձայնալարերը:




Նկար 1. Արտասանական գործարաններ

1. Թորեր, 2. շնչափող, 3. ձայնածոր, 4. բնականային Չնարան, 5. մակակոտիլոց, 6. լեզու, 7. Երանի պատ, 8. փոքր լեզվակ, 9. փակուկ քիճք, 10. կոշտ քիճք, 11. սեղանի խոռոչ, 12. բերանային խոռոչ, 13. ստորին սասանաշար, 14. ստորին ձեռք, 15. խոչափ, 16. աղամախիճոս, 17. լեզվի ձայր, 18. լեզվի առջին մաս, 19. լեզվի միջին մաս, 20. լեզվի ետին մաս:

Ձայնալարերը փաստորեն երկու շարժուն բարակ թաղանթներ են, որոնք խոչափի ներսում միացած են երկու շերտաձև կոճիկներին: Նրանք կարող են սեղմվել իրար՝ լրիվ փակելով օդի անցքը, կարող են հեռանալ միմյանցից՝ կազմելով մի ձեղք, որը կազմում է

ձայնածնայ (3): Ընշառոթիան ժամանակ ձայնալարերը իրարից հեռացած են, և օդն ազատորեն անցնում է ձայնածնայով: Իսկ խոսելու ժամանակ, հատկապես ձայնից հնչյունների արտաբերելիս, նրանք մտանում են միմյանց և թրթրում օդի հոսքի շնորհիվ:

§ 14. Օդի հոսքը, առաջացնելով ձայնալարերի թրթրումներ և ստանալով համապատասխան աստանումներ, այնուհետև անցնում է դեպի բնականային նշարանը (4), որը գտնվում է անմիջապես խոչափի վերևում և կազմված է ետին կողմից՝ Երախի (ֆարինքսի) պատից (7), վերին՝ փափուկ բիմբից (9) և առջևից՝ լեզվի առմառից (6): Այստեղ, համաձայն անդրանակի օրենքի, որոշ բաղադրիչ համախափանություններ ուժեղանում են, իսկ մյուսները թուլանում, այսինքն կատարվում է ձայնի բաժանի նախնական ձևավորում, Այստեղից օդը անցնում է բեռանային նշարանը (12), որտեղ կատարվում է հնչյունի վերջնական ձևավորումը:



Նկ. 2

Նշարանի կառուցվածքը՝ 1. մասնակն կոճիկ, 2. գլանաձև կոճիկ, 3. գլանաձև կոճիկի կրտսեր, 4. շերտաձև կոճիկ:

Խոսողության կարևորագույն օրգանք բերանն է: Այստեղ է, որ վերջնականապես ձևավորվում են խոսքի հնչյունները, քանի որ կոնկրետում առաջացած ձայնը դեռ չունի որոշակի հնչյունական կրանք:

Բերանի խոռոչը խոսողության ընթացքում ընդունում է տարբեր ձևեր՝ նմանվելով տարբեր շափախ ու ձևի հնչարանների (սեղանատարների): Այս դեպքում մեծ դեր է կատարում լեզուն, որը

բարձրանալով ու իջնելով, մտանալով բերանի այտ կամ այն մասին, փոփոխում է բերանի խոռոչի ծավալն ու շափուկը:

Բերանի խոռոչը կազմված է վերին բիմբից՝ կոչա (10) և փափուկ (9), ստորին ձևափոխից (14), սառնակից (13), լեզվից (6) ու Երախի պատից (7): Վերին բիմբը սկզբում է վերին աստանների լնդից, որոնց հետևում են այլևայլներ, վերջիններս փաստորեն կազմում են կոչա բիմբի այն մասը, որը հարթ չէ, այլ փոքր-իչ գոգավորված: Այլևայլներից հետո գալիս է բուն կոչա բիմբը, որի շարունակությունը կազմում է փափուկ բիմբը և ավարտվում է փոքր լեզվակով (8): Փափուկ բիմբը շարժուն է՝ այն կարող է իջնել ու բարձրանալ: Սովորական շնչատվոթյան ժամանակ այն իջած վիճակում է՝ բացելով օդի համար մի լայն անցք թորերից դեպի բիմբ:

Խոսողության ժամանակ փափուկ բիմբը բարձրանում ու կաշռում է Երախի պատին՝ փակելով դեպի բիմբը տանող ուղին, որի հետևանքով օդը անցնում է բերանի հնչարանով: Սակայն որոշ հնչյունների, մասնավորապես մ, և ձայնորդների արտաբերման ժամանակ փափուկ բիմբը իջնում է՝ բացելով անցք, և թորերից դուրս մղվող օդը անցնում է թթի խոռոչը (11) ու մասամբ բերանը: Այսպիսով, որոշ հնչյունների արտաբերությանը մասնակցում է թթի խոռոչ՝ ստեղծելով օդի լրացուցիչ ուղի, որով և փոխվում է հնչյունի երանգը: Փթի խոռոչի ծավալը չի փոխվում, սակայն տարբեր մարդկանց մոտ այն տարբեր է:

Վերև անատոմիական բաժանում չունի, սակայն պայմանականորեն լեզվաբանական նկատառումներով այն սովորաբար բաժանում են մի քանի մասի: Նախ ասանձնացվում է լեզվի ծայրը (17) իր մերձավոր նեղ շերտով: Այնուհետև նշվում է լեզվի առջևի մասը (18), հետո միջին (19) ու ետին (20) մասերը: Երբեմն նշվում է նաև լեզվի կորը, բայց այն սովորաբար հնչյունների արտաբերության ժամանակ որոշակի դեր չի կատարում:

Շնչարտաբերության համար կարևոր նշանակություն ունի նաև ստորին ծնոտը, որն իջնելով բացում է բերանը՝ ղգալի լուսավոր փոփոխելով հնչյունի երանգը: Ոչ պակաս նշանակություն ունեն նաև շրթունքները, որոնք կարող են շեղոք բացվել, կամ կրտսեալ ու դուրս ցցվել՝ ձևփոխելով հնչյունի երանգը:

3. ՀԵՉՑՈՒՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱԿՉՐՈՒՄՆԵՐԸ

§ 15. Մարդկային լեզվի բոլոր հնչյունները ընդունված է բաժանել երկու մեծ խմբի՝ ձայնավորների ու բազաձայնների: Այդ բաժանման հիմքում ընկած է հնչյունների կազմավորման ձայնաբանական եղանակը: Ձայնավորների զերազանցապես ձայնով կազմված հնչյուններ են, իսկ բազաձայններ իրենց ընդլայնված ազնկային հնչյուններ են, շնայած առանձին բաղաձայնների կազմավորմանը մասնակցում է նաև ձայնը:

Ձայնավորների արտաբերության ժամանակ օդի հոսքը թեթևանում չի հանդիպում արգելի, իսկ բաղաձայնների ժամանակ արգելի առկայությունը պարտադիր է:

Սակար. — Երբեմն ձայնավորների ու բաղաձայնների բաժանման համար լեզվարանություն մեջ հազվի են առնում այդ հնչյունների վանկարանության ֆունկցիան: Ձայնավորները, ի տարբերություն բաղաձայնների, կարող են ինքնուրույն վանկ կազմել: Սակարև այս դասակարգումը չի կարող ընդունելի լինել բոլոր լեզուների համար, քանի որ մի շարք լեզուներում որպես վանկարար կարող են հանդես գալ նաև ձայնորդները:

Քանի որ ձայնավորների կազմությանը մասնակցում է խոշորում առաջացած ձայնը, որը բերանանում հնչարանում երանգավորում է բառ ռեզոնանսի օրենքի, այդ իսկ պատճառով ձայնավորների համար մեծ նշանակություն ունեն լեզվի զիրքը, բերանի բացվածքը, շրթունքների ձևը և փափուկ քիմքի զիրքը:

Ձայնավորների արտաբերությունը խիստ տեղայնացված է, և արտասահական զործարանները ունեն թույլ ու ոչ կենսաբանացված լարվածություն, իսկ բաղաձայնների ժամանակ լարվածությունը կենտրոնացված է արգելի տեղում: Վերջերս կատարած փորձերը ցույց են տվել, որ այդ նրկու խմբերի արտաբերմանը մասնակցում են բերանի ու լեզվի տարբեր մկաններ:

ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐ

§ 16. Ձայնավորների դասակարգման ժամանակ նախ և առաջ նկատի է առնվում լեզվի զիրքը բերանում, որով և որոշվում է դասակարգման առաջին սկզբունքը: Այդ հատկանիշով ձայնավորները բաժանվում են երեք շարքի՝ առաջին, միջին և երրորդ: Այսպես, նկատելի է, որ առաջին շարքի ձայնավորները, որոնք ձայնավորներ են, իրենց ձայնավորներ են, որովհետև լեզվի զիրքը բերանում է բաց, որով ձայնավորները ձայնավորներ են:

որ բաժանվում են երեք շարքի՝ առաջին, միջին և երրորդ: Այսպես, նկատելի է, որ առաջին շարքի ձայնավորները, որոնք ձայնավորներ են, իրենց ձայնավորներ են, որովհետև լեզվի զիրքը բերանում է բաց, որով ձայնավորները ձայնավորներ են:

Եթե լեզուն ետ է բաշված բերանում, իսկ առաջին մասում սրեղծվում է դատարկ տարածություն, այսպես առաջացած ձայնավորները կլինեն երրորդ շարքի ձայնավորներ, «օրինակ՝ ա, օ, ու: Իսկ երբ լեզուն քիչ թե շատ հավասար փռված է բերանում, կամ եթե նրա միջին մասը շատ աննշան բարձրացած է, այսպես առաջացած ձայնավորը կլինի միջին շարքի ձայնավոր, օրինակ՝ բ:

§ 17. Գասակարգման երկրորդ սկզբունքը կապվում է լեզվի բարձրացման տարբեր աստիճանների հետ: Եթե լեզուն բավական ցածր զիրքում է, և նրա մակերեսի ու քիմքի միջև առեղծվում է լայն տարածություն, այսպես առաջացում է ստորին բարձրացման (բաց) ձայնավոր, օրինակ՝ ա: Եթե լեզուն շատ վեր է բարձրացած, և նրա մակերեսի ու քիմքի միջև տարածությունը շատ փոքր է, այսպես առաջացում է վերին բարձրացման (փակ) ձայնավոր, օրինակ՝ ի, ու: Այդ երկու զիրքերի միջև կարող են լինել տարբեր աստիճանի բարձրացումներ:

Հայերենի ձայնավորները տարբերում են եռաստիճան բարձրացում՝ ստորին՝ ա, միջին՝ օ, ե, բ, վերին՝ ու, ի: Կան լեզուներ, որտեղ ըստ լեզվի բարձրացման աստիճանի տարբերում են 6—7 ձայնավոր (ինչպես անգլերենում):

Ձայնավորների երանգի վրա մեծ ազդեցություն է զործում շրթունքների զիրքը: Ըստ այդ հատկանիշի ձայնավորները բաժանվում են երկու խմբի՝ շրթնայնացած (երբ արտաբերության ժամանակ շրթունքները կլորացված են) և ոչ շրթնայնացված (երբ, շրթունքները կլորացված չեն), օրինակ՝ ու և օ ձայնավորները շրթնայնացված են, իսկ ի, է, ա, ն՝ ոչ:

§ 18. Ձայնավորները կարող են տարբերվել նաև ընդամենը մամր. եթե ձայնավորի արտաբերման ժամանակ զնալի ընդամենը խոսող տանող ուղիին բաց է, և արտաշնչվող օդը դուրս է դալիս նաև քիմք, այսպես ձայնավորը ստանում է ընդամենը երանգ. օրինակ՝ ֆ, ք, ց, ծ, ճ: Հայերենում ընդամենը ձայնավորները չկան: Որոշ

գիրքերում, հասկացիս մ, և ձայնըղներից առաջ, ձայնավորներից մասամբ սեղանանում են, բայց այս միայն գիրքային փոխադրեցույթյան հետևանք է և չունի հնչույթային արժեք:

§ 19. Ձայնավորների տեղությունը նույնպես կարող է ունենալ իմաստաարբերակիչ ֆունկցիա: Մոփորաբար լիզուներում տարրերակվում է տեղություն երկու աստիճան, այսինքն տարրերակվում են երկար ու կարճ հնչյուններ, ինչպես զերմաներենում և քրիստոսական անգլերենում: Հայերենում ձայնավորները, ինչպես և բաղաձայնները, կարող են ունենալ տարբեր տեղություն, սակայն այդ տարբերությունները գիրքային են և հանդես են գալիս միայն հնչյունական շղթայում: Հմմտ. օրինակ՝ Աննա, մասառ, ուղղի, ամենաարագ և այլն: Այս երկար, ափելի ճիշտ՝ կրկնակ հնչյունները չեն հակադրվում համապատասխան կարճերին և չունեն իմաստաարբերակիչ արժեք: Գրանք միատեսակ հնչույթների զուգադրույթյան հետևանք են:

Ձայնավորների տեղությունը հայերենում կապվում է շեշտի ու հնչերանդի հետ և չունի հնչույթային արժեք:

Այսպիսով՝ հայերենում տարբերվում են ըստ տեղի՝ առաջին, միջին և ետին շարքի ձայնավորներ և ըստ բարձրացման՝ ստորին, միջին և վերին աստիճանի ձայնավորներ: Ձայնավորների կարող են լինել շրթնայնացված և ոչ շրթնայնացված (տե՛ս աղյուսակ 1):

§ 20. Ֆիզիկական բնույթով ձայնավորները նմանվում են հրաժշտական ձայներին: Սակայն եթե հրաժշտական ձայնից բաղկացած են պարզ օհնոստիզների զուամրից (հարմոնիկներից), որոնց համախափանությունը հարաբերությունը հավասար է 1:2:3:4 և այլն, ապա խոսքի ձայնայինում այդ հարմոնիկները հանդես են գալիս կից համախափանությունների հետ միասին, այսպես կոչված ֆորմանտների ձևով: Ֆորմանտները այն ուժեղացված համախափանությունների տիրույթներն են, որոնք բնորոշ են յուրաքանչյուր ձայնավորին:

Մաե՛ր. — Խոսքի ձայնայինի այդպիսի առանձնահատկությունը պայմանավորված է մարդու արտաբերական զործարանների կառուցվածքով, մասնավորապես այն հանգամանքով, որ արտասանական օրգանները պատած են փափուկ հյուսվածքով, երանք կլանում են որոշ հարմոնիկներ և ուժեղացնում են ոչ թե մեկ, այլ մի քանի համախափանություններ. այլ կերպ ասած երանք լիովին

չեն համապատասխանում ֆիզիկական սեղանաորներին: Ձայնավորի ֆիզիկական պատկերում առանձնանում են միևնույն 4—5 ֆորմանտ, սակայն, ինչպես ցույց են տալիս հնչյունների սինթեզման փորձերը, զրանցից կարևորագույնները առաջին երկուսն են:

Մոփորաբար յուրաքանչյուր ֆորմանտում առանձնանում է մեկ համախափանություն՝ ամենաբարձր ինտենսիվությամբ, որը կոչվում է ֆորմանտային համախափանություն:

Յուրաքանչյուր ձայնավոր բնորոշվում է իրեն հատուկ ֆորմանտներով: Այսպես օրինակ՝ ա ձայնավորին հատուկ է առաջին և երկրորդ ֆորմանտների անկախությունը՝ համախափանությունների ստորին դիապազոնում (500 հց մինչև 1300 հց սահմանում). ընդ որում, այդ ֆորմանտները իրար շատ մոտ են:

Ձայնավորները բնորոշվում են նաև ինտենսիվությամբ, որն ունի իր լսողական համարժեքը: Այսպիսի՝ ինտենսիվությունը, որով չափվում է ձայնի ուժգնությունը, բնկալվում է որպես ձայնի ուժգնություն և ուղիղ համեմատական է ձայնի ամպլիտուդի բազանտում: Որքան ափելի ինտենսիվ է ձայնը, այնքան ափելի ուժեղ է այն հնչում: Համախափանությունը բնկալվում է որպես տոնի բարձրություն կամ ցածրություն:

Հնչյունի տեղությունը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում հնչում է ափյալ ձայնը: Տեղությունը չափվում է 1/1000 վրկ. կամ միլիվարկյաններով (միլիվ):

Ձայնի հիմնական տոնը այն համախափանությունն է, որով արտասանվում է տվյալ հնչյունը՝ ձայնավորը կամ ձայնիցը:

Համախափանությունը պայմանավորված է ձայնայարների արտասանմանը, և նրա չափման միավորը հերցն է: Որքան ափելի շատ է տատանումների ֆիլիք մեկ վարյիչանում, այնքան ափելի բարձր է հիմնական տոնը:

Մարդկային ձայնը, ըստ հիմնական տոնի բացարձակ արժեքների, բաժանվում են 3 խմբի՝ աղամարդու ձայնի՝ 80—250 հց, կանացի ձայնի՝ 200—400 հց, երեխաների ձայնի՝ 350—550 հց: Կրաժշտական տեսակետից ընդունված է մարդու ձայնը բաժանել մի քանի խմբի (բարիտոն, բաս, սոպրանո և այլն), որոնք տարբերվում են համախափանությունների զործածության սահմաններով, խոսողության հավասար, սակայն, հիմնական տոնի բացարձակ արժեքը նշանակություն ունի:

863



Այսպիսով՝ դասակարգման երկու հիմնական սկզբունքներին (արտարկրություն և եղանակը) ավանդական հելյունաբանությունը ավելացնում է ևս մեկը՝ դասակարգումը բնու կազմության: Այս դասակարգումը սակայն ոչ այլ ինչ է, եթե ոչ աղմուկի առաջացման եղանակի նկարագրությունը, որովհետև ավելի զիջքում նկատի է առնվում հելյունի որակի փոփոխումը նրա արտարկրության ժամանակ: Մյուս կողմից ավանդական հելյունաբանության մեջ պարզ համադրված հելյունները (պայթյալանները) փորձատեսակն սովյալների համաձայն բաղկացած են մի քանի հատվածներից (փաստորեն բարդ են), որոնք, սակայն, առանձին-առանձին չեն բեկայտվում: Այսպիսով, հատվածների առկայությունը շնչեղների կամ կիտաշփականների ֆիզիկական պատկերում դեռևս հիմք չի ծառայում դիտելու որանք որպես բարդ հելյուններ:

§ 24. Հաշվարանները կիտաշփականները ներկայացնում են որպես բարդ բաղաձայններ, որոնք բաղկացած են երկու հընչությունից՝ մեկ պայթյալան և մեկ շփական, իսկ երկու զեղքում (Ն, Գ) նաև հաղագից:

Խոսելով շնչեղների ու կիտաշփականների մասին Մ. Արեղյանը գրում է. «Բարդ բաղաձայնները կազմվում են երկու կամ երեք հելյունի աշխույժ բաղաձայնությունից, որի մեջ երկու հելյունը մեկ արտարկրությամբ են առաջանում և ձայնարանորեն իրեն մեկ հելյուն են բմբռնվում: Գրանք երկու տեսակ են՝ հաղագազոր և կրեմակ բաղաձայնները: Վերջինների տակ հեղինակը նկատի ունի կեն-պայթյալան կամ կեն-շփական բաղաձայնները: Մ. Արեղյանի այս կարծիքը բաժանում են հին և միջին սերնդի բոլոր լեզվարանները: Իհարկե, սմանք այդ բարդությունը ավելի մերձեցնում են, սակայն, որ դրանք մի հելյունի երկու տարրերն են, սակայն այս կարծիքը ճիշտ չի կարելի համարել, քանի որ հելյունաբանորեն շեռչած նրանք սկսվում են հյումով, բայց չեն ավարտվում պայթյալությամբ, այլ փակվածքը վերածվում է ճեղքի, որի շնորհիվ նրանց կեսից լսվում է շփական կամ սուլող մայր: Ուրեմն նրանք ոչ թե բաղկացած են մեկ պայթյալանից և մեկ շփականից, որին երկու զեղքում (Յ, Ղ) միանում է նաև հաղագի, այլ այնպիսի հելյուններ են, որոնց կազմավորման եղանակը տարբերվում է թե՛ պայթյալաններից և թե՛ շփականներից՝ ունենալով ընդհանուր գծեր եր-

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 84.

կուսի հետ էլ նրանց միահնչությունության պարզության օգտին են վկայում նաև փորձատեսակն սովյալները՝ ստեղծությունը, կազմավորման սեղը և սպեկտրալ պատկերի յուրահատկությունը:

§ 25. Հպականներ են նաև մ, ց անգային ձայնորդները, որոնց արտասանության ժամանակ բերանի խոռոչում նույնպես ստեղծվում է պատռել: Սակայն այդ պատռելը չի վերանում, այլ փափուկ բիծրի իջեցման հետևանքով օդը ստանում է լրացուցիչ էլը զեղքի թիժ խոռոչը:

Ըստ արտարկրման եղանակի, հպական ունգային ձայնորդները հայ լեզվաբանական զրականության մեջ մերթի դասվում են շփականների շարքը², մերթ՝ պայթյալանների³ և մերթ էլ՝ դիտվում են որպես առանձին խումբ առանց դասակարգվելու բնու արտարկրման եղանակի: Սակայն այդ բաժանումը չի արտացոլում ճըրանց իսկական լիճալը միջոց է, անգային ձայնորդները կարող են ներկար արտասանվել ի տարբերություն պ, ք, փ և այլ պայթյալականների, սակայն շփական չեն և իրարից տարբերվում են ոչ թե անգային երանգով, այլ բերանում ստեղծված պատռելով, ուստի նրանց արտասանական հիմնական դատին պետք է համարվի բերանում ստեղծված արդիլը, իսկ այնուհետև՝ դրա էլըը զեղքի թիժ խոռոչը: Նրանք չեն մասնավոր նաև պայթյալաններին, քանի որ նրանցում պայթյուն չկա:

§ 26. Լեզվամոճային հելյունները բնու արտարկրման եղանակի բաժանվում են շփական բաղաձայնների և նեղվածքային ձայնորդների, Եփականների ժամանակ ճեղքը ավելի նեղ է և կարող է լինել կլոր (ս, ց) կամ հարթ (վ, ֆ, շ, ժ, խ, ղ, ք): Նեղվածքային ձայնորդները բնորոշ են ավելի լայն ճեղքով, որի շնորհիվ նրանցում աղմուկը թիչ է: Նրանք կարող են ունենալ օդի հոսքի երկու ուղի՝ կենտրոնական (յ, ք) և կողային (լ):

Մանր.— Ավանդական դասակարգման համաձայն ս, ց և շ, ժ բաղաձայնները տարբերակվում են միմյանցից որպես սուլա-

2 ՏՃ՝ Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1967, էջ 149, Գ. Սևակ, Ժամանակակից Հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 88:

3 ՏՃ՝ Վ. Ստախևյան, Ժամանակակից Հայոց լեզվի հելյունաբանություն, 1955, էջ 28—31:

4 ՏՃ՝ Գր. Ղազարեյան, Ընդհանուր լեզվաբանություն, 1939, էջ 54. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 82, 86:

հան և շշական հնչյուններ՝ նկատի առնելով նրանց լսողական ազդանյութությունը: Այս բաժանումը, ճիշտ լինելով հանդերձ, չի տալիս այդ հնչյունների արտաբերական տարբերությունը:

§ 27. Բազաձայնների դասակարգման երկրորդ կարևոր բուկորդները նրանց կազմավորման տեղն է: Ըստ արտաբերման տեղի հայտնենում տարբերվում են շրթնային, շրթնատամային, ատամնային, լեզերբային, առաջնարմային, քմային, փափկաքմային և հոգազային բազաձայններ:

§ 28. Բազաձայնների մեծ մասի համար կարևոր է նաև ձայնալարերի մասնակցությունը արտաբերության ժամանակ: Եթե բազաձայնների կազմավորման ժամանակ ձայնալարերը ատամնավում են, ապա ազմուկին միանում է նաև ձայնը, իսկ եթե ոչ՝ ապա բազաձայնները միայն ազմկային են: Առաջինները կոչվում են ձայնեղ բազաձայններ, իսկ երկրորդները՝ խուլ:

Հայերենի բազաձայնների համար կարևոր հատկանիշ է նաև շնչեղացումը, այսինքն՝ օդի լրացուցիչ հոսքը որոշ հնչյունների արտաբերման ժամանակ: Հայերենում հոգականների շարքում շրթնեղացումը ինքնուրույն տարբերակիչ հատկանիշ է, որով կազմվում է հոգականների համար երրորդ շարքը՝ ձայնեղ-խուլ-շնչեղ: Ենչեղացված հնչյունները հայերենում արտաբերվում են ափելի ուժեղ, ափելի մեծ էներգիայի ծախսով՝ խուլերի համեմատությամբ:

§ 29. Բացի արտաբերման տեղից, դասակարգման ժամանակ նկատի է առնվում նաև շարժան դործաբանների մասնակցության եղանակը: Այսպես՝ լեզուն կարող է մասնակցել հնչյունի արտաբերմանը իր ծայրով, այս դեպքում ստացվում են ծայրալեզվային հնչյուններ, կամ առջևի մեջքով, որի հետևանքով ստացվում են առաջնալեզվային (գորսայ) հնչյուններ, կամ միջին ու ետին մասերով՝ միջնալեզվային ու ետնալեզվային հնչյուններ:

Արտասանական հիմնական պատմելից բացի, լեզուն կարող է ստեղծել նաև երկրորդական պատմելի: Սրբ նրա միջին մասն է բարձրանում դեպի կոշտ թիթքը, հնչյունը ստանում է քմայնացման երանգ, իսկ երբ ետին մասն է բարձրանում դեպի փափուկ թիթքը, հնչյունը ստանում է կատկայնացման լրացուցիչ երանգ:

§ 30. Ըստ ֆիզիկական բաժանման ձայնորդները աանձնանում են թե՛ հոգական և թե՛ նեղվածքային բազաձայններից՝ կազմելով մի առանձին խումբ, որը եմանվում է ձայնավորներին: Այսպիսով՝ բազաձայնները ըստ ֆիզիկական բնույթի բաժանվում են 3 խմբի՝ սլայրականներ, որոնց ձայնային պատկերում նկատվում է ձայնի ընդհատում, որին հաջորդում է աղմուկի վայրկեանական պոռթկումներ, շրթականներ, որոնց լայն ազմկային դատին որոշակիորեն տեղայնացված է ձայնային դիսպոզիցիոն և ձայնաբեղներ, որոնց ձայնային պատկերը թեև նման է ձայնավորներին, սակայն տարբերվում է նրանցից ֆորմանտների մուլությունը ու կարծուքամբ և աննշան աղմուկի առկայությամբ:

§ 31. Յուրաքանչյուր հնչյունի արտասանությունը կարելի է ներկայացնել 3 պահից՝ մուտք, կացք և ելք: Մուտքի ժամանակ արտասանական օրգանները շարժվում են իրենց հանգստի վիճակից և բեղունում տվյալ հնչյունի արտասանության համար անհրաժեշտ դիրքը: Օրինակ, ալ-ի ժամանակ շրթունքները ամուր հպվում են միմյանց, լեզուն իր ետին մասով մի փոքր բարձրանում է և օդը կուտակվում է շրթունքների մուր: Կացքի ժամանակ այդ դիրքը պահպանվում է (անշուշտ այս պահը, ինչպես նաև մյուս պահերը տևում են շատ կարճ՝ վայրկյանի հարյուրերորդական մասեր): Ելքը այն պահն է, երբ արտասանական օրգանները կատարելով որոշ դործողություն, անցնում են հանգստի վիճակին կամ հաջորդ հնչյունի արտասանությանը: Օրինակ՝ ալ-ի կլքի ժամանակ շրթունքները միանգամից բացվելով անցնում են հաջորդ հնչյունի դիրքին:

4. ՀՆՉՅՈՒՆՆԵՐ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ

§ 32. Յուրաքանչյուր բանավոր խոսք իրականանում է որպես հնչյունական մի շղթա, որտեղ մերթ ընդ մերթ հանդես են գալիս տարբեր տեղություն հոգեարներ: Հնչյունական շղթան նախ և առաջ տարրալուծվում է համեմատաբար փոքր և ինքնուրույն հաստատունների՝ հնչադասությունների, որոնք միմյանցից անջատվում են համեմատաբար կրկար գաղարկերով: Հնչադասությունները իրենց հերթին նույնպես բաժանվում են ավելի փոքր մասերի (հնչուշարությունների): Այնուհետև խոսքում առանձնանում են հնչարաները

Գաղձավորման անցք

զվտանկան		Վ
զվտարժ -տիփոթ		Խ, Պ
զվտարձազ	Կ, Գ, Ը	
զվտարձի		Դ
զվ -տարձողազ	Ճ, Ը, Զ	Չ, Ճ
զվտուփիկի		Ք
զվտու -տուտազազ	Ի, Ճ, Չ	Պ
զվտուղբաղ	Ա, Գ, Ը	
զվտուղտա -տաղձ		Փ, Գ
զվ -տաղձիկձ	Ճ	
զպլեմկան կրտաչտական անգալին	տափակ անցքով կրտ ճիզ- բով ձկն անցքով կրտձալին անցքով	զպտփն եմզեղբ
զպտան		ՔՐՔՏՈՆ
զպտան	զվտազտիկն	

և վանկերը: Որպես նվազագույն միավորներ, որոնք ժամանակի առանցքում այլևս չեն բաժանվում ավելի փոքր միավորների, հանդես են գալիս հնչյունները:

Ընդունված է լեզվի հնչյունները համարել նվազագույն նյութական միավորներ, որոնցով կազմավորվում է խոսքը: Հիրավի, առանց հնչյունական միավորների չկա և խոսքը:

Մական միայն հնչյուններով չի կազմվում յուրաքանչյուր լեզվի խոսողությունը, և հնչյունները վերջին հաշվով (զիտական վերածություն տեսանկյունից) խոսքի նվազագույն միավորները չեն: Կատարելով խոսքի հաջորդական վերածությունը՝ կարելի է հասնել այնպիսի նվազագույն միավորների, որոնցով մեկ ձևույթը կամ բառը տարբերվում է մյուսից ոչ թե մեկ հնչյունով, այլ ավելի փոքր միավորով, որը կազմում է տարբերակիչ հատկանիշ, օրինակ՝ պայա-փայա հակադրության մեջ հնչյունները տարբերվում են ոչ թե ամբողջությամբ, այլ շեղացումով, իսկ բար-պար զույգում՝ ձայնեղացումով, որոնք տարբերակիչ հատկանիշներ են: Տարբերակիչ հատկանիշները խոսքում հանդես են գալիս ոչ թե ինքնուրույն, այլ իրար հետ կապակցված: Նրանք, առհասարակ, ինքնուրույն գոյություն չունեն:

§ 33. Չնայած լեզվի հնչյունական ձևավորման համար օգտագործվում են մարզու արտասանական օրգանների հնարավորության սահմաններում կատարվող գործողություններ, սակայն յուրաքանչյուր լեզու ունի հնչյունների կազմավորման ու բաշխյունի սեփական մեխանիզմները, որով էլ երկու տարբեր լեզուների միատեսակ հնչյուն հնչյունները լինում են տարբեր համակարգերի միավորներ: Սրինակ, հայերենի [թ] հնչյունը շատ հման է աուսերենի քտ, ք ռեբե, Ожсана բառերում հնչյուն ք-ին: Ինչը մի՞թե այս երկու հնչյունները ունեն միևնույն արժեքը հայերենում և աուսերենում: Իհարկե, ոչ: Հայերենում այն լրարժեք հնչյուն է և հակաբերվում է մի կողմից խուլ կ-ին, մյուս կողմից՝ ձայնեղ գ-ին: Հայերենում նույն հակադրությունը կրկնվում է շրթնույթների, առամնայինների և կիսաշփականների շարքերում՝ կազմելով մի ամբողջ համակարգ: Իսկ աուսերենում այն միայն դիրքային տարբերակ է, չունի հակադրության եզր և այլ դիրքերում արտասանվում է առանց շեղացման, ինչպես՝ аккорд, как Китан և այլն բառերում: Ուրեմն՝ մարդկային լեզվի հնչյունա-

կան բոլոր հնարավորություններից յուրաքանչյուր շնորհ վերցնում է իր սեփական ձեռք, կազապարթ, որը տարբերվում է այլ լեզուներից և լավագույնց ինքնօրինակ է:

§ 34. Լեզվի արտահայտության պլանը ընդգրկում է տվյալ լեզվի հնչյունային համակարգը, որը, սակայն, կազմում է արտահայտության պլանի միայն մի մասը Այն ընդգրկում է նաև տվյալ լեզվի հնչյունների միացման կանոնները, վանկի կառուցվածքը, բառի վանկային ու շեշտային կառուցվածքը, շեշտի ու հնչերանգի առանձնահատկությունները Այս միավորները, սակայն, տարբեր մակարդակի միավորներ են և խոսքում ունեն տարբեր ինքնուրույնություն ու գուևերում, Այսպես, օրինակ, եկն տարբերակիչ հասկանիչները առհասարակ ինքնուրույն գոյություն չունեն, և նրանց առանձնացումը կապված է մարդու կողմից որոշ արտահայտական ու փորձառական գործունեության հետ, ապա բառի, որպես ինքնուրույն հնչյունական միավորի գոյությունը ոչ մեկի մոտ կասկած չի հարուցում, և նույնիսկ հնչյունաբանությունից հետո կանգնած մարդիկ կարողանում են որոշել բառի սահմանները, նրա մեջ մտնող հնչյունների թիվը, որակը, վանկերը և շեշտը:

Գծվար չէ որոշել նաև նախադասության սահմանները, սակայն շարտյվի, որպես արտասանվածքի ինքնուրույն միավորի, սահմանները բավականին անորոշ են և կախված են, մի կողմից, արտասանվածքի հնչյունային, իսկ մյուս կողմից՝ խոսողի ու լսողի (ուսումնասիրողի) մտանցումից:

§ 35. Ինչպես ասացինք, խոսքի հնչյունները այն միավորներն են, որնեցով կազմվում են բառերը, շարտյվները ու նախադասությունները Մակայն սխալ էլիններ պատկերացնել, որ հնչյունները աղյուսների նման միացվում են միմյանց ավելի մեծ միավորներ կազմելու համար: Նրանք նախ և առաջ ավելի սերտորեն են կապվում միմյանց, կազմելով մի սերտ արտասանական միավոր՝ վանկը և այնուհետև՝ ավելի մեծ միավորներ: Բացի այդ, խոսքում հաճախ հանդես են գալիս այնպիսի հնչյուններ, որոնք լոկ որոշ հնչյունական պայմանների և անցումների հետևանք են, և որոշել գրանց գործառությունը լեզվում հաճախ մեծ դժվարություններ է ներկայացնում: Արդյոք միշտ է նշյա որոշել, օրինակ, հայերենի ր կամ չ հնչյունների արմերը խոսքում: Արդյո՞ք գրանք միշտ ինք-

նուրույն հնչյուններ են և հակադրվում են այլ հնչյուններին, թե ոչ:

Երբեմն խոսքում հանդես են գալիս այնպիսի հնչյուններ, որոնք տվյալ լեզվի հնչյունային համակարգը մուտք չեն գործել, կամ զբաղեցնում են որոշ սահմանային դիրք:

Դրանք հաճախ չեն համարվում տվյալ լեզվի միավորներ, բայց կրբեմն բնորոշ են նրան: Օրինակ՝ ավ կապակցության գործածությունը ռուս-ի իմաստով հայերենում, կամ քմայնացած լի, ա-ի զործածությունը որոշ բաներում, օրինակ՝ այլուր, առյան, մատյան, և կամ որոշ քմայնացած հնչյունների առաջացումը սուսերենի ազդեցությամբ:

Լեզվի հնչյունների և նրանց դիրքային տարբերակների որոշումը հնչյունաբանական խնդիրներից մեկն է: Այս հարցի հետ սերտորեն կապված է բառերի հնչյունային կազմի որոշումը: Օրինակ՝ քանի՞ հնչյունից են բաղկացած սեռատոգի, սրտային, Սկրտյան, հեպպարակ բառերը: Հայերենում մարգ-մարգ կամ սեղան-սեղանի բառերը տարբերվում են միմյանցից որոշյալ-անորոշ հակադրությամբ, այսինքն ր հոգի հավելումով: Այս դեպքում որոշյալության քերականական կարգը արտահայտվում է մեկ հնչյունով, այսինքն՝ սեղան-սեղանի հակադրության մեջ ր-ն քերականական իմաստի արտահայտման միջոց է, իսկ հետևյալ բառերում՝ կրտել-կտտել, կրել-կարել-կեբել, այն ունի բառաուստի տարբերական արժեք: Կան նաև դեպքեր, երբ ր-ի զործածությունը բոլորովին այլ է: Այս և նման հարցերի որոշումը պահանջում է լեզվի հնչյունային վերլուծություն, որը կարելի է կատարել նշելով տարբեր լեզվաբանական դպրոցների տեսանկյուններից, միշտ նկատի ունենալով, սակայն, լեզվի կառուցվածքը, նրա հաղորդակցման գործառությունը և նրա էական ու ոչ էական միավորների հարաբերությունը:

§ 36. Լեզվաբանության մեջ հնչյունի համընդհանուր բնորոշում չկա: Հայերենական և արտասահմանյան լեզվաբանության մեջ կան հնչյունի տարբեր բնութագրեր, բայց դրանցից ոչ մեկը չի կարող լիովին արտահայտել հնչյունի էությունը: Գծվարությունն այն է, որ ինքը՝ հնչյունը մի բարդ օբյեկտ է և կարող է ուսումնասիրվել տարբեր տեսանկյուններից: Մի կողմ թողնելով հնչյունի տարբեր մեկնաբանությունները, այս աշխատության մեջ նպա-

տակահարմար է առաջնորդել հնչույթի հետևյալ գործնական բնորոշմամբ:

Հնչույթը ավյալ լեզվի արտահայտության պլանի նվազագույն գծային միավորն է, որը բաղկացած է տարբերակիչ հատկանիշների գումարից և որով կարելի է միմյանցից տարբերել ավյալ լեզվի բառեր կամ բառանկերը:

Տարբերակման այս ֆունկցիան հնչունները դրսևորում են այն դեպքում, երբ նրանք հակադրվում են իրար կամ զրոյին միևնույն հնչյունական դիրքում (տուն-չուն, համ-հում, սեղան-սեղանի) կամ երբ հնչունները բառերում հանդիս են զույն տարբեր բաշխվածությամբ (չուն-նուշ):

Միևնույն հնչույթը խոսքում արտասանվում է խոսողների կողմից երբեմն աննկատելի, իսկ երբեմն զգալի տարբերություններով: Տարբերությունները նախ ստեղծվում են այն բանի շնորհիվ, որ տարբեր մարդիկ ունեն արտասանության փոքր-ինչ տարբեր նշանակներ, որոնք պայմանավորված են լուրսբանջյուր մարզու արտասանական օրգանների առանձնահատկություններով, և որին շատ են նպաստում ձայնային տարբերությունները: Ֆիզիկական անասակտից այս տարբերությունները շատ մեծ են: Սակայն լեզվական հաղորդակցման համար այդ տարբերությունները ոչ մի նշանակություն չունեն: Դրանք կազմում են խոսքի այն կողմը, որն անասանում է լեզվի կողմից և մնում է արտալեզվական մակարդակում:

Օրինակ՝ անկախ նրանից, թե օինչպե՞ս եք նախադասությունը ասվում է բասով, բարիտոնով, մեով կամ բարակ, խոսողն կամ զրեզուն ձայնով, նախադասության իմաստը և արտասանված հնչույթների քանակը չի փոխվում: Անշուշտ, ֆիզիկական այդ տարբերությունները ազդաբարձում են մեզ, թե խոսողը աղա՛մարզ է, թե՛ կին, ինչ տարիքի է, ինչ տրամադրության է, կամ ստոզը է, թե՛ հիվանդ, բայց այս բոլոր հանդամանքները արտալեզվական են և չեն փոխում նախադասության լեզվական միավորների իմաստը⁶:

§ 37. Սակայն, անկախ արտալեզվական գործոնների ազդե-

⁶ Այստեղ նկատի չի ստեղծում խոսքում կանոնափոխ կամ իրադրության ազդեցությունը, որոնք կարող են փոխել ավյալ արտահայտության բովանդակությունը:

ցության հետևանքով առաջացած տարբերություններից, հնչույթները խոսքում հանդիս են զույն քի: Թե շատ փոփոխված ձևով, Միևնույն հնչույթի արտասանական տարբերությունները առաջանում են հնչյունական որոշակի պայմաններում՝ կապված շեշտի, հարևան հնչունների որակի և անմպի հետ: Երբ հնչունները ենթարկվում են նման փոփոխությունների, ստանում են զգալի որակական կամ քանակական տարբերություններ: Սրանք կան փոփոխությունները համեմատաբար ավելի նկատելի են ավյալ լեզվով խոսողներին համար և, լինելով պարտադիր, առաջացնում են հնչույթի աաբերականը կամ փափոխակներ: Սակայն հնչույթների կրած որակական, քանակական փոփոխությունները չեն լին ազդում նրանց տարբերակիչ հատկանիշների վրա, չեն փոխում և նրանց հնչույթային արժեքը: Գիրքային կամ շեշտային փոփոխությունները հիմնականում ազդում են հնչույթի ոչ-տարբերակիչ հատկանիշների վրա: Այդ պատճառով հնչույթի տարբերակները, քանի որ պարունակում են ինչպես տարբերակիչ, այնպես էլ ոչ տարբերակիչ հատկանիշներ, իրենց բովանդակությամբ ավելի հարուստ են հնչույթներին, որոնք բաղկացած են միայն տարբերակիչ հատկանիշների զուգարկից: Երբ ազդեցության է ենթարկվում տարբերակիչ հատկանիշներից մեկը կամ երկուսը, այդ դեպքում սեղի է ունենում լեզոբացման երևույթ: Չեզոքացման հետևանքով ստեղծվում է գերհնչույթ, որը ամենիկնում է նույն շարքի մեկ այլ հնչույթի կամ բեզոքրիտում է ավյալ շարքի հնչույթների էական հատկանիշները՝ նմանվելով նույն շարքի որևէ հնչույթին:

§ 38. Բանական փոփոխությունները ավյալ լեզվով խոսողների կողմից սովորաբար չեն նկատվում, բայց զրանցում են ճշգրիտ սարքերի ու գործիքների օգնությամբ: Օրինակ, նախածամանակակից հայերենում ձայնավորները չեն ենթարկվում զգալի որակական փոփոխության, ինչպես սուներենում, սակայն ձայնավորի սեռությունը, նախած, թե այն շեշտակի՞ր վանելում է, թե՛ անշեշտ և շեշտից ի՛նչ՝ հեռավորության վրա է գտնվում, տասանվում է բովանդակման մեծ սահմաններում՝ գրեթե 2—3 անգամ: Սակայն այս տարբերությունները լսողների կողմից չեն նկատվում, քանի որ զրանք իմաստատարբերակիչ զեր չունեն կամ ավելի ճիշտ նրանք վերացնում են մի այլ հնչյունական երևույթի, օրինակ՝ շեշտին կամ հեղեղանից:

§ 39. Խոսքում ափելի նկատելի են Հնչույժների փոխազդեցական տարրերու, վրայունները, որոնք առաջացնում են Հնչույժի տարրերականները:

Գրանց տեսակները շատ են, և յուրաքանչյուր Հնչույժի համար կարելի է նշել մի քանիսը: Կան Հնչույժներ, որոնց տարրերականների թիվը քիչ է կամ աննկատելի սովորական խոսողների համար, եվ բնդհակասակը, որոչ Հնչույժներ ունենում են մի քանի խրարից խիստ զանազանվող տարրերականներ:

Սակայն միևնույն Հնչույժի տարրերականները շունեն իմաստատարբերակիչ ֆունկցիոնալ և տարբերվում են միմյանցից բաշխվածությունով: Մի տարրերակը չի կարող զբոծածվել մյուսի փոխարեն միևնույն դիրքում, այլ կերպ առած, նրանք գտնվում են փոխբացասող բաշխման մեջ:

Այսպես օրինակ՝ 1. Ժանդորդը տարբեր դիրքերում արտասանվում է որոշ տարրերով: Եսլած հաջորդ Հնչույժը ինչպիսիսն է՝ ճաշնափոր, թև բայաճաշի, կամ՝ ինչպիսի՝ ճաշնափոր է: Լաճնաճաշի օրինակ՝ ճանելու քառերի լ-ները՝ 1. Վնում է, չի լինում, 2. ալյուր, 3. ալ կարմիր բալ 4. լա, 5. լոթ:

Առաջին դեպքում լ-ն քմայնացած է (փափուկ), երկրորդում՝ ափելի շատ քմայնացած, 3-րդում՝ ոչ քմայնացած (կոշտ է), 4-րդ ու 5-րդ դեպքերում՝ չքմայնացած (ուժեղ և համեմատաբար թույլ): Փնները ա բազաճաշի տարրերակները:

ալ—ոչ քմայնացած, առամնային պայթական ա, առյան—քմայնացած, ետևառամնային պայթական ա, աուն—չքմայնացված, առամնային, ոչ քմայնացած պայթական ա,

Առյան—առաջին ա-ն ոչ քմայնացած, բայց ոչ առամնային, այլ կողային պայթյունով արտասանված պայթական, որի ժամանակ հիմնական պատանջը մնում է փակ, բայց պայթման հետևանքով օդը դուրս է պոթվում լեղիկ եզրերից, երկրորդ ա-ն արտասանվում է զրթին առանց պայթյունի՝ վերածվելով այսպես կոչված իմպլոզիվ ա Հնչույժի:

ալ (ալա)—Հնչույժ, որ չի տարբերվում սովյալ դիրքում Ղ-ից ու ա-ից, և որտեղ ճաշնեղացումը չկողբացել է: մաունիլ—այտնող առկա է ոչ սովորական առամնային, այլ օտնդային պայթյունով ա:

§ 40. Այս Հնչույժի, ինչպես և շատ ուրիշ Հնչույժների տարրերակների թիվը բավականին մեծ է: Սակայն խոսողների ու լսողների համար դրանք հաճախ աննկատելի են, քանի որ չեն առաջացնում իմաստային տարբերություններ: Տարրերակների ոչ միշտ զործածությունը գիտվում է լսողի կողմից որպես շեղում սովորական արտասանությունից կամ այսպես կոչված ակցենտ Օրինակ՝ երբ ոտուր հայերեն խոսելիս քմայնացնում է հայերենի բազաճաշները ի կամ է ճաշնափորներից առաջ կամ կատարում է որոշ Հնչույժների փոխարենում՝ Հնչույժների արտասանությունը հարմարեցնելով իր մայրենի լեզվի արտասանությանը, այս դա գիտվում է որպես ակցենտ, ինչպես՝ բիբեմ, կիբեմ, դիրեկար, ցառ (ժառ-ի փոխարեն), Յախկանո (Մաղկանոի փոխարեն), շառ (ճառի փոխարեն), շանջ (ճանճի փոխարեն), ազյուն (արզյունի փոխարեն):

Նման արտասանական շեղումները սովորաբար չեն ազդում Հնչույժների տարրերակիչ հատկանշների վրա՝ առաջացնելով միայն անսովոր դիրքային տարբերակներ (դիրեկտոր, բեբեմ), սակայն երբեմն կարող են և ազդել բարի ճանաչելիության վրա, քանի որ փոխում են տարրերակիչ հատկանշներից մեկը կամ երկուսը (ճանճ-շանջ, ճար-շար):

Քանի որ Հնչույժը խոսքում արտահայտվում է մի քանի տարրերակներով, այս անհրաժեշտ է կատարել դրանց զատակարգումը: Տարրերակների մեջ կարելի է տարբերել հիմնականը կամ տիրակաճը և երկրորդականները: Յուրաքանչյուր լեզվի համար կարելի է գտնել այնպիսի դիրքեր, որտեղ Հնչույժի մի տարրերակը ամենարտերեսպատ պայմանում է իր հատկանշները ցուցաբերելու համար և քիչ է ազդվում հաջորդ կամ նախորդ հնչույժներից: Հիմնական տարրերակ պետք է համարել այն, որտեղ սակայն են սովյալ Հնչույժի բոլոր տարրերակիչ հատկանշները: Օրինակ՝ ճաշնափորների արտասանությունը շեղված վաճկում, բազաճաշների զործածությունը բառասկզբում կամ ձայնավորից առաջ:

§ 41. Այն դիրքը, որտեղ Հնչույժը հանդես է գալիս իր բոլոր հատկանշներով կոչվում է ուժեղ դիրք: Կան դիրքեր, որտեղ այս կամ այն պատճառով (չեղար բացակայություն, մի ուրիշ Հնչույժի առկայություն) Հնչույժը կորցնում է իր տարրերակիչ հատկանշը:

ներքի մեկը կամ նույնիսկ երկուսը, շատ հաճախ համընկնելով արտասանությանը մոտ մի այլ հնչույթի հետ: Այսպիսի դիրքը կոչվում է բույլ և նրանում հանդես եկող հնչյունը՝ թույլ կամ չհարացված: Օր. հեղկանավ բառում դ-ն գտնվում է թույլ դիրքում, քանի որ այն՝ աղվելով հաջորդ խուլ բաղաձայնից, կորցնում է իր ձայնեզույթյան հատկանիշը՝ նմանվելով շնչեղ ք-ին:

Հայերենի բաղաձայնների համար ուժեղ դիրքեր են բառացիորեն և բառամեջը (ձայնավորներից առաջ կամ նրանց միջև): Ինչպիսի՞ զուս-տաս-թաս, գորի-կարի-բարի, կաղամբ, Աղամ, ա-կոս, սեվաշյա և այլն:

Բառավերջը հայերենում բաղաձայնների համար մասնակի թույլ դիրք է, քանի որ այս դիրքում տեղի է ունենում ձայնեղ պայթականների և ավելի քիչ՝ շրթականների մասնակի խլացում, այլ կերպ ասած՝ թուլացում: Հմմտ. հող-հոտ, ծակ-ծագ (արեածագ), սնուղ-սնուր, ակ-ագ, մեկ-մկ: Շփականների մոտ այս դիրքում հակադրությունները ավելի հստակ են, չնայած նրանք նույնպես թուլանում են, օրինակ՝ հավ-հախ, ով-ով, մագ-մաս, եզ-ես, ուծ-ուշ, շաղ-շախ-շան: Խոսքում, հասակապես զարարից առաջ, թուլացումը ավելի ուժեղ է, օրինակ՝ ուծ-ի մ-ն կարող է վերջում հընչվել ինչպես շ, շաղ-ի դ-ն՝ զարարից առաջ հաճախ հնչվում է որպես խ: էշ, ականջ, սեզ, մկզ, բազ, սազ, սառզ, շյուզ, մագ, անհասպազ և այլն բառերի վերջին ձայնեղ բաղաձայնները ձայնեղ են հնչվում այդ բառերի ինքնուրույն արտասանվածքում, իսկ խոսքում հաճախ խլանում են հստակպես՝ արտաբերության վերջում:

Վերոհիշյալ օրինակներում թուլացման կամ մասնակի շեղբարձման է ենթարկվել ձայնեզույթյան հատկանիշը: Հայերենում շեղբարձյալ հատկանիշը նույնպես ենթակա է շեղբարձման: Օրինակ՝ քակ-քոխ, տակ-տախ, քակ-քախ (ք) հակադրությունում կ-ի ու ք-ի արտասանությունը հստակ չի պահպանվում, իսկ շատ արիջ գիպերում խուլ կամ ձայնեղ պայթականները հնչվում են շնչեղ՝ չհակադրվելով նույն պայմաններում խուլներին: Օրինակ՝ զուս, զուգս, զուզվել, էզ, էլեկտրոս, էլեպեդիցիա:

§ 42. Հայերենի ձայնեղ պայթականների համար պատմականորեն թույլ դիրք է եղել նաև Ի-ից և զ-ից հետո գտնված դիրքը, որտեղ ձայնեզույթյան հատկանիշը կորել է, և հնչույթը նման-

վել է նույն շարքի խուլ կամ շնչեղ բաղաձայնին: Օրինակ՝ աղջիկ (ախիկիթ, աղբյուր (ախպյուր), էրբյուր (յեխպայր), աղբ (ախպ), ողբ (վօխթ), ողջ (վօխշ), ամբողջ (ամբոխշ), առողջ (առօխշ), արջ (արշ), վարդ (վարթ), նամբողջ (նամբոխթ), անուրդ (անուրթ), կարգ (կարթ), բարձր (բարթր), վարձող (վարթթ), դերձակ (դերջակ) և այլն:

Այս դեպքում առկա է պատմականորեն ավարտված հնչյունական փոփոխություն, որի հետևանքով մեղ ավանդվել են հնչյունափոխված ձևեր: Դրանք ընդունված են և զործածվում են որպես այդպիսիք՝ կազմելով արտասանական նորմա: Ուրեմն սխալ կլինեք սակ, թե Ի-ից կամ զ-ից հետո ձայնեղ հնչյունները արտասանվում են խուլ, քանի որ այժայ դեպքում մենք գործ ունենք ոչ թե զործող օրինաչափության հետ, այլ ավանդված հնչյունափոխված ձևերի հետ:

Բացի դրանից, այժայ դեպքերում ոչ Ի-ն և ոչ էլ զ-ն չեն պահպանել իրենց հիմնական հատկանիշներից մեկը՝ ձայնեզույթյունը, առաջինը վերածվել է խուլ շփական Ի-ի, իսկ զ-ն՝ խ-ի: Դժվար է տեսլ, թե որ հնչյունափոխությունն է ավելի առաջ տեղի ունեցել և ազդել մյուսի վրա՝ զ-ն ու Ի-ն են խլացել և ազդել ք, գ, դ, ը, ը-ի վրա, թե ընդհակառակը՝ վերջիններս մեն խլացել և ազդել զ-ի ու Ի-ի վրա: Այս վերջին հնչյունափոխությունը թիրևս ավելի հավանական է, քանի որ բառավերջը առհասարակ այնպիսի դիրք է, ուր կատարվում է արտասանության թուլացում, որի հետևանքով շատ հաճախ է տեղի ունենում խլացում:

§ 43. Սակայն ժամանակակից հայերենում լայն տարածում է գտնում արտասանական այն միտումը, երբ Ի-ից ու զ-ից հետո սկսում են արտասանել ոչ թե խուլ պայթականներ, այլ ձայնեղ պայթականներ: Օրինակ՝

գոգզ, գոգզագոգծոյրյուն, արգապիխ, արջ, ուղեճ, մեծարգո, ֆուշարձան, անարգ, անուրջ, արչունգրու, արգո, արգանց, արգապիխ, Արավերդի, ճավաղ, բուրգ, ուրջ, բուրբ, հարգ, հաղաբշ, կամուրջ, մազձ, սարգ, երջանիկ, շջան, արձագանք, լուրջ, ճուրջ, անարգել, բուրբովիկ, բուրբուջ, շջապատ, գարգանայ, մեծավար,

6 Բառերի արտասանությունը ջույց տալու համար պարզորոշում ենք տառադարձված ձևերը, որոնք ապես ենք շեղ փակագծերով:

մակարդակ, երիտասարդ, հորդա, վարդենիս, վերջյան, հորդորել, հարդարանք, խուրդ, շնչանկնծություն:

Որքան՝ հայերենի բազմաթիվ բառերում ր-ից ու դ-ից հետո հանդիպում են խուլ պայթականներ, իսկ մի շարք (թվով մի քանի տասնյակ) բառերում՝ ձայնեղ պայթականները Գրքային տարբերությունները այս դեպքում հնչույթային արժեք չունեն:

§ 44. Գործածության տեսակետից այս բառերն ունեն ավելի սահմանափակ շրջանակներ՝ պատմականորեն հնչյունափոխված ձևերի համեմատությամբ: Գրանցից յատե՛րը նորակերտ կամ գրարարից փոխառյալ բառեր են: Մակայն կան նաև սովորական ու հաճախ գործածվող բառեր: Բացի այդ սահմանափակումից այս քանակի բառերը միտում ունեն անցնելու առաջին ցանկը, այսինքն՝ ենթարկվելու խլացման: Օրինակ՝ վարդենիս դուրդի անունը սկզբում արտասանվում էր դ-ով, իսկ հետո՛հետո սկսեց արտասանվել ր-ով:

Կան նաև անցումային ձևեր, այսինքն՝ բառեր, որոնց արտասանությունը անկայուն է: Ոմանք այդ բառերի պայթականների արտասանում են ձայնեղ, մյուսները՝ խուլ: Օրինակ՝ երջանիկ (երջանիկ), շուրջ (շուրջ), արձագանք (արցագանք) և այլն:

Այսպիսով՝ հնչույթական կազմի տեսակետից պետք է ընդունել, որ վարդ, մարդ, ողբալ և նման բառերի կազմված են (վարթ-), (մարթ-), (վոթպալ) հնչույթներից, որոնք զբույթյան մեջ արտասայտվում են այլ կերպ: Կարելի է ասել, որ գրությունը այդ բառերում ավանդական է, իսկ արտասանությունը՝ համեմատաբար նոր:

Եթե ժամանակակից հայերենում չլինեին երիտասարդ, զորդ, սպեռն և նման ձևերը, ապա վարդ, մարդ, ողբ բառերում ր, գ, դ-ի համար ր-ի և դ-ի մոտ գտնված դիրքը կորելի էր համարել թույլ դիրք, որտեղ ձայնեղացման հատկանիշը կորչում է: Մակայն բացառությունների թիվը մեծ է, արտասանական սղբայինն միտումը սովոր, ուստի մենք չենք կարող ր-ի և դ-ի մոտ գտնված դիրքը համարել թույլ դիրք:

§ 45. Հայերենի ձայնեղ բաղաձայնների համար թույլ դիրք է խուլ բաղաձայնից առաջ գտնված դիրքը, որտեղ գործում է հետադարձ առնմանության հնչյունափոխությունը, և ձայնեղը կորցնում է իր ձայնեղության հատկանիշը: Օրինակ՝ ծաղիկ արտասանվում է դ-ով, բայց ծաղիկնից (խ) (դ-ն մասամբ կամ լրիվ խլանում է կ-ի ազդեցությամբ), հավիտ (վ)—հավատաշուշան (թ) (վ-ն խլանում է շ-ի ազդեցությամբ), հեղիկ (դ)—հեղիկամվ (ֆ) (դ-ն վերածվում է ք-ի կ-ի ազդեցությամբ): Ենչևն է՝ Կովկաս բառի վ-ի արտասանությունը: Թույլ դիրք է նաև խուլ շփականներից առաջ գտնված դիրքը, որտեղ նրանք չեն հակադրվում պարզ խուլների ու ձայնեղների, ինչպես՝ ախար, փսս, սասի, մաֆա, էֆայիցիցիա, էֆկուրսիա, էֆպրպրացիա:

Եթե խոսքում կամ բառում հանդիպում են երկու պայթական, ապա նրանցից առաջինը գտնվում է թույլ դիրքում և սովորաբար ազդվում է հարող բաղաձայնից՝ խլանալով կամ շնչեղանալով: Օրինակ՝ այդպես, այդքան, անեծք, ակաթիվ, մեկտեղ, միաք:

§ 46. Ձայնավորները իրենց համավարդում տարբերակիչ հատկանիշների գրությունն մեջ միջորինակ չեն ի, ու ձայնավորները իրենց որակի պահպանման տեսակետից ավելի թույլ են ա, օ, է ձայնավորների համեմատությամբ: Գրանք կ՝ պատմականորեն, այսինքն՝ ը-ի վերածվելուն, կամ լրիվ անհետանալուն:

Ձայնավորները հայերենում ենթարկվում են քանակական փոփոխության՝ ճիմնականում պահպանելով իրենց որակական առանձնահատկությունները ի տարբերություն ռուսերենի, որտեղ ձայնավորները, շեշտադրակ դիրքերում, կրում են որակական մեծ փոփոխություններ: Հմմտ. ОХИО (ակնո), բայց ОХИА (օկնո):

Այսպիսով՝ հնչույթը խոսքում հանդես է դալիս իր տարբերակների կամ փոփոխյակների տեսքով, որոնք պայմանավորված են հնչյունական շրջապատով և բառային շեշտով: Բոլոր դիրքերում հայերենի հնչույթների կրած փոփոխությունները մեծ չեն և չեն ազդում նրանց տարբերակիչ հատկանիշների վրա: Իսկ երբ միաձուլվում են մեկ կամ երկու հատկանիշները, ապա սեղի է ունենում շեղբացման երևույթը:

7 Հայերենի պատմական հնչյունափոխության մասին կրկնով է Հենրիանտարությունն բաժնում:

5. ԱՍՅԻՐԵՆԻ ԸՆԶՈՒՅԹԱՅԻՆ ԱՄՍԱԿԱՐԳԸ

ԱՍՅԻՆԱՎՈՐՆԵՐ

§ 47. Ժամանակակից արևելահայ զրահյան լեզուն ունի 6 ձայնավոր և 30 բաղաձայն հնչույթներ: Զայնավորներն են՝ ա, օ, ու, ի, է, բ: Դրանք միմյանց հետ կազմում են հակադրություններ, այսինքն՝ ունեն իմաստատարբնակիչ ֆունկցիա, բնորոշվում են որոշակի բաշխվածությամբ ու համախոսությամբ և ունեն որոշյն արտասանական ու ֆիզիկական հատկանիշներ:

Զայնավորներին, ինչպես նաև բաղաձայններին, հնչույթային արժեքը բացահայտվում է հակադրական զույգերում, այսինքն՝ այնպիսի զույգ բառերում, որոնք իրենց արտահայտության պլանում (հնչյունական մակարդակ) տարբերվում են միայն՝ սովյալ հնչյունով կամ հատկանիշով: Զույգերի հակադրության եղանակով կարելի է հասնել հնչույթների տարբերակիչ հատկանիշների ստանձնադրմանը, որը և կազմում է հնչույթային վերլուծության վերջնական փուլը:

§ 48. Հայերենի բոլոր ձայնավորները, բացառությամբ ը-ի, միավանկ և ավելի սակավ զույգերում բազմավանկ բառերում կազմում են հակադրական զույգեր: Իսկ ը-ն իր զիրքային սահմանափակության պատճառով հակադրվում է մյուս ձայնավորներին միայն երկվանկ և բազմավանկ բառերում (բառ-աստ, ընդ-անդ, փրստ-փաստ և այլ կարգի հակադրությունները ընդհանուր օրինաչափությունը չեն խախտում):

§ 49. Ա ձայնավորը հակադրական զույգեր է կազմում բոլոր ձայնավորների հետ: Այսպես՝

ա-է երակ-երեկ, քարեր-քերեր, [մարթ]-մերթ, մասաղ-մետաղ

ա-օ թաղել-թողել, [մարթ]-մորթ, Անիկ-Օնիկ

ա-ը տաներ-տրներ, մատնել-մրտնել, խարել-խորել, հարել-հորել, բանական-բնական

ա-ու տանկ-տոճկ, տար-տուր, սար-սուր, խալ-խուլ

ա-ի համար-հիմար, կան-կին, կամ-կիմ, բալ-բիլ (երկնագույն)

§ 50. Օ-ձայնավորը հակադրական զույգեր է կազմում բոլոր ձայնավորների հետ: Այսպես՝

օ-ա գոլ-գալ, շող-շաղ, տող-տաղ, կոպ-կապ, կոթ-կաթ, բոջ-բայ, մոտ-մատ

օ-ու [օթ]-ութ, ճոթ-ճութ, փող-փուղ, կտոր-կուտր, կոթ-կութ-մոտ-մուտ, թոզ-թուզ, հոն-հուն

օ-ն տող-տեղ, կոտ-կետ

օ-ի գոտի-գիտի, բոծ-բիծ

օ-ը կատրել-[կըրել], կորել-[կըրել], մատնել-[մրտնել], հորել-[հորել]:

Օ ձայնավորը գրեթե չունի զիրքային սահմանափակում, սակայն համեմատաբար քիչ է հանդիպում բառավերջում (օր.՝ հետք, տք, Համք, Մարք և այլն):

Օ-ն ինչպես և ա-ն հաճախակի գործածվող ձայնավոր է և որակական փոփոխություններն չի ենթարկվում:

Հայերենի օ-ն, ինչպես և ա-ն, տարբեր զիրքերում ենթարկվում է միայն քանակական փոփոխությունների, այսինքն՝ շեշտի տակ երկար է և ինչքան հեռանում է շեշտից, այնքան ավելի կարճ է արտասանվում, հատկապես բազմավանկ բառերում: Սա վերաբերում է նաև է, ի, ու ձայնավորներին, բայց այն հնչյունափոխական դեպքերից, որոնց մասին կետովի առանձին:

§ 51. Ի ձայնավորը հակադրվում է մյուս ձայնավորներին՝ կազմելով հակադրական զույգեր: Այսպես՝

ի-ա կիրճ-կարճ, կիր-կար, դիր-դար

ի-ու կիտ-կուտ, թիզ-թուզ

ի-օ կիր-կոր, թիզ-թեզ

ի-է կիր-կեր

ի-ը սիրել-[սըրել]

Սրկվանկ բառերում ի-ն ավելի քիչ է հակադրվում ը-ին, քանի որ հնչյունական օրենքի համաձայն միավանկ բառերի ի-ն ինչպես և ու-ն բառի աճման ղեպքում շեղաբացել են և վերածվել ը-ի կամ անհետացել:

§ 52. Է ձայնավորը հակադրական զույգեր է կազմում բոլոր ձայնավորների հետ: Այսպես՝

է-ա հետ-հատ, սար-սեր

է-օ հեռ-հոտ, կեր-կոր, քերի-քորի

է-ու կետ-կուտ, սեր-սուր, տեր-տուր

է-ի սերել-սիրել, թեզ-թիզ

է-ը սերել- [սրել], բերել- [բրել]

§ 53. Այսպիսովորը հակադրում է բուր և ճանապարհներին: Այսպես՝

ու-ա սուր-ասր, լուր-լար

ու-օ ութ-(օթ), մուր-մոր, թուր-թոր, բուր-բոր, կուտ-կոտ

ու-ի կուտ-կիտ, մուր-միր, թուր-թիր

ու-ն կուտ-կնտ, թուր-թնր, բուր-բնր


ու-ը բուրել-[բրել], բուրել- [բրել], մուրբեր-[մրբեր]:

Այսպիսով, հայերենի է ձայնավորները միմյանց նկատմամբ ցուցաբերում են իմաստատարբերակիչ ֆունկցիա: Գրանցից հինգը շունեն դիրքային սահմանափակում ու ենթարկվում են որոշակի քանակական փոփոխությունների, որը սակայն չի ազդում նրանց հիմնական որակի վրա:

§ 54. Խմբավորելով վերը բերված հակադրությունները՝ կարելի է առանձնացնել բերանի ետին մասում արտաբերվող ձայնավորներ (ա, օ, ու), որոնք արտաբերվում են բերանի առջևի մասում արտաբերվողներից (ի, է): Այս հատկանիշը տարբերակիչ հատկանիշների ցանկում նշված է որպես «ետին-ու ետին» հակադրություն (տե՛ս § 84):

Ետին ձայնավորները իրենց ներսում ըստ լեզվի բարձրացման աստիճանի կազմում են եռաստիճան հակադրություն՝ ստորին, միջին և վերին: Այս հակադրությունը մեր տարբերակիչ հատկանիշների համակարգում մասնատված է երկու երկանգամ հակադրությունների՝ «վերին-ու վերին» ու «ստորին-ու ստորին»:


Առաջին շարքի ձայնավորները իրենց ներսում կազմում են երկաստիճան հակադրություն՝ ի-լ (տե՛ս ձայնավորների դասակարգման աղյուսակը):



94. 1.

Այսպիսով ստացվում է համակարգի ու ներդաշնակ հարաբերություն, որը կարելի է ներկայացնել հետևյալ դասարով (տե՛ս զճ. 1):

Այն ներդաշնակ կլիներ, եթե հայերենում գոյություն ունենար [ջ]-նման առաջին շարքի ձայնավոր, որը կհակադրվեր է, ի ձայնավորներին, կամ եթե տարբերակիչն երկու է ձայնավորներ՝ փակ ու բաց: Բայց բանի որ ժամանակակից հայերենում չկա այդպիսի ձայնավորներից և ոչ մեկը, ուստի հայերենի ա-ի համար ստեղծվում է արտասանական տատանումների լայն դաշտ՝ բացից մինչև միջին աստիճան, և ձգտելով դեպի սիտանմի ներդաշնակությունը ա-ն արտաբերվում է ոչ այնքան ետին շարքում, այլ մի քիչ դեպի առջևի մասը. այսպիսի հարաբերության դեպքում ձայնավորների համակարգը ստանում է հետևյալ եռանկյան տեսքը (տե՛ս զճ. 2):



94. 2.

Քանի որ դասգիրք ունի միայն երկու շարվածներ, այսպեսով չի ներկայացված հայերենի ձայնավորների մի հատկանիշ ևս՝ շրթնայնացումը: Ետին շարքի ձայնավորները (բացի ա-ից) սովորաբար լինում են շրթնայնացված: Գրական հայերենում չկան առաջին շարքի շրթնայնացված ձայնավորներ, որոնք կհակադրվեն ետին շարքի համապատասխան ձայնավորներին: Այս պատճառով շրթնայնացման հատկանիշը ավելի շատ դիրքային պայմանավորված հատկանիշ է, քան թե տարբերակիչ:

§ 55. Ընդհանուր առմամբ հայերենում հնույթորեն չեն տարբերակվում երկար ու կարճ ձայնավորներ, այսինքն՝ չկան երկու բաներ, որոնք տարբերակվեն միևնույն ձայնավորների եր-

կարողությամբ ու կարճությանը: Սակայն ձայնավորները տարբերվում են միմյանցից չորսբանջյութին հասուկ տեղությունները: Այսպես՝ ա և օ ձայնավորները համանման պայմաններում մի փոքր ավելի երկար են, քան՝ ի-ն և ու-ն, իսկ ք ձայնավորը առհասարակ շատ կարճ է, բացի այն դեպքերից, երբ հանդես է գալիս որոշիչ հոդի ֆունկցիայով: Մյուս կողմից, ձայնավորի տեղությունը կախված է բառի մեջ նրա դիրքից (ձայնեղներից առաջ ավելի կարճ, խուլներից առաջ համեմատաբար ավելի՝ երկար), շեշտակիր կամ անշեշտ լինելուց, ինչպես նաև այն բանից, թե տվյալ ձայնավորը շեշտից ինչ հեռավորության վրա է գտնվում:

Առանձին ձայնավորի տեղությունը կախված է նաև խոսքի ընդհանուր տեսակից: Որքան արագ է խոսքը, այնքան ձայնավորները համեմատաբար կարճ են:

Մասեր. — Ձայնավորների տեղության մասին ավելի հանգամանաբար կետով նրանց նկարագրության ժամանակ:

§ 56. Այստեղ նպատակահարմար է մանրամասն քննել ք ձայնավորը գործառական տեսակետից, քանի որ այն հայերենի ձայնավորական համակարգում ունի իր ուրույն տեղը: Ը-ն տարբերվում է մյուս ձայնավորներից իր սահմանափակ բաշխվածությունը՝ այն երբևէ հանդես չի գալիս շեշտված վանկերում և այդ առումով խախտում է նույնիսկ հայերենի շեշտի կառուց տեղը, քանի որ երբ բառը վերջանում է ք հոդով, շեշտը դառնում է վերջինիս: Հմմտ. բորբոս-բորբոսե՛լ, բորբոսեցնե՛լ և բորբոսեցնելը (շեշտը վերջնավանկային չէ): Նույնիսկ որոշ բարբառներում, որտեղ հանդիպում է շեշտված ք ձայնավոր, այն շեշտակիր է միայն այն դեպքում, երբ տվյալ բառում բոլոր ձայնավորները ք-եր են. օրինակ՝ [կըբըբը՛մը]-կտորումը, [ցըբը՛մը]-ցելումը: Այս վերաբերում է նաև այն բառերին, որտեղ ք-ն միակ ձայնավորն է: Օրինակ՝ ըստ, ընդ:

Բառակազմում այն հանդես է գալիս սահմանափակ թվով բառերում, հիմնականում ուղղային ձայնորդներից առաջ. օրինակ՝ բմբիշ, րմրստ, րմբոնի, բմպան, բնզ, բնզակեր, բնզառաչել, բնզիստել, բնզաճակ և այլն: Միայն երկու բառում (բզձուլ, ըստ) ք-ն հանդիպում է ոչ ուղղայինից առաջ. այս դեպքում ք-ն հերթադրված ի-ի ու ա-ի արդյունք է:

Վերը բերված հակադրություններից (§§ 48—51)՝ կտորել- [կտորել], մատնել- [մտնել], սիրել- [սըրել], բերել- [բըրել], մուտքի- [մըտքի], մենք տեսնք, որ ք-ն հակադրվում է հայերենի բոլոր ձայնավորներին միանման հնչյունական պայմաններում և կազմում հակադրական դուբլեր: Յուրաքանչյուր հակադրական դուբլ են կազմում [երկար] և ընկար բառերը, որտեղ ք-ն և ն-ն փոխում են իրենց տեղերը՝ ապացուցելով, որ ք-ն միայն դիրքային հնչյուն չէ: Այս հանդամանքը հիմք է ծառայում ք-ն համարելու ինքնուրույն հնչյունի:

§ 57. Բազմաթիվ դեպքերում ք-ն հանդես է գալիս չեզոքացված ձայնավորի դերում: Հայ լեզվաբանության մեջ այդպիսի դեպքերը ընդունված է համարել հերթադասումներ՝ սակայն որոշ առանկան տեսակետից դրանք ավելի ճիշտ կլինեն դիտել որպես ձայնավորների չեզոքացում թույլ շեշտադրի դիրքում:

Հատկանշական է, որ ք-ի հետ հերթադասվում են հիմնականում թույլ ի և ու ձայնավորները, ժայած կան դեպքեր, երբ նույն հնչյունափոխման են ենթարկվել նաև, այսպես կոչված, ուժեղ ձայնավորները՝ է-ն, ա-ն և օ-ն (վերջիններս ավելի քիչ):

§ 58. Ամենաշատը տարածված է ք-ի՝ որպես վանկարար ձայնավորի (ձայնավորական հենարան) գործածությունը բաղաձայնական կուտակումներում՝ դրանց արտասանությունը հեշտացնելու համար. օրինակ՝ [տըխտը], [գըրցնել], [զըբռանել], [ըբռանել], [կըտորել], [զըրախտ], [զըլարոց], [խըլալոց], [խըլուրդ], [թըբրուկ], [կըռուծել], [կըբիվ], [կըպչել], [կըսույց] և այլն:

Այս է նման շատ բառերում ձայնավորը չի ընկալվում որպես մի այլ ձայնավորի չեզոքացված (կամ հերթադասված) ձև, այլ ընկալվում է որպես տվյալ բառերում պարտադիր արտասանվող ձայնավոր, և այդ բառերի հնչյունային պատկերը պետք է ներկայացվի ք ձայնավորով: Մի շարք բառերի նկատմամբ կատարված պատմական պրոպոսիցիաները ցույց են տալիս, որ այդ բառակազմի բազմաձայնների միջև դրաբարում կամ նախադրա-

3 Այս մասին ավելի մանրամասն խոսվում է «Հնչյունագիտությունը բառերում, որտեղ հատկապես ուղղադրություն է գործվում պատմական հնչյունափոխության վրա: Այստեղ մենք փորձում ենք մոտենալ այդ երևույթի նկարագրության լեզվի համաժամանակյա գործածության տեսակետից:

բարյան վիճակում նախօրոք եղել է մի այլ ձայնավոր, հիմնականում ի կամ ու, որը մուշանայով վերածվել է շեզթ ք-ի: Սակայն մյուս դեպքերում ք-ի նախկին վիճակի վերականգնումը շատ զրգովարանում է և պետք է միայն ենթադրել, որ այդ դեպքերում նույնպես եղել է մի ձայնավոր, որը շեզթացել է վերածվել է ք-ի, կամ որ նման կապակցություններում համարանկախությամբ սկսվել է արտասանվել ք վանկարը ձայնավորը: Այսպես, ընդ նախդիրքի ք-ն ծագում է ա-ից (անդ > ընդ): Ը ձայնավորի նախնական վիճակը զգվար է արոշել այն պարզ պատճառով, որ այն հնագույն անբասերում էլ ոչ բուրք դեպքերում է արտացոլվել գրութայն մեջ, միայն սարբեր գրություններից կարելի է կրահել նրանց անկախութան մասին:

Ժամանակակից հայերենի հնչյունական համակարգը նկարագրելիս, սակայն, անհրաժեշտ է փաստերը նկարագրել այնպես, ինչպես նրանք կան այժմյան վիճակում, այսինքն՝ կատարել երևույթների համաժամանակյա ուսումնասիրություն: Միայն պատմական առումով է անհրաժեշտ համեմատել նախնական վիճակը այժմյանի հետ: Այս առումով ք ձայնավորը ժամանակակից հայերենում նըման դեպքերում համզն է դալիս ոչ հնչույթային արժեքով: Նույնպիսի դեր է կատարում ք ձայնավորը ձայնարկություններում և բնածայնական բառերում, մի սարբերությամբ, որ այստեղ այն միակ արմատային ձայնավորն է. օրինակ՝ [խըշշալ, վըշշալ, սըվ-ըվալ, գըռալ, բըխկալ, շըռըռալ, փըրկիւլ, հը, փըստ] և այլն:

§ 59. Հատկանշական է, որ գրութայն մեջ ք-ն միշտ չէ, որ արտացոլվում է. այն չի արտացոլվում նաև այն դեպքերում, երբ ք-ն հանդես է գալիս բառամիջում շեզթացված (հերթագալուղ) ձայնավորի դործառնությամբ, այսպես կոչված գաղտնավանկային ձայնավորի դերում: Ը ձայնավորը գրութայն օրինականացված է բառասկզբի մ և ք ձայնորդներից առաջ (ընկեր, բնկավ, բնասիւք, ընտի, ըմբռնել, ըմբռտ բառերում) և այդ բառերով կազմված բառարարություններում (դաօընկեր, համընդհանուր) ըստ, իրձ բառերի բառակազմական ձևերում և բառակերպում՝ որոշել հողի դերում: Գաղտնավանկային ք ձայնավորը գրվում է միայն վանկատման և տողագրանի ժամանակ: Սակայն նրա ճիշտ բաշխումը բաղաձայնների կուսակման դեպքում խիստ կանոնավորված չէ,

որով էլ զգվարանում է այդպիսի բառերի ընթերցումը սովորաբան-րի և մանավանդ օտարների համար:

§ 60. Սովորաբար բառասկզբում, երկու-երեք բաղաձայնների գոգրական դեպքում, այն արտասանվում է առաջին բաղաձայնից հետո, իսկ երեք, չորս կամ հինգ բաղաձայնների դեպքում՝ նաև երկրորդ կամ երրորդ բաղաձայնից հետո: Օրինակ՝ [շըթես]՝ առաջինից հետո, [վըրընդել]՝ առաջինից և 2-րդից հետո, [արգ-գալ]՝ առաջինից հետո, [պըրպալես]՝ առաջինից, 3-րդից հետո, [կըրարել]՝ առաջինից հետո, [Մըրկըրտի]՝ առաջինից, 2-րդից հետո, [բըրնել]՝ առաջինից հետո, [սըրգըրնել]՝ 2-րդից հետո և այլն:

Այստեղ մենք փորձում ենք սալ ընթերցանություն մի ընդհանուր կանոն, որը անսահմալ բառերի ծագումնաբանական ու քերականական հնչյունափոխական կողմը հնարավորություն է տալիս ընթերցողին ճիշտ արտաբերել հայերենի գաղտնավանկային ք ձայնավորները: Սակայն ժամանակակից գրական արտասանությամբ մեջ կան բառակզբի բաղաձայնային գոգրողներ, կազմված 2 կամ 3 բաղաձայնից, որոնց մեջ գաղտնավանկային ք չի արտասանվում: Մոտավոր հաշվումներով դրանք մի քանի տասնյակ բառեր են, որոնք խոսքում շատ զործածական են: Այդ բառերը կազմված են մի շփական՝ ա. գ. շ, ու մի պայմական բաղաձայնից, Օրինակ՝ սկիբը, [սկըրսկ], սպիտակ, սպանել, սպառ, [ի սպառ կապակցություն մեջ, և ոչ թե [սըրգալ], սպի, սպանել, սպառնալ, ստուգել, ստիպել, ստույգ, ստեղծել, ստուղիս, ստուկ, ստուգաբել, ստիճե՛, ստեպ, ստվեր, սփյուռ, ստամոքս, սկալպառակ, սկիբը [սկըրգընել], սկըրսկ, սպընդ, սպընգ, սֆն, սֆանչելի, սֆինեմ, սրբունել, գգուչ, գրապվել, գգուչանալ, գգոն, գգեստ, գգալի, շտար, շտմարան, շտապել, շտապ, ստեպ-ստեպ, ստույգ և նրանցով կազմված բարդ բառերը:

Մենքը.— Այն կարծիքը, որ սպ, ստ, սկ, շտ, շկ (սպառ, սպանել և նման բառերում) ք ձայնավորը արտասանվում է բառի սկզբում, փորձառական տվյալներով չի ապացուցվում, ժամանակակից գրական արտասանության համար բնորոշ է այդ կապակցությունների առանց ք-ի դործածությունը [Ըպպանել] կամ [սըրպանել], [ըսպանել] կամ [սըրպանել] և նման արտասանությունների լսողի կողմից որակավորվում են որպես բարբառային:

արտասանությանը նույնը սակայն չի կարելի ասել արևմտահայերի համար նրանց արտասանությանը [ըսպասել], [ըզբազել], [ըզբառնել], [ըսպուել] (թույլ և շատ կարճ ը-ով) ձևերը շատ սովորական ու զործածական են, ուստի և կազմում են արևմտահայերենի արտասանական բազայի կարևոր կողմերից մեկը:

Մյանցից պետք է տարբերել այն բառերը, որոնց մեջ առաջին բաղաձայնից հետո ը-ն օտնի հերթազարգացող հնչույթի արժեք՝ փոխարինելով բառի հիմնական ձևի ու կամ ի ձայնավորներին. օրինակ՝ [արտել]՝ բառի հիմնական ձևն է սատ, [զբկել]՝ զուրկ, [զբուել]՝ զուտ բառից, [ըբուկել]՝ շիտակ, [ըբզավոր]՝ սուր բառից, [ըբբազան]՝ սուր բառից, [ըբբատուրի]՝ սիրտ բառից, [ըբբախտել]՝ սուր բառից և այլն:

Այս դեպքերում էլ, ինչպես տեսնում ենք, ը-ի գաղտնավանկային զործածությունը ենթարկվում է մերձհայտ օրենքին, այսինքն զործածվում է առաջին բաղաձայնից հետո, իսկ երեքից ավելի բաղաձայնների հանդիպման դեպքում, նաև՝ երկրորդից հետո:

Այսպիսով՝ հայերենի ք ձայնավորը իր հնչույթայնության տեսակետից հանդես է գալիս հիմնականում երեք Ֆունկցիայով՝ ա) որպես ինքնուրույն հնչույթ, բ) որպես չկարգացված (հերթազարգացող) ձայնավոր՝ հիմնականում փոխարինելով ի և ու ձայնավորներին շեշտադրվող դիրքերում, գ) որպես ձայնավորական հենարան բաղաձայնների կուտակումների ժամանակ: Գրանցիցը հրատման մեջ մի շարք բառակազմերի ժամանակ: Գրանցիցը հրատմանում են առանց ը-ի, Բառախիչի ու բառավերջի առանց՝ Ը ձայնավորի արտասանության դեպքերը ավելի շատ են, ուստի հարկ չկա դրանք մանրամասն թվարկել: Իրենք միայն մի քանի տիպի կապակցություններ:

Բառավերջ՝ [կելսծ], [մաղծ], [ղիկց], այծ, ամանց, պխործ, սկիբ, կազմ, ազգ, ազգ, արվեստ, անխալետ, անխալտ, անկեղծ [խծ], [նոխ], ամբարիշտ, անշուշտ, անվարձ, ալբ, անցուղարձ, անանց, անպոխտ, անբ, անբ, ավանդ, արագարձ, անաղծ և այլն:

Բառամեջ՝ անտու, անլու, արձակ, [ախալուր], Ախամար, ախաակ, [ախցան], անբասի, անգլիացի, անգրծ, [օխալար], անցկացնել, առաջացնել, առանձնակի, [առաշնոր], անանցբային, առիվ:

§ 61. Հնչույթների տարբերակիչ ֆունկցիան որոշելու համար կարևոր է ու միայն հակադրական զույգերի հայտնաբերումը, այն հնչույթների հաճախության որոշումը խոսքում կամ տեքստում: Որքան ավելի հաճախական է տվյալ հնչույթը լեզվում, այնքան ավելի մեծ է նրա բեռնվածությունը, և այնքան ավելի քիչ է ենթակա փոփոխման կամ անհետացման:

Հայերենի հնչույթների հաճախությունը որոշելու համար կատարվել է հետևյալ փորձը: Ընտրվել են 10000 նիշանոց հատվածներ զեդարվեստական, գիտական, լափածո տեքստերից, որոնք հանձնատարվել են հաղորդավարների կարգադատ Կարդացված անբյուրեր այնուհետև տառագրվել են, այսինքն զրանցվել են թուր գաղտնավանկային ք ձայնավորները, նշվել են խուլ կամ շնչող բաղաձայնները, որոնք զբոսբյան մեջ արտահայտվում են ձայնողներով (օրինակ՝ օզ, մարդ, բարձ, այդ), տառագրված են որպես [օթ], [մարթ], [բարթ], [այտ] և այնուհետև կատարել հաշվումները¹⁰:

Ինչպես ցույց են տալիս հաշվումները, ձայնավորների համար տեքստի տարբերությունը փոփոխության գրիթն չի տալիս. ամենահաճախ հանդիպող ձայնավորը միշտ ա-ն է, հետո՝ է-ն: Միայն ու և ք ձայնավորները երկու տեքստում փոխում են իրենց տեղերը: (Տե՛ս աղյուսակ N 3):

Բաղաձայնների տառանումները ավելի մեծ են, սակայն ն, մ, ր ձայնորդները ամենահաճախակի կրկնվող հնչույթներն են և գրավում են աղյուսակի վերջին վեց տողերը: Այնուհետև գալիս են ս, կ, վ բաղաձայնները, որոնք մեկ կամ երկու տեղով են տարբերվում միմյանցից: Աղյուսակի վերջին տեղը զբաղում է [ֆ] հնչույթը ըստ զեդարվեստական տեքստի, մինչդեռ ամբնմատիկական տեքստում այն համեմատաբար հաճախակի է:

Քիչ հաճախական են նաև կիտայիականները, որոնց համար դժվար է գտնել բազմաթիվ հակադրական զույգեր: Սա նույնպես հատկանշական է այդ խմբի հատկապես որոշ հնչույթների համար:

⁹ Այդ մասին տե՛ս է. Աղալան, Գրարարի փերականություն, 1964, էջ 262—271:

¹⁰ Մեր ուսումնասիրությունը արտացոլում է երկատար և միջին սերնդի ներկայացուցիչների արտասանությունը:

ԲԱՂԱՁԱՑՆՆԵՐ

Աղյուսակ 3

Հնչյունների հանդիսակերտությունը տվողային հատարելայնությամբ

Հնչյուն	Տեքստեր (Յուրաքանչյուրը 10000 ներքև պարունակությամբ)				
	միջին տվյալ	Ն. Զարյան	Ա. Սահյան	Պ. Սարգսյան	Ֆիզիկական-թվական
ա	14,75	16,11	14,50	13,18	15,22
է	9,35	9,73	9,44	8,54	9,68
ն	8,64	8,47	8,78	7,62	9,70
բ	7,74	7,05	7,84	9,27	6,79
բ	5,50	4,76	5,51	6,42	5,29
ժ	4,64	4,73	4,49	4,30	5,04
ու	4,59	3,60	3,92	5,85	4,98
ը	4,17	4,33	4,59	4,60	3,16
ո	3,43	4,38	3,42	3,00	2,90
կ	3,42	3,93	3,67	2,87	3,20
յ	3,43	3,12	2,91	2,80	4,87
օ	3,13	3,14	3,67	2,73	2,96
վ	3,11	2,11	3,81	2,87	3,66
տ	2,93	3,00	3,17	2,50	3,04
լ	2,14	2,91	1,85	2,25	1,55
ց	1,95	1,42	2,37	2,11	1,89
ժ	1,86	1,31	1,63	1,91	2,60
ն	1,70	1,26	1,63	2,06	1,85
թ	1,38	1,16	0,97	1,31	2,10
բ	1,37	2,80	0,91	0,91	0,86
չ	1,21	1,28	1,43	1,53	0,61
ղ	1,08	1,21	0,93	0,99	1,18
յ	1,00	1,38	1,07	1,24	0,30
զ	0,99	1,25	0,83	0,83	1,03
խ	0,99	0,84	1,00	1,61	0,49
ծ	0,89	0,81	0,78	1,29	0,67
ղ	0,86	0,95	1,13	0,95	0,40
շ	0,82	0,64	1,15	0,83	0,65
ռ	0,70	0,58	0,76	1,26	0,74
յ	0,65	0,69	0,48	0,69	0,18
ղ	0,44	0,28	0,49	0,43	0,56
թ	0,29	0,00	0,02	0,02	1,12
ձ	0,28	0,38	0,10	0,25	0,38
ջ	0,25	0,22	0,13	0,36	0,32
յ	0,25	0,06	0,44	0,19	0,39
չ	0,16	0,11	0,23	0,23	0,08
Ընդամենը	9361	8495	9565	9671	9712

§ 62. Հայերենի բաղաձայնական համակարգը բավականին հարուստ է, այն բաղկացած է 30 հնչյուլներից, որոնք բաժանվում են երկու մեծ խմբի՝ հոլականների ու նեղվածքայինների: Այդ երկու խմբերը սահմանազատվում են ոչ միայն իրենց արտաբերման եղանակով ու տեղով, այլև իրենց ներքին հնչյութաբանական կազմավորմամբ: Այսպես՝ բոլոր հոլական բաղաձայնները (ինչպես պայթականները, այնպես էլ կիսաշփականները) կազմում են զուգահեռ շարքեր, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 3 անդամից՝ ձայնեղ-խուլ-շնչեղ (խուլ):

- բ-պ-փ
- դ-տ-թ
- գ-կ-ք
- ձ-ծ-ց
- ջ-ճ-չ

Այս հարաբերակցությունը, ինչպես տեսնում ենք, լիակատար է (չկան բացակայող անդամներ) և ամբողջական, քանի որ ընդգրկում է հոլականների ամբողջ համակարգը: Մյուս խումբը՝ շփականները կազմում են ոչ թե եռանդամ, այլ երկանդամ հակադրությունների շարքեր:

Այսպես՝ ֆ-վ, ս-զ, շ-ծ, խ-ղ և հ, ընդ որում վերջին ե-ն չունի իր հակադրվող անդամը, որով շարքը դառնում է թերի:

Ձայնորդները թեև իրենց ֆիզիկական բնույթով ու ֆունկցիայով կազմում են մի առանձին խումբ, սակայն մյուս հասկանիչներով՝ կազմավորման տեղով ու եղանակով, մտնում են հոլականների ու նեղվածքայինների մեջ:

Հոլական ձայնորդներ մ-ն ու ե-ն հակադրվում են միմյանց ըստ արտաբերման տեղի, միանում են ըստ անդամության հասկանիչի:

Նեղվածքային ձայնորդներն են ր, լ, յ-ն: Ինքնուրույն է թրթրուսն ո-ն, որը հակադրվում է ր-ին ըստ արտաբերման եղանակի. տառչինը թրթրուն է, այսինքն նրա արտաբերման ժամանակ լեզվի ծայրը թրթրում է՝ կպչելով լնդերին, իսկ ր-ն նեղվածքային է, այսինքն արտաբերման ժամանակ տեղծվում է մի անցք, որով օդը անցնելիս առաջացնում է շփման թույլ աղմուկ:

Այժմ քննենք հայերենի հայկան և նեղվածքային բազմ-
ձայնները հետևյալ արանական տեսանկյունից:

§ 63. Երկշքերային պայթյալները միմյանց հետ կազմում
են հակադրական դույզներ: Այսպես՝

պ—փ պատ—փայտ	պ—բ պատ—բառ	փ—բ փռտ—բուռ
տղի—տփի	պար—բար	արփի—արբի
խոպ—խոփ	պատ—բաս	փակ—բակ
ծոպ—ծոփ	պան—բան	փառ—բառ
պոկ (զալ)—փոկ	պահ—բահ	փերի—բերի
տապ—տափ		զափ—զար(բրբ.)

Այս բաղաձայնները ըստ արտաբերության եղանակի և տեղի
միևնույն են: Դրանք տարբերվում են միմյանցից ձայնեղութվամբ
ու շնչեղութվամբ:

Եթև ընդունենք, որ պ-ն հիմնական կամ ոչ շնչանկիր անզամ
է այդ շարքում, ապա բ-ն նրա նկատմամբ ունի մեկով ավելի
տարբերակիչ՝ հատկանիշ՝ ձայնեղություն, իսկ փ-ն՝ շնչեղություն:

§ 64. Նույնպիսի հակադրություններ են կազմում առամմա-
յին տ-դ-ը բաղաձայնները: Այսպես՝

տ—թ տար—թուր	տ—գ տար—գար	թ—գ թառ—գառ
տառ—թառ	տեր—գեր	թեղ—գեղ
քարտ—կարթ	տուր—գուր	թնդալ—գնդալ
մարտ—(մարթ)	հոտ—հոդ	թաք—գոք
նատ—նոթ	ատամ—Աղամ	թոն—գոն
տուրք—թուրք		հարթ—հարդ
տակ—թակ		կոթ—կոդ
պայտիլ—պալթիլ		

§ 65. Համանման հակադրություններ են կազմում ետմային
(ետևալեզվային) կ-զ-ը բաղաձայնները: Այսպես՝

կ—ք կուր—քուր	կ—դ կամ—դամ	ք—զ քալ—զալ
կերի—քերի	կերի—դերի	քաջ—դաջ
կոչիլ—քոչիլ	կալ—դոլ	քոչիլ—դոչիլ
վանկ—վանք	կոչիլ—դոչիլ	քար—դար
կանոն—քանոն	կար—դար	քարե—դարե

կար—քար	կիր—զիր	քամիլ—զամիլ
կալ—քալ	կրիլ—զրիլ	քարշիլ—զարշիլ
մոկ—[մաք]	կտալ—դտալ	հանք—հանդ

§ 66. Հակադրական դույզեր են կազմում նուև ծ, ձ, ց կիսա-
շիվականները: Այսպես՝

ծ—ց ծնծ—ցնց	ց—ձ հունց—հունձ	ծ—ձ ծեր—ձեր
ծալ—ցուլ	անց—անձ	ծաղ(ք)—ձաղ(ք)
ծոպ—ցոպ	ցախ—ձախ	ծոռ—ձոր
ծափ—ցոփ	ցող—ձող	ծորակ—ձորակ
		ծուլլ—ձուլլ
		ծառ—ձառ

§ 67. Ձ, ց բաղաձայնները մի կողմից հակադրվում են
ծ, ձ, ց կիսաշփականներին ըստ արտաբերության տեղի, մյուս
կողմից իրենց ներքում կազմում են հակադրական դույզեր՝ ըստ
ձայնեղություն և շնչեղություն:

ճ—չ ճար—չար	ճ—ջ ճան—չան	չ—չ ջան—չան
ճան—չան	ճիլ—ջիլ	չեմ—չեմ
ճանն—չանչ	ճոն—ջոն	չորի—չորի
ան—աջ(չ)	ճառ—ջառ (քարալք)	հաջող—հաչող
ճաղ—չաղ		
ճալ—չալ		
կտրիճ—կտրիչ		
ոճ—ոջ, կոճ—կոչ		

§ 68. Ինչո՞վ են տարբերվում առաջին սյունակների հակադր-
վող դույզերը, այսինքն՝ պ-ն փ-ից, տ-ն ք-ից, կ-ն ք-ից և այլն:
Տարբերությունն այն է, որ հակադրությունների երկրորդ տեղամ-
ները շնչեղացած են առաջինների համեմատությամբ, այսինքն՝
նրանց մեջ շնչի ուժը և քանակը սովելի շատ են պարզ խոչերի հա-
մեմատությամբ: Երկրորդ սյունակներում նույն խոչերը հակա-
դրվում են ձայնեղների նույնպես մեկ հատկանիշով՝ ձայնեղու-
թվամբ:

Ձայնեղացումը, ինչպես հայտնի է, պայմանավորված է ձալ-

Այդ նշանակում է, որ բառակերպը այդ բաղաձայնների համար թույլ գիրք է, որտեղ հակադրութիւնները հստակ շեմ պահպանվում:

Առամնային բաղաձայնները ձայնավորների շրջապատում գրեթե չեն ենթարկվում փոփոխացման և սովորաբար արտասանվում են կոչաւ: Այդ լսողական սովորութիւնները հաստատվում է նաև փորձառական սովորելով: Մակայն յ ձայնորդից առաջ ա-ն, դ-ն և ք-ն սովորաբար արտասանվում են քայնացած: Այս քայնացած ա, դ, ք-ն հանդիսանում են ա, դ, ք-ի գիրքային տարբերակները, Օրինակ՝ առայն, մատայն, պատայն, արդոյ, դյուրին, արդյունավետ, ստույգայն: Ավելայն ինչպես նաև՝ -ուրյուն, -ուրյան վերջավորութիւններում: Այս բառերը երբեմն նույնիսկ հնչվում են որպես՝ [ածայն], [մածայն], սակայն այսպիսի ծայրահեղ քայնացած արտասանութիւններ չի կարելի ընդունել համարել:

Մյուս հնչյուններից, նույնիսկ ի, է ձայնավորներից առաջ սովորաբար քայնացում առիկ չի ունենում. օրինակ՝ Տիգրան, տիկին, արդի, որդի, սեղիկ, բիակ, բիվ և այլն: Հայերեն այս բառերից պետք է տարբերել այն օտար բառերը, որոնք փոխառու լեզվի արտասանութեան օրինակափոխումը արտասանվում են չափավոր քայնացումով. օրինակ՝ դիրեկտոր, դիպլեկոմիկա, դիկեմա, դիսլոսեիա, էլիզեմիա, Դինա, Դիանա, դիմամա:

Առամնային պայթնական ա-ն ունի նաև մի տարբերակ, որը հանդիպում է հաջորդ է ձայնորդից առաջ, հետևյալ բառերում՝ պատենչ, ոտենե, գտենի, գաղտնիք, մատենի, մտենի, վատենի, հայտենի և այլն:

Այս դեպքում առամնային պայթնական ա-ն կորցնում է իր սովորական արտասանութիւնը և ստանում այսպես կոչված «նզգային պայթյուն», որը տեղի է ունենում ոչ թե առամների մոտ, այլ փափուկ քիմքում, երբ վերջինս իջնում է, բացելով անգային խոռոչ տանող ուղի:

§ 71. Կ, գ, ք բաղաձայնների հակադրութիւնները մեծ մասը կազմվում է բառակերպում, որը հայերենի բաղաձայնների համար ամենատանի դիրքն է: Բառակերպում այդ հնչյունների միջև եղած տարբերութիւնները պահպանվում է, բայց շատ թուլացած ձևով. օրինակ՝ կ-ի սրայթիւնը շատ թույլ է, իսկ ք-ի պայթյունի առ-

կայթիւնը զղացվում է և երևում է սղեկորապատկերներում երկաթառան, բայց թույլ շնչի առկայութեամբ:

Հատկութեամբ այդ երկու բաղաձայնների միջև եղած տարբերութիւնը շատ աննշան է, գրեթե չեզոքանում է, օրինակ՝ տակտակ, սիգ-սիք, բակ-բաք, վանկ-վաք: Իսկ հանգ-հանք հակադրութեան դեպքում իրույի ու ձայնեղի տարբերութիւնը հնկնում է գ-ի ձայնեղութեան և ոչ շնչեղածութեան վրա: Միայն չաղվանկ բառերի բառակերպի դիրքերում է պահպանվում գ հնչյունի ձայնեղութիւնը, ինչպես՝ մաք, սաք, տեգ (թեև գ-ի արտասանութիւնը շատ թույլ է, բայց մասամբ պահպանվում է նրա ձայնեղացումը):

Ե, ի ձայնավորներից և մանավանդ յ ձայնորդից առաջ կ, գ, ք բաղաձայնները զգալի չափով քայնանում են, փոխելով իրենց կազմավորման տեղը:

Ը և ա ձայնավորներից առաջ կ-ն ավելի էտին կազմութիւն ունի է-ի և ի-ի համեմատութեամբ (հմտ. կան, լիւրիք) և կյանք, կին):

Այս երկու հիմնական տարբերակները, սակայն, խոսողների կողմից չեն բնկավում, որովհետև նրանք չեն կազմում հակադրվող զույգեր. գրական հայերենում չկա երկու բառ, որոնք տարբերվեն իրարից քայնի և ետքմային կ, գ, ք-ով:

§ 72. Բառակերպում առհասարակ քիչ են ձայնեղ կիտաչփակաները: Նրանք հանդիպում են միայն մի քանի բառերում, ինչպես՝ տանք, մաքծ, անք, սանք, սառաղ: Մնացած դեպքերում օ-ն պատմականորեն խլացած է և միշտ արտասանվում է որպես շք-չեղ խուլ, հատկապես ք-ից ու դ-ից հետո, շնայած գրութեան մեջ արտահայտվում է օ-նով. օրինակ՝ վարձ, օծ, բարձ, դարձ և այլն: Սակայն կան նաև հակադրական զույգեր, օրինակ՝ անծ-անց, հունք-հունց: Այսպիսով՝ բառակերպում օ-նց հակադրութիւնները թուլանում է, թեև լրիվ չի չեզոքանում:

Ջ-ն բառակերպում սակավազեղ գործածութիւն ունի (հանդիպում է մի երկու տասնչաք բառերում). օրինակ՝ ականք, լուրջ, կանուրջ, փունջ, շուրջ, խլուրջ, մուրջ: Այս դիրքում այն չի հակադրվում շ-ին կամ ք-ին և պահպանում է իր ձայնեղութիւնը շք-նորհիվ նախորդ ձայնորդի: Ջ-ն որոշ դիրքերում խլացած է բառակերպում՝ աք, առաք, մեք, ինչպես նաև ք-ից հետո՝ վեք, արք, քրել և խուլ բաղաձայնից առաջ՝ էք, մեք, վայրէջք:

§ 73. Երբնաամենայն ֆ. վ շփականները ժամանակակից հայերենում ինքնուրույն հնչույթներ են և միմյանց հետ կազմում են ձայնեղութուն-խլութուն հակադրություն: Դրանք հայերենում հակադրական թիչ զույգեր են կազմում, քանի որ ֆ հնչույթով բուն հայերեն բառեր չկան: Փ-ն հանդիպում է հին ու նոր փոխառյալ բառերում: Այնուամենայնիվ, կարելի է գտնել մի շարք հակադրական զույգեր: Օրինակ՝

ֆըշալ—վըշալ	օֆ—ոփ
ֆազ—վազ	աֆիշ—ափիշ
ֆոխկ—վոխկ	հաֆ—հափ
	զրաֆ—զրափ

Վ-ն որոշ դիրքերում, հատկապես խուլ բաղաձայններից առաջ, չկորցնում է՝ կորցնելով իր ձայնեղացման հատկանիշը և նմանվում է ֆ-ին, օրինակ՝ հավվ, նավր, գավրել, ավտո, սովխազ և զրանցով կազմած բաղադրյալ բառերում, որտեղ արտասանության միջև ֆ է հնչվում, իսկ գրության մեջ պահպանվում է վ-ն: Կան նաև զործուն հնչյունափոխման օրինակներ, որտեղ վ-ի շեղորացումը դիրքային փոփոխության հետևանք է: Օրինակ՝ հովիտ, բայց հովտաշուշան (ֆ):

§ 74. Եունաամենայնիկ ս, զ շփականները միմյանց հետ տարբեր դիրքերում կազմում են հակադրություններ: Օրինակ՝

սոխ—զոխ	ստել—զտել
սուր—զուր	սառ—զառ
սրտհ—զրտհ	սեխ—զեռ
սեխ—զեխ	մաս—մազ
սուտ—զուտ	սառ—կզ
	խաս—խազ

Հնտադրբեր է, որ հայերենում այս հնչյունները բառավորիչ դիրքում էլ պահպանում են իրենց ձայնեղութուն-խլութուն տարբերակիչ հատկանիշը և չեն չեղարանում: Զայնեղների դիրքային խլացում տեղի է ունենում միայն մի շարք բառերում, որտեղ ձայնեղ գ-ին հաջորդում է խուլ բաղաձայն՝ մի վանկի կամ նույնիսկ երկու վանկերի սահմանում: Այս տեղի է ունենում ինչպես պատ-

մականորեն փոփոխված ձևերում, այնպես էլ կենդանի խոսքում անսմանութուն հետևանքով: Օրինակ՝ վազել, բայց վազվ, որտեղ գ-ն Բ-ի ազդեցությամբ արտասանվում է ս: Բազկարոտ բառում գ-ն բավականին խլանում է կ-ի ազդեցությամբ: Նույնն է վզկապ բառի գ-ի խոսակցական արտասանությունը: § 75. Նախամային Է, Ժ շփականները, ինչպես ս-ն, գ-ն, տարբեր դիրքերում կազմում են հնչույթարանական հակադրություններ՝ միմյանցից տարբերվելով մեկ տարբերակիչ հատկանիշով՝ ձայնեղություն: Այսպես՝

ժողով—չողով	խոշոր—խոժոռ
ժահ—չահ	խաժ—խաշ
ժանտ—չանիթ	ուշ—ուժ
	անուշ—անուժ

Ժ-ն պահպանում է իր ձայնեղությունը նաև թույլ դիրքերում՝ մի այլ բաղաձայնից առաջ: Օրինակ՝ համկու, բուժույր:

Մակայն այս բառերում ձայնեղացման պահպանմանը նպաստում է վանկատման սահմանը, որն անցնում է Ժ-ի և հաջորդ խուլ բաղաձայնի միջև:

Ս, գ, շ, Ժ բաղաձայնները ավանդական մոտեցմամբ տարբերակվում են բոտ լուրջական տպավորության. ս-ն և գ-ն անձամբում են սուպական, իսկ շ-ն, Ժ-ն՝ շշկան բաղաձայններ: Այս որակավորումը սխալ չլինելով հանդերձ, այնուամենայնիվ, ոչինչ չի ստում նրանց արտաբերման եղանակի ու տեղի մասին:

§ 76. Փափկամային խ, զ շփականները հայերենում ինքնուրույն հնչույթներ են, որովհետև լիզվում իմաստատարբերակիչ գեր են կատարում և կարող են կազմել հակադրական զույգեր: Մակայն պետք է նկատի ունենալ, որ բառասկզբի դ-ով հայերենում շատ բառեր չկան, ուստի և հակադրություններն էլ թիչ են:

խազ—ղազ	վախ—վաղ	ախ—աղ
խամար—ղամար	կախ—կող	ոխ—ող
խալախ—ղալախ (բլբ.)	ճոխ—ճող	օխ—օղ
խաղալ—խախալ	շախ—շաղ	մոխ—մող

Ղ-ն որոշ թույլ գիրքերում, բայց ոչ բառավերջում, կարող է շեղարանալ, կորցնել իր ձայնեղմության հատկանիշը և նմանվել խ-ին: Այստեղ կան ինչպես պատմականորեն հնչյունափոխված ձևեր, այնպես էլ գործուն գիրքային փոփոխակ ձևեր: Օրինակ՝ հազր բառում ղ-ն միշտ արտասանվում է խ: Նրայն է նաև ճղնիմ, ճղփալ, բաղկանալ բառերի ղ-ն, որը բոլոր ղեպերում արտասանվում է խուլ, իսկ խեղկատակ, մեղմ, մեղազործ, մեղակից բառերում թեև ղ-ն արտասանվում է խ, բայց նույն արմատով այլ բառերում, որտեղ փոխվում է հնչյունական շրջապատը՝ Ղ-օրինակ՝ մեղավոր, մեղադրեմք, խեղ, խեղարյուրել: Թույլ գիրքում խ-ն կազմում է ղերհնչույթ: Այսպիսով ղ-ի համար թույլ պետք է համարել խուլ բաղաձայնից առաջ գտնվող գիրքը: Հմմտ. նաև ժողովում-ի և ժողովուրդ բառի ղ-ն: Այսպիսի կենդանի հնչյունափոխությունները հայերենում մեծ թիվ չեն կազմում, բայց պատմականորեն փոփոխված ձևերը շատ են. ինչպես, օրինակ՝ ելրայր, բաղկանալ, եղկելի, գաղտնի, բախտ, շաղկապ, կնդտ:

§ 77. Գրական հայերենում կախորային շփական հ հնչույթը ձայնեղացման հակադրություն չի կազմում նույն տեղի ու նզանակի մի այլ բաղաձայնի հետ: Մակարյն որոշ գիրքերում համախ հանդիպում է [h] ձայնեղ հնչյունը, որը ինքնուրույն հնչույթային աղմեք չունի:

Այսպիսով հ-ն ընդհանուր շփականների համակարգում առանձնանում է որպես միաբնակ բաղաձայն:

Հ-ի հնչույթայնությունը որոշելու համար կարելի է հակադրել այլ բաղաձայններ, որոնցից առնչվում են հոտարբերվել այլ հատկանիշներով (մեկ կամ ավելի): Այսպես, հ-խ հակադրությունում հ-ն տարբերվում է բոտ արտաբերության տեղի (մեկ հատկանիշով): Օրինակ՝

խոտել—հոտել	կախ—կաս
խավ—հավ	վախ—վաս
խոտ—հոտ	բախ—բաս
խամ (խակց.)—համ	ախ—աս

Մյուս կողմից, հ-ն կարելի է հակադրել զրո հնչույթին՝ ապացուցելու համար, որ հ-ն հայերենում ոչ թե հազազ կամ անիմաստ շուն է, այլ ինքնուրույն հնչույթ:

հոմ—ոմ	բահ—բա
հախ—ախ	սրահ—սրա
հով—ով	զահ—զա (թող զա)
հալց—ալց	

Սակայն ժամանակակից հայերենում կան մի շարք բառեր, որտեղ բաղաձայնական զուգորդումներում երբեմնի արտասանված հ-ն զուրա է ընկնել, թեև զուրային մեջ առն շարունակվում է պահպանվել Օրինակ՝

Ճանապարհ, բայց՝ ճանապարհորդություն, շնորհ, արհամարհել (երկրորդ հ-ն չի արտասանվում) աշխարհ, աշխարհաբույս (առաջին հ-ն չի արտասանվում): Ընդհանուր բառում նախ տեղի է ունեցել հետադարձ անմանություն, որի հետևանքով ղ-ի դարձել է խուլ ք, ապա հ-ն ընկել է: Որ հ-ն ընկել է, այլ ոչ թե ղ-ի հետ միանալով ավել ք, կարելի է ապացուցել ընդօրինակել բառով, որտեղ ոչ մի հ չկա, իսկ ղ-ն արտասանվում է ք:

Սակայն առն ղեպերում, երբ հ-ն ավելի հակադրական զուգի միակ տարբերակիչ հնչյունական միավորն է, արտասանության մեջ աշխատում են առն պահպանել: Օրինակ՝ արհեստ-արվեստ զույգում և արհմիություն բառում:

Եթե նույնիսկ արտասանական տարբերակումներում այդ հ-ն ընկնում է, ապա ստեղծվում է մի նոր հակադրություն, որտեղ հ-ի փոխարեն հակադրության եզրն է զրո հնչույթը: Օրինակ՝ առեստ (խոսակցական արտասանություն)—արվեստ:

Այսպիսով, հայերենի հ-ն, ինչպես տեսնում ենք, ունի բավական լայն բաշխում. առն հանդիպում է ինչպես ձայնավորներից առաջ ու հետո, այնպես էլ որոշ բաղաձայնների հետ՝ հիմնականում Ե-ի մոտ:

Շատ բառերում հ-ն հանդիպում է նաև բառակցի Ե-ից առաջ, որտեղ նրանից հետո արտասանվում է շատ թույլ ք, որը երբեմն նույնիսկ բացակայում է:

Օրինակ՝ հմմտ. հեալք և [հրքրխ]
 հեալագործ և [հրկիզ]
 հեառաբաղաձայնություն և [հրքրիզ]

Առաջին եզրի բառերում Ե-ն գրեթե լրիվ բացակայում է, իսկ երկրորդ եզրում արտասանվում է լիարժեք Ե: Սակայն այս զնայ-քերի համար հակադրության զուգորդ Շնարավոր չէ գտնել, ուստի արտասանության տատանումների սահմանը կարող է լինել լայն (իմաստատարերակում չկրելու հետևանքով):

§ 78. Նեղվածքային ձայնորդների այս խմբին են պատկանում այն հնչույթները, որոնց արտաբերման ժամանակ բերանի խոռոչում ստեղծվում է բավականին լայն ճեղք, որի միջով օդի հոսքը անցնելիս առաջացնում է թույլ շփական աղմուկ: Նեղվածքային ձայնորդներն են լ-ն, ր-ն, յ-ն:

Սովորաբար լ-ն և ր-ն անվանվում են նայ հնչյուններ (плавающие)՝ նկատի ունենալով նրանց բաղադրան օղավորությունը:

Հայերենում լ-ն և ր-ն կազմում են հակադրության զույգեր բառավիջրում և բառամիջում: Բառասկզբում հակադրություններ չկան Ե-ով սկսվող բառերի բացակայության պատճառով: Օրինակներ

լալ—լար	կուլ—կուր	
սալ—սար	գալ—գար	սուլել—սուլեր (թող)
դալ—դար	հոլ—հոր	սուլեր)
բալ—բար	ծլել—ծրել	շալ—շար
տալ—տար	հարել—հարել	կարել—կարել
կալ—կար	սալ (կրածչու. գործիք)—արտ	

Մյուս կողմից, Ե-ն հակադրվում է թրթռուն ու-ին՝ որպես միևնույն տեղում, բայց աարբեր՝ եզանակով կազմված հնչույթի, ու-ի արտաբերման ժամանակ լեղուն մի քանի անգամ կոչում է ավվուներին, իսկ Ե-ի ժամանակ ստեղծվում է օդի անցք:

Մանրթ.—Հայագիտության մեջ, թեև Ե-ն ու Ե-ն իրավաբար համարվում են ինքնուրույն հնչույթներ, սակայն հնչյունաբանորեն դիտվում են որպես մեկ հնչյունի թույլ և ուժեղ տարբերակներ¹¹: Փորձառական ավյաններով, ինչպես և հնչույթաբանորեն այդ կարծիքը չի կարելի ընդունելի համարել: Ր-ն ու Ե-ն կազմում են

11 Տե՛ս Մ. Աբելյան, նշված աշխ., էջ 56, որտեղ բաղաձայնների աղյուսակում Ե, ո, լ հնչյունները գտնվում են միևնույն վանդակում:

հակադրություններ, և հայերենը այդ տեսակետից պատկանում է այն հազվագյուտ լեզուներին, որտեղ նրանք ինքնուրույն հնչույթներ են:

Դրանց ինքնուրույնությունը ապացուցելու համար բերենք մի քանի հակադրական զույգեր՝

գար—գառ	ծոր—ծոռ	առա—արա
մար—մառ	հարել—հառել	համառ—համար
սար—սառ	հարել—հառել	թռչել—թրչել [թրչել]
լոր—լուռ	ծրել—ծռել	վառ—վար
բոր—բոռ	լորի—լուրի	կուռնկ—կրուռնկ
տար—տառ	բար—բառ	չոռ—չոր

Հայերենում հնագույն շրջանից պահպնված Ե-ով սկսվող բառեր չկան: Բացառություն է կազմում օրուպես բառը: 2. Աճառյանը գրում է, որ հայերենում ո և Ե ձայններով սկսվող բառերը սառցել են ա, և հենարանը¹², Այստեղ խոսքը վերաբերում է հնդեվրոպական նախալեզվից հայերենի անջատվելու ժամանակաշրջանին: Ուստի հասկանալի է, թե ինչու են հակադրությունները ընդգրկում բառավիջրի և բառամիջի դիրքերը:

Հայերենի Ե հնչույթն ունի արտասանական տատանումների լայն դիապազոն: Նա կարող է խլանալ, այսինքն՝ արտասանվել առանց ձայնալարերի տատանումների: Այդպիսի փչչ խլացած Ե հանդես է գալիս բառավիջրի գիրքում աար, կար, բար, սար և այլ բառերում: Ավելի խլացած Ե հանդիպում է վարդ(ք), մաղ, աղի, կաղ(ք) և այլ նման բառերում, որտեղ Ե-ն խլացած է նըրանից հետո գտնվող բաղաձայնի ազդեցությամբ¹³:

Ինչպես նշում են Մ. Աբելյանը և 2. Աճառյանը, բարբառներում հանդիպում է խլացած Ե, որը շատ նմանվում է շ-ին, այդ նմանությունը այն աստիճանի է, որ փաստորեն հանգեցնում է Ե-ն շ-ի վերածվելուն:

12 2. Աճառյան, կրկնաբար քերականություն, Կ. Տ, էջ 444. այժմ կան ուով սկսվող բառեր. նրանք պատկանում են հին ու նոր փոխառություններին. օրի-ճակ՝ ոռնի, սամիկ, սուրի, սաղիս, սալխախախվ, սեզոնան և այլն:

13 Հաս երևույթին, այստեղ սկզբում տեղի է ունեցել բառավիջրի բաղաձայնի խլացում, որը այնուհետև ազդել է իրեն նախորդ Ե-ի վրա՝ ստալ րերևով նրա խլացմամբ:

Օր. Մաշա (Մարթա), վաշք (վարդ), ոչախ (որքի), մաշք (մարդ):

Այս միջբը նույնպես հաստատում է հոյակերնում ր-ի խոչ տարբերակի առկայությունը, և մյուս կողմից՝ ր-ի նեղվածքային բաղաձայն լինելը:

Նրկու ձայնավորների միջև ր-ն պահպանում է ձայննջուլթյունը, օրինակ՝ առա, [սրա], բարի և այլն:

Ռ-ն, բնիչակատակը, գրեթե շունի դիրքային սահմանափակում, թեև բառակազմում կան սակավթիվ ո-ով սկսվող բառեր: Ր-ի հետ ո-ն կազմում է հակադրական զույգեր մյուս դիրքերում: Այլ բաղաձայնների հետ ո-ն կազմում է զուգորդումներ. օրինակ՝ փառք, սպառք, ձեռք, հաշվառք, ցանկառք, առքիվ, ազալալ:

Որոշ դիրքերում ո-ն հակադրություն չի կազմում ր-ի հետ, և այդ պատճառով խոսքի մեջ հաճախ ր-ի փոխարեն արտասանվում է ո՝ առանց իմաստային փոփոխություն առաջացնելու: Գա որոշ շարժվող լեզվաբանների դիրք է հանգիստանում այդ նրկուսի համար: Օրինակ՝ խոսակցական լեզվում շատ հայեր արտասանում են՝ [Առչակ] Առչակ-ի փոխարեն, [Առզեխ] Առզեխ, [հոռք] հոռք, [առմեխ] առմեխ, [հեռք] հեռք, [խոռք] խոռք:

Գ. ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՂՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

§ 79. Հեյուսթարանության հիմնագրման սկզբից լեզվաբանները նշում են, որ շեյաձ հեյուսթանից խոսքի նվազագույն միավորներն են և ժամանակի հատվածում չեն բաժանվում ավելի փոքր լեզվական միավորների, սակայն հետագա վերլուծության շնորհիվ դրանք բաժանվում են բաղադրի տարրերի՝ տարբերակիչ հատկանիշների, որոնք խոսքում ինքնուրույն գոյություն չունեն, այլ հանդես են գալիս միմյանց հետ կապակցված, փնջկերով:

Տարբերակիչ հատկանիշների բացահայտումը սովորաբար լեզվաբանների կողմից կատարվում է հեյուսթանի հետագա վերլուծության շնորհիվ: Տարբերակիչ հատկանիշները, որպես ինքնուրույն միավորներ, լեզվական իրողություններում հանդես չեն գալիս: Բուն խոսքում արտահայտվում են շարուլթային հարարությունները, իսկ տարբերակիչ հատկանիշները ավելի շուտ հարացույցային տարրեր են:

64. Չեյաձ տարբերակիչ հատկանիշների դազափարը կարգեթև բոլոր հեյուսթարանական դպրոցներում, բացառությամբ լեհինգրադյան ու լոնդոնյան դպրոցների, սակայն դրանք տարբեր կերպ են մեկնարանվում: Այսպես, տարբերակիչ հատկանիշը մտակոչյան ու Պրազայի դպրոցներում հիմնված է հեյուսթանի արտարեական հատկանիշների վրա, մինչդեռ ամերիկյան ու կուպենհագենյան դպրոցների ներկայացուցիչների համար նրա նյութակառ էությունը կարեւոր չէ ու այն որոշ շարժվող պայմանական են չեն է:

Ժամանակակից լեզվաբանության մեջ տարբերակիչ հատկանիշի դազափարը օերտորեն կազմում է հեյուսթանի կազմում ավելի փոքր տարրերի՝ անխարանական և արտարեական միավորների առանձնացման հետ:

§ 80. Տարբերակիչ հատկանիշների տեսությունը իր հիմնավորում ու նորոգումն ձևակերպումը ստացավ Ռ. Յակոբսոնի, Գ. Ֆաների, Մ. Հայլիի աշխատություններում և դրավ լայն տարածում:

Հեյուսթանի տարբերակիչ հատկանիշների այդ տեսությունը մյուսներից տարբերվում է.

- ա) Ընդհանրականությամբ: Մի շարք լեզուների հեյուսթանի համակարգերի ուսումնասիրության հիման վրա հեղինակները գրանում են, որ լեզվից լեզու հեյուսթանի հիմքում ընկած տարբերակիչ հատկանիշները կրկնվում են և կարելի է նրանց ներկայացնել սահմանափակ թվով հակադրությունների ձևով: Սրանով հնարավոր կլինի բոլոր լեզուներին մտունալ միևնույն շարժանիշներով և ներկայացնել նրանց հիմքում ընկած հեյուսթանի կազապարները միաստակ սերմիններով:

բ) Երկանգամությամբ: Օղտազործվում է հատկանիշների անպիսի համակարգ, որտեղ յուրաքանչյուր հատկանիշ բերործվում է միայն մեկ՝ գրական կամ բացասական արժեքով: Մինչդեռ ավանդական հատկանիշների համակարգում այդպիսի խիստ սահմանափակում չկա:

գ) Գասակարգված միասնական սկզբունքով: Ի հակադրություն ավանդական մտոցման, այստեղ չեն առանձնացվում ձայնավորների և բաղաձայնների ինքնուրույն խմբեր, այլ հատկանիշները տարբերվում են լեզվի հեյուսթանի համակարգի բոլոր միավորների վրա:

§ 81. *Ռ. Յակոբսոնի և մյուսների տարրերակիչ հատկանիշների տեսությունը քննադատողները մասնավորապես նշել են, որ երկանդամության սկզբունքը համախ չի համապատասխանում լիզուսներում գոյություն ունեցող վիճակին: Շատ հատկանիշներ երկուսից ավելի հնչույթների նկատմամբ կազմում են ոչ քն երկու, այլ երեք, շորս, հինգ աստիճանի հարաբերություններ, որոնք համախ զմուտք է ներկայացնել երկանդամ հակադրության ձևով:*

Շուրջ տասը տարվա հնչույթաբանական բազմաթիվ ուսումնասիրությունները բացահայտեցին տարրերակիչ հատկանիշների տեսության մեջ տեղ գտած թերությունները և ստիպեցին հեղինակներին կատարել որոշ բարելավումներ ու փոփոխություններ:

§ 82. *Տարրերակիչ հատկանիշ տերմինը ինքնին ենթադրում է ոչ տարրերակիչ հատկանիշի գոյությունը: Վերջինի անկախությունը պարմանավորված է հնչյունի դիրքով, հարևան հնչյուններով, արտասահական շեղումներով և այլն: Հայերենում ոչ տարրերակիչ հատկանիշ է քմաքնացուրը, որը մի շարք բառերում հարևան հնչյունի ազդեցության հետևանք է, ինչպես՝ աղայն և պատյան: Իսկ սուսերենում ԵՐՈՅԻ բառը կարող է արտասանվել թե՛ [զորթա] և թե՛ [հորթա], ու իմաստի խախտում չի առաջանա, քանի որ բացակայում է պաշխականություն-շփականություն հակադրությունը Ե բաղաձայնի համար:*

§ 83. *Ցուրաբանչյուր լիզվի հնչույթային կազմը որոշելու համար սովորաբար դիմում են հակադրության մեթոդին, որի ժամանակ միմյանց հետ համեմատվում են ավյալ լիզվի նրկու (կամ ավելի) բառերի կամ բառաձևերի հնչյունական ձևերը, ընդ որում բառերը ընտրվում են այնպես, որ երանցում միևնույն դիրքում տարրերակիչ միայն մեկ կամ որպես այդպիսին դիմվող հնչյունը, զՀայերենի հնչույթային համակարգը բաժնում բերված են այն հակադրությունները, որոնցով հաստատվում են հայերենի ձայնավորների ու բաղաձայնների հնչույթաբանությունը ուժեղ դիրքերում, և գրանց հիման վրա բացահայտվում է տարրերակիչ հատկանիշների համակարգը:*

§ 84. *Տարրերակիչ հատկանիշ տերմինը այստեղ վերցված է հնչյունաբանական առումով, ելնելով արտաբերական հատկություններից, որոնց և ապխտ ենք համապատասխան անվանումներ: Սակայն կատարելով որոշ վերադասակարգում՝ հնարավոր է այդ*

ցանկը ներկայացնել որպես երկանդամ հակադրություններ: Այսպես՝

1. *Պայնավոր—ոչ ձայնավոր: Այս հատկանիշը, որը հիմնված է հնչյունների ձայնաբանական կազմության վրա, վերաբերում է ինչպես բուն ձայնավորներին, այնպես էլ ձայնորդների մի մասին:*

2. *Առաջնալիզվային—ոչ առաջնալիզվային: Առաջնալիզվային հնչյունների արտաբերությունը մասնակցում է լիզվի առջին նեղ մասը, որը բարձրանում է իր սովորական շեղք դիրքից: Առաջնալիզային, այլևեղային ու նախաբանային հնչյունները առաջնալիզվային են: Սրանց թվին են պատկանում նաև ո, ր, լ ձայնորդները և հայերենի ծ, ձ, ց կիսաշփականները:*

3. *Առաջնալիզ—ոչ առաջնալիզ: Սրանք այն հնչյուններն են, որոնց արտաբերման տեղը քիմբից առաջ գտնվող մասն է: Սրանց թվին են պատկանում շրթնայինները, առամնայինները և այլևեղայինները:*

Այս երկու խմբերը որոշ տեղերում համընկնում են, բայց որոշ մասերում միմյանց լրացնում են:

4. *Բարձր—ոչ բարձր (վերին—ոչ վերին): Այս հատկանիշը, ինչպես և ցածր—ոչ ցածր, ետին—ոչ ետին հատկանիշները, բնորոշում են լիզվի ամբողջ զանգվածի դիրքը, այնպես՝ բնորոշ են ձայնավորներին և որոշ բաղաձայններին: Բարձր (կամ վերին բարձրացման) հնչյունների ժամանակ լիզուն բարձրանում է իր շեղք դիրքից: Սրանք են, օրինակ, ի, ու ձայնավորները, ինչպես և միջնալիզվային բանային բաղաձայնները:*

5. *Ատորին—ոչ ատորին (բաց—ոչ բաց): Երբ հնչյունի արտաբերման ժամանակ լիզուն իջնում է իր շեղք դիրքից, ապա ստացվում են բաց (կամ ատորին բարձրացման) հնչյուններ, օրինակ՝ հայերենի ա-ն կամ ե-ն:*

6. *Ետին—ոչ ետին: Ետին հնչյունների արտաբերության ժամանակ լիզուն ետ է քաշվում իր շեղք դիրքից:*

§ 85. *Այս երեք տարրերակիչ հատկանիշները վերաբերում են լիզվի դիրքին, համեմատվում են շեղք դիրքի հետ և որոշ չափով տարբերվում են սովորական ավանդական դասակարգումից նրանով, որ դրանք միացնում են ձայնավորների ու բաղաձայնների միջև եղած ընդհանրությունները: Այդ դասակարգումով պարզ-*

վում է, որ միևնույն հնչյունը չի կարող լինել և՛ բաց (ստորին), և՛ բարձր, բանի որ որպես երկհատ վերացված է լեզվի շարժումը չեկոր դիրքից, և լեզուն չի կարող միաժամանակ թև բարձրանալ, և թև իջնել: Բաղձաձայնները նույնպես կարող են բնորոշվել այդ հատկանիշներով:

Սթև առաջնայեզվային և առաջնային հատկանիշները բնորոշ են կոշտ քիմքից առաջ գտնված բաղձաձայնների համար, այսպե՛հիշված երեք հատկանիշներով՝ սահմանազատվում են մնացած բոլոր՝ կոշտ քիմքից դեպի ետ ընկած մասում առաջացած հընչյունները:

Այս հատկանիշները կարող են վերադրվել նաև քիմքից առաջ կազմված աթև հնչյուններին, որոնց հիմնական արտաբերմանը ավելանում է լրացուցիչ արտաբերություն, այն է՝ քմայնացում (палатализация), կոշտացում (веляризация) և կատկայնացում (фарингализация): Քմայնացումը նման է ի-անման ձայնավորական երանգին, կոշտացումը ն-անման երանգին, իսկ կատկայնացումը՝ ա-անման երանգին: Այս հատկանիշները արտահայտվում են վերոհիշյալ բաց, փակ, ետին տարբերակիչ հատկանիշների կիրառությամբ:

	Քմայններ ն, շ, շ	Ստնաբեռայ. կ, գ, ք	Փափկաբեռայ. յի՞ն ի, ղ, ղ	Կոկորային հ
Բարձր (փակ)	+	+	-	+
Ստորին (բաց)	-	-	-	+
Ետին	-	+	+	+

§ 86. Լրացական հատկանիշներ

7. Երբնային—ոչ շրբնային: Շրբնային հնչյունները արտաբերվում են շրբնայինների կրորացումով, որի շնորհիվ փոքրանում է շրբնային սնցքը (կլքը): Ոչ շրբնային հնչյունների ժամանակ այդպիսի նեղացում տեղի չի ունենում:

Իրոք հնչյունները կարող են բնորոշվել վերոհիշյալ հատկանիշով: Անցումնային յ-ի և ոչ ցածր ձայնավորների ժամանակ շրբնայնացումը սովորաբար կազմում է «ետին» տարբերակիչ հատկանիշի հետ: Այսինքն՝ այն հնչյունները, որոնք ետին են (բացի ա-ից) սովորաբար և շրբնայնացված են. օրինակ, հայերենի

Հատկանիշներ

	ն	ք	վ	ա	դ	շ	ժ	խ	ղ	հ
Ջաշնավոր	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բազմայն	+	+	+	+	+	+	+	+	+	+
Վերին	-	-	-	-	-	-	+	+	+	-
Ետին	-	-	-	-	-	-	-	+	+	-
Ստորին	-	-	-	-	-	-	-	-	-	+
Առաջնային	-	+	+	+	-	-	-	-	-	-
Առաջնայեզվային- Շրբնայնացված	-	-	+	+	-	-	-	-	-	-
Ջայնեզ	-	-	+	-	+	-	+	-	+	-
Տեղան	-	+	+	+	+	+	+	+	+	+
Թեզային	-	-	-	-	-	-	-	-	-	-
Շփական	+	+	+	+	+	+	+	+	+	-
Շնչեզ	+									+

օ-ն, ու-ն, բայց այդպիսի փոխադարձ կապ կարող է գոյություն
 չունենալ այլ լեզուներում, ինչպես օրինակ ֆրանսերենում, որտեղ
 կան և՛ նախն, և՛ առաջնային շրջնային ձայնափոքներ՝ [յ], [Յ],
 [վ], [Վ]։

Հայերենի բաղաձայնների համար տվյալ հատկանիշը բնորոշ է՝

Ց. Ռեզային—ոչ ռեզային: Ռեզային հնչյունները արտաբերվում են փափուկ քիմքի իջեցումով, որի շնորհիվ օդը անցնում է քիթի միջով:

Ռեզային են հայերենի մ և ն հնչյունները, որոնք հակադրվում են նույն տեղում առաջացող ք և գ պայթական հնչյուններին:

Ռեզայինները միշտ ձայնեղ են:

§ 87. Բառն բաղաձայնական հատկանիշներ

Չ. Տևական—ոչ տևական: Այս հատկանիշը բնորոշ է ձայնորդներին և բաղաձայններին: Բոլոր հսկայական բաղաձայնները և ու-ն ոչ տևական են, իսկ շփականները տևական են:

Ձայնորդներից տևական է ր-ն, իսկ բաղձայնի ընդհատված է՝ ո-ն, որը կարող է դիտվել և՛ որպես տևական, և՛ որպես հսկայական (կամ ոչ տևական)՝ նայած լեզվի:

10. Պայթական—ոչ պայթական (կամ կիսաշփական): Այս տարբերակիչ հատկանիշը բնորոշ է հսկայական բաղաձայններին: Հսկայականների էլը կարող է լինել 2 տեսակի՝ անմիջապես, որի հետևվածքով ստացվում է պայթյունին նմանվող հնչյուն, և համեմատաբար զանդող, որի հետևանքով ստացվում են կիսաշփականներ: Այս հատկանիշը հավելուորակին է, երբ կան Թ-ը և ԼԹ-ը:

11. Ծնչեղացած—ոչ շնչեղացած: Այս հատկանիշը բնորոշ է հայերենի ոչ տևական բաղաձայններին և արտաբերության տեսակետից կազմված է կոկորդում՝ ձայնալարերից ներքև գտնված հնչարանի օդի ճնշման մեծացման հետ: Բայց միայն այս նախադասյանը բավարար չէ շնչեղացման համար: Անհրաժեշտ է, որ ձայնալարերը լինեն բաց, և օդը ունենա ազատ էլք թորերից դուրս գալու համար: Մովորաբար լարված՝ այսինքն խուլ բաղաձայններն են լինում շնչեղացած, սակայն, օրինակ հինդի լեզվում, կան ձայնեղ շնչեղներ, որոնց ժամանակ ձայնեղացումը առկա է հրդման (դադարի) պահում, և այդ բաղաձայնները լարված չեն:

12. Ձայնեղ—ոչ ձայնեղ: Ձայնեղությունը ձայնալարերի սա-

տանումների արդյունք է, որպեսզի ձայնալարերը թրթռան, անհրաժեշտ է, որ նրանք ընդունեն որոշակի դիրք, այսինքն՝ շատ հեռացած լինեն միմյանցից և նրանց միջով անցնի օդի հոսքը:

Այս հատկանիշը բնորոշ է հայերենի ինչպես տեղական, այնպես էլ ոչ տեղական բաղաձայնների:

13. Հատակ—ոչ հատակ: Հատակաթյունը բնորոշվում է ազմուկի գերիշխումով թույլ (աղոտ) բաղաձայնների համեմատությամբ: Այս հատկանիշը բնորոշ է հայերենի շփականներին ու կիսաշփականներին, քանի որ նրանց արտաբերության ժամանակ առաջանում է բարդ արդիւք: Պայթեականներին բնորոշ է այս հատկանիշը: Հետևելով արտաբերական տերմիններին՝ ավելի ճիշտ կլիներ այդ հատկանիշը անվանել շփական—ոչ շփական:

Ատուրե ներկայացված է տարբերակիչ հատկանիշների ցանկը (Տե՛ս աղյուսակ 4):

7. ՀնչՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱԲԵՐԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ


Առաջին շարքի վերին բաժնացման [ի] ձայնավոր

§ 88. Առատաճական բնույթով: Ի ձայնավորի կազմության ժամանակ լիզուս կծկվում է բերանի միջին մասում, մի փոքր ձգվում դեպի առաջ և, բարձրանալով դեպի կոշտ ջիմքը, կազմում մի գործիքանակ բարձրութուն (տե՛ս նկ.3): Այդ բարձրության գազաթը զանվում է բերանի օւլիդ մեշտոկում, կոշտ ջիմքի դիմաց: Լեզվի եզրերը բարձրանում են և թեթև կաշում կոշտ ջիմքի եզրերին 2-րդ, 3-րդ սեղանատամների մոտ: Այդ բանում կարելի է համոզվել քմանկարներից (պալատոգրամմա), որտեղ ի-ն թողնում է որոշակի հետքեր (տե՛ս նկ. 5):

Լեզվի բարձրության աստիճանը ամենամեծն է այդ շարքի մյուս ձայնավորի համեմատությամբ: Ամբողջ բերանային հեռաբանը նկատում է՝ վերածվելով մի անցքի, որը զնալով նո՛ր լայնանում է և միանում լայն կոկորդային հեռաբանին: Լեզվի ձայրը իջած է և հենվում է ներքին աստամների ներսի մակերևույթի: Երբ-թույնները չկոտր դիրք են զբաղում, բերանի բազմաթիվ շատ փոքր է, ուստի ձայնավորը կարելի է անվանել փակ: Փափուկ քիմքը



Նկ. 3. ի-ի սենտոնանկարը



Նկ. 4. է-ի սենտոնանկարը

բարձրացած վիճակում է՝ փակելով դեպի սնդուկին խոռոչը տանող օդի ուղին: Այսպիսով՝ ի-ն առաջին շարքի վերին բաժնացման ոչ շրճանցացված ձայնավոր է:

§ 89. Ֆիզիկական բնույթով: Ի ձայնավորի սպեկտրային պատկերում պարզ երևում են երկու իրարից խիստ անջատված ուժեղացված զոտներ (Ֆորմանտներ): Առաջինը տարածվում է 300-ից մինչև 525 հց, 375 հց Ֆորմանտային համախաղանությամբ, իսկ երկրորդը՝ 2700-ից մինչև 3400 հց դիսպոզիցում, 3000 հց Ֆորմանտային համախաղանությամբ (§5): Եթե առաջին Ֆորմանտի ուժեղությունը հավասար է-13 դր (դեցիբել), իսկ երկրորդինը՝-18 դր: Այսպիսով, ի-ի երկրորդ Ֆորմանտի ինտենսիվությունը ուժեղացված է, քանի որ գտնվում է 3000 հց սահմանում:

Այս հնչյունը, համեմատած մյուս ձայնավորների, հատկապես ա-ի հետ, ավելի թույլ է իր էներգիայով: Նրա բնորոշանող ինտենսիվությունը հասնում է մինչև-10 դր, մինչդեռ ա-հնչյունինը՝ մինչև 2—3 դր-ի:


Այս ձայնավորի տեղությունը, ա-ի կամ օ-ի համեմատությամբ, ավելի կարճ է: Այսպես, միավանկ բառերում այն հավասար է 140 մվրկ, երկվանկ բառերում շեշտի առվ՝ 130-ի, իսկ անշեշտ դիրքում 50 մվրկ-ի:

Առաջին շարքի միջին բարձրացման [է] ձայնավոր

§ 90. Արտասանական բնութագիր: Է-ն առաջին շարքի ձայնավոր է, որի արտաբերման ժամանակ լեզուն ամբողջ դանդաղ-ձով կծկվում է բերանի միջին մասում՝ ձգվելով դեպի առաջ: Սակայն լեզուն ի ձայնավորի համեմատությամբ ավելի նվազ շարժվում է բարձրանում դեպի կոշտ թիմբը, նրա նզրերը ավելի թույլ են կպչում ատամներին, և ինչպես երևում է բժանկարներից (տե՛ս նկ 6), լեզվի թուղիները Է-ի արտաբերման ժամանակ ավելի նեղ են ու նրկարածու: Այսպիսով, Է-ի արտաբերման ժամանակ լայնանում է բերանային հնարանը և զրա փոսորեն մի փոքր կարճանում կոկորդային հնարանը: Սակայն նրանց բաժանման սահմանն ավելի սահուն է և աստիճանական, բերանը ավելի է բացված ի-ի համեմատությամբ, իսկ շրթներենը ունեն չկարգ զիրք: Լեզվի ծայրը է հնչյունի արտաբերման ժամանակ իջած է ներքև՝ թեթևակի հպվելով ստորին ատամներին (նկ. 4): Այսպիսով՝ է-ն առաջին շարքի միջին բարձրացման ձայնավոր է¹⁴:



Նկ. 5. ի-ի բժանկարը



Նկ. 6. է-ի բժանկարը

§ 91. Ֆիզիկական բնութագիր: Իր տեղում լայն շարքի ձայնավոր է, որի արտաբերման ժամանակ լեզուն իր ամբողջ դանդաղ-ձով կծկվում է բերանի ետին մասում՝ ընդունելով, սակայն, որոշ չափով տարբեր զիրքեր: Այսպես՝ շնչած բուրբ ա ձայնավորների ունեցողների կարծրացումը ձայնավորի շարքը ընդամենը պարտաճարը (լեզվի ամենաբարձր սպիկարայ պատկերում ունեն մոտավորապես նույն ուժգնությունը: Առաջին միջու ավելի ուժեղ է. նրա ինտենսիվությունը հասնում է -8 զբ, երկրորդին՝ -7-ի, իսկ երրորդինը -6—12 զբ:

¹⁴ Ըստ Հ. Անտոյանի և այլոց հին հայերենը ունի երկու տեսակ է, որոնցից մեկը բաց էր (է), իսկ մյուսը՝ փակ (է): Արի գրական լեզվում կա միայն մեկ է, որը զրավոր խոսքում ունի երկու դրսևորում (ե, է):

երկվանի բաժանում, շեշտի տակ նրա տեղում լայն շարքի ձայնավոր է 110 մվրկ-ի, իսկ անշեշտում՝ 50—10 մվրկ-ի:

Է-ի ակնկարում պարզ առանձնանում են 4 ֆորմանտներ: Այսպես, առաջին ֆորմանտը ընդգրկում է 375—600 հց հաճախականությամբ տիրույթը: Այդ սահմանում ամենատեղ թաղարկիչը 450 հց հաճախականությունն է (ֆորմանտային հաճախականություն):

Երկրորդ ֆորմանտը ընդգրկում է 2400—2850 հց, 2550 հց ֆորմանտային հաճախականությամբ. երրորդը՝ 3150—3450 (3300 ֆորմ. հաճախականությամբ), չորրորդը՝ 4800—5250:

Ընդհանուր ինտենսիվությամբ է-ն ավելի ուժեղ է ի-ից, սակայն տարբերությունը շատ մեծ չէ (հասնում է մինչև -6 զբ): Առաջին երեք ֆորմանտները սպիկարայ պատկերում ունեն մոտավորապես նույն ուժգնությունը: Առաջին միջու ավելի ուժեղ է. նրա ինտենսիվությունը հասնում է -8 զբ, երկրորդինը՝ -7-ի, իսկ երրորդինը -6—12 զբ:

Ետին շարքի ստորին բարձրացման [ա] ձայնավոր

§ 92. Արտասանական բնութագիր: Բուրբ ետին շարքի ձայնավորների արտաբերման ժամանակ լեզուն իր ամբողջ դանդաղ-ձով կծկվում է բերանի ետին մասում՝ ընդունելով, սակայն, որոշ չափով տարբեր զիրքեր: Այսպես՝ շնչած բուրբ ա ձայնավորների ունեցողների կարծրացումը ձայնավորի շարքը ընդամենը պարտաճարը (լեզվի ամենաբարձր սպիկարայ պատկերում ունեն մոտավորապես նույն ուժգնությունը: Առաջին միջու ավելի ուժեղ է. նրա ինտենսիվությունը հասնում է 60—65 մմ, սակայն լեզվի կծկվածության ու բարձրացման աստիճանը տարբեր խոսողների մոտ տարբեր է:

Ա ձայնավորի արտաբերման ժամանակ լեզուն, դանդաղ ընթանի ետին մասում, զմբեթած է բարձրանում է դեպի վահիով քիմբը, բայց ու ախնափով, որքան օ-ի կամ ու-ի ժամանակ (տե՛ս նկ. 7):

Մանր. — Բարբառային արտասանության հետքեր ունեցող որոշ խոսողների մոտ լեզվի բարձրության աստիճանը մոտենում է օ ձայնավորին: Գ. Չափանցյանը գտնում է, որ հայերենի ա ձայնավորը այլ լեզուների համեմատությամբ միջին բարձրացման

է: (Տէս «Ընդհանուր լիզվաբանություն», Երևան, 1939, էջ 53), Այս դիտողությունը, ինչպես տեսնում ենք, դուրի չէ որոշ հիմքից: Սակայն պետք է նկատի ունենալ, որ զրական լիզված խոսողների մոտ այն իր բարձրացման աստիճանով, այնուամենայնիվ, տարբերվում է օ ձայնավորից:

Քմանկարներում ա-ն հետքեր չի բնորոշում և իրեն կա քաշվելու հետևանքով՝ նրա ծայրը հեռանում է ստորին ատամնաշարից: Բերանը բացված է ստորին ծնոսի իջնցման հետևանքով: Բերանի բացվածությունն աստիճանը ա-ի ժամանակ ամենամեծն է. տարբեր խոսողների մոտ շրթունքների միջև ընկած տարածությունը հավասար է 12-ից 17 մմ-ի: Լիզվի դիրքի և բերանի բացվածքի շծորհիվ բերանակն հնչյաբանը մեծանում է, իսկ կոկորդայինը՝ փոքրանում: Շրթունքները չկտր դիրքի են և կտրացված չեն: Փայտիկ չիմքը իր բարձրացած վիճակում է՝ փակելով անդալին հնչյաբան տանող ուղին:

Այսպիսով՝ քա արտասանակն կազմավորման հայերենի ա-ն երկն շարքի ստորին բարձրացման ոչ շրթնայնացած ձայնավոր է:

§ 93. Ֆիզիկական բնութագիր: Զայնավորների շարքում ա-ն ամենահզոր¹⁵ ձայնավորն է: Նրա ինտենսիվությունը կերբեմն հասնում է -3-4 դր: Ա-ն ունի որոշակի սպեկտրային պատկեր, որը խիստ տարբերվում է այլ ձայնավորներից: Հայերենի ա ձայնավորը աչքի է ընկնում նաև իր տեղությունը, որը նույն պայմաններում գրիթն միշտ ավելի երկար է մյուս ձայնավորների համեմատությամբ: Այսպես, միավանկ բառերում նրա տևողությունը հասնում է 230 մվրկ-ի, երկվանկ բառերում շեշտի տակ՝ 220 մվրկ-ի, իսկ անշեշտ վանկում 130—150 մվրկ-ի: Նուավանկ բառերում ա-ի տևողությունը ավելի է կտրճանում, սակայն շեշտված ա-ն միշտ ավելի երկար է անշեշտների համեմատությամբ: Օրինակ՝ «աղաղակ» բառում առաջին ա-ի տևողությունը հավասար է 80 մվրկ-ի, երկրորդինը՝ 100, իսկ երրորդինը՝ 180 մվրկ-ի:

Ա-ն բնութագրվում է նրեք կամ նույնիսկ չորս կայուն ֆորմանտներով, որոնցից կարևորագույններն են առաջին երկուսը: Առաջին ֆորմանտը ընդգրկում է 450—825 հց տիրույթը, 675 հց

¹⁵ Հզորությունը որոշվում է հնչյունի ընդհանուր ինտենսիվությամբ (կներգիայով): Արբան ավելի մեծ է կներգիան, այնքան ավելի հզոր է հնչյունը:

ֆորմանտային հաճախականությամբ, երկրորդը՝ 1050—1250 հց (150 հց ֆՀ)¹⁶, երկրորդը՝ 2400—2700 հց (2550 հց ֆՀ), չորրորդը՝ 3750—4400 հց: Առաջին երկու ֆորմանտների շատ մոտ են միմյանց և երբեմն նույնիսկ ձուլվում են՝ կաղմելով մի լայն ուժեղացված հաճախականությունների տիրույթ: Այդ իսկ պատճառով ա հնչյունը այդ հատկանիշով կոչվում է հոծ (կոմպակտ)՝ հակադրվելով նսոր (դիֆուզ) ի ձայնավորին:

Ետին շարքի միջին բարձրացման շրթնայնացված [օ] ձայնավոր

§ 94. Այս ձայնավորի արտաբերության ժամանակ լիզում կծկված է և կտրացած բերանի հորին մասում՝ ստանալով զմբբի մե և (տե՛ս նկ. 8): Նրա ծայրը հեռանում է ստորին ատամնաշարից մոտ 28—30 մմ (ա-ի ժամանակ այս տարածությունը հավասար է 19—21 մմ-ի):

Լիզվի այսպիսի դիրքը ստեղծում է բերանային մեծ և կոկորդային փոքր հնչարան, որի սահմանը լիզվի բարձրագույն կետն է: Լիզվի առավել բարձր հատվածը քիմքից հեռացած է մոտ 8—10 մմ-ով (իսկ ա-ի ժամանակ՝ 10,5—11 մմ է): Այս ցույանիշով հայերենի ա-ն և օ-ն շատ չեն տարբերվում միմյանցից: Դրանց միջև եղած տարբերությունը ավելի շատ վերաբերում է լիզվի



Նկ. 7. ա-ի ունեզննանկարը

Նկ. 8. օ-ի ունեզննանկարը

¹⁶ ֆՀ—ֆորմանտային հաճախականություն:

կծկվածութիւնն աստիճանին և շրթունքների մասնակցութիւնը օ-ի արտասանութեան ժամանակ:

Օ ձայնավորի արտաբերման ժամանակ բերանի բացվածքը քիչ ավելի փոքր է ա-ի համեմատութեամբ: Շրթունքների միջև եղած ուրաժութիւնն այս դեպքում հավասար է 12—15 մմ-ի, իսկ ա-ի արտաբերման ժամանակ՝ 16—20 մմ-ի: Օ-ի հնչմանը ակտիվորեն մասնակցում են շրթունքները, որոնք ձգվում են առաջ՝ կազմելով կլորավուն ձևը: Կայսիտով ստեղծվում է լրացուցիչ շրթնային հնչարան, որը նպաստում է օ-ի տոնի իջեցմանը: Փափուկ քիժքը իր բարձրացած վիճակում է, փակելով օդի ուղին դեպի քիթ խոռոչը:

Այսպիսով՝ օ ձայնավորը ետին շարքի միջին բարձրացման շրջանակացված ձայնավոր է:

§ 95. Ֆիզիկական բնութագիր: Երկվանկ բառերում, շեշտի տակ օ-ի տևողութիւնը հավասար է 150—170 մվրկ-ի, իսկ անշեշտ վանկում՝ 60—110 մվրկ-ի:

Նույնական բառերում օ-ի տևողութիւնը կրճատվում է, սակայն ոչ այնքան, որքան ի-ի կամ ու-ի դեպքում: Այսպես՝ օղաշու բառում օ-ի տևողութիւնը հավասար է 125 մվրկ-ի:

Օ ձայնավորի ընդհանուր էներգիան (ինտենսիվութիւնը) բավականին մեծ է (սակայն ա-ից պակաս), հասնելով մինչև -7 դր: Նրա ֆորմանտների բաշխումը ձայնային դիսպոզիցիանում որոշ չափով մոտենում է ա-ին՝ սարբերելով նրանից իր առաջին երկու ֆորմանտների անջատվածութեամբ: Այսպես, առաջին ֆորմանտը հավասար է 375—600 հց, 450 հց ֆորմանտային հաճախականութեամբ, երկրորդը՝ 900—1050, իսկ երրորդը՝ 3050—3450 հց: Սպեկտրապատկերներում հատկապես աչքի են ընկնում ֆորմանտների նեղութիւնը և նրանց մեծ ինտենսիվութիւնը, ի տարբերութիւն ա-ի, որտեղ առաջին երկու ֆորմանտները այնքան լայն են, որ ձուլված են միմյանց հետ:

Այսպես, առաջին ֆորմանտի ինտենսիվութիւնը հավասար է -7 դր, երկրորդինը՝ -18—13 դր, երրորդինը՝ -25—10 դր:

Նստի շարքի վերին բարձրացման շրջանակացված [ու] ձայնավոր

§ 96. Այս ձայնավորը իր կազմավորմամբ շատ ընդհանրութիւններ ունի օ-ի արտասանական դիրքի հետ: Նրա հնչման ժա-

մանակ լեզուն խիստ կծկված է բերանի ետին մասում և կլորացած: Սակայն ու-ի ժամանակ լեզվի բարձրացման աստիճանը օ-ի համեմատութեամբ ավելի մեծ է: Այդ բարձրացման հետևանքով ու ձայնավորը հետքեր է թողնում քմանկարներում (տես նկ. 9): Սրանով էլ պայմանավորված է ու ձայնավորի վերին բարձրացման աստիճանը (կամ նեղ կազմավորումը): Այսպես, եթե լեզվի ե փափուկ քիժքի միջև ընկած տարածութիւնը օ-ի արտաբերման ժամանակ հավասար է 10,5—11 մմ-ի, ապա նույն տարածութիւնը ու-ի ժամանակ կազմում է 3—6 մմ:

Լեզվի ծայրը հետ է քաշված ստորին ատամնաշարից 24—25 մմ-ով: Շրթունքները ու-ի արտաբերման ժամանակ ավելի քիչ են բացված և ավելի առաջ են ձգված ու կլորացած:

Փափուկ քիժքը լրիվ փակում է ուղային ուղին: Բերանային հնչարանը ու-ի կազմավորման ժամանակ զգալի մեծ է և խօսողին սահմանազատվում է կոկորդային հնարանից, որը ետին շարքի մյուս ձայնավորների համեմատութեամբ ավելի մեծ է: Վերջին հնգամները նպաստում է ձայնավորի տոնի իջեցմանը: Այսպիսով՝ ու-ն ետին շարքի վերին բարձրացման շրջանակացված ձայնավոր է: Օ ձայնավորից այն տարբերվում է միայն մեկ հատկանիշով՝ բարձրացման աստիճանով:

§ 97. Ֆիզիկական բնութագիր: Այս ձայնավորի սպեկտրապատկերները որոշ չափով նման են ի ձայնավորի սպեկտրապատկերներին: Այսպես՝ նրա առաջին ֆորմանտը նույնպես գտնվում է ցածր դիսպոզիցիանում՝ 225-ից մինչև 450 հց սահմաններում, զբերի միշտ սուննաչով միևնույն ֆորմանտային հաճախականութիւնը՝ 300 հց:

Աւ-ի առաջին ֆորմանտը աչքի է ընկնում իր բարձր ինտենսիվութեամբ (հասնում է մինչև -15 դր), իսկ էներգիան համեմատաբար ավելի փոքր է (հասնում է մինչև -15—10 դր-ի), ուստի և այս հնչյունը ավելի թույլ է:

Երկրորդ ֆորմանտը զգալիորեն հուսցված է առաջինից, ընդգրկելով 975—1250 հց տիրույթը՝ 1050 հց ֆորմանտային հաճախականութեամբ: Նրա ինտենսիվութիւնը շատ թույլ է՝ մինչև -25 դր: Երրորդ ֆորմանտը, որը գտնվում է 2700—2850 հց դիսպոզիցիանում, առավել ևս թույլ է: Երկում է նաև չորրորդ ֆորմանտը՝ 3750—3900 հց դիսպոզիցիանում: Աւ-ի արտաբերման ժամանակ

էնկրզիայի ուժգնությամբ աչքի է բնկնում առաջին ֆորմանտը, որը գերշնչում է մյուսներին: Ուտի այս ձայնավորը ավյալ հասկանիշով ցածր տոնի ձայնավոր է (gravis)՝ ի ասրբիտության ի-ի, որտեղ ավելի ուժեղ է և ավելի բարձր դիապազոնում է դասվում կրկնորդ ֆորմանտը:



Նկ. 9. ու-ի սենպղնանկարը



Նկ. 10. ր-ի սենպղնանկարը

Միջին շարքի միջին բարձրացման [ը] ձայնավոր

§ 98. Ը ձայնավորի արտաբերման ժամանակ լեզվի մակերեսը հարթ է, շատ աննշան բարձրացած իր հանգստի դիրքից: Լեզվի ետին մասում զգացվում է փոքր զոզավորում: Լեզվի ծայրը իջած է և թևին հենվում է ներքին ստամաշարին (Նկ. 10): Երթուճքները բացվում են ուղղահայաց, մի փոքր ձգվելով բերանի անկյուններում: Ընդհանուր առմամբ, բերանի բացվածքը միջին աստիճանի է: Լեզվի դիրքը այնպիսին է, որ այդ ձայնավորը չի կարելի դասել ոչ առաջին շարքի, ոչ էլ ետին շարքի ձայնավորների թվին: Նրա միջին մասում էլ ոչ մի բարձրացում չի երևում: Այս ձայնավորը հաճախ անվանում են խոտը կամ լիզոք շարքի ձայնավոր: Քմանկարներում այն հետքեր չի թողնում: Երթուճքների բացվածությունն աստիճանը զրավում է միջին դիրք ստորին և վերին աստիճանների միջև՝ ավելի մոտենալով վերին աստիճանին: Նրանց միջև ընկած տարածությունը հավասար է 8—12 մմ-ի: վերջինս մոտ է է-ի բացվածությունն աստիճանին, որի ժամանակ այն հավասար է 10—14 մմ-ի: Բերանային հնչարանը բավական

ենն մեծ է՝ համեմատած առաջին շարքի ձայնավորների հետ, իսկ կրկնորդային հնչարանը համեմատաբար ավելի փոքր է: Փափուկ ժիմքը իր բարձրացած վիճակում է, և փոքրիկ լեզվակը հովվում է նրախի պատին՝ փակելով դեպի քիթը տանող ուղին: Ը-ն սնգայնացված չէ, այլ բերանային ձայնավոր է, հայերենի մյուս ձայնավորների նման:

Այսպեսով՝ ը ձայնավորը միջին շարքի միջին բարձրացման ոչ շրթնայնացված ձայնավոր է:

§ 99. Ֆիզիկական բնութագիր: Ը ձայնավորը մյուս բոլոր ձայնավորների համեմատությամբ աչքի է բնկնում իր կարծաթյամբ: Նրա տեղումը տարբեր դիրքերում ստատմվում է 40—60 մլրկ-ի սահմաններում:

Ը ձայնավորի սպիկարը աչքի է բնկնում իր ֆորմանտների հազարապատյալի բաշխումով՝ ամբողջ ձայնային դիապազոնում: Այսպես, նրա առաջին ֆորմանտը հավասար է 450—525 հց-ի, 450 հց բարձրակետով: Երկրորդ ֆորմանտը գտնվում է 1450—1650 հց դիապազոնում և ունի 1550 հց: Երրորդ ֆորմանտը բաղկացած է սովորաբար մեկ հաճախականությունից (2850 հց), չորրորդը ընդգրկում է 3600—3750 կամ 3900—4400 հց հաճախականությունների տիրույթը, երևում է նաև հինգերորդ ֆորմանտը՝ 4800 հց հաճախականությամբ: Այս ձայնավորի ընդհանուր էներգիան համեմատաբար քիչ է և այդ հատկանիշով ը-ն նմանվում է ու-ին. նրա ամենամեծ սահմանը -10 դր է, իսկ ամենափոքրը՝ -15 դր, էներգիայի բաշխումը ըստ ֆորմանտների փոքր ի շատև հավասար է, տատանելիով -13-ից մինչև -13 դր-ի: Առաջին ֆորմանտը այնուամենայնիվ ունի ամենամեծ արժեքը:

Ձայնավոր-յ կամ յ-ձայնավոր կապակցություններ

§ 100. Երկրորդու կապակցում է երկու ձայնավորից կամ մի կիսամաքից ու մի ձայնավորից կազմված ձայնախումբը, որը արտաբերվում է միանգամից և կազմում է մեկ վանկ: Երկբարբառով, ինչպես և սովորական ձայնավորով կազմված վանկերը կարող են առկից կամ ետևից ունենալ բազմաձայններ: Երկբարբառներում սովորաբար մեկ ձայնավորը կորցնում է իր վանկարարության ֆունկցիան և արտաբերվում է ավելի քիչ, կարճ ու սահուն, մեղեդու մյուս ձայնավորը, ընդհակառակը, լինում է լիս-

հունչ, երկար ու սովորաբար վանկի շեշտակիր տարրն է: Վերջինս կոչվում է երկարաբանի մեջուկ (ΣΥΡΡΟ), օրինակ՝ իս երկարաբանում ի-ն շատ սահուն է ու կարճ, իսկ ա-ն՝ երկար ու լիահունչ:

Մաներ.— Կեզվարանության մեջ գոյութուն ունեն տարբեր կարծիքներ երկարաբանների վերաբերյալ:

Հարցը առաջին հերթին վերաբերում է երկարաբանների հնչյունական կողմին, այն բանին, թե ինչպիսի հնչյունների միասնությունները կարելի է համարել երկարաբաններ: Ոմանց կարծիքով (Լ. Վ. Շչերբա, Օ. Վախեկ, Լ. Բ. Զինզեր) իսկական կամ կայուն երկարաբան կարող են կազմել երկու լիահունչ ձայնավորները, իսկ կիսաձայնից և մեկ ձայնավորից կազմված միացումները կազմում են կեղծ երկարաբաններ: Իսկական կամ կայուն երկարաբանները լեզուներում հազվադեպ են:

2. Ստիպը, Վ. Զիվերը, Վ. Ֆիրտորը և մասամբ Գ. Ջոնսոնը գտնում են, որ երկարաբաններում ձայնավորներից մեկը կորցնում է իր վանկարարությունն ու լիահնչյունությունը, զանազով երկարաբանի թույլ, ոչ շեշտակիր տարր, այսպես կոչված կիսաձայն հնչյուն: Այսպիսով, մեկ կիսաձայնից և մեկ լիարժեք ձայնավորից կազմված միասնությունները նույնպես համարվում են երկարաբաններ:

Սակայն ուսումնասիրողները, որպես երկարաբանություն հիմնական նախապայման, միասնաբար ընդունում են նրա մեկ ճիշդվարտասանության հատկանիշը: Արտաբերական այս առանձնահատկությունը ֆիզիկական մակարդակում արտահայտվում է ինտենսիվություն, ուժեղացումով, որի դադարը ընկնում է ձայնավորի վրա:

Ընդգծելով մեկ վանկ կազմելու պայմանը՝ լեզվաբանները փաստորեն զուրա են գալիս բուն հնչյունական մակարդակից և անցնում հնչյութային մակարդակ, որը զբաղվում է հնչյութների ֆունկցիոնալ կողմով, նրանց փոխադարձություններով, ներքանց դերով:

§ 101. Խոսելով երկարաբանների հնչյունական առանձնահատկությունների մասին՝ ուսումնասիրողները նշում են նաև այն փաստը, որ երկարաբանների կարևոր գործոններից մեկն էլ նրանց տևողությունն է, որը սովորաբար ավելի կարճ է, քան ավելի լեզվի երկու հնչյունների տևողության գումարը և չի դերազանցում

սովորական ձայնավորների տևողությանը: Ոմանք հատկապես նշում են այն հանգամանքը, որ երկարաբաններում երկու ձայնավորների միասնությունը կամ անցումը այնպես սահուն է ու անկակալի, որ փաստորեն նրանցից ոչ մեկը ավելի լեզվում ինքնուրույն գոյություն ունենալ չի կարող և որ այդ երկու անորոշ հնչյունները պետք է դիտվեն որպես մեկ հնչյուն:

Սովորաբար երկարաբան տարրերի միասնականությունը ի հայտ է գալիս ձայնավորից առաջ զանվող դիրքում: Եթե վանկարածանը (հարակից վանկերի սահմանը) անցնում է այդ տարրերի միջև, ապա ավելի կապակցությունը չի կարող համարվել երկարաբան, իսկ եթե վանկարածանն անցնում է ձայնախմբից հետո, ապա այն դիտում են որպես երկարաբան: Այսպես օրինակ՝ հայ, բայց հա-յի-րեն, քի-յ-բայց քի-յաման:

§ 102. Հայ լեզվաբանության մեջ երկարաբանների վերաբերյալ կա հիմնականում երկու տեսակետ: Մ. Արեղյանը¹⁷ գտնում է, որ չ առտով հայերենում արտահայտվում է նույն ի ձայնավոր հնչյունը բաղաձայնական ֆունկցիայով, որը ավելի թույլ է արտասանվում քան ի-ն և չի կարող ինքնուրույն վանկ կազմել: Մ. Արեղյանը նշում է, որ հայերենը չունի այն բաղաձայն յոստ հնչյունը, որը բնորոշ է եվրոպական լեզուներին և ավելի ազնկալին է, քան հայերենի յ-ն: Եվ, այնուհետև, գրում է. «Մեր նոր լեզվի մեջ այս բաղաձայնական ի ձայնավորը կամ յ-ն միանում է թե նախորդ վանկային ձայնավորին՝ հետ, որով կազմվում են ընկնող երկարաբաններ՝ ալ, օլ, ուլ, էլ, և թե հաջորդ վանկային ձայնավորին՝ հետ, որով կազմվում են բարձրացող երկարաբաններ՝ յա, յո, յու, յի: Օրինակ. հայր, կյանք, քեյ, ես, խոյ, յոր, գույն, սյուն: Քենենք՝ օրինակ հայ բառի այ կապակցությունը: Երբ այն հանդես է գալիս մի այլ ձայնավորից առաջ, օրինակ՝ հայսպետ բառում, ապա յ-ն անմիջապես անջատվում է նախորդ ա-ից և հարում հաջորդ ձայնավորին, հետևելով հայերենում գործող այն օրենքին, ըստ որի վանկատման ժամանակ վանկերը ձգտում են լինել բաց: Եթե յ-ն իսկական կիսաձայն, այսինքն՝ ձայնավորական ֆունկցիա ունենալ, այն պետք է մնար նախորդ ա-ի հետ կապված: Ուրեմն, այստեղ նա հանդես է գալիս որպես մեկ բաղա-


17 Մ. Արեղյան, նշված աշխ., էջ 88:

ձայն՝ երկու ձայնավորների միջև (Հմմտ. հա-յասեր, սե-ղան, մա-սաղ):


§ 103. Նույն ձևով են դրսևորվում չ-ով կազմված մյուս կապակցությունները՝ ղոյ-զո-յություն, խոյ-խո-յա-նալ, թև-թե-յա-ման, հայ-հա-յաս-տան:

Բաշխվածությունը չ հնչույթը հայերենում հանդես չի գալիս բաղաձայնական խմբերի հետ, միշտ գրավում է ձայնավորին կից ղիբը՝ աշխց կամ ձախից. կարող է հանդիպել նաև երկու ձայնավորների միջև, սակայն ինքնուրույն գործածություն չունի և չի կարող լինել վանկարար:

Այսպիսի բաշխվածությունը այն էլապես չի տարբերվում մյուս ձայնորդներից, իսկ վերոհիշյալ տարբերվածությունը գալիս է ասելու, որ հայերենի նման կապակցությունները չեն կարող համարվել իսկական երկբարբառներ:



Նկ. 11. Ի-ի բժանկարը



Նկ. 12. յ-ի բժանկարը

Առավել ևս կասկածելի է լա, լն, լյա, լի հնչյունախմբերը երկբարբառների համարելը: Ի տարբերություն վերը բերած խմբերի, որտեղ արտասանական լարվածությունը գնալով պակասում է, այստեղ արտասանական լարվածությունը ուժեղ է հենց սկզբից: Եվ յ-ի արտասանության ժամանակ արտասանական գործարանները կազմում են բաղականին սեղծ անցք: Դրանում կարելի է համոզվել համեմատելով ի ձայնավորի և յ-ի բժանկարների, որտեղից երևում է, որ յ-ի ժամանակ լեզվի եզրերի հոսման հետքերը կազ-

մում են ավելի լայն մակերես, և արտասանական օգի անցքը ավելի նեղ է (հմմտ. նկ. 11 և 12): Այս ղեպում 3-ի բաղաձայնության բնույթը առավել ակնհայտ է:

§ 104. Ինչպես ցույց են տալիս փոթերը լա, լն, լյա, լի, լո կապակցությունների տեղումնում որոշ լարված ղերազանցում է համապատասխան պարզ ա, ն, ու, ի, օ ձայնավորների տեղումնում: Այս փաստը նույնպես նպաստում է նրանց երկհնչույթային մեկնարանմանը:

Այսպիսով պետք է եզրակացնել, որ ժամանակակից գրական հայերենում ղկան երկբարբառներ Այս եզրակացությունը համընկնում է Հ. Անտոյանի և մյուսների տեսակետի հետ, որի համաձայն հայերենում հիտաձայն ի ղկա, բոլոր եղանակները զուտ բաղաձայն չ են¹⁵:

§ 105. Քմային յ-ն ունի իր սյուրյն տեղը հնչույթային համակարգում, իր ֆիզիկական բնույթով մտանում է ձայնավորների և հաձախ կատարում է ձայնավորի ֆունկցիա, երկբարբառներում հանդես գալով ոչ վանկարար ձայնավորի գերում:

Հայերենում, եթե ոչ այժմ, ապա հին հայերենում, այն զերծ չի եղել այգպիսի գործառությունից: Սակայն, ինչպես վերը ասվեց, ժամանակակից հայերենում յ-ն ձայնորդ է, այսինքն՝ պատկանում է բաղաձայնական համակարգին:

Հայերենում երկբարբառները չեն կազմում նաև երկու կողք-կողքի ձայնավորներ, որոնք ակնհայտորեն բաժանվում են վանկատման սահմանով, կազմելով երկու վանկ. օրինակ՝ ձիավոր, միակ, տիգրեբ, միտիեակ, միաձայն, միսբյուն, կաթիլ, կատալակ, անբարոտակար, պապուս, միավորում, Ուկրաինա և այլն:

ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ
ՀՊԱՍԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ


Երկբարբային [բ, պ, փ] պայրական բաղաձայններ

§ 106. Արտասանական բնութագիր: Բ-պ-փ հնչյունների արտաբերման ժամանակ շրթունքները հոլվում են միմյանց, ընդ որում փ-ի ժամանակ հոլումը ավելի սեղծ է փ-ի և բ-ի համեմա-

15 Տե՛ս Հ. Բ. Անտոյան, Կասկածար քերականություն, հ. 6, էջ 140:

տուբյամբ)։ լեզուն ընդունում է հաջորդ կամ նախորդ ձայնավորի դիրքը և ընայած բազմաձայնների համար այն ինքնուրույն զեր չի կատարում, սակայն ազդում է նրանց երանդի վրա։

Բնպահս ցույց են տաին ք-պ-փ բաղաձայնների քմ-պատկերները և սենտզենադատկերները, այդ հնչյունների արտաբերման ժամանակ լեզվի հետքերը նիշտ և ճիշտ կրկնում են հաջորդ կամ նախորդ ձայնավորների պատկերները (նկ. 13)։ Այդ բաղաձայնները քիմքի վրա ինքնուրույն հետքեր չեն թողնում։



նկ. 13. ք-ի սենտզենազանկարը

Լեզվի միջին մասը բա, պա, փա վանկերի արտաբերման ժամանակ բազմաձայնին հետո է կոչա քիմքից։ Այդ փաստը վկայում է բ, պ, փ-ի ոչ քմայնացած լինելու մասին։ Փրական հայերենում նույնիսկ ի, և ձայնավորներից ստաջ պ, բ, փ-ի քմայնացումը շատ աննշան է, մինչդեռ բարբառներում հանդիպում են նրանց քմաքնացած տարբերակները։ Մենտզենադատկերներից երևում է, որ շրթունքներից անմիջապես հետո, բերանի խոռոչում, ստեղծվում է դատարկ տարածություն, որտեղ կուտակվում է օդը։ Այդ տարածությունը պ-ի արտաբերման ժամանակ ավելի մեծ է, քան բ-ի, իսկ փ-ի ժամանակ ամենամեծն է։ Գա նշանակում է, որ այդ հնչյունների արտասանման ժամանակ ծախսվող օդի քանակը տարբեր է, ընդ որում շնչեղացված հնչյունի ժամանակ դուրս մղվող օդի քանակը ամենամեծն է, իսկ բ-ի ժամանակ ամենաքիչը։

որովհետև վերջինիս արտաբերման ժամանակ օդի որոշ մասը արդեն ծախսվում է ձայնայարների տասանման համար։

Այսպիսով՝ պ, բ, փ-ն երկբերանային պայրական բաղաձայններ են, որոնք միմյանցից տարբերվում են մեկական տարբերակիչ հատկանիշով՝ պ-բ-ն՝ ձայնեղությունը իսկ պ-փ-ն՝ շնչեղությունը։

§ 107. Ֆիզիկական բնութագիր։ Այս հնչյունների սպեկտրանկարները, ընայած ընդհանուր նմանությանը, ունեն նաև որոշակի տարբերություններ։ Այսպես, նրանց սպեկտրանկարներում առանձնանում են 3 տարբեր մասեր՝ ա) դադարի հատված, երբ սպեկտրանկարում բացակայում են ձայնային ազդանշանի հետքերը, բ) պայթյունի հատված, երբ սպեկտրալ պատկերում երկվում են միաժամանակ հնչվող աղմուկի կուտակման զտոկներ՝ 1650-ից մինչև 3700 հց հաճախականությամբ։ Այդ պայթյունի ընդհանուր էներգիան շատ թույլ է (—23—18 դր)։ գ) երրորդ հատվածը՝ օդի հոսքի հատվածը, բնորոշվում է սպեկտրալին սյուսակներում ազմկային էներգիայի անկանոն բաշխումով։

Նրանք տարբերվում են այդ հատվածների տարբեր տեղուցությամբ։ Կացրի հատվածը ամենաերկարն է պ-ի ժամանակ, բ-ինը ավելի կարճ է, իսկ փ-ինը՝ ամենակարճը։ Փ-ի համեմատությամբ պ-ի արտաբերման ժամանակ այդ հատվածը 2—3 անգամ ավելի երկար է։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ երեք հնչյունների ընդհանուր տեղուցությունը մնում է գրեթե անփոփոխ, տասանմիկով շատ փոքր սահմաններում։ Այսպիսով՝ այդ հնչյունների ընդհանուր տեղուցության մեջ տարբերություն չկա, բայց կան նրանց հատվածների իրար լրացնող որոշակի տարբերություններ։ Նրանց բոլորի մոտ էլ պայթյունի հատվածը շատ կարճ է, անում է մոտ 15 մվրկ, իսկ եկը (օդի հոսքի հատվածը), հսկառակ հարաբերությամբ, ամենաշատը փ-ի ժամանակ է, իսկ ամենաքիչը՝ պ-ի։

Միևնույն ժամանակ նկատվում է այդ բաղաձայնների տարբեր աղդեցությունը հաջորդ և նախորդ ձայնավորների վրա. նախ՝ նրանց տեղուցության վրա, սպա՝ անցման հատվածի։

Ձայնավորների ֆորմանտների վրա երեքն էլ ազդում են, բայց անդունների փոփոխությունը կախված է ձայնավորի որակից, Օրինակ՝ ա-ի ժամանակ անալին և երկրորդ ֆորմանտները իջնում են, իսկ ի-ի ժամանակ առաջինը իջնում է, իսկ երկրորդը


բարձրանում. ընդ որում փ-ի ժամանակ անցումների փոփոխությունը շատ թույլ է, համարյա անշնչաւ: Դա, ըստ կրեոլիքին, բացատրում է նրանով, որ արդեն օդի հոսքի հատվածում արտասանական զործարանները ձևավորվում են հաջորդ ձայնավորի համար, և անցումը փաստորեն կատարվում է այդ բաղաձայնի հընչման պահին:

Առամնային [դ, ա, ր] պայթական բաղաձայններ

§ 108. Արտասանական բնութագիր: Ըստ արտաբերության տեղի այդ բաղաձայնները կազմավորվում են վերին առամնաշարի և լընդերքի մոտ: Այդ մասին են վկայում բնագրությունները, որտեղ լեզվի թողած հոսքերը (սև դժագրված շեքերը, տե՛ս նկ. 14) տեղայնացված են առամների ներսի մակերևույթի և մասամբ լեզվերքում: Հիշյալ բաղաձայնների արտաբերության ժամանակ թևե հպման մակերեսը բավականին մեծ է, սակայն առջևի կտրիկների եզրերը և սեղանաժամները ընդհարված չեն:

Արտաբերությանը մասնակցում է լեզվի առջևի մասը (մեջքը), որով էլ այդ հնչյունները ստանում են լեզվամեջքային (զորսուլ) կամ առաջնալեզվային արտասանություն (տե՛ս նկ. 15):

Հպման ուժգնության տեսակետից ամենաամուր պատենչը կազմվում է ա-ի ժամանակ, իսկ ամենաթույլը՝ ր-ի:



Նկ. 14. ա-ի բնանկարը



Նկ. 15. ա-ի անաղհնանկարը

Այս բաղաձայնների կազմավորման ժամանակ լեզուն էր առջևի մասով հպվում է առամներին, միջին մասը մի փոքր իջնում է, իսկ ետևի մասը զգալի բարձրանում՝ ստեղծելով զոգավո-

րում: Արտասանական զործարանների նման դիրքը նպաստում է այդ հնչյունների թավ նրանցի ստեղծմանը: Նույնիսկ ի և է ձայնավորներից առաջ այս բաղաձայնների հիմնական արտասանական դիրքը զգալի փոփոխություն չի կրում, լեզվի կորսված իջնումը պահպանվում է, որը և աղահոլում է այդ հնչյունների թավ նրանցը:

Այսպիսով՝ ա, դ, ր-ն առաջնալեզվային, առամնային պայթական բաղաձայններ են, որոնք միմյանցից արբերվում են մեկական աստիճանիչ հասկանելիով՝ ա-դ-ն ձայնեզուրյամբ, իսկ ա-ր-ն՝ ընչեզուրյամբ:

§ 109. Ֆիզիկական բնութագիր: Տ, դ, ր-ի սպեկտրանկարներում, հատկապես ձայնավորների միջև, երևում են 3 աստիճան հատվածներ, որոնք համապատասխանում են այդ հնչյունների մոտքի, կեցքի և ելքի հատվածներին: Մուտքի, ինչպես և կեցքի պահերը, ընտրովում են էներգիայի բաղաձայնային: Կարճատև պայթյունը, ի տարբերություն երկարատևի պայթյունների, ընտրովում է աղմկային էներգիայի այլ բաշխումով: Այստեղ ամենակայուն տիրույթը 4000—5000 հց հաճախականությունների դիսպոզիցիոն է: ավելի ցածր տիրույթում (500—600 հց) աղմկային էներգիան ավելի թույլ է, իսկ 2500—3000 հց տիրույթում աղմուկը միտ չէ, որ երևում է: Ձայնեզ դ-ի արտաբերման ժամանակ սպեկտրում երևում են ձայնային բաղադրիչներ ցածր հաճախականությունների դիսպոզիցիոն: Հետաքրքիր է, որ հաճախ այդ բաղադրիչները առկա են դադարի և ելքի հատվածներում, մի փաստ, որը վկայում է այն մասին, որ ձայնավարների տատանումները անցման շրջանում չեն ընդհատվում: Այդ բաղաձայնների սպեկտրում պայթման հատվածը բառավորում կարող է առհասարակ շեքալու Ինչպես ցույց են տալիս սպեկտրանկարները, օդի հոսքի հատվածը ամենակարգին է ր-ի, իսկ ամենակարգը՝ ա-ի ժամանակ: Դրան հակառակ, դադարի պահը ամենակարգին է ր-ի ժամանակ և ամենակարգը ա-ի զեզրում: Այս երկու հատվածները, ինչպես ցույց են տալիս ֆիզիկական ավյունները, գտնվում են հակադրված հարաբերության մեջ:

Տ-դ-ր-ի աղբյուրային հատկորդը ա, ու, օ ձայնավորների առաջին և երկրորդ ֆորմանտների հաճախականության արձեքները ինչում են, իսկ չ ձայնավորի դեպքում երկրորդ ֆորմանտը իջնում է, բայց առաջինը գրեթե չի փոփոխվում:

Խոճմային [գ, կ, ֆ] պայթական բաղաձայններ

§ 110. Արտասանական բնութագիրը: Կ, գ, ֆ բաղաձայնները Հայերենում ունեն իրենց բնայնացած տարրերակները: Դրանք զգայի չափով փոխում են իրենց կազմավորման տեղը՝ հիմնական պատկերները, որը առաջ է գնում զեպի կոշտ քիմքը: Այս փոփոխությունը տեղի է ունենում ի, է ձայնավորներից և հատկապես յ ձայնորդից առաջ:


Գրական հայերենի կ, գ, ֆ-ի ոչ բնայնացած տարրերակները հանդիպում են ա, օ, ու, ք ձայնավորներից առաջ: Երանց կազմավորման ժամանակ լեզուն իր հտին մասով բարձրանում է զեպի փափուկ քիմքի առջևի մասը, կազմելով մի փակվածք: Սա հիմնական արտասանական գոտին է (տե՛ս նկ. № 16, 17): Ա, ք, ու ձայնավորների հետ արտասանված կ, գ, ֆ-ն սովորաբար բնայնակարների վրա թողնում է հետքեր 4-րդ և 5-րդ սեղանատամների մոտ: Ընդ որում, շատ քանակարների վրա թողած հետքերը նման են լայն աղեղների և ընդգրկում են սեղանատամների անկյունները: Հիմնական արտասանական գոտին, այսինքն այն զիծը, որտեղ ստեղծվում է փակվածքը, գտնվում է չորրորդ սեղանատամների սահմանում:

Մաճոր.— Ինչպես հայտնի է, քանակարների վրա զրանցվում են միայն այն բաղաձայնները, որոնց կազմավորման տեղը հասնում է մինչև փափուկ քիմքը կամ ընդգրկում է նրա առջևի եզրը: Եթե քանակարի վրա հետքը չի երևում, նշանակում է, տվյալ բաղաձայնի կազմավորման տեղը փափուկ քիմքի հտին մասն է, շրթներենը կամ կոկորդը:


Փմայնացած կ, գ, ֆ-ի ժամանակ (կին, կեր, զինի, կյանք բառերի քանակարներում) լեզվի թողած հետքերը հետակորեն երևում են: Այստեղ արտասանական գոտին շատ ավելի առաջ է եկած և գտնվում է կոշտ քիմքի վրա (տե՛ս նկ. 16 և 18): Ընդ որում ի-ից առաջ կ, գ, ֆ բաղաձայնները ավելի շատ են քմայնացնում, քան ե-ից առաջ:

Ունեղենյան պատկերներից երևում է, որ կ, գ, ֆ-ի արտաբերության ժամանակ լեզվի ծայրը իջնում է և հենվում ներքին առամեղաչարին (սիտով մասնակցությունը չունի): Լեզվի առջևի մասում գոյանում է զոգավորում, որից հետո լեզվի մեջքը խիստ բարձրանում է՝ ստեղծելով փափուկ քիմքի հետ մի պատեղ: Բն-

րանային հնչարանը բաժանված է երկու առանձին մասերի՝ առջևի խոռոչը, որը լայնանալով ավարտվում է շրթներենքով, և հտին հնչարանը, որը միանում է կոկորդային հնչարանին (տե՛ս նկ. 17): Փափուկ քիմքը բարձրացած է՝ փակելով օդի ուղին զեպի քիմքի խոռոչը: Լեզվի կոթը կլոր է, մի փաստ, որը վկայում է լեզվի ոչ լարվածության մասին:



Նկ. 16. Կ-ի քմակաբը




Նկ. 17. Կ-ի սենյակեանկաբը

Այս բոլորից երևում է, որ հայերենի կ, գ, ֆ հնչյունները կազմավորվում են բերանի ոչ շատ խոր մասում, այլ փափուկ քիմքի առաջամասում:


Այսպիսով՝ կ, գ, ֆ հնչյունները Խոճմային պայթական բաղաձայններ են, որոնք իբրևից տարբերվում են մեկական տարբերակիչ հատկանիշով՝ կ-գ-ն ձայնեղալայնաբ, կ-ֆ-ն շեղալայնաբ:

§ 111. Ֆիզիկական բնութագիր: Ակուստիկական սպեկտրապատկերում այս բաղաձայնները նախորդների նման բերողովում են երեք առանձին հատվածներով՝ 1) էներգիայի բացակայության պատճով, 2) էներգիայի պտթկումով և 3) օդի ազատ հոսքի հատվածով: Այդ երեք բաղաձայնների մոտ երեք բաղադրիչ հատվածների տևողությունը տարբեր է: Կացքի պահը ամենատևականն է կ-ի ժամանակ՝ 100 մվրկ, ավելի կարճ է շեղող ֆ և ձայնեղ գ-ի ժամանակ՝ 50-60 մվրկ: Այս պահի տևողության տարբերությունը սերտորեն կապվում է այն հատվածի հետ, որը հետևում է օդի պտթկմանը: Այսպես, եթե կ-ի արտաբերման ժամանակ օդի

Հասրի հատվածը հավասար է 15—20 մմրկ-ի, այս Բ-ի ժամանակ՝ 60—70 մմրկ է, իսկ ձայնեղ գ-ի ժամանակ՝ 40 մմրկ:



Նկ. 18. կի-ի բժանկալը



Նկ. 19. ա-ի բժանկալը

Տարբերվում է նաև նախորդող և հաջորդող ձայնավորների տեղությունը: Գ-ից առաջ ա ձայնավորի տեղությունը ամենաերկարն է և հավասար է 140 մմրկ-ի, իսկ Բ-ից առաջ՝ 160—120 մմրկ-ի: Հաջորդ ձայնավորի վրա այս բաղաձայնները ազդում են նույն հարաբերությամբ, բայց ավելի նվազ չափով:


Պայթյունիս պատկերը սպիտակապատկերում երևում է ուղղահայաց ձգված գծով, որը բաղկացած է ազնկային էներգիայի հետևյալ բաշխումից՝ 1200—1600 հց կամ 1550—1850 և 7900—11500 հց: Ընդհանուր էներգիան այս պայթական հնչյունների ժամանակ ավելի մեծ է և հավասար է մոտ—20 դր: Ամենակայուն և բնորոշ ուժեղացված գոտին 1200—1800 սահմանն է: Օդի պոսիկումին հաջորդում է մի հատված, որը բնորոշվում է էներգիայի անկանոն բաշխումով ամբողջ զիսպարտնում: Այդ պահը շատ կարճատև է կ-ի և գ-ի ժամանակ և, ընդհակառակը՝ շատ երկարատև՝ Բ-ի ժամանակ:

Բացի այս հատվածներից, պայթականները բնորոշվում են հաջորդող և մասամբ նախորդող ձայնավորի վրա իրենց թուզած ազդեցությամբ: Գա հասկացվես երևում է ձայնավորի անցումներում, որոնք զրավում են ձայնավորի 1/4-ից մինչև 1/3 մասը: Անցումների ժամանակ ձայնավորների ֆորմանտները զգալիորեն փոխում են իրենց դիրքը համախառնաուսթյունների զիսպարտնում: Նրանց ֆորմանտները կամ իջնում, կամ բարձրանում են:

Ետնաամենայն [ժ, ձ, ց] կիսաշփականեր

§ 112. Այս բաղաձայնների արտաբերության համար լեզվի ծայրը իր առջևի եզրով մոտենում է վերին առամնաշարի հիմքին և կաշիլով նրան՝ ստեղծում փակվածք: Լեզվի միջին մասը իջնում է, իսկ նտին մասը մի փոքր զոզավորվում, ստեղծելով շատ թույլ երկրորդական ֆոնում:

Լեզվի այսպիսի դիրքի շնորհիվ ստացվում է բերանային մեծ և համեմատաբար փոքր կոկորդային հնչարան: Սակայն այս հնչարանները բաղաձայնների արտաբերության հիմնական աղբյուրը չեն, այլ տալիս են հնչյունին երկրորդական երանգ: Հիմնական աղբյուրը ձ, ձ, ց-ի ժամանակ ստեղծվում է լեզվի ծայրով, երբ հարմը զանդադրեն վերածվում է ձևերի: Վերջինս, սակայն, ամբողջ պատենելի լայնությամբ չի ստեղծվում. դառարի պահին փակվածքում գրանում է կլոր փոքր անցք, որի միջով օդը անցնելիս առաջացնում է սուղող ձայն: Այս անցքի չափսերի մասին կարող ենք պատկերացում ստանալ ա-ի բժանկալից (տե՛ս նկ. 30): Մ, ձ, ց-ի ժամանակ, սակայն, այդ ձևը չի երևում այն պարզ պատճառով, որ հարմը ակզրում լիակատար է և նրանից հետո կատարված զործողությունը քմապատկերում չի երևում: Վերջինում լավ երևում են արտասանվածքի սահմանները, տեղը և ուժգնությունը (տե՛ս նկ. 20 և 21):



Նկ. 20. ձ-ի ակնազնանկալը



Նկ. 21. ց-ի բժանկալը

Ինչպես ցույց են տալիս ստացված բազմաթիվ աձյանները, այս բաղաձայնների, ինչպես և պայթականների ժամանակ հրդման լարվածությունը տարբեր է բոտ շարքի անդամներին՝ շնչեղ

ց-ի ժամանակ հստակ շատ թույլ է, ձ-ի ժամանակ ավելի ուժեղ, իսկ ծ-ի զեպքում՝ ամենուժեղը:

Այսպիսով՝ ծ, ձ, ց են շրջանակներ կառավարման, ծայրագույն վայրի կիսաշփական բաղաձայններ են, որոնք միմյանցից տարբերվում են շնչեղացումով (ծ-ց) ու ձայնեղությունով (ծ-ձ):

§ 113. Ֆիզիկական բնութագիր: Ինչպես երևում է սպեկտրալ պատկերներից, կիսաշփականները բառամիջի և բառավերջի դիրքում ներկայացված են երկու հատվածներով՝ դադարի պահով, որը բնորոշվում է կերպիայի բացակայությամբ և շփման պահով, որն իր էներգիայի բաշխումով նմանվում է ս-ի կամ զ-ի սպեկտրին: Կիսաշփականների և պայթականների միջև գոյություն ունի մի էական տարբերություն. եթե պայթականների ժամանակ միշտ առկա է կարճատև պայթյուն, ապա կիսաշփականների սպեկտրներում այդ պահը լիովին բացակայում է: Այսպիսով, պայթականների սպեկտրապատկերում առանձնանում են երեք հատված, իսկ կիսաշփականների դեպքում երկուսը՝ դադար և շփում: Բառակցի զեպքում դադարի պահը համընկնում է լուսթյան հետ և այդ պատճառով չի երևում: Սակայն այս երկու պահերն էլ, առանձին վերցրած՝ հստակ ու շփական առանձին բաղաձայնների համեմատությամբ շատ կարճ են ու թույլ և շնչեղ կազմել ինքնուրույն հնչյուններ: Մյուս կողմից, այդ երկու հատվածների տեղումներն այս շարքի երեք անդամների մոտ տարբեր է. եթե ծ-ի ժամանակ հստակ պահը ավելի երկար է, իսկ շփմանը՝ կարճ, ապա շնչեղ ց-ի ժամանակ այդ հարաբերությունը հակառակն է. հստակ պահը կարճ է, իսկ շփմանը՝ երկար: Այդ պահերի տեղափոխումն իրենց հարաբերությունը այսպիսին է.

հստակ	շփում
ծ 120—130 մվրկ	85—90 մվրկ
ց 80—85 մվրկ	110—120 մվրկ

Շփման պահը բնորոշվում է աղմկային էներգիայի կուտակումով հաճախականությունների քարձր դիսպոզիցիոնով (5000—8500 հց), ընդ որում կորագծի քարձրակետը ընկնում է 7900 կամ 8500 հց հաճախականությունների վրա: Եթե համեմատենք շփական ս-ի կամ զ-ի սպեկտրները կիսաշփական ծ, ձ, ց-ի սպեկտրների շփման պահերի հետ, ապա կտեսնենք, որ վերջիններս

շատ ավելի կարճ են, ինտենսիվությամբ թույլ և ունեն համեմատաբար ավելի սահուն սկիզբ:

Այս փաստը ցույց է տալիս, որ հստակից շփման անցմանը կատարվում է համեմատաբար դանդաղ:

Սպեկտրապատկերներից երևում է նաև, որ բառակցի կիսաշփականների մոտ շփման մասը ավելի երկար է բառավերջի դիրքի համեմատությամբ: Հաջորդ ձայնավորների վրա կիսաշփականների ազդեցությունը նկատելիորեն թույլ է: Այն արտահայտվում է հիմնականում երկրորդ ֆորմանտի անդալարմանով և պայմանավորված է մասամբ նաև ձայնավորի որակով: Գարեոր է նշել, որ շնչեղ կիսաշփականի շփման պահը ավելի ուժեղ է խուլի և ձայնեղի համեմատությամբ: Նրա սպեկտրում երևում են անկանոն աղմկային տարրեր, որոնք օդի լրացուցիչ հոսքի (շնչեղացման) հետևանք են: Այդ հատվածի տեղումները մոտ 80—110 մվրկ է:



Նկ. 20. Ե-ի բառակցը



Նկ. 23. Ե-ի սևնոցենանկարը

Ինչպես պայթականների ժամանակ, այնպես էլ այս զեպքում շնչեղացումը զգալի լսվում ազդում է հստակ տեղումներն վրա՝ կարճատև կազմելով: Այսպես, եթե ծ-ի արտաբերման ժամանակ հստակ պահի տեղումները հավասար է 90—110 մվրկ-ի, ապա ց-ի ժամանակ այն 60—80 մվրկ է: Բայց հնչյունի ընդհանուր տեղումները մնում է անփոփոխ՝ 170—180 մվրկ:

Ձ-ի սպեկտրում, բացի շփման մասից, նկատվում է նաև ձախնական բաղադրիչների առկայությունը ցածր դիսպագոնում, որը ավելի շատ արտահայտվում է հիմնական տոնով: Ձ-ի արտաբերման ժամանակ նկատվում է հիմնական աղմկային դիսպագոնի նեղացում:

Նախաճառային [Ն, ջ, շ] կիսաշփականներ

§ 114. Արտասանական քննությանը: Բաղաձայնների այս խմբին տալիս են նաև շշակոս կամ ճշակոս անվանումը (Աճառյան) նկատի ունենալով որանց աղմկային երանգի տպավորությունը: Այս խմբի մեջ մտնող հնչյունների կազմավորման ժամանակ լեզուն իր առջևի լայն մասով կողում է քիմքի առաջնամասին: Այս այն տեղն է, որը սկսում է վերին կտրիչների հիմքից և հասնում մինչև ավելուների վերջը:

Խոսատամային ծ, ձ, ջ բաղաձայնների համեմատությամբ նախաքմային Ն, ջ, շ բաղաձայնների արտասանական գոտին ավելի լայն է և ետ քաշված: Բերանի խոռոչը լեզվի քարձրանալու հետևանքով փոքրանում է, իսկ Կոկորային հնչարանը լայնանում է: Այս հնչյունների մոտ նկատվում է փակվածքի լարվածության նույնպիսի հարաբերություն, փնչային կար և Խոսատամայինների կազմավորման ժամանակ, աչիքերն Ն-ի հպումը ավելի ամուր է շ-ի և ջ-ի համեմատությամբ: Սակայն քառավերջի թույլ դիրքում այս շարքի բոլոր բաղաձայնների մոտ երևում է փակվածքի լարվածության թուլացում, որը քննադատիկորեն արտահայտվում է հպման հետքերի գունավորմամբ և սրաների նվազ հասակությունը: Չ-ի հպման հետքերը այնքան թույլ են, որ նույնիսկ ուրվագծվում է սպազա ճեղքը (նկ. 22): Ձախնեղ ջ-ի փակվածքի թուլացումը մասամբ պայմանավորված է նրանով, որ օդի հոսանքի մի մասը ծախսվում է ձայնավարքի տատանման վրա:

Կլումից անմիջապես հետո լեզուն ստանում է որոշակի կոբություն կամ զոգավորություն և համալսի իջնում է ցած: Ինչպես ցույց են տալիս ռենտգենապատկերները, լեզվի առջևի և միջին մասերի միաժամանակյա բարձրացումը դեպի կոշո քիմքը ստեղծում է լրացուցիչ արտասանական ֆոնոս, որն էլ հիմք է ձառայում այդ հնչյունների մասնակի քմայնացման համար (նկ. 23): Բայց քանի որ քմայնացումը հայերենի համար տարբերակիչ հատկանիշ

է, ուստի այն արտասանողների կողմից չի նկատվում և դիտակցվում: Այդ բաղաձայնները զգալի չափով տարբերվում են ետնաստամային կիսաշփականներից լեզվի մասնակցությամբ: Ճ, շ, ջ-ի ժամանակ լեզվի ալիքի ետին մասն է հպվում քիմքին: լեզվի ծայրը սովորաբար իջած է և չի մասնակցում արտասանությանը: Ավելի հպվող մասն ավելի լայն է:

Ճ, շ, ջ կիսաշփականների արտաբերմանը մասնակցում են նաև շրթունքները, որոնք առաջ են ձգվում՝ շրթունքների մոտ ըստեղծելով լայն հնչարան, որը նպաստում է հնչյունի տոնի իջեցմանը:

Ինչպես տեսնում ենք, Ն, ջ, շ-ի արտաբերման սկիզբը նույնիսկ չի նմանվում պայթյակն ա, դ, ք-ին, ստացինների ժամանակ հպման գոտին շատ ավելի ետ է, գտնվում է ավելուներում, իսկ ա, դ, ք-ն ստակ աստանային հնչյուններ են: կիսաշփականների ժամանակ բացակայում է պայթյունը, որը պարտադիր է պայթյականների համար:

Այսպիսով՝ Ն, շ, ջ-ն նախաճառային կամ արվելուճառային կիսաշփականներ են, որոնք միմյանց հետ կազմում են նախադրություններ՝ բառ շեշեղացման և ձայնեղացման հատկանիշներին:

§ 115. Ֆիզիկական քննությանը: Բառամիջի և բառավերջի դիրքում Ն, ջ, շ բաղաձայնները, ինչպես և մյուս կիսաշփականները սպեկտրապատկերներում ցեռոշվում են երկու տարբեր հասվածներով՝ ենթադրյալ բացակայության հասվածով, որը համապատասխանում է հպման օղհին և արմկային հասվածով: Առաջին շարհի ժամանակ բացակայում են ձայնային բաղադրիչները: Այդ իսկ պատճառով բառակազմում այդ պահը համընկնելով լուրջյան հետ՝ չի առանձնանում: Երկրորդ պահը՝ շփման հասվածը այս շարքի բաղաձայնների մոտ ունի որոշակի նմանություն և տարբերվում է առաջին շարքի համապատասխան հասվածից:

Ճ-ի ժամանակ հպումը ավելի երկար է ջ-ի և շ-ի համեմատությամբ, իսկ շփման պահը ավելի կարճ՝ նրանց համապատասխան պահից: Այս երկու պահերը միմյանց հետ գտնվում են հակադարձ հարաբերության մեջ, մինչդեռ նրանց բոլորի ընդհանուր տևողությունը մոտավորապես նույնն է՝ 180—210 միկր:

Եժման պահը զգալիորեն տարբերվում է Խոսատամայինների համապատասխան պահից: Եժի վերջիններին մոտ այն ստանա-

փակված էր դիսպլազիայի վերին եզրով, ապա ն, ջ, շ-ի ժամանակ ազմուկը սկսում է 3300 հց-ից և տարածվում մինչև 11000 հց: Համախախտությունների կորագծում առանձնանում է երկու բարձրահետ 2800 և 6500 հց համախախտություններ: Ընդհանուր էներգիան այստեղ ավելի թույլ է և բաշխված է ամբողջ դիսպլազիայում: Այդ իսկ պատճառով առանձին բաղադրիչները չունեն մեծ ինտենսիվություն և չեն կազմում միասնույլ սև գոտի, ինչպես ծ, ց-ի ժամանակ:

Ձ-ի սպեկտրներում առանձին բաղադրիչներ նկատվում են ձայնային դոտում 200—250 հց համախախտությամբ, և ընդհանուր էներգիան այստեղ ավելի մեծ է շ-ի ու ն-ի համեմատությամբ: Ենեղացված շ-ի ժամանակ, բացի վերը հիշված թույլ ընդգծված գոտիներից, նկատվում է ազմուկի ավելի մեծ անկախեռություն, որը արտասանական մակարդակում համապատասխանում է շնչի ազատ հոսքին:


Ռեզալին [մ, ն] ձայնադաշտ

§ 116. Ըստ արտաբերության տեղի ուղղախիսները ունեն որոշակի նմանություն պայթականների հետ՝ մ-ն՝ ր, պ, փ-ի, իսկ ն-ն՝ յ, ա, ք-ի:

Այսպես, մ-ի քմանկարներում, ինչպես պ, ք, փ-ի ժամանակ, լիան ինքնուրույն հետքեր, բացի հաջորդ կամ նախորդ ձայնավորներից թողած հետքերից, ինչպես ցույց են տալիս ունեղանկապատկերները, մ-ի կազմավորման ժամանակ փափուկ քիմքը խիստ իջնում է բացելով բավականին լայն անցք քիմ խոռոչը (տե՛ս նկ. 25): Օդի հոսանքը, անցնելով բերանի խոռոչը և հանդիպելով լրվի պատենչի, անցնում է վեր՝ քիմ խոռոչը, որտեղից և ազատ դուրս է դալիս: Լիզում իր ամբողջ զանգվածով ձգվում է դեպի բերանի ետևի մասը, իսկ միջին նախում սակզվում է որոշ զոգավորում, որով և պայմանավորված է հայերենի մ-ի կոշտ երանդը:

Լիզվի ծայրը թույլ հենվում է ներքին կտրիչների ընդերքին, որը ցույց է տալիս, որ լիզուն ակտիվ մասնակցություն ունի:

§ 117. Բոլորովին այլ են ն-ի հետքերը քմապատկերներում: Ն-ն թողնում է որոշակի հետքեր, որոնք նմանվում են ա, դ, ք-ի քմադրերին (տե՛ս նկ. 24): Այդ հետքերից կարելի է եզրակացնել,



Նկ. 24. Ա-ի քմադրեր



Նկ. 25. մ-ի ունեղանկապատ

որ ն-ի կազմավորման ժամանակ լիզուն իր ծայրով և նրան կից եզրով հպվում է վերին ատամնաշարին, ավելի ճիշտ, նրանց լրնդերքին: Այդ հետքերի համեմատությունը ա, դ, ք-ի համապատասխան հետքերի հետ ցույց է տալիս, որ ն-ի ժամանակ արտասանական գոտին ավելի նեղ է և քիչ ավելի ետ քաշված դեպի կոշտ քիմքը: Ինչպես երևում է ունեղանկյան պատկերներից, փափուկ քիմքը նույնպես իջած վիճակում է, և օդը ազատ հոսում է դեպի քիմ խոռոչը (նկ. 26): Լիզվի միջին մասը անմիջապես հըլման գոտու ետևում մի փոքր իջնում է, իսկ ետին մասը, ընդհանրապես, բարձրանում: Այս դիրքի շնորհիվ հայերենի ն-ն ստանում է կոշտ երանդ, նույնիսկ է, ի ձայնավորներից առաջ կամ հետո:

Քմային ձայնորդից առաջ լիզվի միջին մասի իջեցումը և այնուհետև բարձրացումը (յ-ի արտասանության համար) կատարվում է հաջորդաբար և այնպես տարբ, որ ներքին այդ երկու պահերի մերձիցման հետևանքով ստացվում է քմային ն, որը և լրսվում է որպես փափուկ ն (ուսերենի ք-ի նման): Օրինակ՝ Ելադդ, Ելադդային, Ելադ, իսկ մ-ի համար՝ մյուս, Մյաւնիկյան:

Երթունքները ն-ի արտաբերման ժամանակ բացված են, բայց ոչ կտրացած կամ զուր ցցված, այլ՝ լիզուր: Ելի պահին հպումը կարող է բացվել հաջորդ հնչյունին անցնելու համար կամ մնալ այդպես, մինչև հնչյունի վերջը: Օրինակ, երբ այդ ձայնորդ-

կեր հանդիպում են բառավերում՝ կամ, կան, համ, ամ, զամ, բան և այլն, այն կարող է շրջակա:

Այսպիսով՝ բառ արտաբերման անդի մ-ն երկշրթնային անգային հայկական ձայնորդ է, իսկ ն-ն՝ Լուծատմային ձայնակզվային անգային ձայնորդ:

Հայերենում մ-ն և ն-ն հիմնականում կատկանացված են, որով և պայմանավորված է նրանց թավ հրանդը:

§ 118. Ֆիզիկական բնութագիր: Ֆիզիկական տեսակետից անգային ձայնորդները տարբերվում են բոլոր հոգական բազմաբնակից իրենց որոշակի ձայնային բնույթով: Դա հիմք է ծառայում մ-ի և ն-ի առանձնացնելուն, որպես մի ինքնուրույն խումբ, Մյուս կողմից, նրանք զգալի շփուով տարբերվում են ձայնավորներից. նախ՝ անզուրկամբ, այսպե՛ս՝ սպեկտրով պատկերով:


Այսպես, բառակզբի դիրքում մ-ի և ն-ի անզուրկամբ տատանվում է 80—100 մվրկ, բառավերումը՝ 70—120 մվրկ, Բառամիջի դիրքում նրանց անզուրկամբ նույնիսկ ավելի է կարճանում:

Անգայինների սպեկտրով պատկերում հատկորեն առանձնանում են կրկուսից մինչև հինգ ֆորմանտներ, հաճախականությունների ցածր դիապազոնում: Այսպես, մ-ի համար F₁՝ 150—450 հց, F₂՝ 750—850 հց, F₃՝ 2250—2700 հց, F₄՝ 3300—3450 հց:

ն-ի դեպքում ֆորմանտների ընդհանուր բաշխումը, նմանվելով մ-ին, այնուամենայնիվ ունի որոշ տարբերություն: Այսպես. F₁՝ 150—300 հց, F₂՝ 525—750 հց, F₃՝ 1450—1550 հց, F₄՝ 2250—2850 հց, F₅՝ 4400—4800 հց:

Անգային ձայնորդները բավականին ուժեղ ազդում են հաշոր-
19 Հատուտաբան համար ֆորմանտ բառի փոխարեն ընդունված է զոր-
ծածկ լատիներեն F (formant) ստոր: F₁ նշանակում է առաջին ֆորմանտ,
F₂—երկրորդ ֆորմանտ և այլն:

որդ ձայնավորների վրա՝ առաջացնելով նրանց ֆորմանտների սեղաշարժ: Այսպես՝ մ-ի դեպքում հաշորը ա ձայնավորի երկրորդ ֆորմանտը իջնում է, իսկ ն-ի դեպքում՝ բարձրանում: Ձայնավորի առաջին և երրորդ ֆորմանտների վրա նրանք զգալի ազդեցություն չեն գործում: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ձայնավորների որակի համար շատ մեծ նշանակություն ունի հատկապես երկրորդ ֆորմանտի դիրքը և նրա շարժման ուղղությունը, որը տեղի է ունենում անցումների ժամանակ:



Նկ. 26. Ե-ի անզուրկամբ

Նկ. 27. Ե-ի քանակորդ

Երթևեկացած օ-ի և ու-ի վրա մ և ն ձայնորդները ալոպիտի ուժեղ ներգործություն չունեն:

ՆԵՂԱՍԵՆՆԻ ԲԱՂԱՍԵՆՆԻ

Երբնատմային շփական [ֆ, վ] բաղանայներ


§ 119. Առատանական բնութագիր: Այս հնչյունների արտաբերման համար ստորին ծնոտը թեթև ներս է բաշխում, վերին կտրիչները մտանում են ստորին շրթունքով՝ հենվելով նրա ներքին եզրին և կազմում շատ նեղ, հորիզոնական ձևը: Այդ ձևը, բառ անհայնականների, վ-ի արտասանության ժամանակ մտնում է, իսկ ֆ-ի ժամանակ՝ ավելի պակաս: Երթուցները մի փոքր բացված են: Ազուն իր ամբողջ զանգվածով հետ է բաշխում, վերին ծայրը իջնում է և հենվում ներքին կտրիչների հիմքին: Ազովի ետին մասը զգալիորեն բարձրացած է, մի փաստ, որը խոսում է այդ հնչյունների ոչ քանակացման, այլ ընդհանրակեր, կատկանացման օգտին (տե՛ս նկ. 28): Փափուկ քիմքը թեև իջնում է, բայց

չի բացում սնգային ուղին Արտարերութեան ուժով Ֆ-ն ավելի լարված հնչյուն է, քան վ-ն. Ֆ-ի ժամանակ ճնդքը ավելի նեղ է, և վերին շրթունքը ավելի է հեռացած ստորին ատամնաշարից:


Այսպիսով՝ ֆ-ն ու վ-ն շրթնատամնային շփական հատկանքներ են: Ֆ-ն խոլ է, իսկ վ-ն՝ ձայնեղ: Որպես երկրորդական հատկանիշ, այս բազալանների համար պետք է նշել նրանց կառուցվածքները:

§ 120. Ֆիզիկական բնութագիր: Միանման պայմաններում վ-ի համեմատությամբ ֆ-ի տևողությունը ավելի երկար է: Այսպես, ավա և ափա հնչյունական կապակցություններում ֆ-ի տևողությունը հավասար է 200 միջի, իսկ վ-ինը՝ 100—120:

Բաղաձայնների համակարգում ձայնեղի և խուլի տարբերությունը միայն այս զույգում է այդքան մեծ:



Նկ. 28 ֆ-ի սենսոգենանկարը



Նկ. 29 ա-ի սենսոգենանկարը

Ինչպես նշեցինք վերևում, շրթնատամնայինների ժամանակ ազմուխը ստեղծվում է, երբ օդի հոսանքը անցնում է ճեղ ճեղքով և ազդում նեղվածքից առջև ստեղծված հնչարանի վրա: Վերջինս շատ կարճ է, և դրա շնորհիվ աղմկային էներգիան գտնվում է շատ բարձր դիսպազիոնում: Այսպես՝ ֆ-ի ակուստիկական սպեկտրայանկերներում միշտ առանձնանում է մի նեղ ազմկային զտուր, որը տարածվում է 8500—11000 հց հաճախականության սահմանում: Այդ զտուր զգալիորեն ունի սովորաբար 10500 հց հաճախականություն: Ընդհանուր էներգիան թույլ է և տատանվում է -30—

-25 դր սահմաններում: Վ-ի պակեկերը խիստ տարբեր է ֆ-ի սպեկտրից և շատ նման ձայնորոգներին:

Վ հնչյունը իր էներգիայի ինտենսիվությամբ ավելի բարձր է ֆ-ից, ունի-29—25 դր ուժգնություն, և դրեթի բացակայում է ազմուխը: Դրա փոխարեն Վ-ի սպեկտրում առանձնանում են ձայնային ֆորմանտներ ցածր, հիմնականում 300—600 հց հաճախականության դիսպազիոնում, ունենալով 375 հց ֆորմանտային հաճախականություն: Քիչ ավելի բարձր դիսպազիոնում առանձնանում է երկրորդ ֆորմանտը՝ 800—1550 հց 1150 հց ֆորմանտային հաճախականությամբ: Վ-ի սպեկտրում երևում է նաև ֆ-ին բնորոշ աղմուկը, բայց շատ թույլ, և նրա բարձրակետը 9700 հց է:

Բառազերբում վ-ի տևողությունը ավելի կարճ է, սպեկտրալ հատկանիշները նվազ հատկություն ունեն, բայց հետաքրքրական է նշել, որ հայերենում այդ դերբում էլ վ-ի խլացում տեղի չի ունենում:


Վ-ն ու ֆ-ն մյուս բաղաձայնների պես ազդում են հաջորդ ձայնազարների ֆորմանտների, հատկապես երկրորդ ֆորմանտի վրա, առաջացնելով նրա իջեցումը:

Խնամատմային շփական [ս, զ] բաղաձայններ


§ 121. Առաստանական բնութագիր: Ս և զ-ի համար բնորոշը լեզվի առաջամասի և վերին լնդերի միջև դուրսցած նեղ, կլոր անցքն է, որի միջով օդը անցնելիս առաջացնում է սուլող ձայն: Ինչքան ավելի նեղ ու կլոր լինի այդ անցքը, այնքան ավելի սուր է ստացվող հնչյունի երանգը: Այս լսողական սպեկտրությունն է պատճառը, որ լեզվաբանության մեջ այս հնչյունները անվանվում են սուլական:

Ինչպես ցույց են տալիս բանկարները ս, զ հնչյունները վերին լնդերի վրա թողնում են որոշակի հետքեր: Առանձին ղեպքերում հետքեր կան ատամների վրա, սակայն արտասանական դրսեին չի բնորոշում ատամների ողջ մակերեսը: Առաստանական գոտում պարզ երևում է աքն ճնդքը, որի լայնությունը առանձին խոսողների մոտ ատասանում է 3—7 մմ-ի սահմանում (տե՛ս նկ. 29): Հետաքրքիր է, որ այդ ճնդքը շատ դեպքերում ոչ թե արտասանական գոտու մեջտեղում է, այլ ար կամ ձախ կողմում, սո-

վորարար ժանիքների մոտ, բայց արտասանական այդպիսի տարբերությունը լսողության համար ընկալելի չէ: Բարձրաթիվ փորձառական ավալներից ցույց են տալիս, որ ա-ն ու գ-ն իրենց հերթին միևնույն խոսողների մոտ ունեն կազմավորման նուրբ տարբերություններ՝ ա-ի համեմատությամբ գ-ի արտասանական ձևըը ավելի նեղ է:



Նկ. 30. ա-ի բժանկարը



Նկ. 31. ա-ի 7-ի համեմատական բժանկարները. ա-ն հոծ գծով, 7-ն՝ սովորաբանով

Այս հնչյունների արտաբերմանը մասնակցում է ոչ թե լեզվի ծայրը, այլ նրա ամբողջ առջևի մասը: Լեզվանկարների վրա ա-ի հետքերը երկու աղիղներ են, որոնք առջևում վերջանում են նեղ ձևըըով:

Ռևնտղենանկարների ավալները, լրացնելով ա-ի և գ-ի արտասանական պատկերը, հաստատում են, որ լեզվի ծայրը դանդում է ներքին ատամնաշարի մոտ, այսինքն ակտիվ մասնակցություն չունի արտաբերությանը, իսկ լեզվի առաջնամասի և վերին ատամնաշարի լեզրերի մոտ ստեղծվում է նեղ անցք: Ընդ որում, լեզվի միջին մասը իջնում է, ստեղծելով բավականին լայն տարածություն լեզվի մեջքի և կոշտ բիմբի միջև: Այսպիսի արտասանությունը հայերենի և և զ հնչյունների տալիս է կոշտ (թավ) երակը (տե՛ս նկ. 29):

Լեզվի միջին և ետի մասերի դիրքը էական ազդեցություն չունի այդ հնչյունների կազմավորման համար: Այն տարբեր խոսողների մոտ ունենում է զգալի գիրքային տարբերություններ (ոմանց մոտ այն ավելի ցածր է, մյուսների մոտ ավելի բարձր):

Հիմնականը արտասանական նեղվածքի տեսքն է և նրա առջև վում ստեղծված հնչարանը: Այդ գոտու առաջ գտնվում են շքր-


թունքները, որոնք ա-ի և գ-ի արտաբերման ժամանակ չեզոք բացվածք ունեն: Երթունքները բավականին հեռանում են իրարից, բայց զուրա չեն ձգվում: Այս դիրքը նկատելիորեն տարբերվում է 2, 3 շիփականների արտաբերումից:

Այսպիսով՝ ա-ն և գ-ն առաջնալեզվային կանառամնային շիփական բաղաձայններ են: Նրանք տարբերվում են միմյանցից ձայնալույսի խորություն տարբերակիչ հատկանիշով:

§ 122. Ֆիզիկական բնութագիր: Մուկականները բաղաձայնների մեջ ամենահզոր հնչյուններն են: Նրանց միջին ինտենսիվությունը հասնում է մինչև -10—13 դբ:



Նկ. 32. 7-ի ակնադեմանկարը



Նկ. 33. խ-ի ակնադեմանկարը

Այդ հնչյունները մյուս բաղաձայններից տարբերվում են նաև իրենց մեծ տևողությամբ: Օրինակ, ասա և նման երկվանկ բաներում ա-ի տևողությունը հասնում է 160—200 մկրկ-ի:

Ֆիզիկական հատկանիշներով ա-ն ու գ-ն շատ նման են և ունեն որոշակի հաստատուն սպեկտրային պատկեր: Նրանք բնորոշվում են լայն ազմային զոտով, որի երբքին սահմանը սկսում է 5000 հց-ից, իսկ վերինը հասնում է մինչև 11000 հց-ի: Այդ լայն ազմային զոտում առանձնանում են 8500 կամ 9500 հց հանարականությամբ բարձրակետեր: Բացի այս հիմնական զոտուց, հաճախ հանդես են գալիս առանձին ազմային բաղաձայնների 1400—2650 հց-ի սահմաններում, իսկ ձայնիզ գ-ի մոտ նաև 150—600 հց-ի սահմանում, որը վկայում է ձայնի առկայության մասին:

Այս երկու հնչյունները քիչ են ազդվում հարևան հնչյուններից,

սակայն իրենք բավականին մեծ ազդեցություն են թողնում նախորդ և ավելի շատ՝ հաջորդ ձայնավորների վրա: Ա-ի և ու-ի շրջապատում ս-ն և գ-ն առաջացնել են երկբորդ ֆորմանտի բարձրացում: օ-ի և ի-ի ժամանակ այդ ազդեցությունը ավելի թույլ է, բայց գործում է նույն ուղղությամբ:

Նախամային շփական [շ, ժ] բաղաձայններ

§123. Արտասանական բնութագիր: Ե-ն ու ժ-ն, լինելով առաջնալեզվային բաղաձայններ, զգալիորեն տարբերվում են նույն խմբի մեջ մանող մյուս բաղաձայններից, մասնավորապես ս-ից ու գ-ից:

Այսպես, շ-ի ու ժ-ի քմակարների վրա լեզվի հետքերը զգալիորեն տարբերվում են ս-ի և գ-ի թողած հետքերից: Այդ տարբերությունը վերաբերում է ինչպես ճեղքի տեղին, այնպես էլ նրա լայնությունին ու ձևին:

Ե-ժ-ի արտասանական գոտին ավելի ետ է ընկած, լիովին բնագրվելով արվեստների՝ մինչև կոշա քիմբի սկիզբը (տե՛ս նկ. 32, 31): Դրանով արտասանական գոտին դառնում է նախաքիմբը: Քմակարների վրա հզման հետքերը կազմում են բավականին մեծ անցք, որի սարկությունը ամենանեղ տեղում տարբեր խոսողների մոտ տատանվում է 10—16 մմ-ի սահմաններում (նկ. 31):

Ինչպես ս-գ-ի, այնպես էլ շ-ժ-ի արտասանության ժամանակ նկատվում է, որ ձայնիզի դեպքում (խուլի համեմատությամբ) ճեղքը շատ աննշան նեղ է:

Ճեղքերի եղբրը գտնվում են վերին առամներից ավելի ետ և ընդհատվում են արվեստների վրա: Քմակարների հարաբերական զծայրի վրա այդ տարբերությունը շատ ցայտուն է (տե՛ս նկ. 31): Նկատվում է, որ նախաքմայինների հզման մակերեսը շատ ավելի լայն է և կտրիչներից ետ քաշված:

Ազդանկարներից երևում է, որ շ-ժ-ի արտաբերմանը մասնակցում է ոչ թե լեզվի առաջամասը (ինչպես ս-գ-ի ժամանակ, այլ առջևի և միջին մասերի սահմանը, որը գտնվում է արվեստների հանդիպակաց մասում):

Ռենտգենանկարներից երևում է, որ շ-ժ-ի արտաբերության ժամանակ լեզուն ամբողջությամբ բարձրանում է դեպի արվեստներից և կոշա քիմբը՝ թողնելով բավականին լայն ու երկար տա-
100

բաժնություն լեզվի մեջքի և քիմբի միջև (տե՛ս նկ. 32): Դրա շեղումով այդ հնչյունները որոշ շփով քմայնանում են: Երբ թունդերը ոչ միայն լայն բացված են, այլև առաջ ձգված, սանդձեղով մի լրացուցիչ շրթնային հնչարան:

Այսպիսով՝ շ-ն ու ժ-ն նախամային առաջնալեզվային շփական բաղաձայններն են՝ շ-ն՝ խուլ, իսկ ժ-ն՝ ձայնիզ:

§ 124. Ֆիզիկական բնութագիր: Այս հնչյունները իրենց տեղություններ և հզորությամբ մոտենում են հունառամնային շփականներ ս, գ-ին: Երկվանի հնչյունակապակցություններում երկու ձայնավորների միջև նրանց տեղությունը հավասար է 140—160 մվրկ, իսկ անշեղտ վանկում այն կարճանում է մինչև 120 մվրկ: Բառավերջում այն ավելի է երկարում՝ հասնելով մոտ 150—160 մվրկ-ի:

Այդ հնչյունների հզորությունը փոքր ինչ պակաս է ս-ից ու գ-ից և առատանվում է 25—15 դբ-ի սահմաններում: Այդ երկու զույգերը տարբերվում են ազվային էներգիայի բաշխմամբ: Այսպես, եթե ս, գ-ի ժամանակ այն կենտրոնացված էր 5000—9000 հց սահմանում, ապա շ-ի ու ժ-ի ժամանակ այն ցրված է ձայնային ամբողջ դիսպազոնում, որի մեջ առանձնանում են առանձին ուժեղացման բարձրակետեր 1900, 2850, 5750 և 9000 հց հաճախականությամբ: Այս բարձրակետերի արժեքները կարող են որոշ սահմաններում փոփոխվել, սակայն նրանք հիմնականում տատանվում են ավյալ սահմաններում: Չայնիզ ժ-ի ժամանակ, քայքայ ազվային էներգիայից, սակա են նաև ցածր դիսպազոնի ձայնային բազադրիչներ:

Ե ու ժ-ի սպեկտրերը, զգալի փոփոխվելով ըստ դիրքի, այնուամենայնիվ ցուցաբերում են որոշակի ուժեղացման շրջաններ, որոնք համախմբվում են 2500—3000, 4000 և 6750 հց սահմաններում:

Ե-ն ու ժ-ն նույնպես ազդում են հարևան, հատկապես հաջորդող ձայնավորների սպեկտրալ պատկերների վրա՝ առաջացնելով ա, օ, ու ձայնավորների երկրորդ ֆորմանտի բարձրացում:

Փակիպմային կամ կատկային շփական [խ, դ] բաղաձայններ

§ 125. Արտասանական բնութագիր: Հայադիտության մեջ ետնալեզվային կ, գ, ք և խ, դ հնչյունների միջև ըստ արտաբերու-

Քյան տեղի տարբերություններ չեն նշվում: Սակայն փորձառական տվյալները ցույց են առաջի, որ այդ երկու խմբերը իրարից տարբերվում են ինչպես կազմավորման եղանակով, այնպես էլ տեղով:

Եթե կ, գ, Բ-ի արտաբերման ժամանակ քմանկարում ստացվում են որոշ հետքեր, հատկապես զրանց քմանացած արտաբերակներում, որտեղ երևում է արտասանական հոլման զոտին, ապա խ և դ-ի ժամանակ այդպիսի հետքեր չեն նկատվում:

Այդ տարբերությունը առավել ևս բացահայտվում է, երբ համեմատում ենք ունեղենանկարները (տճ՝ նկ. 33): Այսպես, եթե փակվածքի տեղից մինև վերին աստիճաններ բնկած տարածությունը կ, գ, Բ-ի արտաբերման ժամանակ հավասար է 50 մմ-ի, ապա նույն տարածությունը նույն խոսողների մոտ խ, դ-ի ժամանակ հավասար է 67—75 մմ-ի: Այս համեմատությունից պարզ երևում է, որ խ-ն և դ-ն ավելի հտնալեզվային կազմություն ունեն, քան կ, գ, Բ-ն:

Խ-ի և դ-ի կազմավորման ժամանակ լեզվի առաջնամասում զոտանում է զոզավորում, իսկ ետին մասը բարձրանում է և փափուկ քիմքի հետ կազմում են զվածք՝ 1—2 մմ լայնությամբ: Փափուկ քիմքը իր հերթին բարձրանում է և փակում անգային ուղին: Խ-ն ու դ-ն բերանային հնչյուններ են: Գրանց որակի վրա ազդում է բերանային հնչարանը, որը, սկսած արտասանական փակվածից մինև շրթոճքները, գնալով մեծանում է: Վերջիններս խ-ի և դ-ի ժամանակ լեզուք ձևով բացված են և այդ հնչյուններին լրացուցիչ երանգավորում չեն առաջի:

Այսպիսով՝ խ-ի ու դ-ի կազմավորմանը մասնակցում է փափուկ քիմքի ետնամասը՝ փոքր լեզվակով հանդերձ: Այսինքն՝ խ-ն, դ-ն փափկամային կամ կատկային շփական բաղաձայններ են: Երանց տարբերվում են միմյանցից ձայնիկ-խուկ նակարությամբ. դ-ն ձայնեղ է, իսկ խ-ն՝ խուկ:

§ 126. Ֆիզիկական բնութագիր: Կատկային խ-ի ու դ-ի, ինչպես և մյուս շփականների տեղությունը համեմատան պայմաններում փոքր ինչ ավել է հոսականներից: Միավանկ բառերում այն հասնում է 180—200, իսկ բառասկզբում 120—130 մվրդ-ի:

Սրանց ակուստիկական պատկերում կարելի է տեսնել որոշ

ձայնավորական «ֆորմանտներ»²⁰, մոտավորապես նույն շրջաններում, ինչ որ հարևան ձայնավորներն են:

Բ₁ 300—600 հց. խ-ի ժամանակ այս ֆորմանտը, որը վկայում է ձայնի առկայության մասին, հաճախ բացակայում է, իսկ դ-ի ժամանակ միշտ առկա է:

Բ₂ 1250—1750 հց միշտ առկա է և ունի 1550 հց ֆորմանտային հաճախականություն: Մյուս ավելի բարձր «ֆորմանտները» ինտենսիվությամբ շատ ավելի թույլ են: Ամենից հաճախ խ-ի ու դ-ի սպեկտրում երևում է 4000—5000 հց սահմանում գտնվող «ֆորմանտը», նրանում է նաև բարձր հաճախականության աղմուկ՝ 8000—10000 հց-ի սահմանում: Երանց ինտենսիվությունը ավելի թույլ է մյուս շփականների համեմատությամբ և հավասար է—25—23 դբ-ի: Որոշ տեղերում այն առհասարակ անհետանում է: Դ-ի ինտենսիվությունը համեմատաբար բարձր է և հասնում է—20—18 դբ-ի: Չայնեղ դ-ի «ֆորմանտները», որոնք նմանվում են նախորդ կամ հաջորդ ձայնավորի ֆորմանտներին, ցատկան են և կայուն: Դ-ն ավելի ձայնեղ ու հզոր հնչյուն է, և նրա սպեկտրում բարձր հաճախականության աղմուկը զրիթե բացակայում է:

Այսպիսով, իրենց ձայնիկ-խուկ հակադրությամբ խ-ն ու դ-ն ավելի են տարբերվում իրարից, քան ա-ն զ-ից կամ շ-ն ժ-ից: Երանք նույնպես ազդում են հարևան ձայնավորների վրա՝ առաջացնելով ու, և ձայնավորների երկրորդ և երրորդ ֆորմանտների բարձրացում:

Սակայն խ-ն ու դ-ն ավելի շատ իրենք են ազդվում հարևան ձայնավորներից՝ իրենց սպեկտրային էներգիայի կազմավորմամբ նմանվելով նրանց:

Կեկորդային շփական [Բ] բաղաձայն

§ 127. Արտասանական բնութագիր: Որոշ լեզվաբանների կարծիքով այս հնչյունը ոչ այլ ինչ է, եթե ոչ թոքերից դուրս եկող յնչի ձայն, ընդ որում արտասանական ուղին ընդունում է հաջորդ կամ նախորդ ձայնավորի արտաբերության դիրքը. ստացվում է, որ Բ-ն անձայն ձայնավոր է: Այս կարծիքը պաշտպանում է

²⁰ Ֆորմանտ տերմինը այսօր մենք կործանում ենք պայմանականորեն, քանի որ դրան ոչ թե ձայնային ֆորմանտներ են, այլ արձանի հատակման գոտիներ, որոնք մասամբ պայմանավորված են ձայնավորի ազդեցությամբ:


Մ. Արքեղյանը: Ջոսեֆը առաջարկում է նույնիսկ ստորագրածել այն որպես 3, 9, 1 և այլն:

Այս կարծիքով (Լ. Վ. Շչերբա, Գ. Պ. Տորուն) այս հնչյունի արտաբերման ժամանակ լեզվի համամասը մոտենում է նրախի պատին, որն իր հերթին փոքր ինչ առաջ է ձգվում, և ստորին երախում առաջանում է նեղվածք:


Առաջին կարծիքը առարկելի է, քանի որ եթե հ-ն իսկապես լիներ անձայն ձայնավոր, ապա դուռնություն չէր ունենա ձայնեղ հ, այն կհամարվեր ձայնավորի հետ, մինչդեռ ձայնեղ հ-ն դուռնություն ունի և դրական հայերենում՝ որպես հնչյունի զերբային տարբերակ (օր. անս բառում) և բարբառներում:

Ուստի պետք է նեղադրել, որ հ-ն այնուամենայնիվ միայն չնի ձայն չէ: Մյուս կողմից հ-ի փորձատեսակն ուսումնասիրությունը դժվարանում է, որովհետև արտասանության տեղը մասշտիբ չէ ոչ սովորական աչքին, ոչ քմանկարահանմանը, ոչ էլ սենսորիանակարահանմանը:

Քմանկարների վրա այն ոչ մի հետք չի թողնում:



Նկ. 34. հ-ի սենսորիանակարը



Նկ. 35. 1-ի սենսորիանակարը

Ռենտգենանկարներից երևում է, որ հ-ի արտաբերման ժամանակ արտասանական օրգանները ընդունում են հաջորդ կամ նախորդ ձայնավորի դիրքը, սակայն ի տարբերություն հարևան ձայնավորների արտաբերությունը, հ-ի ժամանակ լեզուն ընդունում է բերանում ազնի բարձր դիրք և ազնի հո է քաշվում դեպի երախի (Ֆարինգի) պատը (տե՛ս նկ. 34):

Այս դիրքը փոքր ինչ նմանվում է լ-ի դիրքին, չնայած հ-ի

ժամանակ լեզվի և փայտիկ քիմքի միջև եղած տարածությունը ազնի լայն է և հավասար է 3—4 մմ-ի, իսկ լեզվի կոթը ազնի է մոտենում երախի պատին:

Այսպիսով՝ հ-ն մոտենում է ըմպանային արտասանությանը, սակայն նրա արտաբերմանը, ըստ երևույթին, մասնակցում են նաև ձայնավորներ, որոնք չեն տատանվում, բայց մոտենում են իրար, հետևաբար հ-ն կարելի է անվանել կոկորդային կամ խոլալային բաղաձայն: Բառակազմում և բառավերջում այն խուլ է, բայց երկու ձայնավորների միջև ձայնեղանում է: Օրինակ՝ անս, անավոր, անեղ բառերում հ-ն իր տեղություն մեծ մասում ձայնեղացած է:

§ 128. Ֆիզիկական բնույթը: Բառամիջում հ-ի տեղությունը բավականին երկար է՝ 160—180 մմ-ի: Բառակազմում և բառավերջում խուլության և հնչյունի թուլության պատճառով հ-ի տեղությունը լիովին չի որոշվում. նրա սպիկտը շատ նման է հարևան ձայնավորների սպիկտերին, տարբերվելով նրանցից ընդհանուր էներգիայի թուլությամբ: Սակայն կան և տարբերություններ: Այսպես, ֆորմանտները՝ հիմնական տոնը և առաջին ֆորմանտը հաճախ անհետանում են հ-ի ժամանակ, իսկ վերին ֆորմանտները ազնի լավ են պահպանվում: Երրորդ և չորրորդ ֆորմանտների սահմանում առանձնանում է նաև ադմոս, որը ձայնավորների ժամանակ զրկվե քայքայում է: Ընդհանուր էներգիան հավասար է 30—25 դբ-ի: Երբեմն նկատվում է նաև բարձր հաճախականության ադմոս:

Ընդհանրացնելով հ-ի պատկերը՝ կարելի է նշել հետևյալ ֆորմանտները՝ F₁ 400—700 հց, F₂ 975—1650 հց, F₃ 3000—3400 հց, F₄ 4400—4800 հց:


Սակայն ամենաբարձր ադմոսը նկատվում է ազնի բարձր՝ 6500 հց-ի սահմանում:

Այսպիսով՝ հ-ի արտաբերման տեղը գտնվում է արտասանական ուղու խորքում, լեզվի կոթի և ըմպանի մոտ և մասամբ ձայնալարերում, և, ինչպես վերը նշել ենք, քանի որ հնչյունի որակի վրա ազդում է արտասանական տեղից առաջ գտնվող հնչարանը, այդ իսկ պատճառով հ-ի արտաբերման ժամանակ ձայնավորների ազդեցությունը շատ մեծ է:


Կողմնային [1] ձայնոդ

§ 129. Արտասանական բնութագիր: Լ-ն ըստ արտասանական տեղի նմանվում է ա, դ, ք պայթյալականների՝ տարբերվելով նրանցից արտաբերման եղանակով:

Լ-ն, ինչպես և ստամային պայթյալականները, քմանկարների վրա թողնում են որոշակի հետքեր: Սակայն, ի տարբերություն ատամնայինների, Լ-ի հետքերը բերանի խոռոչում գրեթե միշտ ավելի ետ են բաշխված և ավելի նեղ են, այսինքն՝ նրա արտասանական գոտին հանատամնային եզրն է, որով նմանվում է և-ի արտասանությանը: Սակայն պայթյալականների կամ ռնգային և-ի միջև մեկ կողմից և Լ-ի միջև՝ մյուս կողմից գոյություն ունի մի ուրիշ տարբերություն, որը վերաբերում է ոչ ֆե տեղին, այլ արտաբերման եղանակին: Այսպես, եթե պայթյալականների ժամանակ արտասանական գոտին լիակատար է, այս Լ-ի ժամանակ այն ընդհատվող է, ձայնից կամ աչից, կամ երկու կողմից թողնում է բաց տարածություն, որի միջով օդը անցնելիս ստեղծում է յուրահատուկ



Նկ. 36. Լ-ի բնակարար



Նկ. 37. Լ-ի բնակարար

չփման ադմուս Այսպիսով՝ Լ-ի արտաբերությունը կատարվում է հետևյալ եղանակով՝ լեզվի ծայրը ավելի է վերին ատամնաշարի լեզերին, իսկ լեզվի եզրերը մեկ կամ երկու կողմից փոքր ինչ բացվում են՝ առաջացնելով նեղք, որի միջով օդը անցնելիս ստեղծում է Լ-ին հատուկ ադմուսը: Միևնույն ժամանակ ձայնալարերը ստատանվում են:

Հետաքրքիր է նշել, որ տարբեր խոսողների մոտ արտասանական ճեղքը գոյանում է տարբեր տեղերում, ումանց մոտ այն սեղանաաձանների մոտ է, երբեմն երկրորդ կտրիչների մոտ (մեկ կամ երկու կողմից (Նկ. 36)):

Կոշտ Լ-ի տարբերակի կազմավորման ժամանակ լեզվի ետին մասը դգայի բարձրացած է, իսկ լեզվի միջին մասում ստեղծվում է դողավորություն, որով պայմանավորված է Լ-ի այդ կատկայնացված տարբերակը (Նկ. 35): Քմայնացած տարբերակի ժամանակ լեզվի միջին մասն է բարձրանում դեպի կոշտ բնձքը, որի պատճառով քմանկարներում Լ-ի արտասանական գոտին խիստ լայնանում է: Այս դեպքում պետք է նշել նաև լեզվի դերը, Լ-ի արտաբերման ժամանակ լեզվի ծայրն է հղվում արտամների ու լրենդերին, որով և այդ հնչյունը ստանում է ծայրալեզվային արտաբերում:

Լ-ի արտաբերմանը շրթունքները ակտիվ մասնակցություն ունեն, լեզուց բացվածքի են:

Այսպիսով՝ Լ-ն առաջնալեզվային, ետնատամնային կողմնային ձայնոդ է:

§ 130. Ֆիզիկական բնութագիր: Նախ՝ նշենք Լ-ի սեղողությունը տարբեր դիրքերում: Չայնավորների շրջապատում, երկվանկ բառերում այն հավասար է մոտ 100 մվրկ-ի: Բառակզրում ձայնավորի անցումներով Լ-ն մի փոքր ավելի երկար է և հավասար է 130 մվրկ-ի, բառավերջում՝ 80—90 մվրկ-ի: Ընդհանուր ինտենսիվությունը ձայնավորների համեմատությամբ թույլ է և տատանվում է—20-ից—13 դր սահմանում, սակայն այն ավելի մեծ է որնգային ձայնորդների ինտենսիվությունից:

Լ-ի սպեկտրապատկերում հստակ երևում են 4—5 ֆորմանտները ցածր և միջին դիապազոնում. առաջինը՝ 300—525 հց, երկրորդը՝ 975—1150 հց, երրորդը՝ 2700—2850 հց, չորրորդը՝ 3600—3750 հց:


Առանձնանում է և Հինգերորդ ֆորմանտը 4050—4800 հց հաճախականությամբ, բայց նրա ինտենսիվությունը շատ թույլ է: Մյուս ձայնավորների շրջապատում այդ 5 ֆորմանտները հիմնականում սահպանվում են՝ փոքր ինչ տեղաշարժվելով ձայնային դիապազոնում:

Բառավերջի դիրքում Լ-ի ինտենսիվությունը թուլանում է, որով ֆորմանտներ անհետանում են:


1-ն խիստ ազդեցություն ունի հաջորդ ձայնավորների վրա, հատկապես անցումների հատվածում: Հետաքրքիր է, որ 1-ն անցումների ունի նաև բառասկզբում, որտեղ նախորդ Հնչյունի ազդեցությունը բացակայում է: Անցումների առկայությունը 1-ի ներքին ֆիզիկական հատկանիշներից մեկն է:

Նեղվածային ավելույթին [բ] ձայնորդ

§ 131. Արտասանական բնութագիր: Այս հնչյունը քմանկարների վրա թողնում է որոշակի հետքեր, որոնք շատ նմանվում են շ-ին կամ ժ-ին: Հետքերը նման են երկու լայն աղեղների, որոնք ընդհատվում են առաջին սեղանատամների մոտ (տե՛ս նկ. 37): Ք-ի արտաբերման ժամանակ հիմնական արտասանական զտրին ճեղքի ձև ունի, ես է բաշված առջևի ատամներից ու ընդգրկում է ավելոնները: Ուստի այս հնչյունը ըստ արտասանության տեղի պետք է համարել ավելույթին: Լեզվի ծայրը ք-ի արտաբերման ժամանակ մոտենում է վերին ատամնաշարի լեզերքին, չկպելով սակայն նրան: Օղի հոսքը, անցնելով այդ նեղ ու երկար անցքով, առաջացնում է թույլ շփման աղմուկ:



Նկ. 38. ք-ի սենագենանկարը



Նկ. 39. յ-ի սենագենանկարը

Երբեմն կողքի հզման հետքերը լայնանում են, իսկ նրանց միջև կղած տարածությունը՝ նեղանում, շատ նմանվելով շ-ի և ժ-ի քմանկարներին, որոնց այդ տարածությունը միշտ ավելի նեղ է: Այս փաստերը հիմք են ծառայում սակու, որ ըստ արտաբերման

կղանակի ք-ն նեղվածային հնչյուն է, և ոչ թե թրթռուն, ինչպես քնդունված է մինչև հիմա:

Բառավերջի դիրքում քմանկարների վրա թողած հետքերը ավելի թույլ են, իսկ աղեղների միջև կղած տարածությունը՝ ավելի լայն:

Ք-ի արտաբերության ժամանակ լեզուն իր ետին մասով մի փոքր բարձրացած է, իսկ միջին և առջևի մասերը՝ սահուն իջած են (նկ. 38): Այսպիսի դիրքը, ինչպես գիտենք, հնչյունին տալիս է կոշտ երանգ:

Այսպիսով՝ ք-ն հայերենում ավելույթին, ձայնալեզվային, նեղվածային ձայնորդ է:

§ 132. Ֆիզիկական բնութագիր: Այս հնչյունը առհասարակ շատ կարճ է, նրա տևողությունը ըստ դիրքերի փոխվում է: Զայնավորների միջև այն շատ կարճ է և անցումների հետ կազմում է 60—80 մվրկ, իսկ բառավերջում ամենաերկարն է և հասնում է մինչև 120—140 մվրկ-ի:

Պետք է նշել, որ ք-ի ֆիզիկական պատկերում մեծ տեղ են զբաղում անցումները, որոնք շատ պարզ երևում են սպեկտրապատկերներում:

Ինչպես մյուս ձայնորդների, այնպես էլ ք-ի ընդհանուր էներգիան ձայնավորի համեմատությամբ թույլ է, թեև ոչ այնքան: Այսպես, միջին հաշվով այն տատանվում է 25—10 դր-ի սահմանում:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ նրա պատկերը շատ է նմանվում հարևան, հատկապես հաջորդող ձայնավորների պատկերին, իսկ լեզուր դիրքում ք-ի պատկերը շատ նմանվում է ժ-ին և բնորոշվում է հետևյալ ֆորմանտներով:

F₁ 300—525 հց, 450 հց ֆ₂ (ֆորմանտային հաճախականությունը)

F₂ 1450—1650 հց, 1550 հց ֆ₃

F₃ 2700—3000 հց, 2700 հց ֆ₄

Հաջորդող ձայնավորների անցումներում երևում է առաջին և երկրորդ ֆորմանտների տեղաշարժ, որը ցույց է տալիս այս հնչյունի ազդեցությունը ձայնավորի վրա:

Ուսից ֆորմանտային այս հոտակ կառուցվածքից, ք-ի սպեկտրում երևում է աղմուկ, որը տարածվում է 4500 մինչև 9000 հց:

Այս ազմուկը ուժեղանում է հատկապես այն դիրքում, որտեղ Ե-ն խոչ էլ Միենույն ժամանակ հնչյունի ընդհանուր էներգիան ընկնում է մինչև-30 դր: Ազմուկային դիտապահոնը լայնանում է, և նրա ներքին սահմանը իջնում է մինչև 3000 հց:

Ելացած Ե-ի այս պատկերը շատ է հիշեցնում շ-ի սպեկտրը:

Նեղվածալիք [յ] ձայնոց

§ 133. Արտասահական բնութագիր: Յ ձայնորոչը և ի ձայնավորը իրենց կազմավորմամբ շատ նման են միմյանց: Երկու հրեչյունի արտաբերության ժամանակ էլ լեզուն իր միջին մասով բարձրանում է զեպի կոշտ քիմքը և հավում նրան իր կողքերով, սակայն ձայնավորի ժամանակ հստակ հեռքերը ավելի փոքր են, քան որ ձայնորոչի համեմատությամբ լեզուն ավելի քիչ է բարձրանում զեպի քիմքը:

Ունեցնեապատկերները ցույց են տալիս, որ յ-ի կազմավորման ժամանակ լեզուն կենտրոնացված է բերանի միջին մասում՝ կազմելով մի քրթածե բարձրություն: Նրա ամենաբարձր կետը գտնվում է կոշտ և փափուկ քիմքերի օտհմանում: Քիմքի և լեզվի միջև ընկած տարածությունը հավասար է 3—5 մմ-ի (Նկ. 39): Լեզվի դիրքի շնորհիվ բերանային հնչարանը փոքրանում է և փոխարենը մեծանում է կոկորդայինը: Երթունքները բացված են և անշնչա դուրս ցցված:

Փմանկարների վրա յ-ն թողնում է որոշակի հետքեր, որոնցից կարելի է եզրակացնել, որ այն բուն միջնալեզվային քմային ձայնորոչ էլ նրա արտաբերման ժամանակ լեզվի եզրերը կպչում են քիմքին՝ թողնելով մեղեդուրմ նեղ անցք օդի հոսքի համար:

Փմանկարներում ներկված սեղերը բավականին լայն շերտեր են (տե՛ս նկ. 12), որտեղ իրար են մտնենում երկրորդ կամ երրորդ սեղանատամների մոտ: Ամենանեղ մասում ճեղքի լայնությունը 13—15 մմ է, որը զգալի չափով լայն է մյուս բաղաձայնների արտաբերման համեմատությամբ:

Տարբեր ձայնավորներից առաջ արտասանված յ-ն թողնում է տարբեր հետքերու Այսպես, յի, յե հնչյունեակապակցություններում լեզվի հստակ հետքերը ավելի լայն են և ավելի առաջ ձգված, իսկ օդի անցքը՝ ավելի նեղ: Յա կապակցությունում ճեղքի լայնությունը մեծանում է և ետ քաշվում:

Լեզուն իր ողջ զանգվածով կենտրոնանում է բերանի միջին մասում և բարձրանում զեպի կոշտ քիմքը՝ թողնելով 3—5 մմ լայնությամբ անցք: Ավելուների ու ատամների մոտ նեղվածքը լայնանում է, իսկ բերանի ետին մասում ստեղծվում է լայն կոկորդային հնչարան: Երթունքները զրեթև շեղոք բացվածք ունեն, սակայն մի փոքր դուրս են մղվում: Նրանց բացվածության աստիճանը հասնում է 9—16 մմ-ի:

Նոսելով յ-ի և ի ձայնավորի նմանությամբ մասին, պետք է նշել նաև նրանց միջև եղած տարբերությունները: Ը-ի ժամանակ լեզուն բերանում ավելի առաջ է մղված: Նրա բարձրակետը մի քիչ ավելի առաջ է ընկած: Բերանային հնչարանի ձևն ու ծավալը տարբեր են: Յ-ի ժամանակ այն ավելի փոքր է ու նեղ ի-ի համեմատությամբ:

Այսպիսով՝ յ-ն Բմային, միջնալեզվային, նեղվածալիք ձայնորոչ է:

§ 134. Ֆիզիկական բնութագիր: Յ-ի սպեկտրալ նկարներից երևում է, որ նրա հիմնական մասը կազմում են անցումները՝ նրա ընդհանուր տևողությունը մտավորապես հավասար է 110 մվրկ-ի, իսկ առանց անցումների՝ 40 մվրկ-ի: Այսպիսով յ-ի սպեկտրի կայուն մասը շատ կարճատև է, իսկ անցումները՝ երկար: Գա էլ նրա առանձնահատկություններից մեկն է:

Յ-ի սպեկտրում հիմնականում առանձնանում է երկու ֆորմանտ: Առաջինը 220-ից մինչև 375 հց՝ 375 ֆորմանտային հաճախությունությամբ, երկրորդ՝ 2200—2400 հց, որը շատ նման է ի ձայնավորի պատկերին, մի տարբերությամբ միայն, որ վերջինիս մոտ ֆորմանտները ավելի կայուն են և լին բնորոշվում անցումնային մեծ հատվածներով:


Ի տարբերություն ի-ի, այստեղ ընդհանուր էներգիան ցածր է (—25—15 դր):

Յ-ի սպեկտրում նշմարվում է նաև բարձր հաճախականության ազմուկ 900-ից 10.000 հց-ի սահմաններում:

Ք Ր Ք Ո Ւ Ն [յ] Ձ Ա Ն Ո Ւ Պ

§ 135. Արտասահական բնութագիր: Քրթունք ու-ն քմանկարների վրա թողնում է որոշակի հետքեր, որոնք երևում են ավելուների կամ լնդերի վրա: Այդ հետքերը բավականին հեռու են միմ-

յանցից և չեն կազմում մի ամբողջական գոտի. դրանք լեզվածայրի հարվածների հետքերն են ընդերքին (երբեմն ուժեղ, երբեմն թույլ), մինչդեռ Ե-ի քմապատկերների այդ գոտում հետքեր չեն երևում:



Նկ. 40. Ե-ի սննդակնակաբեր

Նկ. 41. Ե-ի լեզվակնակաբեր

Ինչպես երևում է սննդակնակարներից և լեզվակնակարներից, Ե-ի արտաբերմանը հիմնականում մասնակցում է լեզվի ծայրը, որը մոտենում է ալվեոլների և օդի հոսքի ազդեցությամբ ուժեղ թրթրում, այսինքն մոտենում և հեռանում է հպման տեղից:

Թրթրումների քանակը տարբեր դիրքերում տարբեր է: Ամենամեղ դիրքում հասնում է 5—6-ի, իսկ թույլ դիրքում՝ 1—2-ի: Հմտ., օրինակ, ումիկ, ոտնիկ (4—5 զարկ) և սառ, փառ (1—2 զարկ): Այդ զարկերի քանակը սովորական լսողությամբ չի գզացվում, մինչդեռ սպեկարայլ պատկերում հնուացումները ու մոտեցումները պարզ երևում են:

Ե-ի ժամանակ լեզվի ողջ զանգվածի դիրքը բավականին նքման է Ե-ի դիրքին: Դա վերաբերում է լեզվի ձևին, մասնավորապես նրա միջին մասին, շրթունքների բացվածքին և կոկորդային հնչարանի ծավալին (նկ. 38 և 40): Բայց կա և էական տարբերություն: Եթե Ե-ի ժամանակ լեզվի ետին մասը բարձրացած է, և նրա միջին մասում նկատվում է սահուն անցում, ապա Ե-ի ժամանակ այդ զոդպարունը ավելի խոքն է, և լեզվի առաջամասը լարված չէ: Շրթունքները Ե-ի ժամանակ մի փոքր դուրս են ցցված՝ մեծացնելով բերանային հնչարանը:

Ե-ի արտաբերմանը մասնակցում են ձայնալարերը: Այսպիսով՝ Ե-ն ձայնալեզվային, ալվեոլային, քրթաուն ձայնոդ է:

§ 136. Ֆիզիկական բնութագիր: Ե-ի տեղումնը ըստ դիրքերի տարբեր է: Բառասկզբում այն ամենսերկարն է և հավասար է մոտ 140 մվրկ-ի, բառամիջում՝ մոտ 100 մվրկ-ի, իսկ բառավերջում՝ 60-ից մինչև 100 մվրկ-ի:



Նկ. 42. Ե-ի բժանկաբեր

Ե-ի հիմնական հնչյունական առանձնահատկությունը այն է, որ նրա սպեկտրը ընդհատվող է, այսինքն բաղկացած է մի քանի հատվածներից: Այստեղ պարզ երևում են ֆորմանտային հատվածներ, որոնք միմյանցից բաժանվում են դադարներից: Ընդ որում, այն ժամանակ, երբ արտասանական գործարանները իրարից հեռու են՝ բացելով օդի հոսքի համար լայն անցք, սպեկտրասպատկերում երևում է ձայնի առկայություն, իսկ երբ գործարանները մոտենում են՝ փակելով ուղին, ձայնը բացակայում է: Ցուրաքանչյուր դադարի տևողությունը հավասար է 16—32 մվրկ-ի, իսկ մի թրթրի ժամանակը՝ 25—40 մվրկ է:

Սպեկտրապատկերը ըստ նման է հարևան ձայնավորների պատկերին: Այսպես, Ե-ի շրջապատում հստակ երևում է երեք ֆորմանտ՝ F₁ 450—600 հց հաճախականությամբ, F₂ 1350—1650 հց, F₃ 3000—3150 հց: Ընդհանուր ինտենսիվությունը Ե-ի համեմատությամբ ավելի թույլ է: Ե-ի շրջապատում երևում է ուժեղ առաջին ֆորմանտ (F₁ 225—525 հց) յստի դիսպազիոնում,

և շատ թույլ երկրորդ ֆորմանտ 900—1050 հզ հաճախականությամբ, որը շատ նման է ու-ի սյտակերին: Օ-ի շրջապատում ո-ի ֆորմանտները մտնենում են օ-ի սպիկտրապատկերին, թեև երևում է նաև շատ թույլ աղմուկ բարձր հաճախականության դիպլոմներում:

8. ՀնգձՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՆԱԶԳՆՅՈՒՆՈՒՄԻՆԸ ՀնգձՅՈՒՆԱԿԱՆ ՇՂԹՅՈՒՄ

§ 137. Ինչպես ասվեց վերևում, յուրաքանչյուր լեզվի բնորոշ են սահմանափակ քանակի հնչույթներ, որոնց զուգակցությունից կազմվում են տվյալ լեզվի հազարավոր բառերը: Սակայն հնչյունները, որոնք խոսքում հնչույթների դրսևորումներն են, նման չեն աշխույժների կամ տառերի, որոնք առանձին-առանձին շարվում են իրար ետևից և տեղափոխվում ցանկացած ձևով, նրանք ներթափանցում են միմյանց մեջ և կազմում ավելի մեծ միավորներ՝ վանկեր, որոնք արտասանվածքում հանդես են գալիս նվազագույն միավորների դերում: Այդ իսկ պատճառով, խոսքում որոշ հնչյուններ ինքնուրույն գոյություն չունեն, այլ միշտ արտասանվում են ձայնավորների հետ զուգակցված: Դրանք հատկապես պայթյական և կիսաշփական բաղաձայններն են, որոնք առանց ձայնավորի չեն կարող արտասանվել:

Հնչյունների ներթափանցումը կատարվում է արագ և արտասանության համար ամենահեշտ ձևնապարհով՝ հետրադրին չափ կրճատելով մարզու կողմից կատարված անհրաժեշտ ճիգերը: Միևնույն ժամանակ այդ հեշտացումը նկատելի է տեսնում հնչյունների լսելիությունը, նրանց անխափար մնալը խոսքի մեջ, և այդ իսկ պատճառով փոփոխումները կանխում են, երբ բարի հնչյունական ինքնուրույնությունը վտանգի տակ է: Թև ինչպես են կատարվում այդ անցումները և փոփոխությունները, կարելի է տեսնել մի քանի զուգակցումների օրինակներով:

§ 138. Բաղաձայնի և հաջորդ ձայնավորի արտասանությունը ամենասովորական և հիմնական զուգակցումն է լեզուներում, և այստեղ նույնպես հնչյունական տեսակետից կատարվում է այդ երկու հնչյունների արտասանվածքի ներթափանցում:

Չամենատեղով բա-բա-բի-բը վանկերի արտասանությունը, կարելի է նկատել, որ բ-ն այդ վանկերում տարբեր է հնչում: Սա-

կայն սովորաբար խոսողները այդ տարբերություններին ուշադրություն չեն դարձնում, քանի որ դրանք խմտառաբարձված չեն:

§ 139. Հետաքրքրական են հնչյունական այն երևույթները, որոնք տեղի են ունենում երկու և ավելի բաղաձայնների, ինչպես նաև ձայնավորների զուգորդումների դեպքում: Նման տիպի զուգորդումներ հայերենում բավականին շատ են, և նրանց արտասանության առանձնահատկությունները արժանի են ուշադրության: Այս դեպքերից նշենք հետևյալները.

1. Միևնույն վանկում կամ երկու վանկերի սահմանում հանդիպում են երկու միանման բաղաձայններ: Օրինակ՝ սողուններ, անճամաճ, հնա աաւ, մեծ ծով, մասսա, ազգալ, բըշալ, ուզկիլ, տաւրական և այլն:

Այս և նման բառերում ու կապակցություններում երկու միանման հնչյունների արտասանությունը հնչույթներու համար սուաբին հնչյունի երրորդ (եջքի) և երկրորդ հնչյունի առաջին (մուտքի) պահերը սղվում են, իսկ դարձարի (կացքի) պահերը միանում են: Այդ երկու հնչյունները միասին ունենում են մեկ մուտք և մեկ էլք, բայց երկու կամ մեկ երկար կացք: Վանկի սահմանն անցնում է այդ երկար հնչյունի մեջտեղով, որին նպաստում է լարվածության թուլացումը և այնուհետև ուժեղացումը: Երբ հանդիպում են քստ տեղի միասնական, բայց ըստ շնչեղության կամ ձայնեղության տարբեր բաղաձայններ, նրանք նույնպես ենթարկվում են արտասանական վերոհիշյալ օրինաչափությանը՝ ուր սողյա, շատ դա-լար: Այս դեպքերի մեջ չի մտնում արև կրկնակ բաղաձայնների արտասանությունը, որոնք միայն զրույթներ են կրկնակ, իսկ իրականում արտասանվում են զարդանավանկային ռ-ով: Օրինակ՝ աբենե, սննդարդունարհուարուն, պատեկ, զզկիլ, զզկիլ:

2. Երբ հանդիպում են մեկ աստմնային պայթյական և մեկ անդային ձայնորդ, ապա պայթյունը տեղի է ունենում ոչ թե սովորական սեղում, այլ փափուկ քիմքի մոտ՝ ստանալով այսպես կոչված «ոնգային պայթյուն» անվանումը: Օրինակ՝ պատենը, վատենի, կեզենիլ, մատենի, պատմել, գանել:

3. Երբ աստմնային պայթյակաները հանդիպում են լ ձայնորդից առաջ, ախինքն՝ ալ, բլ, դլ կապակցություններում, ապա ա-ի կլքը նույնպես սովորական չէ, այլ՝ կողմնային: Օրինակ՝ Աղաճա-յան, աղյաւ, աղլեա, Բիբլիս, կոպլեա:

4. Երբ եանատամնային ե-նի հաջորդում են քմային կ, ք կամ գ բաղաձայնները, ապա արտասանությունը հնչեացնելու համար ե-ն փոխում է իր արտաբերման տեղը՝ դառնալով քմային: Օրինակ՝ հինգ, հանք, հանգ, վանք, վանկ, զանգ, ժանգ, բանգ, սանկ, խունկ:

Այս դեպքերում ռեզային ե-ի արտասանության ժամանակ լիզվի ձայրը չի հպվում վերին ատամներին, այլ դտնվում է ստորին ատամների մոտ, այսինքն՝ ակտիվ մասնակցություն չունի արտաբերությանը:

5. Երբ իրար են հանգիպում երկու ձայնավոր, ապա նրանց միացումը չի տալիս երկբարբառ. նրանք բաժանվում են տարբեր վանկերի, և արտասանությունը կատարվում է երկու տարբեր եղանակով՝ հորանջով, այսինքն չ-ով, կամ առանց հորանջի: Օրինակ՝ ամենատազ, ամենախալան, լիաժեժ, կախտ, ռաունդ և այլն: Ամենա, Ենքա, հակա, կիսա մասնիկներով կազմված բառերում, երբ նրանց հաջորդում է ձայնավոր, արտասանությունը առանց հորանջի է:

Սակայն հայերենի համար ավելի տարածվածն է երկու ձայնավորի միջև յ ձայնադրի արտասանությունը, Օրինակ՝ [գնում էյի], [զնալու յնմ], [միյառեսակ], [միյանման], [էյակ], [պոյնմ]:

9. ԱՐՏԱՍԱՆՎԱԾՔԻ ՏՐՈՂՈՒՄԸ ԵՎ ՎԱՆԿԸ

§ 140. Խոսքը հնչյունական տեսակետից բաժանվում է դադարներով անջատված հատվածների, որոնցից յուրաքանչյուրը արտահայտում է բիչ թե շատ ավարտված միտք: Քերականորեն այդպիսի հատվածները կոչվում են նախադասություններ, իսկ հնչյունական տեսակետից՝ ֆրազեից կամ հնչադասություններ:

Հնչադասությունները իրենց հերթին բաժանվում են ավելի փոքր միավորների՝ հնչաշարայինների, որոնք արտահայտում են մեկ իմաստ, թեկուզ և բարդ. զրանք անջատվում են այլ հնչաշարայիններից ուժեղ շեշտով, տոնով կամ դադարով, օրինակ՝ էս մինն անա/տառ Բեգ ծառա,

Այս հնչադասության մեջ կարելի է անջատել երկու հնչաշարային, որոնք բաժանվում են միմյանցից և՛ տոնի փոփոխությամբ, և՛ փոքր դադարով:

Սակայն խոսքը տրոհվում է նաև ավելի փոքր միավորների, որոնք բնորոշվում են մեկ շեշտի առկայությամբ: Մրանք հնչաբանի են և կազմված են մեկ բառից ու նրա կցորդներից՝ նախահար և վերջահար: Օրինակ՝ Գյուղացի ձայնային տունը/կոնիվ էր բնկել: Այս հնչադասության մեջ կա երկու հնչաշարային և հինգ հնչաբառ, որոնցից երկուսում շեշտը վերջընթեր է՝ տանը և կոնիվ էր (ե-ը այստեղ վերջահար է և կազմում է կոնիվ բառի հետ մեկ հնչաբառ): Այսպիսով՝ հնչաբառերի սահմանները հաճախ չեն համընկնում բառերի սահմանների հետ, այլ բոս արտասանության և հարմարության նրանց վերջավորությունները միանում են հաջորդ բառերին: Հետևյալ հնչաշարայինում էս մինն(անա, Բեգինն) բառի երկար ե-ն լարվածության թուլացումով անջատվում է և կիսով անցնում հաջորդ բառին: Ուրեմն վերը բերված հնչաշարայինը բաժանվում է երկու հնչաբառի՝ էս մին և Բեգին: Մի ուրիշ օրինակ՝ երկուս(և) էս սիրում էին Անուշին:

Այս նախադասությունը բաժանվում է երկու հնչաշարայինի, որտեղ առաջինն արտահայտված է մեկ հնչաբառով՝ բաղկացած թվականից ու եղանակավորող բառից: Այստեղ նույնպես հնչաբառը խախտում է բառի սահմանը՝ երկուս(և) էս:

§ 141. Հայերենում արտասանվածքի տրոհման ժամանակ բաների սահմանների խախտումը շատ սովորական է և ենթարկվում է հետևյալ կանոններին:

1. Եթե նախորդ բառը վերջանում է բաղաձայնով, իսկ հաջորդը սկսվում է ձայնավորով, ապա հնչյունների վերաբաշխումը կատարվում է բոս վանկատման կանոնների, և վերջին բաղաձայնը հարում է հաջորդ բառի ձայնավորին: Օրինակ՝ Գայլը ամպ-օր կուզե, գողը՝ մուր գիշեր: (Այստեղ ամպ բառի պ-ն հարում է օր-ին); Առա, հայրենիք, ... օրանիս(ավի) էլ ինչ էս ուղում, ... ու տամ Բեգ եկիր: Անտոն անցավ Երազմեով²¹:

2. Վերջահար բառերի դեպքում (եմ, հա, է, էլ) այդպիսի վերաբաշխում կատարվում է նույնիսկ մեկ բաղաձայնի դեպքում, այսինքն հնչյունական տեսակետից նրանք դիտվում են որպես մեկ բառի մասեր: Օրինակ՝ գը-եո՞-մեն, ուտե՞-լիս-ուղում:

²¹ Անգղերենով միացած բաղաձայնները այս օրինակներում հարում են հաջորդ բառի ձայնավորին:

Սովորաբար Ե. մ ձայնորդները ափխի հաճախ են անջատվում բառերից և հարում հաջորդ բառին Օր.՝ էս մինն աճա...

Խոսելով հնչյունների ասհմանների խախտման մասին, պետք է նկատի ունենալ, որ այդ երևույթը տեղի է ունենում երկու բառերի այնպիսի արտասանության դեպքում, երբ նրանք չեն բաժանվում ոչ գաղարով, ոչ էլ հնչերանգով: Այստեղ կատարվում է ոչ թե հնչյունների սահմանադատում, այլ պարզապես նրանց ուժգնության թուլացում կամ ուժեղացում:

Բառի սահմանների խախտում տեղի չի ունենում՝ ա) երբ բառից հետո անցնում է շարունակի սահմանը, որն արտասանվում է գաղարով կամ հնչերանգի փոփոխումով: Եղբւր էիր երգում, ու Բո երգիր աղերն են տանել: ք) երբ հաջորդ բառը սկսվում է բազաձայնից՝ Օրինակ՝ Ուղարկում ես անհայտ/նետու... Իմ անունն էլ հիշվել/զարգացում:

§ 142. Արտասանության ամենափոքր միավորը վանկն է: Այդ բանում կարելի է համոզվել, եթե նկատի ունենանք, որ շատ հրեւյժուններ հնարավոր չէ առանց վանկարար ձայնավորի կամ ձայնորդի արտասանել. օրինակ՝ պ, կ, ա, ծ և այլ հպականները:

Առանձին կարող են արտասանվել այնպիսի հնչյուններ, որոնք բոտ իրենց ներքին հնչեղություն կարող են կազմել ինքնուրույն վանկեր (ժամանակակից հայերենում դրանք հիմնականում ձայնավորներն են): Մենք առանձին հնչյուններ կարողանում ենք սահմանազատել միայն այնքանով, որքանով գրանք կրկնվում են որդես տարբեր վանկերի թիւ թե շատ նման մասերը Օրինակ՝ կա, կու, կր, կի վանկերից կարող ենք անջատել կ հնչյունը, որը, սակայն, հնչյունական շղթայում ինքնուրույն գոյություն չունի, այլ կազմում է մի շարք վանկերի ընդհանուր մասը (հպումը որոշ անգամ է պայթյուն):

Վանկ է կոչվում հնչյունը կամ հնչյունների կապակցությունը, որն արտասանվում է օդի մեկ մղումով:

Հայերենում, հեղվորոպական մյուս լեզուների նման, ամենից ափխի տարածված է բաղաձայն-ձայնավոր (CV) վանկատիպը, այլ կերպ ասած, հայերենի վանկերը ձգտում են լինել բաց, այսինքն՝ վերջանալ ձայնավորով: Այս կանոնը ափխի ցայտուն է դրսևորվում վանկարածմանում և հնչյունական շղթայում հնչաբառերի առանձնացման դեպքում:

Վանկատումը լեզվի մեջ ունի նաև գործնական նշանակություն, որովհետև տողադարձը հիմնվում է նրա վրա: Բայց երբեմն տողադարձի կանոնները լինում են բարացած, իսկ իրական վանկատումը հակասում է նրանց:

§ 143. Հայերենի վանկատման կանոնները հետևյալներն են:

1. Երբ մի բաղաձայն գտնվում է երկու ձայնավորի միջև, այսպե անցնում է հաջորդ վանկին. ինչպես՝ Ա-պա-բան, նա-մա-նա-վանդ:

2. Եթե երկու բաղաձայն գտնվում են երկու ձայնավորների միջև, գրանցից առաջինը պատկանում է նախորդ վանկին, երկրորդը՝ հաջորդին: Օրինակ՝ ու-հը-լը-ներ, կա-նոն-ներ, ապ-տակ:

3. Երբ բաղաձայնների թիվը երկուսից ափխ է, մի բաղաձայն անցնում է հաջորդ վանկին, մյուսը գտնվում է նախորդ վանկում: Օրինակ՝ Աստ-ված, սեղ-ված, կանգ-եկ, հաւրց-մունք: Այս կանոններից շեղվում են, երբ բաղաձայնին հաջորդում է յ ձայնորդը՝ Գո-չյուն, րրե-դյուն, մի-սու-րյուն:

Ինչպես հայտնի է, հայերենում բառասկիզբը ունի իր հնչյունական որոշակի կառուցվածքը: Բացի մի քանի ափխ երկակի բաղաձայնական կապակցություններից այն չի կարող սկսվել երկու և ափխ բաղաձայններից. առաջին բաղաձայնից հետո արտասանվում է ր ձայնավորը՝ ստեղծելով գրադանավանկ: Գրադանավանկ են կոչվում այն վանկերը, որոնց վանկարար ր հնչյունը գրավոր չի արտահայտվում:

Օրինակ՝ տնկել, տրտունջ, բռնել, կտամբել, և այլն:

Գրադանավանկային ր հնչյունը գրվում է միայն տողադարձի ժամանակ, ընդ որում մի քանի գրադանավանկերի անկախության դեպքում այն գրվում է նախորդ տողի վերջին և հաջորդ տողի առաջին վանկերում: Օրինակ՝ սըր-տումս, սրտու-մրս, կըր-թություն, Մը-կըրթիչ, Մկըր-աիչ, բըղ-կրտել, բզկը-տնի և այլն:

Այստեղ պետք է հայտնի գրադանութունը խիստ սահմանազատել արտասանությունից: Ոմանք, մանավանդ օտարները, դեկավարվելով գրությունը, որտեղ շատ դեպքերում ր ձայնավորը չի արտահայտվում, կարծում են, թե հայերենը բաղաձայններով խիստ խոնդրված լեզու է նկատի ունենալով այնպիսի բառեր, ինչպիսիք են Մկրտիչ (սկզբնաբանական 4 բաղաձայնով), Բրքմեջալ (6 բղ), հմտուրեն (Յ), մոնչալ և բաղմաթիվ երկու և երեք բաղաձայնով

սկզբող բառերի, ինչպես՝ տկար, մտնել, շակել, բռնել, սփրթնել, գտնել, վնդդել, Տրդատ, Ղմբախտ, գտնել, կտրել, մտնել, և այլն:

§ 144. Այս բառերը հայերենում միշտ արտասանվում են գաղտնիաձևակալին ք-ով, որը սովորաբար արտասանվում է առաջին բաղաձայնից, իսկ 4 բաղաձայնի դեպքում՝ նաև երկրորդից կամ երրորդից հետո:

Պատմականորեն այս բոլոր բաղաձայնների զուգորդումները ստացաղել են մեծ մասամբ մի այլ ձայնավորի, հիմնականում ի-ի կամ ու-ի ֆուլգացումով ու չեղարացումով, ինչպես՝ ստել (ստա բառից), գտել (գտա), ստատարոփ (սփա), սրել (սոր):

Սակայն մյուս կողմից կան պզտիկ, սառցիկ, սկսել, սախպիկ և այլն, որտեղ շատ շատերի կողմից արտասանվում են առանց ք-ի: Այդպիսի արտասանությունը կարելի է սանել, այժմ կազմում է արևելահայերենի արտասանական նորման: Ուրեմն, նման բառերի երկակի արտասանության այն տեղեկացրեք, որի մասին խոսել է դեռևս Մխչյան, այժմ տեղի է տվել նոր արտասանության տարածմանը, հատկապես նոր սերնդի մոտ: Նման արտասանության ամբողջումանը նպատակ է նաև այն հանգամանքը, որ այդ բառերը ձայնավորներից հետո, ինչպես նշում է Մ. Աբրեղյանը, միշտ արտասանվել են առանց ձայնավորական հենարանի:

10. ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅՈՒ ՇԵՏՔ

§ 145. Ենչտի բնկալումը սերտորեն կապված է լսողական պապիրություն հետ, միաժամանակ այն ունի իր օրյնկտիվ ֆիզիկական շարժանիչները: Սովորաբար հնչյունական շղթայում կամ նրա մի հատվածում մի որևէ վանկ առանձնանում է մշտնջերից և բնկալում մարդկանց կողմից որպես շեշտակիր: Հետևաբար, շեշտար բառի մի որևէ վանկի ցայտուն զրուտումն է այդ բառի մյուս վանկերի համեմատությամբ: Այն պայմանավորված է հնչյունների ֆիզիկական հատկանիշներով՝ ինտենսիվությամբ (ուժգնություն), տեղություն, և համախափանությամբ (տոնայնությամբ): Նկատի ունենալով այս հատկանիշներից որևէ մեկի գերիշխումը՝ լեզվաբանության մեջ առանձնացնում են երեք տեսակի շեշտ՝ ուժգնության կամ դինամիկ, քանակական կամ տեսական և տոնիկական կամ երաժշտական շեշտ: Ուսումնասիրությունները

ցույց են տալիս, որ այս երեք տիպի շեշտերի առանձնացումը պայմանական է, քանի որ վերահիշյալ գործոնները երբեք ինքնուրույն գոյություն չունեն, այլ հանդես են գալիս իրար հետ զուգակցված:

§ 146. Հայերեն խոսքում, ինչպես ասվել է, սովորաբար առանձնանում են առանձին հատվածներ, որտեղ հիմնականում համընկնում են բառերի սահմանների հետ: Դրանք, այսպես կոչված, հնչաբառերն են՝ մեկ շեշտ ունեցող ամբողջական միավորները:

Նշաբառում կարող է ընդգրկվել ինչպես մեկ բառ, այնպես էլ մեկից ավելի բառային միավորները: Հայ լեզվաբաններից Մ. Աբրեղյանը և Հ. Աճառյանը շեշտի ուսումնասիրության ժամանակ, բոտ իմաստային արժեքների, առանձնացրել են բառերի տարբեր խմբեր: Նրանք զտում են, որ նյութական իմաստ ունեցող բառերը խոսքում կրում են ավելի ուժեղ շեշտ քան երկրորդական կամ ստորադաս բառերը: Այսպես, սովանկարտոր նախադասության մեջ, բոտ Մ. Աբրեղյանի, բայն է, որին ստորադասվում է գոյականը, որն էլ իր հերթին զերադաս է անձականի համեմատությամբ, օր, մեկնեալ շարժվեց:

Կարմիր մափոխ, անտառի պտուղ կապակցությունների մեջ կարմիր և անտառի բառերը ֆուլլ շեշտ ունեն, իսկ մափոխը ու պտուղը՝ ուժեղ:

Սակայն կան բառեր, որտեղ հարում են կամ նախորդ շեշտակիր բառին՝ զանազան վերջահար կամ հաջորդ շեշտակիր բառին՝ զանազան նախահար բառ: Գլխավոր բառի հետ միասին այս բառերը կազմում են արտասանական մեկ միավոր, մեկ շեշտ կրող կազմություններ: Սովորաբար վերջահար և նախահար բառերն են՝ էական բայը, որոշ կապիչ, զերտուններ, շաղկապներ և մակբայներ:

§ 147. Ենչտի արտահայտման մեջ մեծ դեր է խաղում նաև ձայնավորների որակը, հնչյունների քանակը վանկում և վանկի դիրքը:

Ըստ որակի ձայնավորները ունեն տարբեր արժեքներ: Այսպես, ամենահզոր ձայնավորը հայերենում ա-ն է, իսկ ամենաթույլը՝ ք-ն: Մնացած ձայնավորները բաշխվում են այս երկու սահմանային ձայնավորների միջև հետևյալ հարադասականությամբ՝ ա, օ, է,

ու, ի, բ: Ժամանակակից գրական հայերենում Ք ձայնավորով կազմված վանկը բացատրվումը մի քանի բնածայնական բառերի (չրբ՝ խկ, ֆրբ՝ խկ և այլն) շեշտակիր չէ, մինչդեռ բարբառներում, սակավաթիվ գեղարքում, հանդիպում է շեշտված ք ձայնավոր:

Շեշտված վանկի ձայնավորի վրա կարող է ազդել նաև տվյալ վանկը կազմող հնչյունների քանակը և որակը:

Խոսելով հայերենի բառային շեշտի մասին, Լյուտը է անտեսել նաև ուժգնությունը քայնումը բառումը բառ վանկերի գրաված դիրքի: Փորձերը ցույց են տալիս, որ հայերենում բառասկիզբ ուժեղ դիրք է և այդ դիրքում գտնվող վանկերը բառամիջի և բառավերջի վանկերի համեմատությամը ունեն ուժգնության ալիքի բարձր արժեքներ:

Հայերենի բառային շեշտը ունի ուժային բնույթ: Թեև շեշտված վանկը իր ուժգնությամը ամենաուժեղ չէ, սակայն իրեն նախորդող վանկի համեմատությամը այն գրեթե միշտ ունի ալիքի մեծ ուժգնություն²²:

Շեշտի փորձառական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենի շեշտակիր վանկի տեղորոշումը ամենամեծն է բառի մնացած վանկերի համեմատությամը:

Այսպիսով հայերենի շեշտը թեև ուժային բնույթի է, սակայն նրա դրսևորման համար մեծ նշանակություն ունի նաև տեղորոշան գործոնը: Խոսելով շեշտի մասին՝ սովորաբար նկատի են ունենում շեշտի դիրքը բառի սահմանում, շեշտի հետ կապված հնչյունափոխությունը:

§ 148. Լեզուներում շեշտը աարբերվում է ոչ միայն բառ բնույթի, այլև բառ տեղի: Այս տեսակետից լեզուները ունեն զգալի տարբերություններ: Այսպես օրինակ՝ Նիդերենում շեշտը միշտ ընկնում է բառի առաջին վանկի վրա, ֆրանսերենում՝ վերջին վանկի, իսկ ռուսերենում այն շարժական է և տարբեր բառերում ընկնում է տարբեր վանկերի վրա ու շատ հաճախ կապվում է քրականական և իմաստային տարբեր բարձունքների հետ: Հայերենում շեշտը կայուն վերջնավանկային է՝ այն միշտ տեղափոխ-

վում է բառի վերջին վանկի վրա, երբ բառը ստանում է նոր մասնիկներ կամ վերջավորություններ:

Մա յ վերաբերում այն ղեպերին, երբ բառը ստանում է որոշիչ հոդ (ը-ն), որը հայերենում շեշտակիր չէ:

Այս առումով հայերենի շեշտը ստանում է սահմանագատիչ նշանակություն, որի շնորհիվ հնչյունական շղթայում առանձնանեն նաև բառային միավորները:

Կան նաև մի խումը բառեր, որոնց շեշտը վերջնավանկային չէ, օրինակ՝ գրե՛թե, մի՛թե, մա՛նավաճը, իճա՛րկե, ո՛րե՛կ:

Շեշտը կարող է առհասարակ շքննել իմաստային բառերի (նաև բայերի) վրա, եթե նրանց նախորդում է ժխտական կամ արգելական մասնիկը, օրինակ՝ մի՛ գնա, մի՛ կեռ, չե՛մ՝ գնա:

§ 149. Գրական հայերենում որոշ ցուցական և ստացական գերատմաներ ներքին արտասանվում են առաջնային շեշտով կամ երրևին նաև երկու շեշտով՝ առաջին և երկրորդ վանկերում: Սակայն այս բառերը այժմ ենթարկվում են շեշտի միօրինականացմանը՝ ալիքի հաճախ արտասանվում են վերջնավանկային շեշտով՝ Գրանք՝ նե՛՛ ալսպես, այլպես, այնպես և այլն:

Մանր.— Հ. Աճառյանը և Մ. Աբեղյանը նշում են, որ այսպես, այդպես, այնպես, այսպիսի, այնպիսի, այդպիսի, որ՛հան, որ՛շտի, իճ՛հան և նման բառերում շեշտը ընկնում է առաջին վանկի վրա: Մինչդեռ այժմ օրինաչափական է այս բառերի վերջնավանկային շեշտադրությունը:

Հայերենում կան բառեր, որոնք նախադասության մեջ սովորաբար շեշտ չեն ստանում: Մրանց թվին են պատկանում. էական բայը իր բոլոր խոնարհված ձևերով (բացի միտականից), «մի» բառը, երբ այն գործածվում է սեռորոշ դերանվան իմաստով, մի շարք կապիչ ու շղթայագրեր, ինչպես՝ բառ, առ, ընդ, մտա, հետ, և, ու, քե, որ և այլն:

Բացի հիմնական շեշտից հայերենում կա նաև երկրորդական շեշտ, որը հանդես է գալիս հիմնականում բարդ և հարադրյալ բառերում: Օրինակ՝ միտ՛ անել, սիրա՛ տալ, երես՛ տալ, շուր՛ գալ, աշխարհաճանաչ՛, գիտատեխնիկական, գյուղատնտեսական, գիտամեթոդաական, ամենամարգարիական և այլն:

Հ. Աճառյանը և Մ. Աբեղյանը նշել են բարդ բառերում երկրորդական շեշտի անկայունությունը: Հիրավի, հինգ և ալիքի վանկեր ու-

²² Շեշտի վերաբերյալ հատուկ փորձառական ուսումնասիրության է կատարել ՀԱՍ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտահրատակի Բ. Թաթախյանը իր «Հայերենի շեշտի բնույթը ուսումնասիրություն»:

յեցող բառերում կարելի է նկատել երկրորդական շեշտի դրսևորումներ: Երկրորդական շեշտը կախված է բարդության բազադրիչների խմբնորոշության աստիճանից և իմաստից:

Ձայնարանորեն այն արտահայտվում է վանկի ուժգնությամբ, իսկ սեռությունը և տոնայնությունը ունեն լրացական արժեք: Ըստ տեղի հայերեն բառային երկրորդական շեշտը ձգտում է պահպանել որոշակի ռիթմահնչերանդային պատկեր, երբ շեշտված վանկերին հաջորդում են երկու անշեշտ վանկեր: Օրինակ՝ էլեկտրահաղորդականությունն բառում երկրորդական շեշտված վանկերն են արան և դան:

Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

§ 150. Հնչյունափոխությունը լեզվի զարգացման ներքին օրինաչափություններից մեկն է, որ միշտ ուղեկցում է լեզվին վերջինիս կենդանի գոյության ողջ ընթացքում: Մ'առձեռն կամ բանավոր հաղորդակցման գործադրությունից դուրս եկած լեզուների մեջ հնչյունափոխությունը զարգարում է գործելուց: Կենդանի լեզվի հնչյունափոխությունները զանազանվում են որոշակի բնույթով: Մեկը այն է, որ լեզվում մի հնչույթ վերածվում է իրոր մի այլ հնչույթի, երբ այս վերջինս մինչև իսկ տվյալ լեզվում գոյություն չի ունեցել: Օրինակ՝ հայերեն նախ բառի ւ-ն փոխվել է ֆ-ի, և այսօր այդ բառը հնչում ենք նախք⁶: Կամ՝ գրաբարի ալ երկբարբառը վերածվել է օ-ի, որպիսի հնչույթ մեր լեզվում գոյություն չի ունեցել: այս օ-ն ճշտությամբ չէր համապատասխանում ա-ին: Բառասկզբում մեր յ միջնալեզվային ձայնորդը փոխվել է խուլ կոկորդային հ-ի՝ այսինքն մի որոշակի դիրքում այդ յ-ն դարձել է և և խճը տվյալ դիրքում դադարել է գոյություն ունենալուց:

Հնչյունափոխության քննազանդում է պատկանում և այն երեււթյութը, երբ բառի մեջ նոր հնչյուն է առաջանում: Այսպես՝ յաղ բառի յ ձայնորդը առաջացել է իր բառի սկզբում: Բառասկզբի և ձայնավորից առաջ յ է առաջացել: Եղբայր բառը, որ սկզբնապես հնչել է Եղբայր, այժմ հնչում ենք յԵղբայր: Սրան հակադիր՝ հաճախ բառի օրն է հնչյուն կարող է վերանայ: Օրինակ՝ աղայ, արճայ, երեխայ և այ-ով վերջացող այլ բառերի վերջի յ-ն անվերադարձ վերացել է:

§ 151. Սրանից զանազանվում է հնչյունափոխական այն երեււթյութը, երբ միևնույն ձևույթի մեջ որևէ հնչյուն հնչվում է զանա-

⁶ Այդ բառի նախք գոյությունը հաստատված է XII—XIII դարերի ձեռագրերում:

զան կերպու Այս զեպրում նկատի չենք առնում հնչյունի ծագումը՝ նրա սկզբնափեմակը. հասանք կարող ենք մինչև իսկ շիմանալ, թե այն իր ծագումով ինչ է. օրինակ՝ առած-առած միևնույն ձևությամբ զուգաձևերն են, սակայն վերջում ունեն տարբեր հնչյուններ. մյուս: Գովաբ է ասել, թե արանցից որն է հիմնական, և հիմն գիտենք էլ, տվյալ զեպրում զա հաշվի չենք առնում, այլ դիտում ենք իրրև միևնույն ձևությամբ զուգաձևությունը. այդպիսին է, օրինակ, բույր-բուրեղի, ծես-ծխակապար, անձանց-անձամբ, խումբ-խմբակա՞ն բառերի հնչյունական կազմի տարբերությունը, որ ունենք միևնույն ձևությամբ զուգաձևությունները՝ բույր-բուր, ծես-ծխ, ան-ամ, խումբ-խմբ: Այս զուգաձևությունները առաջանում են ուլ-ու, ե-ի, ն-մ, ու-ր հնչյունափոխությամբ, որ այսօրվա վիճակով կարող ենք ասել, թե այս դույզ հնչյուններից որն է հիմնականը, բայց այսպիսի հնչյունափոխության մեջ կարևորը այդ չէ, այլ այն, որ միևնույն ձևությամբ մեջ սրբաշակի պայմաններում միաժամանակ հասնո՞ւ են զայն տարբեր հնչյուններ, որոնք միմյանց նկատմամբ լծորդ են և ոչ թե մեկը առաջանում է մյուսից: Ավելի պարզ ասած՝ միաժամանակ նույն ձևությամբ մեջ շեշտի տակ ունենք ուլ, սասնց շեշտի՝ ալ, ց-ից առաջ ունենք ն, իսկ բ-ից առաջ՝ մ (անձանց-անձամբ), շեշտի տակ ունենք ու, անշեշտ՝ ր (խումբ-խմբ) և այլն: Մինչև իսկ զուգաձևերից մեկը կարող է ունենալ զրո, մյուսը՝ այս կամ այն հնչյունը. օրինակ՝ մարդիկ բառի -իկ ձևությամբ մեջ շեշտի տակ ունենք ի ձայնավորը, իսկ մարդկային բառի մեջ առանց շեշտի այդ ի-ն բոլորովին չկա:

§ 152. Հնչյունափոխական այս բուրբ երևույթները առաջանում են նրկու գործունի շնորհիվ՝ հնչյունի գրաված դիրքի և հնչյունաշարքում հնչյունների միմյանց վրա թողած փոխազդեցություն: Մակարն օգետք է ասել, որ այս երկու գործոնը միշտ չէ, որ իրարից անկախ են գործում. հաճախ սրանք խաչաձևում են իրար: Մաքուր դիրքային հնչյունափոխություն է շեշտի ազդեցությամբ կատարված հնչյունափոխությունը. օրինակ՝ նուկ բառի սեռականն է ձրկան, որ շեշտի տակ աւնենք ալ, անշեշտ՝ ր: Իսկ գաղտնի բառի դ ձայնը հնչում է խուլ թափ ազդեցությամբ, որ դ-ի թ հնչվելը և՛ դիրքային է, և՛ փոխազդեցական: Ուրեմն ձայնը դ-ն խուլ ա-ից առաջ (դիրքային վիճակ) հնչում է խուլ՝ ա-ի ազդեցությամբ (փոխազդեցական վիճակ): Փոխազդեցականը նույնպես

կարող է անխառն լինել. բովիկ բառը գարձել է բորիկ, որ այժմ հնչվում է բապիկ. կ-ր-պ փոփոխությունը միայն փոխազդեցական է և դիրքի հետ ոչ մի կապ չունի:

§ 153. Վերջիվերջո որքան էլ զուգաձևությունների մեջ տարբեր հնչյունները հավասար համարենք՝ նուկ-նրկ, ծագում է առաջնության հարցը, որ տվյալ զեպրում պատմական է և ստուգաբանական մակարդակով է որոշելի:

Մերսուր Մաշտոցը V դարում մտք բարդ դ-ով է գրել. կթն նա գրի ասենք XII դարում կամ ավելի ուշ, անպայման կդրիք մաքր զուց և մաքր, որովհետև վերջին գարեբում բարդ ազդյան էր հնչվում Իսկ մենք այս զեպրում չենք ասի, թե դ-ն փոխվել է ր-ի: Այդպիսի հնչյունափոխությունը կարելի կլինի պարզել միայն համեմատական ու պատմական հնչյունաբանությամբ, ինչպես որ մաշր բառի չ ձայնորդը համարում ենք առաջացած ա-ից, որովհետև հայերենի ազգակից լեզուները այդ նույն չ-ի տեղը ունեն ւ (աՄԵՆ): Բայց համեմատական հնչյունաբանություն համար այսպիսի համեմատությունը սրժոք չունի: Արժոք չէր ունենա մեր գրական լեզվի համար նաև բով և բոր զուգաձևերի կ և ր հնչյունների առաջնության որոշումը, կթն այսօր չգործածվին բովոսն, բովոսիկ բառերը: Այս երկու զեպրում էլ առաջնությունը վճռվում է համեմատական ու պատմական հնչյունաբանությամբ:

Իսկ ինչ վերաբերում է խումբ-խմբ, գնս-գնս (դիսակ), կեզ-կիզ (կեզել) և նման զուգաձևությունների ձայնափոխների առաջնությանը, ապա այստեղ էլ ոչ մի միջինականորեն առաջնությունը տակն ենք արմատական կամ սուղիղ ձևերի ձայնավորներին, որ կարող է նույնիսկ պատմականորեն ճիշտ չլինել: Դուռն բառի սեռականը գրաբարում լինում է դրան, այստեղ ունենք դուս և դրը զուգաձևերը: Ըստ պայմանի առաջնությունը պետք է տանք ու-ին և ասենք, որ ո>ր. սակայն պատմականորեն դա բոլորովին սխալ է. ր-ն է, որ ն-ի մոտ փոխվել է ր-ի (համեմատաբար դրացի, դրկից, դարս): Այնպես որ, երբ ասում ենք այսինչ հնչյունը փոխվել է այսինչի, զա հաճախ պայմանական է և պետք է ընդունել իրրև զուտ արտահայտման ձև:

§ 154. Դիրքային ու փոխազդեցական հնչյունափոխությունից բացի կա նաև պատմական հնչյունափոխություն, որը ըստ երևույ-

Քին եղել է զիրքային կամ փոխազդեցական, սակայն լեզվի այսօրվա վիճակում զիրքային ու փոխազդեցական այն գործոնները, որոնք մի ժամանակ գործել են ու այն ժամանակի համար հասկանալի են եղել, այժմյան վիճակում չեն գործում, ու մինչև իսկ զժամար է բացատրել: օրինակ՝ ձայնավորներից հետո հայերենի ր, ց, դ, ձ, շ ձայնեղները մասամբ վերածվել են շինել խուլների, օձ-օց, օգնել-օհնել, իրել-իփրի, աք-աշ, կրքանամ-կփրքանամ և այլն Այստեղ մեր այսօրվա բնթունումով չկա զիրքային որևէ թույլություն: Գ-ն օգնել բառի մեջ ու ձայնավորի և ն ձայնորդի արանքում սիտք է որ ձայնեղությունը շիրքային, բայց այդպես չէ, և փոփոխության պատճառը զժամար է բացատրել: Այդպես է նաև ր ձայնորդից հետո երկի-երրի, ուր-ուրփ, կարգալ-կարթալ փոփոխությունը: Պատմականորեն այսպիսի հնչյունափոխությունը զիրքային է, իսկ այսօրվա անասակյունով զիրքային գործողը զերլուծի, որովհետև այժմ հակառակ գործընթաց է կատարվում: աբեղա, արբանյակ, դագաղ, աղ և այսպիսի շատ բառեր այժմ իրենց ր, ց, դ ձայնեղների ձայնեղությունը վերափոխել են: այլևս չեն հնչում ամիզա, արփանյակ, արք, դախաղ և այլն: Պատմական հնչյունափոխության հետևանքն է միայն առկա, իսկ փոփոխության առաջ բերող գործոնները մթազեղ կամ մեռել են: Շեշտի հետ կապված ձայնավորների զիրքային փոփոխությունները ևս մասամբ արդեն պատմական են դարձել: Պետք է նկատարել, որ զբարբառում շեշտը ափելի ուժեղ է եղել, քան այժմյան դրական լեզվում: այնտեղ ի, ու, է ձայնավորները, քիչ բացառություններով, շեշտազրկվելով փոփոխվել են ոչ միայն հայերեն բառերում, այլև օտար փոխառություններում, իսկ այժմ այդ օրինակափոխությունը կիսով չափ պահպանվել է ափանջարբ. զնա բառից ունենք գիսավոր բառը, որ գալիս է հնից, այսինքն փոփոխությունը կատարվել է մնում, բայց զնա բառը այժմ հոլովում ենք զնսի և ոչ թե զնսի, որ հին լեզվում պարտադիր էր: Քիմ բառը զբարբարի զիրքային հնչյունափոխության համոձայն պետք է ունենար րփի (Քրմի) սեռականը, իսկ նոր դրականում այդ բառի սեռականն է րփի: Այս նշանակում է, որ զբարբարի զիրքային հնչյունափոխությունը այժմ մեծ մասամբ դարձել է պատմական:

Գիրքային հնչյունափոխությունը մեր լեզվում զբով արտահայտվում է, իսկ պատմականը հիմնականում մնում է անարտա-

հայտնի: օրինակ՝ սեր-սիրա (սեր-սիրոյ), իսկ որք, որ պատմական հնչյունափոխությամբ դարձել է որփ, զբով չենք արտահայտում՝ հետևելով ավանդական ուղղագրությանը:

Գ Ի Բ Բ Ա Յ Ի Ն Ը Ն Զ Յ Ո Ւ Ն Ա Վ Ո Ւ Ն Ո Ւ Փ Յ Ո Ւ Ն

Ա. Զ Ա Ն Ա Վ Ո Ւ Ն Ե Ր Ը Ն Զ Ո Ւ Ն Ա Վ Ո Ւ Ն Ո Ւ Փ Յ Ո Ւ Ն

§ 155. Զայնավորների հնչյունափոխությունը կապված է շեշտի հետ: Շեշտը կորցնելով ձայնավորը թուլանում, փոխվում է այլ հնչյունի, կամ իսպառ վերանում է ժամանակակից գրական հայերենը այս առումով բավականաչափ անկախ փիճակ ներկայացնում: Շեշտի հետևանքով կատարվող փոփոխությունները մեր նոր գրական լեզվի համար զործող օրինակափոխություն չեն, դա հատուկ է եղել զբարբարին, մեր հին խոսվածքներին ու բարբառներին, որոնցից նոր դրական լեզուն ոչ միայն փոփոխված ձևեր է ժառանգել, այլև հոլովման, հոգնակիի կազմության, բառակազմության պատճառի կազապարներ է վերցրել, որոնք հնչյունափոխական այլևս միտումներով մշակված ձևեր են: Սեր բառի սիրա ձևը ոչ թե նոր դրական լեզվի օրինակափոխության հետևանք է, այլ պատճառի ժառանգված ձև: Եթե նոր գրական լեզուն չվերցնի սիրա ձևը, ապա իր օրինակափոխար կունենար սերի, ուր ոչ մի հնչյունափոխական երևույթ գոյություն չունի: Փաստորեն այստեղ խոսվելու է փոխառված հնչյունափոխությունների մասին, որոնք գալիս են ոչ միայն չրաբարից, այլև բարբառներից:

§ 156. Գրաբարում է, ի, ու ձայնավորները շեշտից զրկվելով փոփոխում էին, իսկ ա, ե, ո ձայնավորները մնում էին անփոփոխ: բայց այս վերջիններն էլ անվթար չէին խոսվածքներում: Այժմ զբարբարի է-ն մենք բառավորում առաջարձել ենք ե-ով, և փոփոխվող ու շփոխվող է, ե հնչյունների գրությունը նույնացել է: չենք կարող ասել, թե ե-ն հնչյունափոխում է, քանի որ այն գե-բացահայցված մնում է անփոփոխ: նույնը վերաբերում է մյուս ձայնավորներին: զբարբարից վերցրել ենք փոփոխված կամ շփոփոխված ձևեր, իսկ բարբառներից ասել ենք զբարբարի փոփոխման ու շփոփոխման միտումներին հակադիր՝ և՛ փոփոխված, և՛ շփոփոխված ձևեր, որից դրական լեզվում առաջացել է հնչյունա-

փոխական մի բարդ վիճակ, իսկ եթե սրան ավելացնենք նաև այն, որ բառակազմության, հոգման և հոգնակիի կազմության ժամանակ հնչյունափոխական այլևայլ միտումներ են հանդես գալիս, ապա պարզ կդառնա, թե որքան ղօժարություններ է հաղթահարել նոր դրական լիզուն այդ ամեն տարամիտումները մասամբ համակարգության վերածելու ճանապարհին:

ա) է ձայնավորի հնչյունափոխությունը

§ 157. Բառակազմում է-ով բիշ բաներ ունենք. է, էզ, էշ, էջ: Գրանցից առաջինը բնավ չի հնչյունափոխվում. օրինակ՝ էտրյուն, էական և այլն: էզ-ը և էշ-ը հորվման և հոգնակիի կազմության ժամանակ մնում են անփոփոխ. էզ- էզի-էզեր, էշ-էշի, էջեր: էզ-ը բառակազմության մեջ մտնում է փոփոխված ձևով. իգալան, իգաբար և այլն: նույնը վերաբերում է էշ բառին. էշի (այսօր է նաև իշի), էշեր, բայց՝ իշաբար (նաև էշաբար), իշածյամ, իշատեր (նաև էշատեր), իջնել, բայց՝ էջմիծիմ, էշկոսպ:

§ 158. Բառավերջի ե-ն (հին է) բնավ չի հնչյունափոխվում. օրինակ՝ Մարգարե-նի, -եներ, -եաբար. բազե-եակիր, ափսե-եի, -եներ և այլն:

Մեծ մասամբ հնչյունափոխվում է փոսկ վանկի ե-ն (հին է), սակայն միայն բառակազմության ժամանակ: Հորվման ու հոգնակիի կազմության ընթացքում այն մնում է անփոփոխ. օրինակ՝ վրեժ-վրեժի, հրավեր-հրավերի, վրեժներ, հրավերներ: Բացառություն են սեր-տիրոջ, սեր-սիրտ, մեջ-միջի (մեջի). սրանց հոգնակին մնում է անփոփոխ. տեր-տերեր, սեր-սերեր, մեջեմես:

Բառակազմության ժամանակ փոփոխվում են հետևյալ արմատներն ու բաները՝ գետ, դետ, մետ (միտում), վեր (վերակապ), հրավեր, սեզ, դեզ, կեզ, մեզ, վեժ (վիճել), անեժ (անիժել), վեճ, դեմ, շեճ, գեճ (գիճել, գինյազորժ), ապաբեճ (ապաբիճել), եամ-դեպ, վեպ, ստեպ (ստիպել), վրեպ (վրիպակ), դեպ (դիպել), շեք (շիքել), մեք (միքակ) համդես, կես, ապավեն, փոխարեն, օրեն, սեզ, հավետ, վեմ (վիմաքանդակ), պետ (պիտանի), տեր (տիրել, տիրապան):

Վերբերյալ բաներն ու արմատները մնում են անփոփոխ՝ ա) երբ բառակազմության մեջ են մտնում ք վերջածանցով. օրինակ՝

անեժմաշոր, անեժմակոխ, պետական, անպետություն, մեջբակտոր, մեջբացավ և այլն. բ) երբ անհոգնակապ են բարդվում. օրինակ՝ օրենադիր, օրենագետ, մեքսեղ, կեսօր, կեսբերան, կեսմարդ և այլն. գ) երբ բարդությունը կրկնավոր է. օրինակ՝ դժմադուլ, մեքընմեք, ստեպստեպ և այլն. դ) Տեր բառը՝ տերություն, անտունական, անտերուկ, անտերություն, տերունի բաներում ունենք նաև անօրենություն, անպետություն, անզետություն:

բ) Ի ձայնավորի հնչյունափոխությունը

§ 159. Ենչափոր ի ձայնավորը երեք դիրքով է հանդես գալիս՝ բառակազմում, բառավերջում և բառամիջում: Բառակազմում շեշտավոր ի ունենք հետևյալ բաներում՝ իժ, ինք, ինքր, իսկ, իր, իլ, իր, իզձ, ինձ, ինչ, ինչ (դերանուն), իխ, իմ, ինձ (դերանուն): Արանցից միայն բառակազմության ժամանակ փոխվում են ինձ-ը (կենդանին, ավելի լավ է որևի ինձ), իզձ-ը և ինչ-ը՝ սահմանափակ կերպով. օրինակ՝ ինձ-ընձե՛նավար, ընձուտ (ընձու հնացած է), ընձուտում, իզձ-ըզձական, ըզձուլ, ըզձու՛նք, ինչ-ընչավետ, ընչածարավ, ընչաբազ, ընչեղ (հարուստ): Մնացածները ոչ մի փոփոխություն չեն կրում, եթե նկատի չունենանք ժողովրդական ինչ-ընչը ձևը:

Բառավերջում միավանկ բաների ի-ն մնում է անփոփոխ. միավար, քիակ, ձիավոր, լիանալ, դիակա՛մ, ձիու, ձիեր, քիեր և այլն:

Ի-ով վերջացող երկվանկ և բազմավանկ բաների ի-ն հոգնակի ներում չի հնչյունափոխվում. օրինակ՝ փամբներ, գարիներ, բազումիներ, քչնամիներ և այլն: Այս բաները հորվվում են ու և մասամբ ի հորվիչով: Ու հորվիչով հորվելիս եզակիում ի-ն բնկնում է. օրինակ՝ բազումու, բազումով, փամու, փամով, փամուց: Ի-ով հորվելիս ի-ն մնում է՝ Բա՛նֆիք Առչի, քարիք: Գործական և ներգոյական հորվմանում ի-ն մասամբ մնում է, բայց միտումը անկունն է. փոշիով-փոշով, ուղիով, սուլում, ուղով, ուղում, կղզով-կղզիում, ուղիով-ուղիով և այլն: Ի-ն բնկնում է նաև տառ-վա, կաշվի ձևում: Ի-ով վերջացող երկվանկ և բազմավանկ բաներ բառակազմության մեջ կրում են մի քանի տեսակ փոփոխություններ: Բայեր կազմելիս ի-ն չի փոխվում, օրինակ՝ շոգի-շոգի-

անայ, փռչի-փռչիանայ, բարի-բարիանայ, կղզի-կղզիանայ, եղի-
նիլիանայ և այլն: Բացառություն են կազմում զլորշանայ և հրա-
նայ բայերը, որոնցից վերջինը պահպանվել է նոր իմաստազորու-
մով՝ ի սարբերություն հիլիանայի:

Ի-ն սղվում է հետևյալ դեպքերում.

ա) ո (ո) ձայնավորից առջև Բեռի-Բեռնեմ (բայց՝ բերենեք),
փռչի-փռչոտ, զինի-զինով-զինատ, բարի-բարոտակ, բարոտություն:

բ) Մի քանի ժողովրդական կազմությունների մեջ. օրինակ՝
խամի-խամար (բամանար), խնամի-խնամություն (զրականը՝
խնամություն), խնամանայ (զրականը՝ խնամիանայ, խնամիա-
բար), Բենի-Բենակայ, Բեռի-Բեռակին, բարի-բարություն, անորի-
անորություն, խելացի-խելացություն, բորենի-բորենություն և
այլն:

գ) Առ ածանցով կազմված բառերում, օրինակ՝ կեչի-կեչուտ,
բեղի-բեղուտ, մորի-մորուտ, կաղնի-կաղնուտ և այլն:

դ) Բազմաթիվ այնպիսի բառերում, որտեղ այդ ի-ն մտածվել
է իբրև ածանց. կենդանի-կենդանական-կենդանություն, թերի-
թերություն-թերամիտ, բեմվարծ, խնցի - խնցագործ, խնց-
գնտին (հնից ունենք նաև խնցեգործ, խնցեմորթ), կատաղի-
կատաղալից-կատաղաբար - կատաղություն, քչնամի-քչնամանե-
քչնամություն, նախնի-նախնական, զազունի-զազունապահ-զազա-
նամիտ-զազունագրել, նայենի-նայենական-նայենանուս-նայեն-
նազավ, վրացի-վրացախոս-վրացազեռ, արժենի-արժանեանավատ,
արժամար, մորբի-մորբապաշտ-մորբագործ, վայրենի-վայրենա-
կան-վայրենամիտ, պիտանի-անպիտանություն և այլն:

Հին կազմությունների մեջ առաջին բաղադրիչի ի-ն հաջորդ
ա-ի հետ միանալով տալիս էր նա > ն (այժմ յա > ն). օրինակ՝ Լու-
զի+ական > Լուզական, բարի-բարեկամ, ոսկի-ոսկեզօծ, տաբի-
տաբեկան և այլն: Մրանց նմանությունը կազմել ենք շողի-շողե-
մար-շողեզեաց, ուղի-ուղեգիր-ուղեկիչ, օղի-օղետուն - օղեմուկ և
այլն: Հին կազմությունների մեջ կան նաև այնպիսի բառեր, որտեղ
ի-ն մնացել է անփոփոխ և ա-ի հետ տվել է իա. օրինակ՝ արխա-
բար, արխանայ, ոսկիափայլ, անդրիագործ, ոսկիաստեղծ, բա-
րիաշատ, բարիանունություն և այլն, որոնց նմանությունը կ
ենք զրական լեզվի ոգուն միանգամայն հարազատ կազմվել են
ֆաղաֆաղական, ֆանիազատիկ, կղզիարեակ, սպիացում, սպիա-

վոր, ամուրիություն, հեղիություն, վաղեմիություն (նաև՝ վաղեմու-
թյուն), արիական, արիիացեցուլ և այլն:

§ 160. Բառավերջի ի-ն ակ վերջամասնիկին հատորակիս՝
փոխվում է յ-ի. որդի-որդակ, հոգի-հոգյակ, աղավիհ-աղավիշակ,
պատանի-պատանյակ, կղզի-կղզյակ և այլն:

Միև կողմից փակ՝ ի-ով միավանկ բառերը հոգնակի ձևերում
ի-ն փոխում են ք-ի. օրինակ՝ բիր-բրեր, լինդ-լնդեր, միգ-մրգեր
և այլն: Չեն հնչյունափոխվում բիլ, բիրտ, գիպս, դիր (դիրքեր և
ու՛՛ դրքեր, որ ժողովրդական է), դիրտ, բիմ, լիցք, լիք, խիծ, խիղճ,
ծիր, կիրե, կինե, հինգ, հիմք, ձիք, հիշ, շիր, հիդը, վիր, հիգ,
վին, ախպ, զին, ախմ, ցինկ, Բիմք, Բիստ:

Կան մի քանի բառեր, որոնք երկու ձևով են զործածվում.
առաջնությունը պետք է առ շփոխված ձևին. օրինակ՝ բիեանե-
րենու, զինդեր-զնդեր, զիններ-զններ, զիսանե-զսանե, ծիլեր-ծիլե,
ծիրանե-ծրանե, հինգեր-հեգեր, հիտեր-հետեր, հիվեր-հվեր, հի-
մեր-հմեր, շիլեր-շիլե, պինչեր-պնչեր, ափկեր-ափեր, փվեր-փվեր,
շիվեր-շիվեր, շիրե-շրե: Կին բառի հոգնակին լինում է կանայք,
կանացի:

Իր կանոն հիշյալ միավանկ բառերը հոլովվելիս հնչյունա-
փոխվում են. օրինակ՝ գծի, զեի, խցի, մտի և այլն:

Չեն հնչյունափոխվում նրանք, որոնք հոգնակիի կազմության
մեջ մնում են անփոփոխ. լիցքի, կինեի, հիմքի, հիգի և այլն:

Այս միավանկ բառերը բառակազմության մեջ իբրև առաջին
բաղադրիչ մտնում են հնչյունափոխված. օրինակ՝ մրգավետ,
տաղաբան, խնցալից, ծրագրով, լնակ, զնել, խնդալ, ծրա (ծիր-
ից), ծրագիր, ծրուկ, ճեկամամ, նշել և այլն: Այն արմատները
և բառերը, որոնք հոգնակի չունեն և չեն հոլովվում, բառակազ-
մության մեջ հնչյունափոխվում են. օրինակ՝ խիա-խտացում,
ծիվ-ծվալ, լիլ-լվել, լիս-լսափող, պիրի-պրկել և այլն:

Բացառություն են կազմում մի քանի անհոդակապ և կրկնավոր
բարդություններ. օրինակ՝ ցիրուցան, զրկապ (բայց՝ զրաց),
սիրամաշուկ, ծիլ-ծաղիկ, հինումիե, հիստուլաց և այլն:

§ 161. Մի քանի բառեր չեն հնչյունափոխվում. նիրհել, հիմ-
նական, հիմնավոր, հիմնադիր, մինչև, մինչև: Մասամբ չեն հնչ-
յունափոխվում այն միավանկ բառերը, որոնք բարդության մեջ
մտնում են Բ ածանցով. դիրբային, դիրբավերել (բայց՝ զբրային,

գրություն), լիցավորվել, լիցալին (բայց կրթող), ձիբառու, ձիբավար: Չեն հնչյունափոխվում նոր փոխառությունները, օրինակ՝ ցինկ, բիմ, միֆ, ալիֆ, գիպս և այլն:

Այն արմատները, որոնցով շխան բարդ բառեր, այժմ բարդ բառ կազմելիս պետք է վերցնել փոխված հիմքով, օրինակ՝ Բիսավոր, Բիվալին, վիբալին, կիրճու, վիճալին և այլն:

Նրկվանկ և բազմալանկ բառերի փակ վանկի շեշտավոր ի-ն հոգնակի կազմելիս մնում է անհնչյունափոխ. օրինակ՝ կալիճենք, դանիճենք, սպանակիճենք և այլն: Բացառություն է կազմում երկնք բառը:

Այն միավանկ բառերը, որոնք ի ունեն և բարդության վերջին բաղադրիչն են, հոգնակին կազմում են իրենց կանոնին համաձայն գլխագրեր, կեղտորձեր, հոսալուր և այլն:

Իսկ երբ այս կազմությունների վերջին բաղադրիչը իմաստափոխվում է, հոգնակին կազմվում է ներ-ով, և հնչյունափոխություն չի լինում. բանկազիճենք (ապրանքներ, մարդիկ), խմբագիրներ և այլն:

Շեշտավոր ի ունեցող երկվանկ ու բազմավանկ այն բառերը, որոնք վերջավորվում են իֆ, իշֆ, իկ, իյ, իզ, իթ, իդ, իեֆ, ային, իշ, իս, ի-ով հոլովվելիս չեն հնչյունափոխվում. Բազնիֆ, կարծիքի, նախատիքի, մասնիկի, խառնիկի, սանիկի, իլիկի, Բզամիդի, սամիրի, խճիրի, կարգի, երգի, սպերի, տեսիլի, տավրդի, տուժիղի, ջտավիղի, երկնայինի, մարդկայինի, Բրիչի, բելի, Գզիսի, փանդիսի և այլն: Այս բառերի հնչյունափոխված ձևերը տեղի են տալիս չհնչյունափոխվածներին: Հնչյունափոխվում են ին, իշ, ին, իմ, իս վերջացող բառերը, օրինակ՝ Եանի (խորթ չէ նաև հասիճի) մանեի, դանեի, աղախեի, մտերմի, հավատարմի, բաժնի, երկնի, խաւսի, ամսի, քավի: Սակայն այսպիսի բառերից չեն հնչյունափոխվում ըմբիշ, ախս, մայիս, հուճիս, հուլիս, հյուսիս, Բանիս, կիպարիս, իրիս, ուրիշ, բաղից, կաղից, ավլին, դեկիին:

Չեն հնչյունափոխվում նաև՝ փոխիճող, շոխիճ, խրիսիճ, Եարիճ (Եարեճի ձևը տեղի է տալիս), կոխիճ, հախիճ (հակերի ձևը տեղի է տալիս):

Իշ-ով վերջացող բառերից հնչյունափոխվում են երգիշ, շամիշ, գրպարիշ, եկարիշ, գրիշ, ուսացիշ, փրիշ, քարգմանիշ, Սիբիշ, կուսավորիշ (իրեն հասարակ անուն չի հնչյունափոխվում), մնացած

բառերը կամ չեն հնչյունափոխվում, կամ հնչյունափոխվածները արդեն խորթ են, օրինակ՝ սրբիշ, գործիշ, բաշխիշ, վարիշ, լուծիշ, հարողիշ, կազմիշ, մարդիշ, շարժիշ, բաժնիշ, եղանակիշ, Գրիշ, կործանիշ, Բնիշ, կեղեփիշ և այլն:

Հնչյունափոխվում են իվ-ով և իր-ով վերջավորվող բառերը. հովիկ, հաշվի, անվի. (անիվի ձևը ավելի գերազանց է), արծվի, պատվի, խնդրի, կարմրի, նախրի, մխարի, պտերի, բուճի և այլն: Չպետք է հնչյունափոխել հազվագեղ գործածվող գրաբարյան և օտար բառերը. օրինակ՝ ջուրի, կապիճի, կապիճի, դպիրի, շաղիղի, զեֆիրի և այլն:

Չեն հնչյունափոխվում իսա-ով վերջավորվող բառերը. մարտիսի, կոմունիստի և այլն:

§ 162 Բառակազմության մեջ փոփոխված հիմքով ենք դռնում այն բառերը, որոնք հնից այդպիսի հիմքով են բարդության մեջ մտել: Այսպես՝ իֆ-ով վերջավորվող բառերից փոփոխվում են հազվագյուտ բառեր, օրինակ՝ հարսանիավոր: Մնացածներում ի-ն չի հնչյունափոխվում. օրինակ՝ կարիքավոր, ալիքավորություն, գործիքավորվել և այլն:

Մեծար.—Մրանց հետ չպետք է շփոթել հայերենաբանություն, կարևոր և այլ բառերը, որոնք հայերենի, կարի հիմքերից են կազմված:

Մեծ մասամբ չեն հնչյունափոխվում իվ-ով վերջավորվողները, օրինակ՝ մարագիկություն, քափանցիկություն. համեմատիր նաև գերազանցիկ, վաղամտիկ, պարիկ, շրշիկ, զամբիկ, սնդիկ և բազմաթիվ օրիշներ:

Չնից փոխված հիմքով են բարդության մեջ մտնում բազմապատիկ (բազմապատիկ), զատիկ, ծաղիկ, մրրիկ, գեղեցիկ, կապիկ (կապիկ), կոշիկ, ոռնիկ (ոռնկացուցակ), փարսիկ, առվիկ (առվկություն), գանիկ, մարդիկ:

Մրանք կարող են նաև անփոփոխ մնալ, երբ իմաստի տարբերակում է առաջ դալիս փոփոխվածի ու չփոփոխվածի միջև. օրինակ՝ առվկություն, առվիկություն:

Չեն հնչյունափոխվում -իզ, -իդ, -իլ, -իդ, -իթ-ով վերջավորվողները: Կորիզավոր, երգավոր, Բզամիզավոր, ծղիլային, սերկիլենի, ապրիլյան, չափավոր, կենթավոր և այլն:

—իդ-ով վերջավորվող բառերից փոփոխված ենք գտնում ուղիղ-ը (ուղղել, ուղղություն):

—իե-ով վերջավորվող բառերից փոփոխված հիմքով են բարգուժյան մեջ մտնում ճանին (ճահճակին), մանին (մահճակալ), դանին (դահճակետ): Բայց չեն կարող փոխվել ամին, կապին, կրտին, պատին (պատինավորներ), ուսին, լլին: Արեին, կարին, կավին բառերի հնչյունափոխված ձևերը սկսել են խորթանալ (կավ-ճային գունատություն—կավիճային գունատություն, կարեային-կարեային, արեճավոր-արեկեճավոր):

—իմ-ով վերջավորվող բառերից փոփոխվում են մտերիմ (մրտերմություն), ճավառարիմ (ճավատարմություն), նաև ոխերիմ (ոխերմություն), սակայն՝ ուշիմ-ուշիմություն, ճղճիմ-ճղճիմություն:

—ին-ով վերջավորվող բառերը ղերազանցապես փոփոխված են հանդես դալիս. օրինակ՝ բաժնետուն, երկնային, անկողնային, մարմնական, կացնավոր, լուսնազնայ, ամառնական և այլն:

Չեն հնչյունափոխվում կաղին, սլին, բազին, դելֆին բառերը:

—իչ-ով վերջացող բառերից փոփոխվում են երգիչ, շամիչ, զուպարիչ (զրպարտչական), ճկարիչ, գրիչ, ուսուցիչ, փրկիչ, Մկրտաիչ, Բենիչ, լուսավորիչ, բարգմանիչ, ճարագիչ, բովիչ (թովչական) և այլն:

Այլևս փոփոխված հիմքով բառակազմության մեջ չեն կարող մտնել բովիչ, լավիչ, մարգիչ, շարժիչ, եղանակիչ, գրկիչ, կազմիչ, կորճանիչ, գեղիչ, կեղևիչ և այլն:

Չփոփոխված և փոփոխված հիմքով բաղադրյալ բառերը կարող են իմաստի տարբերակում առաջ բերել, օրինակ՝ վարչություն-վարչություն, բովչություն-բովիչություն:

Փոփոխված հիմքով են բարգուժյան մեջ մտնում —իջ, իո, իտով վերջավորվող բառերը. Իբիջ (բրբջալ), բիջ (բշշահյուսթ), գրգրո (գրգռել), կչիո (կշռել), վճիո (վճարեկ), ճովիա (ճովտաշուշան) և այլն:

Չպետք է փոփոխել փանդիո, բամբիո, ճուպիա, վախ (վախություն):

Փոփոխված հիմքով են բարգուժյան մեջ մտնում —իվ, —իւ-ով վերջավորվող բառերը. ճովվական, ճետաբեհական, ճախարաղ, կովի և այլն:

Չեն հնչյունափոխվում ի—բաղաձայն—ի և ի՛ւ-ով վերջավորվող բառերը. քոչիբային, կարիբավոր, շարիբարե, բաղիբագործ և այլն:

Չեն հնչյունափոխվում նոր փոխառությունները. մարգախախան, արտիստական, վեճետիկյան և այլն:

Փոփոխված հիմքով հանդես է գալիս —ի—երկու բաղաձայնով վերջացող բառեր մի մասը՝ երաժիշտ (երաժշտասեր), արիեզ (արեզահար), սկզբնական, պարսպապատ, խրխնեց, կոճալ, խարխալեղիչ, բրճնաղաչա և այլն: Կարող են անփոփոխ հանդես գալ երաժիշտ, խարխալ, ամբարիշտ և այլն:

դ) Ու ձայնավորի հնչյունափոխությունը

§ 163. Բառակազմում շեշտակիր ու-ն բոլոր պարագաներում մնում է անփոփոխ. սպա-ուղտի-ուղտեր-ուղտապան, ուխտ-ուխտավոր, ուր-ուրբորդ և այլն:

Չենց կող ձևեր են ում-ըմպանկ-ըմպել (բայց ումպի, ումպեր), ըմպիլի, ունը-ընդդեմ (բայց ունդավոր, ունդեր և այլն), ունը-ընշցի:

Ու-ով վերջացող միավանկ բառերի ու-ն անշեշտ դիրքում գտնում է վ. ձու-ձվի-ձվեր-ձվածնդ, լու-լվի-լվեր-լվածադիկ, կու-կվանց, շու-շվացուցիկ, բու-բվի-բվեր-բվիճակ:

Ու-ն մնում է անփոփոխ կրկնվելիս. նունու, բուբու, կուկու (կկու հին է):

Երկվանկ և բազմավանկ բառերի վերջին ու-ն հոգնակի կազմության ժամանակ մնում է անփոփոխ. կառուներ, առուներ, ուրուներ, գառատուներ և այլն: Բացառություն չկա:

Երկվանկ բառերի վերջին ու-ն թև՝ հոլովման և թև՝ բառակազմության մեջ փոխվում է վ-ի. առու-առվի-առվածան, կառու-կառվի-կառվախառ, քրու-քրվի-քրվել, լեզու-լեզվի-լեզվաբան և այլն:

Բացառություն են կաղմում ուրու, գեչու, ճու, քու, որ հոլովման մեջ մտնում են անփոփոխ՝ ուրուի, ուրաւով, քուի, գեչուի, ճուի: Երկու բայը հոլովվում է երկուսի ձևով, այլապես պետք է հոլովվեր երկուսի: Բառակազմության մեջ այս վերջիններից միայն ուրու-ն է մտնում վ՝ հիմքով. ուրվական-ուրվակաւոր-ուրվազիծ և այլն:

Հլու, Գու, զնու մտնում են անփոփոխ հիմքով. հլուարյուն, զնու-ական: Երկու բառից հին կազմությամբ ունենք երկվանայ, երկվա-րյուն, իսկ երբ կազմությամբ՝ երկուանայ:

Բազմավանկ բառերի վերջին ու-ն հոլովման ու հոգնակի կազմության մեջ մտնում է անփոփոխ. եղբերս (եղբերքի ձևը հնացած է) եղբերուներ, երագոսի-երագուներ, հարսնացուի-հարսնացուներ և այլն:

—Ու-ով վերջացող բազմավանկ բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը ու-ով վերջացող միավանկ կամ երկվանկ բառ է, հոլովվելիս երբեմն հնչյունափոխվում են, երբեմն մտնում անփոփոխ. օրինակ՝ Արշակառու-արշակառուի և արշակառվի:

Միավանկ ձու, լու բառերը, եթե դառնում են բարդ բառի վերջին բաղադրիչ, հոգնակին է հոլովումը կազմում են փոփոխված հիմքով. յուղավիլ-յուղավիլեր: Իսկ եթե բարդ բառի վերջին բաղադրիչներն են առու, կծու, թրու, լեզու, մեղու, հոգնակին կազմվում է առանց հնչյունափոխության քնառուներ, անխաբբուներ: Հոլովման մեջ սրանք մտնում են փոփոխված հիմքով. բնառվի, անխաբբվի:

Հիշյալ միավանկ և երկվանկ բառերը, բարդության վերջին բաղադրիչներ լինելով, հազվադեպ են կրկին բաղադրություններ կազմում. Եթե կազմեն, կմտնեն փոփոխված հիմքով. օրինակ՝ անխաբբվալին:

Մնացած բոլոր բառերը հոլովման, հոգնակի կազմության և բառաբարդության մեջ մտնում են անփոփոխ. վաշխառուներ—վաշխառուի—վաշխառություն, հոգաբարձություն, վերահիւսավոր և այլն: Միայն ավանդաբար ունեն զատատվություն, բայց՝ զատատուի, զատատուական:

§ 164. Երկու կողմից փակ ու ունեցող միավանկ բառերը հոգնակի կազմելիս և հոլովվելիս ու-ն փոխում են Ը-ի. օրինակ՝ խումբ-խմբի-խմբեր, գունդ-գնդի-գնդեր և այլն:

Չեն փոփոխվում բուրգ, բունձ (հողակոշտ), բուշտ, գուր, գուլձ, դուխ, զուգս, բուխս, բուսմ, բուրշ, բուրծ, ծուկ, խուր, բուրմ, լուր, խուլ, խուխ, Խուղ, խում (խումներդ անուշ), ծուծ, կուլ, կուրք, կուռմ, հուն, հունդ, հուշ, հունչ, մուշկ, մուտմ, մուրծ, մուրտ, շում, ումբ, ռուս, սուրմ, վուշ, տունկ, տափ, տուղտ, տուտ, տուրմ, տափ, ցուլ, ֆուշ:

Մանր.— Այս ցանկում չեն բերվում այնպիսի բառեր, որոնք հին են և զործածվելիս նույնպես կմտնան անփոփոխ. օրինակ՝ գուշակ (ձերպ) կույր (վեհանի մեջտեղի ուտուցիկ մասը), հուս (ուս) և այլն: Չեն բերված նաև այնպիսի բառեր, որոնք չեն հոլովվում և հոգնակի չունեն: Մրանք և կմտնան անփոփոխ, եթե երբեկցե հոլովվեն կամ հոգնակի կազմեն. օրինակ՝ բուխ, խում, ծուս (աղոխ), գուն (ծունկ) և այլն:

Կան նաև բառեր, որոնք երկու ձևով էլ չանցնա են գլուխ: Մեր կարծիքով այս պարագայում առաջնությունը պետք է տալ անփոփոխ ձևին. օրինակ՝ բուր-բիբ-բուրի, սակայն՝ բուրեք, բուր (բույթ-ից, (-բրի-բուրի, բրեք-բուրեք, գուտ-գուտի, գուր-գուտեք, դուր-դրի-դուրի, դրեք-դուրեք, բուլ-բղի-բուլի, բղեք-բուլեք (պետք է միայն անփոփոխը վերցնել, այլապես կշփոթվի թիվ բառի նկատմամբ), բուխ, կուտ, տունկ, ղուլ, ֆուր:

Կան բառեր էլ, որոնց հոգնակի փոփոխված ձևը անսովոր է. իսկ հոլովվածինը՝ սովորական. օրինակ՝ բուր-բիբ, բայց՝ բուրեք-լուր-լրի, բայց անպայման լուրեք, խունկ-խնկի-խունկեք, հունձ-հնձի-հունձեք, ֆուրմ-բմի-բումեք, ֆուրմ-բնի, բայց ֆունձեք: Բուլ-բղի-բուլեք, ֆուրմ-բնի-բումեք: Այս դեպքում ևս առաջնությունը պետք է տալ փոփոխված ձևերին (խոսքը հոլովման մասին է):

Շուն և տուն բառերի շան, տան սեռականները դիրքային փոփոխություններ չեն, իսկ շներ, տներ դիրքային են:

Բոլոր միավանկ բառերի այն հոգնակիները, որոնք արտահայտում են նաև հատկացուցիչների հոգնակին, կազմվում են անփոփոխ. օրինակ՝ տուն-տներ, բայց՝ տուններս, բուլք-բղրեք-բուլքներս, բուր-բրեք-բումեքս և այլն:

Այսպիսի միավանկ բառերը և արմատները, իբրև կանոն, բառակազմության մեջ մտնում են փոփոխված ձևով. օրինակ՝ բուրք-բրդառու, բուխ-բխի, բուլք-բղրեք և այլն:

Չեն հնչյունափոխվում գուլ, գուլձ, խուր, խում, կուց, հուշ, մուրմ, պուտ, ռուս, վուշ, տափ, տուղտ, տուրմ, ցուլ (ցուլիկ). այսպես՝ գործադրավոր, գուլձաշատ, խուրթախ, խուման, հուշաբի, մուրեմաք, ռուսական, վուշատու, տափավոր, տուղտաձողիկ, տուրմադրել, ցուլավոր:

Չեն հնչյունափոխվում նաև կրկնավոր, հարադրական ու կցա-

կան բարգոյթյունների մեջ. օրինակ՝ դուր ու նեւր, դու ու վեբ, բու՛ւււուու, կուգեկուգ, կուգեկուծիկ, կուուուկուշա, կուգուպարգ, լուուուուեջ, շուուուու, շուրչանակի, սուուուու, սուուսիու, տուուուեղ, ծուփ-ծուփ, կուկուարուկ, քուխաշիլի և այլն:

§ 165. Երկվանկ և բարձրավանկ փակ վանկի շեշտակիր ու ունեցող բառերը հոգնակիում բնավ չեն հեղյունափոխվում. օրինակ՝ կուուկներ, նպուներ, արարուներ, շարժումներ և այլն:

Հուղման մեջ ևս սրանք մեծ մասամբ չեն հեղյունափոխվում. օրինակ՝ արժուկի, եղուցի, կուուկի, նպուի, ձմերուկի, ստուկի, մաժուկի, արարուներ, վարժուներ և այլն:

Ում-ով վերջավորվող բայնունները ի-ով հուղվելիս չեն հեղյունափոխվում. օրինակ՝ շարժումի, ստուի, անկումի և այլն, իսկ -ան-ով հուղվելիս ու-ն օղվում է. անկման, շարժման, կորժման և այլն:

Հեղյունափոխվում են զլուփ-զլիի, բազուկ-բազկի (բազկի թափը), սակայն բազուկ (ճակնեղեղ)-բազուկի, խոհուրդ-խոհեղի, ժողովուրդ-ժողովրդի, ծնունդ-ծնեղի, բլուր-բլրի, անդունդ անդեղի: Սրանց մի մասը և հետևյալները երկու ձևով են հանդես գալիս. ծնունդի-ծնեղի, անդունդի-անդեղի, բազուկի-բազկի, բլուրի-բլրի, ձմերուկի-ձմերկի, ենեղուկի, մաժուկի-մաժեկի, փայտափի-փայտափի, կուուսափ-կուուսափի, Գալուսափ-Գալուսի (բայց՝ Գալուսայան), որոնցից առաջնությունը պետք է տալ փոփոխված ձևերին. փոփոխվածները հնացած են և անբարեհունչ:

Գուսար, աշուն, գարուն, անուն բառերը լինում են զուտեր, աշնան, գարնան, անվան, սակայն՝ դուստրի, աշունի, գարուների, անունի:

Բառակազմության մեջ սրանք մասնում են փոփոխված հիմքով, ձևնդարերություն, խոհեղատու, անդեղախոր և այլն, եթե շեշտվենք, որ կրկնության, կցական և հարադրական բարգոյթյունների մեջ կարող են անփոփոխ մնալ:

դ) Ա, Ե, Ռ ձայնավորների հեղյունափոխությունը

§ 166. Ա ձայնավորը քիչ է ենթարկվել զիրբային հեղյունափոխության: Երբև լիահունչ ձայնավոր, այն հնում, շեշտակորույս լինելով, քիչ փոփոխություն է կրել: Սեր գրական լեզվում ա-ի փոփոխությունները կամ հնից են գալիս և կամ խոսվածքներից են

մուտք գործել գրական լեզուն: Ա-ի այսպիսի փոփոխությունները զիրբային բնույթ ունեն, բայց գրական լեզվի օրինաչափությունն արդյունք չեն. այսպես՝ ունենք համփա-համփի, շիտակ-շիտակի, կունակ-կունակի, մատաղ-մատաղաշ, շիեամ-շիեձու-շիեձուարյուն, ծիծաղ-ծիծղուն, ցամախ-ցամախ, ֆաղախ-ֆաղախներ, անդադար-անդադար, սատակ-սատակի, ամառ-ամառ, առաջ-առջև, շարք-երկուշարքի-երկշարքի-շուրեքշարքի-հեղեղաշարքի, համարել-համարել, պատանել-պատանել, բանավոր-բանվոր, աշակերտ-աշակերտ, համարիչ-համարիչ, դադարած-դադարած, քարավիլ-քարվիլ, արմատարմուխի, աստված-ասածու, անցավոր-անցվոր:

Այս փոփոխությունները մասնակի բնույթ ունեն և մեր գրական լեզվի համար համակարգային երևույթ չեն: Սրանք լուրհասատակ փոփոխություններ են, որոնք գրական լեզվում օրինականացի են:

Մանր.— Այստեղ չեն բերվում ա-ի այնպիսի փոփոխությունները, որոնք օրինաչափ բնույթ չունեն, բայց որոնք առկա են զեղարվեստական գրական լեզվում, իբրև ժողովրդագիտական կամ բարբառային տարրեր. օրինակ՝ պուսավ-պուսվի, սատանա-սատանի, երկա-երկի, տղա-տղի և այլն:

Այսպիսի մասնակի բնույթ է կրում նաև Ե, Ռ ձայնավորների հեղյունափոխությունը. ավել-ավլել, որկար-որկարավ, մձեղ-մըձողիկ, ձմեռ-ձմռան, ցեխ-ցլիսի:

ե) Ը-ի հեղյունափոխությունը

§ 167. Բառակազմի բ-ն երբևք չի հեղյունափոխվում. օրինակ՝ բնկեր-դասընկեր, բերաց-հետընթաց, բնկերական, բնաձևական և այլն:

Բառակերպում հայերենը հողից բացի ուրիշ բ չունի: Իսկ հողը հուղման, հողնակիի կազմության ու բառաբարդման մեջ չի մասնակցում:

Փակ վերջավանկում բ ունենք կայոր, դուստր, ուստր, անգր, արկը, սառը, կոնը (որ այժմ մեծ մասամբ ասանք բ-ի է հեղվում), կուռ, համր, ծանր, մանր, փոքր, ազգը, լիւր, կարծր, բարձր, ցածր, մեղր, ֆաղթ, անգր, բանձր, Մբքը, այսր, տեւր: Այս բառերի վերին զաղտնավանկ բ-ն հուղման և հողնակի

կազմության ժամանակ սղլում է (բ > գրո). օրինակ՝ կայսրի, դատարի, սատարի, կայսեր (բայց՝ կայսրքենք) համրի, ծանրի, մանրի, փոքրի, ազրի, բարձրե, մեղրե (մեղրքենք), տեսեր, լիտրի, կաթերի, բարձրից, ցածրից, ցածրից, բանձրով, տեսրի (կան նաև բ-ով հնչողները՝ համարի, ծանրից, քաղցրից և այլն):

Բառակազմության ժամանակ այս բ-ի սղլումը շատ ավելի մաքուր է, երբ հաջորդում է հոգակապ կամ որևէ ձայնավոր. օրինակ՝ բարձրախոս, քաղցրալեզու, մեղրաչուր, տևուրակ, կաթ-բալետ, փոքրանալ և այլն:

Իսկ երբ հաջորդ բառը կամ ձայննք բաղաձայնով է սկսվում, բ-ն չի սղլում. օրինակ՝ Անդրիկավիաս, Այսրեկասպյան, կտորավել (բայց՝ կտորել), ծանր-քեթև (բայց՝ ծանրու-թևթև) և այլն:

զ) Յա, յու, ույ երկնչյունների հնչյունափոխությունը

§ 168. Փակ վանկի յա երկհնչյունը, շեշտը կորցնելիս, հոլովման և հոգնակիի կազմության ժամանակ միշտ մնում է անհնչյունափոխ. ինչպես՝ սենյակ-սենյակի, դղյակ-դղյակի-դղյակներ, մատյան-մատյանի-մատյաններ, առաջալ-առաջալի-առաջալյաներ և այլն: Բառակազմության մեջ երկու ձևով է հանդես գալիս՝ անփոփոխ և ե լծորդությունը:

Անփոփոխ հանդես է գալիս հատկապես նոր կազմությունների մեջ. օրինակ՝ գրասենյակային, դղյակային, հորելյանական, դաշակություն, մանյակաձև և այլն:

Հին կազմությունների մեջ, որտեղ նույնությամբ փոխառված են գրարարից, յա-ն (հին կա) դարձել է է: օրինակ՝ մառյուխ-մատենադարան-մատենագետ, առաջալ-առաքելություն, սենյակ-սենյակապետ և այլն:

Սակայն հին կազմությունների նմանակությամբ այժմ էլ կազմում ենք փոփոխված հիմքով բառեր. օրինակ՝ տեղյակ-տեղեկատվություն-տեղեկագիր-տեղեկամբ, սենեկային (արևմտահայերենում գործածվում է կամեային բառի իմաստով. սենեկային երաժշտություն), կենսափրություն-կենսաբանություն-կենաց (կյանք բառից) և այլն:

Բառավերջի յա երկհնչյունը հոլովման և հոգնակի կազմու-

թյան մեջ մնում է անփոփոխ (օրինակ՝ պաշտոնյա-յալի-յաներ, Բեխտոնյա-յալի, —յաներ և այլն), իսկ բառարարության մեջ փոխվում է է-ի. պաշտոնյա-պաշտոնեություն, հրեա-հրեություն-հրեակախ:

§ 169. Յու երկհնչյունը վերջին փակ վանկում հոգնակի կազմելիս երբեք չի հնչյունափոխվում. հնչյուններ, գիտություններ, պետություններ և այլն:

Հոլովման ժամանակ ունենում է յա լծորդությունը, եթև հոլովվում է ներքին թեքման ա հոլովիչով. արյուն-արյան, գիտություն-գիտարյան: Իսկ երբ հոլովվում է ի հոլովիչով, մնում է անփոփոխ. արյունի, ավյունի, Կարյունի, անկյունի, ձյունի, արգյունի, սյունի, պայքյունի և այլն:

Բառակազմության մեջ յու երկհնչյունը մնում է անփոփոխ. արյունաբբա, արյունակետ, անկյունաբար, ձյունամբրիկ, սյունախոյակ և այլն:

Մի քանի հին կազմությունների մեջ ունենք յու > ն հնչյունափոխությունը. միություն-միությունական, ազրերանալ (ազրուրանալ), եղջյուր-եղջերու, գյուլ-գեղջուկ, արյուն-արեճապարս-արեճակցական և այլն: Իսկ մի քանի ժողովրդական կազմությունների մեջ ունենք բ, գրո և ու հնչյունափոխությամբ. արյուր-արուտ, ձյուն-ձնագեղի, արունտեր-արեաբարախ, արեոտ:

§ 170. Ույ երկհնչյունը շեշտը կորցնելիս չի հնչյունափոխվում հոլովման և հոգնակիի կազմության մեջ (օրինակ՝ գրայց-գրայցի-գրայցներ, մշակույթ-մշակույթի-մշակույթներ և այլն), իսկ բառակազմության մեջ փոխվում է ու-ի. գրայց-գրայցել-գրայցաբուրյուն, հանգույց-հանգույցել-հանգուցավոր, ծուլ-ծուլություն և այլն:

Ույ-ը անփոփոխ է մնում հետևյալ բաղադրությունների մեջ. առույգ-առույցանալ, պատույզ-պատույզավոր, ծխելույզ-ծխելությունգավոր, նույնական-նույնություն, խարույկ-խարույկատոն, մակույկ-մակույկավար, դուլ-դուլավոր, փուլ-փուլական, էրուլ-երուլիկ (նշուլել հեացած է), ողկույզաբեր, խույրան, նծույզավոր, առույր, սամույր: Այն անփոփոխ է մնում նաև ույք-ով վերջացող բառերի մեջ. հացկեւույք, ձանձույք, էլույք, հավաճույք, ցեղեկույք, սովորույք, գայույք, պարբերույք (պարբերություն). հասույք, ձեւույք, հնչույք, ծածկույք, հանույք, երեսույք (երեսարկան հին ձև է):

Չեն հնչյունափոխում նաև հանույ՛, կանույ՛, պիտույ՛, գա-
հույ՛, խնըւյ՛ բառերը:

Մի երկու բառում ույ-ը ունի զրո և ր լծորդները. սառույց-
սառցապատ, հույզ-հռչ-հռչական, բույն-բնավեր, բույր-բրա-
մատ, կապույտ-կապտել, պտույտ-պտովել, ճիւղ-ճկրամբ:

Նույնիսկ այնպիսի բառեր, որոնք բառակազմութեան մեջ հան-
դես են դալիս ու լծորդով, նոր բառեր կազմելիս կարող են և շփո-
փոխվել. զույգ-զույգավորվել, վարագոյրավոր, բույրատառ,
զույցքնկեր և այլն: Իսկ մշակութային նոր կազմությունը արճես-
տական է. պետք է լինեն մշակութային:

§ 171. Այ երկհնչյունը, շեշտակորույս լինելով, սովորաբար չի
հնչյունափոխվում:

Միայն կրկնութեան մեջ, մասամբ բառամիջում, ունենք այդ-
և լծորդները. փայլվելի, ձայննելի: Խոսվածքներից վերցված ձևեր
են Իկլ (բայրից), ժնո (ժայռից), կեծանալ (կայծից), ձենննելի:

կ) Գիրմային հնչյունափոխություն շեշտից անկախ

§ 172. Շեշտից անկախ դիրքային հնչյունափոխության ար-
դյունք է բառակազմում մեր և և ո ձայնավորների յն, վո դռնալու:
Այսպիսի հնչյունափոխությունը կոչվում է նաև պատմական հըն-
չյունափոխություն, որովհետև այդ փոփոխությունը կատարվել է
դանդաղ և նրկարատև ժամանակի ընթացքում: Հավանորեն մեր
այդ երկու ձայնավորները դիտես զրարարի վաղ շրջանում ունեցել
են միջնալիզվածացման (բժամնացման) (կ) և շրթնաճեղքի խիստ
մոտեցման (ո) հատկանիշներ, որոնք հետագայում տվեցին յն և
վո զարգացումը: Դա եղել է ոչ միայն բառակազմում, այլև բառա-
միջում: Բառավերջում միանդամայն այլ և և այլ ո է եղել այսին-
քուն այդ դիրքում սրանք հնչվել են է, օ: Այս երևույթը ապացուց-
վում է ոչ միայն բառակազմում և-ն յն դառնալով և ո-ն՝ վո, որ
երկար ժամանակ էր պահպանում, այլև բարբառներում, ուր բառա-
միջում և-ն արտաբերում էն մտավորապես ին և ո-ն մտավորա-
պես ուտ. Միեր (կաթի սեր), խոտա (խոտ), իսկ կով, ծով և տներ,
ղվդ արտաբերում են կով, ծով, տէր, ղլգ:

Գիրքային այս հնչյունափոխությունը ե-ի նկատմամբ իր ա-
վարին է հասել լրիվ չափով՝ այսինքն մենք բառակազմում չունենք
և, որ յն դարձած չլինի, իսկ ո-ն մի քանի բառերում մնացել է
անվթար, այդպիսիք են ով, որ հնչում է օվ, օտար փոխառու-
թյունների ովկիանես, ովազիս, Ովաճես, որոնք այժմ գրութայմբ
հաստատվել են օվկիանես, օտար, Ովաճես:

Գիրքային հնչյունափոխության արդյունք է նաև ա, ո ձայնա-
վորներից հետո յ-ի առաջացումը, երբ որանք հաջորդում է մի
ձայնավոր, որինակ՝ ծառ-ծառայի-ծառայություն, տղա-տղայի-
տղալական, Կարո-Կարոյի, Մարո-Մարոյի:

Հնում ծառա, տղա գրում էին ծարայ, տղայ, ուստի բնականո-
րեն սրանք պետք է պահպանեն իրենց վերահնչյուն յ-ն: Բայց
ժամանակակից դրական լեզուն այդ յ-ն բառավերջում չի պահել:
Եթե նույնիսկ ընդունենք, որ ծառայի, ծառայություն վերջիկ էնք
նույնթյունմբ, ապա այդ նույնը չենք կարող ստել Մարա, Կարո,
Սարո և նույնիսկ օտար Գիրմ, Շալիրմ, Մարո և այլ անունները
մասին, որոնք թեք հոլովները մենք այլ կերպ չենք կարող հնչել,
քան Մարոյի, Գիրոյի, Շալիրոյի և այլն:

բ. ԲԱՂԱՉԱՑՆԵՐԻ ՀԱՉՅՈՒՆԱՓՈՒՅՈՒՑՈՒՄԸ

§ 173. Ք ձայնորդից հետո թե՛ բառամիջում և թե՛ բառավեր-
ջում ձայնիզ թաղաձայնների շնչել խլացում է տեղի ունեցել՝ այ-
սինքն ձայնիզ ք, գ, դ, ձ, ջ հնչյունները Ե-ից հետո արտաբերվել
են փ, ք, ց, չ: Մեր նոր դրական լեզվի ուսումնասիրողներին ՏԻՄ
գարի վեցերթում և XX դարի առաջին տասնամյակներին թվում էր,
թե Ե-ից հետո այդպիսի հնչյունափոխական գործընթացը հասել
էր իր պակարին, ուստի հատուկ սահմանումով հիշյալ ձայնիզները
բոլոր զնայներում հնչել էին առլիս խուլ շնչել. այդպիսի հնչումը
համարվում էր հայաքրի, քնական, իսկ հիշյալ ձայնիզների ձայնիզ
հնչումը համարվում էր գրքային, ալիլի ճիշտ գրային և ոչ բնա-
կան ու հայացի:

Սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ
Ե-ից հետո գրանց խուլ հնչումը բնական ու կենդանի է այն բա-
ռերի մեջ, որոնք խոսվածքների մեջ գործածվել են. իսկ այնպիսի
բառերի մեջ, որոնք մեր դրական լեզուն վերցրել է հին բառարան-
ներից ու գրքերից, այսինքն՝ խոսակցական լեզվի մեջ մտքո շգոր-

ծած բառերի ձայնեղները այդպիսի խլացումը բռնազրոտիկ է ու անբնական և մեր լիզվի հնչեղությունը խաթարող մի զործոն. օրինակ բուրգ, աչք, կարգ, խաւճ, նուր, դրգիկ, դարձ և այլ բառերի մեջ *բ-ից* հետո կհոնկան ձայնեղները խույ շնչեղ են դարձել (*ղ > թ, ց > չ, մ > ց, բ > փ* և այլն), իսկ սառց, սիրամարգ, աղ, արքանձակ, բարբախլ (*ժողովրդական մեջ բարբիկ*), հերձված, հարձանք, ձորձ, լուրջ, զորգ, լորձ, արգելի, որչ, հորչորչիկ, հերձիկ, սաեղ, մեծ, ուղեծ, արգանակ, արգանասի, անուշ, երիտասարդ, արգո (*մեծարդո*), արգասիք, արգավանդ, բարբաջանք, բարգալանիկ, բարբառ, բուրգ, գիրգ (*զրգանք*), Լեզիձիկ, խառցավանք, խառցալ, դղիր, խառցիկ, հերբան, սարբիւն, վարգել, ցրդիկ, քարք, անջրի, և այլ գուտ գրական բառերի մեջ ձայնեղները *բ-ից* հետո մնացել են անփոփոխ, և դրանց խույ շնչեղ արտաբերությունը ոչ միայն բնական չէ, այլև սխալ է ու անբարեհունչ: Հմտ., օրինակ, արվանձակ, արհանակ, սիրամարք, բարբառ, խառքենի հնչյունները:

Այլևի՜ն կարելի է ասել. միեւն իսկ այժմ նկատելի է խույ շրջանադարձների ձայնեղություն վերականգնում. մի զործրեթաց, որ ինչքան էլ գրային ու գրքային համարվի, մեր գրական լեզուն ազատում է անբարեհունչ խույ շնչեղների շատությունից:

Արևմտ *բ-ից* հետո ձայնեղների խլացումը հին հնչյունափոխական օրինաչափություն է և մեր գրական լիզվի համար արդեն մեծած է ու համաժամանակյա արժեքից զուրկ: Խույ շնչեղացումը սակի է ունեցել որոշակի թվով բառերի մեջ: Ձայնեղ են արտաբերվում՝ ա) գուտ գրական փոխառությունները, բ) ուշ շրջանի բարբառային փոխառությունները. դարդ, դաղաբլուտ, զարբար, նարդի, բուրջ, դարդար, մարջան և այլն, գ) նոր գրական փոխառությունների բերան, սարբարգ, օրգին և այլն, դ) բացահայտ գրկնությունները և բառարարման հետևանքով *բ-ին* մտուցած ձայնեղները՝ զրգիտ, բարբառ, հերձիգ, ներգարձական, շարջատ, զորգուսլ, սարբեր և այլն, ե) այն բառերը, որոնք չնայած խույ վածքներում կան, բայց աճեցել են գրական լիզվից՝ գարգանալ, լուշ Լար-Ղուս, հարգ, հարգել և այլն, զ) այն բառերը, որոնք խույ վածքներում փոխվել են, բայց գրական լեզուն մերժել է դրանց բարբառային ձևերը և վերցրել է գրական ձևնայաբանով. օրինակ՝ բըրչ-բուրջ, խառքախ-խառքախ, բարվիկ-բարբախ:

Մի բանի բաներ էլ երկու տեսակ են՝ հնչվում. մեր կարծիքով ստանդությունը պետք է տալ ձայնեղ հնչյունը. ներքոց-ներքոց, երջանիկ-երչանիկ, արդի-արբի, մարգագետին-մարգագետին, բուրաս, արվարձան, արձան, հանդերձ և այլն:

Այն, ինչ որ ասվեց ձայնեղների դիրքային փոփոխությունների *բ-ից* հետո, վերաբերում է նաև ձայնավորներից հետո կատարված նրանց փոփոխություններին:

Ձայնավորներից հետո, ձայնեղները խույ շնչեղ են արտաբերվում հետևյալ բառերի մեջ. աչք, խաբել, արևածագ, ծագում, արագ, պատարագ, մարագ, ուրագ, նվագ, բագավոր, մից, ծագ, էգ, իրև, դադար, հեգ, հագ, հագնակի, հագնել, հագուստ, երգ, էգուց, գոգ, ոչիլ, օգի, հագի, շոգի, շոգ, շարար, նորոգել, իրև Սերոբ, օգուտ, գիջել, օգ, օձ և այլն:

Բայց հենց այս բառերից կազմված շատ բառերի մեջ ձայնեղների պահպանվում են. օրինակ՝ արագագնաց, քագաղիւր, քագաղորձան, ողբեզու, զոգավոր, ոգիկի և այլն:

Այսպիսի բառերի մի մասը սկսել է երկտեսակ հնչվել. օրինակ՝ իջնել, հից, հուր, գիջել և այլն:

Ձայնեղությունը պահպանում են Արել (*ժող. Ափիկ*), արեղա (*ժող. հափիղա*), ազան, դագաղ, աղի, ագուվ, Ազամ (*ժող. Հաթամ*), առագաստ, հագագ, էջ, իջան, բագ, հագնեալ, եղեգ, զոգ (*ժող. զոթ*), սագ, վիւրագ, վայրագ, դրվագ, վափագ, վաճագն, հաբուրդ, ստորոգել, օգուստու, զուգակից, վարագ, վագր, Բարբիւն (*ժողովուրդը ասում է բավելակն*), բագին, բաղ, լարբիբոս, լաշվարդ, լեգին, լոգանք, խոխոջ, դոզոջ, շագմաջ, մարմաջ, ծնեբել, հեգել, հեգնմեկա, ռոգել, առոգանել, պարագա, պարագաբուն, նոագել. նոագալար, նագար, մագաղար, մագիլ, մագիտուտ, մագիցել, մեգ, միգամած, միչոց, մեջտեղ, միջին, մզել, մոգ, մագական, Հարբեր, Նուր (*ժող. Հութա*), հաբոջ, շագանակ, շիջել, անչեջ, ոգուել, որոգայք, սոգրել, սեգ, սիգանեմ, սուտգել, աեգակ, ծորիդ, բիջ, զարավիգ, դոզոջ, զուր, բոլբոջ, գեջ, Տիգրան և այլն էլ չենք խոսում նոր փոխառությունների ու նորակազմությունների մասին որ պետք է հնչել ձայնեղ:

Գ ձայնեղ բաղաձայնը *ե-ից* հետո մի բանի բառերի մեջ հնչվում է բ, ինչպես՝ անղամ, խնդիր, կենդանի, բնարձակ, բնդանուր, բնդանուն, բնդանաջ, բնդանալիկ, բնդուպ, բնդանայն,

ընդհակառակը, ընդունակ, ընդամենը, ընդհատակայ, ընդօրինակելի:

Ինչպես տեսնում ենք, դեռ շնչեղացած է հատկապես ընդ-ով կազմված մի բանի բառերի մեջ, իսկ բազմաթիվ այդպիսի կազմութիւնների մեջ մնում է անփոփոխ, ինչպես՝ ընդարմանալ, ընդգծել, ընդգրկել ընդդէմ, ընդդիմախոս, ընդդիմանալ, ընդելուզել, ընդգնահատ, ընդեւերչա, ընդլայնել, ընդլուսեայ, ընդծովա, ընդմիջա, ընդմիջարկել, ընգամի, ընդօտ, ընգվզել և այլն:

Գ-ն ե-ից հետո խուլ շնչել է դառնում միայն սեզամ բառում: Մամբ.— Արարատյան խոսվածքներում հակառակ դործընթաց ենք տեսնում՝ ե-ից հետո խուլները ձայնեղանում են, օրինակ՝ ընկեր, ընկենի, ընծա, ընտել և այլն արտաբերվում են ընգեր, ընգենի, ընծա, ընդրել, որոնք մասամբ անցնում են գրական արտասանութիւնը: Բայց այդպիսի արտասանութիւնը բարբառային է և մերժելի:

Ղ-ից հետո ձայնեղների խուլացում է լինում հետևյալ բառերի մեջ, որ պետք է բացատրել մասամբ դ-ի խուլացման ազդեցությամբ. աղբ, եղբայր, աղբյուր, ողբ, աղբիկ, դաղձ, դեղձ, խեղդիկ, կողբ, հնչում ենք՝ ախպ, էկապայր, ախպյուր, սխպ, ախլիկ, դախց, դիխց, կոխպ, խիխտել: Մնացած բոլոր բառերում ձայնեղները պահպանում են ձայնեղութիւնը. օրինակ՝ աղբամուղ, բաղդառել, բաղձան, սղջախոն, բողբոջ, գաղջ, գեղգեղանք, գեղձ, գեղցուկ, գեղցկալան, գեղջկամի, ողջ, դեղձանիկ, դեծձն, հեղզ, հեղձամզնուկ, սեհող-դողդ, մաղձ, շաղգամ, շեղջ, փղձկալ, եղջերու, եղջյուր, գզջալ, շղջիկ և այլն:

Մամբ.— Գեղջկական, գեղջկունի, դեղձանիկ և այլ բառերի ձայնեղների խուլ հնչումը հնացած է:

Մ-ից հետո բ-ի խուլ շնչեղացում նկատվում է հետևյալ բառերում. համբուր, համբուրել, համբերել, Մամբեն և սրանցից կազմված բառերում:

Բ-ն մի շարք բառերում դարձել է ո. օրինակ՝ երեսուն, Բաֆֆի, բարբառ, մումուռ, սարսուռ, մարմար, բրբուր, կարկառ, մարա, պարա, սիրա, աբշ, բարձ, վերջ, կարգալ, աճակ, մարդ, որդ, առձար, առձիվ, կրձել, մորքի, սարց, կարե, կրեատ, քրջել, ֆուրդ, ցուրա, մուրա (մրտենի), կորդ, խորդ (խորդենի), հարդ, խորբ, առ-

դի, ադդի և այլն, որոնց մեջ սակայն բ-ի ո հնչումը թույլ է, ավելի շուտ դա բ-ի և ո-ի միջին մի տարբերակ է:

Իսկ խարսիկ, փեռեւել, օստոդ, ամպրոպ, բառերի մեջ բ-ն ո-ը հնչելը գուհական արտաբերութիւնն է և գրական լեզվի հետ կապ չունի:

ա) Հ ն յ ու ն փ ո խ ու թ յ ու ն բառակզրում

§ 174. Բառակզրում հնչյունները ավելի ուժեղ են հնչվում, քան բառամիջում ու բառավերջում. այդ է պատճառը, որ բառասկիզբը իր հնչյունափոխական յուրահատուկ օրինաչափութիւններն ունի: Ամենից առաջ ելենք, որ ձայնեղ բաղաձայնների խուլ շնչեղացումը բառակզրում տեղի չի ունենում, մինչդեռ, ինչպես տեսանք, բառամիջում ու բառավերջում հնչյունափոխական այդ երեք վույթը դեռևս առկա է:

Բառակզրի հնչյունների ուժեղ արտաբերութիւնը պետք է վերադրել նաև պարզ ձայնեղների շնչեղացումը, որ գրական լեզուն մերժում է իբրև բարբառային երևույթ: Այս երևույթը հատուկ է ոչ միայն բարբառներին, այլև ողջ հայերենին: Արդեն ենթադրութիւնն է, որ գրաբարը բառակզրում տնեցել է միայն շնչել ձայնեղներ. պարզ ձայնեղները միայն բառամիջում ու բառավերջում են եղել, ինչպես որ դրանք այժմ այդպես են բազմաթիվ բարբառներում ու խոսվածքներում:

Բառակզրին է միայն հատուկ երկու բաղաձայնից առաջ կամ առաջին բաղաձայնից հետո ջ արտաբերելը. օրինակ՝ ըստհալ, սրցալ:

Ձայնների բառակիզբը, իր յուրահատուկ հնչական վիճակին համապատասխան, ունեցել է մի շարք հնչյունափոխական իրողութիւններ: Հին յ ձայնորդը փոխվել է ե-ի: Այս հնչյունափոխական դրսեցումը հասել է իր լիակատար ավարտին. օրինակ յստակ, Յովհաննէս, յարգել, յիշատակ և բոլոր նման բառերի յ ձայնորդը բառակզրում փոխվել է ե-ի, իսկ բառամիջում և բառավերջում այդպիսի հնչյունափոխական վիճակ չենք տեսնում:

Բառակզրին է հատուկ, ինչպես ասացինք, յ կիսաձայնի առաջացումը ե-ից առաջ և վ ձայնեղ շփականի առաջացումը ո-ից առաջ:

Բառակզրում ձայնավորների ուժեղ արտաբերման հետևան-

բով հայերենում սկսված է եղել հ-ի առաջացում. օրինակ՝ բարբա-
սային ու>հուս, էբուց-նէկուց, ամոլ-համոլ, իջնել-հիջնել և այլն:
Այս հնչյունափոխությունը իր հնորբերը թողել է նաև զբակյան
լեզվում. այժմ ունենք հուեզ (ուեղիջ), հոբ (որթ-ից), հարս (ա-
րու-ից), հարհել (ագանել-ից):

բ) Հնչյունափոխություն բառամիջում

§ 175. Բառամիջում հնչյունների ունեն իրենց յուրահատուկ
արտաբերությունը, որը պայմանավորվում է երկու կողմից շրջա-
պատող հնչյունների հատկություններով. օրինակ՝ հայերենում
ձայնավորների մի այլ ձայնավոր հաջորդելիս՝ երկու ձայնավոր-
ների միջև չ ձայնորդ է առաջանում: Սա վերաբերում է ոչ միայն
այն բաներին, որոնց նախապես չ ունեցել են. օրինակ՝ ծառայ-
ծառայի, այլև այն բաներին, որոնք բնավ չ—ունեն. Սախ-Սախ-
ի, Մարո-Մարոյի, արու-արուի (հնչում ենք արուի), Բաֆֆի-
Բաֆֆիի (հնչում ենք Բաֆիի):

Մինչև իսկ օտար բաների մեջ այս յ-ի առաջացումը մեր լեզ-
վում պարտադիր է. օրինակ՝ Մարիետայի, Տասույի, ամերայի
և այլն:

Այդպիսի չ չի առաջանում միայն բարդ բառի կցույթում, ուր
ձայնավորները արտաբերվում են առանձին-առանձին. օրինակ՝
ամենախիստուն, ամենաուրալս:

Բառամիջի հնչյունափոխական յուրահատկությամբ է բացա-
ռվում մե՛հ, գնամ՛, բիրեմ՛, գելա՛մ ձևերի՛ մե՛հ, գնա՛ն, բե-
րե՛ն, գրի՛ն փոխվիլը, որ բաղաձայններից առաջ հ-ի առաջա-
ցում է նկատվում (համեմատիր. խորով-խորունկ, խորուց (խո-
րու-ից փար-փանք, մեծ-մեծն):

Բառամիջում նկատվում են որոշ հնչյունների արտաբերական
թուլացումներ, ուստի և անփո՛ւմ. օրինակ՝ արճամարհել, արհեստ,
մեծահարգա (հնում յարգոյ), անհաստակ և այլն: Այդ բաները
հնչում են առ(հ)ամարել, արեստ, մեծարգո, իսկ անհաստակ բա-
ռը ժողովուրդը դարձրել է հանատակ: Այդ նույն ձևով՝ հարգիլ >
անարգիլ:

Բ-ի անկում է նկատվում բառամիջում ս, գ, ժ, զ, ց, շ, ք բա-
ղաձայններից առաջ. օրինակ՝ փրջի՛ն-փալի՛ն, խաշել-խաշել,
ֆաշել-ֆաշել, խորհել-խոն:

Բառամիջում ունենում ենք նաև բաղաձայնի ավելացում, հա-
մարել-համարել, ծուճ-ծուճը, խամել-խամել-խամրել և այլն:
Այս ձևերը գրական լեզվում մերժելի են:

գ) Հնչյունափոխություն բառավերջում

§ 176. Բառավերջում հնչյունների արտաբերությունը թուլանում
է, և այդ պատճառով որոշ հնչյուններ անհետանում են: Մեր լեզուն
ձայնավորով վերջացող բառ չի ունեցել. բոլոր ձայնավորները
վերջում փակվել են մի այլ հնչյունով. ի և ու ձայնավորներից հետո
կազմ չ հնչյունը V դարում արդեն ընկած էր. գարիլ, կատույ
արդեն դարձել էին գարի, կատու, իսկ և և ո ձայնավորներից հե-
տո յ-ն ընկավ ավելի ուշ, ծառայ, աստուծոյ գործան ծառս, աս-
տուծո: Այս վերջահար յ-ն ընկավ միայն միավանկ բառերի կեր-
բից: հոյ, գոյ, եոյ, բոյ, հայ և այլն: Իսկ ի-ով և ո-ով վերջացող
միավանկները վաղուց արդեն զցել էին այդ վերջահար հնչյունը:
Բառավերջում ընկել է ոչ միայն այդ փակող հնչյունը, այլև պատա-
հում է արմատական հնչյունների անկում. օրինակ՝ կարասի, անդի
բաների վերջին ի-ն մնացել է միայն յուրահատուկ կիրառությամբ.
կանկարասի, անդի տալ: Իրենց սովորական կիրառությամբ այդ
բաները ի-ն անհետ կորցրել են՝ կարաս, անդ:

Այդ նույն բառավերջով է բացատրվում և-ի անկումը մովկն,
ծովկն, զուռն, գունն, մասն, ձնան, գունն և մի շարք այլ բաներում,
որ իր հետ չբացրել է նաև դադանավանկի ր-ն:

Մեր գրական լեզվի՛ ըզձական կամ ժխտական դերբայը մոտ
60 տարի առաջ վերջավորվում էր լ-ով: Այդ լ-ի անկումը, որ արդեն
այն ժամանակ օկվել էր, համարվում էր ոչ գրական: Այժմ այս
լ-ն անհետ չբացել է. չեմ գրիլ, չեմ կարգալ դարձել են չեմ գրի,
չեմ կարգա (բարբաններում հակառակ շարահասություն մեջ լ-ն
մնում է՝ կարգալ չեմ, գրիլ չեմ):

գ. փոփոխությունները շեքսոնաֆոնետիկայում

§ 177. Փոխազդեցական հնչյունափոխությունը հնչյունափո-
խական այն երևույթն է, երբ մի հնչյունի կործան ազդեցությամբ
մի այլ հնչյուն փոխվում է՝ առնմանվելով կամ տարբեմանվելով ազ-
դեցությունը գործող հնչյունին: Հնչյունական այսպիսի փոփոխու-

Քյան ենթակա են բոլոր լեզուները: Գրավոր խոսքը հաճախ այդպիսի փոփոխությունները սքրագրում ու վերացնում է՝ թույլ շտալով, որ այդ փոփոխությունները բոլոր պարագաներում օրինակաչափուն ձևերը բերեն: Սակայն փոխազդեցական հնչյունափոխության ժամանակ երբևէն փոփոխությունները անկախ մեք կամքից ու ցանկությունից են կատարվում: Ճիշտ է հաճախ զրանք զրուքյամբ լին ամրագրվում, բայց հնչական փաստը աններծելի է դառնում: Օրինակ՝ յ, ե, ի հնչյունների ազդեցությամբ մեր բաղաձայնները մասամբ փափկանում են: Այդ փափկացումը տեղի է ունենում առանց մեր կամքի ու ցանկություն: Եթե մյուս բաղաձայնների վրա այդ ազդեցությունը այնքան զգալի չէ, ապա կ, գ, ք հստակ լեզվալին պայթեցականները, ի, յ, ե հնչյուններից առաջ այնպես են փափկել, որ ամեն ականջի էլ զգալի է: Թնդային մ, ն ձայնորդների մոտ ձայնավորների աննշան ռեզակություն է առաջանում, որ սակայն անզգալի է. երբևէն բառը հնում դարձել է երեխա՝ այսինքն միջին ա-ն նախորդ ե-ի ազդեցությամբ դարձել է ե. այս ե-ն այլևս այլ փոփոխության զրական լեզվում չի կարող ենթարկվել, շնայած ենթակա է վերջին ա-ին նմանվելու և նախորդ ե-ից տարևմանվելու հնարավորություններին: Ահեհայտորեն ծան արմատը դարձել է եան. *ծանաչեմ > նաեաչեմ: Սրանք և՛ զրարարում և՛ հայրենի բոլոր ճյուղավորումներում ամրագրված են արդեն: Հնարավոր է, որ բարբառներում ե-ն, կամ ծ-ն հաջորդ շ-ի ազդեցությամբ փոխվի, բայց զրական լեզվում այդ անկարելի է: Փոխազդեցական հնչյունափոխությունների մեջ ենք դնում հետևյալները:

ա) Գրափոխություն

§ 178. Բանավոր խոսքի մեջ շատ տարածված հնչյունափոխական մի երևույթ է սա, երբ որով հնչյունների բառի միջից կամ վերջից առաջ են թուշում: Գրելիս էլ հաճախ այդ երևույթը նկատում ենք: Բառի վերջին հնչյունների մտապատկերը ավելի շուտ է զարթնում մեր մարտը, քան որ իր տեղում անտը է զարթնիքը և հենց այդ պատճառով վերջին հնչյունները պետք են թուշում: Օրինակ՝ բանալի-բալալի, սպիտակ-սպիտակ, անձրև-անձվեր և այլն: Այժմ

զրական լեզուներում այդպիսի հնչյունափոխական երևույթները չեն կարող օրինականալ, որովհետև դրավոր խոսքը վերահսկվում է: Եթե պատահում են նման երևույթներ, համարվում են սխալ և սղոզվում են՝ ընդհանրական տարածում չդառնելով: Բայց դրարարից ու բարբառներից մի շարք բառեր մեր նոր զրական լեզվին են անցել օրինակաչափուն ստացած. օրինակ՝ կրակն դարձել է կրուակ, կողով-կողով, բերիւ-բրիւսեղ, տարգալ-տրգալ-գղալ, արմակե-արմուկ, կապերու-կարպետ, բիկն-բիկեթ, կեկ (ընկենկ)—ենկլ, ձգել-զցել, խամլ-մալուխ:

Գրափոխությունը է առաջացել մեր զրական լեզվի պատճառականների հրամայականը՝ բարձրացա-բարձրացյր-բարձրացոր-բարձրացրալ, մեծացրալ, իշեցրալ և այլն:

Գրափոխության մի այլ տեսակ է նախատությունը (անտիցիպացիա), երբ հնչյունը առաջ է թուշում, բայց և մնում է իր տեղում. մտապատկերը վաղ է առաջանում, բայց իր տեղում կրկին զարթնում է: Մեր զրական լեզվում լավագույն օրինակ է օտիկ-տոտիկ: Ժողովրդական մեներեա, որ առաջացել է մերենա ձևից, ազամալե-անգամալգ, զոհանշ-զոհեմաշ:

Նախատության մի այլ ձև է հարատվությունը, կամ կրկնությունը, երբ մի հնչյուն իր տեղում հնչվելուց հետո հնչվում է մի անգամ ևս, այսինքն՝ ոչ թե առաջ է դալիս, այլ մտապատկերը շարունակվում է և բառ այդ մտապատկերի հնչվում է նաև հետո. օրինակ՝ կանաչ-կանանշ, ճանաչ-ճանանշ:

բ) Անմանություն (ասիմիլացիա)

§ 180. Անմանությունը հնչյունափոխական այն երևույթն է, երբ, հատկապես միևնույն բառի մեջ, մի որևէ հնչյուն ազդում է մի այլ հնչյունի վրա և ամբողջովին կամ որևէ հատկանիշով նմանեցնում է իրեն: Ըստ այդմ անմանությունը լինում է լրիվ և մասնակի: Լրիվ անմանական հնչյունափոխության օրինակներ են բոկիկ-բորիկ (կ-ն բառակերթի բ-ի ազդեցությամբ դարձել է բ), շարժ-ժամժ, շրջան-ցրջան-ցրջամ, զուժկալ-ժուժկալ, երախա-երխա, ոսկիր-ոսկոր, երգասիք-արգասիք:

Մասնակի անմանության ժիրում կարող են մտնել հնչյունական բուր հատկանիշները՝ այսինքն մոտեցումը կարող է լինել

բայ արտաբերության տեղի, բայ եղանակի (պայթականության, շփականության), բայ հնչյունության (խուլ, ձայնեղ), բայ սուլակա- նության, շղականության և այլն:

Բայ արտաբերության տեղի. փոզովակ-խոզովակ (շրթնային փ> հնչյունը փակ իս. սա միամասնակ բայ արտաբերական եղանակի նմանեցում է. պայթական փ> շփական իս, որովհետև դ-ն շփական է): Բայ տեղի առնմանություն է ստամանակեղվային և-ի շրթնային մ գտնալը բ-ի առնմանությամբ. անձանք-անձամբ, մասանք-մասամբ, բնորոնե-բնորոնե-բնորոնե, նաեպարհ-նաե- պա-նաեպա-նամպա և այլն:

Բայ հնչյունության. գոգել-սոգել (խուլ Բ-ի առնմանությամբ գ ձայնեղը դանում է խուլ ս), գրիպե-սլոպիկ, սկիս (սկսել)- սկիզբ (խուլ ս-ն ձայնեղ բ-ի առնմանությամբ դանում է գ):

Բայ սուլականության և շղականության. ծանշել-նաեանշել (շ-ի շղականությամբ սուլական ծ-ն դանում է շղական և):

Առնմանությունը լինում է առաջինաց և հետընթացը երբ առ- ջին հնչյունը ազդում է հետևի հնչյունի վրա, տեղի է ունենում ա- ռաջընթաց առնմանություն, իսկ երբ առջին հնչյունը փոխվում է հետևի հնչյունի ազդեցությամբ, առնմանությունը հետընթաց է. օրինակ բոկիկ-բորիկ առաջընթաց է, իսկ գոգել-սոգել՝ հետըն- թաց:

Առնմանությունը լեզվի հնչյունակարգի կազմավորման պատ- մական զարգացման մեջ մեծ դեր է կատարում և վերջնական կար- զավորման է ենթարկում: Այսպես՝ ս, շ հնչյուններին հայերենում հաջորդում է միշտ իւլը բարձապան. խիտ, խոտանալ, հաստ, հասկ, մաշկ, աշտարակ, միշտ, կորտ, հսկել, խոշտանգել, անշուշտ, կուշտ, փամփուշտ, զարտ, ասող, ասպարեզ, ասաված, ասառտ, աստ, հաշտ, պաշտել, նախշտ, ստանալ, երաժիշտ, վիշտ, պաշտ, զավիշտ և այլն: Իսկ գ-ի հաջորդում է ձայնեղ բաղաձայն. ազգ- ազգ, ազգը, կազդուրվել, զգալ, զգույլ և այլն:

Մի հին առնմանական օրինակաբանությամբ հայերենի բառա- վերջում ի-ին զերպանցապես խուլ կամ շնչեղ խուլ պայթական է հաջորդում. օրինակ՝ խեճի, կենիք, առիք, մտտիս, կիր, միտ, վիր, խիտ, գատիկ, հատիկ, ծաղիկ, ակաճակիտ և այլն:

Հին է (այժմ է)-ին հաջորդում է ձայնեղ. սեզ, մեզ, եղեզ, սեզ, տեզ, և այլն: Բայց ե-ին հաջորդում է խուլ. երեւ, երեւ ամենու- ռեւ և այլն: Այս վարկանքը կարելի է բազմապատկել:

դ) Տարեմանություն (դիսիմիլացիա)

§ 181. Տարեմանությունը հնչյունափոխական այն օրինակա- փոխությունն է, երբ, ի հակադրություն առնմանության՝ նման հնչյուն- ները, միմյանց վրա ազդելով, տարեմանվում են, կորցնում են նմանության հատկանիշները լրիվ շփումով կամ մասնակիորեն: Այս դեպքում ևս ունենք առաջընթաց և հետընթաց տարեմանություն- ներ:

Ինչպես առնմանությունը, այնպես էլ տարեմանությունը դրա- կան լեզվում վերահսկվում է և չի կարող օրինականության վերած- վել: Գրական լեզվի համար այս հնչյունափոխությունները զուտ պատմական արժեք ունեն, իսկ խոսակցական լեզվում օրանց դոր- ծնթացը միշտ ուժի մեջ է: Գրական լեզվի համար նոր օրինակներ հնարավոր է ցույց տալ, ուստի պետք է դիմենք այնպիսի օրի- նակների, որոնք հնից կամ բարբառներից են գալիս. այսպես՝ մե- ցանց (ցեց) զբաբաբան բառը դարձել է մեծամեծ. բարբառային բարբոշ բառը դարձել է բորփոշ, այսպ թրփոշ, մղկ բառը բար- բառաներում դարձել է մոկղ, ապշտակ-ը՝ ապշտակ (խաղողի թու- վիլ, ցաղունները), շինուկ-ը՝ շխուկ-շտուկ, սերկ-սարկ, շաղ- գամ-շողգամ:

զ) Համարանություն (անատոմիա)

§ 182. Համարանությունը հնչյունափոխական այն երևույթն է, երբ առնմանությունը կատարվում է ոչ թե միևնույն բառի, այլ ի- բար հին համախոս գործածվող տարբեր բառերի և բոլոր բերական- նական ձևերի սահմաններում. օրինակ՝ զբաբաբի ու խոնարհման վերացումը արդյունք է համարանության: Գրեմ, սիրեմ, եղեմ, հաստեմ, զտանեմ, զտանեմ բայերը այնքան շատ են լեզվի մեջ, որ սրանց համարանությամբ առնում, բազում, արգելում և ու խոնարհման մյուս բայերը հետագայում վերածվեցին է խոնարհման բայերի՝ դարձան առնել, բազնել, արգելել և այլն:

Թերեւս համարանության արդյունք է դրարարի ու խոնարհման վերացումը, որ մնացել է միայն մի բառի համար՝ գու:

Այլան, անկյան ձևերը սրտի, բաժնի, ժամանակի և ի հոլովման բազմաթիվ բառերի համարանությամբ այժմ սկսում են դառնալ

արյունի, անկյունի, իսկ կորյան, պեր, եղբեր ձեռքը վաղուց արդին դարձել են կորյունի, պյուտի, եղջյուրի:

Համարանության արդյունք են բարդ բաների անկանոն կազմութիւնները. ունենք դաբեռ, հարգեալ, ծաղկեկոնուց, հաշվատար, հաշվեափություն, որոնք պետք է լինեին դաբալուր, հարգափոր, ծաղկափունջ, հաշվատար, հաշվատափություն: Եւստորը ե-ով ձեռքը աստացանի են հագեռ, սղեռ, պլեռ, կարեռ և նման ձեռքի համարանությամբ. սրանց ե-ն օրինաչափական է, իսկ նախորդների ե-ն արդյունք է համարանության:

Բարրաններում ավելի հաճախ է գործում համարանությունը. աստ-ը կոնդ-ի համարանությամբ դարձել է ասդ, յոպ ու մեդր գանձում է յեղը ու մեդր, Հիսուս-Քրիստոսը դանձում Հիսուս-Քրիստոս, հունվար-ը փետրվարի համարանությամբ դանձում է հուն-բովար, իսկ սեպտեմբեր-ը՝ սեկտեմբերի (դեկտեմբերի համարանությամբ), ցած-ը դարձել է ցածր բարձրի համարանությամբ: Գարձալ պետք է շեշտենք, որ դրական լեզուն վերահանում է մերժում է նման երևույթները:

ե) Տարբանություն

§ 183. Համարանությանը հակառակ երևույթ է տարբանությունը, որտեղ նման հնչյուններ կամ հնչյունախմբեր իրար հետ հաճախ դորժածովոյ բաների սահմաններում տարեմակում են: Ամենից լավ դա արտահայտվում է կրկնութեան մեջ. փառո՛ր-փառո՛ր դանձում է առո՛ր-փառո՛ր, քալալ-քալալ տալիս է ավալ-քալալ:

Երբևէն տարբանութեան հետևանքով նոր բառ է առաջանում. սղատա (սղաշ-ից) պղղատ տարբանությամբ աստացանի է պղղատ, պղղատել նոր բառ: Ըստ պրոֆեսոր Գափանցյանի ուսուրբառը աստացանի է դուստր-ից կրկնական տարեմանությամբ:

Այդպիսի են աստացանի բողբոջ՝ բոլ բոլ-ից, խոխոջ՝ խոջ խոջ-ից, դողդոջ՝ դոլ դոլ-ից, բարբառ՝ բառ բառ-ից, կարկաշ՝ կաշ կաշ-ից, կեկոն՝ կոն կոն-ից, որից նաև՝ կոնգում-ը:

զ) Ամփոփում (Հասկացողիս)

§ 184. Փոխազդեցական հնչյունափոխութեանն է պատկանում նաև ամփոփումը, որ Անատլանը կոչում է արաբարանություն. այս

այն երևույթն է, երբ միևնույն բառի մեջ նման վանկերից մեկնում կը սղվում, վերանում է: Սա տարեմանական երևույթ է, միայն այն դանազանությամբ, որ վանկերից մեկը վերանում է և ոչ թե փոխվում ուրիշ վանկի, ինչպես որ տարեմանութեան դեպքում նման հնչյուններից մեկը կորցնում է իր նմանողական հատկանիշը կամ ձևնում. այսպես՝ ճարտարաբան դարձել է ճարտասան, կինամաման-կինաման, օտարացի-օտարցի, աղապատարան-աղապատարան, աշխարհահայացի-աշխարհայացի, ամպարաճ-տավարճ, Մարմարաշեն-Մարմարաշեն, շուկայային-շուկային, այցելելու-այցելու, հասարակակարգ-հասարակարգ և այլն:

Վերոբերյալ օրինակների մեջ կանոնադրապես նման հնչական զույգ միավորներից (ար, մո, որ, ան, հա, ի, ակ) մեկը սղելվում է: Բայց ամփոփում է լինում նաև մեկ կամ մի քանի հնչյունի սղումով, երբ բառի մեջ կա նման ձայնավորների ու բաղաձայնների կուտակում. օրինակ՝ տասարակ-տասարակ, լալական-լալական, օտարան-օտարան, ջրհողան-ջրողան-ջողան, փեսայացու-փեսացու, կարսայավար-կարսավար, աննանվեր-անննվեր, տապի-տափ, կլուտայուն-կլություն, արեգալություն-արեղություն, որոնցից մի քանիսի ամփոփումը կարելի է բացատրել բառի երկարությամբ. օրինակ՝ սպասաճարհիկ-սպասարհիկ, կարսայավար-կարսավար և այլն:

Ամփոփումը սակավ դեպքում բարդ զրկում է երկու կամ ավելի վանկերից, օրինակ՝ ծործորակ-ծածրակ, մեղվանայշ-մեղույշ, փեսայանրավեր-փեսավեր և այլն:

Այս երևույթը ևս հատուկ է խոսակցական լեզվին, որից որոշ հնչյունափոխված ձեռք անցել են գրական լեզվին:

կ) Արտակարգ հնչյունափոխություն

§ 185. Արտակարգ հնչյունափոխութեանը մտնում է ամփոփմանը, բայց ամփոփում չէ այնքանով, որքանով որ տարեմանութեան երևույթ գոյություն չունի: Արտակարգ հնչյունափոխությունը ունի հոգեբանական հիմունք. երբևէն երկար բառը կամ նույն ենք կարճացնել շուտ ավարտելու համար. երբևէն բառը լրիվ արտաբերելու կարիք չի լինում. խոսակիցը հասկանում է, և ավել

լորդ ենք համարում կամ ջանք չենք թափում լրացնելու. երբեմն կրճատումք արտահայտում է զգվական, փաղաքշահան իմաստ, որ անպայման կամենում ենք բառի մեջ դնել: Այսպիսի հնչյունափոխություն կատարվում է կրտական բառերի, հաճախ կրկնվող բառերի ու նախադասությունների, հատուկ անունների մեջ, որոնց երկար հնչյունաշարքից հաճախ մի բանի հնչյուն է մնում. օրինակ՝ զորքար աղուհացուն մի՛ տաք զարձակ է ազգմի (շարական, որ մեծ պահքին չի առվում). Ես ինչ իմանում-եկիմ, պե՞տ է երբամ-տերբամ, Ասովածատուր-Ասուուր-Սատուր, Գրիգոր-Գրիգ, Ստեփանու-Սեփո-Սեփան, եղի-սարեր-եղտ-եղիս-Սարեր, Իգարելլա-Ջարո-Ջարել, Շուշանիկ-Շուշիկ, Աբխաակես-Աբխա-Ռոսա-Ռոսակ, ցոեսություն-ցր և այլն:

բ) Բազարկություն (կենտամիևացիա)

§ 186. Երկու տարբեր, բայց իմաստային մոտիկություն ունեցող բառերի խառնակումով երբեմն բառը փոխում է իր հնչյունական կերպարանքը. այսպես՝ լար և պարան բառերի խառնակումով ստացվել է լարան, հեսան և լեսել (մանրել, հղկել) բառերի խառնակումից ստացվել է լեսան, կեեպ և կլեպ ավել են կլեեպ:

թ) Միավանկ բառերի հնչյունափոխությունը

§ 187. Արտահարզ հնչյունափոխության հակադիր մի երևույթ է միավանկ բառերի հնչյունափոխությունը, երբ միավանկ բառի վրա նոր հնչյուն կամ վանկ է ավելանում սղումից, կրճատումից այն պաշտպանելու համար:

Գրաբանում միավանկ բառերի անցյալ կատարյալի հիմքից կազմված ժամանակներում սկզբից և էր ավելանում (ձայնավորից առաջ՝ է). օրինակ՝ հառ (կտրեց)—և հատ, զիտ (գտավ)—և գիտ, արկ (զցեց)—և արկ, տու (տվի)—և տու, դից (կղեմ), զնկու (ն)—եղից և այլն:

Համեմատական քերականության սովյալներով դառն, սերմն, կարն, եզն, ձնն և այլ միավանկ բառերի բն, վրն վանկերը հա-

վելագրություն են. զոանց արմատներն են սեր, կար, եզ, ձն (ձեր-բակախի) և այլն: Այդ վանկերը ավելացել են բարբ ավելորդ կրճատումից զերծ պահելու համար:

Նույնիսկ այսօր, երբ այդ հին հավելվածները ընկել են, որոշ միավանկ բառեր շարունակում են ր-ն պահել, համեմատաբար սառը, դառը, խառը, տառը, իճը, նույնիսկ՝ լոբը, խոբը: Խոսակցական լեզվում հանդիպում են նաև սիեզը, վեցը, ուրբը. որոնց ր-ի հավելումը միավանկության արդյունք է (հինգը տղա, ուրբ ճոզի, չուր սաղ):

ժ) Պարտադրված հնչյունափոխություն կամ ժողովրդական ստուգաբանություն

§ 188. Թե շեշտի հետ կապված, թե մյուս դիրքերում, նաև փոխազդեցական հնչյունափոխությունները խարսխված են լեզվի ներքին օրենքների վրա. դրանց հիմքը լինի հոգեբանական, թե բնական և բնախոսական, միևնույն է, հողը լեզվական է, շնչած այդ ամենը կատարվում է խոսողության գործընթացում խոսողի կողմից: Սակայն կան հնչյունափոխական շնչավոր երևույթներ, որոնք լեզվին պարտադրվում են խոսողի կողմից: Այդպիսի հնչյունափոխությունները լեզվական հող չունեն, դրանք պարտադրված հնչյունափոխություններ են, որոնք խոսողը կատարում է զիտուլյամբ կամ անզիտուլյամբ: Այդպիսի հնչյունափոխություն է ժողովրդական ստուգաբանությունը:

§ 189. Ժողովրդական ստուգաբանություն.— Հաճախ բառը կիրառության գործընթացում ենթարկվում է իմաստային խամրումի: Սրա հիմնական պատճառը բառի կիրառության ոլորտի նեղացումն է. ազատ կիրառության ոլորտում բառը մեղմում է, մեղմում է միայն սահմանափակ դարձվածքներում, նույնիսկ մի դարձվածքում: Խոսվածքում կա մի կապակցություն՝ բուն սպիտակ՝ ասվում է միայն մազերի մասին: Բուն բառը հնում նշանակել է կիր: Գործածություն հիմնական ոլորտից դուրս գալով՝ բառիմաստը մեղմել է: Այժմ բուն բառը ժողովրդորդ կապում է բուն (ձևերի փոխ) բառի հետ: Եթե բուն (ձևերի փոխ) բառը մի փոքր այլ ձև ունենար, նախորդ բառ-ը (կիր) կնմանեցվեր հարցորին. ինչպես որ ունենք հետևյալ օրինակում. Երազարույց բառը ժողովրդական խոսվածք-

Ներում դարձել է Երզրույս. յոյց հին բառի (վառնց) իմաստը ժողովուրդը՝ շահականալով զարձրել է իրեն հասկանալի՝ լույս: Առանձին խոսվածքներում եռ առլ նշանակում է կրակով զոզել. եռ-ը զբարբարի յեռ բառն է, որ նշանակում է միացնել, զոզել: Այս բառի իմաստը նույնպես չի գիտակցվել, այլայպես յեռ-ը պիտի դառնար հեռ է ոչ թե եռ, որ կապվել է եռալ բառի եռ հասկանալի արմատական բառի հետ, որ շատ զործածական է: Այդպես էլ կանել (ծծեճել) բառը դարձել է կալսել (կապվել է կալ բառի հետ), արզուկ-ը՝ հարբուկ, նորաուս (նորատուր)՝ նորադուզ (ուս-տուր շահականացվեց, կարծվեց դուզ), Տալուզը՝ Քովուզ (սիրամարդ), զործուղել-ը հանախ դարձնում են զործուղել, վարկարելի՝ վարկարելի, արձագանց՝ արձագանք (օրինականացված է), զանցարարություն՝ զանցադուրյուն (օրինականացված), առկետում՝ դարձվում է առեկետում, խաղալի՝ խաղալի (օրինականացված) և այլն:

ժողովրդական ստուգաբանության նման է գիտական սխալ ստուգաբանությունը, որ բառը նույնպես հնչյունափոխում է երբեմն օրինականացնում է. օրինակ՝ մուղղուսի արարերեն բառը դարձել է մամեմսի, գրամատիկոս՝ գրամարտիկ, հունարեն օրգանո-ը (նվագարան) զարձել է երգնոն, կամ՝ երգիոն¹:

¹ ՏԵ՝ 2. Ամուրյան, կախատար քեր. հայոց լեզվի, հ. 6, էջ 734:

Բ Ա Ո Ս Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

§ 190. Լեզվի համակարգի մեջ մտնող բառերի ամբողջությունը կազմում է լեզվի բառային կազմը, բառապաշարը:

Լեզվաբանության այն բաժինը, որը զբաղվում է բառերի, բառիմաստների և բառապաշարի քննությունը, կոչվում է բառագիտություն:

Բառագիտության (ենդ առուժով) քննության մեջ են մտնում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ բառը իրեն բառային կազմի իմաստակարգ միավոր, բառիմաստը, բառիմաստի տեսակները, բառի իմաստային կապերի համակարգը՝ բառի ներքում և բառերի միջև կամ մեկ և մի քանի բառերի մակարդակում, բառիմաստի փոփոխությունները, բառի իմաստային խմբերը, ոճական պատկանելությունները, բառապաշարը, նրա ակտիվ և պասիվ շերտերը, բառային կազմի զարգացման ու հարստացման ուղիները և այլն. կարճ ասած՝ իմաստաբանությունը, բառապաշարը և բառակազմությունը: Առավել լայն առումով բառագիտության մեջ մտնում են նաև զարձվածաբանությունը և ստուգաբանությունը:

ժամանակակից հայերենի բառագիտությունը քննում է բառերի կառուցվածքային, իմաստային և բառապաշարային հարցերը համաժամանակյա (սինխրոնիկ) կտրվածքով:

Բառի բնորոշումը

§ 191. Բառերի մեջ արտացոլվում է մարդու հասարակական և ճանաչողական փորձը, ժողովրդի պատմությունը, ժողովրդի մտածողությունը: Ի վերջո, բառի շնորհիվ է լեզուն իրացնում իր հաղորդակցական կարևորագույն դերը (զործառույթը):

Բառը լեզվական համակարգի այն միակ իմաստակիր միավորն է, որ մեր գիտակցության մեջ գոյություն ունի առանձնակի, ինքնուրույն կերպով, անկախ նախադասությունից, իրեն

առարկայի, երևույթի հատկանիշի և այլնի անկախ հասկացու-
թյուն:

Իրրև ինքնուրույն գործածություն ունեցող լեզվական միա-
վոր, բայց հանդես է դալիս ձևի և բովանդակության միասնու-
թյամբ: Յուրաքանչյուր բառ ունի իր ձևը (հնչույթականացմբ) կամ
արտահայտության պլանը և իմաստը՝ բովանդակության պլանը:
Ձև և իմաստ պարունակող լեզվական բոլոր միավորները գեո-
նա բառեր չեն:

§ 192. Լեզվի մեջ կան նաև ձև և բովանդակություն ունեցող
աչնպիսի միավորներ, որոնք առանձին, անկախ գործածությու-
ն չունեն, կախյալ միավորներ են և, բնականաբար, բառեր չեն. ալա-
պան, -արան, -ուրյուն, -որեն ամանցներն ունեն իրենց ձևը (հա-
մապատասխան հնչույթականացմբ) և իմաստը և զրգիլով գանգազան
բառերի ու արմատների վրա՝ նոր իմաստ են հաղորդում նրանց:
Այդպես էլ են, ուս, կար (կարողանալ): Հնչույթախմբերը
թեև ունեն ձև (արտահայտության պլան) և բնչհանուր, շտարբե-
րակված իմաստ (բովանդակության պլան), այսինքն արտահայ-
տում են ենթանալ, ուսանել (ուսում, ուսուցում և այլն), կարողա-
նալ բառերի բնչհանուր գաղափարը, սակայն վերահիշյալ ամանց-
ների (-արան, -ուրյուն, -որեն) նման կախյալ միավորներ են
և բառային իմաստ ու կոնկրետացում են ստանում բառերի մեջ.
ամանցները՝ բառերի և արմատների հետ գործածվելիս, իսկ ար-
մատները՝ այլ արմատների, ամանցների և բառերի հետ գործած-
վելիս: Սեղան, տուն, ծառ հնչույթախմբերը ունեն կայուն ձև և
տարբերակված բառային իմաստ ու դրա շնորհիվ առանձին,
ինքնուրույն գործածություն, հետևաբար անկախ լեզվական միա-
վորներ են:

Իհարկե, չի բացառված և այն, որ վերոհիշյալ ամանցներին
և արմատներին խոսքային միջավայրում կարելի լինի տալ առան-
ձին գործածություն և կոնկրետ իմաստ. օրինակ՝ «նա բոլորովին չի
օգտագործում -որեն ամանցը»: Սակայն որեն-ը այստեղ վերցված
է իբրև -որեն ամանցի անվանում:

§ 193. Բառի համար արտահայտություն և բովանդակության
պլանների (ձևի և իմաստի) միասնությունից և առանձնակի գոր-
ծածությունից, բացի, անհրաժեշտ է նաև արտասանական միա-
վորվածություն: Բառի արտասանական կողմի համար, բացի

հնչույթականացմբ, քնորոշ է նաև շեշտը: Յուրաքանչյուր բառ ունի
մեկ հիմնական բառային շեշտ:

§ 194. Բառի սահմանների որոշման գործում կարևոր նշա-
նակություն ունի բառի ինքնուրույն ձև ունենալու հանգամանքը:
Այսօրեւ՝ եթե մի կողմից են, կար, ուս, իմ (իմանալ) և այլ
արմատները իրենց ձևով և իմաստով (բնչհանուր, ոչ տարբե-
րակված) բառեր չեն, այլ կախյալ միավորներ են, քանի որ բա-
ռեր են դառնում մասնիկների և այլ արմատների հետ բաղադրվե-
լիս և կոնկրետանալիս, ապա մյուս կողմից, նախադասություն
ունեցած դերով քերականական մասնիկներին հարող մի շարք
անկախ միավորներ, ինչպիսիք են շարվապանները և կապիլը՝ բա-
ռեր են: Այդպես էլ բառեր են նաև նյութական իմաստ և քերակա-
նական զեք շունչող այնպիսի այնպիսի միավորներ, ինչպի-
սիք են ձայնարկությունները և եղանակավորող բառերը: Նշանա-
կում է բառի որոշման համար կարևոր առանձնահատկություն է
նաև նրա անկախ, ինքնուրույն գործածություն ունենալը:

Այսպիսով, բառ է կոչվում այն հնչույթ կամ հնչույթախում-
բը, որն ունի բառային իմաստ, անկախ, ինքնուրույն գոյություն
ու գործածություն և բառային շեշտով ձևավորված արտասան-
կան ամբողջություն:

Բոլոր բառերն էլ ունեն որոշակի իմաստ: Սակայն լեզվական
հատկաբանական և նախադասության մեջ ունեցած գործածությամբ
նրանք հարկապարհ և միատեսակ չեն: Նրանց մեծ մասը նյութական
իմաստ է արտահայտում, իսկ մի մասը՝ ոչ: Նյութական իմաստ
ունեցող բառերը հասկացություններ են արտահայտում, իսկ նյու-
թական իմաստ չունեցողները՝ ոչ:

Քանի որ բառերը արտահայտում են ոչ միայն արտաքին աշ-
խարհի առարկաների, երևույթների, հատկանիշների հասկացու-
թյուններ, այլև նրանց հետ կապված հարաբերություններ (կա-
պիլը, շարվապանները, գերանունների մի մասը) կամ վերաբերունք
հասկացությունների նկատմամբ (ձայնարկությունները, եղանա-
կավորող բառերը, հետևաբար, բայց նաև քերականական կամ
վերաբերունքային իմաստ արտահայտող լեզվական անկախ
միավոր է:

Մանր. — Այս հանգամանքը ի նկատի ունենալով, պրոֆ.
Ս. Արտահամարի հայերենի բառերը (խոսքի մասերը) հիշտ կե-
պով բաժանում է երեք խմբի՝ ա) էյուրական իմաստ արտահայ-

տող բառեր, բ) հարաբերություն (կամ փերականական իմաստ) արտահայտող բառեր և դ) վերաբերմունքային իմաստ արտահայտող բառեր¹: Առաջին խմբի մեջ մտնում են գոյականը, անականը, զերանունը, Բվականը, բայը և մակերայը, երկրորդ խմբի մեջ՝ շարվածականը, կապերը, երրորդ խմբի մեջ՝ ձայնադիտությունները և եղանակավորող բառերը:

Լեզվական մյուս բոլոր միավորները չեն կարող գոյություն ունենալ առանց այս ինքնություն միավորի՝ բառի, չեն կարող կազմել լեզվական համակարգ:

ԻՄԱՍՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 195. Իմաստարանության խնդիրն է քննել բառի ձևի և իմաստի (արտահայտության և բովանդակության սլանների) փոխհարաբերությունները, բառի իմաստային փոքրերը, բառի իմաստային կառուցվածքի փոփոխության ու զարգացման պրոցեսներն իրենց օրինաչափություններին մեջ և այլն:

Բառիմաստ և առակայական վերաբերություն

§ 196. Բառը այն ինքնակա միավորն է, որի շնորհիվ օբյեկտիվ աշխարհի առարկաներն ու երևույթները, այլև նրանց զանազան հարաբերությունները մարդու գիտակցության մեջ կոնկրետանում, ամբողջանում են և դառնում նրա սեփականությունը: Այն, ինչ գոյություն ունի ժողովրդի կյանքում, արտահայտվում է բառերով: Նշանակում է մեր գիտակցության մեջ բառերով են փոխարինվում ոչ միայն օբյեկտիվ իրականության առարկաները, երևույթները և նրանց միջև եղած զանազան հարաբերությունները, այլև նրանց մասին ունեցած մեր վերաբերմունքը:

Յուրաքանչյուր բառ իբրև որևէ կոնկրետ առարկայի, երևույթի անուն, նշում է տվյալ առարկան, երևույթը: Սակայն սա բառի միայն անվանողական դրժմություն (ֆունկցիան) է, որը բառիմաստի միայն մի կողմն է: Բառիմաստը չի նույնանում որևէ առարկայի, երևույթի հետ և չի օճմանափակվում այն նշլոգով: Յուրաքանչ-

յուր բառ իբրև առարկայի, երևույթի անուն, միաժամանակ ընդհանուր հասկացություն է, քանի որ յուրաքանչյուր բառ, իբրև այդպիսին կենթադրում է որոշ ընդհանրացում ու վերացում²: ալպին՝ բույս և կենդանի բաները չեն նշում որևէ կոնկրետ առարկա (ծառատեսակ, կենդանի), նրանք մեր գիտակցության մեջ ընկալվում են իբրև բազմաթիվ կենդանիների և բույսերի ընդհանուր հասկացություններ:

§ 197. Բառիմաստը (բառի քառային իմաստը) պատմականորեն զույգացած այն կապ է, որ գոյություն ունի բառի հնչյունակազմի, նրա հնչման և նրանով մարմնավորված ու մեր գիտակցության մեջ արտացոլված իրականության անարկաների, երևույթների, հասկանիչների ու հարաբերությունների միջև, որ ձևավորված է լեզվի նրականական օրենքներով:

Բառիմաստը գոչանում է մարդու աշխատանքային գործունեության ու ձանաչողության զարգացման պրոցեսում՝ հասարակական գիտակցմամբ:

§ 198. Բառը շարակարգային մակարդակում ունեցած զորժանույթով արտահայտում է որոշակի առարկայական վերաբերություն: Առարկայական վերաբերությունն այն կոնկրետ նշանակությունն է, որ ունի բառը տվյալ խոսքի մեջ, տվյալ գործածության մեջ:

Բառիմաստ և հասկացություն

§ 199. Օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների, նրանց զանազան հատկանիշների և միժանկերի հասկացությունները մեր գիտակցության մեջ դրսևորվում են բառերի միջոցով: Հասկացության զույգացումը կազմված է ձանաչողության պրոցեսում մտածողության և լեզվի կապի ու փոխհարաբերության, նրանց միասնության հետ: Բառի մեջ երկու կողմերը՝ հասկացական (կոնցեպտուալ) միջուկը և նրա լեզվական թաղանթը միշտ միասնաբար են ձանդոս գալիս (իբրև բառի իմաստ և ձև) և սլանմանավորված են մեկը մյուսով, երկուսն էլ արտահայտում են լրատարի առարկայական վերաբերությունը, բառի հարաբերությունը առարկաներին (անֆերենտներին): Սակայն հասկացությունը արժամարանական կատեգորիա է, որը հաղորդակցության մեջ ձև-

¹ ՏԼՄ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, 1969, էջ 30:

² ՏԼՄ է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1963, էջ 243:

վավորվում է լեզվական միջոցներով (բառերով ու բառակապակցություններով)։ Բառի լեզվական կողմը նույնպես նշում է միևնույն առարկան, ինչ հասկացությունը, սակայն զրա հետ մեկտեղ հասցեն է գալիս իբրև լեզվական կառուցորիս, «ուղղված է դեպի առարկան որոշակի լեզվի պրիզմայի միջոցով»²։

§ 200. Նշելով առարկան, երևույթը և արտահայտելով հասկացություններ նրանց մասին՝ բառը կատարում է (իրացնում է) իր անվանողական գործառույթը (ֆունկցիան), ուստի և այն անվանում և նշում է առարկաներն ու երևույթներն իրենց բազմապիսի կապերի և հարաբերությունների մեջ, որով և առավել է ընդլայնվում բառերի բառային նշանակությունը։ Բացի այդ, բառերի մեծ մասի համար բնորոշ է բազմիմաստությունը, այսինքն ուղղակի և փոխարբերական իմաստներ պարունակելը։ Նշանակում է, քանիմաստ իր առարկայական վիարբերությամբ տարբեր է լինում։

Բառիմաստի մեջ, բացի հասկացական միջուկից՝ մտնում են նաև այլ բազադրիչներ, որոնք պայմանավորված են լեզվական կարգի գործոններով։

Ասվեց, որ բոլոր բառերն անխոր ունեն բառային (տե՛ս § 194) իմաստ, այն տարբերությամբ սակայն, որ նրանց մի մասը անմիջականորեն է կապված առարկաների և երևույթների հասկացությունների հետ, իսկ մյուսը՝ ոչ։ Այսինքն՝ բոլոր բառերը չեն, որ արտահայտում են հասկացությունն։ Այսպես՝ ձայնարկությունները, կապերը, շաղկապները, կրճատկազարդ բառերը, դերանունների մի մասը, ինչպես և հատուկ անունները անմիջաբար անշույլում հասկացությունների հետ և, բնականաբար, չեն անվանում դրանք։ Նրանք հասկացությունների հետ կապված են անուղղակիորեն։ Վերջիններին իմաստային կառուցվածքի մեջ բացակայում է հասկացական միջուկի իբրև իմաստային բազադրիչ, զրա փոխարեն՝ առկա են իմաստային այլ բազադրիչներ։ Չունենալով հասկացական միջուկ՝ նրանք իբրև առանձին ինքնուրույն բառեր, ունեն բառային նշանակություն և հանդես են գալիս իբրև բառային կապի և բառարանային միավորներ։

§ 201. Հայտնի է, որ բառի իմաստային կառուցվածքը պայմանավորված է հնակալ կերպ գործոններով։

ա) Բառի անվանողական գործառույթով (ֆունկցիայով)։

բ) Մտածական (ինտելեկտուալ) բովանդակությամբ։

գ) Հարաբերական (ռելյացիոն) հատկանիշներով։

§ 202. Առաջին գործոնը կապված է բառի՝ արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների (դերնոտատների) հետ ունեցած վերաբերության հետ, ուղղակիորեն բխում է լեզվի նշանային բնույթից և, բնականաբար, ընդհանուր է բոլոր բառերի համար, ներառյալ նաև օբյեկտիվ իրականությանը շարժմանավորվող և նրանց հետ անմիջականորեն շանչվող բառերը։

§ 203. Երկրորդ գործոնը՝ մտածական բովանդակությունը կապված է օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների՝ մեր գիտակցության մեջ ունեցած արտացոլման և վերջինիս լեզվի մեջ ստացած կոնկրետացման հետ։ Այս գործոնը բառի հնչույթա-կապի կամ արտաքին ձևի տակ թաքցված և նրա հետ անխզելիորեն կապված ներքին՝ իմաստային կողմն է, նրա մարմնավորումը։ Հիշյալ գործոնը ունի երկու բազադրիչներ. ա) փակցական, բ) արտահայտչական-ոճական։

Բառիմաստի մտածական բովանդակության մեջ հանդես կկող հասկացական և արտահայտչական-ոճական բազադրիչները կապված են մտածողության երկու ձևերի հետ՝ արամարանական (հասկացական) և պատկերավոր (բանաստեղծական)։

Այսպեսով, բառերի հուղապարտահայտչական երանգավորումները սերտորեն առնչվում են մտածողության պատկերավոր ձևի հետ, մտնում են բառիմաստի մտածական բովանդակության մեջ իբրև բազադրիչ և, քնականաբար, մտնում նաև լեզվի համակարգի մեջ։

Բառիմաստի արտահայտչական-ոճական և հուղական տարրը հանդիսանում է իրականության զգացական, հուղեկան, կամային արտացոլումը մեր գիտակցության մեջ, նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքը, նրանց գնահատականը։ Բառիմաստի արտահայտչական-ոճական տարրը չորսբանալուր լեզվում տարբեր աղ-գային ինքնատիպություն ունի։

² Տե՛ս Գ. Բառայան, Փիլիսոփայություն և լեզու, 1972, էջ 4։

³ Տե՛ս Յ. Արքես, Современные методы изучения значений и некоторые проблемы структурной лингвистики, в сб. Проблемы структурной лингвистики, М., 1963, стр. 106.

Բառիմատի մտածական բովանդակության մեջ կարող են մտնել և՛ հասկացություններ առարկաների, երևույթների, զգացմունքների, հույզերի և կամային ազդակների մասին (ՏՃՄտ. աթոռ, սև, ծառ, դեղին, սեր, առևտուր, տխրել, սարսափ, թախիծ, հրաման, սուր, հեռացիր և այլն), և՛ զգայական ընկալումներ զրանց մասին (ՏՃՄտ. օճո՛, էճ՛ն, ա՛յ քեզ բա՛ն, ա՛խ, կեցցե՛ և այլն)։

Այսպիսով, բառիմատի մտածական գործոնի հասկացական բաղադրիչը առարկայական-արամարանական բնույթ է կրում, իսկ արտահայտչական-ձևական բաղադրիչը՝ զգացական (Հաղորդում է նախնական ինֆորմացիա), զրանք կարող են լինել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ, քանի որ մարդը բառերի մեջ արտահայտում է և՛ օբյեկտիվ իրականության առարկաներն ու երևույթները, և՛ իր վերաբերմունքն ու գնահատականը զրանց նկատմամբ, իր ներքին հոգեկան աշխարհը, իր զգացմունքները։

Անհրաժեշտ է նշել, որ բառիմատի արտահայտչական-ձևական բաղադրիչի կոնկրետ նշանակությունից բացի և անկախ զրանից, բառերի մեծ մասն ունի զգացական հարակից նշանակություն, կոդմեակի զգացական տոն՝ որը հանդես է գալիս կոնկրետ խոսքի մեջ և ունի գերազանցապես խոսքային բնույթ։ Այսպես՝ գնալ բառը իր ընդհանուր ուղղակի իմաստից բացի, որ ունի օբյեկտիվ բնույթ, խոսքի մեջ ապրելի հնչեղանքներով՝ կարող է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն արտահայտել, ինչպես՝ գնա՞լ (զարմանք, զայրույթ), գնա՛լ (անհամաձայնություն), գնա՛լ (հրաման, համաձայնություն) և այլն։

Այսպիսով, բառիմատը, ընդհանրապես ունի երկու կողմ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ։ Օբյեկտիվը բառի ուղղակի իմաստն է, որ պարունակում է բառը առանձին կերպով, իրեն տվյալ առարկայի, երևույթի ընդհանուր հասկացություն, իսկ սուբյեկտիվը բառի խոսքի մեջ ստացած իմաստն է, որ արտահայտում է խոսողի վերաբերմունքը տվյալ առարկայի, երևույթի նկատմամբ⁴։

§ 204. Բառի իմաստային կառուցվածքի Յ-րդ գործոնը կապված է բառի հարաբերական (ոնլյացիոն) հատկանիշների հետ, այսինքն, բառի բաշխման կամ իրացման հետ լեզվական համակարգում, Բառերի հարաբերական հատկանիշների մեջ են դասվում նրանց հաճախականությունը, կապակցելիությունը, լեզվի համակարգում ունեցած գործառույթը, ինչպես և տեղը լեզվի իմաստային և ձևաբանական համակարգում և այլն։ Այսպես՝ զոյականը կարող է հանդես գալ և՛ իբրև ենթակա, և՛ իբրև լրացում, և՛ իբրև ստորոգյալիական վերադիր և այլն։ Բառի հարաբերական իմաստները պայմանավորված են լեզվի ներհամակարգային հարաբերություններով։

§ 205. Յուրաքանչյուր բառ իր ընդհանուր իմաստով արտահայտում է քերականական իմաստ և կարգը Բառի քերականական իմաստը իբրև կանոն միշտ ուղեկցում է բառայինին։

Բառի քերականական իմաստը բառի այն ընդհանուր իմաստն է, որ հատուկ է ոչ միայն տվյալ կոնկրետ բառին, այլ բառերի մի ամբողջ խմբի, այսպես՝ զոյականների համար քերականական է նրանց ընդհանուր առարկայական իմաստը, ինչպես՝ շուր, սեղան, արոտ, գետ և այլն։

Ամփոփելով բառի իմաստային բարդ կառուցվածքի բաղադրիչների բնույթները, կարելի է ասել, որ բառի իմաստի մեջ արտացոլված մարդու տրամարանական, հոգեկան, կամային, զգացական կողմերը հանդես են գալիս միասնաբար՝ նրա աշխատանքային գործունեության և ճանաչողության զարգացման սրույնում։

Բառիմատի տեսակներ

Բառերի բառային իմաստները ըստ առարկայական վերաբերության, ընդհանրապես լինում են երկու տիպի՝

Հիմնական (գլխավոր) կամ ուղղակի իմաստ և անմեջալ կամ փոխաբերական իմաստ։

§ 207. Հիմնական (գլխավոր) կամ ուղղակի իմաստը լեզվի համաժամանակյա կորվածքում ունեցած այն կայուն իմաստն է, որ բառը արտահայտում է անկախ կերպով, իբրև բառարանային

4 Э. Сепир. Язык. Введение в изучение речи, М.—Л., 1934, стр. 32.

5 Անհրաժեշտ է նշել, որ այս տեսանկյանից, զրավոր խոսքը չափազանց առաջ է բանավոր համեմատությամբ։

6 Կ. Ալպայև, եզված աշխ., էջ 250—251։

միավոր և ծառայում է իբրև առարկաների, երևույթների ու նրանց հատկանիշների անվանման համբողջանուր միջոց: Բառի հիմնական (ուղղակի) իմաստը օրինակով իրականացվան առարկաները, երևույթներն ու նրանց հատկանիշները նշում է անմիջականորեն, ուղղակի կերպով և կախված չէ խոսքային միջավայրից, թեև առհասարակ պայմանավորված է լեզվական համակարգով:

§ 208. Բառի ածանցյալ իմաստը այն իմաստն է, որ բառը ստանում է խոսքի մեջ, տվյալ կոնտեքստում:

Բառի ածանցյալ իմաստն առաջանում է հիմնական իմաստի հիմքով՝ բառիմաստի փոխարևրական անցումով, այն առարկաներն ու հատկանիշները անվանում է անուղղակի կերպով, այլ առարկաների անվանման միջոցով, որը խոսողի գիտակցության մեջ տվյալ պահին առաջանում է համեմատության կամ զուգորդության շնորհիվ: Այսպիսի իմաստները կոչվում են նաև փոխարևրական: Բառաիմաստային ինքնուրույնությունն ստեղծվածից մեկ բառի սահմանում առաջացած ածանցյալ իմաստները կախյալ միավորներ են, պայմանավորված են միայն լեզվի խոսքային մակարդակով և իրենց բառական ու իմաստային կողմով կախված են այլ բառերից ու որոշակի բառակապակցություններից, հետևաբար, շարակարգային բնույթ ունեն:

Բառի ստուգաբանական իմաստը

§ 209. Բառիմաստի փոփոխությունը կամ բառի իմաստի շարժման ուղղությունը ճիշտ լուսաբանելու համար, անհրաժեշտ է բառի պլուսվոր (ուղղակի) և ածանցյալ (անուղղակի) իմաստներից բացի, խմանալ նաև նրա նախնական, ստուգաբանական իմաստը, որը շատ բառերի մեջ արդեն մաշվել և անհետացել է, իսկ շատերի մեջ էլ դեռևս առկա է իբրև պլուսվոր, հիմնական իմաստ և ուղեկցում է տվյալ առարկայի հասկացությունը:

Բառի ստուգաբանական իմաստը կարևոր է բառիմաստը լրիվ ու ամբողջական կերպով պատկերացնելու համար և բառի իմաստային կառուցվածքի մեջ իր էական տեղն ունի, քանի որ մասնակցում է հասկացության առաջացման և ծաղման պրոցեսին և մանրում է բառիմաստի հասկացական միջուկի բաղադրության մեջ,

այսինքն՝ բառի իմաստային կառուցվածքի մտածական գործոնի արագադրության մեջ:

Մաշվելով և անհետանալով իբրև պլուսվոր կամ ուղղակի իմաստ, այն կարող է նորից հանդես գալ կամ իբրև հիմնական, կամ իբրև ածանցյալ ու փոխարևրական իմաստ և դառնալ իմաստային հենարան այլ ածանցյալ իմաստների ու բառիմաստային տարբերակների համար: Նշանակում է, բառի ստուգաբանական իմաստը կամ բնիմաստը՝ որոշակի դեր է խաղում բառիմաստային տարբերակների փոխհարաբերության, նրանց իմաստային անցումների և իմաստափոխության մեջ:

Մտնոր.— Բառի սկզբնական իմաստի կամ բնիմաստի պարզարևանմամբ, նրա ծագման բացահայտմամբ զբաղվում է ստուգաբանությունը:

§ 210. Բառիմաստի համաժամանակյա քննության ղեկավարում ևս կերպին անհրաժեշտ է լինում անդադառանալ բառի սկզբնական կամ ստուգաբանական իմաստին, քանի որ հաճախ պետք է հաշվի առնել նաև տվյալ բառի և նրանով կազմված այլ բառերի համադրությունները, լեզվի պատմական զարգացման տվյալները, ինչպես նաև տվյալ բառի և նրա հետ առնչվող այլ լեզուների համապատասխան բառերի համեմատություններն ու հարաբերությունները:

Բառի ստուգաբանական իմաստների շնորհիվ է լույս տվում միևնույն բառի մակարդակում կատարված իմաստային անցյալի անցումների վրա, որոնք, առանձին վերջորած, թվում է, թե իմաստային ոչ մի եզր չունեն միմյանց հետ: Այսպես՝ արձանագրություն բառը, որ այժմ ունի ժողովրդի կամ նիստի բնթացքի զբառան փաստաթուղթ իմաստը, թվում է, թե իմաստային կապ չունի արձան բառի հետ: Սակայն բառի ստուգաբանությունը պարզում է, որ արձանագրություն ձևը դեռևս զբաբարում ունի «արձանի վրա կատարված փորագրություն, արձանադրով հիշատակարան, հաստատուն գրություն մատյանի և այլնի, այլև հիշատակագիր, արձանագիր և մակագրություն» իմաստները, որից և բխում է այժմյան փաստարարը իմաստը:

7 Տե՛ս է. Աղայան, նշված աշխ., էջ 260:

8 Տե՛ս «նոր բազիրը Հայկական լեզուի», Վենետիկ, 1826, էջ 367:

Ք ա ա գ ի տ ու ղ յ ու ճ

Ստուգաբանական իմաստի ճիշտ բացահայտումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն բառիմաստի և նրա հասկացության առաջացման պրոցեսի պարզարևման համար, այլև հասարակության նյութական կյանքի, նրա զիտակցության և ճանաչողության պատմության լուսարանման համար:

Բառի փոխաբերական իմաստը

§ 211. Հաղորդակցության պրոցեսում բառերը, իրենց հիմնական իմաստներից բացի, կարող են ստանալ նաև այլ իմաստներ, որոնք պայմանավորված են ավել խոսքային իրադրությանով, այսինքն, միևնույն բառավոր խոսքի մեջ վերագրվում է նաև զանազան այլ հասկացություններին: Սա միանգամայն բնական է, քանի որ ամեն մի նոր հասկացության անվանման համար լիզուռն չի կարող բոլորովին նոր ձև ստեղծել: Դա և՛ գործնականորեն է անհնար, և՛ հիշողության տարողության համար անհարմար:

Փոխաբերական իմաստներ բառերը ձևորեն են բերում գլխավորապես բառերի փոխաբերական գործածությունից, բառերի փոխաբերական իմաստները խիստ կարևոր օղակ են բառիմաստի փոփոխության բարդ պրոցեսում:

§ 212. Փոխաբերական է կոչվում բառի այն իմաստը, երբ բառը առարկաները և երևույթները նշում է անօղակի կերպով:

Փոխաբերությունը՝ իմաստաբանական բարդ պրոցեսն է, որ քննարկում է առարկաների կամ երևույթների արտաքին կամ ներքին որևէ նմանության հիմքով. ինչպես՝ բերք—ծաղիկ բերք, վարդի բերք, տետրակի բերք, գրի բերք, այլև՝ լրագրի և այլն:

Փոխաբերությունների շնորհիվ առարկաների ու երևույթների անվանումները ստանում են իմաստային այնպիսի նոր երանգներ, որ առանձին գործածությամբ չունեն: Փոխաբերությունների շնորհիվ են լիզվում առաջանում նաև առանձնահատուկ արտահայտություններ (իդիոմներ) և զարծվածքներ (ճմմտ. սիրով վարդ պատռել, յոթկերորդ երկեքստ լինել, ջուր ծեծել և այլն):

§ 213. Անհրաժեշտ է տարբերել բառի փոխաբերական գործածությունը և փոխաբերական իմաստը:

Բառի փոխաբերական գործածությունը ավել կոնկրետում և ավել կապակցության մեջ ստացած իմաստն է, այն բառի իմաստը, որին փոխաբերում է. այսպես՝ «Դու կդաս ու կրկին հեքիաթով հղչություն, Լուսերես կցրես մտախնայվել իմ հոգու» տողերում էլ, Տերյանը մտախնայվել բառը գործածում է ոչ իր բուն իմաստով, այլ «հոգու վրա նստած դառնությունը, տրամությունը, թախիծը» իմաստներով, որ ավել բառի փոխաբերական գործածությունն է, իսկ «եվ վերջալույսին, մի օր, օ», մի օր բացվինք ի բար խոսքերով շնչին» տողերում բացվել ցառն ունի խոստովանել, բացատրվել փոխաբերական իմաստները:

Բառի փոխաբերական գործածության շրջանակները անսահմանորեն բայն են և շարժադասությունում չի լինի սակ, թե յուրաքանչյուր բառ (բացի հատուկ անուններից և մասնագիտական տերմիններից) կարելի է գործածել փոխաբերաբար:

§ 214. Բառի փոխաբերական իմաստը առաջանում է բառի փոխաբերական գործածության հիմքով և առավել կայուն իմաստ է: Այն հանդես է գալիս միևնույն բառի մակարդակում, նրա հիմնական իմաստի կողքին իբրև անանցյալ իմաստ: Բոլոր զեպրեցում փոխաբերությունները կարող են լինել և՛ իրրև առանձին, մասնավոր գործածություններ ու շնորհանդանայ, արմատ շոնել լիզվի մեջ, և՛ կարող են ամբողջում ու դրանալ շատ բնական (ճմմտ. բնավոր ծպտում է, յույսը բացվեց, մութն բնկեց, յույսի հեղեղ, խոսքի ուժ, մտքի բոխք, բարեկամության կամուրջ, ծաղիկ ճառակ և այլն):

Բառերի փոխաբերական գործածությունները բնորոշ են և՛ զեպրովիստական տեղագրործության լիզվին, և՛ խոսակցական լիզվին ու առհասարակ խոսքային մակարդակին:

§ 215. Պետք է նշել, որ փոխաբերություն հասկացությունը լիզվարանական ատումով առավել լայն է. բուն զրականագիտական ատումով: Եթե վերջինում փոխաբերությունները ծառայում են հիմնականում իրրև լիզվի պատկերավորության միջոց, հաղորդում են և՛ թեթևաթիվական ինֆորմացիա և հաճախ, իհարկե, կրում անհաստական, սուրբկտիվ բնույթ՝ արտահայտելով ավել հեղինակին բնորոշ լիզվական կամ ռճական առանձնահատկություն,

Չ Գրականագիտական ատումով գործածվում է նաև փոխաբերական նշանակության երեք հիմնական տեսակներից մեկի՝ մտախոյի համար՝ ստացվում է փոխաբերության լայն ատումով (տրոպ. այլաբերություն) և փոխաբերությունն էնը ատումով (մետաֆոր):

սպա լեզվարանական փոխաբերությունը կամ բառիմաստի փոխաբերական անցումը իբրև լեզվական համակարգին և մասնավորապես, խոսքային մակարդակին բնորոշ երևույթ, այն հիմնական միջոցն է, որով մեկ բառի սահմանում պիտավոր իմաստի կողքին առաջանում են բազմաթիվ անասնցյալ իմաստներ կամ բառիմաստային տարբերակներ:

§ 216. Մեկ բառի մակարդակում կատարված փոխաբերական իմաստային անցումներեց լեզվարանությունը նշում է երկու հիմնական միջոց ա) նմանության զուգորդությամբ կամ իմաստի փոխաբերական (մետաֆորային) անցումը և բ) առընթերցության զուգորդությամբ (իմաստի փոխանունական անցումը):

§ 217. Բառիմաստի փոխաբերական անցումները բառային համակարգում տեղի են ունենում միշտ և անբնօրինակ. սակայն բառապաշարի ոչ բոլոր շերտերն են հավասարաչափ կերպով ենթակա այդ փոփոխությանը: Ինքնին հասկանալի է, որ բառապաշարի՝ հանրության համար կենսականորեն անհրաժեշտ շերտերը առավել շատ են ենթակա իմաստային անդաշարժերի. ինչպես՝ սիրտ, միտք, աչք, ձեռք (սիրտ տալ, միտք անել, ձեռք առնել, ձեռք տալ և այլն):

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅՔԻՆՈՒՄԻ

§ 218. Բառիմաստի փոփոխությամբ նոր բառիմաստների առաջացումը լեզվի բառապաշարի հարստացման ներքին կարևորագույն միջոցներից է:

Հայտնի է, որ բառի իմաստի և ձևի միջև եղած կապը պայմանական է, չհաշված, իհարկե, բնածայնական բառերը:

Բառի արտահայտության պլանը (ձևը) կամ հնչյունակազմը կարող է փոփոխվել զանազան գործոնների ազդեցությամբ (շեշտի, հնչյունների դիրքի և այլնի), սակայն բառիմաստը կամ բովանդակության պլանը կարող է մնալ նույնը:

Բառիմաստի փոփոխությունը բառի իմաստային կողմի, բառի բովանդակության պլանի փոփոխությունն է և կապ չունի բառի ձևի, արտաքին նյութական թաղանթի կամ արտահայտության պլանի փոփոխության հետ: Այսպես՝ սպանել բառը հնում եղել է

սպանել ձևով. փոխվել է այս բառի հնչյունական կազմը, բայց հիմնական իմաստը մնացել է նույնը: Դրա փոխարեն մտքով բառի ձևը չի փոխվել, սակայն փոխվել է նրա իմաստը: Հնում այն նշանակում էր կերել, մտքով հաճել, մտքով հաճել, իսկ նոր լեզվում՝ վիզը կտրել: Սակայն բառի ձևը (հնչյունակազմը) մնացել է նույնը, բայց փոխվել է նրա իմաստը. հին լեզվում այն նշանակում էր ոչնչացնել, իսկ այժմ՝ վաճառել. ընդ որում հիմնական կամ ուղղակի իմաստը փոխվել է, սակայն բուրբուլից դուրս չի ընկել, այն պահպանված է ծախել բառի անասնցյալ իմաստների մեջ: Այսպես՝ ծախել բազմիմաստ բառը իր անասնցյալ կամ մասնակի իմաստներում ունի մտնել, դավաճանել իմաստները, որոնց հետ իմաստային եզր ունի նաև նախնական ոչնչացնել իմաստը:

Սակայն լեզվի զարգացման ընթացքում պատահում է նաև այնպես, որ փոփոխվում է բառի ո՛ր ձևը, և՛ իմաստը: Այսպես՝ ընկել բառը բառ ստուգաբանական իմաստի նշանակում է միասին ուտող, սեղանակից (հմտ. ընդ+կեր>քեղկեր): Դեռևս հին հայերենում ընդ նախորդի գ հնչյունը դուրս էր ընկել և բառը գործածվում էր ընկեր ձևով, ունենալով միաժամանակ՝ զուգակից, նավաստակից, մերձավոր, բարեկամ, համախոն և այլ անասնցյալ իմաստները: Նոր լեզվում առավել ընդարձակվել է նրա իմաստային տարրությունը և հիշյալ իմաստների կողքին ստացել է կյանքի ընկել, ուղեկից, աշխատակից, փաղափայլ իմաստները (տե՛ս § 234):

Թեև բառիմաստի փոփոխության ընթացքը գծազրկում է նաև լեզվի որևէ փուլի համաժամանակյա կտրվածքում, ինչպես ասեմք, բազմիմաստ բառերի իմաստափոխությունը, որ տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածում զանազան զուգորդությունների և հոգեբանական անցումների շնորհիվ, սակայն բառիմաստի փոփոխությունը իբրև լեզվական երևույթ իր բնույթով պատմական է և պետք է քննել ու լուսաբանել անպայմանորեն պատմական մտնեցմամբ, քանի որ հաճախ լեզվի զարգացման նախորդ կամ հնազույն փուլում ունեցած բառի իմաստը հաշորդ կամ նորագույն փուլերում անհետանում կամ մաշվում է, և բառը ձեռք է բերում նոր իմաստ. ինչպես աշխատել հին հայերենում (աշխատ ասենք, աշխատ լինել) նշանակում էր հոգնել, եղորջույն կրել, մի բանի վրա շարձվել, իսկ աշխարհարարում՝ գործ կատարել, գործել, բանել, ծառայել, պաշտոնավարել և այլն):

Մանր.— քառիմաստների փոփոխության մասին խոսելիս պետք է նկատի առնել, որ խոսքը վերաբերում է հիմնականում քառերի բուն կամ ուղղակի իմաստների փոփոխությանը, քանի որ անանցյալ իմաստները առանձին ներան նև գալիս որոշակի խոսքային պայմաններում միայն, պահպանվում են քառի հիմնական իմաստների կողքին, պայմանավորվում նրանով:

§ 219. Քառի իմաստային կառուցվածքի ուսումնասիրությունը սերտորեն առնչվում է քառի կրած իմաստային փոփոխությունների հետ:

Քառիմաստի փոփոխությունների բոլոր տեսակների հոգեբանական հիմքում ընկած են դասական զուգորդություններ (նմանակության, կցորդության և այլն):

§ 220. Ազգաբանությունը նշում է քառիմաստի փոփոխության երեք տեսակ. քառիմաստի ընդլայնում, քառիմաստի նեղացում և քառիմաստի շրջում:

Ա) ԲԱՌԻՄԱՍՏԻ ԸՆԿՍՆՈՒՄ

§ 221. Քառիմաստի ընդլայնումը այն երևույթն է, երբ քառի կենդրևտ իմաստը ընդլայնվում է և այն ստանում է առավել ընդհանուր իմաստ կամ իմաստներ. վերջինի ղեկպսոմ բառը դառնում է բաղիմաստ: Այսպիսի իմաստային անցումը լինում է հիմնականում երկու տիպի.

ա) երբ բառը մի կենդրևտ իմաստի փոխարեն կամ դրա կողքին ստանում է ավելի բնագրծակ և լայն իմաստ: Այստեղ բառը թեև կորցնում է իր էական հատկանիշների մի մասը, փոխարենը շահում է ծավալային կողմով, որով նրա բովանդակությունն առավել է ընդլայնվում. այսպես՝ արևո նշանակում է նաեբլու հարմարանք, կենցաղային կանույթի մի տեսակ. փոխարենբարբար ստացել է պաշտոն, իշխանությունը բնդհանրական իմաստը (հմտ. աթոռի կրիվ, աթոռի պայքար, Մայր աթոռ և այլն):

Մշակել նշանակում էր սոճոր, կտորը, մորթին և այլն մշակելը, ժամանակակից հայերենում ստացել է նաև առնասարակ որևէ նյութի մշակում (զիտական որևէ աշխատության, պլանին, թեղիսի և այլն) իմաստը:

Նեռել սկզբնապես նշանակում էր նեռ արձակել, այնուհետև ստացավ բնդհանրապես արձակել, շարուն, զցիլ իմաստները, ժամանակակից հայերենում փոխարենբարբար ստացավ նաև՝ ա-

բաձել, սխել իմաստները (Անհնուրեք մի կարոտ ես դու նեռելը, ՎՏ):

բ) երբ հատուկ անուն նշանակող բառը ստանում է հասարակ անվան իմաստ. ինչպես՝ ամպեր, վրտ, մեկնեստ, Ֆարդ, դիզել, կիստը, հազար (վախկոտ) և այլն:

Բ) ԲԱՌԻՄԱՍՏԻ ՆԵՂԱՑՈՒՄ

§ 222. Քառիմաստի նեղացում է կոչվում այն երևույթը, երբ բնդհանուր իմաստ ունեցող բառը ստանում է ավելի նեղ, մասնական իմաստներ:

Քառիմաստի նեղացումը լինում է երկու տիպի.

ա) երբ բառը իր գլխավոր նշանակության կողքին ձևոք է բերում նաև նոր, առավել նեղ կամ մասնակի իմաստ: Այստեղ բնդհանուր ամամբ քառի ծավալային կամ բովանդակային կողմի առնմանափակում սեղի շի ունենում, բնդհակառակը, քառի ծավալը ընդլայնվում է, քանի որ քառիմաստը իր էական հատկանիշներին զուգընթաց ստանում է նաև էական կամ ոչ էական հատկանիշներ, դառնում է բազմիմաստ, հետևաբար քառիմաստի նեղացումը ավյալ դեպքում կրում է հարաբերական բնույթ և վերաբերում է ավյալ մասնակի իմաստին միայն, որինակ՝ ազատվել նշանակում է որևէ վտանգից փրկվել, որից իմաստի նեղացումով ձևոք է բերել նաև ձնկարբերել իմաստը. ձայն նշանակում է կրչյուն, մասնավորվել է նաև երաժշտական ձայն (հմտ. երկձայն, եռաձայն, բառաձայն և այլն) իմաստով. օրագիր նշանակում է ատոք, կամ մատյան, որի մեջ գրանցվում են օրվա ուշագրավ ղեկպերքը, այնուհետև ավելի է մասնակիացել և ստացել աշակերտական օրագիր իմաստը, այսինքն՝ հատուկ տեղոր, ուր գրանցվում են օրվա գնահատականները:

Թեք հին լեզվում ուներ տերև, սպարք, տերևների ձայն և առնասարակ բարի, թիբելի ձայն իմաստները: Աշխարհարարում թեև հիշյալ բոլոր իմաստները կան (ծաղկի, վարդի, գաթալի, թիթեղի թերթ, շերտ և այլն), սակայն առաջ մղվեց նոր օրաբեր. լրագիր իմաստը: Ընդ որում վերջին իմաստը իր համընդհանուր գործածության շնորհիվ այնքան բնութոյւ և սեփական գործածվ բերք բառի համար, որ գործածվ ղլխավոր կամ հիմնական իմաստ, իսկ վերահիշյալ տերև, սպարք, ձայն իմաստները. պահպանվելով գործան ամանցյալ իմաստներ:

Քրտւ հատկանշային իմաստ արտահայտող բառը հայերենի զարգացման բոլոր փուլերում պահել է իր ուսելիքի որոշակի համ ունենալու հատկանշային իմաստը (թթու շուր, թթու համ, թթու կերակուր և այլն), սակայն բառիմաստի ներդացումով ստացել է ուսելիքի տեսակ իմաստ ու դարձել զոչական (հմմտ. վարունգի թթու, կաղամբի թթու և այլն): Իրրև զոչական այս բառը ունի նաև բնիմական տերմինի արժեք (հմմտ. թթուներ, բորաթթու, ազաթթու, ածխաթթու և այլն):

բ) Նրբ բառի գլխավոր իմաստը մաշվում, կորչում է, և բառը ձևոր է բերում զրա համեմատությունը առավել նեղ ու մասնավոր նշանակություն: Այստեղ, բնականաբար, տեղի է ունենում նաև բառի ծավալային կողմի սահմանափակում կամ նեղացում, քանի որ բառը, իմաստափոխվելով, կորցնում է իր էական հատկանիշներին մի մասը և ձևոր բերում նեղ իմաստ: Սա արգելն բառիմաստի նեղացում է բուն առումով: Բառիմաստի նեղացումը, այսինքն՝ բառիմաստի մասնավորումը և տերմինացումը, առանձնապես բնորոշ է հայերենի զարգացման սովետական փուլին: Այսպես՝ աղյուսակ նշանակում էր փոքր աղյուս: Այժմ այս բառաձևը տվյալ իմաստի համար այլևս չի գործածվում (անհրաժեշտության դեպքում առավել գործածական կլինի՝ աղյուսիկ) և աղյուսակ նշանակում է աղյուսաձև կամ վանդակավոր դժվածք, որի մեջ հաշվառման կամ այլ նպատակների համար դասնցումներ են անում (հմմտ. ֆուտբոլի աղյուսակ, թվարանական աղյուսակ և այլն), ինչպես նաև որևէ նյութի վանդակաձև փձվածքի մեջ որոշակի համակարգով դասավորելը:

Արձակուրդ հին հայերենում նշանակում էր արձակում, ազատություն, քաղաքյան, նոր հայերենում՝ աշխատանքից կամ ուսուցումից հանգստի համար ժամանակավորապես ազատվելը:

Գնացի բառը հին հայերենում նշանակում էր ընդհանրապես գնալը, իսկ նորում՝ շոգեբարձով կամ էլեկտրաբարձով շարժվող վագոնների շարքը, որ երկաթուղով մարզիկ է անդափոխում (հմմտ. ապրանքատար քնացք, մարդատար քնացք և այլն):

Տոմս բառը հին հայերենում ուներ քաղք, մագաղաք, տեսակ իմաստը, իսկ նորում ստացել է զանազան նպատակների համար ծառայող հավատարմացման քղիկ կամ ԳԲՄՅ կ իմաստը

(հմմտ. կուսակցական տոմս, արհմիութենական տոմս, կինոյի, ավտոբուսի, ինքնաթիռի, տրամվայի տոմս և այլն):

Զանգվաներկ նշանակում էր առհասարակ զանգ տալ (զուան զանգը, կկնդեցու զանգը տալը և այլն), այժմ կոնկրետացել և մասնավորվել է հետախույզ զանգ տալ իմաստով:

զ) Երբ հասարակ անունից դոչանում է հատուկ անուն, այսինքն՝ բառի բնդարձակ իմաստից ստացվում է նեղ, համեմատաբար մասնավոր իմաստ. այսպես՝ շուշան-Շուշան, նկատար-Նկատար, վարդ-Վարդ, արև-Արև, բյուրեղ-Բյուրեղ, գոհար-Գոհար, ծաղիկ-Մաղիկ, կորյուն-Կորյուն, մանուկ-Մանուկ, ջրվեժ-Ջրվեժ, նասմիկ-Հասմիկ, մեխակ-Մեխակ, ննագուն-Ննագուն, քագունի-Քագունի և այլն:

Մանր. Առավել տարածված է հասարակ անունների՝ իկ նվազափառաբանական ածանցով հատուկ անունների վերածումը. ինչպես՝ շոգ-Շոգիկ, ցոգ-Ցոցիկ, ծով-Մովիկ, լույս-Լուսիկ, արծիվ-Արծիվիկ, ալյույան-Ալյոնեմիկ, Երազ-Երազիկ և այլն:

9) ՔԱՌՄԱՐԱՍԻ ՇՐՁՈՒՄ

§ 223. Բառիմաստի շրջում է կորչում այն երևույթը, կրբ բառը փոխում է իր հիմնական իմաստը և ձևոր է բերում ոչ միայն բոլորովին նոր, կամ սարքեր, այլև հակադիր իմաստ: Այստեղ արգել իմաստափոխությունը բուն կամ բացարձակ իմաստով է: Տվյալ դեպքում բառիմաստը փոխում է այնպես, որ նախնական իմաստը (ինի դա բնիմաստը կամ գլխավոր իմաստը դարձած այլ իմաստ) մաշվում և լրիվ վերանում է. բառը գործածվում է նոր իմաստով: Բառիմաստի շրջման հիմքում նույնպես ընկած են զանազան դուզորդումներ կամ Նոգեբանական այլ գործոններ, ինչպես վերոհիշյալ երկու տեսակում: Բառի հիմնական իմաստի փոխոխումն ու վերացումը տեղի է ունենում բառի հատկանիշներից մեկի՝ որևէ զուգորդությամբ ավիկի ընդգծման ու ինտենսիվացման և մյուս հատկանիշների մաշման ու անհետացման հետևանքով: Բառի ստացած նոր իմաստը կարող է լինել կամ բնիմաստից արգեն հեռացած, փոփոխված ու գլխավոր իմաստ դարձած իմաստը, կամ բոլորովին հակառակ, շրջված իմաստ, որը, այնուամենայնիվ, ինչ որ շարիտ կապված է երբեմնի գլխա-

վոր խնամտի հետ, որի հետևանքով իմաստափոխության պատկերը տարժամանակյա քննությանը կարող է լուսաբանվել և երևան գալ: Այսպես՝

Անագին հնում նշանակում էր անեղ, սուկալի, անոնի, գարնուրի, իսկ ժամանակակից հայերենում՝ շատ մեծ, հսկայական, մեծ չափով:

Աշխույժ հին լեզվում նշանակում էր ուժեղ, գորեղ, արե, հուժկու, իսկ նորում՝ մի, ետեղում, կայտառ, կենտունակ:

Քույրովին և ամենևին նույնականի նշանակում էին լրիվ, ամբողջությամբ, բավեղակ, այժմ՝ երբեք:

Ռոչ բառը հին հայերենում, ինչպես և աշխարհաբարի առաջին շրջանում ունի որոշակի իմաստը, այժմ (ժամանակակից հայերենի սովետական շրջանում) ստացել է ինչ որ չափով իմաստը:

Մաղբել հին հայերենում նշանակել է աղբրել, աղանել, աղբուսել, պաղատել, խնդրել, բարեխոսել, իսկ ժամանակակից հայերենում՝ ցանկանալ (հմմտ. բարեխոսել):

Պարազ բառը ազատ մնալ, ազատ ժամանակ ունենալ իմաստից անցել է գրադվել, գործ ունենալ, նաև որևէ խնդրի առաջարկի վրա աշխատել, որից և սովորել իմաստներին, այսինքն՝ լրիվ նկատակ իմաստներին, որ զոչացել է գրաբարի տրական խնդրով գործածությունից՝ պարազել իմի¹⁰, այսինքն ազատ ժամանակ ունենալ մի բան անելու համար, որ և հանգեցրել է այդ բառի իմաստափոխությանը և իմաստի շրջանը:

Բառիմաստների փոփոխության պատճառներից լեզվաբանության մեջ նկատված են հետևյալները¹¹:

1. Իմաստափոխություն ըստ գույրգուրյան

§ 224. Բառիմաստի փոփոխության հիմնական և էական պատճառներից են գանձական դուզորդությունները¹²:

¹⁰ ՏԷՊ Մ. Արևիյուն, *Չալոց լեզվի տեսություն*, 1965, էջ 138:
¹¹ Պատկարգման հիմքում բեկած է է. Ք. Ապալանի «Լեզվաբանության և նշանաբանության հիմքում» (1963, էջ 265—273) մեջ բերված գառնաբարոսը որով լրացումներով և հավելումներով:
¹² Զուգորդությունները կարող են հանդիսանալ և՛ իմաստափոխության պատճառ, և՛ բեկած լինել մյուս պատճառների հիմքում իբրև իմաստների անցման միջոց:

Նաղորդակցության պրոցեսում խոսողը առարկաների արտաքին հատկանիշների (տեղի, ձևի, գույնի և այլն) նմանության և այլ գույրգուրությունների շնորհիվ, բառերին ներստոր իմաստներ է տալիս, որոնք աստիճանաբար այնքան բնորոշ են գառնում վերջիններիս համար, որ ի վերջո գառնում են հիմնական/նման բուրյ տեսակի գույրգուրությունների հիմքը հոգեբանական է, քանի որ առարկաների միջև եղած զուգորդային կապերն իրենց բազմաբարձ հարաբերություններով և անցումներով հոգեբանական բընույթ են կրում:

Բառիմաստների նման փոխաբերական անցումների շնորհիվ միևնույն բառաձևը կամ նշյունակազմը կարող է արտահայտել մի բանի հասկացություն, այսինքն բազմ ժանրաբանվում է մի բանի իմաստներով, գառնում է բազմիմաստ: Բառի իմաստային ծանրաբանվածության աստիճանը հաճախ կախված է նրա բուն կամ ուղղակի իմաստից, նայած, թե այն ինչպիսի կապերով և հարաբերություններով է առնչվում այլ հասկացությունների հետ: Այսպես, արև բառը իր հիմնական իմաստով նշանակում է. Արեգակ մայրակը: Նրա առարձած լույսի և շերտության հատկանիշների տարբեր դուզորդություններով այս բառը ստացել է լույս (սևեռում) նա արևի կարտա, ԳՍ, Գյուլնարա, հմմտ. արևոտ սենյակ-չուսավոր սենյակի և այլն, այստեղից էլ՝ ցեբեկ (հմմտ. արեգակ) հասնել, այսինքն՝ լույսով, ցերեկով հասնել), պայծառ, աաբ. լիսով (արև օր, արև եղանակ) իմաստները: Իսկ քանի որ լույսը և շերտությունը կյանք են սփռում աշխարհին, փոխաբերաբար նաև՝ կյանք, գոյություն (հմմտ. արեղ երկար լինի, արև վկա, արև խազարել, արև մաղթել, օր ու արև և այլն), այստեղից էլ գարձյալ նմանության դուզորդությամբ՝ կենդանություն, պայծառություն, ուրախություն իմաստները:

Նոր բան ունի գործված նյութ, կտոր իմաստը: Կցորդության գույրգուրությամբ (շորից հագուստ կարելու հանգամանքով) այն ստացել է նաև հագուստ, շրջազգեստ իմաստները (հմմտ. Նորիք կարիք, շորեղ կարիք բեր, զեղեցիկ շոր և այլն), որոնք արդեն

այն, այսպիսի գիտության և տեխնիկայի զարգացման պատճառով երբևէ բանի մասին իմաստը (տեղեղից Բուշոյ սեպակով շարժելով սարք) ստացել է թյուզ սար (վառսից և գանձարև հրալու նյութներից պատրաստված) իմաստից՝ նմանության գույրգուրության միջոցով (տե՛ս § 223):

այնքան բնորոշ և սեփական են դարձել շոր բառանկի համար, որ վերածվել են գլխավոր իմաստի:

Կառավ բարո նշանակում է գործվածվողների մի տեսակ (բաթան): Հետագայում նկարելիների աշխատանքների համար անհրաժեշտ էլույթ, ծառայելու հանդամանքով (կցորդության գուրդրության մաս) ստացավ նաև նկար, գեղանկարչական ստեղծագործություն, գործ իմաստը (համտ. նրա բոլոր կառավները վաճառվել են):

Շրջան բառը հին հայերենում նշանակում էր պտույտ, փոփոխություն: Ժամանակակից հայերենում նմանակություն կազմող գուրդրության ստացել է կյտ զիծ, շրջանան նակեհույր (պտույտի շրջանագիծ, շրջանան և այլն) իմաստը. այնուհետև՝ ժամանակահատված, ժամանակաշրջան (համտ. հեղինակի կամ որևէ ստեղծագործողի կյանքի ու գործունեության կամ ստեղծագործության առանձին շրջաններ, պատմության առանձին շրջաններ, եղանակի շրջան, ռեժուն է հիմա, բաժանումի շրջան, ԳԹ), առանձին տարածական հատված, վարչատերիտորիալ բաժանում (= առս. район, համտ. նահույմյանի շրջան, Մյանսիկյանի շրջան, շրջիւմ, շրջկենտրոն և այլն), մարդկանց սոցիալական-հոգեբանական խմբավորում, խավ (համտ. կանանց շրջան, մտավորականության շրջան, ուսանողների շրջան) և այլ սծանցյալ իմաստները:

Համար նշանակում է թիվ, նշան (համտ. №...). կցորդության կամ արըններության գուրդրության ստացել է նաև հյուրանոցի, բաղնիքի համար և այլ իմաստները:

Հրձիգ բարո ուներ հուր, կրակ ձգող, հրդեհող իմաստները, որ և իր բնիմաստն էր. իմաստի փոխաբերական անցումով (նմանության գուրդրության հիմքով) ստացավ պատերազմ հրահրող, սանձագերծող իմաստը:

2. Իմաստափոխություն գործառույթի (ֆունկցիայի) հանրայականության հիմքով (ֆունկցիոնալ իմաստափոխություն)

§ 225. Ֆունկցիոնալ իմաստափոխություն է այն երևույթը, երբ որևէ առարկայի, երևույթի անունը անցնում է այնպիսի նոր առարկայի, երևույթի վրա, որը իր դերով (ֆունկցիայով) փոխարինում է նախորդին: Այսպես՝

Վիղ նշանակում էր բայս, որ գործածվել է որպես բովման միջոց: Հետագայում, երբ իրեն բովման միջոց գործածվեցին նաև քիմիական նյութերը, վիղ բառանկը պահպանվեց նաև քիմիական գիզակալների համար¹³:

Մտուր նշանակում էր անասունների սնվելու տեղը տխոսում. ֆունկցիայի փոխանցումով ժամանակակից հայերենում ստացավ նաև մանկական մատր իմաստը:

Խրեիք-ընթերցարան նոր տնայի բարդությունը առաջացել է ֆունկցիոնալ իմաստափոխությունով. խրեիքը գյուղում 1920—30-ական թվականներին փոխարինում էր գրագարան-ընթերցարանին: Այնուհետև, երբ գյուղերում իրեն ընթերցարան ծառայիցին առավել բարեկեցիկ սենյակները (շինությունները) խրեիք բառի անվանումը անցավ նաև այգային ընթերցարաններին:

Կարինեմ նշանակում էր առանձնաբան (արճարաններում և այլ վայրերում), այնուհետև՝ կցորդության գուրդրության և ֆունկցիայի հարթակախոսության՝ 1. առանձնասենյակ, 2. աշխատասենյակ, 3. դիրեկտորիե հատկացված սենյակ, 4. պալատ-մենտական կարինեմ (խորհուրդ) և այլն:

3. Իմաստափոխություն գաղափարախոսության փոփոխության հետևանքով

§ 226. Հասարակության կեցության և գիտակցության դարգացման ու փոփոխության հետ կապված զարգանում և փոփոխվում է նաև նրա գաղափարախոսությունը: Վերափոխադրվում և նոր գնահատություն են ստանում մի շարք երևույթներ, որոնք մի ժամանակ այլ կերպ են ըմբարվել ու գիտակցվել: Այսպես՝ ծառայող նախկինում նշանակում էր սպասավոր, ստորադրյալ, իսկ հայերենի սովետական շրջանում՝ աշխատող (служащий):

Մտռայել նշանակում էր ստորին աշխատանք կատարել, իսկ այժմ՝ աշխատել, մասնավորապես՝ բանակում ծառայել:

§ 227. Քրիստոնեական գաղափարախոսություն արտահայտող մի բանի բառեր, այժմ այլ իմաստով են ըմբռնվում. այսպես՝ բացասական նրանց են ստացել Բարոզ, Բարոզի, Բարոզ կարգաբանություն: Ճաշակել (եկեղեց. հազորդի), րափար (եկեղեցական

կրթ) բառերը զրկվել են հիշյալ իմաստներից և այժմ գործածվում են ուղղակի ուսել, կեր իմաստներով: Նույնը և սրբազան նշանակում էր նուգևոր, աստվածային, եկեղեցական, քանակալական և այլն, իսկ այժմ իմաստի փոխարեքական անցումով՝ սուրբ, նվիրական:

4. Իմաստափոխություն տեսնակալեան հարաբերություններին ճիմվով

§ 228. Լեզվի զարգացման ընթացքում իմաստափոխվում են նաև տեսնակալեան հարաբերությունները արտահայտող և առևտրի մեջ խիստ դործածական մի շարք բառերը: Այսպես՝ իմաստափոխություն են կրել ասլրանքափոխանակություն մեջ կարեքր կշիռ ու արժեք ունեցող առարկաները ցույց տվող բառեր, ինչպես՝ օսկին, առձարը և այլն՝ ստանալով դրամի, դրամական արժեք արտահայտող միավորի անկախ իմաստ: Արևելքից պատրաստված դարդերը և իրերը իբրև արժեքավոր ասլրանքներ փոխանակվում էին դանազան՝ այլ ասլրանքների հետ: Տեսնակալեան հարաբերությունների հետագա զարգացման ընթացքում, ասլրանքափոխության մեջ ունեցած լայն կիրառության ու զերի շնորհիվ, հետզհետե ալեքան բարձրացավ այս մետաղների արժեքը, որ նրանք ստացան դրամական միավորի արժեք, նրանցով ուղղակի պատրաստվեցին դրամներ (հմմտ. Բանի՝ ոսկի ոսկե, ոսկեդրամ, արծաթյա դրամ և այլն): Հետագայում, երբ թղթադրամները գործածությունից դուրս մղեցին ոսկե և արծաթյա դրամները, ոսկի և արծաթ մետաղների անվանումները պահպանվեցին թանկարժեք մետաղների արտահայտող իմաստներով. սակայն արծաթ բառը փոխարեքարար պահպանեց նաև դրամ, փող իմաստը (հմմտ. արծաթասեր, արծաթամոլ և այլն): Արդյունք էլ պղինձը, իբրև առավել էժանկալի մետաղ, սկսեց գործածվել ցածրարժեք դրամների համար (հմմտ. պղնձադրամ):

5. Իմաստափոխություն հասարակական վերաբերմունքի պատճառով

§ 229. Բառիմաստի փոփոխության վրա ազդում է նաև հասարակության կամ նրա որևէ դասակարգի վերաբերմունքը կամ գնահատությունը: Հասարակության որևէ երևույթի նկատմամբ ունեցած դրական կամ բացասական վերաբերմունքի հետևանքով,

բառերը ստանում են բացասական կամ դրական իմաստային երանդ. այս հանգամանքը աստիճանաբար կարող է ներազդել ներքինը բառիմաստների վրա, և վերջիններս իմաստափոխվելով կարող են ստանալ հասարակության տվյալ վերաբերմունքին համապատասխան իմաստներ: Այսպես՝

Մտրով բառը, որ նշանակում էր գերի, նպատակ, եքրակա, սարքկատիրական հասարակարգի բացառման և կործանման հետևանքով, իբրև դասակարգի անվանում, դուրս եկավ դործածությունից, սակայն հաջորդ հասարակարգերում հասարակության՝ այդ երևույթի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի պատճառով, սկսեց փոխարեքարար գործածվել վախյալ, բշվառ, խեղճ, սղորմելի արժամարժեական հատկանշալի իմաստներով:

Խուց բառը հին հայերենում ուներ սենյակ, փոքր հյույ, խրոհիք, օրեան, այնուհետև վաճաղանի կացարան իմաստները: Հետագայում (մասնավորապես սովետական շրջանում) խուցերի փոքր և ու լուսավոր լինելու և նրանցում վաճաղանների անցկացրած զրկանքներով լի ճղնավորական կյանքի պատճառով, հասարակությունը խուց բառի մեջ զրեց փոքր, նեղ, անհրապույր, անլույս ու անըմ սենյակ, խրոհիք իմաստները, որը դարձավ ուղղակի իմաստ և միազրեց այդ բառի ունեցած երկրմնի սենյակ, օրեվան իմաստները:

Վարձապետ՝ նշանակում էր ուսուցիչ: սակայն այժմ ստացել է բացասական իմաստ (անգրագետ, տգետ)՝ մեր հասարակության՝ անցյալի ծխական զարոցների կիսագրագետ և տգետ ուսուցիչներին նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքի պատճառով:

6. Իմաստափոխություն բառիմաստների բաղադրության կամ իմաստափոխության հետևանքով

§ 230. Չեական, իմաստային նմանության, այլև նույն կամ նման կապակցություններում հանդես գալու պատճառով հասարակ կարող են շփոթվել երկու բառերի իմաստներ, որի հետևանքով դրանցից մեկը սկսում է գործածվել մյուսի փոխարեն և աստիճանաբար ստանում է մյուսի բառային իմաստը: Այսպես՝ հայերենի մեղանելի բառը նշանակել է մեղ գործել՝ Երմ հայրը իմ

զեմ մեղանչեց, սակայն չմեղանչեցի ես ոչ որի զեմս, Իս., (Արու
 Հալա Մահարի), սակայն խոսակցական լեզվում այն առավել
 գործածական է հանցանք մեղմացնել, մեղքը բավել, որ գալիս է
 մեղանչել (մեղք գործել) և մեղքը բավել (զղչում) իմաստների շփո-
 թությունից (բաղարկությունից—կոնտակտացիայի)։ Նույն ձևով էլ
 ժողովրդական խոսակցական լեզվում շփոթվում են մեծանոցի և
 մեծամիտ բառերի իմաստները, որի հետևանքով մեծանոցի բա-
 րը երբեմն գործածվում է մեծամիտ բառի փոխարենը։

Փոխել բառը, ձևով և իմաստով մտա լինելով փոխանակել
 բառի հետ, իմաստի բաղարկությամբ գործածվում է նաև վերջե-
 նիս իմաստով։

7. Իմաստափոխություն բնիմաստի մրացման հետևանքով

§ 231. Հասարակության ճանաչողության զարգացման քե-
 փացրում մարդկային մտածողությունը առարկաների մեջ աստի-
 նամաբար տեսնում է նոր հատկանիշներ, նրանց ճանաչում է այլ
 բաղմամպիսի կողմերով, որը հաճախ հանգեցնում է բառերի ստու-
 զարանական իմաստների կամ բնիմաստների փոփոխմանը։

Կան մի շարք բառեր, որոնց անցնած սկզբնական իմաստնե-
 րը, այսինքն՝ բնիմաստները այնպես են մաշվել և անհասացել,
 որ խիստ դժվար է համաժամանակյա զննության վերականգնել
 դրանք և, հետևաբար, հայտնաբերել բնիմաստի և այժմյան ուղղա-
 կի իմաստի միջև եղած կապը, պարզել նրանց կրած իմաստափո-
 խության պատկերը։

Այսպես՝ նահատակ բառը սկզբնապես նշանակում էր նախա-
 մարտիկ, ըմբիշ, մարտիրոս և այլն, նշանակում է, մի ժամանակ
 այս բառի արտահայտած հասկացությունը հիմքում առավել կար-
 ընոր են եղել մարտի մեջ առաջինը հաճախվողի, եւս կոպտի
 հատկանիշները, որոնց, ինչպես և ճշգող, մարտիրոս (վերջինե-
 ներս իմաստի անցման համար հանդիսացել են իբրև միջանկյալ
 օղակներ) իմաստների հիմքով նահատակ բառը ստացել է այժմյա-
 յան՝ գողափառի նման գոնված իմաստը։

Նույն բառի մեջ մթազնել է բնիմաստը (նետ արձակել) և
 կշորություն զուգորդությամբ բառը այժմ ստացել է զցել, շարանել

իմաստները։ Բառի ստուգարանական իմաստի մթազնմանը եր-
 քեմն նպաստում են նաև բառերի հնչյունափոխի կամ արտահայ-
 տության պլանի փոփոխությունները, այսպես՝ սեփական նշանա-
 կել է սեպունին պատկանող՝ սեպունական, որ նրա բնիմաստ
 է կամ ստուգարանական իմաստը Այս բառի ստուգարանական
 իմաստի մթազնմանը (բացի սոցիալանտետական պատճառնե-
 րից) նպաստել է նաև նրա ձևի (արտահայտության պլանի) փո-
 փոխությունը (սեպունական > սեփական)։

8. Իմաստափոխություն լեզվական ձևերի ֆարացման հետևանքով

§ 232. Քերականական կառուցվածքի փոփոխության հետե-
 վանքով, քերականական մի շարք ձևեր դադարում են բնորոշվել իր-
 րև այդպիսիք և լեզվի մեջ դիմում են իբրև անկախ, ինքնուրույն
 բառաձևերը, որոնք գրաբարյան գործիական հոլովաձևերն են, ար-
 դի հայերենում բնորոշվում են իբրև առանձին, ինքնուրույն բառեր
 նիշտ, նշապես, խնայցի իմաստներով։ Նույն երևույթն է նկատ-
 վում նաև իրավ, բեավ, հարկավ, սակավ բառերում։ Արանք կորց-
 րել են գրաբարյան եղակի թվի գործիական հոլովաձևերի իմաստ-
 ները և այժմ ինքնուրույն բառեր են նոր իմաստներով (ճիշտ,
 բոլորովին, կրբեր, անշուշտ, փշ)։

Գրաբարյան եղակի թվի բացասական հոլովի մթազնման հե-
 տևանքով ինարկի (ի հարկէ) հոլովաձևը, որ նշանակում էր
 հարկազարբար, ստիպված, այժմ ստացել է անշուշտ, անպայման
 իմաստները։ Այդպես էլ կամաց և կինաց բառերը գրաբարյան
 կամ(ք) և կյան(կ) հարկ(ք) բառերի հոգնակի թվի տրական հոլո-
 վաձևերն են, որոնք այժմ դիտակցվում են իբրև ինքնուրույն, ան-
 կախ բառեր զանգող, բաժակի վրա ավաղ խոսք նոր բառային
 իմաստներով։

Հասցե բառը գրաբարյան աղյուսների եղակի թվի երրորդ զեմբն
 է (թող հասնի, կհասնի և այլն), որը բնահայերապես զուրս եկավ
 հայերենի քերականական կառուցվածքից և գործածվեց իբրև ինք-
 նուրույն բառ։

9. Իմաստափոխությունը գիտության և տեխնիկայի զարգացման հետևանքով

§ 233. Սովետական գիտության և տեխնիկայի զարգացման և անանխրենիաց վերելքի շնորհիվ մի շարք բաներ փոխեցին իրենց իմաստները. փոխվեց նաև նրանց արտահայտած հասկացությունների ծավալը, գործածության դարձրելը:

Այսպես՝ Հրիթ բառը ժամանակակից հայերենում ուներ հրավառությունների կամ ազգանշանների համար պատրաստված բոլոր սարք (պատրաստված վառարկից և զանազան հրավառ նյութերից) իմաստը: Վերջին տասնամյակում, տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման պահանջով, նմանակության զուգորդությամբ ստացավ «տեխնոլոգիան տարածությունները թռչող սակավոր շարժիչով սարք» (հմտ. տեխնոլոգիան հրթիռ, հրթիռային զենք, տանող հրթիռ և այլն) իմաստը:

Հաճախ նոր իմաստի համար լեզուն գործածում է այնպիսի բաներ, որոնք հնացած, անգործածական են և վերախմտաափորվելով կենսունականում ու լայն կիրառություն են գտնում. այսպես՝ հայերենի հինավուրց ակն բառը, որ հին հայերենում նշանակում էր անց, փառ, ծակ և ժամանակակից հայերենի սկզբնական շրջաններում անգործածական էր, այժմ ստացել է պայրուցիկ սարք իմաստը և կազմել մի շարք նոր բարդություններ. ինչպես՝ ակաճագեծ, ականագեծել, ականանավ, ականանետ, ականափակ և այլն:

Նույնը կատարվեց նաև հետուս բառի հետ: Այն դրաբարում ուներ մակրաչական արժեք (=հեղվից) և ժամանակակից հայերենում անգործածական էր: Գիտության և տեխնիկայի նոր խոչորադույն էլույթի՝ հետուսագիտության զարգացման հետ կապված հետուս բառը նոր իմաստ է կյանք ստացավ՝ կազմելով բազմաթիվ բարդություններ. ինչպես՝ հետուսադիտող, հետուսաճափը, հետուսացույց, հետուսակայան, հետուսացանց, հետուսաշարակ, հետուսախցիկ, հետուսապատկերում և այլն:

10. Իմաստափոխություն սոցիալ-պատմական տեղաշարժերի հետևանքով

§ 234. Հասարակության կյանքում կատարված սոցիալական և նյութական մեծ իրադարձությունները պատճառ են հանդիսանում ու միայն մեծ թվով բաների, այլև բառիմաստային փոփոխությունների և նոր բառիմաստների առաջացման համար:

Հայ ժողովրդի կյանքում սոցիալ-պատմական մեծ տեղաշարժեր կատարվեցին, մասնավորապես, հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, այսինքն հայերենի զարգացման սովետական շրջանում, որի համար խիստ բնորոշ է մեծ թվով բաների իմաստային կառուցվածքի փոփոխության արագ թափը: Այսպես՝ խրհիթ բառը սոցիալիստական դուրս արագընթաց վերափոխման հետևանքով իմաստի ֆունկցիոնալ անցմամբ ձևոր բերեց նաև դյուզական ընթերցարան, զբաղարան իմաստը (տես § 225):

Բանան նշանակում էր խոսելու ընդունված ներ, սովետական շրջանում ստացավ սովետական կուսակցական, հասարակական կազմակերպությունների ռեյստերի կամ ժողովների որևէ հարցի քննարկումից կախացած զբավոր որոշում՝ իմաստը: Այս իմաստ այնքան բնորոշ գործավ վերոհիշյալ բառի համար, որ վերածվեց հինական կամ ուղղակի իմաստի, իսկ նրբունի հիմնական իմաստը (բնիմաստը) մթաղեց:

Տարբեր ժողովուրդների մոտ միաժամանակ կատարված միևնույն սոցիալ-պատմական տեղաշարժերը հաճախ իմաստային միասնակ տեղաշարժեր կալուզ են առաջացնել նաև տվյալ ժողովուրդների լեզուների իմաստարանության համակարգում: Այսպես՝ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մի շարք բաներ Սովետական Միության շատ ազգերի լեզուներում միասնակ իմաստափոխություն կրեցին: Մասն անմիջականորեն նպաստում էր ուսուսանող համապատասխան բաների իմաստափոխության անմիջական ազդեցությամբ, հաճախ նաև դրանց ուղղակի պատճենմամբ, նոր իմաստների ձևոր բերեցին: Այդպիսի ընդհանրական իմաստափոխություններից կարելի է նշել մի շարք բաներ, որիցնակներ՝

Ընկեր բառը մինչ հեղափոխությունը հայերենում ուներ

միասին աշխատող, համագործակից, հասակակից, համախոն, ուղեկից և այլ իմաստները, Սովետական դարաշրջանում ուսերենն товарищ բառի ազդեցությամբ դարձավ մտրդանց, աշխատակիցներին զմեկու ամենաերջրունված և տարածված ձևը (հմմտ. բնկեր կապիտան, բնկեր վարորդ, բնկեր դերկետոր, բնկեր Ավադյան և այլն)¹⁴ ստանալով նոր՝ ֆուզաացի, կոլեկտիվի անդամ իմաստները (հմմտ. Կիևից երկու բնկեր էին և կելի, Համագործարից բաջուկայում էին երկու բնկերներ և այլն):

Խորհուրդ բառը զինու հին հայերենում ունի մասնություն, խրատ, խորհրդակցություն, միտք, խելք, գաղտնիք, դիտավորություն իմաստները: Ժամանակակից հայերենում գրիտվոր կամ ուղղակի իմաստն է 1. կողմնորոշող միտք, խրատ, ցուցմունք և սպա մի բանի անմացյալ իմաստներ. ինչպես՝ 2. միտք, մտածմունք, մտադրություն, 3. գաղտնիք, 4. նպատակ, 5. հանձնաճարություն, 6. կյանքի և բնության էություն: Սովետական շրջանում ուսերենի սովետ բառի իմաստի պատճենում էր և փոխանում էր ստացավ նաև հետևյալ իմաստները՝ ա) որևէ հիմնադրության կամ կազմակերպության կարգավորիչ մարմին (հմմտ. մանկավարժական խորհուրդ, գիտական խորհուրդ, պլանայների խորհուրդ, Անվտանգության խորհուրդ և այլն), բ) պետական կառավարման ձև, մարմին (մինիստրների խորհուրդ, խորհրդային իշխանություն, ժողովրդական անտեսության խորհուրդ և այլն), որը 1940 թվականից գործածվում է մեծ մասամբ փոխառալ ձևով. ինչպես՝ Սովետական իշխանություն, քաղաքային սովետ, շրջանային սովետ և այլն:

Հայերենում կարմիր հատկանշային իմաստ ունեցող բառ է և ունի այլևս գույն իմաստը (հմմտ. կարմիր դրոշ, կարմիր դեմքի, կարմիր գույն և այլն): Սոցիալիստական հեղափոխության դարաշրջանում ուսերենի ազդեցությամբ ստացավ սցիզալիստական գաղափարախոսություն ունեցող, հեղափոխական, աշուճհատև՝ կոմունիստ աստիճայական, այլև հատկանշային իմաստները (հմմտ. կարմիրները հազիցենի, կարմիր ղեկավոր, կարմիր բանակ և այլն):

Սրա հետ կապված իմաստափոխություն կրեց նաև սպիտակ հատկանշային բառը, որը ստացավ ցարական միապետական կարգերի պաշտպան, հակահեղափոխական իմաստները: Հեղա-

փոխության հաղթանակից հետո հիշյալ բառերի նոր իմաստները աստիճանաբար դուրս եկան գործածությունից (բացի կարմիր բանակ, կարմիրբանակային բառերից) և պահպանվեցին միայն պատմական փաստաթղթերում ու պատմական թեմաներով գրված աշխատություններում:

Նույն վիճակն ունեցան նաև ուսերենի бедняк և средняк բառերի պատճենումներով առաջացած չվաճոր և միջակ բառերի նոր իմաստները (չբավոր՝ հողազուրկ գյուղացի, միջակ՝ հող և անանասխյուն ինչ-որ չափով ունեցող)¹⁵ կապված 1920—30-ական թվականների գյուղի սոցիալական շերտավորման և վերափոխման պատմական պրոցեսի հետ:

Այդպես էլ զուտ, զանց բառերը, որոնք ուղղակի իմաստներով նշանակում էին մաքուր, բնորի, առանձնացել, 20—30-ական թվականներին սկսեցին գործածվել ձևափոխությունը, կազմակերպությունը, անհարգալուտ արբերից մաքել իմաստներով¹⁶, որ նույնպես կապված է Հայաստանում և Ռուսաստանում միաժամանակ կատարված պատմական հիշյալ իրադարձության հետ (հմմտ. սուս. прочесать-прочесываться):

Աստու բառը նոր իմաստ ձևեր բերեց ուսերենի подкладка բառի ազդեցությամբ՝ ստանալով մեկնաբանություն, երևայքի, գործի ենթին՝ գաղտնի կողմը փոխաբերական իմաստները:

Մաքել բառի՝ որևէ առաժմություն հավասարուղից վնասագրեծել, մաքել նոր իմաստը նույնպես ուսերենի прочесать, прочесываться բառերի իմաստներով պատճենումով է առաջացել Այս իմաստափոխությունը հաստատուն դարձավ և տարածվեց մասնավորապես հայրենական պատերազմի տարիներին:

Սոցիալ-պատմական փոփոխությունները խիստ զգալուն ձևով են անդրադառնում փոզդերի լեզվի, նրա բառապաշարի և մանականից բառերի իմաստային կառուցվածքի զարգացման և փոփոխության վրա: Սոցիալ-պատմական անդալարները ուղղակիորեն դառնալով շատ բառերի իմաստափոխության պատճառ, միաստանակ հիմք և խթան են հանդիսանում նաև բառիմաստային փոփոխությունների մյուս հիմնական զրգապատճանների՝

¹⁴ Այս և վերահիշյալ միջակ և չբավոր բառերի իմաստափոխության վերաբերյալ տե՛ս Գ. Քեզրյան «Ռուսիստոսի փոփոխություններ», Հայոց լեզվի զարգացումը Սովետական շրջանում, էջ 22):

գաղափարախոսության փոփոխության, հասարակական վերաբերմունքի, գիտության և տեխնիկայի զարգացմամբ կատարված փոփոխությունների, բնիմաստի մրազնման և այլնի համար:

§ 235. Բառիմաստի փոփոխության վերահիշյալ պատճառները, սնչուշտ, լրիվ չեն արտացոլում բոլոր բառերի իմաստափոխությունները: Բերված են բառերի կրած իմաստային փոփոխությունների միայն ընդհանուր, հիմնական պատճառները: Իմաստափոխության կարող են առաջացնել բաղմամբիվ և բազմազան երեզվոյթներ, այն է՝ հասարակական կյանքում կատարված բոլոր երեզվոյթները՝ առաջըրական, տնտեսական, կենցաղային հարաբերություններ, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացումը և փոփոխություններ, համաշխարհային և մտածողության զարգացումը, հոգեբանական ու սուրբիտիվ մտնեաններ, բերականական կառուցվածի փոփոխություններ, մարդկանց պատկերավոր մտածողությունը և դրա հետ առնչված իմաստային զանազան փոխաբերական անցումներ, գեղարվեստական խոսքը, այլ լեզուների զարգացություններ և վերջապես առանձին բառերի իմաստային յուրահատուկ առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են ընձեռում իրենց իմաստային տարողունակության բնորոշման, նեղացման և շրջման համար: Վերահիշյալ բոլոր պատճառներն էլ, երբան են գալիս պատմական կոնկրետ ժամանակահատվածում, կոնկրետ իրադրության և կոնկրետ լեզվի մեջ:

ԲԱՌԻ ԶԵՎՐ, ԽՄԱՍՏՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈՒՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՐ

§ 236. Հայտնի է, որ լեզվական ձևը և իմաստը կամ արտաձայնության և բովանդակության պլանները հանդես են գալիս միասնաբար և պայմանավորված են միմյանցով:

Ձևի և իմաստի նման փոխհարաբերությամբ է օժտված նաև բարը, որը իր բնդհանրացնող բնույթի շնորհիվ օժտված է և՛ նույնացման, և՛ տարբերացման գործառույթով: Հենց այս յուրահատկությամբ էլ այն հանդես է գալիս իմաստային տարբեր խրտրերում:

§ 237. Լեզվական ձևերի և դրանց իմաստների կամ արտաձայնության և բովանդակության պլանների փոխհարաբերության միջև նկատվում է այն օրինաչափությունը, որ յուրաքանչյուր լեզվական ձև կարող է ունենալ մի քանի իմաստ, և, բնդհանրապես,

կատակը, յուրաքանչյուր իմաստ կարող է դրսևորել տարբեր ձևերով կամ ունենալ տարբեր ձևական կառուցվածք:

Այն երևույթը, երբ լեզվական մեկ ձևով արտահայտվում է մի քանի միմյանց հետ առնչյող իմաստ, կոչվում է բազմիմաստություն, երբ բոլորովին տարբեր իմաստներ՝ համաձուլություն: Իսկ այն երևույթը, երբ տարբեր լեզվական ձևերով արտահայտվում է մեկ ընդհանուր իմաստ, կոչվում է համաբիշխություն:

Բառի բազմիմաստությունը և մեկիմաստությունը

§ 238. Բառի իմաստային կառուցվածքը խիստ բարդ համակարգ է. նրա իմաստային տարողունակության աստիճանը ընդլայնվում և աճում է հարորդակցության պրոցեսում, բառի խոսքային մակարդակում:

Լեզվի հարորդակցույթյան և մասնավորապես խոսողության պրոցեսում առկա են ունենում փոխաբերական բազմապիսի և բազմաբնույթ պրոցեսներ, որոնք փոփոխություն են առաջանում նաև բառերի իմաստային կառուցվածքի մեջ. առաջանում են տարբեր իմաստներ և նույնիսկ տարբեր բառեր: Հետևաբար, բառերի փոխաբերական կիրառությունները աստիճանաբար հանգեցնում են նրանց բազմիմաստությանը:

Այն երևույթը, երբ մեկ լեզվական ձևով արտահայտվում է միայն մեկ իմաստ, կոչվում է մեկիմաստություն:

Մեկիմաստ բառերի քանակը խիստ սակավ է՝ համեմատած բազմիմաստ բառերի հսկայական թվի հետ: Մեկիմաստ են հիմնականում հատուկ անունները և տեխնիկական ու գիտական տերմինները:

Մանր.— Լեզվաբաններից ամենք առհասարակ ժխտում են բառի բազմիմաստության անտարակիչի փաստը: Այսպես՝ Ա. Ա. Պոտեբյան բառի աժեն մի նոր գործածություն համարում է տարբեր բառ. «Բոտեղ երկու իմաստներ են, այնտեղ երկու բառեր են... Բրականում կա միայն տարբեր բառերի համահնչյունություն, այսինքն այն հատկությունը, որ տարբեր բառեր կարող են ունենալ միևնույն հնչյունները»¹⁵, Էստ Լ. Շչերբայի «Բրականում

¹⁵ А. А. Потебня, Из записок по русской грамматике, т. IV, М.—Л., 1941, стр. 198.

մենք ունենք այնքան բառեր, որքան իմաստներ ունի տվյալ հոն-
չյունական բառը»¹⁶։ Շատերը միտում են նաև բազմիմաստություն
և համանունության կապը¹⁷։ Միևնույն բազմիմաստությունը և հա-
մանունությունը ևս իմաստարանական միևնույն պրոցեսի զար-
գացման և դրսևորման տարբեր աստիճաններն են (խոսքը միև-
նույն բառածնից առաջացած (համարմատ) համանունների մա-
սին է)։

§ 239. Բազմիմաստ է այն բառը, որի արտահայտած իմաստ-
ները լեզվի զարգացման տվյալ կորվածքում կապված են միմյանց
հետ, և այդ իմաստային կապը պատճառարանված ու հիմնա-
վորված է զուգորդային դանազան հարաբերություններով ու կա-
պերով։

Միևնույն բառի (բազմիմաստ) բառիմաստային յուրաքան-
չյուր տարբերակ ուղղակի իմաստի հետ գտնվում է որոշակի հա-
րաբերության մեջ և առնչվում է որևէ զուգորդությանը։ Բառի
իմաստային տարբերակները տարբեր են լինում քե՛ր իրենց ինքնու-
րույնության և կայունության աստիճանով և քե՛ր գործածության
պլուստով։ Բառիմաստային տարբերակները ճիշտ որոշելու և սահ-
մանադատելու համար անհրաժեշտ է քաղահայտել իմաստային
բազմաբարձր զուգորդումների միաճշտաված տարբերք։

Այսպես՝ բառի փոխաբերական գործածության շնորհիվ իմաս-
տային գանազան զուգորդությունների (անանույնական, աղքեմբերու-
թյան և այլն) միջոցով բնորոշվում են բառերի իմաստային տա-
րողության սահմանները, բառերը իրենց հիմնական կամ ուղղակի
իմաստների կողքին ստանում են նաև մի քանի անոնցայլ
իմաստներ, օրինակ՝ բռնել բայը իր հիմնական իմաստի (ձևու-
թերով, ատամներով, բերանով որևէ բան սրահել) կողքին ստացել
է հետևյալ փոխաբերական իմաստները 1. մերթապղի, կայանա-
վարել, արգիլել, փակել (ղուր բռնել), 2. գրաղցնել, ծածկել,
3. հայտնաբերել, պարզել (սխալը բռնել), 4. ազգիկ, ներգրծել
(օդին զլուխը բռնել), 5. արմատակալել, պողպատել (ձաները

բռնել են), 6. որևէ նախորդում կամ սովորություն երևան գալ
(գծովայնոր բռնել, բարովայնոր բռնել), 7. կաշվել (թթուն բռնել,
գույնը բռնել՝ ներկվել), 8. լուծույթ պատրաստել (աղաչուր բռ-
նել, շաքարաչուր բռնել) և այլն։ Վերոհիշյալ բոլոր անանցյալ
իմաստներն էլ հիմնական կամ ուղղակի իմաստի հետ գտնվում են
որոշակի հարաբերության մեջ։

Խափառ բառը իր ուղղակի իմաստով նշանակում է՝ 1. մրու-
րյուն, լույսի քացակայություն։ Այս իմաստի հետ կապված են
հետևյալ անանցյալ իմաստները. 2. տգիտություն, նեղամտացու-
րյուն, անգարգացածություն (հմտա. «Թաղիպանը բնորոշում էր
ստիական խավարի գեմ», ԳԹ, նաև՝ խավարի թագավորություն),
3. կուր (խավար աչքեր, աչքի լույսը խավարել), 4. շարա-
գույժ, շար («Ձենն տվավ թաղում մի խավար կասկած», ՀԹ), 5.
անկայլ, աղոտ, ոչ պարզ, ոչ որոշակի (խավար լուսին, խավար
դեղեր, խավար լուսանկար) և այլն։

Միևնույն բառածեղի սահմանում հանդես եկող վերոհիշյալ
բոլոր անանցյալ իմաստներն էլ ուղղակի իմաստի հետ գտնվում
են որոշ հարաբերության մեջ, բնդ որում անանցյալ իմաստներից
որևէ մեկը կամ երկուսը ուղղակի իմաստի, այլև միմյանց հետ
կարող են առնչվել առավել անմիջական կապերով։

Մասն բառը զեռես հին հայերենում նշանակում էր մտնելը,
զար, մտնելու, անցնելու տեղը, աշխարհաբարում այս հիմնական
իմաստների կողքին ստացավ նաև ֆինանսական տերմինի իմաստ
(հմտա. մուտք անել)։ Մայրենի բուն իմաստով նշանակում է
մայրական (այսպիսի իմաստ ուներ զեռես հին հայերենում), աշ-
խարհաբարում ստացավ նաև նայրենական իմաստը («Մայրենի
լեզու, մայրենի քարթառ, ասորով, բնտանի իմ սիրտ համար» ՄԹ,
կամ «Ե՛վ մայրենի կամածեմի խուշերում եմ վառել քեզ», ՎԳ,
22)։ Աշխարհաբարի սովետական շրջանում այն ստացավ նաև
լեզու իմաստը («Իմ մայրենի, իմ քարթառ, կրակի հետ արարել,
կրակի պես սրբազան քեզ դարձրար եմ տարել», ՎԳ, 22; Կառ
«Բյուր լեզու դիտես օտար աշխարհում, բայց թե մայրենիդ խորթ
է քեզ համար, Հուր լեզուդ պղկած հարց եմ մանդակում», 26)։

§ 240. Բազմիմաստ է հայերեն բառերի մեծագույն մասը։
Բազմիմաստությունը հատուկ է նաև բարդ բառերին. հիմնա-
կանում դարձվածային հարադրական բաղիբին և իսկական բար-

¹⁶ Մ. В. Щерба, Опыт общей теории лексикографии, «Известия» АН
СССР, отд. линг. и языка, 1940, № 3, стр. 107.

¹⁷ А. А. Булаковский, Введение в языковедение, 1953, стр. 40.

А. Абеля, О подходе омонимов в словаре, «Вопросы языкознания», 1957,
№ 3, стр. 40.

դուրբութեններին, այսպես՝ աշխեր բացել նշանակում է՝ 1. արքանալ, 2. սկսել կյանքը ճանաչել (սեւեւ մեր գյուղը դիտակի փփին, Այստեղ եմ ես իմ աչքերը փացելը, 2. Հայրապետյան, զասպիրք), 3. սրափվել, ուշի գալ, 4. զլիք բնկնել, զգաստանալ:

Գլխին տալ նշանակում է՝ 1. գլխին խփել, հարվածել, 2. ճրնշում գործարել, լուցնել, 3. ողբալ, ափսոսալ:

Գլխի տեւ նշանակում է՝ 1. տեւ, սիրակալ, իշխան, 2. ամուսին (հմմտ. գլխավոր) և այլն,

Քացի այս, մեծ թիվ են կազմում այն իսկական բարդությունները, որոնք շարահյուսական կապակցության վերածելիս արտահայտում են երկու և ավելի շարահյուսական հարաբերություն, այսինքն արտահայտում են երկու և ավելի բառնախմբաներ: Այսպես՝ հրաբխածին արտահայտում է կ' հրաբխից ծնված, կ' հրաբուխ ծնող, անըսածին՝ անուշից ծնված և անուշ ծնող. լուսածին՝ լուսից ծնված և լույս ծնող շարահյուսական հարաբերությունները, ծովածավալ՝ ծովի պես, ծովի նման ծավալված և ծովի շափ ծավալված և այլն:

Բարդություններից շատերի հենց այս յուրահատկությունն էլ (նրանց միաժամանակ տարբեր բառնախմբաներ պարունակելու պատենցիակ հնարավորությունը) հանգեցնում է բազմիմաստություն:

Այդպիսին են, օրինակ, զործողություն անվան իմաստ արտահայտող բարդություններից շատերը. ինչպես՝ արևածագ, այգաբաց, այգեկուր, այգեբաղ, զարեանապատ, իրիկեմամուտ, աշենեմամուտ, լուսաբաց, խոտանեն, տերևաբուխ և այլն, որոնք երբորդարար արտահայտում են նույն ժամանակային իմաստ, ինչպես՝ արևածագ (արևի ծագելը և արևի ծագելու սրահը կամ ժամանակը՝ վաղ առավոտյան), այգաբաց (այգի բացվելը և այգի բացվելու ժամանակը), այգեբաղ (այդու բաղելը և այգին քաղելու ժամանակը՝ խոր աշնանը), մայրամուտ (արևի մայր մտնելը և մայր մտնելու ժամանակը՝ իրիկեանդան), իրիկեմամուտ (երեկոյան կողմ և այդ ժամանակը):

Մանր.— Իմաստային երկվեդկվածությունը առավելապես զգալի է իսկական բարդության գոյական + բայարմատ (հմմտ. լուսածին = լույս ծնող և լուսից ծնված) և գոյական + գոյական (հմմտ. լուսերես = լույս երեսով և լույս երես ունեցող) տիպի կաղապարներով կազմված բարդություններում:

Նման բազմիմաստ բարդությունների իմաստային կոնկրետ գրեթորմաները կա բացահայտվում են միայն խոսքային միջավայրում:

§ 241. Հաճախ բարդության իմաստի բաղմաբեկությունը կախված է վերջին ձևույթի կամ բաղադրիչի բնույթից. այսպես՝ կան գերադաս բաղադրիչներ, որ կարող են ընկալվել և բայական, և առարկայական իմաստով. ինչպես՝ մարգարապար, ոչունհաշար բարդ բառերը կարող են ընկալվել և իրեն մարգարիտների, ոչունհեծի շարժ (գոյական), և՛ իրեն մարգարիտներով շարված (մատանի, զարդ, փխր. տողեր, ատամներ) կամ ուղեհեծերով շարված ռեւէ առարկա (ածական) և այլն: Այս երկու խոսքի մասային ինչպես և բառային իմաստների կոնկրետ գրեթորմաները ուղղակիորեն կախված են հիշյալ բարդությունների խոսքի մեջ ունեցած կոնկրետ գործածությունից:

Բազմիմաստ բարդություններում բազմիմաստությունը արտահայտվում է բարդության ներսում, թաքցված է հենց բարդության իմաստի մեջ և երևան է գալիս խոսքի մեջ. դժվար է խոսքից դուրս ասել, թե բարդության (նրա շարահյուսական կապակցություն) արտահայտած ո՞ր իմաստն է վերիշխում. այսպիս օրինակ՝ լուսերես բարդության արտահայտած լույս երեսով (սեւեւերես կցրես մատախուղն իմ հողուս, ՎՏ), թե՛ լույս երես ունեցող (սԳուլան հանեց լուսերես, կամաց ասաց,— Անա՛ նա, Դասագիրք) իմաստները: Բազմիմաստ բարդությունները ունեն այն յուրահատկություններ, որ սովորական բազմիմաստ բառերի նման չունեն զգեսավոր կամ անանցյալ իմաստներ, և բոլոր իմաստներն էլ միմյանց նկատմամբ գտնվում են հավասար բաշխման հարաբերության մեջ:

Բազմիմաստություն և համանիշություն

§ 242. Ասվեց, որ բառը իր ընդհանրացնող բնույթի շնորհիվ օժտված է տարբերացման և նույնացման գործառնությունով: Այս յուրահատուկ առանձնահատկությունն շնորհիվ էլ բառը կարող է հանդես գալ իմաստային տարբեր խմբերում (տե՛ս § 236):

Բառի տարբերացման և նույնացման գործառնությունների հետ են առնչվում բազմիմաստությունը և համանիշությունը: Այսինքն՝

միևնույն լեզվական ձևից առանձնանում կամ տարբերացվում են բառիմաստային նոր տարբերակներ, և տարբեր լեզվական ձևեր խնայասպաս մտնենում, նույնանում են: Սա չիզվի արտահայտության և բովանդակության պլանների բազմաբնույթի և բազմատեսակ փոխհարաբերություններից մեկն է, որն անբաժանելի է լեզվի զարգացման պրոցեսից:

§ 243. Բազմիմաստությունը և համանիշույթունը իբրև լեզվական կրեոլիզների բազմաբնույթ ընդհանրություններ ունեն և փոխադարձորեն կապված են միմյանց հետ: Այսպես՝ բազմիմաստ բառի բառիմաստային տարբերակների սահմանազատումը կատարվում է հանախ նրանց համանիշային իմաստների համադրությամբ և տարբերակմամբ:

Համանիշույթունը և բազմիմաստությունը իբրև լեզվական կրեոլիզների ընդհանրության եզրեր են գտնում և խաչաձևվում են նաև բազմիմաստ բառի իմաստային տարբերակների միևնույն և տարբեր համանիշային շարքերում ունենցած գործածությանը. այսպես, և՛ ի վատիկեր բազմիմաստ բառը հանգես և խաչաձևվում են և զեմֆ, երես (զեղեցիկ), այլև նկար երեք տարբեր բաներով կազմված համանիշային շարքերում, այսպես ընդհանրապես բառը իր բառիմաստային մի ընդհանրաբանակներով կարող է հանգես գալ համանիշային միևնույն շարքում, այսպես՝ բաժնեկր բազմիմաստ բառի մակարդակում տարբեր այլ իմաստների կողքին կան ծածկիկ, պանկ, բողբոջիկ, շառամայանկ, գաղտնի պանկ և այլ իմաստները, որոնք բոլորն էլ հանգես են գալիս նաև բաժնեկր բառով կազմված համանիշային շարքում. ինչպես՝ բաժնեկր-ծածկիկ, բողբոջիկ, գաղտնի պանկ, շառամայանկ, կոճիկ, սվադի, ծածկազմից անկ, ապակի անկ և այլն:

Նշանակում է, բազմիմաստ բառի համակարգում իմաստային տարբերակներից մի քանիսը, իմաստային առումների աստիճանական անցման հետևանքով, կարող են ունենալ նման և մոտ կամ համանիշ իմաստներ և միմյանցից տարբերվել միայն նրբերանգա-իմաստային հատկանիշով, ինչպես համանիշային շարքերի անդամները:

ՀՈՄԱՆԻՇ ՔԱՌԻՐ

§ 244. Ժամանակակից հայ թերականազիտության մեջ հիշյալ իմաստաբանական իրողության համար գործածվում են նույնանիշ, համանիշ և հոմանիշ տերմինները:

Մրանք ստուգաբանորեն նույնը լինելով հանդերձ՝ ստացել են իմաստային տարբերակում, թեև լեզվաբանական գրականության մեջ զեռես նկատվում է այս տերմինների գործածության անմիօրինակություն: Հայ լեզվաբանական գրականության մեջ իմաստային և կիրառական նրբերանգներ ունեցող բաների համար գործածվում են հոմանիշ և համանիշ տերմինները:

Համանիշ տերմինը առաջին անգամ գործածել է Մ. Աբեղյանը և հասակ կերպով տարբերակել նույնանիշ և համանիշ տարբերակները (թեև լեզվական բուն իրողության համար զեռես սահասարակ գործածում է նույնանիշ տերմինը և համանիշ դիտում նրա մեկ տարբերակը)¹⁸:

Հոմանիշ տերմինը համանիշ իմաստով գործածվել է Ա. Աճառյանի քերականության, ինչպես և զարգացական քերականության գասագրքերում¹⁹:

Համանիշ և նույնանիշ տերմինները նույնացվել են Ա. Մուրվալյանի աշխատությունում և Վերդիի շրջանի զարգացական քերականություններում²⁰:

Արեւելանից հետո նույնանիշ և համանիշ տերմինները լեզվաբանական մի շարք աշխատություններում սկսեցին կիրառվել աղբն իմաստաբանական իմաստներով²¹. նույնանիշը՝ լրիվ նույն իմաստ ունեցող լեզվական միավորների համար, համանիշը՝ ստավիլ մոտ, մերձավոր, նման կամ իմաստային և սճական-գործառական նրբերանգներով տարբերվող լեզվական միավորների

¹⁸ Տե՛ս Մ. Աբեղյան, նշված աշխ., 1965, էջ 154—162:

¹⁹ Տե՛ս Հ. Աճառյան, Կեպտար քերականության հայոց լեզվի, 1950: Ա. Վարդյան, Հայոց լեզու, 1959, էջ 51: Է. Ազոյան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, 1967, էջ 59:

²⁰ Տե՛ս Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, 1955, է. Ազոյան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու:

²¹ Ա. Գրիգորյան, Հայոց լեզվի գասագրքը, Երևան, 1963, էջ 50: Ն. Պտուկյան, Շարժյունական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970: Ա. Սուխայան, Համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 23:

Համար: Այս իմաստով համանիշ տերմինը առավել զերգրասելի է համանիշ տերմինից նախ՝ Արեւիչանի ստեղծած և ձեռք կիրպով տարբերակված տերմինին նախապատասխանություն տալու և հետո՝ արեւելահայ գրական լեզվում հնավ՝ նախածանցի հոմ-ից կենտու-նակ և գործուն լինելու համար²²:

Վերջին շրջանում (1956—1971) առաջարկվում է համանիշ տերմինը գործածել լայն առումով, հավանաբար ընդհանուր լեզվաբանության մեջ տարածված սինոնիմ (синоним = ռուս. синонимос) տերմինին²³, որը ընդունելի է վերոհիշյալ ընդհանուր հասկացության համապատասխան տերմինի (սինոնիմ) անհրաժեշտության և տերմինների գործածության մեջ միօրինակացում մտցնելու նկատառումով: Ավանդական լեզվաբանության մեջ հոմանիշները ուսումնասիրվել են գլխավորապես իմաստային կողմով, այսինքն բովանդակության պլանով: Վերջին շրջանում որս լեզվաբանության մեջ հետաքրքիր ուսումնասիրություններ են կատարվել հոմանիշների կառուցվածքային կազմի թննության վերաբերյալ²⁴:

§ 245. Հոմանիշները համաժամանակյա (սինխրոնիկ) լեզվական կարգ են, քանի որ արտահայտում են լեզվի ազլյալ փուլի բառապաշարին պատկանող բառերի ներքինաստային, ոճական, հուզաարտահայտչական երանգները:

Բառիմաստների հոմանիշային կապերը երևան են գալիս անպայմանորեն հազորդակցության, մասնավորապես, խոսողության պրոցեսում և, առհասարակ, խոսքային մակարդակում:

Բառերի հոմանիշային հարաբերությունների և կապերի որոշման խնդրում ամենաէականը իմաստարանական շափանիշն է: Այս շափանիշով են որոշում բառերի իմաստային կապերը, նրանք իմաստային նույնության կամ ընդհանրության, ինչպես և տարբերության աստիճանը:

²² Տե՛ս ն. Պառնայան, Շարժյուստակի հոմանիշները ժամանակակից հայերենում:

²³ Տե՛ս Պ. Քեյիբյան, Հոմանիշները և նրանց տարացման ուղիների մասին, Խ. Աբովյանի անվան Հայկական պետ. մանկ. ինստիտուտի գիթաական աշխատություններ, 1956, էջ 120—131, Ե. Սուրբայան, Հոմանիշները ժամանակակից հայերենում:

²⁴ Տե՛ս Ю. Апресян, Дистрибутивный анализ значений и структурная семантические поля, «Сов. Пр. Проблема синонима», ВЯ, 1957, № 6.

Սակայն բառերի իմաստային ընդհանրության, ինչպես և նրբերանգային իմաստների տարբերության հարցը բավականին դժվար է, քանի որ դժվար է նաև ձեռքտարեն սահմանազատել բառերի իմաստային մոտիկության կամ տարբերության աստիճանը, ինչպես և նրբերանգ հասկացությունը²⁵:

Իմաստային նրբերանգը իմաստային այնպեսի հատկանիշ է, որ երևան է գալիս հոմանիշային հարաբերություններով կապված մի շարք բառերի մեջ:

Ելնելով վերոհիշյալից, ինչպես և լեզվաբանական գրականության մեջ եղած համեմատաբար ճիշտ և ընդունելի կարծիքներից, բառային հոմանիշները կարելի է սահմանել այսպես՝ Հոմանիշներ են միևնույն հասկացություններն արտահայտող այն բառերը, որոնք տարբեր են ձևական կողմով, իսկ իմաստային կողմով կամ նույնական են, կամ ունեն ներբերակցային, եուզաարտահայտչական, կամ ոճական և գործառական տարբերություններ:

ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

§ 246. Հոմանիշները բոտ իմաստի նույնակալության կամ համընկնման աստիճանի լինում են՝ ա) նույնակիշներ և բ) համանիշներ:

Ա) ՆՈՒՅՆԱԿԻՇ ԲԱՌԵՐ

§ 24. Նույնակիշ են կոչվում իմաստով նույնական, ձևով տարբեր բառերը:

Ըստ իմաստային և գործառական հատկանիշի, նույնակիշ բառերը լինում են՝

ա) նույնանիշ բառեր, որոնք իմաստով և գործառությամբ (ոճական-կիրառական) բացարձակապես նույնն են:

Մրանց մեջ մտնում են հայրենի բառերով և դրանց փոխարինյալ համարժեքներով, միևնույն արմատներով կամ բառերով և նույնանիշ ածանցներով, այլև միևնույն բայերի համադրական և հարաբերական ձևերով կազմված բառեր. ինչպես՝ արարեցին-վերացարկել, աշխարհաբազախցի-կոսմոպոլիտ, արքայու-բա-

²⁵ Տե՛ս Յու. Աբովյան, Եզված աշխ.

ցարձակ, արոննեա-բաժանող, առատաբար-առատորէն, առավել-չապես-առավելաբար, արե-տեղզակ, ափսն-պնակ, ինտելիգենտ-մտավորական, արատակա-վերացական, Աստղիկ-Արուսյակ-Վենեռա, սավառակ-ինճնարիո-օղանով, շրբունճ-շուրբ, լրագրող-ժուռնալիստ, գաղտնի-ձածակ, խիզախորէն-խիզախաբար, մասնավորապես-մասնավորաբար, մասնակրեմ-պարիտան, բայր-բուրմունճ, լալ-լաց լինել, բացել-բաց անկ, շրջվել-շուտ գալ:

Վերոհիշյալ նույնանիշները (բացարձակ հոմանիշները) իմաստային կողմով լրիվ համընկնում են և կարող են փոխադարձաբար փոխարինել միմյանց:

բ) նույնանիշ բաներ, որոնք իմաստով նույնն են, բայց ունեն զործառական և ոճական տարբերություններ. օրինակ՝ կեղտոտ-ազտոտ, այա-բուշ, շրբունճ-պաշ-պոռոնկ, ձի-երկվար-ճոպուց, վաղր-էզուց, մեռնել-վախճանվել-մահանալ, լուր-տեղեկություն, վիզ-պարանոց, սիրուն-աղվար, ազնի-զնշ, ազնի-պոշ, մազ-վարս-նեռ-գնե, նոր-տարի-ամանոռ, քազավոր-արեա, ստոր-պաղ, ըշ-տապել-անապարել, պատվիրել-ապալարել, ռոմվայն-փոռ, տեղա-բյուն-պետություն, մայրաբազմ-բազմամայր-ստան, բշնամի-ոտար, կարդալ-ընթերցել, մեխ-զամ, հեշտ-դյուրիճ, զնալ-երբալ, զրամպանակ-հսակ, հով-համի, օծիա-բաժինճ, հանգցնել-մարել, քանկ-տող, մոտ-մեռն, աճախ-զործելի, սպիտակ-ճեռմակ, վեշ-վախճան, ախոր-ախազաղ և այլն:

Առաջին խմբի շարքերը թվապես քիչ են, սակավանդամ և շուրեն են սեռական տարբերություններ: Այս պատճառով էլ այս խմբի շարքերը առավել ենթակա են փոփոխության և աստիճանաբար նվազում են, քանի որ լեզուն չի սիրում միևնույն առարկային, հերևոյթին և զրանց հատկանիշներին մի քանի անվանումներ տալ, գործածել մի քանի բառաձևեր, այլ հետեղականորեն ձգտում է ազատվել նույնանիշների բառերից, պահելով նրանք, որոնք, նույնանիշ լինելով հանդերձ, ոճական տարբերություն ունեն: Նույնանիշները պահվում են, բայց, կապվելով որոշ կիրառությունների հետ, նշանակության նուրբ տարբերություն են ստանում, որով և վերանուն է նույնանիշների ավելորդ բեռը²⁶:

Վերոհիշյալ այա-բուշ, սպիտակ-ճեռմակ, շրբունճ-պոռոշ, օծիա-բաժինճ, ազնի-զնշ նույնանիշների դույզներում առաջին անգամները բնորոշ են գրական լեզվին, իսկ երկրորդները՝ ժողովրդախոսակցական: Նոր տարի-ամանոռ, լուր-ալեա, ձի-ճոպուց-երկվար, մազ-վարս-գնե-հեռ և այլ նույնանիշային շարքերում առաջինները լեզվի գրական նորմային են պատկանում, իսկ երկրորդները և երրորդները՝ գրական լեզվի գեղարվեստական ռոբոտին: Տարբեր են, քնականաբար, նաև առաջին և երկրորդ բազադրիչները՝ ալլ բառերի հետ ունեցած կապակցական հատկանիշները, ինչպես և զործածություն հաստատանությունները: Երկրորդ խմբի նույնանիշները շարքերի անդամները միջև եղած օճական-կիրառական տարբերությունների հետևանքով զրանք միմյանց կարող են փոխարինել միայն մասնակիորեն:

Ք 248. Նույնանիշները շարքերը թե՛ իմաստային և թե՛ կառուցվածքային տեսակետից հարուստ և բազմազան չեն, ինչպես համանիշների շարքերը. կազմված են մեծ մասամբ երկու և հազվադեպ երեք կամ չորս անդամներից, որոնք բոտ խոսքի մասային պատկանելության առավելագույն զոչական անուններ են. կան նաև անականներով և քիչ թվով բայերով կազմված նույնանիշներ:

Նույնանիշների շարքերը մի կողմից վերանում են զրանց իմաստների ճշման և մեկի տերմինային սրճոք ձևոք բերելու շնորհիվ, իսկ մյուս կողմից աճում են փոխառյալ բառերի, մասամբ նաև զրանց պատճենումների (հմտ-սավառնակ-ինքնաթիռ-օդանավ) ու սեփական համարժեքների հաշվին (հմտ. էլիլուցիցիա-բարեշրջություն, այժմնական-արդիական-ակտուալ, արտաբաղ-վերացական և այլն):

բ) ՆԱՄԱՆԵ ԲԱՆԵՐ

Ք 249. Համանիշ են կոչվում ձևով տարբեր, սակայն իմաստով իբրև մոտ կամ նման բաներ:

Համանիշները, իրանց իմաստային ընդհանրությամբ հանդերձ, տարբերվում են նրբերանգրային, ոճական, զործառական և հնչաարտահայտչական հատկանիշներով:

Համանիշ բաները կազմում են համանիշային շարք:

Ք 250. Համանիշային շարքը երկու և ավելի բառերի, ինչպես և դարձվածների փունջն է, որի անդամները կապված են համանիշային կապերով:

²⁶ ՏՃՍ Մ. Արևիյան, նշված աշխ., էջ 159:

Համանիշները շարքի համաժամանակյա լեզվական կարգ է և, ինչպես առկեց, համակարգային քնույթ ունի, քանի որ համա-
նիշային շարքի անդամների իմաստարանական կազմին ու հա-
րաբերությունները համակարգային հարաբերությունների ար-
դյունք են:

Համանիշների շարքերը սերտորեն առնչվում են լեզվի բա-
նապաշարի փոփոխության հետ: Համանիշային շարքերի վրա ազ-
դում են և բառակազմական, և իմաստաբանական փոփոխություն-
ների (նորարանությունների մուտքը, նաերանությունների պատիվ
շեղումն անցնելը և այլն), Մակայն իմաստաբանական պրոցեսների
հետևանքով համանիշային շարքերի մեջ տեղի է ունենում ոչ մի-
այն ծավալային կամ քանակական փոփոխություն (այսինքն շար-
քերի անդամների նվազման կամ ավելան բնույթի փոփոխություն),
այլ ներքին, որակային փոփոխություն. այսպես՝ շարքի մեջ մի
քանի նմանիմաստ բառեր աստիճանաբար իրենց են նմանեցնում
մի քանի իմաստային առավել տարբերություն ունեցող բառերի և,
ընդհակառակը, նույնիմաստ կամ նմանիմաստ բառերը շարքում
ստանում են իմաստային տարբերություն²⁷, կարճ ասած՝ տեղի են
ունենում համանիշային անմասնություն (համաբանություն) և
տարբանություն:

§ 251. Համանիշների շարքերը նույնանիշների շարքերի հա-
մեմատ առավել բազմանդամ են և հարուստ իմաստային կազմե-
րով ու յուրահատկություններով: Այսպես՝ նույնանիշները շունեն
ոչ նրբախնամաբանաբան, ոչ հուզաբարտաբանական տարբե-
րություններ: Նրանք առարկայի կամ հատկանիշի արտահայտած
իմաստով լրիվ համընկնում են և կարող են ունենալ միայն սեռ-
ական-կիրառական տարբերություններ (հմմտ. վիզ-դարանոց, այտ-
քուշ, սպիտակ-ներմակ և այլն): Նույնանիշների շարքերը, հաս-
կապես հայերեն գրական լեզվի, բարբառային կամ արևմտահայ
գրական լեզվի բառերով կազմվածները, հաճախ միանում են միև-
նույն հասկացությունն արտահայտող համանիշների խմբին և նր-
անց բազմապատ շարքում հանդես գալիս իրեն նրբիմաստների
կամ սեռական-կիրառական տարբերություն ունեցող համանիշնե-
րի մի սկզբնական աստիճան. ինչպես՝ վախ-ներկյալ և ան-սար-

ապի, դոզ, ահուղող և այլն. լալ-լաց լինել և աբասովել, ողբալ,
տուց ու շիվան սենել, ենկեկալ, ենծկալ, ենծեծալ, գլխին տալ
և այլն:

§ 252. Համանիշային շարքի անդամները պատկանում են
միևնույն քերականական կարգին. մեծ տեղ են գրավում գոյա-
կաններով, բայերով և անականներով կազմված բառախմբերը:

§ 253. Բազմիմաստ բառը համանիշային հարաբերության մեջ
է մտնում կամ լրիվ, կամ մասնակի կերպով, այսինքն՝ կամ բո-
լոր իմաստներով, կամ մեկ կամ մի քանի իմաստով: Այս յուրա-
հատկությամբ բազմիմաստ բառը կարող է հանդես գալ մի քանի
համանիշային շարքերում. ինչպես՝ պանել բազմիմաստ բառը
(ծածկել, թաքցնել, խնամել իմաստներով) հանդես է գալիս ծած-
կել, թափցնել, կոծկել, սվառել, ծածկազմվող սենել, տակովե սենել,
այլև եոզ տանել, մեծացնել, դաստիարակել համանիշային ասոր-
բեր շարքերում:

Համանիշների դասակարգումը

§ 254. Համանիշները տարբերակվում են գործառական,
իմաստային և կառուցվածքային հատկանիշներով²⁸:

Ա. Համանիշն են բի դասակարգումը բոս
գործառական հատկանիշի

§ 255. Ըստ գործառական կամ կիրառական հատկանիշների,
համանիշները լինում են՝

1. Լեզվի տարբեր սեներին պատկանող համանիշներ.

Լեզվի գործառական (ֆունկցիոնալ) հատկանիշներով տար-
բերվող համանիշները հիմնականում բաժանվում են երկու շեղ-
ութ. առաջին շեղութ սեռական տեսակետից շեղութ է և համընդ-
հանուր գործածություն ունի բոլոր սեներում, այսինքն պատկա-
նում է բառապաշարի համարգործական բառերի շեղութին, իսկ
երկրորդ շեղութ բառերը սեռականորեն տարբերակված են (սահ-
մանափակ գործածություն ունեն) և առաջին շեղութ բառերի ու
միմյանց հետ կազմում են համանիշական շարք. այսպես, օրինակ՝

27 ՏՃ՝ Ա. Մ. Սուխայան, Հոմանիշները մասնականից հայերենում, էջ 140:

28 ՏՃ՝ Ա. Մ. Սուխայան, Հոմանիշները մասնականից հայերենում,
էջ 132—134:

անկեխ, հիմար (համագործակցան կամ շեղոր), դմբ, սարսաղ (առօրյա-խոսակցական), հաշտվել (համագործակցան), յուլազգև (խոսակցական և բարբառային), դեղ (համագործակցան), հար (խոսակցական և բարբառային), բալասան, սպեղանի (գեղարվեստական), ուլարկել (համագործակցան), առահել (գրասենյակային), գործուրիկ (պաշտոնական), բարձրանալ (համագործակցան), հարկաշատ, երկնաբեր, երկնախոյզ (գեղարվեստական) և այլն, տեսարան, մեկնաբան (համագործակցան), դիտար (պաշտոնական) և այլն, հեռացնել, զուրա անել (համագործակցան), վառել, սրտաբակ (պաշտոնական) և այլն, մանզալ (առօրյա-խոսակցական), շրշի (գրական), գրտնել (գեղարվեստական), հեմել (բարձր սեփ) և այլն:

2. Լեզվի տարբեր շեղանքներն (հին, հնացած կամ պատիվ և համընդհանուր գործածական կամ ակտիվ) պատկանող համաներից:

Այս հատկանիշով կազմված համաներային շարքերից են՝ կապ, անշուրջուն (համագործակցան), աղեւտ, աղեւտակցություն (հին գրական), դաման (համագործակցան), անգոր, անսիրտ, անզորսմ (գեղարվեստական), անագորություն, դմեի, դմեղակ (հին գրական) և այլն:

Ք. Հ ա մ ա ն փ շ ն ն ր ք զ ա ս ա կ ա ր զ ու մ ք ը ս տ ի մ ա ս տ ա յ ի ն ս ա ա տ կ ու թ յ ա ն ա ս տ ի ճ ա ն ի ք

§ 256. Համաներական շարքի անդամները միմյանցից կարող են տարբերվել միեւնույն երևույթի, առարկայի, հատկանիշի և չարտերությունից գրանցման տարբեր աստիճաններով. ինչպես՝ լալ-հեկեկալ, հեկկալ, սղալ, սոզ ու շիվան անել և այլն, ուրախանալ-հեմվել, ցնծալ, աշխարհով մեկ լինել և այլն: Հավհամի, փորոհիկ, մերիկ և այլն. նեղանալ, գայլաճալ, բարկանալ, շարանալ, կտաղել, փրփրել, դիվոտել և այլն:

Պ. Հ ա մ ա ն փ շ ն ն ր ք զ ա ս ա կ ա ր զ ու մ ք ը ս տ ճ ու զ ա ս ր տ ա հ ա յ ա շ ա կ ա ն ն ր ա ն գ ն ն ր ք

§ 257. Համաներիցի բնորոշվումը և գործածությունը կախված է խոսողի նպատակից, նրա ստեղծարված վերաբերմունքից, հակումներից և այլն, որի շնորհիվ ստեղծվում են հուզարտահայտչական տարբեր երանգավորման համաներներ, օրինակ՝

սուկ-խմուկ, խաչանի, լափել, փորը լցնել, զխափել և այլն, խմել-լափել, մեռնել-սառնել և այլն, ծածկել-կոծկել, պարտակել, սվաղել, ծածկազմիտց անել և այլն. ծիծաղել-բեհալ, հեղուլ և այլն:

Հուզարտահայտչականությունը առավել բնորոշ է գեղարվեստական և խոսակցական շեղվել և առհասարակ խոսքային մակարդակին:

§ 258. Համաներային զբեթ բոլոր շարքերն էլ միավորվում են վերահիշյալ տարբերակիչ հատկանիշներից մի քանիսով և անխառն ձևով (միայն մեկ հատկանիշի հակադրությամբ) հազվագյուտ են հանդես գալիս. այսպես՝ համաներային լիակատար շարքերը կազմվում են նրանց և՛ ըստ գործառական (Փոնկեցիոնայ) — ոճական, և՛ ըստ հուզարտահայտչական, և՛ ըստ քառասյալաբային (անարդական, զոնհական, մեղմանական և այլն) շեղանքի ու այլ հատկանիշների համադրությամբ. ինչպես՝ օտնել (համերդհանուր), խմուկ, խաչանի (հուզարտահայտչական), լափել, փորը լցնել (անարդական) և այլն. բնել (համերդհանուր), մրտափել, խոտացնել, շեքնել (հուզարտահայտչական) և այլն. ծիծաղել (համընդհանուր), խեղալ, ասամները բացել, բեհալ, բեհալ, փորկալ, նեհալ, խրխնչալ, կարկաչել (առօրյա-խոսակցական, գեղարվեստական, հուզարտահայտչական) և այլն:

Պ. Հ ա մ ա ն փ շ ն ն ր ք զ ա ս ա կ ա ր զ ու մ ք ը ս տ կ ա զ մ ու թ յ ա ն

§ 259. Համաներական շարքերը ըստ կազմույթյան լինում են՝ 1) Բառային (բնի սրում և՛ պարզ, և՛ համադրական, և՛ հարադրական բառերով կազմված). ինչպես՝ արագ-չառ, շտապ, շուտափույր, անմիջապես, խեղալ և այլն. խմել-հարբել, կոծնել և այլն. մեծ-վիրավարի, անուրի, հեկայական. ծախսել-վատնել, շտալել և այլն. համաձայնվել-հաշտվել, յուլազգև և այլն. համահանվել-սիրա անել և այլն. բարևել-ողջունել, զլախ տալ. հասկանալ-բմբռնել, զլիսի բնկնել, կռահել, զգալ. սովորելը-վաբ ու բաբ, նխտակաց. նեհնացնել-զուրկ տանել, համը հանել և այլն):

2) Բառային և դարձվածային. օրինակ՝ զրպարտել-անվանալկել, անուր զցել և այլն. լաբել-մուրհեցնել, գայրակղել, զլուխ յուղել, զլիսի լալ լազալ, խեկից հանել, հանապարհից շեղել:

և այլն. վախենալ-սարսափել, զողալ-զույնը գցել, բուրք բեռանալ շտանալ, լեղին պատռել և այլն:

դ) Գարձվածային. օրինակ՝ Մի ձեռքը ծափ չի տա, Մի ծաղկով զարուճ չի գա, Մի ծիծեռնակը զարուճ չի բերի և այլն. Ասա րնկեցող ով է, ասեմ զու ով էս, նման զմեմանն զասեմի, եսմի զարք, գտեմի պուտուկ և այլն:

ՀԱՄԱՆՈՒՆՈՒ ԲԱՆԻՐ

Թագվածաստություն և համաճեմություն

§ 260. Երբ բազմիմաստ բառի իմաստային տարբերակները այնքան են հեռանում միմյանցից, որ խլվում է նրանց իմաստային անմիջական կապը, առաջնում են բառային համանուններ, այսինքն միեռնույն բառաձևով կամ հնչյունակազմով արտահայտվում են բոլորովին տարբեր համանունություններ:

Այն բաները, որոնք էությունական են հնչույթակազմով, հնչույթով և գրությամբ (արտահայտության պլանով) և տարբեր են նշանակությամբ (բովանդակության պլանով), կոչվում են համաճեմներ:

Համանունության հիմնական ազդուրներից մեկը բազմիմաստ բառի իմաստների հեռացումն ու անշատումն է կամ բազմիմաստության արտույնը:

261. Համանունների առաջացման մյուս ճանապարհը բառաձևերի պատահական զուգադրություններն են, որոնք առաջանում են զանազան պատճառներով՝ հնչյունափոխությունների, քերականական և բառակազմական ձևությունների հավելման, բառական փոխառությունների և այլն²⁰. Ինչպես՝ մարտ¹ (կոռիվ) և մարտ² (ամիս). լեռնապար¹ (լեռների պար) և լեռնապար² (լեռնային ապար). կիսել¹ (կտրել, անջատել) և կիսել² (ուտելիք), զոդ¹ (սարսուռ) և զոդ² (անվազող): Ընդ որում զուգադրվում են բառերի թե՛ ուղիղ ձևերը, թե՛ ուղիղ ու թեք ձևերը:

§ 262. Թեև տեսակետերեն կարելի է ընդհանուր առմամբ որոշել բազմիմաստության և համանունության սահմանները, սակայն որոճանկանում այդ միշտ չէ, որ հատակոթեն է որոշվում Այսպես, թեև պարզ է, որ բազմիմաստ բառի ուղղակի և անանց-

²⁰ Մանրամասն տե՛ս Ռ. Եղյանի, Համանուն բառերը ժամանակակից հայերենում, Թեհրանի համալսարան, 1972:

յալ իմաստների միջև կա իմաստային ուղղակի կապ, զգացվում են դրանց զուգորդական կապերն իրենց հարորդակաճեմությամբ և, քերականաբար, ստորադաս ու ենթաստորադաս հարաբերությամբ, սակայն համանունության զեպքում զուգորդական կապերն ու հարաբերությունները թուլանում են և հաճախ չեն գիտակցվում: Հենց այս զուգորդական կապերի թուլացման տարբեր աստիճաններով էլ որոշվում է բազմիմաստության և համանունության սահմանադրաման բարդ հարցը: Այսպես՝ եթե համանունական խմբի անդամների միջև դեռևս իմաստային թույլ կապ ինչ-որ չափով դրսևցվում է, ապա դրանք առավել մտտ են կանգնած բազմիմաստ բոլորիկ և նրանց համարմատ լինելը հնչույթայամբ ըմբռնվում է, ինչպես՝ ցակատ¹ (մարդու գլխի վերևի, աղբի, մասը) և ցակատ² (պատերազմում պաշտպանության զիծ). օղակ¹ (կտր, շրջանակաձև առարկա) և օղակ² (աշխատանքային փոքր կազմակերպություն). ական¹ (պաշտոնցիկ նյութ) և ական² (փոս, անցք, որոտի պաշտոնցիկ նյութ են տեղադրում) և այլն: Իսկ եթե իմաստային կապերը առավել հեռացած են և լեզվի տարժամանակյա քննությանը կամ պատմական մոտեցմամբ են բացահայտվում, ապա նրանք որոշակիորեն տարբերվում են բազմիմաստ բառերից, և նրանց համանուն լինելը ակնհայտ է. ինչպես՝ գունդ¹ (զորքի միավորում), գունդ² (կտր շրջանակաձև առարկա, այլև կոշտ մասնա. հմտ. խմորի գունդ և այլն). մեկնել¹ (զնալ) և մեկնել² (վերածնել, բացահայտել, վերադնել և այլն). լուծել¹ (խնդրի, հարցի վճանել, բացահայտել) և լուծել² (փորացավ, փորհարիկ բնկնել) և այլն:

§ 263. Ինքնուրույն հնչույթակազմն ունեցող բառեր, որ զտնվում են բազմիմաստությունից համանունության անցման սահմանագիծում, և զորվար է դրանք որոշակիորեն սահմանազատել, ինչպես՝ խոզուկ¹ (խոճկոր), խոզուկ² (զիրուկ) և խոզուկ³ (բժշկ. հիվանդություն):

Մանր.— Ինչու և արտասահմանյան լեզվաբանության մեջ համանունների ըմբռնման վերաբերյալ կա նաև այն կարծիքը, որ իբրև լեզվական էրևույթ նրանք բացասական են, խոշորոտում են հարորդակցության պրոցեսը և որտ բացում բառերի երկիմաստությունն ու իմաստաշփոթության համար²⁰:

²⁰ Бойлаховский. Из жизни омонимов. Русская речь, новая серия 1[111], Л., 1928. Реформатский, Введение в языковедение, 1967 և որինհեր

Սակայն համանունությունը, ինչպես և բաղմունաստությունը միանգամայն օրինաչափ լեզվական երևույթներ են, քանի որ հնչյունային ոչ մի լեզու ի վիճակի չէ լուրջաբանչափ հասկացություն և նրա համապատասխան բարդաստի համար առանձին ձև ստեղծելու, բացի այդ, բաղմունքով բառերի իմաստները բացահայտվում են որոշակի կապակցություններում, որոշակի կոնտեքստներում միայն:

Հ ա մ ա ն ու ճ ն ն եր ի շ ա Ր Ք Ր

§ 264. Համանունների շարքերը կազմված են երկու, երեք, չորս և երեմե էլ հինգ կամ վեց բառերից. օրինակ՝ բուր¹ (բթմահա) և բուր² (քերակ, կետազրական նշան), փող¹ (դրամ), փող² (խողովակ), փող³ (վիզ, պարանոց), ակ¹ (թանկագին քար), ակ² (ակունք), ակ³ (անիվ), ակ⁴ (թունի օղանցք), ակ⁵ (հեղուկ կերակուրների մեջ զցվող ձալարեղեն, հատիկեղեն) և այլն: Մրանցում գերակշռում են երկանգամ համանունական շարքերը:

Համանունական շարքի անգամները պատկանում են լեզվի դանազան ոճերին կամ բառապաշարի դանազան շերտերին, ինչպես՝ համագործածական կամ շեղք, գիտական (մասնագիտական, տեխնիկական), պաշտոնական, հնացած, բարբառային, խոսակցական, ղեղավիճասական, արևմտաօչայ հատվածի և այլն: Ընդ որում, համանունական շարքի անգամներից մեկը առավելագույն պատկանում է բառապաշարի ոճականորեն տարբերակված շերտին, իսկ մյուսը՝ համագործածական կամ շեղք շերտին. ինչպես՝ բեխում¹ (թխվելից, փխր. հակվածությունը գեպի որևէ մասնագիտություն, որևէ կողմ), բեխում² (քերակ, հողման և խոնարհման բնդհանուր անվանումը): Բացառված չէ և այն, որ համանունական շարքերը ամբողջովին պատկանեն բառապաշարի միևնույն ոլորտին, այսպես՝ լեռնապար¹ (լեռների պար) և լեռնապար² (լեռնային ապար) համանունները պատկանում են ոճականորեն շատերկրակված կամ համագործածական բառաշերտին:

Հ Ա Մ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Գ Ա Ս Ա Կ Ա Ր Գ Ո Մ Ը Ը

§ 265. Համանունները դասակարգվում են՝ ըստ ընդգրկման ձալարի և ըստ ձարման:

1. Հ Ա Մ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Գ Ա Ս Ա Կ Ա Ր Գ Ո Մ Ը Ը Ս Տ Ը Ն Գ Գ Կ Մ Ա Ն Յ Ա Վ Ա Մ Ի

Հայտնի է, որ համանունները հնչյունակազմով (ձևով) և հնչյունով (արտասանությամբ) համընկնում են՝ հակադրվելով միայն իմաստային կողմով: Սակայն համանունների մեծ մասը ձևով և հնչյունով համընկնելով ուղիղ ձևերում՝ կարող է հակադրվել քերականական կամ հարացուցային ձևերում: Այսպիսով, գոյություն ունեն համանուններ, որոնք նույնական են իրենց բոլոր ձևերում (և՛ ուղիղ, և՛ հարացուցային), և համանուններ, որոնք նույնական են միայն ուղիղ ձևերում և տարբերվում են քերականական կամ հարացուցային ձևերում: Համանունների այս էական հատկանիշը նկատի առնելով, ուս լեզվաբանության մեջ համանունները դասակարգվել են լրիվ և մասնակի տեսակներով³¹, որը և ընդունելի է:

Ա) Լրիվ համանուններ

§ 266. Լրիվ են այն համանունները, որոնք նույնական են, ինչպես ուղիղ ձևերում, այնպես էլ հարացուցային բոլոր ձևերում և պատկանում են միևնույն խոսքի մասին:

§ 267. Լրիվ համանունները լինում են՝ անվանական և բայական³²:

ա) Անվանական համանուններ: Անվանական խոսքի մասերից լրիվ համանուններ լինում են հիմնականում զոյական և ածական անունայինք:

Գոչանքով կազմված համանունների մեծ մասը պատկանում է ի հօդմամբ. ինչպես՝ ակ¹ (ձեռքի), ակ² (կրկ)-ափի, ափեր և այլն. մարտ¹ (կողի) և մարտ² (ամխ)-մարտի, մարտով և այլն. մուր¹ (մորթիլը), մուր² (մաշկ)-մորթի, մորթի և այլն. ծամ¹ (կենդեցի), ծամ² (մամանակ)-ժամի, ժամեր. լոռնապար¹ (լեռների պար) և լոռնապար² (լեռնային ապար) և այլն: Ածականով

³¹ А. Н. Смирницкий, Лексикология английского языка, М., 1956: «Некоторые замечания об английской омонимике», «Иностранные языки в школе», 1948, № 5.

В. В. Вансрадов, Об омонимии и смежных явлениях, «Вопросы языкознания», 1960, № 5.

³² Հմմտ. Ռ. Շարմը, Համանուն բառերը ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, ժող., Երևան, 1977 թ. № 4:

կազմված համանունական շարքերը առավել սակայլ են, քան զոչակահով կազմվածները: Ածականով համանուններ կազմվում են հիմնականում ան- ժխտական նախածանցով. ինչպես՝ անկար¹ (առանց կարի) և անկար² (անկարող անգործ). անւեր¹ (առանց սիրո) և անւեր² (առանց սերի) և այլն:

Գերանուններով և քվյականներով համանունական շարքեր համարյա թե չկան: Ծիշա այդպես էլ չեն հանդիպում նաև զուտ քիբքովոջ խոսքի մասերով կազմված համանունական շարքեր:

բ) Բայական համաձուլներ: Բայական համանունները ևս լրիվ կերպով համընկնում են և՛ ուղիղ, և՛ քեզական ձևերում: Բայական լրիվ համանունները անվանական համանուններից համեմատաբար քիչ են:

Բայական լրիվ համանուններից են՝ շրջել¹ (բայլել-դրոսնել), շրջել² (շուտ ապլ, դարձնել), վարել¹ (շարժել, բշել, առաջ տանել) և վարել² (հերկել):

Բ) Մասնակի համաձուլներ

§ 268. Մասնակի են այն համանունները, որոնք պատկանում են տարբեր խոսքի մասերի, նույնական են բառի ուղիղ ձևերում և տարբեր՝ քեզական ձևերում:

Մասնակի համանուններից են՝ սուր¹ (թուր) և սուր² (հատու, ծակող). լալ¹ (լաց), լալ² (ժանկապին քար), լալ³ (համբ), ապլ¹ (ամուսնու թույրը) և ապլ² (հանձնել). կանգուն¹ (կրկարություն չափ) և կանգուն² (անշարժ) և այլն:

Մասնակի համանունները բովանական մեծ թիվ են կազմում: Համանունական նման շարքերի մեջ իբրև բաղադրիչներ մասնակցում են զրիթն թույր խոսքի մասերը: Մրանցից ամենաակտիվը զոչականն է, որը համանունական հարաբերություն մեջ է մտնում զրիթն թույր մյուս խոսքի մասերի հետ. ինչպես՝ շինել¹ (գ-զգևում) և շինել² (բայ-պատրաստել). անւեր¹ (կնոջ հայրը) և անւեր² (բայ, բզգ, եղանակի, անցյալի եզակի 3-րդ դեմք). ալիել¹ (հատակը մաքրելու առարկա), ալիել² (մաղբայ=ալիելի). համար¹ (թիվ) և համար² (կապ). հանդերձ¹ (զոչական=հագուստ) և հանդերձ² (կապ=միասին) և այլն:

Առավել սակավադեպ են այն համանունական շարքեր, որոնցում զոչականը մասնակցություն չունի. աստիս¹ առաջին¹ (թվա-

կան) և առաջին² (կապ), անցավ¹ (ածական=առանց ցավի) և անցավ² (բայ) և այլն:

Մասնակի համանունները, ի տարբերություն լրիվ համանունների ըստ առաջացման սկզբնաղբյուրի հիմնականում տարբարմաս են, այլսինքն առաջացել են տարբեր ծագում ունեցող արմատներից:

Մանր.— Այն համանունները, որոնց մի եզրը բառի ուղիղ ձև է, մյուսը՝ բառաձև, լեզվաբանական գրականություն մեջ ընդունված է կոչել բաղաճեբանական, ինչպես՝ հարեմ¹ (բայ, բզգ, ձական այստեղի եզակի թվի 1-ին դեմքը), հարեմ² (կաննոց), գրող¹ (ստեղծագործող) և գրող² (հոգեառ հրեշտակ), կանե¹ (շին. գործիք) և կանե² (կուտ զոչականի սեռական ճուղվածակ):

Գ) Խառը համաձուլներ

§ 269. Այսպիսի համանունական շարքերը բազմանդամ են (ևռանդամ և քառանդամ) և քանակապես շատ չեն:

Խառն են համարվում այն համանունական շարքերը, որոնց անդամները միմյանց նկատմամբ գտնվում են և՛ լրիվ, և՛ մասնակի համանունական հարաբերության մեջ: Ընդ որում, երկու բաղադրիչներ կարող են գտնվել լրիվ համանունության հարաբերության մեջ, իսկ երրորդ կամ չորրորդ բաղադրիչի նկատմամբ՝ մասնակի հարաբերության մեջ: Խառը համանունների բաղադրիչները ըստ խոսքի մասային պատկանելության լինում են զոչական, ածական, բայ, մասամբ նաև՝ շաղկապ և ձայնարկություն:

Խառը համանուններից են՝ բուն¹ (գ.=արմատ), բուն² (գ.=բուն), բուն³ (ած.=իսկական, հիմնական). աղի¹ (ած.= ոչ անալի), աղի² (գ.=աղիք) և աղի³ (նվազարանի լար) և այլն: Ինչպես նկատվում է, վերոհիշյալ խառը համանունները թիև բաղմանդամ են նախորդների համեմատությամբ, սակայն քանակապես շատ չեն:

2. ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՍԱԳՄԱՆ

§ 270. Համանունները ըստ առաջացման կամ ծագման, լինում են երկու տեսակի, համարմատ (հոմոդեմ) և տարարմատ (հետերոդեմ):

Համարմատ են այն համանունները, որոնք առաջացել են միևնույն արմատի իմաստափոխություններից, այսինքն՝ բազմի-

մաստ բառի որիև իմաստային տարբերակի հետաքուստից և տարբերացումից (տարբերումից)։ Ինչպես՝ գլուխ¹ (մարդու և կենդանիների) և գլուխ² (զբբի)։ ակ¹ (մաստանու կամ դարբողենի վրա ամբացված բար), ակ² (անիվ), ակ³ (ակունք, ջրի սկիզբ աննելու տեղը), ակ⁴ (թուրի օղանքը), ակ⁵ (հեղուկ կերակրի մեջ զցելու մասի արեղեն)։ գատիկ¹ (բրիտանու հարուստի) և գատիկ² (միջրատ)։ սուր¹ (թուր) և սուր² (հատու) և այլն։

Տարբերմատ են այն համանունները, որոնք առաջացել են տարբեր արմատներից։ Ինչպես՝ մտրտ¹ (կռիվ) և մտրտ² (ամիր), այլ¹ (բարեմասվ), այլ² (տղամարդ), սեր¹ (զգացմունք) և սեր² (կաթի, մածուխի, սուրճի երես), լուծ¹ (եղենըը լծելու փայտե ձող) և լուծ² (փորհարիկ) և այլն։

Համանունական շարքեր կարող են կազմված լինել սոսկ համարմատ կամ տարբարմատ համանուններից, կամ և՛ համարմատ, և՛ տարբարմատ համանուններից։ Ինչպես՝ գլուխ¹ (մարդու մաս) և գլուխ² (զբբի գլուխ), զան¹ (հնց. ձեծ) և զան² (բալ, բղձ, եղանակի, սպանոնի ժամանակի հոգնակի 3-րդ դեմքը) և այլն։

Կեղծի բառային կազմի փոփոխության հետևանքով, փոփոխություն է տեղի ունենում նաև համանունական շարքերի մեջ, որի հետևանքով համանունական շարքերը կամ լրիվ կարող են քայքայվել ու վերանալ և կամ նվազելով դառնալ սակավանդան։ օրինակ՝ փող հնչյունակազմով բառանդամ համանունական շարքը ժամանակակից հայերենում դարձել է եռանդամ՝ փող¹ (զրամ), փող² (երաժշտական գործիք), փող³ (խողովակ)։ Չորրորդ բաղադրիչը՝ փող⁴ (վիդ, պարանոց), ժամանակակից հայերենում առանձին գործածություն չունի, թեև բաղադրություններում գործածական է։ Ինչպես՝ փողկաղ և այլն։ քայքայվել է նաև կույս հնչյունակազմով համանունական շարքը։ այլպես՝ կույս¹ (աղբիկ) և կույս² (կողմ) շարքի երկրորդ բաղադրիչը առանձին գործածություն չունի ժամանակակից հայերենում և կենդանի է միայն բաղադրություններում, ինչպես՝ կուսակից, կուսակցություն, մեկուսի և այլն։

§ 271. Համանուն բառերի (մասնակի համանունների) մի տեսակն են համահունչ բառերը։

Համահունչ (омофон = հուն. homos՝ նման և phone՝ հնչյուն) են հնչյունով կամ արտասանությամբ նույնական, սակայն գրու-

թյամբ և իմաստով տարբեր բառերը, ինչպես՝ աղա-ախա, անդր-անոց, հարդ-հարք, որդ-որք, ուղտ-ուխտ և այլն։

§ 272. Համանունությունը մտն էրևոյթ է հարահունդությունը։ Հարահուն (пароним = հուն. para՝ մաս և ονυμα՝ անուն) են նեղ (հնչյունով և գրությունով) մաս և իմաստով տարբեր բառերը։ օրինակ՝ ապրել-ապրիլ, ժամավաճառ-ժամավեճ, պարտել-պարտել, պաշտպանություն-պանեպանություն, ձիավարություն-ձիավարություն, խարտիչազեղ-խարտիչազեղ, լիանհչյուն-լիանհչուն և այլն։

ՀԱՍՈՒՆ ԲԱՑԵՐ

§ 273. Բառի իմաստային կառուցվածքի չորսահատկություններից է նաև հականիչ կամ հակադիր իմաստների արտահայտելը։ Հականիչային հարաբերություն մեջ են մտնում գերազանցապես երկու բառային միավորներ։ Հակադիր իմաստ արտահայտող գոյությունը թեև տրամաբանական կողմով հականիչ են, սակայն հարաբերակից հասկացություններն են՝ արտահայտում, քանի որ պատկանում են բառիմաստային միեմուն խմբերին, գործածվում են գրեթե միեմուն բառակապակցություններում։ այլպես՝ բարե-ցածր, հեռու-մոտիկ, կարե-երկար բառադույզիցը արտահայտող են հակադիր իմաստ են պարունակում, սակայն վերաբերում են տարածական իմաստ ունեցող հակացությունների խմբին, իսկ վաղ-ուշ, այժմ-հետո բառերը՝ ժամանակային իմաստ ունեցող հակացությունների խմբին։

Հականիչ են կազմում նեղ տարբեր և իմաստով հակադիր այն բառերը, որոնք հարաբերակից հասկացություններ են արտահայտում։

Եթե հակադրական հարաբերության մեջ են մտնում ոչ հարաբերակից հակացություններ, ապա զբանք բառային հականիչներ չեն։ Այսպես՝ երկարություն և հաստություն բառերը որքան էլ արտբեր և հակառակ իմաստներ են արտահայտում, սակայն իբրև հակացություններ չեն հարաբերակցվում միմյանց հետև Այդպես են նաև մարդ-մեկնեա, գյուղ-գաղա, աղբիկ-ողա բառերը։

§ 274. Առարկաների, երևույթների հականիչային հարաբերությունը դրսևորվում է հիմնականում երկու եղանակով։

³³ Տե՛ս Н. М. Шанский, Лексикология современного русского языка, 1972, стр. 163.

ա) Միևնույն երևույթի, առարկայի, հատկանիշի հակադիր ա-
տիճաններով և շարժով. ինչպես՝ կլի-մուտք, դրական-բացազու-
կան, շար-բարի, ցուրտ-շոգ, տեր-ծառա և այլն:

բ) Միևնույն առարկայի, երևույթի, հատկանիշի բացառումով-
ինչպես՝ կիրք-անկիրք, համեղ-անհամ, գեղեցիկ-ազեղ, հաստատ-
անհաստատ, հավատարիմ-անհավատարիմ և այլն:

Հականիշ բառազույգերը պետք է ձևաբանորեն միաստարբ լի-
նեն, ալտերնի պատկանեն միևնույն խոսքի մասին:

Հականիշային հարաբերությունն արտահայտում են ոչ բոլոր
բառերը: Կան խոսքի մասեր, որոնցով հականիշային հարաբերու-
թյուններ չեն գրանորվում. այդպես են Բվականները, դերանուննե-
րի մեծ մասը, կոնկրետ առարկայական իմաստ պարունակող գո-
յակաները (հմմտ. պատ, սեղան, լուսամուտ, ապակի, մահճակալ,
ախոռ և այլն), կապերը, շարժականները և ձայնարկությունները:

Հականիշային հարառակ կապեր են երևան բերում առավելա-
պես անձական անունները (մասնավորապես որակական), որոնք
խիստ հակտիվ են հականիշային հարաբերությունների գրանորման
գործում:

§ 275. Հականիշային հարաբերությունների (և ոչ միայն հա-
կանիշային) ընդլայնման և ծավալման գործում մեծ է համարա-
նությունների դերը. հականիշ որևէ զուգորդությունը կազմվում
են նորերը: Այստեղ, անկասկած, դեր է խաղում նաև հոգեբանա-
կան գործոնը:

ՀԱԿԱՆԻՇՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

1. Հականիշների դասակարգումը ըստ իմաստային հատկանիշի

§ 276. Հականիշները դասակարգվում են ըստ իմաստային և
կառուցվածքային հատկանիշի:

Ըստ իմաստային հատկանիշի, հականիշները լինում են՝
տեղի և տարածական իմաստ արտահայտող՝ վերև-ներքև,
հեռու-մոտիկ, վերին-տառից, արտաքին-ներքին, դուրս-ներս,
բարձր-ցածր, վերելք-վայելչք, հարավ-հյուսիս, արևելք-արևմուտք
և այլն:

Ժամանակային իմաստ արտահայտող՝ վաղ-ուշ, երեկ-այսօր,
վաղուց-այժմ, առավոտ-երեկ և այլն:

Չափի իմաստ արտահայտող՝ ծանր-բերե, լրիվ-կիսատ, շատ-
քիչ, մեծ-փոքր, մանր-խոշոր և այլն:

Մտավային իմաստ արտահայտող՝ հաստ-բարակ, կարև-եր-
կար, լի-դատարկ, լայն-ենդ և այլն:

Ասարկաների արտաբն ձևական հատկանիշներ արտահայ-
տող՝ բուր-սուր, փակ-բաց, մախար-կեղտոտ, գեղեցիկ-ազեղ, սե-
պիտակ, ծուռ-ուղիղ և այլն:

Ասարկաների ներքին որակական հատկանիշներ արտահայտող
(համի, էություն և այլն)՝ պարզ-բարդ, բանկ-էժան, բաղր-զառ, խակ-հասած (-ուն), համով-անհամ, լավ-վատ, աղի-անաղի, բա-
ցասական-դրական, զուրկան-անզուր:

Մարդկային հոգեկան, ֆիզիկական, բնավորային և այլ
հատկանիշներ արտահայտող՝ հանցիտան-անհանցիտան, կենդանի-
մեռած, վարժ-անվարժ, արդար-մեղավոր, հարուստ-աղքատ,
կուշու-կացացած, հատուն-ամուս, զոն-դժոն, առողջ-հիվանդ, զի-
տակ-անզիտակ, ազնիվ-անազնիվ, կեղծ-անկեղծ, զոն-դժոն,
ուրախ-ախար, ժլատ-առատանոն, մեղմ-կոպիտ, նուրբ-կոպիտ,
հոռետես-լավատես, հիշաբար-անհիշաբար, շար-բարի, կարող-
անկարող, վայելուտ-անվախ, վայելուտ-քաղ, խելոք-հիմար և այլն:

Մարդկային կյանքի, աշխատանքային և հասարակական
գործունեության հետ կապված հակադիր երևույթների արտահայ-
տող՝ հանել-հագնել, ցանկ-հնձել, զեղա-զալ, առնել-տալ, նըս-
տել-կանգնել, էլենլ-մառնել, խոսել-լռել, սպրել-մեռնել, ժխտել-
հաստատել, վառել-հանգցցնել, կորցնել-գտնել, հարթել-պարտվել,
զցել-բռնել, հերքել-պնդել և այլն:

Թնույան հակադիր երևույթների հատկանիշ արտահայտող՝
մրբնել-լուտանել, ամպիլ-արևել, ցամախ-հոսել, ծողկել-բառա-
մել և այլն:

2. Հականիշների դասակարգումը ըստ
կառուցվածքային հատկանիշի

§ 277. Հականիշ բառերը ըստ կառուցվածքային հատկանիշի
լինում են՝ տարբարմատ կամ տարբեր բառերով կազմված և
համարմատ կամ նույն բառերով և որևէ ժխտական նախածանցով
կազմված:

շատերն էլ (հիմնականում մարդու հասարակական գործունեության փոփոխության հետ կապվածները) զորս են ընկել Ալայիս՝ զուրս են ընկել և անցել բառապաշարի պատիվ շերտի ուղորտը արտ, վանան, սաղավառ, էլոխվա, նիզակ, ճամնեզ, օստիկան բաները, որան հետևառի հայերենի բառային հիմնահանջ ֆունդի մեջ են մտել կոլտնետական, սովետ, կենտկամ, հարվածային, հեռուստացույց, տիեզերագնաց և այլ շատ բաներ: Հետևաբար, մասնակցակից հայերենի բառային հիմնական ֆունդի մեջ մտնում են այնպիսի բաներ, որոնք արտասահմանում են այսօրվա և վաղ անցյալի մարդու համար ընդհանուր հասկացություններին, որոնք են՝ մարդու զանազան գործողություններին, ազգակցությունը, նրա մարմնի որոշ մասերին, բնական երևույթներին վերաբերող բաները: Ինչպես՝ անկ, ապրել, օտակ, բնկ, պսակել, վազել, տեսնել, վերցնել, ընկնել, հաղնել, արև, լույս, լուսն, մութ, գիշեր, ատող, ծառ, բուր, հող, պիտեղ, գլուխ, բերան, մառ, ձեռք, օտք, մար, աղչիկ, եղբայր, մարդ, հայր, մայր, ուղի, ազա, բույր և այլն, ինչպես նաև որոշ այնպիսի գերանուններ (անձնական և ցուցական) և թվական անուններ (միազորները և տասնավորները), որոնք չեն փոխանցվում այլ լեզուներից: Ինչպես՝ ես, դու, ես, մենք, դուք, նրանք, մեկ, երկուս, երեք, չորս, հինգ, տասը, Բան, հիսուն, իննսուն և այլն:

Կեղծի բառաֆունդի մեջ մտած բաները հիմք են ծառայում կազմելու հարգալից նորանոր բաներ և փնտնանակ ու արտազորական են:

§ 285. Հասարակական կյանքի զարգացման ամեն մի փոփոխություն իր արտացոլումն է գտնում բառային կազմի մեջ: Հասարակական կյանքի փոփոխության հետ կապված փոփոխվում են նաև երևույթների ըմբռնումները, հասկացությունները, առաջանում են նորերը, փոփոխվում և համարվում է բառապաշարը:

Նոր հասարակական հարաբերությունները, նոր հասկացությունները (նոր մեքենաները և արտադրական պրոցեսները, դիտություններ և կենցաղային երևույթների փոփոխությունները) անվանումներ են ստանում, առաջանում են նոր բաներ և տերմիններ, որոնք զբանցվում են բառային կազմի մեջ: Վերոհիշյալ փոփոխությունները առաջ են բերում նաև բաների իմաստների փոփոխություն՝ իմաստափոխություն:

Ընդունված է համարել, որ մասնակցակից հայերենի բառապաշարը պարունակում է մոտ 200000 բառային միավոր: Գև լեզվի ինտախառնի հրատարակած մասնակցակից հայերենի բացատրական բառարանում արձանագրված է մոտ 120000 բառ, իսկ է. Բ. Աղայանի կազմած սկզբի հայերենի բացատրական բառարանում՝ 136000 բառ: Ընդ որում, սրանցում զիտես տեղ չեն գտել նեղ մասնագրական և բարբոսային շատ բաներ:

§ 286. Կեղծի բառային կազմը հիմնականում փոփոխվում է հետևյալ ուղղություններով՝ ա) նոր բաների և բառակապակցությունների առաջացում, բ) հնացած բաների կորուստ, գ) մի շարք բաների իմաստային փոփոխություն:

Նոր բաների շնորհիվ բառային կազմի հարստացումը չինում է նրբու միջոցով՝ ներքին և արտաքին:

Ներքին միջոց հայերենի սեփական բառակազմական միջոցներով ու եղանակներով կամ սեփական հնարավորություններով նոր բաների ստեղծումն է, որը մեր բառապաշարի զարգացման հիմնական միջոցներից մեկն է: Այսպես՝ օւնիներ տիեզերք, հավ և զնավ (հմմտ. նախաջնաց, ծովախնաց, ուխտաշնաց և այլն), բոլորովին վերջերս (60-ական թվականներին), դիտության մեջ կատարված մեծ հեղաշրջման հետ կապված, ստեղծվեցին տիեզերագնաց, տիեզերանավ, տիեզերակայան և տիեզերանավ նոր բաներ: Մտրվ արմատով կազմվել էին մարզիչ, մարզիչ բաներ, վերջերս կազմվեցին նոր մարզադաշտ, մարզան, մարզադպրոց, մարզահրապարակ, մարզակառույց, մարզակումր և այլ բաներ:

Սեփական բառակազմական կաղապարներով նոր բաների կերտման մեջ մեծ դեր է կատարում նմանակության օրենքը, այսպես՝ մայրուղի, փակուղի, ծառուղի, խնուղի և այլ բաների նմանակությամբ կազմվել են նոր գեոմոլոլի, անցուղի, բեռնուղի, բոլիչուղի, խամուղի, վաղուղի, լողուղի և այլն. գեագարան, մատենադարան բաների նմանակությամբ՝ ֆիլմագարան, ձայնագրարան բաները. -որդ անունով բաղադրված լողորդ, նավորդ և այլ բաների երկրորդ բաղադրիչի նմանակությամբ (անձ ցույց տվող իմաստով) վերջին տասնամյակներում կազմվեցին

Յ 56-ն է. Բ. Աղայան, էջ 276-ն, էջ 220:

վարող, ծանրող, վազող, դանձուհող, ցատկառող, ձնեռազրն-
դառ և այլ բառերը, որոնք զերազանցապես սպորտային տերմին-
ներ են:

Փամանակակից հայերենում գործածության մեջ մասն է հին
հայերենի -ական, ականանեա, պարեա բառերը, որոնցով կազմը-
վեցին ականապատ(ել), ականագերմել, պարեատառուն և այլն:

Բառապատարի հարստացման արտաքին միջոցը բառական
փոխառություններն են:

Հասարակական նոր հարարերությունները, գիտության, մշա-
կույթի, տեխնիկայի և այլ նորությունները փոխանցվում են նաև
իրար նեո պատմական, հասարակական, կուլտուրական և այլ
կապերով ու հարարերություններով կապված փոքրագրերին:
Այս նոր հարարերություններին և հասկացություններին անվանու-
մները փոխանցվում են այն լեզվից, որի շնորհիվ հարդրակից են
դառնում դրանց: Փոխառվում են այն տերմինները և բառերը,
որոնք համարմունքները չկան փոխառու լեզվում և սեփական բա-
ռակազմական միջոցներով ստեղծած համազորները լիովին չեն
ծածկում փոխառյալ բառերի իմաստները:

Հայերենն իր պատմական զարգացման ընթացքում միշտ էլ
ունեցել է բառային փոխառություններ: Այսպես՝ հայերենին զանա-
զան գաղերուն անցել են հունարեն, լատիներեն, պարսկերեն,
վրացերեն, սուսերեն բառեր:

§ 287. Բառային փոխառությունները տեղի են ունենում եր-
կու ձևով, անմիջական և միջնորդակես:

Անմիջական փոխառությունները փոխառու լեզվի սեփական
բառերից ուղղակիորեն կատարված փոխառություններն են, ինչ-
պես սուսերենից հայերենին և այլ լեզուներին անցած սովետ,
բարձրի, սովխոզ, լենինիզմ և այլ բառերը, պահլավերենից փոխ-
առյալ ազատ, ազդ, ակամա, անզգամ, ապակի, ապստամբ, զրան՝
և այլ բառերը:

Միջնորդական փոխառությունները որևէ լեզվի միջոցով կամ
նրա միջնորդությամբ կատարված այն փոխառություններն են,
որոնք փոխառու լեզվի ստեղծած կամ սեփական բառերը չեն և
վերջոված են այլ լեզուներից: Այսպես՝ հայերենը սուսերենի միջ-

նորդությամբ միջազգային բառապաշարից վերցրել է բավական
մեծ թվով բառեր, ինչպես՝ կապիտալ, կուրսուս, տակտար, պի-
ներ, սնկող, շնմպան, տրամվայ, սուխյուսու, կապիտան, էս-
տաֆետ, բրիզգոլե, սառմ, բերեմ, սփիոմ, դիսկլոկիկա,
տրանսփորմատոր և այլն:

§ 288. Բացի ուղղակի փոխառություններից, մեր լեզվի բա-
ռային կազմը համարվում է զարգանում է նաև շատ բառերի,
բառակապակցությունների կազմարարների կազմառույթյունը և
ընտրանքովամբ, որ հայերի էլ բառապատանեում տեղմնվող ինչ-
պես՝ նեզամյա պլան (пятилетний план), հալվածային (удар-
ник), աշխոռ (трудодени), շրջում (райком), բեղմատակյա
(подпольный), ինքնահեղատառություն (самокритика), կապի
րամանունք, միջազգային մրցանակարաշխություն (междуна-
родный конкурс), ինքնարափ (самосвал), տրամապարի միջոց,
հասարակական աշխատանք, առևտրի կես, ընկերական դատա-
րան, անվանագրության խորհուրդ, հասարակական կարծիք և այլն:

Բառապատանեումները ևս, ինչպես և բառափոխառություննե-
րը, իրեն բառապաշարի հարստացման միջոց գործել են մեր լեզ-
վի զարգացման բոլոր շրջաններում: Այսպես՝ կան բառապատանե-
ումներ, որ մեր լեզվին են անցել դեռևս հինգերորդ դարում լատի-
ներեն և հունարեն լեզուներից, ինչպես՝ Գրահանություն (հուն.
grammatica-ից), ներակա (լատ. subiectus-ից), արտասանել,
պալացված, տրամադրություն, բացառել (հունարենից) և այլն:

Բառապատանեումների ժամանակ գործում են բառային
կազմի հարստացման և արտաքին և ներքին միջոցները, բանի
որ արտաքին ազդակը հանդիսանում է փոխառու բառը, իսկ նոր
բառը, տերմինը կամ հասկացությունը ստեղծվում է լեզվի ներքին,
սեփական հնարավորությունների շնորհիվ:

§ 289. Փոխառյալ բառերից բնորոշ էլ, որ միևնույն դերը և
հատատագիրն են ունենում փոխառու լեզվում: Նրանցից շատերը
միջվում, կաշունանում են լեզվի մեջ, դառնալով վերջինիս սեփա-
կանություններ և հարստացնում այն, իսկ մի մասն էլ, եթև պատա-
հական, անհարկի կամ սխալ փոխառությունն է, լեզուն առ-
տիճանարար մերժում, մաքրում, զտում է և ստեղծում իր սեփա-
կան, առավել միշտ համարժեքները. այսպես՝ սովետահայ դրա-
կան լեզվի զարգացման առաջին շրջանում անասմանախակ թը-
վով գործածվում էին սուսերենի միջնորդությամբ փոխառված մի-

4 ՏՆ Ե. Թ. Աղայան, Երված աշխ., էջ 291:

չազգային բազմաթիվ բաներ, ինչպես՝ զկեզատ, սեփա, սիմպոզիում, սոխոտ, ռեպրեզնտաբ, ցեխ, լաոսեատ և այլն, որոնք հայերենում փոխարինվեցին պատգամավոր, նստադրջան, գիտածնողով, մենեզգիչ, կամ մենակատար, խաղացանկ կամ եզգացանկ, արտադրամաս, դափնեկիր բաներով:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

§ 290. Ժամանակակից հայերենի բառապաշարը համաժամանակյա կտրվածքով կարելի է դասակարգել ըստ հետեւյալ հատկանիշների՝ ըստ գործածականության, ըստ գործառույթյան ոլորտների և ըստ ակտիվ ու պասիվ բառաշեղանի:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ԸՅՑ ԿՈՐՏԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ

§ 291. Ժամանակակից հայերենի բառապաշարն ըստ գործածականության բաժանվում է երկու շինական շերտի՝ համազոր-ծածական բառեր և սանձանախակ գործածության բառեր:

Համազործածական բառեր

§ 292. Այս շերտի մեջ դասվում են այն բառերը, որոնք հայերենի արդի փուլում արտահայտում են կենսաօրնադրեն անհրաժեշտ իմաստներ, գործածվում են սովորական խոսքային իրադրություն մեջ, այլև լեզվական բոլոր ոճերում և ունեն գործածության մեծ հաճախականություն: Սրանց մեջ, ընտանաբար, մտնում են բառապաշարի հիմնական բառաֆունդի մեջ մտնող բաները և առնաստարակ հասարակական կյանքի ամենարտազայան բնագավառներին (քաղաքական, տնտեսական, արտադրական, մշակութային, կենցաղային և այլն) պատկանող առարկաներ, երևույթներ և հատկանիշներ արտահայտող բաները:

Սրանք կազմում են ժամանակակից հայերենի բառապաշարի ակտիվ շերտը:

Համազործածական բառերի մեծ մասը կարող է ունենալ Լ ուղղակի, Կ՝ փոխարերական իմաստներ, հարուստ հոմանիշային և հակահիշյալին շարքեր, այլև հուզաարտահայտչական երանգավորում: Այդպիսի բառերից են՝ ամաս, այգի, անտառ, անձև, անցնել, աշխատել, աշխատել, աշխարհ, աշուն, աչք, բերք, բե-

րել, բունել, բարձր, գալ, գնալ, գործ, գետին, գիշեր, գիտենալ, գյուղ, դաշտ, զարմանալ, խելք, խմել, բեկեր, կյանք, հիմար, հին, նոր, նա, մե՛ք, շատ, առել, քաղաք, հինգ և այլն:

Սանձանախակ գործածություն ունեցող բառեր

§ 293. Սրանք այն բառերն են, որոնք գործածվում են յուրահատուկ խոսքային իրադրության մեջ և ունեն գործածության տարրեր բնույթի սանձանախակում (գործառական, տարածքային և այլն):

Սանձանախակ գործածություն ունեցող բառերի թվին են դասվում տերմինները (զանազան դիտաճյուղերին, մասնագիտություններին պատկանող բառերը), բարբառային բառերը, ժարգոնային—ծածակալեզվային բառերը, հնարանությունները և նորասանությունները:

ա) Տ եր մ ի ն ն եր. Սրանք այն բառերը կամ բառակապակցություններն են, որոնք գործածվում են գիտության, տեխնիկայի, մշակույթի, քաղաքականության և այլ երևույթների ու առարկաների հասկացությունների տրամաբանորեն ճշգրիտ բնորոշումների համար: Տերմինները հատուկ նշանակության բառեր են. նրանց զերբ հասկացություն բնորոշելն է, սանձանելը (дефиниция): Նըրշանակում է, տերմինները, ի տարբերություն համազործածական կամ սովորական բառերի, ունեն ոչ թե անվանողական, այլ բնորոշող-սանձանողական (дефинитив) գործառույթ (ֆունկցիա)⁵: Տերմինների ամբողջություն կազմում է տերմինաբանություն:

Յուրաքանչյուր տերմին իր գիտաճյուղի տերմինաբանության մակարդակում սերտորեն կապված է մյուս միավորների հետ և կազմում է փակ համակարգ:

§ 294. Տերմինի համար իրեր բնորոշ առանձնահատկություններ կարելի է նշել, որ ա) նրա բովանդակությունը նրան վերագրվող սանձանումն է, բ) համակարգային է, խատորեն փոխկապված իր գիտաճյուղի տերմինաբանության մյուս միավորների հետ, գ) մենիմաստ է, անկախ է կոնտեքստից, խոսքային իրադրությունից և չունի արտահայտչական երանգավորում⁶:

⁵ Տե՛ս В. В. Виноградов, Русский язык М.—Л., 1947, стр. 12—13.

⁶ Տերմինների զգալի մասը առաջաել է բարձրագույն փոխարկական անցմաթ և մի բանիում բարձրագույն անցման զուգորային կազմ զգացմով է (հմտա, մտնալ ծամ, աղեկվ մտաղ և այլն):

Մենիմաստովյունը բնե բնորոշ է տերմիններին, սակայն բացարձակ տարբերակիչ հատկանիշ չէ, քանի որ յուրաքանչյուր տերմին մենիմաստ է միայն տվյալ գիտաճյուղի տերմինաբանության հասակարդում (հմմտ. Ենչյան՝ բժշկական, ալլե ֆիզիկայի տերմինաբանության մեջ), իհարկե, անանցանկի պատճենը չկա տերմինի կամ գիտաբանի և սովորական բառի միջև, քանի որ տերմիններ կարող են առաջանալ ամենասովորական բառերից, որոնց մեծ մասը գործառուծ է կ'իբրև տերմին, կ'իբրև համա-գործածական բառ (հմմտ. աղ, թթու, տարր, պտուղ, աշք, կործք, մաս, եղանակ, ժամանակ, մուտք, երկաթ, պղինձ և այլն):

§ 295. Տերմինների առաջացումը ևս տեղի է ունենում լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների միջոցով: Գրասեր են՝ ա) համագործածական բառի գիտական վերախմաստագրում և տերմինացում, որ տեղի է ունենում մեծ մասամբ իմաստի փոխաբերական անցմամբ և բառի բազմիմաստացման եղանակներից մեկն է. ինչպես՝ այտուց, բևեռ, ելք, կամար (ճարտ.), հեռա-գայք, մուտք (ֆին.), սարք (պրիբոր), ռուտոց, ազնիվ մետաղ, խորք մարմին, մետալ ժամ, վզիկ (բժշկ. և տեխն.), զլիփիկ (տեխն.) և այլն, բ) բառարարդում՝ արժանատու, դեղատոմս, դափնեկիր, հյուրախաղ, ձայնավանկ և այլն, գ) անանցում՝ առե-րեսում (իրավ.), գերկարակիք, գերլավտնություն և այլն, դ) հապավում՝ էՆՄ (էլեկտրոնային հաշվիչ մեքենա), ՉՉԷ (Հայ-կական սովետական հանրապետության), ֆինբաթին, Երևանա-խաղիժիճատիտու, Կենտրոն և այլն, ե) բառափոխառություն՝ անտենա, գրասյուսեր, լեզենդ, լազեր, կիրենոնեակիս, կլիբիկա, սոճատ, պոնմ, շեֆ և այլն:

§ 296. Մեծ թիվ են կաղում սեփական և փոխառյալ բա-զաղիչներով կաղմված, այսպես կաղված, հերթիչ տերմինները, որոնց մեծ մասը պատճենում է, ինչպես նաև բառակապակցու-թյունների պատճենումները. օրինակ՝ առումականյան, բարձրավոյտ, գիտապահտիկ, կարճամետաթ, կինոնկար, կենսախիմիա, կեն-սազոլիմեր, մագնիսադաշտ, միկրոկենսաբանություն, շոգեռու-րին, աննատի պաշտամունք, ճաշերուրյան կենտոն, ձողղակաճ ու, խաղաղ գոյակցություն, ճաշիզակաճ կենտոն և այլն:

7 Նվազագույնը անանցով տերմինները կորցնում են հուզարտա-հայտական կրթությունը:

§ 297. Ըստ տերմինաբանական դաշտերի (ըստ գիտաճյուղե-րի) տերմինները լինում են՝ ֆիզիկական (մետոլ, առում, գերձայն, ծանրաթյան կենտոն, ձխուռ և այլն), մաթեմատիկական (բաշ-մապատկիչ, բազմապատկիչի, կիսորդ, բեկյալ, լողարկիմ և այլն), բժշկական (ախտորոշում, ամեյոլոյա, այտուց, բացիակիր, շաքար-ախտ և այլն), տեխնիկական (աղբեզատ, ամբարձիչ, բուլբոլեր, ամբան և այլն), ֆաղաբական (պալադիումակարգչին, դեմո-կրատիա, ինքնավար, տնոր և այլն), ռազմական (ավտոմատ, զնդապետ, գննիչ, դեսպետ, զենիթահար և այլն), սպորտային (զահուկուղի, թիմ, վազորդ, ծանրորդ, մարզիչ, էստաֆետ և այլն), իրավաբանական (վրահիթ, գործը կարճել, բեկման ենթարկել և այլն), լեզվաբանական (ձևայթ, նշույթ, գոյական, անական, բո-վանդակություն պլան և այլն) և այլն:

§ 298. Որքան էլ խիստ ընդգծված է հակազդությունը և սահ-մանազատումը տերմինային ու ոչ տերմինային բառերի և կապակ-ցությունների միջև, այնուամենայնիվ, երկու բառաշրջանի փոխ-պարզությունները և փոխլայնությունները ակնհայտ են: Այսպես՝ գրական լեզվի համագործածական բառերի իմաստափոխման և լայն թափով տերմինացման հետ, տեղի է ունենում նաև հակա-նակ պրոցեսը՝ մի շարք տերմինների՝ դարձյալ իմաստի փոխաբե-րական անցմամբ վերախմաստագրումն ու ներթափանցումը գը-բական համագործածական բառերի շերտը:

Այս ապատերմինացման (դետերմինոլոգիզացիա)⁸ իմաստա-բանական պրոցեսը արդյունք է մի շարք տերմինների դրական լեզվի գործածական ոլորտներում ունեցած լայն կիրառության. որին մեծապես նպաստում են բանավոր և գրավոր խոսքերը (ա-զիոն, հեռուստացույցը, ամապրիեր, թերթեր և այլն):

Այսպես՝ իբրև համագործածական բառեր հանդես են գալիս դեղատոմս, դրամ, բալանա (— ֆին, հաշվեկշիռ, իսկ սովորական գործածությամբ՝ հավասարակշռություն, նորմալ հարաբերության պահպանում), ռադիո, հեռուստացույց և այլն:

⁸ Տերմինային բառերը ևս պատճենում են դրական լեզվի բա-ռապաշարին, ինչպես համագործածական բառերը: Նրանց գոր-

⁸ Տե՛ս Ն. Ա. Капица,е, Взаимодействие терминологической и обще-употребительной лексик, сб. Развитие лексики современного русского языка, М., 1965, стр. 910.

ծածուկները սահմանափակվում է միայն գործառական ոլորտով, հետևաբար, նրանց տարբերությունը համագործածական բառերից միայն գործառական բնույթի է: Գործառական մի շարք սենտիմենտալ (գիտական, պաշտոնական) նրանք խիստ ակտիվ և կենսականորեն անհրաժեշտ են:

բ) ն ե ղ մ ա ս ս ն գ ի տ ա կ ա ն բ ա ո ճ եր և պ ք ճ ֆ ս ս ի ո ն ա լ ի ղ մ ն եր: Այս տիպի սահմանափակ գործածություն ունեցող բառերը տարբերվում են տեղիքային բառերից նրանով, որ դրական լեզվում չունեն լայն գործառություն, առավել ակտիվ են խոսակցական լեզվում (ժողովրդայինտոսակցական ոճում) և այս տեսակետից էլ գրկեն ոչ պաշտոնական անվանումներ են: Սրանք գործածվում են որևէ մասնագիտությունում, զբաղմունքով (հիմնականում արտադրատեխնիկական հարթությունում) միավորված մարդկանց խմբերի կողմից և արտադրության միջոցների, գործիքների, գործողությունների անվանումներ կամ դրանց գառնազան տարբերակներ են:

Այսպես՝ հյուանի բառապաշարում գործածվում են միևնույն գործիքի զանազան անվանումներ, որոնք դրական լեզվում կամ գործածական չեն, կամ ունեն գոնե մեկ անվանում. ինչպես՝ ասն-դա-խարաուզ, զուր-իզվիր, զամփար, սղոց-զուրամա (ձևաքի սը-ղոց), բլրլիտուր (մեծ սղոց) և այլն:

§ 299. Պրոֆեսիոնալիզմները հաճախ հանդես են գալիս նաև իրեն պիտական կամ տեխնիկական տեղիքների կրկնակներ, Սը-րանք անգատ, չհամախոսված միավորներ են և չեն կարող կազմել փակ համակարգ:

գ) Բ ա թ բ ա ա լ ի ն բ ա ո ճ եր: Բարբառային են այն բառերն ու արտահայտությունները, որոնք հատուկ չեն զրական լեզվին, գործածական ու կենսունակ են բարբառներում և ունեն տեղական նրանք:

Սրանցից շատերը մտնում են ժամանակակից հայերենի սահմանափակ գործածություն ունեցող բառաշրջանի մեջ: Բարբառային բառերից շատերը գործածվում են նաև գեղարվեստական լեզվում (ստեղծագործական նպատակադրումով), այլև խոսակցական լեզվում՝ առավել բնորոշ լինելով նրա ժողովրդայինտոսակցական տարբերակին (հմտտ, էղոտ, էսոտ, տալք, էսպես, էստեղ, իրիկուն, հեր, մեր, հոմար, քավոր, ճանանչել, կանանչել և այլն), որից և

կարող են թափանցել զրական համագործածական բառերի ոլորտը՝ լրացնելով ու համալրելով այն (հմտտ, քեֆ և այլն):

Ի տարբերություն տեղիքային բառապաշարի, որն անբնդհատ համալրվում ու հարստանում է, բարբառային բառերի (հատկապես տեղային սահմանափակություն ունեցողների) բառապաշարը ստատիկանաբար նվազում է, և տարածքային առանձնահատկությունների հետ կապված տարբերությունները չնչվում են:

դ) Ժ ա ր գ ո ն ա լ ի ֆ ը և Ժ ա ծ կ ա լ ի ղ վ ա յ ի ն բ ա ո ճ եր: Հասարակական որոշ խմբերի, խավերի կողմից լեզվի մեջ գործածվում են որոշ յուրահատուկ բառեր և արտահայտություններ, որոնք զրական լեզվում ունեն իրենց համարժեքները: Այսպիսի բառերը կոչվում են ժարգոնային (արգոտիկ) բառեր: Որոշ մասնագետացած խավեր էլ, որիչներն անհասկանալի մնալու նպատակով, գործածում են իրենց հատուկ պայմանական արտահայտությունները՝ ծածկալեզուները, որոնք հնկվում են մի շարք բառերի ու գործվածների պայմանական նշանակությունների, այլև յուրահատուկ բառերի ու արտահայտությունների վրա:

§ 300. Ժամանակակից հայերենի արդի փոստում ևս գործածվում են որոշ ժարգոնային երանգավորում ունեցող, այլև պայմանական բառեր ու արտահայտություններ, որոնք առավել հասանալիս յուրահատկություն ունեն ու բնորոշ են պատանիների ու երիտասարդների բառապաշարին. այսպես՝ զարցակալեզուների մտտ գործածական են դիրո (դիրկիտոր), մար (մաթեմատիկա)⁹, ցիւ (ցիլինգր), շլո (շլոպաղակա), մանր բնկնել (սալչել, շշմել, տանուլ տալ), գրել (թոցնել, զողանալ) և այլն, ուսանողների մոտ՝ ժամո (ժամանարություն), կայֆ սեել, կայֆի մեշ լինել (զվարճանալ)¹⁰, շվիլցնել (թոցնել, փախցնել), մանդոս բնկնել (շփոթվել, շշմել) և այլն:

§ 301. Մածկալեզվային բառեր են զողերի լեզվում Լսիկ (զաղտնի նամակ, թուղթ տար), խարոչի (ХОРОШИЙ — զողերին հասրող), զողակալ (զողերին հակված), սալչա (նյութական օգնու-


⁹ Գրոցոսահակների բնորոշ է նաև ուսուցիչների և աւարկաների անունների կրճատումը. օրինակ՝ ալխալե (սոխարճակություն), երկիր (երկրապատկան), քուսար (բուսաբանություն) և այլն:

¹⁰ Այս և մի քանիսը գործածական են նաև զարցակալեզուների ու երիտասարդների բառապաշարում:

թյուն գողերին) և այլն՝ ժարգոնային և ժամկեղծված բաները չեն համարատասանում գրական լեզվի նորմաներին և խրախուսելի չեն:

Ե) Հ ն ա բ ա ն ու թ յ ու ն ն եր և ն ա ր ա ր ա ն ու թ յ ու ն ն եր: Սահմանափակ գործածություն ունեցող բաների խմբին դասվում են. ա) հնացած կամ հին (գրաբարյան, միջինհայերենյան) այն բաները (հնարանութունները), որոնք ժամանակակից հայերենի արդի փուլում չունեն ակտիվ գործածություն (հմմտ. առուշան, կապա, որմն, բրել, նեղման, մարզպան, բանֆակ, բջիջ, կավակ, քեմ, գգիւ, ճալարուն, կլեֆալ, նախնազգայետ և այլն) և գործառու են միայն գրական լեզվի դիտական և զննարարական սենյում տարրեր նպատակագրումով (ստեղծագործական դիտական և այլն, տե՛ս § 306), բ) նորակերտ այն բաները (նորարանութունները), որոնք ժամանակակից գրական լեզվում դեռևս չեն ստացել համընդհանուր ճանաչում և լայն գործածականություն (հմմտ. նմուշօրինակ, ցուցանուր (պրեմիերա), գործընթաց (պրոցես))¹¹, ցուցնակ, կոկալացիա և այլն (տե՛ս § 309, 310):

§ 302. Ժամանակակից հայերենի բառապաշարը բոտ վերոհիշյալ շերտավորման կարելի է պատկերել հետևյալ տախտակով՝



¹¹ Տե՛ս է. Թ. Ալալյան, լեզվի գոյության տարրերականի մեկը «Բանբեր ծրեանի համալսարանի», 1973, № 2, էջ 67:

Ճ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Տ Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի Բ Ա Կ Ա Պ Ա Կ Ե Մ Ա Ը Լ Ս Ա Կ Տ Ի Վ Ե Վ Պ Ա Ս Ի Վ Շ Ե Ր Տ Ե Ր Ի

§ 303. Ըստ բառապաշարի մեջ ունեցած կենսունակության և դերի, ժամանակակից հայերենի բառապաշարը կարելի է բաժանել երկու շերտի՝ ակտիվ և պասիվ¹²:

Ա կ տ ի վ բ ա ո ա շ ն ր տ

§ 304. Ժամանակակից հայերենի ակտիվ շերտի մեջ են մտնում այն բաները, որոնք ունեն ամենօրյա գործածություն, կենսունակ են, և նրանց իմաստները հասկանալի են հանրության բոլոր անդամների համար: Սրանք են համապարձակական բաների մեծագույն մասը (հմմտ. աչք, ես, դու, հաց, մենք, սակ, խոսել, լավ, կարմիր, հինգ, դեմ, հին, օտել և այլն, տե՛ս § 292) և համընդհանուր ճանաչում ստացած տերմինների մի մասը (հմմտ. կապրոն, լավսան, հեռուստացույց, տիկզերագնաց, տիկզերանավ, կող և այլն):

Պ ա ս ի վ բ ա ո ա շ ն ր տ

§ 305. Պասիվ շերտի մեջ են մտնում այն բաները, որոնք հնացած, հին են կամ, ընդհակառակը, իրենց նոր լինելու պատճառով դեռևս չեն ստացել համընդհանուր ճանաչում:

Կարճ ասած՝ պասիվ բառապաշարի մեջ են մտնում հիմնականում հնարանութունները և նորարանութունները:

Ը ն ա ր ա ն ո թ յ ու ն ն

§ 306. Այն բաները, որոնք դուրս են եկել ակտիվ բառապաշարից և մեր լեզվի արդի փուլում չունեն ակտիվ գործածություն, կոչվում են հնարանութուններ:

Հնարանութունների մեծագույն մասը լրիվ կերպով դուրս չի բխկնում լեզվի բառային կազմից, այլ անցնում է նրա պասիվ բա-

¹² Սա բաների գործածականության աստիճանը ընդհանուր դասակարգումն է:

ների շերտը և գործածվում են միայն անհրաժեշտության մղումով։
 Հնարանութիւնները լինում են երկու տիպի՝ ա) պատմական հնարանութիւններ, որոնք արտահայտում են պատմականորեն հնացած երևույթներ, հասկացութիւններ և ժամանակակից հայերենում գործածվում են միայն գիտաօգտամական և զեղարվեստական գրականութեան մեջ՝ հնացած ու կյանքից դուրս մղված երևույթների նկարագրելու, այլ և պատմական ժամանակաշրջանի կրօնքրիտ ստեղծելու նպատակով։ Ինչպես՝ այրումի, աղախիւն, բեց, իշխան, մազպան, սենեկագետ, նախարար, ներքինի, հարեմ, մազպետ, մոզպետ, կոզակ, առուշան, մենչան, մոզ, ասնուսեր, զգիւր, բյոխվա և այլն։ Պատմական հնարանութիւնների մեջ են մտնում ոչ միայն վաղ անցյալում գործածութիւնից դուրս եկած բառերը, այլև աշխարհք, որոնք առաջացել և հնացել են ոչ հնագույն ժամանակաշրջանում, այլ համեմատաբար ավելի ուշ (նաև սովետական շրջանում) և ունեցել են շատ կարճ կյանք. ինչպես՝ ՀՊԿ (Հայաստանի Օղետիթյան Կոմիտեի), Հայաբուռն, Ամերկում, Արմենկում, Հեղկում, բառակկում, լիկկայան, բանֆակ և այլն։

բ) Հնարանութիւններ, որոնց արտահայտած հասկացութիւնները դուրս չեն մղվել հասարակական կյանքից, սակայն դանդաղ և պատճառներով (ներգրգվական և արտաբովական) փոխարինվել են այլ անվանումներով. դրանք կարող են լինել և՛ հին (գրաբարյան), և՛ նոր շրջանի բառեր. ինչպես՝ այր-աղամաղ, գան-ծնծ, որմն-պատ, աղերս-կապ, բրել-փորել, ՀՀԳ (Հայաստանի հեռուգրական գործակալություն)¹³—Արմենպրես, Ակեբուր-կեհեմկան և այլն։

Մանր.— Հիշյալ հնարանութիւններից շատերը, զրկվելով անխախտ, ինքնուրույն գործածութիւնից, բաղադրութիւնների մեջ, սակայն պահպանում են իրենց կենսունակութիւնը և գործածվում բառային կազմի ակտիվ բառերի շարքում. ինչպես՝ այր-առնական, որմն-որմնադիր, որմնակար և այլն։

Բառի ակտիվ շերտից պատիվին անցնելը սերտորեն կապված է լեզվի դարձաբանական պատմական պրոցեսի հետ, որ պայմանա-

վորված է արտաբովանական (սոցիալ-պատմական, քաղաքական և այլն) և զուտ լեզվական գործոններով՝ համակարգային, ենթահամակարգային կապերով։ Ընդ որում, բառի համակարգային կապերի բովանակողմանի և ամուր լինելու ղեկարմ նրա իմաստի հրնացման պրոցեսն առավել դանդաղ է ընթանում։

Ն ո Ր Բ ա Ր ա ն ս լ Թ յ ո Ն և ն ո Ր Բ ա Ր ա ն Ե Ր

§ 307. Նոր բառեր կամ նորարանութիւններ են հիմնականում նոր հասկացութիւններ արտահայտող բառերը. ինչպես՝ նախրտ, կապրոն, լավան, էՄՄ (էլեկտրոնային հաշվիչ մեքենա), լայնէկրան, ՊԱՊ և այլն։ Նոր բառեր առաջանում են հատկապես դիտակենդանական տիրմխարանութիւն մեջ, ինչպես նաև եղած հասկացութիւնները նոր անվանումներով փոխարինելու նման եղանակով նոր բառերի առաջացման ղեկորում աստիճանաբար ետին պլան են մղվում հին անվանումները, և նոր համարօճերը, որ ակզբնապես հանդես են գալիս իբրև դրանց համանիշեր, ստանում են լայն գործառութիւն, իսկ նախորդները կամ առհասարակ դուրս են գալիս բառային կազմից, կամ պահպանվում իբրև պահիվ գործածական բառեր. ինչպես՝ ցեխ բառի փոխարեն գործածվում է նոր առաջացած և ակտիվ գործածութիւն ստացած հայերեն արտադրամա բառը. մտրիկ բառի փոխարեն մակնիշ բառը, լուսրեառ բառի փոխարեն՝ ղափնեկիւր բառը և այլն։ Նոր բառերի և նորարանութիւնների առաջացումը տեղի է ունենում երկու նախապարճով՝ արտախիւն և ներքին։

§ 308. Արտախիւն միջոցը (որ միտճամանակ և բառապաշարի հարստացման արտաքին միջոցն է, սե՛ս § 286) այլ լեզուներից կատարված փոխառութիւններն են, որոնք կապված են գիտութիւն, տեխնիկայի և մշակույթի զարգացման ու դրանց հետ անմիջականորեն կապված նոր մեքենաների սարքավորումների և երևույթների անվանումների հետ. ինչպես՝ լավան, կապրոն, տիւրնտիկա, կոզ, սպորտտու և այլն։

§ 309. Նոր բառերի և նորարանութիւնների առաջացման ներքին միջոցներից են.

ա) Լեզվում եղած բառերի բառակազմական կառուցվածքով նոր բառերի կազմումը։ Այսպես՝ միայն տիկերէր և լուսին բառերով կապված տիկերերի և լուսնի հետազոտման հետ, վեր-

¹³ Նոր անվանում ստանալուց հետո այս հոդվածը դարձավ պատմական հնարանութիւն և անցավ պատիվ բառերի շերտը։

չին քանամյակում առաջացել են բազմաթիվ նոր բառեր. ինչպես՝ լուսնագնաց, լուսնախցիկ, լուսնացույց, լուսնաճաղ, լուսնամերձ, լուսնաշուրջ, լուսնընթաց, լուսնատար, տիեզերակայան, տիեզերակայ, տիեզերագնաց, տիեզերարոբոթ, տիեզերափառձ, տիեզերակապ, տիեզերանավակայան և այլն: -Յակ ածանցով վազմուղ-յակ, մատուցյակ, սառցուղյակ, լողուղյակ և այլն: Գեր- նախածանցով՝ գերհզոր, գերաբազ, գերբրակամ, գերեղեղ, գերեղ, գերհրահայիլ, գերհնչյունային և այլն:

բ) Հնչյավորները. ինչպես՝ ՈՒԳՐ (ուսանողական գիտական րեկերություն), ԶԷԿ (չերձակելիկորակայան) և այլն:

Մանր.— Կաղապարների հիմքով առաջացած նորարանությունները անսովոր ու արտասոց չեն հնչում լեզվի համար. այս պատճառով էլ անմիջապես են անցնում ակտիվ գործածության բառերի շարքը. ինչպես՝ մեկնաբլ, քոչիչուլի, բեռնուլի, գիտափոռձ, զափենկիր, երգացանկ, սրանկար և այլն:

գ) Հին, մեռած և պասիվ բառաշերտից վերցրած բառերի վերամասնագործումը և կենսունակացումը. ինչպես՝ ական, ականանետ, պարետ, հորան, տեղաճք, կայանք (արդյունաբերական խոշոր սարքավորման տեղ), հատվածք (Ապոլոն-17 տիեզերանավի հատվածքը վերագանում է երկիր, ՍՀ), հեռուստ¹⁴ (համտ. հեռուստացույց, հեռուստակնորոն, հեռուստամրադիր, հեռուստահաղորդում, հեռուստասպասարկում, հեռուստաշտարակ, հեռուստաստեղծություն, հեռուստախցիկ, հեռուստազիտոսո, հեռուստացանց և այլն) և այլն:

դ) Ակտիվ շերտի բառերի իմաստների փոփոխությունը և ընդլայնումը. այսպես՝ միջուկ բառը նշանակում է «կենտրոնական, միջին մասը». —ային ածանցով (հատկանշային իմաստով) դարձավ ատոմային զենքի տեսակի բաղադրյալ անվանման մաս (համտ. հրթիռամիջուկային, միջուկային զենք և այլն):

Բառի իմաստի նորացումը և փայլանումը բառային կազմի հարստացման ներքին կարևոր միջոցներից մեկն է: Բառը, ձևեր բերելով նոր իմաստ, հանդես է գալիս նոր բառիմաստային խմբերում և բառակապակցություններում, նրա շուրջը հանդես են գա-

լիս այլ բառեր, հարստանում են նրա համակարգային կապերը, հանդես են գալիս համանիշային և հականիշային նոր հարաբերություններ և այլն: Կարճ ասած՝ բառը վերաստանում է նոր կանոն և անցնում ակտիվ շերտի ոլորտը: Նորարանությունները, ճանաչում գտնելով, անցնում են բառասպաշարի ակտիվ շերտի ոլորտը և կազմում ակտիվ բառասպաշարի նոր բառերի շերտը: Նոր բառերը միանգամից չեն մտնում ակտիվ բառերի շարքը: Այդպիսիք, եթե բառային կազմի համար անհրաժեշտ և կենսունակ միավորներ են և լեզուն հարստացնում են իմաստային ու սնական նրանդներով, պահպանվում են և ստանում ակտիվ գործածություն՝ դառնալով լեզվական հանրաձայն սեփականությունը: Հակառակ դեպքում, մտնում են իրրե պատասխան անհարկի նորամուծություններ և նույնիսկ չեն փայլանում լեզվի բառասպաշարի պասիվ շերտերը: Ինչպես՝ մամուլում գործածված նորանույ, ցուցանո (Մոսկվա կինոֆատրոնում օրկոս տեղի ունեցավ կինոնկարի ցուցանորը, ՀԶ)՝ ցուցնակ (Ջերմաստիճանի միջազգային ցուցնակ, են) և այլ նորարանություններ:

§ 310. Նորարանությունների մեջ որոշ տեղ են գրավում առանձին գրողների և քանաստեղծների կողմից ստեղծագործական, սեփական նկատառումներով ստեղծված նոր բառերը, որոնք մեծ մասը հարստացնում է զեղարվեստական գրականության լեզուն՝ հաղորդելով նրան ձևաբանություն և զեղեցկություն. ինչպես՝ աղեղվիլ, ամբսիվիլ, համասիլուտեկ, կամարվեկ ամբսիվիլ և այլն (ՀՏ, Փնար Հայաստանի) կամ մեռած բնույթ միայն տվյալ հեղինակի ստեղծագործությանը, ինչպես՝ մահն, արև (ԵԶ, Երկերի ժողովածու), ցուցոն (ՍԿ, Փարավանները զեռ բալլում են), ամենամաղ, ամենահալը, ամենհնայ (ՊՍ, ՄՄՓ, ԱԶ), ամենալիմը, ամենախոն (Համո Սահյան, Հայրենիք) և այլն՝ շփափայցելով բառասպաշարի ակտիվ շերտի ոլորտը: Այսպիսի նորարանությունները դիվիդանական, անհասկանալի (օպպոնալ) նորարանություններ են:

Բառասպաշարի ակտիվ և պասիվ շերտերը. արտացոլում են բառասպաշարի տեղաշարժերը:

¹⁴ Հին հայերենում մակբայ էր (=հեղից, ՏՄՏ. հեռու, հեռավոր և այլն) և աշխարհարարում հնացած ու անգործանական էր:

¹⁵ Ստեղծվել է հավանաբար իրեն պրեմիերա քառի հայերեն համարների:

ՄԱՄԱՆԱԿԱԿԵՑ ԸՆԹՐՈՒՆԻ ԲԱՌՊՈՒՆԵՐԸ
ԸՍՏ ԳՈՐԾԱՌՈՒՅՑԱՆ ՈՂՐՏԻ

§ 310. Համաժողովրդական լեզուն հասարակական կյանքի (արտադրության, մշակութային և այլն) զարգացման հետևանքով մարդու հասարակական կամ արտադրական որևէ գործունեության հետ կապված ստանում է համապատասխան ոլորտների հատուկ տարրեր ու երանգներ: Համաժողովրդական լեզվի այս ոլորտային տարրերակները կազմում են լեզվական կամ գործառական (ֆունկցիոնալ) ոճերը¹⁶:

§ 311. Ժամանակակից հայերենում որոշակիորեն տարբերվում են լեզվի խոսակցական և գրական տարրերակները:

§ 312. Կրական լեզուն խոսակցական լեզվի մշակված, հզղված և կանոնավորված ու գրականացված դրսևորված արտահայտությունն է: Ամեն մի դրսևյին կամ դրսևորված գրական շե, եթե այն խոսակցական լեզվի սոսկ զբավոր դրսևորումն է¹⁷: Գրական լեզուն դրսևորվում է մաժալի, դիտական և դիզարփեստական գրականություն մեջ:

§ 313. Խոսակցական լեզվին առավել բնորոշ են թերի ու հանառու նախադասություններ, քերականական ու կառուցվածքային իրակությունների նկատմամբ որոշ անփոփոխություն, անբունաբոսիկ ու ոչ հզղված խոսք, այլև քառերի հուղաարտահայտչական և երանգների առատություն:

Հայերենի զարգացման համաժամանակյա կտրվածքում թեև գրական լեզուն առավել մշակվածություն և կանոնավորվածություն չնորհիվ տարբերվում է խոսակցականից, սակայն մասնատրական հաղորդակցության միջոցների (առդիլի և հետուստուսություն) գիտության ու տեխնիկայի զբաղմունքային ու մշակութային զարգացման հետևանքով, այն թափանցում է նաև կենցաղի և արտադրության մեջ և, բնականաբար, հետզհետե նվազում են գրական և խոսակցական լեզուների բնոցծված տարբերությունները: Այսպիսով, խոսակցական լեզվի կողքին զարգանում է նրա գրական-խոսակցական տարբերակը, որին բնորոշ են բառապաշարային, իմաստային, քերականական, գործառական և հուղաարտա-

հայտչական այլ չորահատկություններ. այսպես՝ գրական-խոսակցական ոճում գործածական են էս, էպիկա, կետու, կեսուր, գիլա, խոմուն, տասերեմ, տասչուս, իրիկուն, Բավոր և այլն, որոնք գրական լեզվում ունեն իրենց նորմավորված համարվածները (հնմտ, այս, այսպես, սկեսուր, կեսաս, զանգուր, աասներեք, աասնչորս, երեկո և այլն):

Այսպիսով, լեզվի խոսակցական ոճը շերտավորվում է գրական-խոսակցական և սուրյա խոսակցական կամ ժողովրդախոսակցական տեսակներով:

§ 314. Ասույա խոսակցական կամ ժողովրդախոսակցական ոճը գործածվում է ոչ պաշտոնական հարաբերություններում, այսպես, օրինակ, կենցաղում, փոլոցում, մարզադաշտում, բնիկների ու աղջականների հետ ունեցած զրույցների ժամանակ, արանսպորտում, շուկայում և այլն: Ասույա խոսակցական կամ ժողովրդախոսակցական ոճին բնորոշ են հետևյալ բաները՝ բիրաբ, գոռով, էպիկա, էպես, էրհան, էս, էլ, էն, դաղը, ոտ, նեո, բուշ, պոռշ, եղել, փուրացավ, Խալսե, հավես, յուլ գնալ, լավի գնալ (լավանալ առողջանալ), տե՛ավարի, զգվո՞վի և այլն: Սրանք բնդանուր առմամբ են համասլատասխանում բնոունված գրական նորմաներին և դիտական, պաշտոնական ոճերում կիրառելի չեն:

§ 315. Ժամանակակից հայերենի զարգացման արդի փուլում լեզվի գրական խոսակցական և ժողովրդախոսակցական ոճերի փոխընդհանուրում ու փոխնեթափանցման շնորհիվ գրական-խոսակցականը բնոարձանում է իր գործառույթը՝ թափանցելով հանրային սուրյա գործունեության ոլորտը և, բնականաբար, ձգտում բացարձակության ու բնդանություն¹⁸, իսկ սուրյա խոսակցական ոճի շատ տարրեր թափանցում են գրական լեզվի (մասնավորապես զեղարվեստական գրականություն) համակարգը, մտվում և հարստացնում այն:

Գրական լեզվի զարգացման հետ, զարգանում ու բնոարձակվում են նրա գործառույթյան ոլորտները. այսպես՝ ցախոսունորեն սահմանադատվում են գեղարվեստական, դրսական և պաշտոնական ոճերը:

§ 316. Կեղարվեստական ոճին հիմնականում բնորոշ է պատկերավոր հաղորդակցման գործառույթը, և այս տեսակետից

¹⁶ ՏՃՊ Գ. Հ. Կղարյան, Ոճաբանության առարկան և խնդիրները, Օրևան, 1971: Է. Ք. Աղայան, Լեզվի զրույթյան տարբերակային մեջը, «Բաների նրևանի համալսարանի», 1972, № 2:

¹⁷ ՏՃՊ Է. Ք. Աղայան, Եզված հոգվածը, էջ 67:

¹⁸ ՏՃՊ Է. Ք. Աղայան, Եզված հոգվածը, էջ 69:

ալն հակադրվում է գրական լեզվի մյուս ոճերին (գիտական, պաշտոնական): Փեղարվեստական ոճի համար հատկանշական են խոսքային ազատությունը, հուղարտահայտչականությունը և այլն: Փեղարվեստական ոճը կ'իր գործառական (ֆունկցիոնալ), բառապաշարային ու բերականական, և՛ ծավալային առանձնահատկություններով տարբերվում է գրական լեզվի մյուս ոճերից, քանի որ նրանում ստեղծագործական տարրեր նպատակներով աճախ են համաժողովրդական լեզվի բոլոր տարրերն ու լեզվական միջոցները, բոլոր ոճերը՝ ժողովրդախոսակցական, գիտական, պաշտոնական և այլն, հնացած բառերն ու կապակցությունները, օտարաբանությունները, դարձվածքները, բարբառային ու ժարգոնային բառերը և այլն:

Գևորգ. — Փերևս այս յուրահատկությունների պատճառով էլ որոշ լեզվաբաններ մերժում են ալն գործառական մյուս ոճերի համակարգում դասելը՝ պատճառաբանելով, որ նրա հիմնական գործառույթը զեղազիտականն է: Սակայն շատերն ալն գիտում են իբրև լեզվի ինքնուրույն ոճ¹⁹:

§ 317. Գիտական ոճը գործածվում է գիտահասարակական աշխատանքի ոլորտում: Այս ոճը հուղարտահայտչական երանգավորման տեսակետից չկարգ է, աչքի է ընկնում մասձական, ալոսմաբանական յուրահատկությամբ և ունի հաղորդող, ներգործող գործառույթ: Այն հենվում է հասակցությունների, դատողությունների վրա, օգտագործում է փաստական նյութ, ունի գիտական, տերմինաբանություն: Գիտական ոճի համար բնորոշ է հաղորդածի բովանդակության ճշգրտությունը, կոնկրետությունը և սեղմությունը. այսպես՝ գիտությունների զարգացման, նրանց ճշտագրվուման ու սահմանազատման հետ ընդարձակվում է առանձնանում է յուրաքանչյուր գիտաճյուղ իր հատուկ տերմինաբանությունը: Առանձնանում է արտադրատեխնիկական բառապաշարն իրեն բնորոշ տերմիններով, որոնք մեք մեք տեղ են գրավում տեխնիկական պրոցեսների անվանումները (կազմված մեծ մասամբ -ում և -ացում անանջներով), ինչպես՝ գալվանացում, ալյամոնտաժում, պլանմոյացում, օճառացում, եզրահղում, էլեկտրագոդում և այլն:

¹⁹ Տե՛ս Գուշոբա, Очерки по стилистике русского языка, М., 1965. Ефимова, Стилистика художественной речи, М., 1961. В. В. Виноградов, Итоги обсуждения вопросов стилистики, ВЯ, 1955, № 1, стр. 850.

§ 318. Գիտական ոճի առանձին տարրերակներ են գիտահանրամատչելի և մասնագիտական-գրագիտականային ոճերը:

§ 319. Գիտահանրամատչելի ոճը առավել մատչելի և գործածական է և կաշկանդված ու հարցված չէ նեղ մասնագիտական կամ անհատականալի տերմիններով, ինչպես զուտ գիտական ոճը: Այն կ'իր բառապաշարով, կ'իր կառուցվածքով հանրամատչելի է և՛ նեղ մասնագետներին, և՛ ժողովրդի լայն զանգվածներին համար:

§ 320. Մասնագիտական-գրագիտականային ոճը գործատու է մասնագիտությունը կամ զբաղմունքով միավորված կողակտիվների, խմբավորումների մոտ. այսպես՝ ֆիզիկոսների ոճ, քիմիկոսների ոճ, բժիշկների ոճ, հյուանների ոճ, ատաղձագործների ոճ, կոշկակարների ոճ և այլն:

§ 321. Պաշտոնական ոճ: Պաշտոնական ոճը գործադրվում է պետական, պաշտոնական, ղիվանագիտական փաստաթղթերում, կառավարական հրամանագրերում, ուղեբժնեղում, զեկլարացիաներում, նոտաներում, ինֆորմացիոն հաղորդագրություններում, մամուլի առաջնորդողներում, դրասենյակային, գործարարական զբաղություններում և այլն: Պաշտոնական ոճը մյուս ոճերից ցայտունորեն տարբերվում է իր գործառույթային հատկությամբ և բառապաշարային յուրահատկություններով: Այս ոճի համար հատկանշական են ձևակերպությունների ճշգրտությունը, հակիրճությունը, բանձնային ու տկարապաշարային արտահայտություններն ու կապակցությունները, պատճառահետևանքային որոշ բառերի և նախադասությունների հատուկ տիպերի գործածությունները, յուրահատուկ տերմինաբանությունը և այլն. ինչպես՝ ի գլխորդում, ի զեկլարացում, ի աճօրինություն, ուստի, հետևաբար, վերոնիշյալ, վերոբերյալ, սույն, սույնով, հայտնվում է... ստորև, համարել անվավեր, այսօրվա դրությամբ, պարտավորություններ ստանձնել և այլն: Կարճ ասած՝ մշակվում է փաստաթղթային յուրահատուկ ձև (հրաման, կարողորություն, տեղեկանք, արձանագրություն, դրում, հասնածայնագիր և այլն), յուրահատուկ տերմինաբանություն ու բառապաշար:

§ 322: Պաշտոնական ոճը ունի իր բնորոշման առավել կոնկրետ ոլորտները՝ զբանեյակային-գործարարական, վարչական-փաստաթղթային, վարչական-իրավարանական, վարչական-գիվանագիտական և այլն:

§ 323. Գրասենյակային-գործարարական ոճը գործադրվում է

հիմնարկների գործարարական փաստաթղթերում ու գրազրույթումներում (հմտ. հրաման, կարգադրություն, դիմում, հաշվետվություն, արձանագրություն և այլն): Մրանում գործառու են նաև հնացած ստանդարտային բառեր ու կապակցություններ, զբարբայն նախդիրներ և այլն (հմտ. սուչն, սուչնով, ս/թ, ստորև, վերջից, վերորելալ, առ աչառ, հուսով եմ, որ... արդ, բայտ, բնդ և այլն):

§ 324. Վարչական-փաստաթղթային ոճը գործառու է կառավարական հրամանագրերում, ուղեթղթերում, ղեկավարացիաներում, նոտաներում, ղեկուցումներում, օրենքներում և այլն: Այս ոճին բնորոշ են բառերի կոնկրետ, ճշգրիտ և ուղղակի նշանակությամբ գործածվելը, որոշ «կազապարային» արտահայտություններ (հմտ. պատավորեցնում է, հանձնարում է, երաշխավում է, ի գիտություն, ի ղեկավարություն և այլն):

Որոշ բնույթի փաստաթղթերում կարող են լինել խիստ երկար նախադասություններ, հաճախ մեկ և ավել էջանոց (հմտ. Սովետական Հայաստան թիթի 1976 թ. հունիսի 15-ի առաջին էջում տպված ղեկավարացիան), որոշ մանրամասների նկարագրություն և այլն, որ արվում է ճշգրտման և տարակարծությունների բացատման նպատակով:


§ 325. Վարչական-իրավաբանական ոճը գործառու է միլիցիայի և դատավարական օրգաններում. այս ոճի համար բնորոշ են գործը կարենլ, գործ հառուցել, բերման ենքարկել, վրաքը կատարել, մեղադրել, գործով անցնել, հայցվառ, տուժաղ, անմեղատունակ և այլ տերմիններն ու տերմինային կապակցությունները, որոնք այլ ոճերում չեն գործառուում:

Մի շարք համադրածական բառեր այս ոճում կիրառվում են տերմինային նշանակությամբ. օրինակ՝ մեղք, մեղադրանք, խախտում, պատիժ, բեկույրուն և այլն:

§ 326. Վարչական-գիվանագիտական ոճը գործառու է պետական գիվանագիտական փաստաթղթերում և միջազգային ու միջպետական հարաբերությունների ոլորտում. սրա համար բնորոշ են այնպիսի միջազգային տերմիններ ու կապակցություններ (մեծ մասամբ պատմենված), որոնք այլ ոճերում սովորաբար չեն գործառուում. առյպես՝ գրույց ունենալ կլոր սեղանի շուրջ, բարձր մակարդակով խորհրդակցություն, խաղաղ համագորակցություն,

պայմանագիր, զաշինք²⁰, գործերի հավատարմատար, ղեպպան, ռեզիլենցիա, էնտա, ուլտիմատում և այլն: Այս ոճի մի շարք կապակցություններում որոշ բառեր ունեն հուղարարահայտական կրանդավորում. ինչպես՝ սառը պատերազմ, պատերազմի մրցավազմ, ավազակային հարձակում, պատերազմի օչախ և այլն:

§ 327. Գործառական ոճերը կարելի է պատկերացնել հետևյալ առխտակցով²¹:



Մանր.— Ումանք առանձին ոճ են դիտում նաև մամուլի լեզուն կամ հրատարակատեսական ոճը²², Միհնդեռ մամուլում հանդիպող հրատարակատեսական հոդվածները հիմնականում դիտական, պաշտոնական (իր տարատեսակներով) և զեղարվեստական բնույթի են. այսպես՝ նթի քաղաքական, ղիվանագիտական բնույթի են (զեկուցումներ, չառեր, ուղերձներ, կատավարական, կուսակցական կարխնետներում ծնված որոշումներ, ղիկավարացիաներ և այլն), վարչական-փաստաթղթային կամ վարչական—գիվանագիտական ոճի մեջ են մտնում, նթի ակնարկներ, ֆելիետոններ կամ հրատարականներ են՝ զեղարվեստական ոճի կամ դիտական ոճի տարատեսակների մեջ:

20 Այս և նախորդ (պարմանագիր) բառերը գործառու են նաև դիտական և զեղարվեստական ոճերում:
 21 Համեմատիր է. Բ. Աղայան, նշված հոդվածը, էջ 76:
 22 Տե՛ս Դաօժժե, Очерки по стилистике русского языка, М., 1965, стр. 25.

ՔԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

§ 328. Ինչպես ասենք մի լեզու, այնպես էլ հայերենը ունի նոր բառեր կազմելու իր սեփական միջոցներն ու եղանակները: Նոր բառեր կազմելու միջոցների և եղանակների ուսումնասիրությունը զբաղվում է բառագիտության «բանականություն» բաժինը: Բանականությունը քննում է նաև բառի կառուցվածքը:

Հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որի բառակազմությունը չափազանց հեղուկ է և դյուրամեծ: Այս առանձնահատկությունը նպաստում է եղած արմատների, բառերի ու սծանցների միջոցով բազմաթիվ նորանոր բառեր կերտելուն, օտար լեզուներից գիտական ու տեխնիկական շատ տերմիններ հայերենով փարզանկելուն և զրանց իմաստները հելշտ վերարտադրելուն:

§ 329. Բառակազմությունը սերտորեն կապված է քերականության հետ, քանի որ բոլոր նոր բառերը առաջանում են իբրև քերականորեն ձևավորված լեզվական միավորների, իբրև որոշակի խոսքի մասեր և արտահայտում հասպատասխան քերականական կարգ:

Բառի կառուցվածքի ուսումնասիրությունը պարզում է, որ բառերը բաղադրված են մեկ կամ մի քանի իմաստակիր տարրերից՝ ձևույթներից:

Ձևույր (մարֆեմա)

§ 330. Լեզվի ձևական կամ նյութական կողմը արտահայտվում է հնչույթներով, որոնք առանձին վերցրած իմաստ չունեն, նրանք կազմում և բազազորում են լեզվական իմաստակիր միավորների ձևեր: Լեզվական նվազագույն իմաստակիր միավորը ձևույթն է:

Իմաստի և ձևի անբաժանելի միասնությունը կազմող լեզվական նվազագույն միավորը կոչվում է ձևույր:

§ 331. Ձևույթի ձևը կամ արտահայտության պլանը նրա արտաքին նյութական կողմն է կամ հնչույթնակազմը, իսկ իմաստը կամ բովանդակությունը պլանը՝ տվյալ հնչույթնով կամ հնչույթնախմբով արտահայտված իմաստը: Հետևաբար, լին կարող լինել անձև ձևույթներ, ինչպես որ չեն կարող լինել նաև իմաստագրերի ձևույթներ, այսպես օրինակ՝ գիր, գրի, գիրք, գրել, գրավոր, գրալին բառերի մեջ գիր հնչյունախումբը արտահայտում է բնօրհանույր նյութական իմաստ, որ գիր առարկայի արտահայտած իմաստն է: Հիշյալ բոլոր բառերում բնօրհանույր գիր-գրը ձևույթը չի կարող ալելն բաժանվել, տարբալումվել այլիկ նվազագույն միավորների՝ առանց իմաստի աղավաղման: Այս դեպքում ստացվում են առավել նվազագույն միավորներ՝ հնչույթներ (գ-ի-ր), որոնք ալլան ձևույթներ չեն, քանի որ իմաստից զուրկ են:

§ 332. Ինչպիսի կազմություններում գիր ձևույթը հանդես է գալիս երկու ձևով՝ գիր և զրբ, նշանակում է մեկ ձևույթը կարող է ունենալ երկու ձև կամ երկու տարբերակ: Չի բացառվում նաև ձևույթների երկուսից ալլելի ձևերի գոյությունը. ինչպես՝ կիկկանկն (հմտտ. կին, կանայր, կանանց, կնոջ, կնամու և այլն), որ պլանանավորված է հնչույթների շեշտափոխական հնչյունափոխությամբ:

Մանր. — Միևնույն ձևույթի տարբեր ձևերը պրոֆ. է. Աղալանը իր «Ժամանակակից հայերենի հույզումը և խոնարհումը» աղալատության մեջ անվանել է Անակներ¹:

§ 333. Վերահիշյալ կազմություններում գիրը զրբը ձևույթի հետ հանդես են գալիս նաև ալլ ձևույթներ. ինչպես՝ ել(զբ-ել), ք(զիր-ք), -ավոր (զբր-ավոր): Վերջիններս նույնպես ձևույթներ են, սակայն իրենց արտահայտած իմաստով և դերով տարբերվում են գիր ձևույթից: Սրանք օձեն ոչ թն բնօրհանույր նյութական, ալլ ալլելի վերացական իմաստ և կոնկրետացնում, տարբերակում են գիրը ձևույթի ղնօրհանույր նյութական իմաստը: Նույնը և հանկ (հանկ-կ), հանք (հան-ք), հանկույր (հան-ույր), հանկց (հան-կց) կազմություններում հան ձևույթը արտահայտում է բնօրհանույր

¹ է. Ք. Աղալան, Ժամանակակից հայերենի հույզումը և խոնարհումը, էջ 80:

նյութական իմաստ, որ կոնկրետանում և տարբերակվում է -ել, -լ, ույր, -ածո, -եց ձևայինների միջոցով:

Այն ձևայինները, որոնք արտահայտում են ընդհանուր նյութական իմաստ, կոչվում են հիմնական ձևայիններ:

Մյանք արտահայտում են իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների, հատկանիշների, երևույթների ընդհանուր գաղափարները: Հիմնական ձևայիններ են բոլոր արմատները: Հիմնական ձևայինները կոնկրետանում են կա՛մ անկախաբար իբրև բառ գործածվելիս, կա՛մ երկրորդական ձևայինների միջոցով, որոնք բառային ձև կամ կերպարանք են տալիս հիմնական ձևայիններին:

Այսպես՝ վերևում բերված -ել, -ածո, -ույր, -լ, -եց ձևայինները տարբերակում են հան հիմնական ձևային ընդհանուր իմաստը և վերածում բառային իմաստի:

Անկախ գործածություն ունեցող արմատներն արդեն, բնականաբար, ունեն տարբերակված բառային իմաստ: Մյանք արմատական կամ պարզ բառերն են, ինչպես՝ հայր, մայր, տուն, երգ, սեղան, ծառ, հաց, մարդ, ջուր, զույգ և այլն: Հետևաբար, բառային իմաստ կարող է ունենալ նաև մեկ առանձին հիմնական ձևայինը առանց որևէ այլ կոնկրետացնող կամ տարբերակող ձևային մասնակցություն:

Այն ձևայիններ, որոնք կոնկրետացնում և տարբերակում են հիմնական ձևայինների իմաստները կամ արտահայտում են դրանց գտնազան հարաբերությունները, կոչվում են երկրորդական ձևայիններ:

§ 334. Երկրորդական ձևայինները լինում են բառակազմական կամ ածանցական և բառահարաբերական կամ վերաբերական:

ա) Բառակազմական ձևայինները տարբերակում, կոնկրետացնում են հիմնական ձևայինների ընդհանուր իմաստները և վերաձում բառերի: Բառակազմական ձևայինները կոչվում են ածանցներ:

Ածանցները զրվում են նաև բառերի վրա. այս դեպքում ածանցները արդեն անկախ գործածություն ունեցող բառից նոր բառ են կազմում. ինչպես՝ տուն-տեղակ, տեղակ և այլն: Հետևաբար, ածանցները կարող են և արդեն տարբերակված բառային իմաստներին նոր տարբերակում տալ. ինչպես՝ ընկեր-ընկերական, ընկերակալություն և այլն:

բ) Բառահարաբերական ձևայինները արտահայտում են բառերի հարաբերություններ և ունեն վերաբերական կամ քերականական իմաստ (հմտ. եց, ի, ից ձևայինները հանեց, հանելի, հանելից բառերում):

Մանր.— Հայ քերականագիտության մեջ կա այն կարծիքը, որ երկրորդական ձևայիններ ունեն ձևական՝ իմաստ: Ինչ խոսք, որ հիմնական ձևայինների հետ համեմատած սրանք ունեն ավելի վերացարկված, արտահայտված իմաստ, սակայն ձևական չեն:

Բառակազմական ձևայինները արտահայտում են որևէ հասկացության կամ հատկանիշի ընդհանուր գաղափարները. օրինակներ՝ տեղի՝ —արտ (հմտ. գործարար, լվացարար, հավաքարար), զբաղվողի. մասնագիտություն ունեցողի՝ —բան (հմտ. լեզվաբան, երկրաբան, արվեստաբան, սրտաբան ուռուցքաբան)՞, տեղի՝ —արան (հմտ. գասարան, լսարան, նստարան) և այլն: Ինչ վերաբերում է բառահարաբերական ձևայիններին (հոլովման և խոնարհման վերջավորություններին), այսպեղ դրանց իմաստը ևս ձևական չէ, այլ քերականական. զրվելով բառերի վրա, կազմում են դրանց քերականական ձևերը:

§ 335. Հիմնական և բառակազմական ձևայինները կազմում են բառեր և բառային մակարդակի միավորներ են: Բառակազմական ձևայիններ ևս զուտ բառակազմական մասնիկները՝ ածանցները:

Բառահարաբերական ձևայինները կազմում են բառերի քերականական ձևեր և ձևաբանական մակարդակի միավորներ են:

Մանր.— Հայ լեզվաբանության մեջ ավանդական կարգով բառահարաբերություն տերմինի հետ զուգահեռաբար գործածվել է նաև բառախոխություն տերմինը, որը ավելի շուտ տրամադրում է հասկանալի բառակազմություն կամ բառասեղծություն, քան բառահարաբերություն, անիին հիշյալ ձևայինները բառեր չեն փոխում, այլ արտահայտում են բառերի տարբեր հարաբերությունները միայն: Եթե նկատի է առնվել այն, որ հոլովման կամ խոնարհման

1 Տե՛ս Մ. Աբելյան, նշված աշխ., էջ 6, Գ. Առևի, Ժամանակակից Հայոց լեզվի գոսերից, էջ 203:

2 Այս ածանցի բառակազմական իմաստում զգացվում է իր սկզբնաղբյուրի՝ համանուն բառի (բան) զործ, աշխատանք իմաստի հետ ունեցած կապը: Իմաստային որոշ կապ կա նաև այլ (հիմնական ձևայիններից և արմատական բառերից առաջացած) ածանցների մեծ մասի մեջ (հմտ. —բար, —պես, —զործ և այլն):

ման վերջավորությունները փոխում են նույն բառի ձևերը, այսպիսով հիմնականում փոխվում են նաև բառակազմական ձևերը (ածանցների) հավելումով, ընդ որում այստեղ տեղի է ունենում ոչ միայն բառի ձևի, այլև իմաստի փոփոխություն (հմմտ. գույն-գունավոր, անդույն, տուն-տնական, տեղոր, անտուն և այլն), որի հետևանքով և առաջանում է նոր բառային միավոր, այսինքն՝ նոր բառ: Հավանաբար տիրիինը գալիս է ռուսերենի сюзонизментельный տերմինից, սակայն բառաձևաբանական և բառակազմական ձևերի հարցը ստույգորենում այլ է, քան հայերենում: Այնտեղ մեծ թվով կազմությունների մեջ (հատկապես բայերի) ածանցների քերականական և բառակազմական հատկանիշները ձուլված են միմյանց և միևնույն բառակազմական ածանցը միևնույն կազմության մեջ կարող է հավասարապես և՛ նոր բառ ստեղծել, և՛ քերականական իմաստ հաղորդել (հմմտ. думать-подумать, ломать-выломать, томить-вытомкать և այլն), նայած, թե որ տեսակցումով ենք մտնելով բայածանցների նշանակությանը:

ՊԱՐՁ ԵՎ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌՆԵՐ

§ 336. Բառերն ըստ կառուցվածքի լինում են՝ պարզ և բաղադրյալ:

Պարզ կոչվում են այն բառերը, որոնք բաղկացած են մեկ հիմնական ձևերից:

Պարզ բառերը արմատական բառեր են: Սակայն ոչ բոլոր արմատներն են, որ անկախ ձևեր են կամ արմատական բառեր են և կարող են ունենալ անկախ գործածություն. այսպես՝ հեռ, հեռաչ, սխալ, հի և այլ արմատները բառեր չեն, նրանք զույլություն ունեն մեր լեզվում իբրև սոսկ արմատներ (իբրև հիմնական ձևերից) և գործում են միայն բաղադրություններում այլ ձևերի միասնությամբ, ինչպես՝ հեռախոս, հեռագիր, հեռակա, հեռաշափ, հեռավոր, հեռալուսանկար, հիանալ, հիանալի, հիասքանչ, հիացմ, հիասքանչություն, հեռաչ, հեռաչափ, հեռաչափա, հեռաչափ, սխալանալ, սխալելի և այլն: Արմատական բառեր չեն կարող լինել և հետևաբար կախյալ ձևերից են նաև բայերը:

Մատենից շատերը. ինչպես՝ կարդ (կարդալ), վազ (վազել), վախ (վախել, վախում), մեց (մեցել, մեցում, մեցախաղ, մեցափուլ, մեցաշար և այլն), գետ (գետնալ, տնենագետ, գետուն և այլն), դիտ (< դետ. դիտել, դիտում, դիտող, անդիտ և այլն), կալ (զարարի ունիմ անկանոն բաշի անցյալի հիմքից, որ նշանակում է բռնել, ունենալ, արգելել (սովալ է հայերենի կալանավոր, և՛ կալանախել, կալանատուն, դիտակալ, կալանք և այլ բառերում):

Մանր.— Պարզ կամ արմատական բառերը կարող են ունենալ նաև բառաձևաբանական ձևերից (հմմտ. գիր-գրի, անդան-անդանի), բայց դրանից չի փոխվում նրանց կառուցվածքային տիպը:

Բաղադրյալ բառեր են մեկից ավելի հիմնական և բառակազմական ձևերից կազմված բառեր. այսպես՝ հոր-ա-բույր, բնկեր-ույի, ծեր-ունի, հայր-հենի, ինքն-ա-թիւ, երկն-ա-քեր, հեռ-ա-գիր, հառաչ-անք, դուն-ատ, եղ-իչ, կուս-կոմ և այլն:

§ 337. Ըստ բաղադրիչների ընդթյի, բաղադրյալ բառերը լինում են՝ բարդ, անանցավոր, բարդ-անանցավոր և հաղավոր:

Բարդ են կոչվում մեկից ավելի արմատներից կամ բառերից կազմված բառերը, որից և՛ հեռ-ա-խոս, հեռ-ա-գիր, մայր-ուղի, քաղաք-ա-մայր, առ-և-տուր, մեծ-ա-մեծ, մանր-մունր, հաց-թուխ, վեր-լուծել, վրա տալ, լաց լինել և այլն:

Անանցավոր են կոչվում մեկ արմատից կամ բառից և մեկ կամ ավելի անանցներից կազմված բառերը. ինչպես՝ զետ-ակի, թի-ակի, դուն-ավոր-ում, լուս-ավոր-ություն, պահ-հատ-ավոր-ել, սկզբ-ունք-աշին-ություն (սկզբունքաշինություն), մի-ություն-ախան (միութենական), բուր-ա-ստան, մտ-ավոր-ական և այլն:

Բարդ-անանցավոր են կոչվում մեկից ավելի արմատներով կամ բառերով և մեկ կամ ավելի անանցներով կազմված բառերը. ինչպես՝ անկարգ-ա-պահ-ություն, անհավ-ություն, հեռ-ա-խոս-ավոր-ութի, ան-տն-տն-վար-ություն, անկրուն-ա-լուս-ակաս և այլն:

Թե՛ բարդ, թե՛ անանցավոր, և թե՛ բարդ-անանցավոր բառերի բաղադրիչները միանում են հոդակապով կամ առանց հոդակապի: Հաղավորներ են բաղադրյալ անվանումների, բառակապակցությունների կրճատումներից կազմված բառերը, որոնց բաղադրիչները բառաձևեր, վանկեր, հնչյուններ, մասամբ էլ ամբողջական բառային միավորներ են. ինչպես՝ ԳԳԶ (Գերմանական Գնչական

3 Տե՛ս Ս. Կոլոն. Ածանցները ժամանակակից հայերենում, էջ 30—32:

մտերատական Հանրագիտություն), գործկոմ (գործազիր կոմիտե), հրավիպոմ (հրամանատարական կազմ) և այլն:

Մանր.— Հայտնությունները բառակազմության համեմատաբար նոր եղանակ են: Սրանք բաղադրական բառերի մեջ բազմակառուցյալ յուրահատուկ դիրք են զբաղում. բաղադրյալ բառերը բաղադրված են հիմնական և երկրորդական ձևայիններից և բառերից, մինչդեռ հայտնությունների բաղադրիչները ձևային կարգի միավորներ չեն, և թեև ունեն ձև, սակայն առանձին վերջնում իմաստ չունեն, բանի որ բառերից վերջնում կրճատված պայմանական մասեր են, որոնք ընդամենը կրճատված են ստանում ամբողջական հայտնության մեջ: Հայտնությունները իրենց բառակազմական յուրահատուկ ձևով տարբերվում են ժամանակակից հայերենի մյուս բառակազմական կանոնավոր եղանակներից, սակայն կազմված են բաղադրության հիմունքով և, հետևաբար, պետք է դասվեն բաղադրյալ բառերի շարք (տե՛ս § 512, 513):

ՐԱՍԱՐԱՐՈՒՄ

§ 338. Հայերենը պատկանում է հնդեվրոպական այն լեզուների թվին, որն ունի զարգացած և հարուստ բառարարություն:

Բառարարությունը պարզ բառի համեմատությունը վերացարկման առավել բարձրագույն աստիճան է, քանի որ նրանում համարյա մեծ են երկու և ավելի լեզվական իմաստակիր միավորներ (հիմնական ձևայիններ, բառեր, բայահիմքեր):

Հայերենը հարուստ է հարադրական (վերլուծական) և համարյապես տիպի բարդություններով:

§ 339. Բառարարությունների ժամանակակից հայերենում առաջանում են հիմնականում երեք ճանապարհով. շարժնյութական կապակցություններից, լեզվում եղած բառակազմական կապակցություններից և բառավորատուրյուններից:

§ 340. Առաջին ճանապարհով (շարժնյութական կապակցություններից) բառարարությունների առաջացումը տեղի է ունենում շարժնյութական կապակցությունների մեջ բառերի ներկարտան միասին զործածվելուց և պարզբարբար կրկնվելուց, որ նպատակ է դրանց առավել սերտ ու միասնական իմաստ արտահայտելուն և մեկ բառային միավորի վերածվելուն:

Քնական է, որ շարժնյութական կապակցությունները բարդու-

ժյան վերածվելիս ինչ-որ շափով կորցնում են կապակցության շարժնյութական իմաստը. ընդ որում շարժնյութական կապի մեղադրման աստիճանը բոլոր բարդություններում միատեսակ չէ. որոշ բարդություններում այն զգալի է (հմմտ. ներս մտնել, զուրս գալ, բարդություններում այն զգալի է (հմմտ. ներս մտնել, զուրս գալ, մայրցամաք, կիզմանում և այլն), իսկ ալլ զնայքերում ալլոր, մայրցամաք, կիզմանում և այլն), իսկ ալլ զնայքերում միջոցնած է (հմմտ. սիրտ տալ, գլուխ տալ, գլուխ գալ և այլն):

§ 341. Բարդությունների առաջացման երկրորդ ճանապարհը, որ առավել ախտիվ և կենսունակ է, բարդ բառերի եղած կազմաբաղադրիչ նմանակությունը նոր բարդ բառերի կազմումն է. այսպես օրինակ՝ ծովազնաց, օղազնաց բարդ բառերի կազմաբաղադրիչ նմանակությամբ կազմվել են տիկերազնաց, լուսնազնաց, մարազնաց նոր բառերը: Լեզվի զարգացման համաժամանակյա փոքրվածքում հաճախ զովար է լինում որոշակիորեն ասել, թե նրան բարդություններից որոնք են բառակապակցություններից առաջացել, և որոնք՝ եղած պատրաստի կազմաբաղադրիչ նմանակությամբ: Թեև որոշ բարդություններում (տե՛ս վերահիշյալները) կույտնից, թեև որոշ բարդություններում (տե՛ս վերահիշյալները) դրանց առաջացման ուղիները ակնհայտ են և կարող են բացատրվել նաև համաժամանակյա քննությամբ:

§ 342. Երրորդ ճանապարհը փոխառությունների միջոցով առաջացած բարդություններն են, որոնք մեր լեզվին անցնում են հիմնականում ռուսերենից և նրա միջնորդությամբ ալլ լեզուններից, ինչպես՝ միկրոսխմա, ռադիոտեխնիկ, ազդիտակալով, ոսպնիկակառուցիկա և այլն:

Բառարարությունների ստեղծվում են ոչ միայն նոր հասկացություններ արտահայտելու պահանջով, այլև նրկու կամ ավելի իմաստներ մեկ բառով արտահայտելու անհրաժեշտությամբ, որ հազորդակցման առավել անտեսված և արտահայտիչ միջոց է:

ՀԱՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՐԱԿԱՆ ԲԱՐՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 343. Ըստ կառուցվածքային հատկանիշի կամ բոս բաղադրիչների միացման ձևի, բարդությունները բաժանվում են երկու ընդհանուր տիպերի՝ հարադրական (կամ վերլուծական) և համարյապես՝

4 Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1-ին, 1962, էջ 46, 47, 137, 156, 160 և այլն: Եղեյի, «Կերտականությունը հայերենի արարել մակարդակներում», ՊՐԷ, 1972, № 3, էջ 37—58; Ռ. Սկոպյան, Բարդ բառերի զուսակազմումը հայերենում, «Երասեր», 1972, № 2, էջ 100—106:

§ 344. Համադրական բարդությունները բառ ձևային և իմաստային կապի սերտության, բաժանվում են երկու ենթաստեղծի՝ կցական և իսկական:

Մանր.— պրոֆ. Մ. Արեղյանը բարդությունները բաժանում է երեք ստեղծի՝ հարադրական, կցական և իսկական: Այս դասակարգումը առ այսօր էլ մնում է գիտական և ընդունելի՝ բարդության դանդաղ աստիճանավորումները, նրանց հիմնական երեք ենթաստեղծիները սահմանադրանքի և անվանելու իմաստով: Սակայն բարդության հիշյալ դասակարգումը կատարված է ոչ միատեսակ սկզբունքով: Այսպես՝ դասակարգման հիմքում ընկած կատարվում բոլոր ստեղծիների վրա. եթե հարադրական և կցական բարդությունները միմյանց հակադրվում են կատարվածքային հատկանիշով, ապա միեւնույն հատկանիշով չեն հակադրվում իսկական բարդությանը, որը, իր հերթին, նախորդներից տարբերվում է միայն իմաստային հատկանիշով: Ժամանակակից հայ քերականության մեջ, մասնավորապես բունական ձևներակներում և դպրոցական դասագրքերում, բառաբարդությունները ընդհանրապես դասակարգվել են անիսկական և իսկական ընդհանրապես իմաստային հատկանիշի հարվածումով. ընդ որում անիսկական բարդությունների մեջ մտել են հարադրական և կցական բարդությունները: Սակայն անիսկական տերմինը, որ ստեղծվել է Մ. Արեղյանի ստեղծած իսկական տերմինի հակադրությամբ, որքան էլ պայմանական, այնուամենայնիվ, ճիշտ չէ, քանի որ հարադրական և կցական բարդությունները ևս բարդություններ են իրենց ձևաիմաստային ուրույն հատկություններով, և, եթե նման չեն իսկական բարդություններին, ապա ոչ թե անիսկական են. այլ բարդության առանձին և տարրերի տիպեր են: Բացի այդ, կցա-

5 Տե՛ս Մ. Արեղյան, Եղված աշխ., էջ 169.
6 Իսկական տերմինի սակ Մ. Արեղյանը հասկանում է լրակատար բարդառավելու կամ ներհյուսված բարդություն:
7 Ք. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 159, Ա. Ղարիբյան, Հայոց լեզու, 1959, էջ 61.
8 Իրանի իսկական բարդության համեմատությամբ առավել մտաբարդություններ է դիտել նաև Մ. Արեղյանը և միավորել մեկ ընդհանուր վերնագրի սակ (տե՛ս նշված աշխ., էջ 170):

կան բարդությունները, եթե մի կողմից ունեն ընդհանրություններ հարադրական բարդությունների հետ, ապա մյուս կողմից առավել ընդհանրություններ ունեն իսկական բարդությունների հետ. ընդ որում ընդհանուր են առաջին հերթին բազադրիչների միացման ձևով, կատարվածքով, այսինքն բազադրիչների համադրականությանը, որ և ընկած է բառաբարդության ստեղծիների գասակարգման հիմքում:

§ 345. Հարադրական տիպի մեջ են դասվում այն բարդությունները, որոնց բազադրիչների շարահյուսական կապը զգացվում է, և նրանք իմաստային ամբողջականություն ստանալով հանդերձ, դեռևս ունեն հարադրի գործածություն (հմմտ. գիշեր-ցերեկ, լուս ու մուկ, եփել-թափել, զլիկ ընկնել, լաց լինել, գուրս գալ, բաց անել և այլն):

Հարադրական բարդության բազադրիչները ունեն առանձին բառակազմ շեշտ՝ և իրարից բաժանվում են արտասանական դասարկով:

Հարադրական բարդությունների, մանավանդ բայական հարադրությունների հարստությամբ ու ճշտությամբ հայերենը կարող է մրցել ամենազարգացած բառաբարդություն ունեցող լեզուների (գերմաներենի, հունարենի, պարսկերենի) հետ:

§ 346. Համադրական բարդությունները ունեն մեկ ընդհանուր բառային իմաստ, մեկ բառային շեշտ և բազադրիչները ձևային անկախություն չունեն:

§ 347. Հարադրական բարդությունների մեծ մասը հակվում է միավորվելու, համադրական բարդության վերածվելու և առավել սերտ բառային իմաստ արտահայտելու: Այսպիսի բարդությունները կազմում են կցական բազադրություններ (հմմտ. սուն ու տեղ-սունուտեղ, անց ու գարձ-անցուտարձ, կեր ու խում — կերուխում, առ և սոր — սունտոր և այլն): Իհարկե, կցական բարդություններ կարող են գոյանալ նաև ոչ անմիջաբար հարադրական բարդություններից, այսինքն առանց միջնորդական աստիճանի, այլ ուղղակի դանդաղ բառակապակցություններից (հմմտ. այս օր-այսօր, կես օր—կեսօր, կեղծ անուն—կեղծանուն և այլն):

9 Բացի հարադրական բայերից, որոնք ունեն մեկ ուժեղ և մեկ թույլ շեշտ (հմմտ. գուրս գալ, լաց լինել):

կցական բարդությունները, ի տարբերություն հարադրական բարդությունների, ունեն բառային մեկ շեշտ (այդպես են նաև եսական բարդությունները), այսինքն արտասանական միավորվածություն։ Ինչպես՝ այսօր, տանտիկին, կիզմանում, կեռվիսում, առևտուր և այլն։ կցական բարդությունները թեև բառային մեկ ընդհանուր իմաստ են արտահայտում, սակայն զգացվում են երկու բաղադրիչների իմաստները. այդ է պատճառը, որ հիշյալ բարդությունները կարելի է քանդել կամ անջատել միմյանցից, և նրանք հարադիր գործածությամբ վերստին կատանան իրենց շարահյուսական կապակցության իմաստը։

§ 348. Այս իմաստով պատկերը բոլորովին այլ է իսկական բարդություններում, որոնց բաղադրիչների շարահյուսական կապակցության իմաստը հիմնականում միազնւած է, և բարդության բաղադրիչների անջատումից կապակցությունը իմաստազրկվում է։ Այստեղ բարդության բառային իմաստը բաղադրիչների ստեղծական զուտարը չէ, հետևաբար այս բարդությունները իմաստապես ավելի սերտ են, քան նախորդ տեսի բարդությունները և կոչվում են իսկական¹⁰։

Իսկական բարդությունների առաջնում են և՛ շարահյուսական կապակցություններից կամ դրանցից առաջացած կցական բարդություններից (հմտ. պարզերես, քայքայկատ) և՛ լիզվի մեջ գոյություն ունեցող բարդ բաների կապակցություններ նմանակությունում։

Իսկական բարդությունները իմաստով ավելի սերտանում և շաղկապվում են հոդակապի և ածանցման միջոցով, որ հիմնականում հաստով է իսկական բարդությունների։

§ 349. Հիշյալ յուրաքանչյուր տեսի բարդության ներսում էլ բաղադրիչ անդամների փոխնարբերությունները միմյանց և բարդության նկատմամբ տարբեր են և այստեղ էլ գոյություն ունեն տարբեր աստիճանավորումներ. այսպես՝ նրանք կարող են ա) հասարակական հարաբերություն արտահայտել, երբ բարդության բաղադրիչները համադրոք են և համադրա. օրինակ՝ լուսուումունչ, կարիլ առ կարիլ, լացուկոծ և այլն, բ) ստորագրասական հարաբերություն արտահայտել, երբ անդամներից մեկը (գիրպզան-

ցապես առաջինը) լրացնող դեր է կատարում և ստորադասվում է մյուսին. ինչպես՝ լուգրավանա (լրագիր վաճառող), գրանդան (դրելու սեղան), բաց անել, լաց լինել, դուրս գալ, երես տալ և այլն։ Սակայն այս աստիճանավորումները կրննվեն բարդության առանձին տեսի վերլուծության հետ կապված։

§ 350. Հարադրական և կցական բարդությունները ունեն հետևյալ ընդհանրությունները. ա) առաջացել են շարահյուսական կապակցություններից և բաղադրիչները բառային միավորներ են, բ) բաղադրիչների շարահյուսական կապը ձևարանորեն դրսևորված է և գ) արտահայտում են գերազանցապես մեկ շարահյուսական հարաբերություն։

§ 351. Առավել շատ ընդհանրություններ ունեն համադրական տեսի բարդությունները (կցական, իսկական). թիչ չեն այն բարդությունները, որոնք արտահայտած շարահյուսական հարաբերությունը պարզելուց և կապակցությունը որոշելուց հետո է միայն հնարավոր տեղադրել կցական կամ իսկական ենթատեսակների մեջ։

Իսկական և կցական բարդությունների աստիճանագիծը կրթման դժվար է ճշգրտորեն որոշել այն պատճառով, որ ձևային կողմով երկուսն էլ լեզվական համադրական կառույցներ են և իմաստային կողմով էլ ունեն մի շարք ընդհանրություններ։ Այսպես՝ բարդության բաղադրիչների հոդակապով միացումը, հեյունահիտությունը և ածանցումը բերող է հիմնականում իսկական բարդություններին, ինչպես՝ մեծահոգի, գիտածաղով, ըրկիր, տոնես, մեծամառլուն, հերբալիսային և այլն, սակայն նման երևույթներ մասնակիորեն դրսևորվում են նաև կցական բարդություններում (հմտ. մզկուտը, կակիծ, ցանցնել, մեծամեծ, ծամմեղ, շալաշաք, Կացքամաքուր, առաջխաղացում, առաջբացում, ափհանում, բացթողում, լույսընծայում, միջինասիական¹¹, մանրործուական, կրակամարիչ, սպիտակվարդիկական և այլն)։ Բացի այդ, համախոս իսկական բարդության բաղադրիչները կազմված են լիսնում երկու ամբողջական բառերից, առանց վերոհիշյալ տարբե-

¹⁰ Այս տերմինը թերևս այնքան էլ հարցը չէ և այն պահել ենք բարդության ենթատեսակների ավանդական սովորույթները լիարտելու համար։

¹¹ Մի շարք կցական բարդություններ (հասակապես որոշիչ-որոշյալի կապակցության հիմքով առաջացածները) իրի այդպիսիք ձևավորում են Երկրոսդ բաղադրիչ ածանցավոր լինելու դեպքում։

բարկի հասկանիչների և արտաքնակա թիչ են տարրերվում կցական բարդություններից, այդպիսին են հատկապես որոշիչ-որոշչայի կապակցության հիմքով առաջացած բարդությունները. հմտ. վատառողջ, մեծամուն, ողջերբ, փոհեզգի, ֆարսիքա, լայնկիկառ, յութեռև և այլն:

Նման և վերահիշյալ անանջամոր (հմտ. միջինասիական, առաջբաշում և այլն) բաղադրություններում բարդության ճանաչման հիմնական գործոնը բաղադրիչների իմաստներից զուրս նոր իմաստի արտահայտումն է, որ հատուկ է հիմնականում իսկական բարդություններին¹². այսպես՝ վատառողջ նշանակում է վատ առողջություն ունեցող, մեծամուն՝ մեծ անուն ունեցող, ֆարսիքա՝ ֆար սիրա ունեցող և այլն:

Այս տարրերակիչ հասկանիչը էական է նաև այնպիսի բարդություններում, երբ մեկնակի կազապարով և անփոփոխ (չհնչյունափոխված, չաժանցված և առանց հոգակապի) ձևով հանդես են գալիս և՛ կցական, և՛ իսկական բարդություններ. ինչպես՝ փակուռի, մայուռի և անցուռի, ծառուռի, բետոնուռի, բռիչֆուռի, երբուռի և այլն: Նման բառերում բարդության տեսակը որոշվում է միայն բարդությունը քանդելիս և նրա շարահյուսական իմաստը վերականգնելիս: Առաջինները կցական բարդություններ են, առաջացել են որոշիչ-որոշչայի կապակցության հիմքով և հիշյալ կապակցության իմաստը պարզեցնում են և՛ բարդության մեջ, և՛ բարդությունը տրտեհելիս վերջինները իսկական բարդություններ են, քանի որ շարահյուսական կապակցության իմաստ ստանում են միայն բարդության մեջ: Այսպես՝ ծառուռի նշանակում է ծառերի ուղի, բռիչֆուռի՝ թռիչքի ուղի, բետոնուռի՝ բետոնի ուղի և այլն: Մյուսը շարահյուսական հարաբերություն կարող են արտահայտում միայն խոսողի գիտակցության մեջ, մտովի՝ առաջին բաղադրիչն կամ լրացնող զոյականին ավելացնելով ի կամ և վերջավորություն-

¹² Նոր իմաստ են արտահայտում նաև հարադրական բարդություններից շատերը (մասնավորապես բառմտաբխ փոփոխության կրածները (հմտ. Հարադրական բաշերի մեծ մասը, բաղնջուսական և կրկնադր հարադրությունների մի մասը). ինչպես՝ գլխի բնիկն (հասկանալ), ալք ծակիլ, սիրտ տալ (միջբարեի, հասարակ), էլ ու մտա, առ և սառ, կիլի-բափիլ, կիմար-կիմար (հիմարար) և այլն, սակայն այստեղ բարդությունների անսակերթ չեն կարող չլինիլ: քանի որ հարադրական բարդությունները ձևային անկախություն ունեն և միաձուլ բոսային միավորներ չեն:

ները, առանց որոնց, կապակցության անդամները առանձին գործածությունամբ լրացում-լրացչայի հարաբերություն չեն արտահայտում: Այդ նշանակում է, որ բարդության տեսակի որոշման (իսկական կամ կցական) գործում մեծ նշանակություն ունի բաղադրիչների անջատումից առաջացած իմաստների գիտակցումը: Հաշիբենում բարդության մեջ են մտնում մեծ թվով բառախմբեր, այսպես՝ անունները անունների հետ, անունները բայերի հետ, բայերը բայերի հետ և այլն:

§ 352. Հարադրական և կցական բարդությունները կազմված են հիմնականում մեկից ավելի բառերից, իսկ իսկական բարդությունները՝ և՛ մեկից ավելի հիմնական ձևալիքներից, և՛ բառերից ու բայախմբերից, որի հետևանքով էլ, թերևս առաջին տիպի բարդություններում շարահյուսական կապը կայուն է և զգացվում է, իսկ երկրորդ տիպի բարդություններում քաջահայտվում է միայն յուրաքանչյուր բարդության ներսում, նրա առանձին վերլուծությանը և որոշ վերացություն կատարելով:

§ 353. Հարադրական և կցական բարդությունները արտահայտում են պեղազանցապես մեկ շարահյուսական հարաբերություն, իսկ իսկականները (նրանց մի մասը) կարող են արտահայտել նաև երկու և ավելի հարաբերություն:

Այսպիսով՝ ելնելով վերահիշյալից, բարդության տեսակները կարելի է բնորոշել այսպես՝

1. Հարադրական են այն բարդությունները, երբ երկու կամ ավելի բառեր առանց միաձուլվելու (աճառ կամ գծիկով) արտահայտում են մեկ բնօրհանուր բառային իմաստ, որի մեջ բաղադրիչներ կամ լրիվ կերպով պահպանում են իրենց բառային իմաստները, կամ ստանում բոլորովին այլ, դարձվածային կամ փոխաբերական իմաստ:

2. Համարական են այն բարդությունները, երբ երկու և ավելի բառեր կամ ձևույրներ միասնաբար արտահայտում են մեկ բնօրհանուր բառային իմաստ, ունեն մեկ բառային շեշտ և բաղադրիչները ձևային անկախություն չունեն (զգվում են միացած):

Ա. Այն համարական բարդությունները, որոնք բաղկացած են երկու և ավելի բառերի կապակցություններից, որոնց շարահյուսական հարաբերությունը ձևաբանորեն դրսևորված է և անջատելիս կապակցությունը վերականգնվում է, կոչվում են կցական բարդություններ:

Ք. Սրկու կամ ավելի հիմնական ձևույթներից կամ բառերից բաղադրված այն համարական բարդությունները, որոնց շարահյուսական հարաբերությունը ձևաբանորեն դրսևորված չէ, երկվան է զավիս միայն բարդության մեջ, և բարդությունը քանդելիս կապակցությունը իմաստազրկվում է, կտրվում են իսկական բարդությունները:

1 ՀԱՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒՄՆԵՐԻ ՔՅՈՒՄՆԵՐԸ

§ 354. Հարադրական բարդությունները բարդության առավել պարզ տեսակ են: Այստեղ բարդության բաղադրիչները թեև ձևովային տեսակետից անկախ, առանձին դիրք են զբաղում, ունենալով անանձին բառական շեղու և արտասանելով են զարգրով, սակայն իմաստային տեսակետից անկախ չեն և արտահայտում են բառային մեկ ընդհանուր իմաստ: Կարևորը այստեղ բաղադրիչներին իմաստային միասնությունն է, բառական մեկ ամբողջական, ընդհանրական իմաստ արտահայտելը, որի շնորհիվ և նրանք դասվում են բարդ բառերի շարքը: Սակայն բառային մեկ ընդհանուր իմաստը ևս բոլոր տեսակի հարադրական բարդություններում միասնակ չի դրսևորվում: Այսպես՝ նրանցից շատերը բարդության իմաստի մեջ պահպանում են նաև անկախ բաղադրիչների բառային իմաստները. ինչպես՝ ժամ առ ժամ, էջ առ էջ, ուշ-ուշ, կամաց-կամաց, հուշահամե-կորթը և այլն, մինչդեռ շատերը զրկվում են առանձին բաղադրիչների բառային իմաստներից և միայն վերցրած արտահայտում նոր բառային իմաստ: Այսպիսին է հարադրական բայերի մեծ մասը. ինչպես՝ աչքով տալ, աչք մտնել, սիրտ աճել, սիրտ տալ, սիրտ առնել, երես տալ, երես առնել, ձեռք բերել և այլն: Սրանք գերազանցապես փոխարեքական իմաստ ունեն և ձևոր են բերել զարգրվածությանն արժեքը:

Այսպիսով, հարադրությունների համար բնորոշ է բաղադրիչների ձևական անկախությունը և դրանց իմաստների ընդհանրական, ամբողջական լինելը:

Հարադրական բարդություններ կարող են ստացանալ տարբեր բառակապակցություններից՝ լրացում-լրացյալից, համադաս բառերից, միևնույն բառի կրկնությունից և այլն:

§ 355. Ըստ բաղադրիչների խոսքի մասային պատկանելու-

ության, հարադրական բարդությունները լինում են հիմնականում անվանական և բայական:

Հարադրական բարդություններ են կազմվում նաև մակբայնեբով, ձայնաբկություններով, բնածայնական և եղանակավորող բառերով ու բայաձևերով, սակայն սրանք հիմնականում կրկնավոր հարադրական բարդություններ են և հարադրական բարդությունների մեջ բնդհանուր առմամբ մեծ տեղ չեն զբաղում:

1. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԳՐՈՒՄՆԵՐԸ

§ 356. Անվանական հարադրություններ առաջանում են անվանական կապակցություններից: Սրանք գերազանցապես անուններով (զոյական, անվան, թվական և դերանուն) կազմված բարդություններ են: Անվանական հարադրությունները թեև քանակական սխեմայով են բայական հարադրություններին (չհաշված կրկնավոր հարադրիչները), սակայն այստեղ էլ աչքի է ընկնում հայերեն բառակազմության զարմանալի ճկունությունը. այսպես՝ հարադրվում են հայերենի բոլոր անվանական խոսքի մասերը. ինչպես՝ զոյականը զոյականի և մյուս անունների, անվանը անվանի և մյուս անունների, թվականը թվականի և մյուս անունների հետ և այլն:

Ըստ բաղադրիչների՝ միմյանց և բարդության ընդհանուր իմաստի նկատմամբ ունեցած հարաբերության, անվանական հարադրական բարդությունները լինում են համադասական և ստորադասական:

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԳՐՈՒՄՆԵՐԸ

§ 357. Համադասական են այն անվանական հարադրությունները, որոնք բաղադրիչները, միմյանց և բարդության ընդհանուր իմաստի նկատմամբ հավասար փոխհարաբերության մեջ են զրուներվում և հավասարապես են մասնակցում բարդության իմաստի ձևավորմանը:

Համադասական հարաբերություն ունեցող հարադրությունները լինում են՝ ա) կրկնավոր, բ) բաղահյուսական, գ) նոր տիպի:

Ա) Կրկնավոր հարադրություններ

§ 358. Կրկնավոր հարադրությունները առենապարզ և հնագույն բարդություններ են:

Մանր. — Կրկնավոր բարդությունների ճանաչման հարցում հայ բերականդետություն մեջ եղել է երկու տեսակետ: Ոմանք այն (անիսկական և բաղճյունական հարադրությունները) դիտում են իբրև անիսկական բարդության առանձին տեսակ¹, իսկ ոմանք էլ՝ հարադրական բարդության մի առանձին տեսակ², Կրկնավոր հարադրությունները հարադրական բարդության տեսակ են, և թեև միացած են զծիկով, սակայն հիմնականում ունեն ձևային անկախություն, առանձին բառական շշուտ, այլև արտասահական զարգար:

Կրկնավոր հարադրություններ մեր լեզվի զարգացման նախասովորական փուլում, ինչպես և սովորական շրջանի առաջին տասնամյակներում, առաջին գործածական էին բարբառներում, և գեղարվեստական լեզվում գործածվում էին վերջինիս ժողովրդագիտակցական երանգ հարդարելու համար. ինչպես՝ պղպղպաղ, ծուփ-ծուփ (ՊՊՊ-պղպղ ջրեր պապակ շուրթս չի բացվի, մուփ-ծուփ ծաղկունք, լացող աչքս չի բացվի, Թս.), ալվալ-ալվալան, հանգուր-հանգուր, մուշ-մուշ (ն. տ.), մուրիկ-մուրիկ «նու ման կուզա միայար, Մուրիկ-Մուրիկ եղնիկին», ն. տ.) և այլն: Կրկնավոր հարադրությունների գործածությունը խիստ կենսունակացել է հայերենի զարգացման նախադաս վերջին տասնամյակներում և բնորոշ է արդեն հայերենի ոչ միայն ժողովրդագիտակցական, այլև գրական և գեղարվեստական լեզվին. ինչպես. ծայր-ծայ, զանգակ-զանգակ, հարուն-հարուն («Շնձվորի երգ էր փռված, հույունք-հույունք եր, զանգակ-զանգակ, Վե, Գիրք լինելության), ծվեն-ծվեն (ն. տ.), թեյ-թեյ, դեզ-դեզ (ն. տ.), հազար-հազար, փաթիլ-փաթիլ, ողջ-ողջ (Անդրուզք ուզում էր ողջ-ողջ կյանել) (ԹՎ, Մարիկներս մնացին հեռվում), ծիլ-ծիլ, խուճ-խուճ, մեկ-մեկ, նորից-նոր («Մեռելուց առաջ կուզեի շրջել Լացիս, ձիծաղիս վայրեր մեկ-մեկ... Եվ մոճերի պես նորից-նոր վտակ իմ ժողովրդի հույսերը մեկ-մեկ», ՀՀ, ԳԹ):

Քառակարգման քայլեր (ն հարադրական, և կցական) մեր լեզվում արտահայտվում են խիստ հարուստ և բազմազան ձևերով:

§ 359. Կրկնավոր հարադրությունները արտահայտում են կրկնվող բառերի կամ արմատների իմաստների աստիճանում, հոգ-

նակություն, բազադրիչների առանձին իմաստների բնորոշում և այլն:

Կրկնավոր հարադրությունները միմյանցից անջատվում են զծիկով:

§ 360. Հարադրական կրկնավորներ են կազմվում հայերենի զրնթև թուր խոսքի մասերի կրկնությամբ. այսպես՝

ա) Գոյակաճենքի կրկնությամբ մեծ մասամբ կազմվում են հոգնակիության իմաստ պարունակող ածական ածունեք և մակբայներ. ինչպես՝ խումբ-խումբ հավաքել (մակբայ), հատված-հատված տանել («նու հատված-հատված տանում է իրեն վերքերն անհամար, Հայոց լեռներում, սուգի լեռներում, ՀԹ, Հայոց վիշտը), հիվանդ-հիվանդ գնալ (մակբայ), գույն-գույն ֆաբեր (ածական), ուլունք-ուլունք շարվել (մակբայ), կտոր-կտոր, կարի-կարիլ, գունդ-գունդ, ծալ-ծալ, տեսակ-տեսակ, բերք-բերք («Գրեցք թերք-բերք արժաք», Վե, Գիրք լինելության), դեզ-դեզ, աղ-տեղ, թիլ-թիլ («Ծվ թեյ-թեյ հյուսվում է նոր գլուխ պատմությունը», ՍՀ) և այլն:

Կրկնավորների խոսքի մասային իմաստների կոնկրետացումը տեղի է ունենում հիմնականում խոսքի մեջ:

§ 361. Գոյակաճենքի կրկնությամբ և առ նախորդով, ինչպես և կրկնվող բազադրիչներից մեկի (զերադանցապես առաջինի) հյուսված ձևով (հիմնականում բացասական և ներգոյական հոլովակներով) նույնպես կազմվում են բավական թվով կրկնավորներ, որոնք ունեն մակբայական արժեք. ինչպես՝ գունդ ևս գունդ, գույն ևս գույն, ժամ ևս ժամ, ժամանակ ևս ժամանակ, բոզե ևս բոզե, ձայն ևս ձայն, հեշտ ևս հեշտ, խեցի ևս խեցի («Ձայն ևս ձայն, հեշտ ևս հեշտ, խեցի ևս խեցի կուտարս ժողովում էր հայ երգի փշրված սպիրտը, հեն), մասունք ևս մասունք, մեկ ևս մեկ, գյուղից-գյուղ, շենից-շեն, ֆազիլից-ֆազիլ, հեռու-հեռվում, հեռու-հեռվից, ձևովից-ձևով, փողոցից-փողոց և այլն:

Գոյակաճենքով կազմված բավական թվով կրկնավոր հարադրություններ կան նաև կրկնվող բազադրիչների արական հոլովակներով (-ի վերջավորությամբ), որոնք զերադանցապես մակբայական կիրառություն ունեն. ինչպես՝ գլուխ-գլխի, թե-թեի, կղզի-կղզի, լանջ-լանջի, նակառ-նակառի, օր-օրի, ուս-ուսի, մեղ-մեղի և այլն:

1 Տե՛ս Գ. Անի, Ժամանակակից Հայոց լեզվի դարձրթաց, 1955, էջ 189:
 2 Մ. Արվյան, Ելված աշու, էջ 174: Ն. Աբրահամյան, Բայր Ժամանակակից հայերենում, էջ 137:
 260

Բ ա ա ա կ ա գ մ ա ռ յ ա Ն

բ) Ածականների կրկնությամբ կազմվում են սաստկական նշանակությամբ ածականներ և մակբայներ. *ինչպես՝ դաղը-դաղը, խոշոր-խոշոր, ծանր-ծանր, կծու-կծու, կուտակ-կուտակ (սեռաբանական բնույթ էլ այսպես կուտակ-կուտակ էր, ԳՔ), մախուր-մախուր, մեծ-մեծ, շատ-շատ, շեկ-շեկ, շոր-շոր, պաղ-պաղ, պարզ-պարզ, սև-սև, տախ-տախ և այլն:*

Ընդ որում միևնույն կրկնավորը հաճախ կարող է ունենալ և՛ ածականի, և՛ մտերայի խոսքի մասային արժեք. *ինչպես՝ մեծ-մեծ աչքեր, մեծ-մեծ խոսել, պաղ-պաղ ջրեր, պաղ-պաղ ոտել, տախ-տախ խոսել, տախ-տախ հաց և այլն:*

Ածականների կրկնությամբ կազմված կրկնավորների մեջ գերակշռում է մակբայական խոսքի մասային իմաստը, իսկ ածականների մեծ մասն էլ զբոսածվում է հոգնակի գոյական որոշյալների հետ և կրկնությամբ արտահայտում սաստկական իմաստ. *ինչպես՝ սև-սև աչքեր, բուխ-բուխ մազեր, պաղ-պաղ ջրեր և այլն:*

գ) Թվականների կրկնությամբ կազմվում են բաշխական թվականներ. *ինչպես՝ հինգ-հինգ, տասը-տասը, երկու-երկու, մեկ-մեկ՝, երեկ-երեկ, շուր-շուր, հազար-հազար և այլն:*

Թվականների կրկնությամբ կազմված կրկնություններ կարելի է կազմել գրեթե բոլոր պարզ թվականներից:

դ) Գերանունների կրկնությամբ կազմված կրկնավոր բարդությունները համեմատաբար ավելի քիչ են, քան թվականներով կազմված կրկնավորները. գերանուններով կրկնավոր բարդությունների կազմվում են առավելապես ցուցանական, հարաբերական և որոշյալ գերանուններից և արտահայտում են բազմակիության ու մասամբ մակբայակերտ իմաստ. *այսպես՝ ամենը-ամենը (հեղձ այդ ամենը-ամենը տեսնում էր Մոզոմսը), ԲՎ, Մաղիկներս մնացին հետում), այսան-այսան, այս-այս, այսինչ-այսինչ, բոլոր-բոլոր (սեխիկումս գարուն էր, ես խելահեղորեն թուփվել էր բոլոր-բոլորի և ամեն-ամենի վրա, Ն. տ.), Բանի-Բանի, Իրեն-Իրեն, Ուրան-Ուրան և այլն:*

Հարցական-հարաբերական գերանունների կրկնությամբ կազմված բառերը մի քանի կազմություններում ունենում են նաև ոչ

բազմակիության, այլ իմաստային նոր երանգ. *այսպես՝ ով-ով (Ով-ով, ես չէր կարող այդպես վարվել), ինչ-ինչ (Ինչ-ինչ պատճառներով նա չուզեց ներկայանալ) և այլն:*

Գերանունների կրկնությամբ հարաբերական բարդությունները կազմվում են նաև ու և և շաղկապներով և արտահայտում մասամբ բազմակիության, մասամբ էլ մակբայակերտ իմաստ. *օրինակ՝ ինչ ու ինչ, Բեզ ու Բեզ, ինն ու ինն, ով ու ով և այլն:*

ե) Մակբայների կրկնությամբ կազմված կրկնությունները (և կենսանուն կեն հայերենում և արտահայտում են հատկանշային իմաստների սաստկացում. *ինչպես՝ արագ-արագ, ուշ-ուշ, շուտ-շուտ, Բիշ-Բիշ, մերք-մերք, երբեմն-երբեմն, հազրիվ-հազրիվ, ստեղ-ստեղ և այլն:*

Ածանցներիով (մակբայակերտ) կազմված մակբայներից ստորաբար կրկնավոր հարադրություններ չեն կազմվում. *հայերենի համար անսովոր են հայրաբար-հայրաբար, խիզախորեն-խիզախորեն, առանձնապես-առանձնապես և այլն:*

Կրկնավոր հարադրություններ չեն կազմվում նաև կապերից ու շաղկապներից:

§ 362. Այն շաղկապը և նա մասնիկը՝ միացնող բաղադրիչի գեր կատարում մի շարք կրկնավոր հարադրություններում. *օրինակ՝ շատ ու շատ, լի ու լի, զեմ ու զեմ, բրդիկ հա՛ բրդիկ, Բրտ հա՛ Բրտ, գեմ հա՛ գեմ, բեր հա՛ բեր, Բաշի հա՛ Բաշի, նստի հա՛ նստի, կեր հա՛ կեր, տուր հա՛ տուր (սէն օրն էկան թռչչի արին, հարկ են ուզում տուր հա՛ տուր, ՀՔ) և այլն, որոնք մեծ մասամբ արտահայտում են սաստկական երանգ:*

Մանր.— Մակբայներով, բնանշանական և եղանակավորող բառերով ու առանձին բառակերպով կազմված կրկնավորները, որ աննշան մաս են կազմում հարաբերական կրկնավոր բարդությունների մեջ, անվանական կարգին չեն պատկանում, և այստեղ անվանական հեռադրություններ ընդհանուր անվանույթ պայմանական է:

* Մրանով միացող կրկնավորները մեծ մասամբ բնանշանական բառեր կամ ստույնի բառակերպ են:

3 Մեկ-մեկ կրկնավորը ստացել է նաև երեկն մակբայի իմաստը:

Հ ն յ լ ո ո յ ն ա փ ո թ ի փ ա ծ կ ր կ ն ա վ ժ ո Ր Ն Ե ր

§ 363. Կրկնավոր հարադրությունների բաղադրիչները հասնախ հանդես են գալիս հնչյունափոխված ձևով: Հնչյունափոխությունը լինում է բաղադրիչներից մեկի բաղաձայնի կամ ձայնավորի փոփոխությունը, իսկ նրանք էլ դրանց սղումով: Կրկնավոր հարադրության բաղադրիչները հնչյունափոխված կազմված բարդությունները բնորոշ են հասնախ ժողովրդախոսակցական լեզվին և բազմազան ու հարուստ ձևերով են հանդես գալիս ներանում: Կրկնավոր բարդության բաղադրիչների հնչյունափոխության շնորհիվ սովելի բնույթնափոխված բաղադրիչը բառական իմաստը, այն արտահայտում է իրեն նման և մտայն առարկաներ ու հատկանիշներ (ստացվում է կրկնվող բառի իմաստի ծավալային ընդլայնում):

Հնչյունափոխված կրկնավորները լինում են հիմնականում առաջին բաղադրիչների առերբայններով: Կրկնավորների հնչյունափոխությունը լինում է հետևյալ բնույթի:

ա) Կրկնավոր հարադրության առաջին բաղադրիչի սկզբի բաղաձայնը կրկնվող բաղադրիչում փոխվում է այլ բաղաձայնի (առավելապես մ-ի). ինչպես՝ բարակ-մարակ, գլուխ-մլուխ, պղտոր-մլտոր (ե՛րբուր-մլտոր բառիկն սասվ), Պղտոր-մլտոր ջրիկն սասվ», ՀԹ), զիզի-պիզի, քաց-մաց, քեիլի-մեիլի, թոխ-մոխ, լարի-վարի, խուր-մուր, խուեղիլ-մուեղիլ, ծուխ-մուխ, ծուխիլ-մուխիլ, կլոր-մլոր, հաց-մաց, դրի-րի, շեկիլի-մեկիլի, շիր-միր, պակաս-մակաս, ցավ-մավ, վաչլուն-մալլուն և այլն:

բ) Կրկնավոր հարադրության կրկնվող բաղադրիչի սկզբում սովելանում է բաղաձայն. ինչպես՝ առակ-զառակ, աման-չաման, ամբաղ-զամբաղ, աղհատ-մաղհատ, ոլոր-մոլոր և այլն:

գ) Առաջին բաղադրիչի սկզբի բաղաձայնը դուրս է բերվում. ինչպես՝ ալլուն-փալլուն, առոխ-փառոխ, պակն-բալակն և այլն:

դ) Երկրորդ բաղադրիչի մեջ փոխվում է առաջին բաղադրիչի ձայնավորը. ինչպես՝ բախ-բուխ, լախտ-լուխտ, ծակ-ծուկ, ձնն-ձուն, մաղ-մուղ, մանր-մունր, փալաս-փուլաս, վաշ-վիշ և այլն:

§ 364. Ածականներով կազմված կրկնավորների մեջ կրկնված կրկնվում է առաջին վանկը, ըստ որում փակ վանկի վերջին բաղաձայնը փոխվում է փ-ի կամ ա-ի, իսկ եթե բաց վանկ է՝ վերածվում է փակ վանկի: Այս կարգավորումով ուժեղանում է ածականի հարակա-

նչային իմաստը. այսպես՝ դափ-դառափ, լեփ-լեցուն, ենի-ենեմակ, շիփ-շիտակ, կաս-կարմիր, սեփ-սե, նոփ-նոր (սեկյ նով-նոր ֆլուրեններ շատ կարծմանան՝ բնկնկնով անձանոթ տերերի մոտ», ԱՀ. Դյունա, Ան կակաշ) և այլն:

§ 365. Հնչյունափոխված կրկնավոր հարադրությունների մեծ մասի, հատկապես միավանկ բաղադրիչներով կրկնավոր բարդությունների, բաղադրիչները կարող են միանալ նաև ու շարժվողով, ինչպես՝ ծակ ու ծուկ, ծուխ ու մուխ, հաց ու մաց, հունև ու բունև, տեղ ու մեղ, էք ու միք, շիր ու միր և այլն, որոնք արտահայտում են հավաքական, ընդհանրական իմաստ:

Ք) Բաղնչուական հարադրություններ

§ 366. Հարադրության այս տեսակի մեջ մտնում են այն բաները, որոնք կազմված են համանիշ, մոտ և նման հակացությունների, ինչպես նաև իրար իմաստով հակադիր, սակայն իրականության մեջ իրար հարցողը երևույթների կամ գործողությունների արտահայտող բաներով: Բաղնչուական հարադրության երկու բաղադրիչներն էլ ունեն առանձին բառական շեշտ:

Ըստ կապակցման ձևի, բաղնչուական հարադրությունները լինում են շարկապավոր և անշարկապ:

1. Ե ա ղ կ ա պ ա վ ժ ո Ր Բ ա ղ Տ յ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Հ ա Բ ա Ղ ր Ո Ւ Բ յ Ո Ւ Ն Ե ր

§ 367. Եաղկապավոր բաղնչուական հարադրությունների բաղադրիչները իմաստապես կապվում և մերձենում են ու, և շարկապենրով: Այսպես՝ ախ ու իրզ, ախ ու սարափ, ախ ու վախ, ախ ու վանտ, աչ ու ձախ, ամպ ու զամպ, բառ ու բան, զիլ ու դար (սեղորյուններից գիշեր ու զոր խառքի բեմված իրար հետ, վերստաներից զիլ ու զոր Արբեշունի փեշերեղ, Իս.), դառ ու դատաստան, դաղ ու ցավ, դեղ ու դարման, եղ ու տաղ, զարզ ու զարգաբան, գառ ու լալ, ժամ ու ծամանակ, ժամ ու պատարագ, լաց ու կոծ, լառ ու մուեշ, խաղ ու պար, խաղ ու խալտատակ, խոտ ու բույս, խիլ ու միտ, խիզ ու խղճմտան, ծաղ ու ծանակ, կարգ ու կանոն, կյանք ու արև, հաստ ու կենտ, հոգ ու ցավ, ձայն ու ծպտուն, նազ ու տուզ, նետ ու աղեղ, շենև ու շնորհ, ուզ ու

առաջ, չոր ու ցամաք, չուլ ու փայտ, ջանք ու եռանդ, շարժ ու փշուր, վար ու ցանք, առն ու տեղ, ցափ ու ցրիվ, ցիր ու ցան, ուտ ու կեռով, ուզն ու ձուձը, բար ու ապագամ, բար ու հող, բաց ու խուփ, ետ ու առաջ, էլ ու մտտ, լավ ու վատ, բաց ու չոր, մեծ ու վաճ, օր ու գիշեր և այլն:

§ 368. Վերոբերյալ բազմությունական շարժկապավոր հարադրությունների մեծագույն մասը գործածվում է կ' հարադրական, կ' համադրական (կցական) եղանակով: Առհասարակ սեփականական հարադրությունների մեջ ամենից շատ կցական բարդությունն զին-րածվելու հակված են բազմությունական հարադրությունները. ինչպես՝ ան ու դող և անույզող, այն ու վախ և անխովախ, աղ ու հաց և աղունաց, առ ու ծախ (ս' Գյուղացիության ճորտացված լինելու ապացույցն են նրանց առ ու ծախի հիշատակումները), Ավ.) և առումայն, բառ ու բան և բառուբան, դաբղ ու ցավ և դարդուցավ, լուռ ու մունջ և լուռումունջ, լաց ու կոծ և լացուկոծ, խաղ ու պար և խաղուպար, կարգ ու կանոն և կարգուկանոն, հող ու շուր (ս' Մինեուչն հող ու շրի ծնունդ են), Ավ.) և հազուշուր, հատ ու կենա և հատուկենա, եաց ու առղ և եացուառղ, չոր ու ցամաք և չարուցամաք, շարժ ու փշուր և շարժուփշուր, վար ու ցանք և վարուցանք, առն ու տեղ և առնուտեղ, ցիր ու ցան և ցիրուցան, ուզն ու ձուձը և ուզեռունուձը, օր ու արև և օրուարև և այլն: Վերո-ծիրյալ բարդությունների հարադրական և կցական ձևով գործածությունը կախված է այն հանգամանքից, թե բառական շեշտը առանձին բաղադրիչների վրա ենք դնում, թե զրանցից վերջինի կամ ուզում ենք հաս-հատ ընդգծել երկու բաղադրիչների բառ-կան խմաստներն էլ, թե միացնել. այսպես՝ հատուկենա բարդու-թյունը, որ արդեն վերածվել է կցական բարդության, գործածվում է բառակազմական երկու եղանակով էլ (հարադրական և կցական). այն ս' Բրական թերթ-ի միևեուչն հողվածում հանդիպում է կ' հա-րադրական, կ' կցական եղանակով. այսպես՝ ս՛Նանդիպում են ընտանավարերից հատուկենա հետոցող մարդիկ (ԳԹ, 21, 2, 1969) և ս՛Կան, հատ ու կենա գոյություն ունեն դժբախտաբար (Ն. տ.): Հիշյալ հարադրություններից շատերը այժմ առավելապես գործածվում են կցական եղանակով, սակայն հարադրական եղա-նակը եւ գործածական է (պետք է նշել, որ այս հարցում բացար-ձակ սահմանադատում գոյություն չունի ծամանակախից հարդու-

նում): Սրանցից քչերն են միացն, որ գրվում են զուտ հարադրա-կան եղանակով. ինչպես՝ գիշեր ու գար, գաբղ ու գաբղուբանք, դատ ու դատաստան, ժամ ու ժամանակ, ժամ ու պատարագ, խելի ու միտի, խիզն ու խզնմասնի, ջանք ու եռանդ, բար ու ապագամ, բար ու կապաշտ և այլն, և բշերն են, որ գրվում են զուտ կցա-կան եղանակով, այսինքն՝ վերածվել են լրակատար կցական բար-դությունների և այլևս հարադրական եղանակով չեն գործածվում. ինչպես՝ եռուզեռ, երբեկեկ, էլեկէջ, առեռուր, ելումուտ, ջարդու-խուրջ և այլն:

Վերոհիշյալ բազմությունական հարադրություններից շատերը, վերածվելով կցական բարդության և իմաստապետ ավելի սերտա-նայով, ստացել են փոխաբերական իմաստ. ինչպես՝ առումայն, աղունաց, առեռուր, խաղուպար, կերտվում, բառուբան, օրուարև, եխտուկաց և այլն:

2. Ա ն շ ա ղ կ ա պ թ ա ղ Շ յ ո ս ա կ ա ն հ ա թ ա դր ու թ յ ո ն ն Ե ր

§ 369. Այսպիսի անփականական հարադրությունները մեծ մա-սամբ զուգական անուններով կազմված բարդություններ են. ինչ-պես՝ ակն-աղբյուր (սեկորրը լունն թուշունների վառ մեղեկին, Ակն-աղբյուր, Իս.), անրիվ-անհամար, այսօր-վաղը (ս՛Կարինը այսօր-վաղը օղակի մեջ կլինիս, Իվ, Մաղիկներս մնացին հեռ-վում), գիշեր-ցերեկ, ազմուկ-աղալալ, արար-ալխաբև, հարալ-հեց, արչուն-արցունք, բուփ-բաբան, դեղ-դարման, դուռ-դրացի, դեղ-զոռան, բարով-խեռով, բանկ-էժան (Գնել էր՝ ստանց թանկ-էժան հարցնելուս, Ծծ), լոխի-մեշիկ, ծառա-զործավոր, կոխիվ-կո-տորած, կանաչ-կարիճ, ամեն-շանել, շուփ-շվափ և այլն:

Վերոհիշյալ բարդություններում գծիկի փոխարեն կարելի է վերականգնել նաև շարժկապիչը (զերտաշանցապետ ու). ինչպես՝ ազմուկ ու աղալալ (ազմուկ և աղալալ), այսօր կամ վաղը, ան-րիվ ու անհամար, գիշեր ու ցերեկ, բանկ ու էժան (թանկ և էժան), արչուն ու արցունք, բուփ ու բաբան, դուռ ու դրացի, շուփ ու շվափ և այլն, սակայն առանց շարժկապիչների հիշյալ բարդություններն առավել կուտ ու ամբողջական են:

§ 370. Ըստ բաղադրիչների միմյանց նկատմամբ ունեցած իմաստալին փոխհարաբերության, բազմությունական հարադրու-

Յլունները (ինուս են՝ ա) համանիշ և մտտիկ իմաստ արտահայտող անուններով կազմված բաղճյուսական հարադրություններ և բ) հականիշ անուններով կազմված բաղճյուսական հարադրություններ:

ա) Համանիշ և մտտիկ իմաստներ արտահայտող անուններով կազմված բաղճյուսական հարադրություններ: Սրանք միմյանց և բարդության ընդհանուր իմաստի հանդեպ գտնվում են համադր հարաբերության մեջ և արտահայտում են սաստիկական, այլև հավաքական ամբողջության նշանակություն. ինչպես՝ ան ու ղող, ան ու սարսափ, այս ու վախ, դատ ու դատաստան, դարդ ու ցավ, դեղ ու դարման, երգ ու տաղ, ժամ ու պտտաբազ, լաց ու կոծ, լուս ու մուկ, խաղ ու պար, խոս ու գրայց, նազ ու սուզ, նետ ու աղեղ, չնեմ ու չեռեմ, հատ ու կենտ, տուն ու տեղ, ցիր ու ցան, ուժ ու կորով, բարով-խեղով, անբիվ-անհամար, բուխ-բարան, դեղի-գուռնա, դեղ-դարման, դատ-դրացի, լսիկ-մեջիկ, ծառագործավոր, շուխ-շվախ, քար ու ապառաժ և այլն:

բ) Հականիշ անուններով կազմված բաղճյուսական հարադրություններ: Սրանց բաղադրիչները բարդության նկատմամբ գտնվելով համադաս և համադր հարաբերության մեջ, միմյանց նկատմամբ հականիշ և հակադիր (բայց ոչ ստորագաս) հարաբերության մեջ են գտնվում: Այս հականիշ իմաստները սակայն իրականության մեջ այնքան կապված և շաղկապված են միմյանց հետ, որ հաճախ հաջորդում, լրացնում ու շարունակում են միմյանց. ինչպես՝ առ ու ծախ, առ ու վաճառ, առ ու սուտ, աչ և ծախ, սնց ու դարձ, բաց ու խտիկ, ետ ու ստաշ, էլ ու մուտ, բանիկ-էծան, անել-չանել, գիշեր-ցերեկ, այստ-վայր և այլն:

§ 371. Անվանական հարադրությունները հոլովվելիս և հոդ ստանալիս դիտվում են իբրև մեկ բառ, և փոխվում է միայն վերջին բաղադրիչը (հմտ. ա՛ ու դողի, տուն ու տեղի, զեար-գալը, զնալ-զալու և այլն), բացառությամբ անձի անուն արտահայտող անվանական հարադրիչների, որոնց առաջին բաղադրիչը առնում է միայն տրական հոլով և այս ձևով հոլովվում մինչև վերջ (հմտ. հայր ու որդի, հոր ու որդու, հոր ու որդու(ն), հոր ու որդուց և այլն)⁵:

5 ՏՃ ա Գ. Առաի, եղված այն, էր 165:

Գ) նոր տիպի համադասական հարադրություններ

§ 372. Վերոհիշյալ բոլոր հարադրական բարդություններն էլ, տարբեր կենսունակությամբ զործել են մեր լիզվի զարգացման տարբեր շրջաններում: Սակայն հայերենի սովետական շրջանի կիսգարյա զարգացման վերջին երկու-երեք տասնամյակներից առանձնացել է հարադրական բարդության մի նոր տեսակ: Այս նոր տեսակը տարբերվում է վերոհիշյալ անշաղկուպ անվանական հարադրություններից նրանով, որ նրան վերջիններին բաղադրիչները միասնաբար արտահայտում են մեկ ընդհանուր բառային իմաստ (հմտ. արար-աշխարհ=բոլորը, ամբողջը. կոիվ-կոտորած=պատերազմ. դուռ-գրացի=հարևան և այլն), այս սրունց իմաստակությամբ կազմված նոր տիպի բարդ բառերի ընդհանուր անուններում պահպանված են երկու բաղադրիչների իմաստներն էլ (հմտ. զրական-գեղարվեստական, զազափարական-գեղարվեստական և այլն):

Սրանք մեծ մասամբ հատկանշային իմաստ արտահայտող համադասական հարադրություններ են, որոնք ստեղծվել են երկու տարբեր հասկացություններ միասնաբար արտահայտելու պահանջով: Այստեղ երկու բաղադրիչներն էլ միմյանց և բարդության ընդհանուր իմաստի նկատմամբ գտնվում են համադասական հարաբերության մեջ: Այսպիսի բարդությունների բովանդակության պլանում հավասարական արտահայտված են երկու բաղադրիչների իմաստներն էլ, որոնք, սակայն, միացվում են և արտահայտում մեկ ամբողջական հատկանշային իմաստ:

§ 373. Այս տիպի համադաս անվանական հարադրություններում միավորվում են և՛ համանիշ կամ իրար հետ առնչվող, և՛ բոլորովին տարբեր հասկացություններ արտահայտող բառեր. ինչպես՝ արտադրական-նյութային, գրական-գեղարվեստական, զազափարական-գեղարվեստական, կրպուր-կենցաղային, կրպուր-սովորական, Մաբա-խեկնյան, նախագծային-կոնստրուկտորական, սովետա-բոլշևիկական, սովետա-ռուսիական, սովետա-իրանական, սովետա-չխոստովիկայան և այլն:

Հատկանշային իմաստ արտահայտող համադաս հարադրությունները նույնպես հակված են համադրական բարդությունների վերածվելու և դրանցից շատերը, մասնավորապես առաջին եզրում առվ վերջացողները, շաղկապավոր բաղճյուսական հարադրու-

Քյունների նման սեղծվելուց անմիջապես հետո գործածվում են համարքական ձևով, որով իմաստագետ ավելի են սերտանում և ձգտում արտահայտելու առավել ընդհանրական հատկանշային իմաստ. ինչպես՝ գիտախնորմացիոն, գիտաճեղատգրական, գիտատրեխտական, գիտատխնիքական, ժողովրդախոսակցական, ժողովրդատեսական, հուզաարտահայտչական, լեզվագրական, ֆիզիկամաթեմատիկական և այլն:

Մանր.— Այս բարդություններից շատերը մինչև Տերմինաբանական կոմիտեի 1976 թ. ապրիլի՝ գծիկի գործածության մասին որոշումը գրվում էին նաև գծիկով. ինչպես՝ հուզա-արտահայտչական և հուզաարտահայտչական, ժողովրդա-խոսակցական և ժողովրդախոսակցական, գիտա-արեխտական և գիտաարեխտական և այլն:

ՍՏՈՐԳՐԱՍՏՈՒՆ ԱՆՎԱՆԱՆՆԸ ՀԱՐԱԳՐԱԹՅՈՒՆՆԵՐ

§ 374. Սրանք նույնպես նոր տխլի հարագրական բարդություններ են և թևե դեռևս չեն արտացոլված բուճական ու զըպ-րոջական ձևերակներում, սակայն իբրև հարագրական բարդության առանձին տեսակ անասարկելի իրողություն են և հանդիսանում են հայերենի խիստ ակտիվ ու գործուն բառակազմական միջոցներից մեկը (հմմտ. գրագրաւ-թիկնեցարան, հուշարձան-կոթող, բաղնիք-վաջքատուն և այլն): Հնարավոր է, որ այսպիսի բարդություն ստղմելը կային մեր լեզվում (հմմտ. ծառա-գործավոր, կոիվ-կոտորած և այլն), սակայն իբրև հարագրական բարդություն յուրահատուկ ձև, այն ձևավորված և փամանակակից հայերենի բառակազմության կենսունակ եղանակ զարձավ հայերենի զարգացման սովետական շրջանում (մասնավորապես 50—60-ական թվականներին): Սրանք անվանական հարադրություններ են, որոնց բաղադրիչները բարդության մեջ ստորադասական հարաբերության ունենն Առաջին բազադրիչը ստորդասվում է երկրորդին, լրացնում է նրան և ամբողջ բարդությունը արտահայտում է որոշիչ-որոշյալի հարաբերություն: Այսպիսի բարդության բաղադրիչները գերազանցապես առարկայական իմաստ արտահայտող տարրեր թեույթի բառեր են, որոնք միացվում են և հանդիսանում գալիս իբրև բառային մեկ ամբողջություն արտահայտող միավորներ. ինչպես՝ աղբյուր-հուշարձան, արհեստանոց-մեխենա, բազ-

նիվ-վաջքատուն, գանձարան-արխիվ, գեներալ-մայուր, դեկտոր-պոզիտոր, դիզի-էլեկտրագնաց, բրթակից-անդամ, բառունստույյա, ինժեներ-գեղարար, ինժեներ-ֆիզիկոս, լուսանկար-մեղագրան, կանոն-հաշարան, հայտնաձև-կարող, հյուրանոց-ռեստորան, հիվանդանոց-պոլիկլինիկա, հատակագիծ-ֆաբրեգ, մարզ-ֆազմացի, մաաշ-տուրի, մուտ-մանկապարտեզ, մեցանակ-գավաթ, նկար-առաչարկ, վազոն-ռեստորան, ակեզերագնաց-դու, տուն-բանաչարկ, ցուցահանդես-առնակաճառ, Բարեգ-վիճմա և այլն, Սրանք, ի տարբերություն նախորդ անվանական հարադրությունների, հսկված չեն վերածվելու կցական բարդության, թևե կինարատուն բառը, որ հիշյալ բարդությունների թվին է պատկանում, արդեն վերածվել է կցական բարդության:

Թվական անուններով կազմված հարագրական բարդություններ

§ 375. Հարագրական բարդության այս տեսակը քանակապես անհամեմատ քիչ է, քան հարագրական բարդության վերահիշյալ տեսակների: Այստեղ հիմնականում գերիշխում են բարդ թվականները, որոնց մեջ մտնում են հաջուր թվականից բարձր բոլոր բարդ թվականները. ինչպես՝ հայուր մեկ, հայուր երկու, հազար հինգ հայուր, հազար ութ հայուր յոթանասունվեց, հազար ինը հայուր վաքսուներ, վեց հայուր փամենից, երկու հայուր ինըսուն, երեք հայուր վարսունչոս, վեց հայուր հիսուն, մեկ միլիոն երեք հայուր հազար և այլն:

§ 376. Թվականներով կազմված հարագրական բարդություններին մեջ են մտնում նաև իրար հաջորդող կամ մոտիկ թվային իմաստ պարունակող թվականներով կազմված հարագրական բարդությունները, որոնց բաղադրիչները միասին վերցրած արտահայտում են բարդության բաղադրիչների իմաստներին մոտիկ, սակայն մոտավոր և ոչ որոշակի կամ կոնկրետ թվային իմաստ. ինչպես՝ մեկ-երկու, երեք-չորս, հինգ-վեց, յոթ-ութ, տասը-ասանհինգ, աստ-սասն, փամ-երեսուն, հիսուն-վարսուն և այլն: Հիշյալ բարդություններում թվական բաղադրիչներից ոչ մեկի իմաստն էլ առանձին չի ընդգրկված, նրանք միասնաբար արտահայտում են մեկ ընդհանուր մոտավոր իմաստ:

2. ԲԱՅԱԿԱՆ ԶԱՐԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 377. Հարադրական բարգրությունների մեջ մեծ թիվ են կազմում բայական հարադրությունները⁶, որոնք ժամանակակից հայերենում (մասնավորապես բարբառներում) աչքի են ընկնում առանձին նոխությամբ ու հարատությամբ:

Հարադրական բայերը համալրում են ժամանակակից հայերենի բայական բառապաշարը և դրսևորում բայական խոսքի մասին հատուկ օրինաչափությունները՝ Ունենալով բառակապ, քերականական, իմաստային և ոճական յուրահատկություններ⁷՝ սրանք լիարժեք բայեր են և տարբեր կենսատնտեսությունը գործել են մեր լեզվի զարգացման բոլոր շրջաններում:

Հարադրական բայերը, իբրև այդպիսիք, ձևավորվում են ոչ միանգամից, այլ պարմերաբար գործածվելով և կայունանալով:

Ձևային առջատ կամ առանձին գործածություն ունենալով, բայական հարադրությունները արտահայտում են մեկ ընդհանուր իմաստ, որի հիմքում ընկած են երկու բազադրիչների բառական իմաստները: Այստեղ, պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ չի կարող կազմվել բայական հարադրություն առանց բայական բազադրիչի, որը համարի կատարում է բայակերտ մասնիկի (-ել, -ալ) կամ հանգույցի գերի Քեն, իհարկե, բայական հարադրություն կազմելու համար հավասարապես անհրաժեշտ են երկու բազադրիչներն էլ, որոնց շարահյուսական կապի միազանցումն և իմաստների միաձուլման հիմքի վրա է առաջանում նոր բայական իմաստը, ստեղծել էրբան հարադրական բայերի բառային ընդհանուր իմաստի դրսևորման մեջ գերակշռում կամ ընդգծվում է երկու բազադրիչներից մեկի իմաստը. այսպես՝ աճառալիցիլ աճել, միտլ աճել, ջանք թափել հարադրական բայերում առաջին բազադրիչներն աճելի են ազդում բայական իմաստի ձևավորմանը⁸, մինչդեռ մակբայներով կազմված բայական հարադրություններում առավել ընդգծվում են բայական բազադրիչների բառային իմաստները. ինչպես՝ դուրս գնալ, ետ բերել, մոտ գալ, ներս գալ և այլն:

§ 378. Հարադրական բայերի բազադրիչները բարդության մեջ սենն իրենց կայուն տեղը և դրսևորում են բառակազմական և բնութագրական կայուն օրինաչափություններ:

Նքն հարադրական բայերի առաջին բազադրիչները, հարադրությունից դուրս վերցրած, կարող են փոփոխվել (հոլովվել, անանգի(ն), ապա հարադրության մեջ հանդես են գալիս բերև անփոփոխ և անքնք միավորներ, ինչպես կցական և իսկական բարգրության բազադրիչները, Քեն տվյալ ղեկպրոմ գոյություն ունի բազադրիչների ձևային անկախություն: Այսպես՝ գլուխ պահել, զբոլոխ տալ, գլուխ տանել, ալք տալ, ալք գցել բայերում ալք, զբոլոխ բառերը չեն կարող հոլովվել (աչքի, գլխի) և հանդես գալ իրեն նախադասության անկախ անդամ:

§ 379. Բայական հարադրական բարգրության բազադրիչների հիմնական կամ ընդհանուր բառային շեշտը դրվում է առաջին բազադրիչի վրա, ընդ որում միավանկ բառերով կազմված անվանական հարադրիչները ստանում են մեկ շեշտ, իսկ բազմավանկ բազադրիչներով կազմվածները՝ երկու շեշտ. մեկ լիակատար կամ զորեղ շեշտ, որ ընկնում է դարձյալ առաջին բազադրիչի վրա և մեկ թույլ շեշտ, որ ընկնում է բայական կամ երկրորդ բազադրիչի վրա: Մեկ ընդհանուր շեշտ ունենալու հանգամանքը ես իր հերթին ընդգծում է հարադրական բայերի մեկ բառային իմաստ ունենալը:

§ 380. Հարադրական բայերի առաջին բազադրիչները ընդգրկում են աճելի մեծ թվով բառեր, քան երկրորդ բազադրիչները: Վերջիններս թվով աճելի օճմանամիակ են, Քեն մեկ բայը կարող է մի շարք հարադրիչներ առնել: Մրանք հիմնականում վերացարկվելու ունակություն ունեցող և շարժման գործողություն արտահայտող բայեր են:

Հարադրական բայեր կազմելու մեջ առավել գործուն են՝ աճել, աճցնել, առնել, բերել, բռնել, գալ, գնալ, գցել, դառնալ, դարձնել, ղենել, էլնել, ընկնել, թողնել, բռչել, լինել, կանգնել, կապել, կենալ, կտրել, հանել, ձգել, մնալ, պրծնել, վազել, տալ, տանել, փչել, փչել բայերը:

Մակայն, հիշյալ բոլոր բայերը ցանկացած բառերի հետ չեն կարող հարադրություն կազմել և նշյալ այդպես էլ բոլոր բառերը չեն կարող ցանկացած բայերի հետ հարադրվել: Հարադրվում են

⁶ Մտերմաստ ան՝ Ա. Արամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 156—209, Ալ. Մարգարյան, Հայերենի հարադր բայերը, 1986:

⁷ Այսպես է անվանական հարադր ունեցող բայերի մեծ մասի մեջ:

այն բաղադրիչները, որոնք միասին վերցրած գործողության կամ եզրեկետիան նոր իմաստ արտահայտելու կամ կարճ ասած՝ վերացարկվելու յուրահատկությունն ունեն:

§ 381. Առաջացած լինելով շարահյուսական կապակցություններից և իրեն բարդություն առանձնանալով դրանցից՝ հարադրական բայերը դեռևս ինչ-որ չափով կապված են վերջինների հետ, և խոսքային համապատասխան միջավայրում դրանց բաղադրիչները կարող են վերածվել նախադասության սովորական անդամների (շարահյուսական կապակցությունների), այսինքն՝ հանրես գալ իրենց բառային իսկատներով՝ դրևեղներով համապատասխան խոսքի մասային իմաստներ, այսպես՝ ձեռնով սենյ, վորձ անել հարադրական բայերը (՛նա փորձ արեց բարձրանալ անդից,՝ ընա ձեռքով արեց կանչեց) նրեխային,՝ ընա աշխատանքը ձեռքով է անում,՝ Անուցիչը փորձ արեց նախադասություններում շարահյուսական կապակցություններ են: Նույնը և կրակն բնկնել (փորձության ենթարկվել), գետինը մտնել (ամաչել, ամոթից մեռնել) կապակցությունները հիշյալ փոխարեկան իմաստներով հարադրական բայեր են, իսկ բուն իմաստներով՝ շարահյուսական կապակցություններ:

§ 382. Հայտնի է, որ բայական բարդությունը լուծվում և քայքայվում է մեծ մասամբ այն զեպրում, երբ բարդության անվանական բաղադրիչը հոգ է ընդունում:Սա այսպես է մակբայական և մասամբ անվանական բաղադրիչով կազմված բայական հարադրություններում: Այսպես՝ մեջ բնկնել և մեջը բնկնել, մտ գնալ և մտաը գնալ, ձեռք բաշել և ձեռքը բաշել, ձեռք մեկնել և ձեռքը մեկնել, գլուխ դնել և գլուխը դնել և այլն: Սակայն կան նաև քիչ թվով հարադրական բայեր, որոնք հոգի գործածությունը մեծում են անփոփոխ, այսինքն մնում են իրեն կայուն հարադրություններ. ինչպես՝ գլուխ տանել և գլուխը տանել, աչք գցել և աչքը գցել⁹ և այլն: Ինչպես, համարի հոգի գործածությունը փոխել և հարադրական բայի բառային իմաստը, սակայն հարադրական բարդությունը չի լուծվում և մեծում է իրեն ազդյախի. ինչպես՝ սիրտ առնել նշանակում է սրտապնդվել, քաշվածվել, իսկ սիրտը

⁸ Տե՛ս Մ. Արևելյան, նշված աշխ., էջ 173:

⁹ Տե՛ս Ա. Արամյան, Բայք մասնակապից հայերենում, էջ 173:

առնել՝ միխրաել, ամոհել: Նույնը և գլուխ գալ (հաղողվել) գլուխը գալ (փորձանքի հանդիպել) և այլն:

§ 383. Հարադրական բայերը, ըստ բաղադրիչների՝ բարդություն իմաստի մեջ ունեցած մասնակցություն, բաժանվում են երկու խմբի. նրանցից մի մասի բաղադրիչները տարբեր չափերով են մասնակցում բարդության ընդհանուր իմաստի դրևեղմանը (՛նմտ. զիրի դանակ, հով անել, արև անել, լաց լինել, շանց թափել, կոթիլ տալ և այլն¹⁰), իսկ մյուս մասի բաղադրիչների կոնկրետ հմտությունները չեն ներառվում բարդության ընդհանուր իմաստի մեջ, այլ երկուսով միասին արտահայտում են փոխարեկան կամ անթարգմանելի զարժվածքի (իդիոմի) իմաստ, ուստի և զարժվածքային հարադրական բայեր են. ինչպես՝ սիրտ տալ (միխրաել, սփռիլ), սիրտ առնել (սրտապնդվել, քաշվելով), գլխի բնկնել (բմբռնել, հասկանալ), երես տալ (չիպանել), սիրտ առնել (համարձակվել), գլուխ գալ (սասցվել) և այլն:

Իարժվածքային հարադրական բայերը զարժվածքաբանական միավորներ են և մտնում են դրանց կազմի մեջ:

Դարժվածքային հարադրական բայերը մյուս զարժվածքներից (ծավալուն կամ ոչ ծավալուն) տարբերվում են նրանով, որ երկանդամ են և դրանցում շարահյուսական կապը միադնամ է, իսկ մյուս զարժվածքներում (ոչ բայական) ու դարժվածքային արտահայտություններում՝ ոչ: Այսպես՝ «եկիրը գլուխն հավաքել», «եկիրը քամուն ապա», «եկիրը հացի հետ ոտել» դարժվածքներում խելքը ուղիղ խրեղոր է: Այսպես էլ «երեքը զմե անել», «Չայեր գլուխը գցել», «Հոգու զուր գալ», «Հոգին բերանը գալ», «Հոգու հետ կոթիլ տալ» և այլ զարժվածքներում բաղադրիչների շարահյուսական կապը բոլորովին միադնամ չէ, և շարադասության տեսակետից էլ հիշյալ զարժվածքները անհամեմատ ազատ են, քան զարժվածքային հարադրական բայերը, քանի որ առաջինի անդամները կարող են ազատորեն տեղաշարժվել նախադասության մեջ, իրարից անջատվել նախադասության այլ անդամներով (՛նմտ. Հոգու եմա կոթիլ տալ և կոթիլ տալ հոգու եմա, Կրակի վրա յուղ ամել, յուղ ամել կրակի վրա և այլն)¹¹: Բացի այդ՝ ծավալուն զարժվածքների բոլոր ան-

¹⁰ Այս բայերում (անհանձնական հարադրիչներ տե՛նք) ստալին բաղադրիչներ են առաջիկ մասնակցում բարդության ընդհանուր իմաստի բաղադրիչայնը:

¹¹ Տե՛ս Ա. Արամյան, Հայերենի հարադրի բայերը, էջ 76—77:

զամենեւոր ստանում են բառային առանձին շեշտ, մինչդեռ բայական դարձվածքներինը, ինչպես և, առճաստարակ, բոլոր հարադրական բայերինը՝ մեկ շեշտ և մասամբ կես կամ քույշ շեշտ:

§ 384. Բոլոր զնայեցում խիստ նուրբ և դժվար հարց է լինի սահմանադատել դարձվածքային հարադրական բայերը սովորական շարահյուսական կապակցություններից ու մյուս դարձվածքներից, մանավանդ որ, շարահյուսական շատ կապակցություններ էլ գտնվում են հարադրական բայերի վերածման վիճակում ու կարող են դիտվել և՛ իբրև շարահյուսական կապակցություններ, և՛ հարադրական բայեր: Սեպեյն դարձվածքային հարադրական բայերը վերահիշյալ մյուս միավորներից որոշակիորեն սահմանազատվում են հիմնականում բառային մեկ ընդհանուր խմսատանկնալով, որ ձևեր են ընդամենը բաղադրիչ անդամների շարահյուսական կապի միազման և, անպայմանորեն, լիզվի մեջ ձևեր բերած որոշ ափսեղականություն շեղոճիվ:

Հարադրական բայերի բառային, քերականական և խմսատարական արժեքը, երանց բաղադրիչների բազմազան և տարբեր հարաբերությունները նրան ևս զայն հարադրական բայերի բաղադրիչներին կամ նրանց կազմության մանրամասն քննությունը:

Հարադրական բայերի հարադիր բաղադրիչները լինում են՝ անուն խոսքի մաս, մակերայ, ձայնադրություն կամ բնածայնական բառ, կախյալ արմատ, բայ¹², որոճք բառ կազմության կարող են լինել պարզ, բարդ (հարադրական կամ համադրական), այլև անանցավոր:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԴԻՐ ՌՈՒՑՈՂ ՀԱՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 385. Հարադրական բայերի անվանական հարադրիչները բառ խոսքի մասային պատկանելություն լինում են՝ գոյական, անվանական, դերանուն, թվական:

ա) Գոյական. Հարադրական բայերի մեջ մեծ տեղ են զբաղում գոյական բաղադրիչով հարադրված բայերը: Այս տիպի (գոյական + բայ) բարդություններում շարահյուսական կապը լիովին միազման չէ և դեռևս ինչ-որ չափով զղացվում է: Գոյական հա-

րադիրները բայերի հետ ունեցած կապակցությունների մեջ կախյալ են ունեցիլ են տարբեր հոլովական խմսատներ և շարահյուսական զանազան պարսոները. ինչպես՝ ենթակայի, ստորոգյիական վերադրի, խնդրի, պարագայի և այլն, որոնք հարադրության մեջ զղացվում են այնքանով, որքանով զղացվում է հարադիրների շարահյուսական կապը. այսինքն՝ գոյական հարադիրները ձևականորեն են միայն պահպանել իրենց հոլովական խմսատները:

Գոյական հարադիրները արտահայտվում են հետևյալ հոլովներով՝

Ուղղական հոլովով՝ անձև անձի, արև անել, արգելի լինել, հով անել, գերի լինել, գերի մնալ, գերի դառնալ, գոն դառնալ, խելքը գնալ, մուրեք բնկնել, ցուրտք բնկնել, ակննք անել, ակննք զնել, աչք անել, աչք մտնել, աչք գնել, գլուխ տալ, գլուխ զնել, գլուխ բերել, գլուխ պանել, գլուխ տանել, դադար առնել, դադար տալ, երես առնել, երես դարձնել, երես ծռել, երես տալ, երգում առնել, գրույց անել, քն առնել, քն տալ, լույս անել, խելք անել, խոսք անել, կյանք տալ, կոխի անել և այլն:

Տրական հոլովով՝ աչիք բնկնել, այցի գնալ, գլխի բնկնել, գլխի գցել, գործի անցնել, գրի առնել, քեհն անել, քեհն տալ, լեզվից տալ, խելի բերել, խոսքի բռնվել, ծունկի բերել, ծունկի գալ, կաշմակից տալ, կարգի բերել, կարգի գցել, կարգի բռնվել, կոզի բնկնել, կրակից տալ, հաշի ցնալ, ոտի կնել, ոտի կանգնել, ոտի հանել, սաբի գցել, սովի մտնել, սրի բաշել, վանառի հանել, ուլի բերել, ուլի գալ, փախուստի դիմել, փախուստի մտնել, փորձանքի գալ, Բամուն տալ և այլն:

Այս հոլովով գոյական հարադիրները կարող են ունենալ և՛ հոգով, և՛ անհոգ գործածություն:

Բացառական հոլովով՝ աչից գցել, աչից բնկնել, գլխից անցնել, գլխից հանել, գործից բնկնել, գործից գցել, խելից հանել, հալից բնկնել, ձեռքից գնալ, ձեռքից ելնել, ձեռքից հանել, մտքից անցնել, մտքից գցել, մտքից հանել, ուլից գնալ, քրից բերել, քրից հանել, քրից բառ և այլն:

¹² Հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, նշված աշխ., էջ 164—208:

¹³ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշված աշխ., էջ 164—175:

Գործիական հոլովով՝ աչոյով անել, աչոյով տալ, աչոյով ընկ-
նել, գլխովք անցնել, երեսով տալ, խոտով ընկնել, ձեռնով անել,
սրտով գնալ, աակով անել, բնով անցնել, բնով ընկնել և այլն:

Ներգոյական հոլովով՝ մտնում զնել, մտնում լինել և այլն:
§ 386. Գոյական հարադիրը կրթմն նույնպես լինում է հա-
րադրական և միավորված միևնույն կամ երկու տարբեր հոլովնե-
րով՝ ըստ բայի համազարտության հոլովառական պահանջի.
ինչպես՝ ատամ-ատամի տալ, գլուխ-գլխի տալ, քե-քեի տալ,
խել-խելի տալ, ձեռ-ձեռի տալ, մառ-մառի խիլի, մեջ-
մեջի տալ, նակառ-նակառի տալ, ուս-ուսի տալ, ձեռնով-տոնով
անել, աչոյով ունելով անել և այլն:

§ 387. Իրեր գոյական հարադիրներ, հայիրենում փոխանուա-
րար հանդես են գալիս նաև մի շարք անականներ և մակբայներ.
ինչպես՝ աշխուժի բերել, կտորին տալ, կանաչին տալ, կապույ-
տին տալ, սևին տալ, հանրածովիի բերել, հանկարծակիի գալ,
նեղը գցել, նեղն ընկնել, սեր տալ և այլն, այլն բայի զերբայական
ձևեր, ինչպես՝ շիմանալուն տալ, շիմանալու զնել, շնակակալու
տալ, շնկատելու զնել, շնկատելու(ն) տալ, շտեսնելու զնել, շտես-
նելու տալ:

§ 388. Գոյական հարադիր ունեցող բայերի զգալի մասը
ստացել է փոխաբերական իմաստ և վերածվել դարձվածքների ու
ստանձանահատուկ արտահայտությունների (Իրիմանելի): Սրան-
ցում շարահյուսական իմաստների միջոցումը հաճախ գուրակցվել
է իմաստի փոխաբերականությունը: Գոյական հարադիրները հիմ-
նականում արտահայտում են մարդու մարմնի մասեր (աչք,
ականջ, գլուխ, քե, բերան, սիրտ, լեզու, ուս, ոտք, ձեռք և այլն).
օրինակ՝ աչք անել, աչք գցել, աչք զնել, աչք մակել, աչք փակել,
աչքի գառնել, աչքից ընկնել, աչքից գցել, աչքով տալ, աչքով
անել, ականջ զնել, ականջ կախել, գլուխ տալ, գլուխ բերել, գլուխ
հանել, գլուխ գալ, գլուխ գովել, գլուխ պանել, գլուխը գալ, զը-
խիլի տալ, գլուխ տանել, երես ձռել, երես առնել, երես դարձնել,
երես տալ, ձեռք առնել, ձեռք բերել, ձեռք գցել, ձեռք ընկնել, ձեռք
բռնել, ձեռք մեկնել, ձեռք տալ (ձեռնտու լինել), ձեռք ֆաշել,
ձեռքի գալ, ձեռնով անել, ոտքի ելնել, ոտքի հանել, լեզու առնել,
լեզու գառնել, լեզու բափել, լեզվից տալ, սիրտ տալ, սիրտ առնել,
սիրտ անել, ձեռք ու ոտք ընկնել, քե ու քիլունք լինել և այլն:

Գարձվածքային հարադրական բայերը մյուս դարձվածքներից
տարբերվում են նրանով, որ ինքնուրույն բառային միավորներ
են և զբևեռում են բայական խոսքի մասին հատուկ քերականա-
կան կարգեր ու իրադրություններ:

§ 389. Կան քիչ թվով գոյական հարադիրներով կազմված
հարադրական բայեր էլ, որ փոխաբերական կամ դարձվածքային
իմաստ չունեն (արյուխին են նաև անական հարադիրներով կազ-
մված բայական հարադրությունների մեծադրյուն մասը). ինչպես՝
առիք տալ, կատակ անել, կարգի բերել, եղում տալ, գրույց անել,
խաղ անել, ձայն հանել, միտք անել, պատիվ տալ, փառք տալ
և այլն:

բ) Ածական, Ածական անուններով հարադիրները համեմատա-
բար ակնի քիչ են, բայն գոյական անուններովը. ինչպես՝ անհան-
գիտ անել, անտես անել, անտես առնել, անգաղիք անել, անցի-
կան, արժանի լինել, լսելի անել, լսելի լինել, երկար տեսել, խալ-
ատակ լինել, հասկանալի լինել, հայտնի անել և այլն:

Ածական անունները որպես Հայրադիրներ ատանել գործածա-
կան և կենսունակ են իսկական բարդություն ձևով. ինչպես՝ արմա-
տախիլ անել, բնաշինչ անել (լինել), զաճակեթ անել (լինել), զի-
նարափ անել (լինել), քևարափ անել (լինել), լսելիդաման անել
(լինել), կալծակհուսաղ լինել (անել), հեռամտա լինել, շանբա-
հար անել (լինել), շահեսաղ անել (լինել), ուշագնաց լինել, ցու-
ղակոտու լինել, ասեղաճար անել, արչունափ լինել և այլն:

Ածական հարադիրների շարահյուսական պաշտոնը հիմնա-
կանում եզկ է ստորգոյական վերադիր իմաստը:

գ) Պերանուն. Թեև ոչ բոլոր դերանուններն են հանդես գալիս
իրեր հարադիրներ, սակայն ունեն գրոնցով կազմված բայական
թվով հարադրական բայեր, քանի որ միևնույն դերանուն հարա-
դիրը բազադրում է մեծ թվով բայական բազադիրների հետ:
Իրեր հարադիրներ հանդես են գալիս հիմնականում իբր (փոխա-
դարձ) և մասամբ էլ ինքը (անձնական) դերանունները. ինչպես՝
իբր անցնել, իբր առնել, իբր գալ, իբր գցել, իբր ընկնել,
իբր խառնել, իբր տալ, իբրով անցնել, իբրով գալ, իբրով
ընկնել, իբրեից գնալ, իբրեից հանել, իբրեով անել և այլն:

դ) Թվական. Նախորդ խոսքի մասերի հետ համեմատած ստա-
վել պակաս կենսունակ է Թվական հարադիրը, եվ սա միանգա-

մայն հասկանալի է, քանի որ մյուս խոսքի մասերը ավելի սերտորեն են առնչվում բայական խոսքի մասի հետ և ի վիճակի են արքահետ բառակապակցությունից կազմել՝ արտահայտելով շարահայտական բաղամասն հարաբերություններ, միեղջիւն թվական անունը այդ տեսակետից կենտրոնակ չէ և բայի հետ կապակցություն է կազմում եղակի գեղերերում, այն էլ որևէ թվական (առավելապես մեկ) կամ գոյական նախադաս հարադրի հետ՝ կազմելով դարձվածքային արտահայտություններ. ինչպես՝ մեկը հազար անկ, աչբեր չորս անկ, խոսքը մեկ անկ և այլն, Առավել կենտրոնակ են մի թվականով և ի նախորդով կազմված հարադրական բաշերը. ինչպես՝ ի մի գումարել, ի մի բերել, ի մի հավաքել և այլն:

Ինչպես ասվեց, անվանական հարադրիները կարող են գրծվորվել նաև բարդություններով. այսպես՝

ա) Կրկնավոր հարադրությամբ՝ արև-բալևն անկ, խունջիկ-մուսիլի գալ, կեռ-մեռ անկ, կտոր-կտոր անկ, կտոր-կտոր գալ, մեշ-մեշ անկ, մուտ-մուտ անկ, շուռ-մուռ տալ, վեր-վեր բռչել, պատառ-պատառ անկ և այլն:

բ) Բազմությունական հարադրությամբ՝ աղաչանք-պաղատանք անկ, արշուն-բռնիք բափել, անցուկ-մտացուկ անկ, գիշեր ցերեկ անկ, այս ու վախ անկ, զեղ ու դարման անկ, դուրս ու ներս անկ, ծանր ու բերն անկ, ետ ու առաջ անկ, կուշ քու ձիգ անկ, վեր ու վար անկ, տակն ու վրա անկ, ցիր ու ցան անկ և այլն¹⁴:

գ) Գցական բարդությամբ՝ անցուղորս անկ, արվարձան անկ, արևիկող անկ, բացուխով անկ, զուրկանձի ալ, էլումուտ անկ, կալմեջ անկ, հաղումաջ լինել, համուես անկ, հաբցուխորս անկ, շուռումուտ գալ, շեմուլում անկ, շարդուխուրդ անկ, սուամուռուկ անկ, սուամուռուկի ալ, ցախուրիվ լինել, Բանդուրաքի անկ, Բարուհանդ անկ և այլն:

դ) Իսկական բարդությամբ՝ անձնատուր լինել, արմատայիվ անկ, գանձակեց անկ, գլխահան անկ, գինարափ անկ, քեարափ լինել, իսկաման անկ, խոնարարաբար լինել, կարվածաբար լինել, հաղորդակից անկ, հոգմարիվ լինել, ձեռնամուխ լինել, մասնակից անկ, մտքազերծ անկ, շանքանար լինել, շնչասպառ լինել:

¹⁴ Այս և նախորդ հարադրական բայերի առաջին բաղադրիչներից շատերը իբրև առանձին բազմություններ գործածական լինել և գործառուում են միայն բայական հարադրական բարդության մեջ:

առնատակ տալ (անել), սովաման անել (լինել), տեղանան անել (լինել), ուժասպառ լինել, ուշագնաց լինել և այլն:

Բառարարության վերահիշյալ տեսակներից, իհարկե, առավել կենտրոնակ են իսկական բարդությամբ կազմված հարադրիները. Անհրաժեշտ է ընդգծել այն, որ այս տիպի բարդությամբ կազմված հարադրիների մեջ բարդության երկրորդ եղանակում հիմնականում հանդես են գալիս բայարմատներ. ինչպես՝ կիր (խմատակիր), յապառ (շնչասպառ), տուր (անձնատուր), խոսք (հոտախոսք) և այլն, որի շնորհիվ իսկական բարդությունները բնորոշանուր առմամբ արտահայտում են գործողության կամ գործողության հետ առնչվող իմաստ, որ, առնչուտ, ավելի է նպաստում վերջիններիս հարադրական բայերի բաղադրիչների վերածվելուն և այս տեսակետից ավելի ակտիվանալուն, մասնավորապես որ բայական բարդության բայիմաստի գրեթեման գործում անվանական հարադրիներով բարդություններում հիմնական նշանակությունը մեծ մասամբ հաղորդում է առաջին բաղադրիչը (հմտ. միտք անել, լաց լինել, ստնակոխ անել, արմատախիլ անել և այլն)¹⁵:

Մ ա կ բ յ ա կ ա ն հ ա ր ա դ ի ի ր ն ե ր ո վ
կ ա դ մ վ ա ծ ր ա յ ե ր

§ 390. Այսպիսի հարադրիներով կազմված բայական հարադրություններում բայի բովանդակությունը հիմնականում գրեթեում են բայական բաղադրիչները, իսկ տարածական կամ մակբայական իմաստ արտահայտող առաջին բաղադրիչները մասնավորում, լրացնում ու պարզում են բայական իմաստը՝ արտահայտելով գործողության շարժում, ուղղություն և համապատասխանում են այլ լեզուների (ռուսերենի, գերմաներենի, հունարենի և այլն) նախորդվոր բայերին: Այսպիսի հարադրիները ունեն հիմնականում մակբայական խոսքի մասային արժեք: Գրանցից են¹⁶

Առաջ, առաջ անցնել, առաջ բերել, առաջ գալ, առաջ գնալ, առաջ ցցել, առաջ ընկնել, առաջ խաղալ, առաջ նայել, առաջ շարժվել, առաջ վազել, առաջ տալ, առաջ տանել, առաջ քաշել և այլն:

¹⁵ Տճ՝ Մ. Արևիլան, նշված աշխ., էջ 170:
¹⁶ Տճ՝ նույն աեղում, էջ 171-172: Ա. Աբրահամյան, նշված աշխ., էջ 176-180:

Պեմ. դեմ անել, դեմ առնել, դեմ գալ, դեմ գնալ, դեմ ելնել, դեմ բնկնել, դեմ կանգնել, դեմ կենալ, դեմ տալ և այլն:

ՊԷԼԻՄ. դեն զցել, դեն չրել, դեն նետել, դեն շարտել և այլն:

Պուրս. դուրս անել, դուրս բերել, դուրս գալ, դուրս գնալ, դուրս զցել, դուրս ելնել, դուրս բնկնել, դուրս թափել, դուրս կանչել, դուրս մնալ, դուրս նայել, դուրս շարտել, դուրս սրծնել, դուրս վազել, դուրս տանել, դուրս տալ, դուրս վնդել, դուրս ցցել, դուրս քաշել, դուրս փախել և այլն:

Խա. Խո բերել, Խա գալ, Խա գնալ, Խա զցել, Խա դառնալ, Խա բնկնել, Խա խել, Խա կանգնել, Խա մղել, Խա մնալ, Խա փախել, Խա չրել, Խա քաշել և այլն:

ՄԼՉ. մեջ առնել, մեջ բերել, մեջ գալ, մեջ զցել, մեջ բնկնել, մեջ մտնել, մեջ տալ, մեջ քաշել և այլն:

Մոտ. մոտ բերել, մոտ գալ, մոտ գնալ, մոտ թողնել, մոտ կանչել, մոտ վազել, մոտ տանել, մոտ քաշել և այլն:

Ներս. ներս անել, ներս առնել, ներս բերել, ներս գալ, ներս գնալ, ներս զցել, ներս դնել, ներս բնկնել, ներս թողնել, ներս լքցնել, ներս խոժել, ներս կանչել, ներս հրավիրել, ներս հրել, ներս մտնել, ներս նայել, ներս սողոսկել, ներս վազել, ներս տալ, ներս տանել, ներս քաշել և այլն:

Վալյը. վալյը առնել, վալյը բերել, վալյը զցել, վալյը դնել, վալյը բնկնել, վալյը թռչել, վալյը իջնել, վալյը նետել, վալյը ցատկել և այլն:

Մանր.— Վալյը հարազրի հետ խոսակցական լեզվում և, մասնավորապես, բարբառներում, խիստ զործածական են նաև վալյը բառի վառ և վեր հնչյունափոխված տարբերակներով կազմված հարազրական բայերը. ինչպես՝ վառ զցել, վառ իջնել, վառ բերել, վեր դնել, վեր զցել, վեր բնկնել և այլն:

Վեր. վեր ելնել, վեր թռչել, վեր հանել, վեր նայել, վեր ցատկել, վեր կենալ, վեր քաշել և այլն:

Վրա. վրա բերել, վրա գալ, վրա զցել, վրա բնկնել, վրա սրծնել, վրա տալ, վրա քաշել և այլն:

Յած. ցած դիրովել, ցած զնել, ցած բնկնել, ցած թողնել, ցած թռչել, ցած իջնել և այլն:

17 Այս և մտածավորապես դեռ մեղբայրով կազմված հարազրական բայերը ստափել կենսունակ են բարբառներում.

Շուռ (շուրբ). շուռ բերել, շուռ գալ, շուռ տալ և այլն:

Մանր.— Այս հարազրական բայերի առաջին բաղադրիչը չուրջ մակբայի ձևափոխված տարբերակն է, առանձին գործածություն չունի և գրական լեզվում ու մասնավորապես բարբառներում կենսունակ է իբրև հարազրի:

§ 391. Տեղի կամ տարածական իմաստ արտահայտող հարազրիները թվով սահմանափակ են, սակայն գործածվում են բազմական մեծ թվով բայերի հետ, որոնցից ավելի կենսունակ են անել, բերել, զնալ, զցել, բնկնել, մղել, վազել, տալ, տանել, փաշել, բշել և այլ բայերը: Վերահիշյալ հարազրի մակբայներից կամ կապերից որևէ մեկը կարող է հարազրվել նշված բայերից գրեթե բոլորի հետ և կազմել հարազրական բայերի մեծ խումբ. աչքսփսին են՝ առաջ, դուրս, ետ, ներս, վալյը, վրա տարածական իմաստ արտահայտող բառերը. ինչպես՝ առաջ անել, առաջ բերել, առաջ գալ, առաջ զլքել, առաջ բնկնել, առաջ վազել, առաջ տալ, առաջ անել, առաջ բշել և այլն, չհաշված և այլն, որ այս կենսունակ հարազրիները, բացի վերահիշյալ բայերից, կարող են հարազրվել նաև հարազրական տեսակետից առավել նվազ կենսունակ բայերի հետ. ինչպես՝ անցնել, գրել, զլորել, ելնել, խոչանակ, ծլկիկ, նահանջել, նայել, սողոսկել, վերցնել, վիթել, վրնդել, շարտել, ցցել և այլն (համտ. առաջ անցնել, առաջ խոչանակ, առաջ սողոսկել, ետ նահանջել, ետ ծլկիկ, ետ վերցնել և այլն):

Կան նաև տարածական իմաստ արտահայտող մի քանի բառեր, որոնք խիստ սահմանափակ թվով բայերի հետ են հարազրվում. ինչպես՝ դեմ, դեն, մեջ, շուռ և այլն:

§ 392. Հարազրական բայերի այս խումբը, ըստ բաղադրիչների ներքին կապի ու հարաբերության, դասերում է այլ առանձնահատուկություններ, բան անվանական բաղադրիչներով կազմված հարազրական բայերը. Այսպես՝ ա) բայական բաղադրիչը արտահայտում է բայական բարդության կամ բայիմաստի բնդհանուր բառական իմաստը, իսկ հարազրիները բայի զործողության բնդհանուր իմաստի մեջ լրացուցիչ կամ օժանդակ դեր են կատարում՝ մասնանշելով գործողության շարժման ուղղությունը. բ) հոգի առկայությունը մակբային վերածում է փոխանկան, որով և խախտվում ու քանդվում է բայական հարազրությունը (համտ. մեջը բնկնել, առաջը վազել, վրան բնկնել և այլն). գ) շարահյու-

սական կապը վերականգնվում է նաև բաղադրիչների շարադասու-
թյան խախտման հետևանքով. ինչպես՝ ձգել վեր, գնալ առաջ, քա-
շել ներս, նայել ետ, վազել առաջ և այլն:

Մակբայ շարագիրներով բաղկացած հարադրական բայերի
մեջ ետ կան մի քանիսը, որոնք իրենց սղոզակի իմաստների հետ
մեկտեղ ունեն նաև փոխարեական կամ դարձվածքային իմաստ.
ինչպես՝ դուրս բնկնել (շեղվել, փշանալ), դուրս քաշել (շեղել),
դուրս տալ (անխմատ խոսել, շաղկապատել), ետ կանգնել (նա-
հանջել, հրաժարվել), մեջ բնկնել և այլն, սակայն հանդիպում են
նաև այս տիպի մի քանի բարդություններ էլ, որ ունեն միայն
փոխարեական իմաստ. օրինակ՝ ղեմ բնկնել (ափսոսել, տանջվել,
թախանձել), վրա բնկնել, վրա արձնել, վրա տալ և այլն:

**Ձ ա յ ն ա ր կ ու թ յ ու ն ն եր ով և ք ն ա ձ ա յ ն ա կ ա ն
բ ա ո ն եր ով հ ա ր ա գ ր վ ա ծ ք ա յ ն ք**

§ 393. Հարադրական բայերի մի փոքր խումբ են կազմում ձա-
յնարկություններով և քնաձայնական բառերով հարադրված բայերը.
ինչպես՝ ախ անել, ախ կանչել, ախ քաշել, ճափ անել, ճափ
անել, վա՛յ անել, վա՛յ կանչել, վա՛յ տալ, օ՛ֆ անել և այլն:

Նման բայական հարադրության բաշխման քոլմանը պիտի
լսյան մեջ հիմնականում ընդգծվում է հարադրի բառական իմաս-
տը. ինչպես՝ օ՛ֆ անել, վա՛յ կանչել և այլն:

**Կ ա խ յ ա լ ք ա յ ա ր մ ա տ ն եր ով և ք ա ո ն եր ով
հ ա ր ա գ ր վ ա ծ ք ա յ ն ք**

§ 394. Ժամանակակից հայերենում կան մի շարք բայարմա-
տներ, բառեր և այլ սակավաթիվ բայահիմքեր, որոնք օրոշակիա-
նում և կոնկրետանում են կամ երկրորդական ձևությամբով (վերջա-
վորություններով և վերջածանցներով), կամ բայական հարադրա-
կան բաղադրիչներով, որ տվյալ դեպքում կատարում է բայակերտ
կամ բայացնող մասնիկի՝ Գեր Այապիսի հարադրերը կախյալ
միավորների նկ:

Կախյալ բայարմատներով կազմված հարադրական բաշ-
կից են անց կենալ, անց կացնել, ետ գալ, գալց անել, քալալ գալ,
քալ կենալ, քոզ անել, քոզ տալ, բիկն տալ, ժամ գալ, իմաց անել,

(տալ), խալսա տալ, կախ անել, հուպ տալ, կուտ բնկնել (զցել),
կախ զցել, կախ բնկնել, կախ տալ, կուլ տալ, կուլ զնալ, կանգ
առնել, կուլ գալ, ձիգ տալ, նախ անել, ման անել, ման տալ, ման
գալ, շաղ տալ, շուտ գալ, պան մտնել, պան տալ, պոկ գալ, վագ
տալ, փուլ գալ, քաշ գալ (ածել) և այլն:

Մյանցից խալսա և ման¹⁸ արմատները բայական մասնիկա-
վորումով էլ առանձին չեն գործածվում և միայն բայական հարա-
դրությամբ են կենդանի եվ եթե մի երկուսն էլ անկախաբար
(առանց մասնիկավորման) գործածվում են, ապա իմաստափոխվել
են և արդեն վերածվել համարմտտ համանունների. ինչպես՝ պան
տալ և պան (ժամանակավիշտ), շաղ տալ և շաղ (ցող) և այլն:

§ 395. Մի շարք ափամտներ էլ հարադրական բայերի մեջ բա-
ռային նոր իմաստ են ստացել, մինչդեռ մասնիկավորմամբ կամ
համարական եղանակով այլ իմաստ ունեն. ինչպես՝ պան տալ
չի նշանակում պանել, այլ հանձնել պանելու, շաղ տալ չի նշա-
նակում շաղել, այլ ցրել, քափել, նույնը և հուպ տալ և հայել:

§ 396. Կան նաև բառաձևերով արտահայտված մի քանի կախ-
յալ հարադրիչներ. ինչպես՝ երևան գալ (հանել, բերել), խաբս տալ
ծառս լինել, մտիկ անել (տալ), տեղի ունենալ, փոխ բնկնել
և այլն:

Մյանց մեծ մասը քարացած հոլոտաներ են, որոնք առանձին,
անկախ ձևով բոլորովին գործածական չեն և պահպանված են
միայն վերահիշյալ հարադրական բարդություններում: Այապիսի
հարադրությունները առավել կաշուն հարադրություններն են և
չեն քայքայվում շարահյուսական, ձևաբանական կամ իմաստային
որևէ միջոցով:

Ք Ա Յ Ա Ն Ա Ն Հ Ա Ր Ա Կ Ի Ո Ւ Ն Ե Ց Ա Ղ Հ Ա Ր Ա Կ Ի Ո Ւ Ն Ե Ց Ե Բ

§ 397. Հարադրական բայերի մեջ բավական մեծ խումբ են
կազմում դուտ բայական բաղադրիչներով հարադրված բայերը:

Մրանք բաժանվում են երկու խմբի.

- Ա) Չուսարական բայերով կազմված հարադրական բայեր և
- Բ) Որևէ բայով և առլ բայով կազմված պատճառական բայեր:

¹⁸ Նույնը միայն բառակազմական որոշ փոփոխությամբ է գործածական
(հմտ. խոստափել), իսկ ման-արմատը մանել ձևով իմաստափոփոխյուն է
կրել և այլ բառային արմեր ունի:

Ա. ԶՈՐԿԱՐԱԿԱՆ ՐԱԶՅՐ

§ 398. Երկու և ավելի անկախ համադաս բայական բաղադրիչներով կազմված բայական հարադրությունները զուգադրական բայի են: Սրանք իմաստային կողմով և բաղադրիչների ներքին կապի ու հարաբերության տեսակետից զղախորին տարբերվում են անկախական բաղադրիչներով կազմված, այլև պատճառական հարադրական բայերից:

Այստեղ բաղադրիչները հավասարապես խոնարհվում են և հարադրական բարդություն են դիտվում համապատասխան առդանություն շնորհիվ՝ առանց արտասանական դադարի արտասանվելու դեպքում. ինչպես՝ ուտել-լսել, գնալ-գալ, ետել-վեր կենալ և այլն:

Նման հարադրությունները, քանակաբար, քաջքալում են արտասանական դադարով և զբաղոր խոսքում ստորակետ դնելով:

Զուտ բայական հարադրությունների բաղադրիչները միասին վերցրած արտահայտում են երկու և ավելի զործողությունների յուրահատուկ ընդհանուր իմաստ, որի մեջ առկա են բոլոր բաղադրիչների բառային իմաստներն էլ՝ առանց որևէ մեկի իմաստի գերադանելու:

Սրանցից միայն մի քանիսի բառային ընդհանուր իմաստն է, որ բաղադրիչների իմաստների սուկակական դումարը չէ, այդ պատճառով էլ դրանք բառարանում ևս կան գտել իրեն առանձին բառարանային միավորներ: Ինչպես՝ առնել-մտնել, գրել-կարդալ, եփել-քափել, գնալ-գալ, զուգվել-զուգարվել, ուտել-լսել, հալ-վել-մաշվել և այլն: Իսկ զուգադրի բայերով կազմված մյուս բաղադրիչ հարադրությունները, ընդհանրապես, իմաստային նման սերտ կապի մեջ չեն գտնվում:

Մտնոր.— Հայ բերականագիտության մեջ ընդհանրապես զուգադրական բայեր են համարվել ոչ միայն անմիջականորեն հարադրվող կամ կից զործածություն ունեցող հարադրական բայերը, այլև տարանջատ ձևով զործածվող բայերով հարադրությունները¹⁹, ինչպես՝ «էն և քարն էլ տաշեցին, բերին վրեն Կաշեցին» (ՀՔ). Գալիս նրան են կանչում. գնում անկյունում ետում է և այլն: Սակայն ոչ կից զործածությամբ թուլանում է բաղադրիչների արտասանական կապը և նրանք այլևս սերտորեն կապված զործողությունների զաղափար չեն արտահայտում:

Նշանակում է, արտասանական կապը կարևորագույն գործոնն է զուտ բայական բաղադրիչներով կազմված հարադրական բայերի նախաշման համար. այն նպատակով է բայական բաղադրիչների միասնաբար և միմյանց հետ սերտորեն կապված զործողությունների զաղափար արտահայտելուն, որ դրանք զուգում է հիմնականում երկու (հմտտ. բնկնել-մեռնել, նստել-կանգնել, վազել-հասնել, կնիկ-կանգնել) և քիչ թվով գնվելի բայերի միջոցով (հմտտ. վազել-գնալ-հասնել, գալ-աղաչել-պաղատել և այլն): Սակայն, որքան բազմանդամ են հարադիր բայերը, նույնքան և համապատասխանաբար թույլ է բայական բաղադրիչների իմաստային կապը, քանի որ ծանրանում է ստորակետությունը, և, ընդհանրապես, զգվարանում դրանց ընկալումը իրեն մեկ սամբողջական բարդություն:

§ 399. Զուգադրական բայերով կազմված հարադրությունները քաջքալում են և կամ ու համադասական շաղկապներով, որոնք բայական բաղադրիչներին հետոցում են միասնաբար կատարվող զործողություններ արտահայտելու վիճակից և դարձնում միմյանցից անկախ զործողությունների իմաստ արտահայտող բայեր. ինչպես՝ գնալ-գալ և գնալ ու գալ կամ գնալ և գալ, տանել-բերել՝ տանել և բերել, տանել ու բերել և այլն:

Այսպիսով, կենտրոն վերոհիշյալ մի շարք հանգամանքներից, կարելի է տեսլ, որ զուգադրական կամ զուգաբայական հարադրությունների մեծ մասը իմաստային կապի և միասնության տեսակետից բավականին տարբերվում է անվանական հարադրիչներով բայերից՝ բարդության բովանդակության մեջ բոլոր բաղադրիչների բառական իմաստների հավասարապես առկա լինելու հանգամանքով, ուստի արտասանական համապատասխան դադարի դեպքում բարդությունը իսկույն քաջքալում է՝ վերանվելով սովորական կապակցություն:

Այս պատճառով էլ զուգաբայական հարադրությունները զրտնրվում են մի տեսակ միջին դիրքում՝ բառակապակցությունների և հարադրական բարդությունների մեջտեղում:

§ 400. Զուգաբայական հարադրությունները, որ զործածական են և գծիկով, և՛ առանց գծիկի (թեև շատ կողմերով առավել քանկալի է միատեսակ զրությունը): Միութան գծիկով գրվում են մասնա-

¹⁹ Տե՛ս Ալ. Մարգարյան, Հայերեն հարադիր բայերը, էջ 206:

վորացւոս բառային մեկ միավորի արժեք սենցող կամ խմաստային առաջնի սերտ կապի մեջ գտնվող բազադրիչներով կազմված զուգադրական բայերից շատերը:

§ 401. Ժամանակակից Տայերենում բազմական տարածված են նաև հարադրական և համադրական բայերով կազմված զուգադրիչ հարադրական բայերը²⁰: Այստեղ հարադրական բայերը, որ կարող են ունենալ և նախադաս, և հտադաս գործածություն, հանդես են գալիս իբրև մեկ բայական բազադրիչ, քանի որ բայական մեկ ամբողջական միավորներ են (ինչպես և համադրական բայերը), որի հետևանքով էլ բայական բարդությունը ըստ կազմության մտնում է զուգադրական բայերով կազմված հարադրական բարդություն. ինչպես՝ գլուխ գալ պրծնել, դուրս գալ փախչել, ետ դառնալ գնալ, քե առնել րոչել, վեր կենալ գնալ, վեր կենալ գալ, գնալ իմաց տալ, նստել-վեր կենալ, բերել ցույց տալ, գնալ կարգի բերել, ոտ առնել փախչել, ետ դառնալ գնալ և այլն:

Չնայած որ է կազմել նաև զուտ հարադրական բայերով կազմված զուգադրական բայեր, սակայն արտասանական անհարմարության և անբարենշնչության պատճառով, որ առաջանում է շեշտների կուտակումից (եթևոս թույլ և երկու ուժեղ), դրանք հազվադրուտ են գործածվում ժամանակակից Տայերենում. ինչպես՝ վեր կենալ դուրս գալ, դուրս գալ կարգի հրավիրել, վեր կենալ ձայն տալ և այլն:

§ 402. Չուգադրական բայերի բազադրիչները լինում են հիմնականում շարժման, տեղափոխության զաղափար արտահայտող բայեր, որոնք թեև քանակական ավելի քիչ են, քան երկրորդ կամ երրորդ բազադրիչ հանդիսանող բայերը, սակայն հարադրվում են ա բարդություն են կազմում բազմամիջով ալլ բնույթի բայերի հետ (ընդ որում նաև շարժման զաղափար արտահայտող) և կազմում մեծ թվով բայական հարադրական բարդություններ:

§ 403. Չուգադրական բայերով կազմված հարադրությունները ըստ բազադրիչների խմաստային կապի բաժանվում են երեք խմբի:

ա) տարբեր բնույթի գործողություններ ցույց տվող բայերով կազմված հարադրություններ,

բ) եռմակիչ բայերով կազմված հարադրություններ և

գ) եակադրի գործողություններ ցույց տվող բայերով կազմված հարադրություններ:

Տարբեր բնույթի գործողություններ ցույց տվող բայերով կազմված հարադրություններ: Այս խմբի մեջ հանդես են գալիս տարբեր գործողությունների խմաստ արտահայտող բայեր և արտահայտում տարբեր գործողությունների միասնաբար կատարումը, դրանց միջև գոյություն ունեցող հարաբերություններն ու կապերը: Ինչ խոսք, որ նման բարդություններում հարադրվում են տարբեր բնույթի այնպիսի բայեր, որոնք իրականում կարող են միասնաբար հանդես գալ: Այսպիսին են պատճառահետևանքային կամ ժամանակային անմիջական շարժողականության հարաբերությամբ կապված բայերը:

Այս տիպի բարդություններում շարժման և տեղափոխության զաղափար արտահայտող բայերը, ինչպես՝ աճցնել, գալ, գնալ, առնել, բերել, կլենլ, րոչել և այլն, լինում են զերբազանցաբար առաջին բազադրիչներ և զուգադրվում են առաջին բազմամիջով ու բազմաբնույթ բայերի հետ:

§ 404. Տարբեր բնույթի գործողություններ ցույց տվող բայերով միավորված բայական հարադրությունները, ըստ խմաստային կապի հարաբերության, լինում են՝

ա) ժամանակային անմիջական հաջորդականության հարաբերությամբ միավորված հարադրություններ, որոնց բազադրիչների մեջ առկա է լինում պատճառահետևանքային կապ:

Իրանցից են՝ գալ-հասնալովել, գալ-խառնվել, բերել-հասցրնել, ընկնել-կոտորվել, ընկնել-մեռնել, հանել-զցնել, խփել-կոտորել, պոկել-սաննել, կտրել-զցնել, գնալ-տեսնել, գալ-հակել, գալ-հասնել, գտնել-բերել, փախչել-պրծնել, սենել-վերջացնել, սանլ-վերջացնել, մեռնել-պրծնել, գրել-վերջացնել, ոտել-պրծնել, քնկնել-քնել, պսոկել-քնել, նստել-մնալ, դնալ-քնկնել, գնալ-տեսնել, գնալ-քնել, գնալ-կանցնել, հանել-շարտել, վազել-հասնել, քշել-գնալ, պոկել-սաննել, առնել-փախչել, կլենլ-կանցնել, թրուչել-գնալ, հոսել-գնալ, թուչել-հասնել, լցվել-թափվել, ծելել-ժաղկել, շափել-ձեկել, վարել-ցաննել, գնալ-կորել և այլն:

²⁰ Այս, ինչպես և երկնադր, բազմաբանական և կցական հարադրիչներով կազմված հարադրական և համադրական բայերով զուգադրական բայերը պրոֆ. Ա. Արտահայտող առանձնացրել է զուգաբայական հարադրություններից և գոտարկարգի համակցական բայական հարադրություններ առանձին տեսակի մեջ (ՏԿ՝ Նշված աշխ., էջ 199—200)։

Վերահիշյալ զուզադիր բայերով կազմված Հարադրություններին մեծ մասում առաջին բաղադրիչը հիմնականում արտահայտում է շարժման կամ գործողության ընդհանուր իմաստ, իսկ երկրորդը՝ առավել կոնկրետ իմաստ՝ ցույց տալով գործողության (համախ առաջին բաղադրիչի արտահայտած գործողության) շարունակությունն ու վերջնական արդյունքը, հետևանքը (հմմտ. խր-փեւ-սպանել, ապ-փրչել, բշեւ-տանել, ընկնել-կտորվել և այլն), նպատակը (հմմտ. բերել-հասցնել, գալ-տանել, զնալ-հասնել, գալ-տաննել և այլն), վախճանը (հմմտ. կազմել-վերջացնել, հանձնել-վերջացնել, շինել-պրծնել) և այլն:

բ) Միևնույն երեսույթի տարբեր կողմերն արտացոլող բայերով կազմված Հարադրություններ. ինչպես՝ ուտել-խմել, երգել-պաեել, գրել-կարդալ և այլն:

• § 405. Գործողության մասնանկանությունը զազափար արտահայտող բայերը, բացի բառակազմական նշանակություններից, զրոսերում են նաև քերականական (կառուցյալ կերպի) իմաստ:

Համանիշ բայերով կազմված հարադրություններ: Այս խմբի մեջ մտնող Հարադրական բայերը գործողության ընդհանուր իմաստի օստտկացում են արտահայտում, մինչդեռ բարդության բաղադրիչները առանձին վերջրած աչրպիսի նշանակությունն չունեն:

§ 406. Մրանք բաժանվում են կերք ենթատեսակի.

ա) հոմանիշ բայերով կազմված բարդություններ. ինչպես՝ խնդրել-աղաչել, աղաչել-պաղատել, անցնել-գնալ, ասել-խոսել, ամնլ-ղնել, զերվել-սարվել, զոտալ-հշալ, զուզվել-զարդարվել, լալ-ողբալ, խառնել-խննել, կապել-հագցնել, կարել-կաշկամ-ղել, կալել-կապել, հալվել-մաշվել, շանել-պանել, շաշել-շառաշել, շրջապատել-շրթայել, պանել-պանպանել, սրիլ-ավլիլ, շարղել-փըրել, ուտել-փվվել և այլն:

Այս տիպի բարդությունները բառային ընդհանուր իմաստով տարբերվում են զուգաբայական նախորդ տիպի բարդություններից. սրանց բաղադրիչները իմաստային ավելի սերտ կապի մեջ են գտնվում միմյանց հետ, միասին վերջրած արտահայտում են մեկ ընդհանուր բառային իմաստ և այս տեսակետից նման են անվանական Հարագրիչներով կազմված Հարադրական բայերին:

բ) միևնույն բայի և նրա կրկնավոր կամ բազմապատկական ձևի Հարադրությամբ կազմված բարդություններ. ինչպես՝ զոտալ-

զոտոտալ, դողալ-դողցոլալ, ծախել-ծախմխել, կապել-կապկպել, նախել-նախենել, շափել-շափշփել, վազել-վազվզել, փորել-փորփրել, երգել-նոտալ-նոնալ (Քոսի-վոի մի հայուս... Երպեց-ճոաց-ճրոճրոաց, ննկո-նկար, ընդուն ու մրջյունը) և այլն: նման բայական Հարադրությունները ևս մեկ ընդհանուր բառական իմաստ ունեն, մանավանդ որ զրանց հիմքում վերջին հաշվով բնկած է միևնույն բայ բաղադրիչը: Առաջինն արտահայտում է մեկ անզամ կատարվող գործողություն, իսկ երկրորդը՝ միևնույն գործողության բազմապատկիությունը և աստակությունը, այնպես որ այս ևս նեթախմբի բայական բաղադրիչները նույնպես միմյանց հետ սերտորեն կապված են բառական և քերականական իմաստներով:

Հակադիր գործողություններ ցույց ավոլ բայերով կազմված հարադրություններ: Մրանք արտահայտում են մեկ ընդհանուր գործողության հակադիր կողմերը և այս հակադիր, տարբեր գործողություններով հանդերձ, ք վերջը ստանում են մեկ ընդհանուր գործողության նշանակություն. ինչպես՝ առնել-ծախել, անցնել-դառնալ, զնալ-զալ, կննել-խննել, կննել-մտնել, կարել-կապել, առնել-բերել, հստել-վեր կնալ, տանել-ետ բերել և այլն:

Արտահայտելով մեկ ամբողջական գործողության երկու հակադիր կողմերը, Հարադրվող բայերից մի քանիսը կարող են տեղաշարժվել. ինչպես՝ գնալ-զալ և զալ-գնալ, տանել-բերել և բերել-տանել, կննել-մտնել և մտնել-կննել և այլն: Իհարկի, այս բարդություններից գործածական և ընդողություն են ավելի վերևում հիշատակված ձևերով. ինչպես՝ առնել-ծախել և ոչ ծախել-առնել, կտրել-կապել և ոչ կապել-կտրել և այլն, մասնավանդ որ արպիսի տեղաշարժիցից մեծ մասամբ փոխվում են նաև զուգադրական բայերի բառական իմաստները, նրանց մեծ մասը զուգվում է փոխարեական իմաստից և մտնում իրրև սովորական զուգադրական բայերով կազմված բարդություն (հմմտ. նստել վեր կենալ և վեր կենալ նստել, անցնել-դառնալ և դառնալ-անցնել, առնել-ծախել և ծախել-առնել և այլն):

բ) ՏԱԿ ԲԱՅՈՎ ԿԱՇՊՎԱՑ ՊԱՏՃԱՆԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 407. Բայական Հարադրություններից մեջ զբալի տեղ են զրբավում անորոշ զերբայով և տալ բաշով կազմված պատճառական բայերը:

Առաջացած ինչելով հարադրության հիմունքով և լինելով հարադրական բարդության առանձին տեսակ՝ սրանք հիմնականում բերականական արժեք ունեն²¹։ Այս խմատով ճիշտ է պրոֆ. Ա. Արքրհամյանի այն տեսակետը, թե ապա բաշտվ կազմվող պատճառական հարադրությունները գլխակապար բերականական հարադրություններ են²²։

§ 408. Պատճառական ախի բայական բարդություններում ապա բայը ստատիվո գրի է կատարում և պատճառական սեռածոստացի կամ պատճառականություն իմաստ արտահայտող բառի նշանակություն ունի (հմտա. խոսելու ասլ-խոսեցնել, խմելու ասլ-խմեցնել և այլն)։

§ 409. Տալ բայով կազմված պատճառական հարադրությունները, ի տարբերություն անսեռացվող պատճառականների մի մասի, բոլոր դեպքերում պատճառական (բերականական) իմաստ ունեն։

§ 410. Տալ բայի հարադրությամբ պատճառական բայեր են կազմվում ինչպես համադրական, այնպես էլ հարադրական բայերից. օրինակ՝ բերելու ասլ, խմելու ասլ և դուրս տանելու ասլ, դուրս բերելու ասլ, նետ կանգնելու ասլ և այլն։

II. ՀԱՄԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՅԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

§ 413. Համադրական բարդությունների մեջ բաղական զգալի թիվ են կազմում կցական բարդությունները։ Սրանք առաջանում են և՛ հարադրական բարդություններից, և՛ ուղղակի շարահյուսական կապակցություններից։

Կցական բարդությունները և՛ բառական խմատով, և՛ դրության ձևով մեկ բառային միավոր են և ունեն մեկ բառային շեշտ. ինչպես՝ այսօր, այսպես, մայրուղի և այլն։

Կցական բարդությունները առաջանում են հիմնականում հարադրական բարդության բոլոր տեսակներից (կրկնավորներից, բա-

²¹ Այս պատճառով էլ նախ բերականադրության մեջ քննելի է մանրամասնորեն ու շատ կոպերով լուսարակվել են մեծ մասամբ պատճառականություն բերականական կարգի և անսեռացվող պատճառական բայերի հարցի հետ կապված։

²² Տե՛ս Ա. Ա. Արքրհամյան, նշված աշխ., էջ 198։

յական և բաղճյուսական հարադրություններից), շարահյուսական կապակցություններից և այլն։

7. Կրկնավորներով կազմված կցական բարդություններ

§ 414. Կրկնավորներով կազմված կցական բարդությունները լինում են անվանական և բայական։

Ա) Անվանական կցական կրկնավորներ

§ 415. Անվանական կցական կրկնավորները բայական կցական կրկնավորներից անհամեմատ ալբելի թիշ են և եղածների մի մասն էլ կոնկրետանում է բառակազմական ձևայիննրով։ Անվանական կրկնավորներից առաջացած կցական բարդություններից են՝ զեղզեղ, ձեգձեզուն, կեկեկ, կսկիծ, չուչուած, բըբըծ, պեսպես, պսպսուն, պուպուտ, քարքարա, խախարա և այլն։

§ 416. Անվանական կրկնավորներով կազմված կցական բարդություններում հանդես են գալիս հեշտադրական ասլախի կրկնայիններ, ինչպիսիք են բաղաձայնների և ձայնավորների փոփոխությունը, հեշտանների հափելումը կամ կորուստը և այլն. ինչպես՝ բարբառ (բառ + բառ), քրքրա (թիռ + թիռ), խուժղում (խուժ + խուժ), կսկիծ (կիծ + կիծ), լեվելցուն, կափկանաշ, կասկամիք, նապաշտալ, նեփնեմակ, շիփշիտակ, միսմեմակ, սեփես, նապեղ, դադար (դար + դար), զափառարկ՝ բեկբեկ, երեբ(ուն)՝ և այլն։

§ 417. Ժամանակակից հայերենը ունի նաև հին հայերենից ժառանգած անվանական կրկնավորներով կազմված բարդություններ, որոնք թեև ձևով նման են խականական բարդություններին (ունեն ա ռոդակալ), սակայն ըստ էության կցական կրկնավոր բարդություններ են. ինչպես՝ զուկազուկ, դեզադեզ, բարձրաբարձր, խախար (սեռեր են երկրի հիմունքները նազելիս, Բայց իմ սերը խարխար է նրանցից։ Բարձր են երկրի ձեղունները նազելիս, Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից», Բու., Հավերժական սերը), ժանտաման, ժանտամեք (սես եկա զզուշացնելու ժանտամանը

¹ Այս և նախորդ բառերում բարդ անվանների առաջին բաղադրիչի կրկնորդ բաղաձայնի փոփոխությունը և վերածումը գերազանցապես փ և ս բաղաձայնների, իմաստի օտարակցում է հազորդի հեշտու բարդությունների։

² Անվանական կցական կրկնավոր բարդություններ են կազմվել նաև մի քանի բայարձաններ։

հանանքները», Ստ. Զորյան, Հայոց բերդը, հաստարես
(«Բու հաստարեստ սյուն ես դնում հայոց տանը», Սև, Մխիթար
Սպարապետ), մաքամախ (եծ), մեծամեծ, նոգանո, չա-
րաչար, ընծաքեծ և այլն:

Հիշյալ բարդություններում նույնպես, ինչպես և առհասարակ
կրկնավոր բարդություններում, բարդություններն փրենց ընդհա-
նոր բառական իմաստով արտահայտում են կրկնվող անկանի
իմաստի աստեղացում:

Ր) Բայական կրկնավորներ

§ 418. Բայական կցական կրկնավորները հայերենում մեծ
թիվ են կազմում և զբաղեցրած են իմաստային ու քերականական
կախուն օրինաչափություններ:

§ 419. Պրոֆեսոր Ա. Աբրահամյանը կրկնավոր կցական բա-
յերը բաժանում է երկու շերտի՝ եին և նոր³:

Հին կամ ասաջին շերտի մեջ մտնում են այն կրկնավորները,
որոնք զալիս են զարարից և գործառում են նաև ժամանակակից
զբաղան լեզվում, իսկ նոր կամ երկրորդ շերտի մեջ մտնում են
նշանք, որոնք թափանցել են բարբառներից և տարածվել ու նույն-
պես կախմանցել են զբաղան լեզվում:

§ 420. Հին շերտի կամ զարարից եկած կցական կրկնավոր-
ների մեջ առանձնանում են երկու տեսակի կրկնավորներ.

ա) անփոփոխ կրկնավորներ. որոնք այն կրկնավորներն են,
որոնք արմատները ձևական կամ արտաքին հնչյունական կազմի
փոփոխություն չեն կրել. ինչպես՝ ալլալել, աբաբաբել, բեկբեկել,
գեղգեղալ, երեբալ, խոլխոլել, կերկերել, կափկափել, ձգձգել,
շողշողալ, ողողել, սոսոսաել, շարշարել, բալբալել, փափափել,
փողփողել, ԼալԼալել, ԲեԲել և այլն:

Ելլված բայերը բառակազմական և քերականական իմաստնե-
րով միևնույն նշանակությունը չունեն: Սրանցից նրանք, որոնք
զուգահեռաբար ունեն իրենց ոչ կրկնավոր տարբերակները, ասա-
վել ցայտուն կերպով են արտահայտում գործողության կրկնու-
թյան կամ թաղմատությունից զազափարը (հմմտ. բեկբեկել,
ձգձգել, շողշողալ, սոսոսաել և այլն), իսկ այն բայերը, որոնք

չունեն համապատասխան ոչ կրկնավոր արմատները և ժամանա-
կակից հայերենում պահպանված են միայն կրկնավոր ձևով,
աստվել նվազ են պարունակում բաղմատադարձության կամ կրկը-
նության գաղափարը: Սրանցում ավելի ընդգծված է գործողության
աստեղացումը և ինտենսիվությունը նշանակությունը: Այսպես՝
աբաբաբել, երեբալ, խոլխոլել, ողողել, շալբալել, ԼալԼալել,
ԲեԲել, փողփողալ և այլ բայերի ոչ կրկնավոր արմատները
ժամանակակից զբաղան հայերենում կենդանի չեն՝ և պահպանվել
են միայն կրկնավոր ձևով, իսկ մի քանիսն էլ թեև կենդանի են.
ինչպես՝ ալլ (ալլալել), շար (շարշարել), գեղ (գեղգեղալ) և այլն,
սակայն կրկնավոր ձևով բառիմաստի որոշ փոփոխություն են կը-
րել և հեռացել իրենց ոչ կրկնավոր արմատներից:

բ) Հնչյունափոխված կրկնավորներ՝ աղավաղել, ահամարհել,
բարբառել, գրգռել, ղուգրել, քրքրվել, ծածանել, կաղկաղել, կազ-
կանել, կաշկանդել, կարկառել, կտրկառել, հայբայբել, հեծե-
ծել, հեկեկալ, հոտոտել, հուրջուրել, շոշափել, պապանել, սասա-
նել, սատանել, փարաբել և այլն:

§ 421. կրկնավոր բայերի արմատների հնչյունափոխությունը
լինում է կ' ասաջին արմատի ներքում. ինչպես՝ բարբալել (բաբ-
բաբել), ծածանել (ծան-ծան-ել), կաղկաղել (կազ-կազ-ել), պա-
պանել (պան-պան-ել), տատանել (տան-տան-ել), փոփոխել
(փոխ-փոխ-ել) և այլն, կ' երկրորդ արմատի ներքում. ինչպես՝
հայբայբել (հայթ-հայթ-ել), հեծեծալ (հեծ-հեծ-ալ), հեկեկալ
(հեկ-հեկ-ալ), հոտոտել (հոտ-հոտ-ել), փարաբել (փար-փար-ել)
և այլն:

Կրկնավոր կցական բայերի մեջ հնչյունափոխություններ են
լինում նաև տարմանություն օրինքով (զերազանցապես ասաջին
կարգում). ինչպես՝ բարբալել (բաբ-բաբ-ել), կաղկանել (կան-
կան-ել), շոշափել (շափ-շափ-ել), բարբառել (բար-բար-ել),
գրգռել (գր-գր-ել), կարկառել (կար-կար-ել) և այլն:

§ 422. Բացի հնչյունափոխությունից, կրկնավոր բայարմատ-
ները կարող են ձևափոխվել նաև հնչյունների հավելմամբ. ինչ-
պես՝ աղավաղել (աղ=ալլ—աղ-ալ-աղ-ել), ահամարհել

³ Սրանց մեծ մասի արմատները դեռևս զարարում էլ կենդանի չլին (տե՛ս Ա.
Ա. Աբրահամյան, Ելլված աշխ., էջ 139):

(ար՝ + ամ + արճ + ել)։ Վերոհիշյալ բայերի մեջ, մասամբ ձևական փոփոխության, մասամբ արմատների գործածական շինելու պատճառով, մեծ մասի կրկնության կամ բազմապատկության նշանակությունը միազնված է և չի դիտակցվում, իսկ մի շարք արմատների էլ, թեև կենդանի են, սակայն կրկնավոր հարաբերությանը բառնաձևի փոփոխություն են անըստ իրենի։ Ինչպես՝ կարելի-կարկանուկ, զարելի-զաղարել, բովել-բորովել, բախել-բարախել և այլն։

Երբ շեքտի մեջ մտնող կրկնավորները և՛ իմաստային, և՛ ձևական կողմերով տարբերվում են հին շեքտի կրկնավորներից։ Սրանք իսկական կրկնավորներ են, որոնց արմատները կենդանի են մեր լեզվում և թեև կրկնվելով մասամբ Ներշնչանալու փոփոխության ենթարկվում են, սակայն դա արտաքին Ներշնչանական կազմի կամ իմաստի մեծ փոփոխություն չի առաջացնում։ Կրկնավորների այս խումբը մտաք է գործել բարբառներից և ակտիվ ու կենսունակ է ոչ միայն բանավոր խոսակցական, այլև գրական հայերենում։ Սրանցում Ներշնչանալու փոփոխությունը կատարվում է գերազանցապես արմատի ձայնավոր Ներշնչանալու, որոնցից ա, ե, ո Ներշնչանալու բարբառային կրկնությունը կատարվում է և՛ ը, ինչպես՝ քափ-քրփել, խափափել, ծակծկել, ծամծմել, կաղկալել, մաղմղել, մառմարել, պաշպշել, վազվզել, վախվախել, ցուցլալ, փոփոխել, Բաշքըշել, Բամսել և այլն։

§ 423. Հիշյալ բայերից շատերը զուգահեռաբար ունեն նաև իրենց Ներշնչանալու փոփոխած ձևերը. ինչպես՝ ծնկծկել-ծնկնծկել, զոզողալ-զոզողալ, ցուցլալ-ցուցլալ, բարբել-բարբարել, վախվախել-վախվախել, քոկոկել-քոկոկել, փոփոխել-փոփոխել և այլն։

Վերոհիշյալ տարբերակներից առաջինները թեև բարբառային են, սակայն են պարունակում, սակայն ունեն գործածության մեծ որոշր (ինչպես վերևում տեսանք) և քնդորկել են փաստորեն կրկնավոր բայերի գրալի մասը։ Սրանցից արմատի ա ձայնավորի ը-ի Ներշնչանալու փոփոխությունը բայական կրկնավոր կցական բարբառային կրկնությունը կրկնավոր քնդանուր օրինակաբանություն է դարձել։ Ընտանալու ար աշխարհաբարում (էլ շատերը գրաբարում) գործածվող այս

կարգի շատ բայեր ժամանակակից հայերենում կրել են հիշյալ (ա > ը) Ներշնչանալու փոփոխությունը (հմտ. հին հայերենի վազվզել, վախվախել—ժամանակակից հայերենում՝ վազվզել, վախվախել և այլն)։

§ 424. Ա, ե, ո ձայնավորների՝ կրկնավոր բարբառայիններում կրած փոփոխությունները ունեն այն յուրահատկությունը, որ հանդիպում են միայն հիշյալ բարբառայիններում, այսինքն այլ բարբառայիններում ազգային փոփոխություն չեն կրում։

§ 425. Այն ձայնավորները (ու, ի), որոնք շեքտի տեղափոխությանը առհասարակ փոփոխվում են (ու > ը, ի > ը), այստեղ փոփոխվում են և՛ առաջին, և՛ երկրորդ բաղադրիչներում. ինչպես՝ կցկցել, մամտալ, ծամոնել և այլն։

Այսպիսի բարբառայիններում քիչ շափերով տեղի է ունենում նաև բաղաձայն Ներշնչանալու փոփոխություն (արմատի առաջին կորի բաղաձայնի մ և բ Ներշնչանալու վերածմամբ). ինչպես՝ խրքրքել, խզզզել, խնզնզալ, ծամոնել, կցցցել, Բամսել և այլն։

Ք ա մ ա յ ն ա կ ա ն բ ա յ ա կ ա ն կ ր կ ն ա վ ո ռ ն ր

§ 426. Բնաձայնական կրկնավորներով կազմված կցական բարբառայինները ևս բավական մեծ թիվ են կազմում ժամանակակից հայերենում։ Բնաձայնական կրկնավորները թեև նվազ կենսունակությունը գործածվել են հայերենի զարգացման ուղի շրջաններում, սակայն սրանք, ինչպես վերոհիշյալ բայական կրկնավորները, ավելի բնորոշ են բարբառների, որոնցից և անցնում են գրական գեղարվեստական լեզվին։

Բնաձայնական կրկնավորները կազմվում են բնության ձայների նմանվող Ներշնչանալու կամ վանկերի կրկնություններից և արտահայտում են գործողության սաստկության, բազմապատկության իմաստ,

Բնաձայնական կցական կրկնավորներից են՝ բխրխալ, բըրբըրալ, զլզլալ, դմփփալ, զոզոզալ, զոզոզալ, զոմոմալ, գլզլալ, դմբմբալ, դմփմփալ, դխդխալ, զոզոալ, դմփմփալ, զնզնզալ, թխթխալ, թրմթրալ, թնթնթալ, թշթշալ, թոթոալ, լխլխալ, լփլփալ, լբլբալ, խշխշալ, խոխոալ, ծլլլալ, ծվվվալ,

5 Այս շեքտի մեջ կարող են լինել քիչ թվով նաև հին հայերենում գործածված բառեր. ինչպես՝ վախվախել, կաղկալ (Ինչ որ անը կաղկալ կարալը, Վե, Գրք կենության և այլն), սակայն իրենց համապատասխան Ներշնչանալու փոփոխությանը զգալի են բարբառներից և հատուկ են վերջիններին։

6 ՏՃ՝ Ա. Արամամյան, նշված աշխ., էջ 147։

կլկլալ, կմկմալ, կշկշալ, կոկոալ, հոհոալ, ճկճկալ, ճվճվալ, ճրճրալ, ճղճղալ, ճոճոալ, մշմշալ, մրմրալ, մոմոալ, նվնվալ, շրշրկ-
շրշրկալ, շնկշնկալ, շփշփալ, շռշռալ, շրնկշրնկալ, սղսղալ, սրնկ-
սրնկալ, սրմսրմալ, սվսվալ և այլն:

Բայցական՝ մանավանդ բնածայնական կրկնավոր կցա-
կանները, կալով բարբառներից, առավելապես կենսունակ և
բնորոշ են խոսակցական լեզվին, սակայն դրական (մասնավորա-
պես զեղարվեստական դրականություն) լեզուն և չի խորշում դը-
րանցից և լայնորեն օգտագործում է խոսքին հյուսիկություն, աշ-
խուսություն և կենդանություն տալու նպատակով. այսպես՝
«Շնկշնկալով հովն է փշում զով Բիկզյուխ լանջիբից» (Ըս., Երկեր):

2. Հարադրական բաղդություններից առաջացած
կցական բաղդություններ

ա) Հարադրական բայերից առաջացած կցական բաղդություն-
ներ.

§ 427. Այս ճանապարհով առաջացած կցական բաղդություն-
ները համեմատաբար ավելի քիչ են, քան հարադրական բար-
դություն մյուս տեսակներից առաջացածները. դրանցից են՝
գործածել, ակնածել (ակն ածել), ակնկալել (ակն կալել), բան-
ասելու (բանս արկանել), կիստել, վերլուծել, վերածել, մեքենել,
քնածել և այլն: Սրանց մեծադույն մասը կցական բաղդության է
վերաժվել զոռես դրաբարում և ժամանակակից հայերենում
առանձին գործածություն չունի իրեն հարադրական բաղդություն.
օրինակ՝ հանձնաբանել, ակնկալել, ակնածել, քնածել, վերածել՝
և այլն:

Վերջերս կցական բաղդության է վերաժվել նաև վեր հանել
հարադրական բայը, որը գործածական է և՛ հարադրական, և՛ կը-
ցական բաղդության եզանակով. ինչպես՝ «Փոսան բանաստեղծի
դրական ժառանգությունը վերհանելու և արժեքավորելու հարցը...»
(ՍԷ) և այլն:

Սակայն հարադրական բայերի հիմքով հաճախ ում և

7 Վերջինս հարադրական եզանակով գործածական է բարբառներում և կցա-
կան բաղդությամբ բառային այլ իմաստ է ստացել:

ուրյուն առարկայացնող ամանցներով ստեղծվում են մի շարք
կցական բաղդություններ, որոնք երկրորդ բաղադրիչները բայա-
նուն գոյականներ են. ինչպես՝ բացքում, արհամում, լույսըն-
ծայում, ձեռնեղում, մեքենում, մասհանում, առաջխաղացում,
առաջխառն, իրաբացում, վրեժխորություն և այլն:

բ) Քաղհյուսական հարադրություններից առաջացած կցական
բաղդություններ.

§ 428. Հարադրական բաղդություններից ամենից շատ կցա-
կան բաղդությունների վերածման հակված են բաղճյուսական հա-
րադրությունները. նկատելի է, որ կցականության են ձգտում հաս-
կապես այն բաղճյուսական հարադրությունները, որոնք միասին
վերցրած նոր կամ փոխաբերական իմաստ են արտահայտում:
Այդպիսի բաղդություններից շատերը արդեն վերածվել են կցական
բաղդության և առավելապես հանդես են գալիս այդ ձևով. ինչպես,
օրինակ՝ անցուցարձ, անուցի, արտվախ, այրուբե՛ն, արտվախ-
առնամախ, անտուր, առնծախ, առավանտո՛ւ, ատուլիս, աղու-
զարդ, բառուբան, բացուլտուլ, գունդովի՛իկ, գոռումգոռում, եռե՛իփ
(«նա պետք է հանքեղհանուր քայի իր շուքը եռե՛իփով կյանքի
հետ», ՄԷ), զարտիստ, դեռույնե, Ելէլէ, կումուտ, եռուգե՛ն, եր-
բե՛նիկ, բախուրում, բուսիլիւմե՛ն, բոնուբոն, լացուված, լուրուր,
լուսումուք (նաև մութուրուս), լուսումու՛նը, խաղուպար, խեղճուկը-
բակ, խոսուզուրաց, խորդարուզ, խոշովտարե, ծակուծակ,
կարգովանե՛ն, կայուկուտ, կերուլում, հարումա՛շ, հարցուցարձ,
հարցուպարում (ծե), հատուկե՛նտ, հողուչուր, ձեռուտ, մեկու-
նար, միե՛նուար, մեկումը, նիստուկաց, շարժու՛ն, շուսումուտ,
շուրցումա՛մ, շեմուշում, շաղուվուր, շարդուխուրդ, շարդուկու՛ր,
սաստուխու, վարուցանե՛մ, տակուլուի (ՔՐուրը՝ տակուլուի հրա-
ցանավոր ու նետածի՛ց տասնու՛թ հաղորս, Սե, Մխիթար Ապարա-
պետ), տակնուլա՛ւ, տունուտե՛ղ, ցանուցիւր և այլն:

§ 429. կցական բաղդությամբ են արտահայտվում նաև հայե-
րենի բարդ թվականները՝ տասնմեկից մինչև իննսունինը (բացառ-
յալ տասնյակների անվանումները). ինչպես՝ տասնե՛կ, տասներ-
կու, հառասունե՛ինգ, հիսունվեց, յոթանասունուր, իննսունչուս
և այլն:

3. Շարանյութական կապակցություններից առաջացած կցական բարդություններ

§ 430. Կցական բարդությունների զոյացման հիմնական աղբյուրներից մեկը շարանյութական կապակցություններն են, որոնք կցական բարդության վերածվելու զեղբրով ևս ինչ-որ շահով պահպանում են իրենց շարանյութական հարաբերությունը:

§ 431. Ըստ շարանյութական հարաբերության բնույթի, կցական բարդությունները լինում են՝

ա) ենթակա-ստորոգյալ կապակցությունից առաջացած կցական բարդություններ՝ ովիկից (ով և լինի), ինչևիցե (ինչ և լինի), որևէ (ով և լինի), ինչևէ (ինչ և լինի), էջմիածին (իջավ միածինք), որևէ, տեղադրմյա և այլն: Մտահցում ով, որ, ինչ, միածին և տեղ բառերը նեկականեր են, իցե, էջ, ուղորմյա բառերը՝ ստորոգյալները:

Այս տիպի կցական բարդությունները հնգվածություն են ժամանակակից հայերենում և զերտվանցապես գրաբարյան կազմություններ են, որոնցում շարանյութական կապը լրիվ միազնված է: Այս տիպի կցական բարդություններից առաջացումը չի դարձնել գործուն միջոց ժամանակակից հայերենի բառակազմության համար:

բ) Ուղղիչ-որոշյալ կապակցությունից առաջացած կցական բարդություններ: Այս տիպի կցական բարդությունները ժամանակակից հայերենի բառակազմության մեջ ամենակենսունակն են: Իբրև որոշիչ հանդես եկող մի շարք խոսքի մասեր, ինչպես՝ գոյականներ, անձականներ, սիրանուններ և թվականներ, որոշյալների հետ առավել սերտ միանալով՝ արտահայտում են մեկ բառական նստու և կազմում կցական բարդություններ՝ պահպանելով որոշիչային կապակցության շարանյութական հարաբերությունը, ինչպես՝ այդչափ, այդտեղ, այնինչ, այնտեղ, այսինչ, այսչափ, այսֆան, այսու, այստիեակ, գույզը (սփարթալով գեղեցիկ հաշակով մտադրված այդ գույզէր, սիրող լցվում է ուրախության, ՍՇ), երեխաուսանց, երեխաբանի, երեկոզմանի, երկուստուսանց, երկուստեղանի, չուրջխախի (սճեստ մտորդի չուրջխախի, ՎՏ), կառվիրաց, կեսգիշեր, կեռիք, կեսու, կինարմատ, մայրուղի, մայրցամաք, մեկակոչ, միգրուց, միեկիտրկա (ԳԲԲ), նույնչափ, նույնքան, որպես, որչափ, պարզորոշ, քանզույում, ամաղեղ, տղաժաղը, փակույի, փակոզակ, Շեճգավիք և այլն:

Այս հարաբերությամբ հանդես եկող կցական բարդությունների մի մասը ունի իր հնչյունափոխված տարրերակները, որոնք արդեն իսկական բարդություններ են, օրինակ՝ երկուստուսանց և երկուստեղանց, երկուստեղանի և երկուստեղանի, երկուստեղանի և երկուստեղանի, երկուստեղանի և այլն:

Որոշիչ-որոշյալի կապակցության հիմքով, հատկապես վերջին տասնամյակներում, հաճախ են գոյանում կցական բարդություններ որոշյալի անանցմամբ. այսպես՝ Մեծալոռ Արևիկ—մեծալոռարևելյան, կարմիր բանակ—կարմիրբանակային, Առաջավոր Ասիա—առաջավորասիական, Հեռավոր Արևելք—հեռավորարևելյան, բարի դրացի—բարի դրացիական, բարիդրացիություն, թեթև ապետիկա—թեթևապետիկական, մանր բուրժուա—մանրբուրժուական, սպիտակ դժարգիս—սպիտակզժարգիսական, միջինասիական, նյութականության, հարավկուրեական, մայրամկյան (նաև մայրամեկը) և այլն:

գ) Հասակացուցիչ-հասակացյալ կապակցությունից առաջացած կցական բարդություններ: Այս տիպի կցական բարդությունները խիստ սակավաթիվ են և հայերենում գործուն օրինակաբանություն չեն: Հասակացուցիչ-հասակացյալ կապակցության հիմքով առաջացած կցական բարդություններից են Եղբրուդի, հուրդբայր, մուրեղայր, պատվոցի, Վանանո, տանտեղ, տանախիե, տանտիդանի, Բեռուդի և այլն: Սովետական շրջանում կազմվել է նաև Վերիբե (սՎեսոր էր, երբ հասանք Վերիբեն», Ավ.) հաստի անունը: Սրանցում բաղադրիչների շարանյութական հարաբերությունը պահպանված է:

դ) Շարանյութական հնցացած և այլ կապակցություններից առաջացած կցական բարդություններ: Սրանցից են՝ այնուամենայնիվ, այնուամեղեմ, անբըզմեջ, առայսու, առնապարակ, առաչիկա, այլև, բայցևայնպես, բացառյալ, բերանխիվայր, գլխիվայր, գիրկընդխառն, դեմքիմաց, դեմնանդիման, երեսնիվայր, գաղբափ, րեկուզե, ի միջի այլոց, ինկնստիեման, խառնիխառն, խառնիհաղանջ, մեկբըզմիտ, մեծիման, միառամմանակ, միմիայն, միանգամից, ինեվալուրց, պառնիվո, չուրիբաթ, որովհետև, փոքրիշան, փայրիվեր, օրնիրուն և այլն:

§ 432. Սրանց մեջ են մտնում նաև այն կրկնավորները, որոնք միանում են որևէ նույնական վերջավորությամբ, հին նախորդ

(համախառն նախորդով, և՛ հոլովական վերջավորությամբ), այլև ու շաղկապով, օրինակ՝ սպեկափ, բացկերպաց, բերեկերան, գույնը-գույն, դարեղար, դոնեզուտ, դեմուդեմ, երեսառեես, բաժնեբաժի, ժամանոժամ, լուսելուս (և՛ շարժմ սպասք լուսելուսին զուրս էր դալիս խաչակերթում գոտի օղորոքս, ՍՂ), լիուլի, մտեմտա, մեջմեջ, մեկեմեկեր, մեկամեկ, ծովծով, կուզկուզ, կամակամ, հագրվեց, որդորդի, չոբեչոբ, պատեպատ, պեկեպուեկ, սաբեսար, վագեվագ, վերջվերջ, տակտակ, տարեցտարի, տեղեուտեղ, տեհաուե, ԳաբեԳա, օրստօրե և այլն:

4) Ռեկե քվակեմով, ու շաղկապով և կես բառի բաղադրությամբ կազմված կցական բարդություններ. ինչպես՝ մեկուկես, երկուսուկես, երեկուկես, ճիգուկես, վեցուկես, տասնմեկուկես, քսաներեկուկես, երեսուցներեկուկես և այլն:

ՈՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

§ 433. Իսկական բարդությունները կազմվում են հիմնական ձևայինների, բառերի և հիմքերի (բաշահիմքերի) բաղադրումից:

Իսկական բարդությունները հայերենում բաղադրված են մեծ մասամբ երկու և երեք բաղադրիչներից (ճմմտ. լրագրավճմառ, հեռախոսակաշան, ապրանքաշրջանառություն և այլն). կազմվում են նաև բառանոցում բաղադրություններ (ճմմտ. հեռադիսլույսաշար, աշգեպտղարանշարբարով և այլն), որոնք ժամանակակից հայերենում մեծ թիվ չեն կազմում:

Կցական բարդությունների հետ համեմատած՝ իսկական բարդությունները վերացությունն առավել քարքար ստոխան են:

§ 434. Իսկական բարդությունների համար բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները. ալթրադիցացած են մեկից ավելի հիմնական ձևայիններից, բառերից և հիմքերից, բ) բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը ուղակիորեն զրևերով և չէ և երևան է դալիս բարդությունը վերլուծելիս, գ) բնորոշ է հոդակապի գործածությունը և ճեղքումափոխությունը, դ) կարող է արտահայտել բաղադրիչներից ավելի խմատ, ե) կարող է արտահայտել մեկից ավելի շարահյուսական հարաբերություն:

Փակուղի, կեսօր, հորեղբայր և այլ կցական բարդությունների բաղադրիչների կապակցության մեքանիկական կապը հիշյալ բարդությունների մեջ առկա է, քանի որ հարադրական եղանակով էլ նրանք մեկնույն շարահյուսական հարաբերությունները (որոշիչ-որոշյալի, հասկացողիչ-հասկացյալի) արտահայտում են և իրենց բաղադրիչների արտահայտած խմատից ավելի խմատ չեն պարունակում: Իսկական բարդությունների մեծ մասը ավելի խմատ է պարունակում, քան բաղադրիչների արտահայտած խմատն է: Այս, այսպես կոչված, «ավելի» խմատն էլ կարող է ունենալ տարբեր աստիճանավորումներ: Այսպես՝ կան շատ թվով բարդություններ, որոնք իրենց բնոհմանոր բառային խմատներով շատ չեն տարբերվում իրենց բաղադրիչների խմատներից, թեև անսպախման ինչ-որ շարժով ավելի խմատ արտահայտում են, ինչպես՝ բանիմաց (բան խմացող), բեկապ (թեի կապ, թե կապող), լայնեզ (լայն եզր ունեցող), ձայնասփյուռ (ձայն սփռող), հագրովս (հաց թխող), մեծանոցի (մեծ հողի ունեցող), երկրեւն (երկու բեւն ունեցող), երկկենցաղ (երկու կենցաղ ունեցող), բազմակալ (բազմակալ ունեցող) և այլն:

Այսպիսի բարդությունների շարահյուսական կապը ավելի ճեշտ է վերականգնվում:

Սրանց կողքին քիչ չեն նաև այն բարդությունները, որոնք արտահայտում են իրենց բաղադրիչների խմատներից տարբեր նոր խմատ. այսպես՝ շրջապատ նշանակում է ոչ թե շուրջը պատածը, այլ շուրջը գտնվող միջավայրը կամ տարածությունը և մարդիկ, շրջապահ՝ ոչ թե շուրջը դառնալը, այլ փոփոխություն, փոփոխվելը. նակատաղի՝ ոչ թե նակատի դիր, կամ նակատին զրկածը, այլ առհասարակ մարդուն սահմանված բախտը, վիճակը. կարեւորը լուր նշանակում է ոչ թե կաթի աղբյուր կամ կաթ բերող աղբյուր, այլ կաթի նման սպիտակ, զուգալ շուր ունեցող աղբյուր, բեկախիլ նշանակում է ոչ թե թեի կոխիլ, այլ մտնել. ձեռնամուխ՝ ոչ թե ձեռքը մխել, ձեռքը մտցնել, այլ սկսել, ձեռնաբեկել. բեղաճոթ նշանակում է ոչ թե թունդ անող անոթ, այլ թնդացող գործիք՝ զենք, հաղագունը չի նշանակում հողի դուռը, ինչպես բացված կապակցություն խմատն է թելագրում, այլ՝ երկիր մուրաքիլ՝ երկրագունդը:

Նեռաբար, բարդության՝ բաղադրիչներից ավելի կամ տար-

8 Ճմմտ. ալթրադից (ալթր բացվելը և ալթր բացվելու ժամանակը՝ վաղաազգայն), քեռտակուտ (քեռտեց կուած և քեռտակ կուտ, կուած և այլն):

բեր իմաստ արտահայտելը՝ իսկական բարդության լուրահատկություններինց մեկն է:

§ 435. Իսկական բարդության արտահայտած շարահյուսական հարաբերության իմաստը հաճախ միացնում է հոգակապի և հրնշյունակությունից միջոցով:

§ 436. Նոր բաներ կերտելու կենսունակությամբ և ակտիվությամբ իսկական բարդությունները սիրում են միայն անանցավոր բառերին: Իսկական բարդության եղանակով աստաշացած բաների մեծ մասը, հատկապես բարդության կառուցվածքային կաղապարների նմանակությամբ աստաշացածները, հանդես են գալիս ոչ թե եղակի ձևով, ինչպես հարաբարական և կցական բարդությունները, այլ բառախմբերով (հմմտ. շքերթ, չվերթ, ուղերթ, վրաներթ և այլն): այդպես են նաև անանցավոր բառերը (հմմտ. լողորդ, վաղորդ, վարորդ, մուրճորդ, նետորդ, մրճահորդ, ծանրորդ և այլն):

ՈՒՊԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՋԻՆ ԲԱԿԱՐԻՆԸ

§ 437. Բարդության առաջին բաղադրիչը լինում է հիմնական ձևությամբ կամ բառ, որը գրվում է ուղիղ ձևով, այն բարդությունը բացելիս է միայն արտահայտում դանազան շարահյուսական հարաբերություններ, այսինքն՝ դանազան հոլովածների իմաստներ: Բարդության առաջին եզրի մի շարք արմատների կամ բառեր իրենց ձևաբանական և հնչյունական համակարգի մի շարք կողմերով կապված լինելով հին հայերենի հետ, ժամանակակից հայերենի բարդության համակարգում հանդես են բերում լեզվական տարբեր լուրահատկություններ ու օրինաչափությունները, Այսպես՝

ա) Բառակազմության մեջ անեղական բառերի է վերջավորության անկման երևույթը, որ հին հայերենում կաշուն օրինաչափություն էր, նմանակության օրինքով պահպանվել է նաև ժամանակակից հայերենում, շնայած որ ժամանակակից հայերենում վերահիշյալ անեղական բառերը կորցրել են իրենց հոգնակաբյան իմաստը. ինչպես՝ աշխատակց, խոստ-խոստվող, խոսակցու-

Չ ՏԿ՝ Մ. Աբելյան, նշված աշխ., էջ 195—198:

բյուն և այլն. խելք-խելամիտ, խելագար, խելանեղ, խելազակաս և այլն. կտախ-կտախվարել, կտախմատույց, միտխ-մտածել, մտաբերել, շնորհխ-շնորհացատ, շնորհագիլ և այլն: Սակայն բառաբարդության մեջ առաջին բաղադրիչների եղակի թվի ուղղակիանը վերցնելու օրինքով, շատ բարդություններում և անանցավոր բառերում է-ն պահպանվում է Այսպեսով ասացվում են հին անեղական բառերով բաղադրված բառերի է մասնիկով վերջացող և առանց է-ի տարբերակներ, ինչպես՝ աշխատակց, աշխատ, բայց և՛ աշխարհ, աշխատի, աշխատակ, աշխատակ, աշխատակ, պարտապարտ, պարտավորակ, պարտատու, բայց և՛ պարտապարտ, կուրծխ-կրծուսի, կրծկա, բայց և՛ կրծավանդակ, կրծակն և այլն. խելխ-խելազակաս, խելխորույս, խելամիտ, բայց և՛ խելամեծ և այլն:

բ) Որե՛ք բաղաձայնի հաջորդող է, ր, ղ, բաղաձայն հնչյուններով վերջացող մի շարք բառեր (հմմտ. աստղ, ակն, եզր, կայսր, ոտն, սիրմն, տարր և այլն) հին հայերենի բառաբաղադրության մեջ իբրև առաջին բաղադրիչներ վերցվում էին եղակի թվի և՛ ուղղական, և՛ սեռական հոլովածներով¹⁰, Այսպես՝ ակն-ակնակալու, ակնանգարդ, ակնատես, բայց և՛ ակնդես, ակնբախ, ակնբարք, ակննախ, ակնկալություն, ակնադարձ և այլն. աստղ-աստղաբաշխ, աստղաբար, բայց և՛ աստղաբարդ և այլն: Ժամանակակից հայերենում առավելապես հանդես են գալիս վերջիններիս ուղղական հոլովածներով բաղադրությունները. ինչպես՝ աստղափողություն, աստղափղիկ և այլն: Սակայն վերահիշյալ մյուս բառերը բարդության մեջ հանդես են գալիս ուղիղ ձևով, այսպես եզր, եզրագիծ, եզրակցաբյուն, եզրանագում, տարր-տարրառույում, տարրաբանություն, սերմն-սերմնացան, սերմնանան¹¹ և այլն:

¹⁰ Այս և նախորդ կետի, այն բնօրինակում առաջին բաղադրիչ նաև կապված ընդ լուրահատկությունները գրանցվում են նաև անանցավոր բաղադրություններում. ինչպես՝ միտխ-մտածոր, մտավորական, հոսխ-հոսեղ, ակնակնակալու, շնորհխ-շնորհալի, առն-առնալոյիկ, անուն-անկանակալ և այլն:

¹¹ Խոսքը միայն բառերի բարդության մեջ ունեցած զրոծատության մասին է, քան որ անանցավոր բարդության մեջ որևէք վերցվում են սեռական հոլովածներով. ինչպես՝ սերմն-սերմնակն, կայսր-կայսրական, տարր-տարրք, եզր-եզրք (այս ձևով կա նաև իբրև երկրորդ բաղադրիչ, հմմտ. մովիզերք, եզրեր և այլն):

Ուն բառը ժամանակակից հայերենում, վերջում է ուղղական հոլովածով, այսպես՝ ունակալ, ունաման, ունանաբել, ունանտ, ունեզուրյուն, ունամայն, ունախոտը (բարբ.) և այլն, որոնց մեծագույն մասը այն ձևով կար նաև հին հայերենում: Բացառություն է կազմում ստանալոր ձևը, որ հին հայերենում նշանակում էր սահով ման կեղծ, աշխարհաբարում բարխոտափոփոխությանը ստացել է ում ունեցող շափածո իմաստը և գործածակում է միայն այս ձևով:

Աչուն, գարուն, անուն բառերով հին հայերենում և նրա նմանակությամբ նոր հայերենում ու նրա արդի փոխում կազմվել ու գործածական են միայն հոգակի թվի սեռական հոլովածներով կազմված բարդությունները: Ինչպես՝ աչուն-աչանամուտ, աչնանացան, գարուն-գարեանացան, գարեանամուտ, անուն (անուան) անվանակոչություն, անվանաբեր, անվանաբեկ և այլն:

Հայտնի է, որ նախորդող որևէ բաղաձայն հնչյուն ունեցող և ն (ը գաղտնավանկով) բաղաձայնով վերջացող հին հայերենի մի շարք բառերի վերջին ե-ն ժամանակակից հայերենում բնիկ է օրինակ՝ անձն-անձ, ափն-ափ, արեգակն-արեգակ, աղեղն-աղեղ, սանդն-սանդ, աջոյամ (այժեամն)-այժամ, բուռն-բուռ, դագաթն-դագաթ, գառն-գառ, զուռն-զուռ, եղն-եղ, եղյամն-եղյամ, եղեգն-եղեգ, Թուռն-թուռ, լինն-լին, ժիժենն-ժիժեն, կաթն-կաթ, կալծայն-կալծակ, կամն-կամ, կողմն-կողմ, հարուն-հարս, հիմն-հիմք, հյուսն-հյուս, ձևեն-ձև, ձուկն-ձուկ, մատն-մատ, մասն-մաս, մուկն-մուկ, նուռն-նուռ, շուրթն-շուրթ, ողն-ող, օսպն-օսպ, որդն-որդ, սառն-սառ և այլն: Վերահիշյալ բոլոր բառերը բարդության առաջին կողմով վերականգնում են ն բաղաձայնը, այսպես՝ անձն-անձանակից, անձուկեր, անձուրաց. սանդ-սանդանձ, սանդեագործ. աղեղ-աղեղանձ (նաև աղեղանձ). բեռ-բեռնակիր, բեռնաթափ, բեռնատարություն. եղեղն-եղեղանձոր. Թուռ-Թուռորդի, լին-լինաբնակ, լինանձին, լինապագաթ, լինապար. կողմ-կողմնակից, կողմնակցաշտ, կողմնակից, կողմնացույց. կաթն-կաթնաղբյուր, կաթնասամ, կաթնատու. հիմ-հիմնահատակ, հիմնադիր. ձև-ձևոներեց, ձևոսունայն, ձևանածու, ձուկ-Ակնորս, Ակնկիր, Ակնկուլ. մաս-մասնակից, մասնաշյուղ. նուռ-նունաբար. շուրթ-շրթնատամնային. ող-ողնուղեղ, ողնաշար. օսպ-օսպնակա-

ձև, սկիզբ-սկիզբանձև, սկիզբնաղբյուր. սառ-սառնաղբյուր, սառնաշաբար և այլն:

§ 438. Քանակական պարզ թվականներից յոթ(ն) և ութ(ն) միավորները ուղղական հոլովածանում վերահիշյալ գրականների նման կորցրել են արմատական վերջին և բաղաձայնը, որը որոշ բաղադրություններում վերականգնվում է. ինչպես՝ յոթամյա, յոթամյակ, ութամյա, ութամյակ և այլն:

§ 439. Տասն-տաս(ը) և ինն բանական թվականները բարդության մեջ պահպանում են արմատական և վերջնահնչյունը. ինչպես՝ տասնամյակ, տասնպատիկ, տասներկու, տասնուր, տասնինն, իննամյա, իննուն և այլն:

Մտեր.— Տասն թվականը անանցավոր որոշ կազմություններում (հմտ. տասական), հոգնակիի կազմության մեջ (հմտ. տասեր), այլև փոխանունաբար գործածվելիս (հմտ. տասի, տասին, տասով և այլն), չի պահում վերջին և արմատական հնչյունը:

Այս տեսակետից այլ է ինն թվականը, քանի որ այն ստանց վերջին բաղաձայնի անբարեհունչ է դառնում և իբրև այդպիսին (ին) բառային կոնկրետություն և գործառություն շունի ժամանակակից հայերենում: Բացի այդ, ի տարբերություն նախորդ թվականների, ինն թվականը փոխանունաբար գործածվելու դեպքում էլ հոլովվելու, ինչպես և հոգնակի կազմության մեջ չի կորցնում և բաղաձայն վերջնահնչյունը (հմտ. իննի, իննին, իննով, իննից):

§ 440. Ն բաղաձայնով վերջացող և նախորդող որևէ բաղաձայն ունեցող բառերից մի երկուսը ժամանակակից հայերենում իբրև կանոն կորցրելով է վերջնահնչյունը, դառնում են կախյալ արմատներ և տարբերակիչ իմաստ են ստանում միայն վերջածանցների շնորհիվ. այսպես՝ հիմն բառը ուղղական հոլովածով զրկվելով վերջին բաղաձայնից, հիմ ձևով ինքնուրույն գործածություն չունի և կոնկրետանում է -ի վերջածանցի շնորհիվ (հիմմ), որով և ժամանակակից հայերենի համար դառնում է ուղղական հոլոված. գրանից էլ հենց կազմվում են հոգնակի և եզակի հոլովածները (հմտ. հիմք-հիմքեր, հիմքք, հիմքին, հիմքից, հիմքով և այլն). դեռ ավելին, հիմմ ձևը դառնում է նաև բարդության բաղադրիչ. ինչպես՝ հիմնակազմիչ, հիմնակազմություն և այլն:

§ 441. Ե վերջնահշտուն ունեցող բառերից հետաքրքիր լեզվական երևույթ է տեղի ունեցնել շրթնէր բարդութիւնս հետ: Այստեղ հայերենի բառարարութիւնն օրենքների համաձայն չուրք բառն է վերջավորութիւնը պետք է պահպանուի (հմտ. շրթնային, շրթնատամնային և այլն), սակայն այն դուրս է բնկել՝ հանդիպելով հաջորդ՝ նույն հեշտունով սկսվող ներկ բաղադրիչին (հմտ. օրն-մաղղում է դրամատուրգ Ժ. Լովհաննիսյանի «Շրթնէր Ա 4-ը», Եր.):

դ) Կյանք (հին՝ կեանք) բառով ժամանակակից հայերենում բառեր են կազմվել հիմնականում այս բառի հին հայցական կենս (<կեանս) հոլովածուով, երբեմն նաև կեն ձևով: Սրանք հայցական հոլովով զրգած խնդիրների և խնդրառու բառերի շարահարաբանական կապակցութիւնն իմաստ արտահայտող բարդութիւններ են. ինչպես՝ կենսաւեր, կենսաբալս, կենսատու, կենսածին, կենսունակ, կենսակից և այլն: Սրանք նմանակութիւնը կազմվել են նաև կենսամաստատ, կենսաշղզ, կենսաձվիտ, կենսաքաշակ, կենսախիճ, կենսապայման, կենսառատ, կենսուրայս, կենսաուսնի, կենսագործել, կենսամակարդակ և այլն, որոնց մեծ մասը նորարանութիւն է և ստեղծվել է հայերենի արդի փուլում:

Այս նույն ձևով մեզ բառով ժամանակակից հայերենի բառարարութիւնն մեզ ես ունենք կրկու և մեզ և մեզս (հին հայերենի կազմի ուղղական և հոգնակի հայցական հոլովածուներով), սակայն այստեղ հիշյալ երկու սարքերակներով կազմված բառերի հարաբերութիւնը փոքր ինչ այլ է, քան կենս և կենս բաղադրիչներով կազմված բարդութիւններում. այստեղ ավելի զերակնում են մեզ արմատով կազմված բաղադրութիւնները. ինչպես՝ մեղադրել, մեղադրանք, մեղապատել և այլն: Իհարկէ, հանդիպում են նաև մեզս բաղադրիչով կազմութիւններ. ինչպես՝ մեղսունակ, մեղսակից և այլն:

Օրենք (հին՝ օրէնք) բառը ժամանակակից հայերենի բառարարութիւնն մեզ մտել է օրենս և օրեն հոլովածուներով (հին հայերենի հոգնակի հայցական և կազմի ուղղական). ինչպես՝ օրենսդիր, օրենսլափ, օրենազանց, օրենսպահ և այլն:

Մտնոր.— Օրենս բաղադրիչով (հայցական հոլովով զրգած խնդրով) և խնդրառու բառով կազմված շարահարաբանական կապակ-

ցութիւններից հայերենում կազմվել էին օրենագետ և օրենսդիր կցական բարդութիւնները (օրենքներ գիտեցող, օրենքներ դնող): Հետաքրքիրն այն է, որ սրանց նմանակութիւնը ժամանակակից հայերենում կազմվել են նաև օրենսգիր և օրենսգիծ բառերը. օրոնցում օրենս հայցականով բաղադրիչը արգարացում չունի նրբանցով, որ նախ, օրենագետ և օրենսդիր բարդութիւնները խկական բարդութիւններ չեն, որոնց նմանակութիւնը հնարավոր լինի կազմել օրենսգիր և օրենսգիծ բարդութիւնները և հետո, վերջիններս նախորդների շարահարաբանական հարաբերութիւնը չեն արտահայտում (ինդիք և ինդրառու բառի) և զույականներով կազմված խկական բարդութիւններ են, որ պետք է կազմվեն օրինակի, օրինակից ձևերով: Սրանք առավել ճիշտ կազմութիւններ են և զրական լեզվի արդի փուլում գործածական են:

Ինչպես տեսանք, յուրահասարակութիւններ, սարքերութիւններ և շեղումներ ի հայտ են բերում բարդութիւնն առաջին եզրում հանդես եկող ձևութիւնները (արմատները կամ բառերը). բարդութիւնն երկրորդ կըրում կամ վերջում հանդես եկող բաղադրիչները զրգում են ժամանակակից հայերենի կազմի ուղղական հոլովածուով կամ այնպես, ինչպես գործածվում են իբրև բառարանային միավոր (խոսքը վերաբերում է բառերին). այսպես՝ ափ-ծովափ, գետափ, հարս-ծովահարս, հավերժահարս, նորահարս, բեռ-ծանրաբեռ, որդ-անձեռնորդ և այլն:

Մական որոշ յուրահասարակութիւններ, որ բարդութիւնն առաջին եզրում ի հայտ են բերում մի շարք արմատներ ու բառեր, հազմադեպ կարող են երևան գալ նաև բարդութիւնն վերջին եզրում. այսպես՝ մաս բառը բարդութիւնն առաջին եզրում բաղադրութիւններ է կազմում մասն ձևով, ինչպես՝ մասնայնայ, մասնակից և այլն և վերջին եզրում թեև առհասարակ գործածվում է մաս ձևով, ինչպես՝ առաջաբան, գործաբան, տեղաբան, առաջաբան և այլն, սակայն հանդիպում է նաև մասն ձևով. ինչպես՝ մանրամասն-մանրամասներ. անձ (հին՝ անձն) բառով կազմվել են անձնապաշտ, ենթանձնական, անձնավորություն, անձնակազմ և այլն, բայց ն՝ վեհանձն, նկատման. աշ-աշագղ, կապուտաշ-ակն-բլուրակն, վարաբակն և այլն:

§ 442. Մի շարք բայարմատներ և բայահիմքեր (հմտ. սս,

ասաց, խոս, ընթաց, հոս, գնաց, իմաց և այլն), որ բարձրագույն տարրերակալում են ստանում երկրորդական ձևայինների շնորհիվ (հմմտ. աւ-հ, աւ-ել, ասաց-վածհ, ասաց-ող, գնաց-հ, խոս-ել, խոս-հ, խոս-ուն, ընթաց-հ, ընթաց-ում, հոս-հ, հոս-ել, հոս-անհ, իմաց-ում, իմաց-ուրլուն և այլն), զորձառություն ունեն նաև բար-դուլթյան վերջին եզրում, սվյալ դեպքում սրանք իմաստի տար-րերակալում են ստանում նախորդ բաղադրիչի հետ բարդություն ընդհանուր բառային իմաստը կերտելիս:

Չայնավորների և երկհնչյունների հնչյունափոխությունը բարդության մեջ

§ 443. Բառարարդության մեջ շեշտի տեղափոխության (բարդ բառի վերջին վանկի վրա անցնելու) հետևանքով տեղի է ունենում առաջին բաղադրիչի ձայնավորների և երկհնչյունների հնչյունափո-խություն: Փոփոխության են ենթարկվում հիմնականում է (ե), ի, ու, որ, ք ձայնավորները և յա, ույ, յու երկհնչյունները: Թրինակներ՝ է ձայնավորը հնչյունափոխվում է և դառնում ի (հմմտ. կես-կիսակատար, կեզ-կիզակետ, շեկ-շիկահեղ, նվեր-նվիրաբերել և այլն), ի ձայնավորը փոխվում է ր-ի կամ դուրս է ընկնում (հմմտ. սիրտ-սրտամտ, գիծ-գծադիր, երդիչ-երդյախումբ, ճշմարիտ-ճշշ-մարտասեր և այլն), ու ձայնավորը (միավանկ և մասամբ բազ-մավանկ բառերում) դառնում է ք (հմմտ. սուր-սրածալը, ծուխ-ծխամորձ, ջուր-ջրկիր, ջրհեղեղ, ծնունդ-ծննդատուն, կորստ-կորստաբեր և այլն), սզվում է (բազմավանկ բառերում), ինչ-պես՝ ամուր-ամրակազմ, դուրս-դլխադին, վաշխուղ-վաշլլազեղ, վաշխլլակազմ, կամ դառնում է վ (բաց վանկում), ինչպես՝ լու-ղվերթ, ձու-ձվատու և այլն: Յա (հին հա) երկհնչյունը բազմավանկ բառերի վերջում դառնում է ք (հմմտ. մատչան-մատենագիր, մա-տենագարան և այլն):

Այլ երկհնչյունը փակ վանկում դառնում է ու կամ դուրս է ընկնում (հմմտ. բուշ-բուսալուղ, բուսակեր, կապույտ-կապույտույն, սառույց-սառցակալել և այլն): Յու-ն որոշ բար-դություններում դառնում է ք (հմմտ. ձյուն-ձնադեղի, ձնակուղ, ձնհալ և այլն)¹²:

ՉՈՂԱԿԱՊՈՎ ԵՎ ԱՆՉՈՂԱԿԱՊ ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 444. Ըստ բաղադրիչների միացման ձևի, իսկական բարդու-թյունները լինում են հոդակապով և անհոդակապ:

Չ ո ղ ա կ ա պ ո վ ք ա ր դ ո թ յ ո ս ն և ի ր

§ 445. Բառարարդության մեջ հոդակապը հիմնականում ձև-վայինները բաղադրող ձևական տարր է, որով բաղադրվում է իս-կական բարդությունների մեծագույն մասը:

Չոդակապը իմաստային մասնակցություն շունի բարդության ընդհանուր բառային իմաստի մեջ, բացի դրանից, նրանով չի պայ-մանավորվում նաև բաղադրվող հիմնական ձևայինների հերթակա-նությունը, ընդհակառակը, հոդակապն ինքն է կախման մեջ բա-ղադրվող հիմնական ձևայիններից (ը վերջնահնչյուն ունեցող բա-ռերից հետո հնչյունափոխվում է, իսկ ձայնավորով սկսվող բաղա-դրիչներից առաջ չի գրվում (հմմտ. որդեգիր, լուսարձակ և այլն)):

Սակայն.— Չայ լեզվաբանության մեջ հոդակապը համարվել է երկրորդական ձևային՝ Սակայն սխալ է հոդակապը ձևային հա-մասերը, քանի որ այն ըստ էության իմաստազուրկ միավոր է, թեև ունի ձև և կատարում է լեզվական որոշակի գեր: Նորագույն լեզվաբանություն մեջ ձևային սահմանման և էջորդման հետ կապված, վերանայվում է նաև հոդակապը ձևայինային միավոր համարելու տեսակետը: Այսպես է. Աղայանը իր սժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը՝ աշխատություն մեջ հոդա-կապը և առհասարակ իմաստակիր միավորները միացնող, կապող հնչյունները համարում է երեսույթներ:

Չոդակապը գործառնություն ունի բառային մակարդակում, քա-նի որ մասնակցում է բարդ բառերի բաղադրման ու ձևավորմա-նը և ունի ձևակազմական արժեք: Այս տեսակետից էլ հոդակապը որոշակի գեր է կատարում իսկական բարդությունների մեծագույն մասի ձևանշման գործում:

¹² Մանրամատ. տե՛ս «Չայնավորություն» բաժնում:

13 Տե՛ս է. Բ. Աղայան, Եզված աշխ.: Կույնի սթյաի ձևարանակոն կառուց-վածքը ժամանակակից հայերենում, ՊԲԷ, 1963, № 3, էջ 247:

Հողակապի առկայությունը իսկական բարդությունների մեջ պարզանախորշված է լեզվական ավանդույթային:

§ 446. Հայերենի հողակապը հիմնականում ա-ն է (ակնաբույժ, մեծամիտ, կարմրամորթ, հերոսամարտ, զբախանութ և այլն): Սակայն ժամանակակից հայերենի մի շարք բարդություններում գործառություն ունի նաև և հողակապը: Հայտնի է, որ և հողակապը առաջացել է հայերենի ի արժատական վերջնահանչյունի և ա հողակապի միացումից (ի + ա > յա + և), այսպես՝ այգեծար (այգի + ա + ձոր), այգեկուր (այգի + ա + կուր), այգեառուկ (այգի + ա + առուկ), այգեբաց, այգեհաղ, պեբախ (պի + ա + բախ), պեծուսի, պեծեբ, բաբեխիղե (բարի + ա + խիղճ) և այլն:

§ 447. Ի + ա > յա + և հնչյունափոխությունը, որ քառաբառությունյան մեջ խիստ կայուն օրինակափոխություն է և գրեթե հասել է քայքայմանության, զեթծ չէ բացառությունից, այսպես՝ որոշ բաների բառակերպի բաց վանկի ի-ն բարդություն մեջ դուրս է բերվում և հաջորդ բաղադրիչը նախորդ ի-ով վերջացող բառի հետ միանում է ա հողակապով, այսպես՝ կղզարեակ, կղզախումբ (Ավ.) բարդությունները օրինակափոխ են պեթծ է լինելի կղզերեակ, կղզախումբ (կղզի + ա + խումբ >> կղզախումբ) ձևերով, սակայն զործածական են կղզարեակ, կղզախումբ ձևերով, որ փաստորեն ժամանակակից հայերենի լեզվական նորմայի խախտում է, սակայն արդարացում է գտնում բառահնչյունային հիմնաբով: Նույն երեվույթն է նկատվում նաև հայերկապառ բարդություն մեջ:

Ա հողակապը հանդես է գալիս նաև մի քանի հորվածներով (հասկապես հին հայերենի սեռական և գործիական, ինչպես նաև հոգեակի հայցական) և հիմնական ձևովներով բաղադրված իսկական բարդություններում, ինչպես՝ աշխատանու, գարհանգմուտ, աշխատվեռչ, աստեղագուղ, ձեբբակալի, ձեբբակալի, կենարբեր, կենսամպիտ, կենսաշող, կենսագիր, կենսախիղ, կենսամատատ, հանույակատար, հանույախուս և այլն:

Այսպիսի բարդությունների մեջ առաջին բաղադրիչների ձևաբանական ցուցիչները պահպանված են (նմտ, գարն-ան-ա-մուտ, աշխատանու, նորաբույր, մորաբույր և այլն), որը բնորոշ չէ իսկական բարդություններին, այնուամենայնիվ, սրանք դիտվում են իբրև իսկական բարդություններ, քանի որ հողակապը հետագայում

նուս և, բնականաբար, ինչ-որ շափով իուլացնում ու մթացնում է բաղադրիչների շարահյուսական կապը:

Ծանոթ.— Այս երևույթը կենսունակ է նաև բարբառներում, ինչպես՝ ձևապարզ, ձևապարզ (հին հայերենի հոգեակի թվի սեռական հորվածներով), արևնապարզ և այլն, որոնք գրական հայերենում գործածական չեն¹⁴:

§ 448. Ժամանակակից հայերենում նկատվում են և հողակապի ծագման և ակտիվացման երևույթներ, այսպես՝ մի շարք բարդ բաներում ա հողակապի փոխարեն դրվում է և, օրինակ՝ ծագիկ, հաշիվ, բաժին բաներով բաղադրված մի քանի կազմություններում, ինչպես ծագիկանուղ, հաշիվեչլու, հաշվեհարգար, հաշվեքրկատ, բաժնեհեր, բաժնեհուս, ծագիկապակ: Այս բաները պետք է օրինակափոխ բաղադրվեն և հողակապով, ինչպես հետևյալ բաներ են՝ ծագիկապար, ծագիկապար, ծագիկապար, ծագիկապար, ծագիկապար, ծագիկապար, հաշիվապան և այլն (ա հողակապով չի միանում միայն բաժին բառը): Սրանցից ծագիկապակ և օրեկան բաների և հողակապը ժամանակակից հայ քերականագիտության մեջ քայքայվել է դափնեկապակ և առեկան բաների նմանակությունով (այսպես է նաև ամսեկան բառը), օրեկան և ամսեկան բաները գործածվում են միայն խոսակցական լեզվում, իսկ գրական լեզվում ունենք՝ օրական, ամսական:

Ինչ վերաբերում է ծագիկապակ բառին, ապա այն, թերևս, արդարանում է դափնեկապակ բառին նմանվելու հանգամանքով, սակայն նմանակության օրենքը, որ առհասարակ գործում և ամենազոր է բառակազմական կազմավորների մեջ, հողակապի գործածության խնդրում լուրահատուկ բնույթ է կրում: Տվյալ դեպքում ծագիկ, հաշիվ և բաժին բաներով բաղադրված բարդություններում և հողակապի առկայությունը քայքայվում է ոչ թե ուղղակի և հողակապով բաղադրված կազմավորների նմանակությամբ, այլ, հավանաբար նաև առաջին բաղադրիչի փակ վանկի ի ձայնավորի առկայությամբ որ քառաբույրի բաց վանկի ի ձայնավորի և ա հողակապի միացումից առաջացած (ի + ա > յա > և) հնչյուն-

¹⁴ ՏՃ՝ Մ. Արեղյան, նշված աշխ., էջ 191:

¹⁵ ՏՃ՝ Գ. Առաք, Ժամանակակից հայեր լեզվի գաղտնիք, էջ 155:

նափոխություն կրած և հողակապով բառերի նմանությունը:

Այսպես՝ ծալիկ, հաշիվ, բաժին բառերը բաղադրված ծաղկկապակ, ծաղկեփունջ, բաժնետուր, բաժնետոմս, հաշվենկառ, հաշվենեղար, հաշվեկշիռ բառերի առաջին բաղադրիչների վերջին փակ վանկերի ի ձայնավորը հանդիպելով ա հողակապին, բաց վանկում ի ձայնավոր ունեցող և հողակապով բաղադրվող բառերի ի+ա>լա> և հնչյունափոխության (Նմտ. տարի+ա+ +մուտ>տարեմուտ, զինի+ա+մուլ>զինեմուլ) օրերի զուգորդությունը վերածվում է ի-ի. ինչպես՝ հաշիվ+ա+կշիռ>հաշվեկշիռ, բաժին+ա+տոմս>բաժնետոմս և այլն:

Սակայն հողակապի գործածությունը այնպիսի կայուն լեզվական ավանդություն է, որ հազվագեղ է խախտվում սոսկ նմանակությամբ: Ժամանակակից հայերենի հողակապի նորմայի խախտման երևույթները կապված են նաև լեզվական այլ գործոնների հետ: Այստեղ զեր են կատարում ոչ միայն հնչյունների միացման, հնչյունափոխական օրենքների նմանակության կամ զուգորդության, այլև առհասարակ հնչյունների փոխադրության, նրանց հնչյունափոխության և բարեհնչյունության գործոնները:

Ի հողակապով են բաղադրվում նաև այց բայարմատ ձևայինով կազմված այցեզին, այցերուզք, այցեվհար, այցետոմս, այցեհարս բարդությունները: Սրանցում հավանաբար զեր է կատարել այցի զին, այցի քուլք, այցի վհար, այցի տոմս, այցի ֆարս կապակցությունների ի հոլովական վերափոխության ազդեցությունը ա հողակապի վրա, որը հանդերձ է ի+ա>լա> և հնչյունափոխությանը (Նմտ. ալցի+ա+զին>այցեզին, այցի+ա+ +թուղթ>այցեթուղթ, այցի+ա+տոմս>այցետոմս և այլն):

§ 449. Հողակապի՝ ձայնավորով սկսվող բաղադրիչների հետ միանալու փաստը են երևան գալիս օտար կամ փոխառյալ և հայերեն բաղադրիչներով կազմված բարդություններում (Նմտ. էլեկտրասալարներ, էլեկտրասաղարան, կինոնկար, միկրոկինեսկոպներ, հիդրոսանթրոպյց և այլն)¹⁶:

Ժամանակակից հայերենի բառակազմության համակարգում

¹⁶ Վերջիններս լեզվաբանության մեջ կոչվում են հերթից բառեր:

յայն գործառնություն գտան զբանցեցից էլեկտր, էներգ, հիդր, տուր, ազդիս, կին, միկրո բաղադրիչները: էլեկտր և էներգ բաղադրիչները ա հողակապով առավել մեղմեցին հայերենի բառարարությունը. ինչպես՝ էլեկտրասալարներ, էլեկտրազնայն, էլեկտրազուգում, էլեկտրավառարան, էլեկտրաշարժիչ, էլեկտրահաղորդիչ, էլեկտրասարք, էլեկտրաչափ, էլեկտրամեկնաչիկություն, էլեկտրաբարչ. էներգազինում, էներգամասնակաբանում, էներգատար, էներգաներգում, էներգատեսություն, էներգազորություն, էներգատեսություն և այլն:

էներգ և էլեկտր փոխառյալ բաղադրիչները հասարակական կյանքում ունեցած իրենց զերով և ա հողակապ ստանալով առավել ճկունացման և առավել մեծ թվով հայերեն բառերի հետ բաղադրվելու հնարավորություն ստացան, քան տուր, միկրո, հիդրո բաղադրիչները: էլեկտր և էներգա բաղադրիչները թեև իրենց ձևով (հողակապի գործածությամբ և բարդության մեջ արտահայտված իմաստով ու հարաբերությամբ) ինչ որ շափով տարբերվեցին հիդր, տուր և միկրո բաղադրիչներից, սակայն լիակատար կերպով շմերվեցին հայերենի բառարարությունը՝ չենթարկվելով նրանում գործող այնպիսի էական օրինաչափության, ինչպիսին է ձայնավորով սկսվող հաջորդ բաղադրիչից առաջ հողակապի կոտորտը. այսպես՝ էլեկտրասալարներ, էլեկտրահաղորդ, էլեկտրասաղարան, էլեկտրասաղաց, էլեկտրամարտնիչ, էներգազուգակ և այլն:

Այս երևույթը նկատվում է նաև այնպիսի բարդություններում, որոնցում վերջին բաղադրիչներն են փոխառյալ. ինչպես՝ նստագայրակալով, նեոտատակրան և այլն:

Եվ ահա, թեև փոխառյալ մի շարք տերմինների ու բառերի կամ լեզվի զարգացման արտաքին միջոցների ազդեցությամբ է, որ բուն հայերեն հեռուստաբաղադրիչով կազմված բարդություններում ձայնավորով սկսվող հաջորդ բառերից առաջ հողակապը դուրս չի բնկնում. ինչպես՝ հեռուստաաշտարակ, հեռուստաբնկալիչ, հեռուստակնարկ և այլն:

Հողակապով բարդություններ կազմվում են իսկական բարդության կառուցվածքային բոլոր կաղապարներով:

Ա և Տ ո դ ա կ ա պ թ ա թ դ ու թ չ ու ն ն ե թ

§ 450. Իսկական բարդությունների համար, ընդհանուր ամամայր, թեև աստիճան բերող են հողադադար բարդությունները, սակայն թիչ թիվ չեն կարգում նաև անհողադադարները:

Հայերենի անհողադադար բարդություններից են՝ աներձագ, ակերթախ, ակենայտ, արևշող, ամպշող, քանդեր, քացքերան, ժամկետ, խտտուենձ, ծակաբ, հավկիթ, ձկնկիթ, ձիբան, ձնծաղիկ, մատնուեն, շենշող, ջրվեժ, ջրհոր, ջրծաղիկ, ջրկիր, ջրհան, ջրբաման, սևերես, սեգիր, փարգերես, ամբղուխ, ամուղառձ, արհեստ, արհեստ, ամբիծաղ, արտառ, արգլիկ, փողկապ, օրհաս և այլն:

§ 451. Անհողադադար իսկական բարդությունների հարստացմանը և զարգացմանը նպաստել են.

ա) Կցական բարդություններից մի կանխի՞ր բառիմաստների փոփոխությամբ իսկական բարդությունների կրճատումը և զրանց նմանակներությամբ անհողադադար իսկական բարդությունների կազմումը: Այսպես՝ քացքերան, քացքերան, ծուրերան, նեղսիրտ, նեղմիտ, սևերես, փարգերես, ամբղուխ, արհեստ և այլ բարդությունները ասացացել են շարահյուսական կապակցություններից (ճանձտ, քաց ճակատ, քաց քերան, նեղ սիրտ, տար դուրս և այլն) և սկզբնապես կցական բարդություններ էին: Սակայն բառիմաստի փոփոխությամբ սրանք վերածվել են իսկական բարդությունների, այսինքն արտահայտում են ոչ թե քաց նակատ, քաց քերան, ծուր քերան, արհ սիրտ, ամբ գլուխ խտտուենները, այլ քաց նակատ, քաց քերան, ծուր քերան, արհ սիրտ, ամբ գլուխ ունեցող իմաստները: Այսպիսի բարդությունների հիմքով, այնուհետև իսկական բարդություններ կարող են առաջանալ ուղղակի զրանց նմանակությամբ, ինչպես՝ շենշող (չեն շող ունեցող՝ պայծառ), սուրսայր, սուրբկուռ, շողակն (շողացող ակն ունեցող) և այլն:

Այսպիսով, այս տիպի իսկական բարդությունները ձևով նրճանվում են կցականներին: Նմանվում են, անշուշտ, ոչ հնչունափոխված բաղադրիչ ունեցող կաղապարները:

բ) Հայերենի բարբառների և մասամբ խոսակցական լեզվի ազդեցությունը: Ժամանակակից հայերենի շատ անհողադադար բարդություններ փոխանցվել են բարբառներից. ինչպես՝ արևկող,

արունհան, գրաց, գեղնկղ, քրքումբ, երկամայր, երեսնձանբ, ծաղկախո, կերկուխ, հավկուռ, նրագլառոց, կայմեռ, շարխախ, Բահալած, Բարմաղ, փուկապ և այլն:

Կազմվել և փոխանցվել են նաև հնչունափոխված բաղադրիչներով բարդություններ. ինչպես՝ ջրիոխ, տնայան, հարհանես, կարմրացան, ձիբան և այլն: Սրանց ազդեցությամբ և նմանակությամբ ևս ժամանակակից հայերենում կազմվել են մեծ թվով անհողադադար բարդություններ, և այսօր զգալի է նշորեն ասել, թե ո՞րն է բարբառների փոխանցվել և ո՞րը՞ նմանակությամբ կազմվել. ինչպես՝ խմուռուենց, խտտուենձ, կովկիթ, ձնուենան, ձնուենայան, ձկնկիթ, ճացրուխ, հավկուռ, հավկիթ, համաես, էլկապ (էչ կապող), դերբաց, դուրխակ, ծամկալ, կրճիկալ, ջրհեղեղ, ջրհոր, ջրկիր, ջրհան, շարխան, փարսուլ և այլն:

դ) Բառերի անբը՞ր, Բառերի ամձան (վերջավորությունների կամ ածանցների հավելման հետևանքով համար հողադադար դուրս է ընկնում, ինչպես՝ հրակեղ-հրկիզել՝ պահապան-պահպանություն, Թուլաստրել-Թուլալուսթուլուն և այլն:

§ 452. Հողադադար չի գրվում այն իսկական բարդություններում, որոնցում հանրող բաղադրիչն սկսվում է ձայնավորով. ինչպես՝ աղաղբբաց, քաղմազգ, քայարմատ, քայիմատ, գաղարայխուհ, գլխուղեղ, գրանցում, գրառում, դարբնկեր, երգապաչ, գրապոյի, բանալման, ժամանց, լողավազան, լողափ, լուսասուղ, լուսառձակ և այլն:

§ 453. Ինչ վերաբերում է ամենամասնիկով և ձայնավորով սկսվող ածականներով կազմված հողադադար բարդություններին, ինչպես՝ ամենամանկ, ամենաղեղիվ, ամենազգու, ամենաանկեղ, ամենարնիթ, ամենալուծիչ, ամենազուլալար և այլն, ապա սրանցում ամենաբաղադրիչը կամ զերանունը, ինչպես հայտնի է, կորցրել է իր բառային արժեքը և վերածվել ածականի զերադրական աստիճան կազմող նախածանցի, այստեղ ամենամասնիկը ամեն զերանվանական բաղադրիչով կազմված բարդություններից տարբերվում է թե՛ իմաստային (քերականա-

17 Տե՛ս Մ. Արևելան, Երգած աշխ., էջ 193:

կան), թե՛ ձևային կողմով (պահպանում է հոգակապը ձայնավորով սկսվող բաղադրիչներից առաջ հմմտ. ամենաարագ):

§ 454. Հոգակապ չեն վերցնում այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչները սկսվում են ն-ով և ո-ով: Սրանք բառաձևում հնչում են իրեն և օ ձայնավորներ և այս հիմունքով էլ բարդության մեջ դրանցով սկսվող արմատներից կամ բառերից առաջ ևս հոգակապը դուրս է բնկնում. ինչպես՝ բազմերանգ, երկներանգ, հեղեբանգ, նրբերանգ, գարկերակ, ժայռերես, լուսերես, սևերես, ձեռներեց, մեներց, վերկակ, հայրդի, բանեղդի, Գաբոդի, լավերակ, բարբակ, շարեակ և այլն:

Այսպիսով, իսկական բարդություններում ձայնավորով սկսվող բաղադրիչներից առաջ հոգակապի կրիտառը լեզվական կայուն օրինաչափություն է հայտնում և չի փոխվում որևէ գործնի ազդեցությամբ, լինի դա նշյունական փոխազդեցություն, նմանակություն, թե բարենշյունություն:

§ 455. Անհոգակապ են նաև ժամանակակից հայերենի փոխառյալ բաղադրիչ ունեցող կամ նոր տեղի բարդությունների մեծագույն մասը: Սրանք հիմնականում սուսերենից կամ դրա միջնորդությամբ փոխառված մի շարք բառերով կամ բաղադրիչներով (ֆոտո, ուղիղ, հիդրո, կինո, միկրո, աուդիո և այլն) բազադրված բարդություններ են, որոնց մեծագույն մասը դրանցով կազմված սուսերեն բաղք բառերի պատճենումն է, ինչպես՝ ուղիղորդում, նիշ, ուղիղործմարտություն ուղիղօգի, ուղիղմարտում, միկրոչլամ, կինոլիպակ, կինոգրամատուրգ, կինոկենտրոն, կինոփառատուն, ֆոտոդրակից, ֆոտոուցահանդես, հիդրոպլան, տուրբուրատակ, սպորտխոհանոց, սպորտդրաց, սպորտաթիվ, սպորտեռագրակ, երկարբնուռ, պիտեռգալատ, պիտեռկանչ և այլն:

Սրանք թեև իրենց ձևով անհոգակապ բաղադրություններ են, սակայն իմաստային յուրահատկությամբ տարբերվում են հայերենի րուռ անհոգակապ բարդություններից, որի հետևանքով էլ դասվում են առանձին կամ նոր տեղի իսկական բարդությունների մեջ:

§ 456. Կան քիչ թվով կազմություններ էլ, որ գործածական են՝ և՛ հոգակապով, և՛ անհոգակապ ձևով. ինչպես՝ չրագաբար-չրագաբար, արևելոգ-արևաշոյ, երեսպատել-երեսպատել, շարկամ-շարկամ, սրտխառնոց-սրտխառնոց և այլն:

Սակայն այսպիսի դուրահեռ ձևերը քիչ են ժամանակակից հայերենում, քանի որ լեզվին խորթ է նույնանիշ ձևերի կուտակումը և դրանցից խուսափելու համար ստեղծվում է բառերի ձևերի տարբերակում, որոնք անհրաժեշտության դեպքում ստանում են նաև իմաստային տարբերակում: Այսպես՝ Բաբառը նշանակում է Բար տաշող, իսկ Բաբառաշ՝ Բարով տաշված. հրձից նշանակում է հուր ձգող, այսինքն Սկոթով, պատերազմ՝ հրահրող, իսկ հրահիլ՝ սկրակողը՝ և այլն:

Համարի նշյունափոխված նույն առաջին կերպ կազմվում են և՛ անհոգակապ, և՛ հոգակապով բարդություններ. այսպես՝ ջուր արմատի ջր տարբերակով կազմվել են ջրմալիկ, ջրհոր, ջրկիր, ջրմուղ, ջրնեղից, ջրհավաք, ջրվեժ, ջրբաժան, ջրհան¹⁸ և այլ անհոգակապ բարդություններ: Սակայն ունենք նաև հոգակապով բարդություններ. ինչպես՝ ջրատույզ, ջրատար, ջրահեղձ, ջրամատակարարում, ջրամաբքին, ջրամատարային, ջրագնդող, ջրացատկող և այլն:

Հուր ձևույթի հր տարբերակով ևս ունենք հոգակապով և անհոգակապ հրչեշ. հրձիգ, հրկիզել, հրազուլ, հրաբուխ, հրավառ, հրակեղ և այլ բառեր. սովետական շրջանում կազմվեցին հրահալոց և հրակալուն նորարարություններ:

Թև ինչու միևնույն ձևույթով լեզուն ստեղծում է և՛ հոգակապով, և անհոգակապ կաղապարներ, դժվար է ասել, քանի որ լեզվի զարգացման յուրահատկություններից բխող ոչ բոլոր երևույթներն են հեշտ բացատրելի:

Այսպես՝ միևնույն ձևույթով կազմված բարդություններում մի գեղարվում կարող է կենսունակ լինել նաև նրա հոգակապով ձևը, իսկ այլ դեպքում (մեկ ուրիշ ձևույթով բաղադրված բարդություններում)՝ անհոգակապ ձևը: Այնպես որ, եթե ընդհանրապես քանակային տեսակետից դերակշռում են իսկական բարդության հոգակապով կաղապարները, ապա որոշ բաղադրիչներով կազմված բարդությունների համար կարող է լինել հակասակ:

§ 457. Անհոգակապ բարդություններ ևս, հոգակապով բարդությունների նման, ունենում են իրենց կազմության կաղապար-

¹⁸ Այս բառը վերախառնաբարվեց և նոր գործածություն ստացավ վերջերս:

ները, միևնույն են գոյականները գոյականների հետ (գոյական + գոյական, հմմտ. անընթաց, արևոտացք և այլն), ածականները գոյականների հետ (ածական + գոյական, հմմտ. անուշիկոտ, բաց-հերան և այլն); անունները բայալուծանների կամ բայահիմքերի հետ (անուն + բայալուծան կամ բայահիմք, հմմտ. ակնհայտ, բան-բեր, կովկիթ) և այլն: Ինչ խոսքը, որ անհոյակապ կաղապարների տեսակներն ավելի քիչ են և շուրջ հոգակապով կաղապարների բազմազանությունը, բացի այս, կաղապարների մեջ ընդգրկված բարդություններն էլ թվով քիչ են:

ԽՈՅԱԿԱՆ ԲԱՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԳՐՈՒՄԵՆԻ ԵՄՐԱՆՈՒՄԿԱՆ
ՀԱՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԳՐՈՒՄԵՆԻ

§ 458. Իսկական բարդությունների բաղադրիչների շարահյուսական կապը թեև ձևաբանորեն դրսևորված է և ընդհանուր առմամբ միաբանված է, սակայն լուրջաբանչուր բարդություն մեջ այն առկա է պոտենցիալ ձևով և երևան է գալիս, երբ բարդությունը վերածվում ենք շարահյուսական կապակցության:

§ 459. Իսկական բարդության անդամների մեջ ընդհանրապես գոյություն ունի ստորադասական հարաբերություն: Բաղադրիչ անդամներից առաջինը իմաստով լինում է երկրորդի լրացումը, և հետևաբար բարդության գլխավոր կամ հիմնական իմաստը արտահայտում է երկրորդ կամ վերջին համարվող անդամը. ինչպես՝ զբաղեցնում (զբրև սեղան), ծաղկաման (ծաղկի տան), ջերմաչափ (ջերմություն չափող), պտուկեռատան (պտուկներների սրահ), ձևաբանություն (ձևերի փայտ) և այլն:

§ 460. Երբ բարդությունը նուսնդամ է, իբրև լրացյալ սովորաբար հանդես է գալիս բաղադրիչներից վերջինը, իսկ առաջին երկու բաղադրիչները իբրև մեկ անբոլորական բառ լրացնում են երան, Ինչպես՝ հեռախոսագլխի (հեռախոսի գլխի), հեռագրատար (հեռագրի տանող), հեռախոսագիր (հեռախոսային կամ հեռախոսի գիր), երկարագլխի (երկարուցու գլխի), ծխախոտատու (ծխախոտի տուփ), կիսալուսնան (կիսալուսնի ձև ունեցող), փեղեկեռանավակայան, օդանավակայան և այլն: Սակայն ժամանակակից հայերենի զարգացման վերջին շրջանում հանդիպում են նաև այնպիսի նոր կաղապարներ, որոնցում վերջին բաղադրիչ կամ լրացյալը երկանդամ է, իսկ առաջինը կամ լրացումը՝ միան-

դամ. ինչպես՝ ձեռնակողմնորում (ձեռքով կողմնորում), սժիֆերանավով հրամանատար նիկոլանը իրագործեց ձեռնակողմնորումն մասնոր (ՍՀ), երկարաձավկետ (երկար ձավկետ ունեցող), լուսադիմանկար, անտանախոս, հեռուստաբնագրություն (հեռուստատեսային բնագրություն), հեռուստալուսնակաղապար, չրտեղեկություն (չրտեղեկություն), սարգավերանոցում (սարգի վերանոցում), ստորջրալուսնակարում, միջամալուսնակայան և այլն:

Այսպիսի հարաբերություն է հիմնականում նկատվում նաև փոխառյալ բաղադրիչներով կազմված նուսնդամ բարդություններում. ինչպես՝ էլեկտրավակայանագր, էլեկտրատրանսմիսյան, էլեկտրալուսնակայան, ուղտակարեցի, սպեկտրալուսնակայան, ջերմաէլեկտրակայան, հեղեղակարեցություն (են), ջերմաէլեկտրակարեցում, անավերանակիչ (անավերանակիչ սարք), են) և այլն:

Հարգարկեց պատահում են նաև քառանդամ բաղադրիչներով բարդություններ, ինչպես՝ հեռախոսահեռագրային, հողմաերկրաչառակայան, որտեղ կամ առաջին երկանդամ բաղադրիչն է լրացնում երկրորդ երկանդամ բաղադրիչին, կամ առաջինները՝ վերջինին:

§ 461. Բնական է, որ բաղադրիչների տեղափոխությունից բարդություն իմաստի փոփոխություն է տեղի ունենում, քանի որ լրացում-լրացյալի հարաբերությունը փոխվում է. ինչպես՝ շարալուծ (շարքերի սյուն) և սյունաշար (սյունների շարք), փայլալուսնակ (փայլերի նման փայլ) և փայլալուսնակ (փայլ փայլող), գյուղատեղ (գյուղի նման փայլող) և փայլալուսնակ (փայլող գյուղ), փորձակետ (փորձով գիտնող), փորձի գիտությունը զրադվող և գիտալուծ (գիտական փորձ) և այլն:

§ 462. Բացառված չեն նաև հատուկներ բարդ բառեր, որոնցում կարող է բաղադրիչ անդամների հարաբերությունը չփոխվել. ինչպես՝ պարզեկու և երեսպար¹⁹, րեհարգ և բարբերան և այլն:

¹⁹ Արանցից առաջինը ծագումով կցական բարդություն է, որ հետո է վերածվել իսկական բարդության, իսկ երկրորդը իսկական բարդություն է և առանձին անկախ գործածություն չունի. այն հանդես է գալիս իբրև հարադրական բառ առաջին բաղադրիչ (հմմտ. երեսպար անել, երեսպարվել):

§ 463. Ժամանակակից հայերենում կազմվում են նաև բաներ, որոնցում կրկրորդ անդամն էլ լրացնում առաջին անդամին: Այս կրկույթը, որ ժամանակակից հայերենի զարգացման սկզբնական շրջանում հասուկներն էր հանդիպում, այժմ բավական հաճախողով է: Այսպես՝ աշարուջ չի նշանակում աշխ յուր կամ աշխեով յուր, այլ յուր աշխով, արժանապատիվ, արժանանալատ, արժանավալել կազմություններում կրկրորդ բաղադրիչներն են լրացնում առաջին բաղադրիչների իմաստները (պատվի, հավատի, վայելիքի արժանի): Նույնը և անդրկախոր՝ չի նշանակում անդունդը խոր, այլ խոր անդունդներ ունեցող, խոր անդունդներով: Բայլամալար՝ մալու Բայլեով, զաղտագոլի՝ գողի նման զաղուն (իհն բացառված չէ նաև վերջինիս բաղադրիչների համադաս հարաբերությունը) և այլն:

§ 464. Բակական բարդության բաղադրիչները կարող են ունենալ նաև համադասական հարաբերություն: Համադասական հարաբերությունը բնորոշ է հիմնականում հարադրական բարդության բաղադրիչներին, սակայն մի շարք կազմություններում առկա է նաև իսկական բարդությունների մեջ: Սրանք մեծ մասամբ անական բաղադրիչներով կազմված բարդություններն են. առաջնի՝ ամբախոս (ամուր և կուս), ամբալիցի (ամուր և պինդ), բարենաչող (բարի և հաջող), բացանայտ (բաց և հայտնի), զեպանույ (զեղեցիկ և անույշ), խառնաշփար (խոտը և շփոթ), լայնաճակ (լայն և արձակ), լուսապայծառ (լուսավոր և պայծառ), նեզանդկուն (հեղ և ճկուն), Բաջաթի (բաջ և արի) և այլն:

Համադասական հարաբերություն հազվադեպ կարող է առկա լինել նաև դրական-դրական և բաց-բաց կազուպարներով կազմություններում. ինչպես՝ ազգառոնմ (ազգ և առնմ), հարցազույց (հարց և զբույց), եկամտա (զուլ և մտնել) և այլն:

Այստեղ չպետք է անասնել այն կարևոր հանդամանքը, որ մի բանի բարդություններ ուղղակի հետադրող չէ շարահյուսական կազակցության վերածել, և զբանց բացումից որևէ սրոշակի կամ սրամարանական կապակցություն չի ստացվում. այսպես, եթե փորձենք բացել ծիծաղակալտ բարդությունը և վերածնել կապակցության, կստացվի բավական անիմաստ կապակցություն. ինչպես՝ ծիծաղով խիտ, ծիծաղի նման խիտ և այլն. դրություն չի փոխվի

միևնիսից, եթե փորձենք երկրորդ բաղադրիչով լրացնել առաջինի իմաստը (հմմտ. խիտ ծիծաղով). նույնը և ձեռնամուխ (ձեռքը միևնի, ձեռքով միևնի և այլն): Խանդակար (խանդոտ կաթ, խանդով կաթի և այլն): ստուգաանս (ստուգելու տես, ստուգող տես, ստուգելու նպատակով արված տես և այլն) և այլն: էլ չենք խոսում այն մասին, որ հաճախ բարդության բաղադրիչների ամենահնարավոր և ճշգրիտ հարաբերության բացահայտումն էլ լիակատար կերպով չի արտահայտում այն իմաստը, ինչ արտահայտվում է բարդությամբ:

§ 465. Ըստ դերադաս բաղադրիչ անդամի խոսքի մասային պատկանելության և բառ լրացում-լրացալի հարաբերության, իսկական բարդությունները բաժանվում են հետևյալ տիպերի²⁰:

Ա. Գոյական զեռադաս անդամով կազմված բարդություններ

§ 466. Այսպիսի բարդությունները ունենում են կազմության հետևյալ կաղապարները:

- ա) Գոյական + գոյական: Այսպիսի բաղադրություններում առաջին բաղադրիչը գոյականը տարբեր կողմերով լրացնում է կրկրորդ բաղադրիչը դրականին և հիմնականում արտահայտում է սեռական հոլովածին իմաստ: Սրով գոյական անունների միությունից առաջանում է մեծ մասամբ մի նոր առարկայի իմաստ արտահայտող գոյական: Դրանցից են՝ ածխավազան, ակոսաչուր, ամպածով, անձրևաչուր, անձևակազմ, արբանյականավ, արևածաղիկ, բաժականոտ, բառածև, բայիմաստ, բանախոս, բնամովեստ, իմնահարթակ, բուսածածկույթի, գազափնակեն, զանգուղեղ, գանձատար, զեռափ, զոսմաբոտ, զործիկեր, զօտեմարտ, զսասգիրք, զսասկարգ, զարարչան, զրամարիկ, կրանդպանակ, կրգարվեստ, կրկնակամար, կրթուղի, զորահանդես, զորահավաք, թղթադրամ, թվանշան, թվաշարք, թղիչքադաշտ, ժամանակաշրջան, ժամկետ, իրավիճակ, լինանույար, լինաշխարհ, սփյուռքահայ, լողավազան, լողուղի, լուսավորանալար, լուսավոր, լուսաստղ, խաղավարտ, խաղաթուղթ, ծաղկամարդ, ծաղիկապակ, ծաղիկփունջ, ծառարմատ, մննդավար, ծոցատետք, կամենաղյուր, կամսայատուն, կապրո-

20 Տե՛ս Կ. Աբղյան, *Եղբատ աշխ.*, էջ 202—206:

նաթևել, կենսամակարդակ, կենսապայման, կերպարվեստ, հայտադիր, հատակադիտ, հանգստավայր, հիմնաքար, հողագրանդ, հողակույտ, հրաջուր, հուշարի, հուշանվեր, ձևակախյալ, ձևակառուցիչ, ճարտցանկ, ճարտանկյակ, ճամփեղբ, մանկապարտեզ, մասհորիզոն, մահափորձ, մրգահյութ և այլն:

§ 467. Գոյական բաղադրիչներով բաղադրված բարդութունների մեջ հանդիպում են նաև մեկ փոխառյալ բաղադրիչով և հասկանալի բառով կամ բառերով բաղադրված բարդություններ: Փոխառյալ բաղադրիչը կարող է հանդես գալ և՛ առաջին, և՛ վերջին նշանով. ինչպես՝ աստղաֆիզիկա, ավտոնավախկալան, կենսաֆիզիկա, կենսաֆիզիկոս, քոչնաֆարիկոս, կապրոնաբեկ, ռադիոէլեկտրակալ, կապսախոսեմ, չղզեռուրիկ, չրատուրիկ, փոչմեռատուրեգի, փոնդադոյացում, լուսասփեռա, նոսազայրաակտիվ և այլն:

Մեծ թիվ են կազմում էլեկտր և կենդ փոխառյալ բաղադրիչներով կազմված բարդ գոյականները. ինչպես՝ կենդանագորություն, կենդանատակարարում, կենդանոտետություն, էլեկտրահաղորդում (սիրկիր պատվում է բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի խիստ ցանցով) (ՍԷ), էլեկտրակենտրոնացում և այլն:

§ 468. Գոյական + գոյական կազմապարով կազմվում են նաև անվանականները: Այսպիսի կազմութուններում երկու գոյականների բաղադրումից ստացվում է մի նոր անարկային հասականիչ արտահայտող բառ. այսպես՝ առյուծասիրտ, արժվաքիթ, բրնձգափայլ, բրնձուղաշող, լուսաշող, լուսահոգի, լուսածափյալ, խաչածե, ձվածե, նշածե, ծիրանագույն, կաթնագույն, կապարագույն, կզմիջդառածակ, հայրենասիրտ, հայրենաշունչ, մանկահասակ, մետաղափայլ, մարմնագույն, շաղանակագույն, ոսկեգույն, ոսկեշող, սպիշունչ, սիրակարոտ, վարդագույն, վարդանախշ, քաղաքատիկ և այլն:

§ 469. Այսպիսի բարդությունները սկզբնական գիտվել են իբրև գոյական անուններ, այսպես՝ առյուծաբաշ, նշանակել է առյուծի բաշ, առյուծասիրտ՝ առյուծի սիրտ, լուսաշող՝ լույսի շող, վարդագույն՝ վարդի գույն, ձիաուձ՝ ձիու ուձ, նայրենաշունչ՝ հայրենիքի շունչ և այլն: Բառիմաստի փոփոխությունը հիշյալ գոյա-

կանները աստիճանաբար վերածվել են հատկանշային իմաստ արտահայտող բառերի, այսինքն անվանական անունների: Եվ այժմ վերոհիշյալ բառերը կեն որոշ կիրառություններում մասսով կարող են հանդես գալ իրենց սկզբնական խոսքի մասային իմաստներով (գոյական), սակայն ընդհանուր առմամբ նրանք ստացել են անվանական խոսքի մասային իմաստ. ինչպես՝ առյուծասիրտ նշանակում է առյուծի սիրտ ունեցող, ոսկեգույն՝ ոսկու գույն ունեցող, մարմնագույն՝ մարմնի գույն ունեցող և այլն: Այժմ, կարելի է ասել, նման եղանակով կազմվում են վերազանցապես անվանական անուններ:

§ 470. Գոյական + գոյական կազմապարով կազմված բարդութունները հիմնականում արտահայտում են հատկացուցիչ-հատկացալի և որոշիչ-որոշյալի (հիմն. շերմանավ, ջերմակայան և այլն) շարահյուսական հարաբերություն. այսպես՝ գլուղախաղաղ (գլուղի նման քաղաք), Բաղնաջուլ (քաղաքի նման գլուղ), հուշատխտակ, ձնարախ, նայացուցակ, Կաբրիվ, սուսերամարտ (սուսերով մարտ), մահաձան (մահացողին նվիրված արձան, մահացողի արձան), բաժակահեռա (բաժակի վրա ասվող ձառ), խաչաբ (քար, որի վրա խաչ է փորված) և այլն:

Ածանցների գործառուսական տարբերակներից են՝ -ալիթ||-ելիթ՝ անմտանալի, անգրանալի, գարմանալի, հուսալի, շոշափելի, անլրանի, անեկատելի, անասելի, եղկելի, սիրելի, տանելի⁶ և այլն, -պիթ||-ելիթ՝ հրաշալի, խաղալի, հավատալի, հազնելի, ասելի, շոշափելի, սհանելի, լսելի, ուտելի և այլն, -արեն||-երեն՝ հունարեն, շինարեն, ուսարեն, վրացերեն, օսմիներեն և այլն, -արիթ||-երիթ՝ հավատարիմ, մտերիմ, սխերիմ, -ացիթ||-եցիթ||-ցիթ՝ գյուղացի, Բաղբալցի, գալտեցի, մշեցի, գարսեցի, իշևանցի, երևանցի, սուցուկյանցի և այլն:

ԱԾԱՆՑՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

§ 549. Ժամանակակից հայերենի ածանցների ընդհանուր և ամբողջական նկարագիրը տալու համար ածանցները հարմար է խմբավորել ըստ նրանց հետևյալ հատկանիշների՝ ըստ գործառուսյթի, ըստ դիրքի, ըստ գործածության համահասկանության, ըստ կազմության, ըստ խոսքի մասերի կերտելու և այլն:

1. ԱԾԱՆՑՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԲԱՌԵԱԿԱՅՄԱԿԱՆ ԳՐՄԱՌՈՒՄԵՐԻ

§ 550. Ածանցներն իրենց բառակազմական ընդհանուր գործառուսյթով (դերով, ֆունկցիայով), բաժանվում են երկու հիմնական խմբի՝ բուն բառակազմական ածանցներ և Բերակախական-բառակազմական ածանցներ:

⁶ Բերված բառերի եզրած ածանցներից -ալի-ն դրվում է -ուլ և անալ-ով վերջացող բայերի հիմքերին, իսկ -ելի-ն՝ նլ վերջադրություն ունեցող բայերի հիմքերին և այս անակետից ենթադրյալում է կայուն օրինակաբանության (այսպես են նաև -ույթթ||-ելիթ ածանցները), մինչդեռ բերված մյուս՝ գործառուսական տարբերակների այս կամ այն սկզբնաձևին միանալու հանցամասք առավել պայմանական բնույթ ունի և սրանցում իշխում է լեզվական սովորույթի ուժը:

Ա. Բուն բառակազմական ածանցներ

Մրանք լինում են երկու տիպի՝ իմաստափոխական և խոսքիմասակերտ-իմաստափոխական⁹:

Պետք է նշել, որ քիչ են այն ածանցները, որոնք սոսկ իմաստափոխական կամ սոսկ խոսքիմասակերտ-իմաստափոխական են, քանի որ բուն ածանցների մեծ մասը որոշ բաղադրություններում հանդես է գալիս իմաստափոխական, իսկ որոշներում՝ խոսքիմասակերտ-իմաստափոխական նշանակությամբ:

Ի մ ա ս տ ա փ ո թ ր ա կ ա ն անանցներ

§ 551. Իմաստափոխական են այն ածանցները, որոնք փոխում են բաների իմաստները միայն, սոսակց փոխելու նրանց խոսքիմասային արժեքը: Այսպես՝ **ակ ածանցը կապրատակ, զվզունակ, խառնակ բառերի մեջ բառերի խոսքիմասային կամ գործառական արժեքի փոփոխություն չի ստացաքել**, այն ածական անուններից կազմվել է ալլ իմաստով ածականներ: **Ին ածանցը զվարին, զյուրին, ներին, մրին, խորին բառերի մեջ անականների իմաստին ավելացրել է սաստիական կրանդ:**

§ 552. Բուն իմաստափոխական ածանցներ են միևնույն խոսքի մասի մակարդակում գործառող ածանցները: Այս նշանակում է, թե զուտ իմաստափոխական տիպի ածանցները քիչ են, քանի որ ածանցների մեծ մասը, լինելով բազմիմաստ, հանդես է գալիս առաքել խոսքի մասերի մակարդակում և ունի և՛ իմաստափոխական, և՛ խոսքիմասակերտ-իմաստափոխական գործառույթ:

Բուն իմաստափոխական ածանցներից են ածականների մակարդակում գործառող-վում և **-որակ ածանցները (ճմտ. սեպվուն, թխավուն; զեղեպվուն, հաստավուն, կարծրավուն, կեպավուն, սեորակ, թխորակ, ստանորակ, կապտորակ և այլն)**, թվականների մակարդակում գործառող **-բարդ, -եռարդ ածանցները (ճմտ. շորբորդ, կրբորդ, հինգբորդ, ութբորդ, իններորդ և այլն)**, զուլականների մակարդակում գործառող **-պան ածանցը (զգայականներից կազմում է սակզբնաձևերի նշած գործով զբաղվողի՝ իմաստով զոյականներ. ճմտ. աչքեպան, զոնայան,**

բուժնետպան, կառապան, ուղապան, պարտիզպան և այլն), **-պանակ ածանցը (զոյականներից կազմել է նոր իմաստով զոյականներ. ճմտ. թղթապանակ, տետրապանակ, զրամադանակ, մայրապանակ, ներկապանակ և այլն):**

Առավել տիպիկ իմաստափոխական ածանցներ են միայն զուլականների և ածականների մակարդակում գործառող նվազափազաբշական կամ կրանդավորող **-ակ, -իկ, -ուկ¹⁰ ածանցները:**

ն մ ա զ ա փ ա ղ ա բ շ ա կ ա ն կ ա մ եր ա ն զ ա վ ո թ ո ղ անանցներ

§ 553. Իմաստափոխական ածանցների մեջ իրենց իմաստային և բառակազմական յուրահատկությամբ առանձնանում է ածանցների մի խումբ, որը թեև չի փոխում բառի խոսքիմասային իմաստը, սակայն ներքնում է խոսողի վերաբերմունքն ու զնահատականը, արտահայտում է զգացական; փաղաքական, նվազական, արհամարհական, ռճական և ալլ իմաստային կրանդներ:

Այսպիսի ածանցները առավել բնորոշ են լեզվի խոսքային մակարդակին և բառ էսվիան առավել ստրեկտիվ բնույթ ունեն, քանի որ խոսողի զնատկցության մեջ է առաքիկան պատկերվում նրբացած, փաղաքական, քնքշական, ինչպես և կարեկցական, արհամարհական և ալլ տեսքով նման զգացական, արտահայտչական (էքստրեմիվ-էմոցիոնալ) կրանդավորումները յուրահատուկ են առաքիկաներին, երևույթներին, նրանց հատկանիշներին և, բնականաբար, բնորոշ են հիմնականում զոյական, մասամբ էլ ածական անուններին: Նվազափաղաքշական կամ երանգավորող ածանցներից զբվելով ածանցվող պարզ արմատների և բառերի վրա, լին փոխում նրանց բառային հիմնական իմաստները, ալլ ավելացնում են այնպիսի լրացուցիչ իմաստային կրանդ (նվազական-փաղաքական), որից սկզբնաձևի խոսքի մասային իմաստը չի փոխվում. օրինակ՝ **արկի-արկիկ, ձուկ-ձկնիկ, լի-լիկի, զիծ-զիծիկ և այլն:**

¹⁰ Երանք խոսքիմասակերտ-իմաստափոխական գործառույթով (ճմտ. 55-հակ, զրիպակ, ցուցակ, տեսակ, բացիկ, նշուկ և այլն) արգեն վերածվել են համանունների:

⁹ Ճմտ. Գ. Զամոյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 158:

Մանր.— Եվագափաղաքական ամանցները գալիս են մեր լեզվի պատմության զեռն հնագույն շրջաններից: Այս ամանցներով առանձնապես հարուստ է հայ ժողովրդական բանահյուսությունը, որին հնում փաղաքականությունն այնքան էր բնորոշ, որ երբեմն բառերն ստանում էին կրկնակի փաղաքական ամանցներ. օրինակ՝ պատանակ—պատանակիկ (պատանի—ակ+իկ), տեղեակ—տեղեկիկ (տեղի+ակ+իկ) և այլն:

Նվագափաղաքական ամանցներով հարուստ է նաև արևմտահայ գրական լեզուն, որն ի տարբերություն ժամանակակից արևելահայերենի, վերահիշյալ ամանցներով համեմատաբար ավելի մեծ չափերով է բաղադրությունների կազմում ամանցանուններից, այսպես՝ ժամանակակից արևելահայ գրական լեզվում նվագափաղաքական ամանցները գրվում են ոչ բոլոր ամանցանների վրա. ինչպես՝ ավ—ավիկ, սիրում—սիրունիկ, կենդանի—կենդանակ, վսեմակ, քաղցր—քաղցրիկ և այլն, բայց ոչ՝ վեճ—վեճիկ, վսեմ—վսեմիկ, անավոր—անավորիկ և այլն: Եվ միշտ չէ, որ կազմվում են նաևգտակ, զեղպարիկ, սիրատարփիկ, խաղաղիկ («Տարիներով իմ երազս էր Սիրո գարուն մը խաղաղի՛կ, ՄՄ, Երվեր») և այլն, ինչպես արևմտահայ գրական լեզվում:

§ 554. Հին և միջին հայերենների, արևմտահայ գրական լեզվի, այլև մասամբ բարբառների համեմատությամբ ժամանակակից հայերենը առավել քիչ է զործածում նվագափաղաքական ամանցաներ և գրեթե չունի կրկնակի նվագական կամ փաղաքական ամանցներ: Սակայն հիշյալ ամանցների գործածությունը բավականաչափ բնորոշ է նաև ժամանակակից հայերենին:

§ 555. Նվագափաղաքական ամանցներն ունեն հետևյալ առանձնահատկությունները:

ա) Առաճախում են առարկաների օրյնկտիվորեն փոքր ծավալային չափերը (հմտ. տնակ, զետակ, տակտրիկ, պտտտրիկ, ձուրակ, արձանիկ և այլն):

բ) Առարկաների և նրանց նատկանիշների փաղաքական երանգները (հմտ. նրբիկ, դժիկ, քաղցրիկ, քնքրիկ, լավիկ, սիրունիկ, հայրիկ, մայրիկ, պապիկ, ձառնիկ, կլանքիկ, արկիկ, որբուկ, հովիկ, խնձիկ, պաշիկ և այլն):

գ) Առարկաների, երևույթների և նրանց նատկանիշների նվագափաղաքական երանգը: Արտահայտելով առարկաների ծավա-

լային փոքր չափերը՝ նվագական ամանցները հաճախ միասնականակ արտահայտում են փաղաքական երանգ, որ բխում է առարկաների փոքրացումից. հետևաբար, նվագական և փաղաքական իմաստները շատ զեպերում միասնաբար են հանդես գալիս. ինչպես՝ նուրիկ, բարիկ, բշիկ, նորուկ, մանկիկ, ձագուկ և այլն:

դ) Ասպիկապես բնուշ են լեզվի խոսքային մակարդակին և նաևնախ սուբյեկտիվ բնույթ են կրում: Սրանք բնահանրապես բնորոշ են բանավոր խոսակցական և զեղարվեստական գրականության լեզվին: Լեզվի գործառական մի քանի ոճերի համար, ինչպես, օրինակ, գիտական, պատճենական, զործական, գրասենյակային և այլն, այս ամանցները բնորոշ չեն:

Նվագափաղաքական ամանցները խոսողի վերաբերմունքի կամ զեհատություն, զգացական զանազան երանգների արտահայտելու ունական կարելու միջոց են:

§ 556. Նվագափաղաքական կամ երանգավորող ամանցներից են՝ —ակ, —իկ, —ուկ, —լիկ, —ուշ, —լուկ, —ուլ, —ուկ և այլն:

§ 557. —Ակ, արդի հայերենի կենտրոնակ և ակտիվ ամանցներից է. արանգը կազմվել են ավակ, արեգակ, զետակ, զուրակ, զանգակ, քոչնակ, լեզվակ, լնակ, լծակ, հյուղակ, ձուրակ, նավակ, սայլակ, տաշտակ, տնակ և այլն: Այս ամանցը գրվում է զերպանցական գոյական սեռերների վրա և առավելապես նվագական նշանակություն ունի, քան փաղաքական (այս երկու նշանակությունները մյուս երանգավորող ամանցների մեջ հաճախ միասնաբար են հանդես գալիս):

Մանր.— Նվագափաղաքական որոշ ամանցներով զեռն հնում կազմվել են նաև այլ իմաստով բառեր, որոնցում հիշյալ ամանցները հանգես են եկել ոչ նվագափաղաքական, այլ խոսքի-մտասկերտ-իմաստափոխական գործառությունով. ինչպես՝ է (յ)րակ, որ—որակ, մուլի—մուրակ, վան—վանակ, նեղուկ, միջուկ և այլն: Երկ—ակ ամանցով կազմված նվագական նշանակություն սնկեցող մի քանի բառերում ամանցը կորցրել է նվագական իմաստ. ինչպես՝ օղ—օղակ, զուղ—զեղակ և այլն:

§ 558. —Իկ ամանցը փաղաքական իմաստով ամենակենտրոնակ և ակտիվ ամանցներից է: Այն գրվելով մի շարք գոյականների վրա, նրանց հաղորդում է նվագափաղաքական երանգ. ինչ-

պե՛ս՝ այժիկ, բարձիկ, բիբեռնիկ, բշիկ, քոռնիկ, ձկնիկ, ճուտիկ, պատառիկ, տիկնիկ, փոսիկ, փուրիկ և այլն: -Իկ ածանցք բարին կարող է հազորդի նաև զուտ փաղաքշահուն իմաստային երանց. ինչպե՛ս՝ աշիկ, դճիկ, բշիկ, ճարիկ, ճովիկ, մանկիկ, ձայնիկ, մաշիկ, պապիկ, պաշիկ, ստտիկ, փշիկ և այլն:

Մի շարք անձնանունների վրա գրվելով՝ իկ ածանցը արտահայտում է նվազափաղաքշահան իմաստ. ինչպե՛ս՝ Աշոտ-Աշոտիկ, Արամ-Արամիկ, Գարեգին-Գարիկ, Գեհա-Գեհարիկ, Խաչատուր-Խաչիկ, Շուշան-Շուշանիկ, Վահան-Վահանիկ, Վարդան-Վարդանիկ և այլն:

-Իկ ածանցը, գրվելով քնույթյան, կենդանական, աշխարհագրական, բուսական և այլ երևույթների ու առարկաների անվանումների վրա, կազմում է անձնանուններ նվազափաղաքշահան իմաստով. ինչպե՛ս՝ Առազիկ, Ամենիկ-(այձևամեն), Գառնիկ, Եղնիկ, Շողիկ, Մովիկ, Շուշիկ, Լորիկ, Վարսիկ, Յողիկ և այլն:

Բացի զոչական անուններից, իկ ածանցը գրվում է նաև անական անունների վրա՝ առավել ստատիկացնելով երանց հասկանալիս իմաստները և հազորդելով փաղաքշահան երանց. ինչպե՛ս՝ անուշ-անուշիկ, լավ-լավիկ, մանր-մանրիկ, նուր-նորիկ, շեռմ-շեռմիկ, սիրուն-սիրունիկ, սե-սեիկ, փոք-փոքրիկ, փայլ-փայլիկ և այլն:

§ 559. -Ուկ ածանցի նվազափաղաքշահան նշանակությամբ ժամանակակից հայերենում ալիլի բիշ բառեր են կազմվում, քան վերոհիշյալ՝ ալ և իկ ածանցներով: -Ուկ ածանցով կազմված նվազափաղաքշահան իմաստ ունեցող բառերից են՝ արջուկ, խենքուկ, գառնուկ, գիբուկ, զովբուկ, ծերուկ, ճարուկ, ձագուկ, ճնճուկ, մանչուկ, նազուկ, որբուկ, սևուկ, տափուկ և այլն:

§ 560. Երբեմն խոսողի վերաբերումների փաղաքշահանությունն առավել սաստկացնելու համար որոշ բաղադրույթումններում իկ ածանցին միանում է ՚լ երանցավորող ածանցը (իկ)-ինչպե՛ս՝ բովս-բովիկ, հաստ-հաստիկ, կսիկ-կսիկիկ, ենդ-ենդիկ, շեկ-շեկիկ, սուտ-սուտիկ, փափլիկ և այլն:

-Լ-ածանցը վերոհիշյալ իմաստով միանում է նաև -ուկ ածանցին. ինչպե՛ս՝ վալիլուկ, խարլուկ և այլն, սակայն լուկ բաղադրելու նվազափաղաքշահան ածանցով կազմված բառերն առավել բիշ են, քան լիկ ածանցով կազմվածները:

§ 561. -Ոլ պ ածանցով և նրան համանիշ այլ ածանցների բաղադրությամբ կազմվել են բիշ թվով նվազափաղաքշահան իմաստային երանց ունեցող բառեր. ինչպե՛ս՝ Սախուլ, Քարուլ, զանգուլակ, սուրուլիկ: Խոսակցական լիզվում հանդիպում են նաև մասուլ (մաշյրիկ բառի իմաստով), պապուլ (պապա-ից) փաղաքշահան բառերը, որոնք զալիս են ուսուներեից (հմմտ. МАМУЛЯ, ПАПУЛЯ):

§ 562. Անձնանունների վրա փաղաքշահան, մտերմական նըշանակությամբ գրվում է նաև -ո ածանցը. օրինակ՝ Արսո (Արտավազ), Գաշո (Գաշուտ), Գուգո (Գուրգեն), Խաշո (Խաչատուր), Կարո, Կրոդ (Կարպետ), Միլո (Մկրտիչ), Մարգո (Մարգարիտ), Սարո (Սարգրիկ), Սերո (Սեդրակ), Վաևո (Վահան), Վաթսո (Վարսենիկ, Վարսիկ) և այլն:

§ 563. Անձնանունների վրա վերոհիշյալ փաղաքշահան, մտերմական իմաստով գրվում է նաև -ուշ երանցավորող ածանցը. ինչպե՛ս՝ Գարուշ (Գարեգին), Մարգուշ (Մարգարիտ), Վանուշ (Վահան), Տիգուշ (Տիգրանուհի), Փեկուշ (Փեկերտե) և այլն:

Մեկնոր.— Հայկուշ, Սիրուշ, Վարգուշ անձնանունների -ուշ ածանցը առաջացել է Հայկանուշ, Սիրանուշ, Վարգանուշ և այլ անունների անուշ-ի ան Շեշունարանների կլանամամբ և նմանակությամբ ստորածվել նաև այլ անձնանունների վրա (հմմտ. Վանուշ, Փեկուշ, Տիգուշ և այլն):

§ 564. Երանցավորող ածանցները արտահայտում են նաև խոսողի արհամարհական, նվազական, շեփական վերաբերմունքը. ինչպե՛ս՝ արվեստակ, գրչակ, իմաստակ, աշակերտիկ, բանասանդիկ, վեպիկ, ինտելիգենտիկ, մաքրակ, բզակ, խցուկ, բեքրուկ (սեուլվարային այդ թերթիվը հիմնվածքով նկարագրից Մեներտի փախուստի մասին), են) և այլն:

Խ ո ս ք ի մ ա ս ա կ ն ը ո տ - ի մ ա ս տ ա փ ո խ ա կ ա ն
ա ծ ա ն ց ն ե ր

§ 565. Բուն ածանցների մեջ առավել մեծ տեղ են զբաղում խոսքիմասակերտ-իմաստափոխական ածանցները: Սրանք փոխում են բառի և իմաստը, և՛ նրա խոսքիմասային ու զործնական արժեքը (հմմտ. տուն-տնական, բեր-բերք և այլն): Այսինքն՝ խոսքիմասակերտ-իմաստափոխական ածանցները ունեն նաև քն-

բախանական նշանակություն (կերտում են գոյականներ, ամական-ներ, բայեր, մակերաներ և այլն), բանի որ մասնակցում են նաև բառերի քերականական խմատի ձևավորմանը՝ հազորգելով նորահան տվյալ խոսքի մասին հատուկ քերականական նախանիշները Այսպես՝ Երես, խիզախ բառերից (ածականներից) —բարածանցով կազմվում են Երեսաբար, խիզախաբար, որոնք արդեն նշանակում են հերոսի, խիզախի նման կամ հերոսի խիզախի պես, այսինքն՝ մակերաներ են:

Գարուն, ծով, արև բառերից —ային ածանցով կազմվել են գարնանային, ծովային, արևային, որոնց —ային ածանցը հազոր-գել է վերաբերության, պատկանելության խմատ (գարնան, ծովին, արևին վերաբերող, գարնանը, ծովին, արևին հատուկ): Բացի նշված բառակազմական խմատից, վերահիշյալ ածանցը փոխել է նաև գարուն, արև, ծով գոյականների խոսքի մասային խմատները՝ որանք վերածնվով ամական անունների:

Արջունե՛, ծագի՛կ, լույս բառերից —վոր և —վետ ածանցներով կազմվել են արջունավոր, ծագիվոր, լուսավոր, և արջունավետ, ծագիվետ, լուսավետ համանիշ բառերը: Այստեղ —վոր և —վետ ածանցների շնորհիվ ոչ միայն կազմվել են նոր խմատով բառեր, այլև առարկայական խմատ ունեցող բառեր (գոյականներից) վերածվել են դրանց հատկանիշներն արտահայտող բառերի (ածականների): Իսկ —ուրյուն ածանցը վին, վնմ և շինը հատկանշային խմատ արտահայտող բառերին հազորգել է գոյականացնող և վերացական խմատ, որով և ամական անունները վերածվել են գոյական անունների:

Խոսքիմասակերտ-խմատափոխական ածանցները զուտ խմատափոխական ածանցներից տարբերվում են ոչ միայն խոսքիմասակերտ նշանակությամբ, նրանց հատուկ են նաև այլ բնորոշ առանձնահատկություններ. այսպես՝ նկն խմատափոխական ածանցները հիմնականում մենխմատ են, ապա խոսքիմասակերտ խմատափոխական ածանցների մեծ մասը բազմիմաս է. այսպես՝ —անց բազմիմաս ածանցը ունի հետևյալ խմատները. ա) անիլ (հմմտ. արհեստանոց, բանչարանոց, հիվանդանոց, զազանանոց, չարանոց և այլն), բ) զգնտիլ, վրան կեղլու առարկայի (հմմտ. դիշիրանոց, հովանոց և այլն), գ) զանազան չափերի, ինչպես՝ դամական (հմմտ. Երեքանոց, կոպեկանոց, սորլանոց,

հարյուրանոց, տասանոց և այլն), ծանրուրյան (հմմտ. լիտանոց, գրամանոց, կիրգրամանոց, փեմանոց և այլն), ծավալային (հմմտ. հատորանոց, լջանոց և այլն):

Մյուս էական յուրահատկությունը այն է, որ խոսքիմասակերտ խմատափոխական ածանցներին բնորոշ է նաև կոնկրետացնող յուրահատկությունը, որից զուրկ են խմատափոխական ածանցները, բանի որ զբովում են հիմնականում բառային սկզբնաձևերի, այսինքն արդեն կոնկրետ լեզվական միավորների վրա:

Չունի խոսքիմասակերտ-խմատափոխական ածանցները քիչ են, բանի որ ածանցների մեծ մասը հիմնականում հանդես է գալիս Լեզուի դործառայիմով էլ՝ և՛ խմատափոխական, և՛ խոսքիմասակերտ, այսինքն՝ որոշ բազմաբայություններում խմատափոխական, իսկ որոշներում՝ խոսքիմասակերտ-խմատափոխական. այսպես՝ —ակուն ածանցը քվալա-քվալական, Երկու-Երկուական բառերում խմատափոխական է, իսկ ժողովուրդ-ժողովուրդական, գուսան-գուսանական և այլ բառերում՝ խոսքիմասակերտ-խմատափոխական:

բ. Քերականակաև-բառակազմակաև ածանցներ

§ 566. Հայերենի բառակազմական ածանցներից մի բանիսը հանդես են գալիս նաև քերականական դերով: Գրանցից են.

§ 567. Կույն. հայերենի այն քիչ քիվով բուն ածանցներից է, որոնք ունեն քերականական նշանակություն: Ժամանակակից հայերենում ցույց է տալիս ամականների գերազարկան աստիճանը. օրինակ՝ բարձր-բարձրագույն, գեղեցիկ-գեղեցիկագույն, լավ-լավագույն, խոշոր-խոշորագույն, ճգուր-ճգուրագույն, մեծ-մեծագույն, խիստ-խոսազույն, ազնիվ-ազնիվագույն և այլն:

Ժամանակակից հայերենի արդի փուլում այս ածանցը խմատափոխական կերտության նկատելի փոփոխություն է ստացել և մի քանի էպարիմոլություններում սկսում է գիտակցվել նաև սոսկ բառակազմական նշանակությամբ, մտապիտակապես այնպիսի նշանակություններ, ինչպիսին ունեն ամականների մակարդակում գործածվող իմաստափոխական ածանցները (հմմտ. —վուն ածանցը):

Լիզվի դարգույման վերջին շրջանում —գույն ածանցով շատ ամականներ ըմբռնվում են ոչ որպես գերազարկան, այլ հատկա-

բաժանական նշանակություն (կերտում են գոյականներ, ածականներ, բայեր, մակբայներ և այլն), քանի որ մասնակցում են նաև բառերի բերականական իմաստի ձևավորմանը՝ հաղորդելով նրանց արվյալ խոսքի մասին հատուկ բերականական հատկանիշներ: Այսպես՝ ներս, խիզախ բառերից (ածականներից) — բառանցքով կաղձվում են ներսաբառ, խիզախաբառ, որոնք արդեն նշանակում են հերոսի, խիզախի նման կամ հերոսի խիզախի պես, այսինքն՝ մակբայներ են:

Գարուն, ծով, արև բառերից — ային ածանցով կաղձվել են գարնանային, ծովային, արևային, որոնց —ային ածանցը հազորդել է վերաբերության, պատկանելության իմաստ (գարնան, ծովին, արևին վերաբերող, գարնանոց, ծովին, արևին հատուկ): Բացի նշված բառակազմական իմաստից, վերահիշյալ ածանցը փոխել է նաև գարուն, արև, ծով գոյականների խոսքի մասային իմաստները՝ զրանք վերածելով ածական անունների:

Արդյունվ, ծաղիկ, լույս բառերից —վոր և —վետ ածանցներով կաղձվել են արդյունավոր, ծաղիվոր, լուսավոր, և արդյունավետ, ծաղիկավետ, լուսավետ համանիշ բառերը: Այստեղ —վոր և —վետ ածանցների շնորհիվ ոչ միայն կաղձվել են նոր իմաստով բառեր, այլև առարկայական իմաստ ունեցող բառերը (գոյականները) վերափոխել են դրանց հատկանիշներն արտահայտող բառերի (ածականների): Իսկ —սլբյուն ածանցը վեճ, վեճմ և շեղ հատկանշային իմաստ արտահայտող բառերին հաղորդել է գոյականացնող և վերացական իմաստ, որով և ածական անունները վերափոխել են գոյական անունների:

Խոսքիմասանկերո-իմաստափոխական ածանցները զրտ իմաստափոխական ածանցներից առբերվում են ոչ միայն խոսքիմասանկերո նշանակությամբ. նրանց հաստեղ են նաև աղ բնորոշ առանձնահատկություններ, այսպես՝ նեճ իմաստափոխական ածանցները հիմնականում մենիմաստ են, ապա խոսքիմասանկերո իմաստափոխական ածանցների մեծ մասը բազմիմաստ է. այսպես՝ —անց բազմիմաստ ածանցը ունի հետևյալ իմաստները. ա) անդի (հմտ. արհեստանոց, բանջարանոց, հիվանդանոց, գաղանանոց, շորանոց և այլն), բ) զգեստի, վրձն կրելու առարկայի (հմտ. դիշերանոց, հովանոց և այլն), գ) զանազան շափերի, ինչպես՝ դամական (հմտ. կրեքանոց, կոպեկանոց, ուրբանոց,

հարջրանոց, տասանոց և այլն), ծանուրյան (հմտ. լիարանոց, գրամանոց, կիողորմանոց, փթնոց և այլն), ծավալային (հմտ. հատորանոց, էջանոց և այլն):

Մյուս նական յուրահատկությունը այն է, որ խոսքիմասանկերո իմաստափոխական ածանցներին բնորոշ է նաև կոնկրետացնող յուրահատկությունը, որից զուրկ են իմաստափոխական ածանցները, քանի որ գրվում են հիմնականում բառային սկզբնավերջերի, այսինքն արդեն կոնկրետ լեզվական միավորների վրա:

Չնոտ խոսքիմասանկերո-իմաստափոխական ածանցները քիչ են, քանի որ ածանցների մեծ մասը հիմնականում հանդես է գալիս երկու զործառույթով էլ՝ և՛ իմաստափոխական, և՛ խոսքիմասանկերո, այսինքն՝ որոշ բազադորություններում իմաստափոխական, իսկ որոշներում՝ խոսքիմասանկերո-իմաստափոխական. այսպես՝ —ական ածանցը ըշվառ-ըշվառական, եղյու-եղյուական բառերում իմաստափոխական է, իսկ ժողովուրդ-ժողովուրդական, զուլան-զուլանական և այլ բառերում՝ խոսքիմասանկերո-իմաստափոխական:

Ր. Քերականական-բառակազմական ածանցներ

§ 566. Հայերենի բառակազմական ածանցներից մի քանիսը հանդես են գալիս նաև քերականական դիրով: Դրանցից են.

§ 567. -Կույն. հայերենի այն քիչ թվով բուն ածանցներից է, որոնք ունեն քերականական նշանակություն: Ժամանակակից հայերենում ցույց է տալիս ածականների գերադրական աստիճանը. օրինակ՝ բարձր-բարձրագույն, գեղեցիկ-գեղեցիկագույն, լավ-լավագույն, խոյուր-խոյուրագույն, հզոր-հզորագույն, մեծ-մեծագույն, խիտ-խտագույն, ազելիվ-ազելիվագույն և այլն:

Ժամանակակից հայերենի արդի փուլում այս ածանցը իմաստի և կիրառության նկատելի փոփոխություն է ստացել և մի քանի կաղձմություններում սկսում է գիտաբանի նաև սոսկ բուռնկազմական նշանակության, մտաղբորակա այնպիսի նշանակությունը, ինչպիսին ունեն ածականների մակարդակում գործածվող իմաստափոխական ածանցները (հմտ. —վուն ածանցը):

Լեզվի զարգացման վերջին շրջանում —գույն ածանցով շատ ածականներ բմբռնվում են ոչ որպես գերադրական, այլ հատկա-

ինչի բարձր աստիճան արտահայտող բառեր (ածականներ)։ Ինչպես՝ խոշորագույն («Հին Հունաստանի շատ խոշորագույն գործիչներ, մտածողներ անվերահսկողին մասնակցում կամ ներկա էին լինում խաղերին», ՀՖ), արժեքավորագույն («Անտիդեոտեաստր ընմիական արժեքավորագույն նյութը սինթեզվել է ավտոտրիլային վառելիքի հետ», ԵՆ) և այլն։ Ապորտային տերմինաբանության մեջ նույնիսկ գործածվում են քերականույն քառ, ամենաքերականույն քառ տերմինները, որոնցում զերադրական աստիճանի նշանակություն ունի միայն ամենա- մասնիկով կազմվածը (հմմտ. «Տոկիոյում փայտն կերպով կարող են հանգեն գալ կոտզ եղբայրները (ամենաթեթևագույն և թեթևագույն քառ)», ՀՖ)։

Իհարկե, անկասկա աս հանգամանքից, գույն ամանցի հիմնական նշանակությունը անուղիմի գերադասան աստիճան արտահայտելն է (հմմտ. «Փորձարարը խոշորագույնն է հանրապետությունում», «Նա լավագույնն է դասարանում» և այլն)։

§ 568. Ամեն(ա)- իրեն անականների գերադրական աստիճան կազմող անանց առաջին լայն տարածում գտավ և ակադեմացով ամեն(ա)- մասնիկը, որը գերադրական աստիճան է կազմում գրիքի բոլոր սրահական անականներից. Ինչպես՝ ամենաերկար, ամենաբարձր, ամենամեծ, ամենավերջին, ամենագարգացած, ամենալավ, ամենաարժեքավոր, ամենագեղեցիկ և այլն։

Մանր.— ամեն(ա) անանցն առաջացել է համանուն գերանունով և անականով բաղադրված բարդություններից, որոնցում միջանդ է ամեն գերանունն իմաստը և անական գերադաս անդամով կազմված ավյալ բարդություններիցում այն վերածվել է գերադրական (քերականական) իմաստ արտահայտող անանցի։ Այն ալիմ էլ իրեն բարդության բաղադրիչ առկա է դերանուն+բայաբանա, դերանուն+գայական կազմակերպմանով կազմված սալալալալի բարդություններում (հմմտ. ամենաառես, ամենակեր, ամենապոետ և այլն)։

Ամեն(ա)- անանցի քերականական և բառակազմական դերակազմության և բնորոշման մասին է խոսում հիշյալ մասնիկն անականների ոլորտից նույն նշանակությամբ գերանունների ոլորտ անցնելու կատար. առպես՝ գերադրականաբան դրականություն մեջ հանգիստում են ամեն(ա)- անանցի գերանունների հետ դերադրական նշանակությամբ բաղադրվելու օրինակներ. Ինչպես՝

«Պո հների մեջ ամենահիեր, Պո ի՛մը, ի՛մը ամենախմբ, Ես քո բողոքը, ծիլը, կոկոսը՝ Ես բոնը, բոնը ամենախմբ» (Համո Սահյան, Հայրենիք)։

Ամեն(ա) անանցն ունի այն յուրահատկությունը, որ ի տարբերություն մի շարք դրական նախածանցների և ամեն առաջին բաղադրիչով բաղադրված բարդ բառերի, ձայնալրերով սկզբով բառերից առաջ պահպանում է ա հոգակառու. Ինչպես՝ ամենազրիվ, ամենաակախիվ, ամենաուլիմ, ամենաբնոր, ամենաունեղ, ամենազգասեր և այլն։

Մանր.— Ժամանակակից հայ քերականական աշխատություններում անականի համեմատության նվազական աստիճանը սույն տվող անանց է դիտվել -վուն բառակազմական անանց¹¹։ Սակայն -վուն անանցով կազմված բառերը ավելի բառակազմական նշանակություն ունեն, արտահայտում են որևէ հատկանիշի նման, մտովի իմաստները, թեև նրանցում դիտակցվում է նաև որևէ հատկանիշի ոչ լիակատար շարժով նմանվելու իմաստը (մասնավորապես գույնի հատկանիշ արտահայտող բառերի մեջ. հմմտ. սեպվուն, կարմրավուն, սպիտակավուն, դեղնավուն և այլն), սակայն հենց այն հանդամները, որ -վուն անանցը գործածվում է սահմանափակ թվով անական անունների մեջ, նույնպես վկայում է, որ այն չի կարող ներկայացնել անականի նվազական բաղադրական աստիճանը կամ համապատասխան քերականական կարգ։

§ 569. Քերականական-բառակազմական անանցներ են հիմնականում բաշխ կերպանանցները և սեռածանցները (-վ, -ցն, -ատ, -ոտ, -տ, -կոտ, -ո և այլն)։ Սակայն սրանց քերականական և բառակազմական նշանակությունները հավասար չեն. մի մասում ընդգծվում է քերականանցի հավասար չին. մի մասում բառակազմականը (հմմտ. -վ), իսկ մյուսներում՝ բառակազմականը (հմմտ. -ատ, -ոտ, -տ, -կոտ, -կոտ, -ո և այլն)։

§ 570. -Վ սեռածանցը հանդես է գալիս քերականական-բառակազմական դերով և ներդրողական ու պատճառական բայերից կազմում է կրավորական սեռի բայեր. Ինչպես՝ նվիրել-նվիրվել,

11 Տե՛ս Հ. Անադյան, Կապտար քերականական Հայոց լեզվի, հ. 1, 1952, էջ 59-60, Ա. Մուրադյան, Հայոց լեզվի բառային կազմը, 1955, էջ 361; Հ. Սեֆյան, Անական անունը ժամանակակից հայերենում, 1962, էջ 46։

շարդի-շարդիկ, խմել-խմվել, կարդացնել-կարդացվել, բոցնել-բոցվել, երկեցնել-երկեցվել և այլն: -վ ածանց ունեցող բառերը կոչվում են կրավորական բայեր:

Կրավորական բայերից ոչ բոլորն են կրավորական սեռի այսպես՝ սաերվել, լվացվել, հագնվել բայերը չեղոր սեռի բայեր են:

Կրավորական սեռածանց ունեցող մի շարք բայերում՝ գծվել, բնակվել, գրադվել, գանգատվել, գունտովել, գմալվել, քաֆնվել, համարակվել, սխալվել և այլն, -վ ածանցն ունի սոսի բաղադրական-բայակազմական նշանակություն, և վերոհիշյալ բայերը կրավորական չեղոր սեռի են:

§ 571. Վերջին տասնամյակներում -վ ածանցը աշխուժացավ բառակազմական (բայակերտական) նշանակությամբ: Այն մասնակցում է ոչ միայն որոշ չեղոր բայերի՝ բաշտհոբերի՝ ըստպղբորությանը (հմմտ. գրադվել, բնակվել և այլն), այլև անվանական հիմքերից (գերազանցապես զոչականական) մի շարք նոր բայերի կազմությանը. ինչպես՝ ալքրուրվել, ալիքվել, ալուենքվել, ամբողջվել, ամբոխվել, երամվել, կամարվել և այլն, որոնցում -վ ածանցը քերականական նշանակություն չունի, այլ բառակազմական-նշանական և բերոր է մեծ մասամբ զեղարվեստական լեզվին:

§ 572. Պատանական -ցն (-հցն, -ացն) ածանցը արտահայտում է բայի գործողության պատանականություն, այսինքն՝ զործողությանը հազորում է մեկ ուրիշի կողմից այդ գործողության կատարման ընթացքին միջնորդելու, ներգործելու զարգափար (հմմտ. նստել-նստեցնել, խոսել-խոսեցնել և այլն):

Հայոց լեզվի զորացման սովետական շրջանում այս ածանցը խիստ ակտիվացավ փոխառյալ հիմքերով նոր բայեր կազմելու: Ինչպես՝ կոտրվեցանել, կոպեւեցանել, մարիլիզացանել, էվակացանել, վուկանացանել, օկուպացանել և այլն, որոնց անվանական հիմքերը կամ փոխառյալ են (կոտրվեցանել, կոպեւեցանել, մարիլիզացանել, էվակացանել, օկուպացանել), կամ կազմակերպիչ, էվակացանել, վուկանացանել, օկուպացանել և այլն¹²: Մրանցում -ացն ածանցի աց տարրը համընկնում է վերոհիշյալ անվանական հիմքերի -աց հնչյունախմբի հետ (հմմտ.

վուկանիզացիա, էվակուացիա և այլն) և զանում մի տեսակ կիրառությունը ածանց. այստեղ -ացն ածանցի պատճառական կամ քերականական նշանակությունը փոքր-ինչ թուլանում է և այն ձեռք է բերում նաև բառակազմական (բայակերտական) արժեք, մասնակցող, որ վերոհիշյալ բայերը հայերենում չունեն իրենց զուգահեռ անաձանց ձևերը (հմմտ. կոտրվել, էվակուանալ, կոպեւել և այլն), ինչպես որ ունեն ակտիվանալ, երամվանալ, պատվանալ և այլ բայերը¹³:

§ 573. -Ատ, -ոտ, -տ, -կոտ բայածանցները մի շարք բայարմատներից կազմում են գործողության սաստկական երանգ ունեցող բայեր և արտահայտում են կրկնապատկմած, բազմապատկմած գործողության իմաստ. ինչպես՝ կտեսնել, ջարդոնել, զատկոնել, զջլտել, կծտակ և այլն: Այսպիսի բայերը կոչվում են բազմապատկական բայեր:

Սաստկական բայածանց է համարվում -ստակ-ը՝ կարմասակել, վաշխտակել բայերի մեջ:

Եթե կրավորական և պատանական բայերում (չհաշված կրավորական չեղոր բայերը) գերիշխում է առավելապես քերականական նշանակությունը, ապա բազմապատկական բայերում քերականական և բառակազմական նշանակությունները հավասարապես են հանդես գալիս (հմմտ. ջատկոնել, թռչկոտել, նստոտել և այլն):

§ 574. Հայերենում կան սաստկական-բազմապատկական երանգ արտահայտող մի շարք ածանցներ, որոնք կրում են բարբառային երանգ և առավելապես բերոր են ժողովրդախոսակցական լեզվին: Մրանք գործողության սաստկության, ուժգնության երանգ արտահայտող ածանցներ են. ինչպես՝ -ո՛՝ ճանկել-ճանկունել, ճկել-ճկոնել, -կ՝ խցել-խցկել, պորկալ, ծծծկել, -խ՝ ջեռել-ջեռչակել և այլն:

§ 575. Գործողության սաստկության և կրկնակիության երանգն առավել բնորոշելու համար հաճախ վերոհիշյալ ածանցները միանում են միմյանց կամ այլ ածանցների (հանդես են գալիս խմբերով). ինչպես՝ -կլլտ՝ բոցկլլտալ, կայծկլլտալ, էնծկլլ-

¹² ՏՃՎ Պ. Առաջ. Փամատականց հայոց լեզվի գրառիմաց. 1955, էջ 11, Ա. Աբրահամյան, նշված աշխ., էջ 132:

¹³ ՏՃՎ Ա. Աբրահամյան, նշված աշխ., էջ 132: Ս. Ա. Էրյան, Բառագաշարի հարստացումը ածանցման մեջ, ԵՊՀ լեզվի գրադրությունը սովետական շրջանում, էջ 102—110:

տալ¹⁴, -ոս՝ պոկոտել, բափռակել, -կոս՝ ծեծկոտել, կոխկոտել, վառ՝ զզվառել, վազվառել, վա՝ հոսվառել, պահվառել, -բե՝ միրբեկ, -սկ՝ սրակել, -ոսկ՝ սողոսկել, -սա՝ ղեհառել, լլսլսառել, -առա՝ շահգառառել, -շա՝ խառնշառել, կալշառել, -եղ՝ մրեղել, հրեղել, վրբեղել և այլն:

Մրանցից որոշ բայերում գերակշռում է առավել բնորոշվում է բառակազմական նշանակությունը. օրինակ՝ -եղ (մթնեղ-հրեղ-դեղ), -կ (խցկել, ծեծկել), -խ (չնչխել. այստեղ սաստկական իմաստի հետ, -խ անանցը ջնջել բային ավելացրել է նոր՝ սշարգել, սպանելիս իմաստները) և այլն:

Մանր.— Վերահիշյալ բազմապատկական անանցները իրենց նշանակությամբ մտա են ուստերենի բայական նախածանցներին, որոնք հասլասարադեա և՛ քերականական նշանակություն ունեն, և՛ բառակազմական. այսպես՝ писать—написать, думать—подумать և այլն:

§ 576. Ամփոփելով այս բաժինը, կարելի է ասել, որ երեք տիպի անանցներն էլ ունեն որոշ ընդհանրություններ, որ դրսևորվում է տարբեր շափերով: Այսպես՝ բուն բառակազմական անանցներից քերականական-բառակազմական անանցներին առավել մտանում են իմաստափոխական անանցները: Նրանց միջև բնորոշանրությունը արտահայտվում է հետևյալ հասկանիչներով:

ա) երկու տիպի անանցներն էլ չեն մասնակցում անանցվող հիմքերի կամ բառերի խոսքիմասային իմաստների փոփոխությանը և զործառում են հիմնականում միկ խոսքի մասի ուղրտում, մինչդեռ խոսքիմասակերտ-իմաստափոխական անանցները տարբեր ակտիվությամբ և տարբեր շափերով կարող են դրվել մի քանի խոսքի մասերի վրա և կազմել մեկ կամ մի քանի խոսքի մասային իմաստ ունեցող բառեր: Այսպես՝ խոսել բայից կազմվում են խոսվել և խոսեցնել բայաձևերը, որոնցում -վ և -ցն (-հցն) անանցները խոսքիմասային իմաստների փոփոխություն չեն առաջացրել: Արդպես էլ զուևշ, տուն, գիծ բառերը նվազափաղաբաշխան անանցներ օտանակով (հմմտ. դշխիկ, տեսկ, խոսել) չեն փոխում իրենց խոսքիմասային իմաստները: Բառերի խոսքիմասային իմաստների փոփոխությունը մասնակցում են խոսքիմասակերտ-իմաստափո-

խական անանցները (հմմտ. թև-թևավար, գիծ-գծավոր, զծային, քեկեր-քեկերություն, քեկբախան և այլն):

բ) երկու տիպի անանցներն էլ մեկիմաստ են: Երեք տիպի (իմաստափոխական, խոսքիմասակերտ-իմաստափոխական և քերականական-բառակազմական) անանցների համար էլ բնորոշ է հիմնականում իմաստափոխական լուրահաստությունը և սկզբնաձևերին միասնալու սահմանափակությունը. երեք տիպի անանցներն էլ իրենց գործառության ուղրտում իսկ չեն կարող դրվել ցանկացած հիմքի վրա. այսպես՝ -իկ անանցը չի կարող դրվել բոլոր գոյականների վրա. ինչպես՝ խելիկ, պատիկ, երեխայիկ, մտիկ և այլն: Նույնը և -ավոր անանցով կազմվում են մտավոր, հոգևոր, բաց ոչ՝ խելավոր, ուշավոր:

Այս տեսակետից միատեսակ հարաբերության մեջ չեն սևահանցները. այսպես՝ գրաճառական -ցն (-հցն, -ացն) անանցը գրվում է առավել մեծ թվով բայերի վրա, հիմնականում չեզոր և մասամբ էլ ներգործական (հմմտ. խոսել-խոսեցնել, տեսնել-տեսցնել, հիանալ-հիացնել, սակայն չի լինի հրավիրեցնել, կատուցեցնել, գրեցնել, մտեցնել և այլն): Կրավորական -վ անանցը գրվում է հիմնականում ներգործական սեռի բայերի վրա, ինչպես՝ սիրել-սիրվել, խմել-խմվել, եկարել-եկարվել, հեավիրել-հեավիրվել և այլն, սակայն չի կարելի կազմել զոգալ-զոգալցել, վազվել և այլն: Բազմապատկական անանցները առավել քիչ թվով բայահիմքերի են միանում և այս տեսակետից ոչ մի օրինակափոխական չեն նեթարկվում, այսինքն էլ կարելի ասել, թե կոնկրետ օր սեռի բայահիմքերի վրա են գրվում. օրինակ՝ չի կարելի կազմել մտնառել (մտնել-ից), խմնառել և այլն:

Նշանակում է, այս հասկանիչով (անանցվող հիմքերին միանալու սահմանափակությունը) քաղմապատկական կերպածանցները բուն բառակազմական անանցներին ավելի են մտա, քան սևահանցները:

ԱՄԱՆՏՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՏ ԴԻՐՔԻ

§ 577. Հստ բառի մեջ ունեցած դիրքի, անանցները բաժանվում են երեք խմբի՝ նախածանցներ, միջածանցներ և վերջածանցներ: Փամանակակից հայերենում գործառում են հիմնականում

նախածանցները և վերջածանցները, ըստ որում գերակառում են վերջածանցները:

Ն ա խ ա ծ ա ն ց ն ե Ր

§ 578. Նախածանցները դրվում են հիմնական ձևայիններից առաջ և հանդես են գալիս միայն նորային դիրքում:

Ժամանակակից հայերենի նախածանցները, ըստ իրենց ընդհանուր իմաստի, կարելի է բաժանել երկու խմբի՝ ժխտական և դրական:

Մանր.— Հին հայերենը բացի ժխտական նախածանցներից, ունեցել է ընդամենը մի քանի դրական նախածանցներ (հմժա. անդր-, համ-), սակայն 5—7-րդ դարերում հունաբան զարթոյի հեղինակները ստեղծեցին մի շարք դրական նախածանցներ, որոնց մեծ մասը հաստատորեն մտավ հայերենի բառային կազմի մեջ՝ զանազով նրա հարստացման և համալրման կարևոր միջոց:

Ժ խ ա կ ա ն ն ա խ ա ծ ա ն ց ն ե Ր

§ 579. Ժխտական նախածանցները հայերենի բուն նախածանցներն են, որոնք բնորոշ են հայերենի դարպացման բոլոր շրջաններին:

Ժխտական նախածանցներն են՝ ան-, ալ-, զծ-, ու-, շ-:

§ 580. Ան- նախածանցը ամենակենսունակ ժխտական նախածանցներից է, այն ժխտական և բացասական իմաստով ամականներ է կազմում հետևյալ խոսքի մասերից.

ա) Փոյականներից կազմում է ժխտական՝ օրոնք բան շունենալու, օրոնք բանից զուրկ լինելու՝ իմաստով ամականներ. ինչպես, օրինակ՝ անհուն, անմար, անգուր, անելուր, անբիծ, անգործ, անմաշ, անեմալտ, անզույն, աներևույթ, անգարգ, անխելք, անմաշ, աննոզի, աներապույր, անմեղ, անընկեր, անօրեն, անկարգ և այլն:

բ) Ածականներից կազմում է ժխտական և բացառողական հասկանալի իմաստ արտահայտող ամականներ. ինչպես՝ անազնիվ, անբարոյակաճ, անբնական, անընդունակ, անկայուն, անկիրք, անպիտան, աննիշալար, անհամարձակ, անսովոր, անհաստատ, անվճարական, անխոնճմ և այլն:

Ան- նախածանցը առանձնապես կենսունակ է -լի վերջածանց ունեցող բաների հետ. ինչպես՝ անբաժանելի, անբուժելի, անզնամատելի, անընկենլի, անընդունելի, անխախտելի, անխոցելի, անըղելի, անհեբլելի, անհերելի, անհկատելի, անհախանելի, անվստահելի, անտանելի, անհեհելի, անհակտելի և այլն:

գ) Բայարմատներից, բայահիմքերից կազմում է ածականներ հարակատար և ենթակայական դերբայների ժխտական ձևերի նշանակությամբ. ինչպես՝ անակկելալ (անսպասելի, չսպասող), անավո՛ր (չամբարող), անանց, անավարտ (չավարտված), անգետ, անզգա (չզգացող), անաշտ, անմեռ, անմոռաց, անհկատ, անապառ, անեղով, անվարժ, աներեւ, անկուր, անհամբեր, անխախտ և այլն:

Մանր.— -ելի վերջածանց ունեցող ածականներից շատերը նույնպես ան- նախածանցով ստանում են ենթակայական և հարակատար դերբայների ժխտական իմաստ. ինչպես՝ անասելի, անգառմելի, անհերելի, անխելի և այլն:

դ) -Այն ամանցով վերջացող մի շարք բայանուններից և -ել-, -ած վերջածանցներով կազմված մի քանի զերբայներից կազմում է ածական անուններ, որոնք առավել բնորոշ են բանավոր խոսակցական լեզվին. ինչպես՝ անկուրել, անկուրում, անհատում, անզիլում, անխնդում, անգարգացած, անկարգացած, անչափել, անմտածել և այլն:

§ 581. Ան- ամանցով կազմված բաները թեև ընդհանուր առմամբ արտահայտում են ժխտական իմաստ, սակայն դրանով կազմված մի շարք բաղադրություններից ամանցը հարցորդում է դրական իմաստ, սրանց այն բառերն են, որոնց ակզրնածները բացասական իմաստային երանգ են արտահայտում և ան- նախածանցը, ժխտելով ու բացասելով այդ նշանակությունը (բացասակցական), դրանք վերածում է դրական իմաստ ունեցող բաների. ինչպես՝ կեղծ-անկեղծ, երեւ-աներեւ, խախտ-անխախտ, բերի-անբերի, բիծ-անբիծ, եղծ-անեղծ, հիշաշար-անհիշաշար, աշտու-անաշտ և այլն:

§ 582. Ան- նախածանցով և ունեցողիչ նշանակությամբ մի շարք վերջածանցներով (հմժա. -ևղ, -ուն, -(ա)վոր, -անի և այլն) բաղադրված բաները կազմում են իմաստային հակադիր

ըույզեր. ինչպես՝ մեղավոր-անմեղ, համեղ-անեամ, ուժեղ-անուժ, նկատելի-աննկատելի, ռոբոմելի-անռոբոմ, հագեցնալ-անհագ, պատկանելի-անպատկան, կանոնավոր-անկանոն, ներսավոր-աննեար, արժանի-անարժան, դիտուն-անգնատ, կենդանի-անկենդան, զգայուն-անզգա և այլն: Ստացվում են բուննորդի» և սշունեցորդի» հակադիր նշանակություն արտահայտող բառեր:

Ժխտական նախածանցները, ի տարբերություն զրական նախածանցների մեծ մասի, մասնակցում են բառերի խոսքի մասալին իմաստների կազմությանը՝ սկզբուններին հադորդելով հատկանշային իմաստ (հմմտ. հուն-անհուն, բիծ-անբիծ և այլն):

§ 583. Ժամանակակից հայերենում -ան նախածանցով պահպանվել են այնպիսի բազադուրություններ, որոնց արմատների իմաստը արդի հայերենում ինչ-որ շահով միացնած կամ հընացած է, ինչպես, օրինակ՝ անհաշտ, անհաշտ, անզգամ, անդուլ (անդադար), անեղծ, անլուր (չսլված), անմեկին (անմեկնելի, անբացատրելի), աննազդող (անասան, հաստատ), անշեշ, անզոգ, անպանույն (պարզ, համեստ), անբակտելի (չլուծող, չբանդող, չբաժանվող), անվեներ (անվախ, աներկուղ), անբրիբ (անթարթիչ), անբարիշտ, անենքեք, անեռնի (խոշոր մեծություն ունեցող, աղեղ, տնկ) և այլն: Մրանցում արմատի իմաստի միացման և ճանցման աստիճանը բուրբ բառերում միատեսակ և հավասար չեն: Նրանցից շատերն (նունի, հեկեմի, բարիշտ, վեհեր, պանույն և այլն) վաղուց արդեն(դեռևս հին հայերենում) զրկվել են իրենուրույն գործածությունից և կոնկրետանում ու գործածություն են գտնում միայն -ան- նախածանցի շնորհիվ: Առանձին դեպքերում այս տիպի սծանցավոր բառերի իմաստներն այնքան են միացնած, որ ազդել են նաև -ան- նախածանցի իմաստի վրա, որի հետևանքով վերջինս ևս իմաստի միացում է ապրել ու դարձել քարացած ածանց: Արդյունքը եղել է այն, որ միացնել է ամբողջ բազադուրությունը և վերածվել պարզ կազմության կամ սկզբունաձևի. այսպես՝ անագուսն (գործի, գույք չունեցող), անզոր (հին, դուր, դուր բառից=հանգիստ, դյուր հանելի), անզունղ (զունղ-հատակ, խորք) բառերի իմաստների միացման և նախածանցի քարացման պրոցեսն սկսվել է շատ վաղուց, և նրանց կազ-

մության բազադրական բնույթը վեր է հանվում միայն հիշյալ բառերի ստուգարանովյալմբ:

§ 584. Աղ- ածանցը քիչ գործածական ժխտական նախածանցներից է. նրանով հեից հայտնի են միայն ապահուսե, ապաբույն, ապերշանիկ, ապերասան (անասնձ), ապերախտ, ապիկար, ապուշ, ապանով բառերը:

Սակայն դեռևս մեր լեզվի նախասովետական շրջանում և սովետական շրջանի սկզբներինց գործածվում էին ապագգային, ապագասախարգային, ապաշարբային, ապապոլեաաարացում և այլն, որտեղ աղ- նախածանցը թեև ունի ժխտական իմաստ (հմմտ. սպագգային-ոչ ազգային), սակայն փոքր-ինչ այլ հրանդով (հեռացում, դուրս), քան ապաշեուե, ապաբախտ և այլն, որոնցում ժխտականի իմաստը հավասար է -ան- ժխտական ածանցի իմաստին (հմմտ. ապաբախտ—բախտ չունեցող, անբախտ և այլն):

Այժմ ժխտական -աղ ածանցը աստվել ակտիվ է սովյալ վիճակից հանել, հեռացնել, դուրս բերել¹⁵ իմաստներով. ինչպես՝ աղաբաղաբեկ, ապամեռամել, ապակեռուեացում, ապառավակեացում, ապակողմեուռչում, ապառախվուռում, ապակոնեովագում (ՍԷ), ապագադուրացում (ՍԷ), ապաշբբայեացում (սբաները համալարաներ), ապաբամտիկ և այլն:

§ 585. Գծ- ժխտական նախածանցով կազմվել են քիչ թվով բառեր: Դրանցից են՝ դժբախտ, դժվար, դժգոհ, դժգույն, դժպատեն, դժկերպ և այլն:

Մտեր. — Դեմդակ, դժվար, դժխեմ և դժոխ մոխառալ բառերում դժ-հնչյունախոսմբը թեև բառերին բացասական իմաստ է հաղորդել, սակայն նշված բառերի արմատների իմաստները չեն գիտակցվում ժամանակակից հայերենում, և դրանցում դժ-ը չի դիտվում իբրև ածանց, թեև ծագումնաբանորեն կապված է մեկնույն դժ (պրակ. վատ, շար) արմատի հետ:

§ 586. Տ- նախածանցով կազմվել են սակավաթիվ բառեր. ինչպես՝ տգետ, տգեղ, տհաս, տկար, տնկ, տհան, ամադրի, տրվել և այլն:

¹⁵ Այս իմաստը դալին է դեռևս հունարան հերթակներից, որոնք հին հայերենի աղ- ժխտական մասերին են վերագրել նաև հունարենի սբո նախածանցի հեացում, բաժանում, վերացում նաև ժխտում իմաստները:

Տ- նախածանցը բարացած է ախար (Հին խոր արմատից, հմմտ. խրահանք), տհաշան, տխմար բառերում:

§ 587. Ձ- անանցով կազմվել են քիչ թվով բառեր. ինչպես՝ չհաս, չբեր, չսես, չխոսկան, չկամ, չունեաք և այլն:

Մանր.— Ձ-ն որպես ժխտական մասնակի այժմ գործառում է բայերի ժխտական ձևերը կազմելիս. ինչպես՝ չգնալ, չխոսել, չազմբել և այլն:

Գրական նախածանցներ

Ժամանակակից հայերենի գրական նախածանցները հետևյալիներն են՝

§ 588. Անդր- ունի «դեպի այն կողմ, այն կողմում» բառակազմական իմաստը Այս անանցով ժամանակակից հայերենում գործածական են անդրադարձ, անդրադառնալ, անդրավարտիկ, անդրաշխարհիկ, անդրբևեռ¹⁶, անդրկայաբանային, անդրկարգապայան, անդրկասպյան, անգրչրհեղեղյան, Անդրկովկաս, անդրադախային, անդրօվիկանյան, անդրօլոգյան, անգրսիբիրյան, անդրկուխյան և այլն, այլև նորակազմ անդրուրանային («Միլիթերովի են ևս 12 անդրուրանային էլեկտրոններ», են) բառը:

§ 589. Աս- Հին հայերենում գործածվել է իբրև նախդիր՝ գրվելով որոշ հոլովների ու բայերի վրա: Հունարան հեղինակների կողմից այն գործածվել է իբրև անանց՝ պահելով նախդրի սենյացած «գործողության ուղղություն», «գիտում», «գաղափարում», «տրեղ բանի մտ գանձելը», «տեղ» (մտ, վրա, վրան, առաջ, առաջը, գիտացը) իմաստները Այս անանցով կազմված մի շարք բառերում անանցը այնքան սերտորեն է ձուլվել անանցվող բառերին, որ նրա անանց լինելը այլևս չի դիտարկվում. ընդ որում այս ձուլման պրոցեսը որոշ կազմություններում ավարտվել էր դեռևս հին հայերենում. դրանցից են՝ առանձին, առանց, առաջ, առաջիկ, առեղծված, առաջը, առույզ, գառավել, գառանցել, գառիվաչը (վերջին կազմություններում առ- նախդրին միացել է

¹⁶ Անդր- նախածանցը սկզբնաձևերին միանում է մեծ մասամբ առանց հոլովակառի. իսկ փոխառյալ հիմքերին՝ զերգականացուկա անհոլակազմ ձևով:

նույն գ- նախդիրը) և այլն: Ժամանակակից հայերենում այս անանցով գործածական են նաև առերես, առերեսում, առգրավել, առկայծել, առնաառաքել, առնավես, առնեն, առնմանություն, առինքնել, առկցուն և այլն:

Սովիտական շրջանում այս անանցը իմաստի աշխուժացում է կենսունակություն է ձեռք բերել. սրանով կազմվել կամ ակտիվ գործածություն են ստացել առավելակ, առբերիչ, (Փարոսն), սոնայնույր (Մով. զրպի), առնոս, առնզում (սրբականացվեցին տիեզերանավի կոշտ սոնզում և նրանց էլեկտրական շղթաների միացում», ՍՀ), առբերում, առդիր, առնկատում («Ելլը հեշտաթյանը կարող էր դառնալ զեպի լարված առնկատումը», ՍՀ), առնարկի և այլ նոր բառեր:

§ 590. Արա- (առաջացել է արաբա-արաբից բառից = գուրս, գրսում). ժամանակակից հայերենի կենսունակ նախածանցներից է նրանով կազմվել են արաագրել, արաագնաց («Ավարալից ՄԱԿ-ի ապագազուրկացման կոմիտեի արաագնաց նստաշրջան», ՍՀ), արաանկարել, արաառվել, արաաշնչել, արաաձել, արաասանել, արասառչ, արասահգուտ և այլն: Նոր կազմություններ են արաազառվել, արասկենտուն, արաավիժել, արտերկրային («Մարդկության համար կարող են դրանիս հետևածներն ունենալ կենտրոնները արտերկրային քաղաքակրթությունների հետ», են), արասենեակել («Թոկ մշտաները հայտան մոլորակների ձգողության սակ արասենեակել են», ՍՀ), արաավարվել, արաավիժել և այլն:

§ 591. Բաղ- (առաջացել է հին բաղ արմատից. հմմտ. բաղկանալ, բաղդի, գրազվել և այլն). կազմել է սակավաթիվ բառեր. ինչպես՝ բաղադրություն, բաղդատել, բաղնյուտել և այլն:

§ 592. Բաց- կազմվել է գրաբարյան ի բաց մակբայից (= հետո, բացի, դուրս, մի կողմ): Այս նախածանցով հայտնի են բացականչել, բացակայել, բացանայտել, բացառություն, բացառուել, բացառություն, բացազատել և այլն:

§ 593. Գե- նչյունակում է վեր, ավելի բարձր, բարձագույն (հին հայերենի գեր ի վերս=ավելի վեր, շատ ավելի նախդիր-մակբայից): Այս նախածանցը ժամանակակից հայերենի ամենակենսունակ նախածանցներից է: Սրանով հայտնի են գեթակատարել, գեթաբաշ, գեթառաչակ, գեթակ, գեթաղ, գեթասուլ:

գերապատիվ, գերաբազ, գերբառակ, գերբույլ, գերյառում, գերի-
բական, գերխոր, գերհենչունային, գերհզոր, գերնայնային, գեր-
նշարիտ, գերնեպրնբաց, գերկարեակիվ, գերնոր, գերտեղմ, գեր-
ցածր և այլն:

§ 594. Կեր-. նշանակում է փոխանակ, փոխարեն (մեկի,
մի բանի տեղը): Այս ածանցով հայտնի են քիչ թվով բառեր, ինչ-
պես՝ դերանուն, դերբայ:

§ 595. Ենթ-. նշանակում է տակ, տակը, ցած. համանիշ է
ստոր-նախածանցին: Ենթ— նախածանցով կազմվել են ենթադր-
ել, ենթակոմիտե, ենթասպա, ենթակա, ենթավարպետ, ենթա-
ստամոխային, ենթամաշկային, ենթակելզային, ենթածնոտային,
ենթախումբ, ենթաշրջան, ենթագիտակցություն, ենթակայան, են-
բառեսակ, ենթացանկ, ենթաշեխ, ենթահանձնաժողով, ենթաբե-
մա, ենթառեստ, ենթաբյուրեղ, ենթահամակարգ, ենթաձուլք,
ենթահաբզի՞ և այլն:

§ 596. Ընդ- (առաջացել է հին հայերենի ընդ՝ տակը նախ-
դրից) սրանով կազմվել են՝ ընդատաշ, ընդարմանալ, ընդզնել,
ընդզրկել, ընդզեմ, ընդդիմանալ, ընդլայնել, ընդհարվել, ընդհա-
տել, ընդհոսլ, ընդհանուր, ընդհատակ, ընդունակ, ընդմիջել,
ընդլզել, ինչպես նաև՝ ընկեր (ընդ-կեր), ընկրկել (<ընդհրկել,
կրունկ արմատից. հմմտ. կրնկակոխ), ըմբռնել (ընդրռնել> ըն-
բռնել> ըմբռնել) և այլն: Ընդ ածանցով նորակազմ են ընդգեա-
նյա, ընդջրյա, ընդծովյա բառերը:

§ 597. Հակ-. առաջացել է հակել, հակառակ բառերից (հու-
նարեն ձորտ նախածանցի նմանակությանը), Սրանով կազմվել է
կազմվում են բազմաթիվ բառեր, օրինակ՝ հակադարձ, հակազոռն,
հակազդել, հակակրանք, հակաեմբոված, հակամեռ, հակաճանալ,
հակամարտություն, հակասություն, հակարույն, հակափաշիստ,
հակափաստաբեկ, հակամիջոց, հակամարմին, հակաբիտոսիկ (ան-
տիրիտոսիկ) և այլն:

§ 598. Համ-. ժամանակակից հայերենում հանդես է գալիս
երկու ածանցային իմաստով.

այնույն, նման, միևնույն, մեկ, միասին. ինչպես՝ համազույ-
կացի, համադաս, համադասություն, համադրել, համերկրագի,
համախոն, համակարծիք, համամիտ, համարանություն, համա-
կերպություն, համակեցություն, համազարկ, համախյլ, համա-
կրելի, համաձայնություն, համաճուն, համաճիշ, համաժողով, հա-
մաժայի, համաժողպար, համահեղինակ, համաժամանակյա, հա-
մասնություն (իզոմորֆիզմ) և այլն:

բ) Հանուր, համայն, բոլոր, ամբողջը, ամբողջովին նշանա-
կություններով. օրինակ՝ համազույժար, համալսարան, համաժո-
ղով, համաձուլք, համակարգ, համակառույց, համահայաստան-
յան, համամիտրինական, համաշխարհային, համապարփակ, հա-
մաստակալան, համատարած, համապետական, համակենտրոնա-
ցում և այլն:

Հայերենի զարգացման սովետական փուլում առավել ընդ-
լայնվեց այս ածանցի երկրորդ նշանակությունը և առաջացան
մի շարք նոր բառեր, ինչպես՝ համատարփ, համապատկեր, համա-
կողմանի, համալիր, համահարբում, համաշինարարական, համա-
նախագահ և այլն:

Մանր.— Այս ածանցը մի բանի բառերում հանդես է գալիս
հնչյունափոխված (ամ, հան) ձևով. ինչպես՝ ամբառնալ (համ-
բառնալ), ամփոփ (արմատն է փոփ. հմմտ. սփոփել), հանդեպ,
հանդիպել, հանուր և այլն:

§ 599. Հոմ- նախածանցը ստեղծվել է հունարենի ոյս
նախածանցի փոխարեն՝ արդեն եղած մերահիշխալ հոմ- ածանցի
ձևափոխությունից (համ > հոմ), ապալին հոմ նախածանցը
կենտրոնակոթյուն շփումով հայերենում, բանի որ այդ միևնույն
իմաստով արդեն կենտրոնակն և զործանական էր համ նախածան-
ցը: Հոմ- նախածանցով ժամանակակից հայերենում սահմանվել
է համանիշ բառը:

§ 600. Հար- (զրարարյուն հար արմատից). իրեն նախա-
ծանց սահել է ա) կցված, կից, հետք, միասին և բ) միշտ, անընդ-
հատ, անզղար, շարժման նշանակությունները: Առաջին նշանա-
կությամբ կազմվել են հարաբերել, հարաբերություն, հարաբերել,
հարաբերություն, հարանգական, հարակից և այլ նախածանցավոր

17 Կերպերներ նորակազմ են:

բառերը, իսկ երկրորդով՝ հարաշարժ, հարկաատար, հարառն, հարանուն և այլն:

§ 601. Մակ- ունի «վրաս», «վրան» իմաստները: Սրանով կազմվել են մակարերի, մակարյովժ, մակագրել, մակահուն, մակազդում, մակբայ, մակդիր, մակերևույթ, մակըրբացություն, մակախեղու, մակիչ և այլ բառերը:

§ 602. Նախ- գործածական է «սկզբի, առաջին» իմաստով. ինչպես՝ նախաշալիղ, նախահաճակ, նախասենյակ, նախագուշակել, նախադաս, նախադասություն, նախածանց, նախամատ, նախախելու, նախանաչ, նախագահ, նախահամարյուն, նախապատկություն, նախահայր, նախամայր, նախաբան, նախատիպ, նախօրոհ, նախամայր, նախալարել («...Հսկա սեղ են գրառում նախալարված կոնստրուկցիաները», են), նախաօրիմիական, նախաինժեպարական, նախամաղցկեղային¹⁸ և այլն:

§ 603. ներ- իբրև արմատ կենդանի է ներս, ներքին, ներքինի, ներհնակ, ներհուստ բառերի մեջ և իմաստով կապված է դրբանց հետ: ներ- նախածանցը խիստ կենսունակ է. նրանով կազմվել և կազմվում են մեծ թվով բառեր. ինչպես՝ ներառյալ, ներարկել, ներգաղթել, ներգործել, ներգրավել, ներդաշնակ, ներդրել, ներխուժել, ներծծել, ներհասել, ներհուն, ներհակ, ներբջյային և նորակազմ՝ ներարկիչ, ներբնակաբանային, ներհամակարգային, ներկուսակցական, ներփակ, ներտաչ (սննդառչ հաստացնեի գործարանն, են), ներհոսք, ներհոսնչ, ներհաչել և այլն:

§ 604. Շաղ- անկենսունակ նախածանց է. իմաստով կապված է շաղ արմատի հետ (= կապ, կցում, միաձուլում) և համանիշ է շար- և բաղ- ածանցներին: Իբրև արմատ առկա է շաղել, շաղախ, շաղախել, շաղախիկ, շաղախրտ բառերում: Իբրև նախածանց գործածվում է միայն շաղկապ կազմության մեջ:

§ 605. Շար- իմաստով կապված է շար արմատի հետ (հմտ. շարք), որ նշանակում է կարգ, շարվածք, խումբ: Շար- նախածանցով կազմվել են շարացանկ, շարադրել, շարահարել, շարահյուսել, շարանյութություն, շարակցել, շարունակել և այլն:

§ 606. Պար- առաջացել է պար արմատից. նշանակում է շարքը, շրջան, շուր կողմը, պտույտ: Իբրև արմատ հանդես է գալիս պարույկ, պարույր, պարուրել բառերի մեջ: Իբրև նախածանց կենսունակ չէ և կազմել է սակավաթիվ բառեր. ինչպես՝ պարագիծ, պարբերություն, պարբերույթ, պարբերաբերք, պարունակել, պարփակել և այլն:

§ 607. Ստար- կազմվել է հայերենի համանուն բառից, որ նշանակում է ներքև, սակիք, ցած (հմտ. ստորին, ստորև, ստորոտ և այլն): Ստար- նախածանցով կազմվել են ստարաբանում, ստարայաս, ստարադյալ, ստորակետ, ստորաբաշչ, ստորազասություն, ստորերկրյա, ստորոգյալ, ստորջրյա, ստորլեռնյա, ստորգետնյա և այլն:

§ 608. Վեր- կազմվել է համանուն բառից (հմտ. վերտին, վերև, վերին), իբրև ածանց կենսունակ է «ներից, վերտին» նշանակությամբ և գրվում է գերադասցապես բաշիթի սկզբից. ինչպես՝ վերաբանել, վերադաճ, վերադաճալ, վերակառուցել, վերահառաարակվել, վերհիշել, վերադրել, վերապատահանել, վերստուգել, վերափոխել, վերլուծել, վերհուշ, վերամոտածել, վերապահենել և այլն:

§ 609. Տար- կազմվել է հին հայերենի տար արմատից: Այն ուներ երկու հիմնական իմաստ՝ ա) հեռու, հեռավոր, օտար, զուր և բ) այլ, տարբեր, ուրիշ: Առաջին իմաստով տար- նախածանցը ժամանակակից հայերենում գործածվում է հատուկներտ բառերում, ինչպես՝ տարագիր, տարաշխարհիկ, տարախոսիկ, տարանյութ և այլն): Երկրորդ իմաստը առավել կենսունակ է և հանդես է գալիս տարամամ, տարախոսել, տարանեսակ, տարբերակելում, տարակարծիք, տարակրծություն, տարամայնություն, տարբերել, առօրինակ, առտրմառ, տարիմատ, տարանելույթ, տարամանակյա և այլ բառերում:

§ 610. Տրամ- ունի միշով, ծայրեծայր, մի ծայրից մյուս իմաստները (ստեղծվել է հունարենի δία մասնիկի համապատասխան իմաստների պահանջով): սրանով կազմվել են տրամաբանություն, տրամագիծ, տրամադրություն, տրամալար, տրամախաչում, տրամաչափ, տրամախաչություն և այլն:

¹⁸ Վերջինները նորակազմ են:

§ 611. Փոխ- կազմվել է փոխել բայի արձատից և իբրև ածանց հանդես է դալիս փոխ արձատի նշանակությունը: Իբրև արձատի բիշ է կենսունակ (համտ. փոխարեն, փոխանակ, փոխել, փոփոխել): Փոխ- նախածանցը ժամանակակից հայերենի կենսունակ նախածանցներից է և ժամանակորակա ակտիվացել է հայերենի սովետական շրջանում. իբրև ածանց փոխ-ը հանդես է գալիս երկու իմաստով. ա) փոխարեն, ինչպես՝ փոխաբերում, փոխարենաբերում, փոխաբերում, փոխանակում և այլն և բ) փոխդարձ. ինչպես՝ փոխհրահրություն, փոխհարեություն, փոխկապակցում, փոխհատուցում և նորահազմ՝ փոխայց, փոխայնելություն, փոխպլանավորում, փոխհարստացում, փոխամաժաղակություն, փոխընդդրություն, փոխմեկուսացում, փոխազնվարացիա, փոխյրում, փոխհանկում (սեղի ունեցավ մերենայական փոխհանկումս, ծծ), փոխանջատիչ և այլն:

Ինչպես նկատելի է, հայերենի դարգացման այժմյան փուլում փոխ՝ նախածանցը մեծ ակտիվություն է ցույցաբերում սփոխադարձ իմաստով:

Միջամանցներ

§ 612. Միջածանցների հանդիս են գալիս հիմնական ձևույթների ներսում:

Մտեր.— Հայ քերականագիտության մեջ, իբրև միջածանցաձոր բառեր հիշատակվել են միայն հատուկևետ կազմություններ. ինչպես՝ պոկել-պոկել, բնդել-բլնդել կամ րլնդորել և սուր-սուրուրի¹⁹:

Միջամանցումը իբրև բառակազմական միջոց թեև բնորոշ էլ ժամանակակից հայերենին, այնուամենայնիվ, ժամանակակից հայերենը ունի բիշ թվով միջածանցներ, որոնց ածանցական նշանակությունը գիտակցվում է²⁰: Սրանք դերադանցապես ձայնորդ

հեյլուններն են (լ, ռ, ո), որոնք թե իմաստով (սաստիական-երանգավորող), թե գործառության ոլորտով կապված են բնածանցական բառերի հետ:

§ 613. -Բ-ն հանդիպում է մի շարք բնածանցական բառերում. ինչպես՝ դրխնալ, դրմփալ, գրխնալ, բրխնալ, բրմփալ, շրխնալ, շրմփալ, շրխնալ, շրմփալ,²¹ ինչպես և նրբալ (դործածական է բարբառներում և բանավոր խոսակցական լեզվում = նշալ, նղնղալ) և այլն և ունի սաստիական երանգավորող ածանցի նշանակություն:

§ 614. -Ն- ձայնորդը երանգավորող միջածանց է հետևյալ կազմություններում՝ քաշել-քատաշել, փշտալ-փաշտալ, փնշալ-փոնշալ, շաշել-շատաշել և այլն:

Մանր.— -Ն- միջածանցը միևնույն սաստիական իմաստով անցել է նաև բայականության մեջ, որտեղ միանալով -ա բաղմնապատկական ածանցին աճելի է սաստիացրել վերջինիս իմաստը. ինչպես՝ շինել-շփռտել, պոկել-պոկտել, ցատկել-ցատկոտել և այլն:

Մանր.— -Բ- ածանցը իբրև վերջածանց ոչ բնածանցական բառերում հանդես է գալիս հատուկևետ կազմություններում. ինչպես՝ մխենել, փողրակ (ավարորդը փողրակով լվանում է իր մեքենան, են), Առաջին կազմության մեջ հանդես է գալիս 6 ածանցի հետ բաղադրված և ունի սաստիական իմաստային նրանք, իսկ կերպորդում՝ -ակ նվազական ածանցի հետ և ունի բաղադրական-բառակազմական նշանակություն:

§ 615. -Լ- միջածանցը, ինչպես և վերահիշյալ -ո- և ռ ածանցները, ծագումով կապվում է բնածանցական բառերի հետ²²:

-Լ- միջածանցը հանդես է գալիս հետևյալ բնածանցական բառերի մեջ՝ ետ-ելլալ, ծնվ-ծլրնգ, պտ-պլլալ, ցատ-լլլալ, շմփ-լլլմփ, կտնշ-կլլանշ և այլն:

-Լ- միջածանցը գործածվում է նաև հետևյալ կազմությունների

¹⁹ Մտերում ր հեյլունը -րակ, -րմփ հեյլունախմբերի հետ սկզբնապես բաղադրական մասնիկ է եղել:

²² Տե՛ս Ա. Երանյան, Բարևանգ կրկնավոր բառերը ժամանակակից հայերենում, «Տեղեկագիր» Հաս. դիտ., 1950, N 4, էջ 53:

¹⁹ Տե՛ս Գ. Դախանյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 208:

²⁰ Տե՛ս Ա. Էրանյան, Ժամանակակից հայերենի միջածանցները, Վեդվի և ուրի Տարբեր. N 1, 1960, էջ 190—195: Կույի Ածանցները ժամանակակից հայերենում, էջ 109—115:

բում՝ պոկիլ-պլոկիլ, սիշ (հասած աչքերով նայել, հմտ. ակն-պիշ)- պլշիլ, ծկիկ (ծակ արմատից) և այլն:

Հավանաբար միջաձանցման օրինակ է նաև խլրուպ բառը, որտեղ խլրտ արմատի (= վախենալ, փախել) իմաստը Վ միջ-աձանցի շնորհիվ ստացել է կամացուկ շարժվել, երեւալ իմաստը:

Վ միջաձանցը առավել տարածված և կենսունակ է, քան Վ-ն և Վ- միջաձանցները. այն զործառուս է նաև որպես վերջաձանց -ակ, -իկ, -ուկ (նվազափառաբշական) և -ան անանցների բաղադրությունը. ինչպես՝ թխիկ, շեկիկ, նեղիկ, հաստիկ, բարաբիկ, կուղան, խարան, վախուկ և այլն:

Վերոհիշյալ բոլոր կազմություններում, ինչպես նկատելի է, Վ- անանցը ունի երանդավորող, աստուկական նշանակություն:

Մեկըր. — Հանդիպում են նաև հատուկներ բառեր, որոնցում անանձին որոշ հնչյունների հանդես են գալիս զործողության ստատկության, ուժղնության իմաստ արտահայտող միջաձանցի նշանակությունը. ինչպես՝ չ՝ պոկիլ-պոշկիկ, զ՝ ճմ(յ)կ-ճզժել, փ՝ ցանել-ցիլնել և այլն, սակայն սրանք մնում են իբրև եղակի կազմություններ և զենու իրավունք չեն տալու չ, զ, փ հնչյունները զիտել իբրև միջաձանցներ:

Վերջաձանցներ

§ 616. Վերջաձանցները հանդես են գալիս հիմնական ձև-վույթների վերջից:

Քառի մեջ վերջաձանցները կարող են հանդես գալ նաև այլ վերջաձանցների հարանությունը (կողք-կողքի), բնդ որում չուրաբանչյուր սկզբնաձև կամ անանցվող հիմնական ձևույթ կարող է ունենալ մի քանի առաջադիր կամ վերջադիր անանցական ձևույթներ (հմտ. մտ-ավոր-ական-ուսություն, ան-արտա-գր-ող-ականություն և այլն), հասկանալի է, որ սրանցից ամենավերջինը կարող է հանդես գալ վերջադիր կարում (այդպիսին է ամլյալ դեպքում և ընդհանրապես -ուսությունը), իսկ նրան նախորդող վերջաձանցները՝ համեմատաբար առաջադիր²³:

Քառի մեջ կողք-կողքի կարող են զործածվել ոչ բոլոր անանցները, այսպես՝ համանիշ և նույնանիշ անանցները հիմնականում պուրպուր զործածություն չունեն:

§ 617. Եթե բառը բարդ է և նրա առաջին բաղադրիչը անանցավոր բաղադրություն է, այս վերջաձանցը կարող է բառի մեջ բնկնել նաև երկու հիմնական ձևույթների միջև, որոնցից չուրաբանչյուրը հանդես է գալիս իբրև անանձին անանցվող հիմք կամ սկզբնաձև (հմտ. հաստոց-ամամլիչային, բանվոր-ա-դյուղացիական, նկարչություն և այլն):

§ 618. Ժամանակակից հայերենի կենսունակ վերջաձանցներն են՝ -ալի||-ելի (անզանալի, ցանկալի, տանելի, նախանձելի, սթանչելի, անձնամխելի), ալի||ելի|| (խաղալիք, հավատալիք, չորափելիք, խոսելիք, ուտելիք), -ամ (առած, խորոված, կտորած, հասած)²⁴ -ածու (հավաքածու, թեկնածու, կատարածու), -ակ (լնակ, զետակ, անակ), -ակ²⁵ (տեսակ, բանակ, եղրակ, հենակ, վերկակ), -ակ²⁶ (գիտակ, բուժակ, զուշակ), -ական (բնական, իրական, սոցիալական, պատմական, վաճառական, վկայական, հանդիսական, կուլանտեսական, ժողովրդական), -ակի (հանկարծակի, շեշտակի, շեղակի, երկակի), -ալին (ղիշերային, զարնանալին, հնդիսակալին, դրախտալին, երկաթուղալին, կապալին, ճակատալին, բեռնալին, հրթիռալին), -ան (կծան, խշխշան, ճըշտն, խցան, կուան, պլպլան, փշան, սուտխոսան, զուխզուլան, թուլան), -անակ (ճոճանակ, մրցանակ, զուպանակ, խողանակ, բուպանակ), -անի (զեզանի, լեզվանի միաշքանի, երկզլխանի, շորզլխանի), -անի²⁷ (ավազանի, ազատանի, բնտրանի, նստականի, տեսականի), -անի||-ենի (բնտանի, հայրենիք, հարստանիք), -անեց (ղիշերանոց, հովանոց, հրվանդանոց, ծերանոց, զաշտանոց, փթնանոց, մեծարանոց), -ալե (հասանք, աշխատանք, բերկրանք, արհամարհանք, երազանք, տանջանք, նախերգանք, վիրավորանք, հարմարանք), -առ (Մափառ, համառ, կայտառ, պայծառ, ցանցառ), -ատ (զոռատ, ձևոռատ, պոշատ, միշատ, ջոկատ, կոռատ), ատակ (հիշատակ, փատակ, նստատակ), -առակ (հաստատակ, ապիտակ), -առեն||ներեն (հայրեն, շնորհեն, հունարեն, փոխարեն, ուսերեն, անդերեն, շովաշերեն), -ալի||-ելի|| (հաստատարիմ, սխերիմ, մեծերիմ), -ալի (հիմնարկ, ձևնարկ, փաստ-

²³ ՏՃ ա 9. Ջանուկյան, Ժամանակակից հայերենի աեսություն հիմունքները, 1974, էջ 153:

աթկ, լողաթկնկ, չրարկնկ, փորձարկնկ), -աթկ (գործաթթ, լուծաթթ, ստուգաթթ), -աց (դիմաց, կենաց, վրաց, ձնաց), -ացի¹ լևցի լցի (անկացի, վրացի, քաղաքացի, գյուղացի, հորենացի, սունդուկյանցի, մշեցի, դարսեցի, իջանցի), -ացի² (կանացի, առնացի, փաստացի, իրացի, նշանացի, բառացի, տողացի), -ացու (չորացու, հարսնացու, մահկանացու, մացու, մահացու, գլխարկացու, սեղմացու), -բար (բնկերարար, հերոսարար, միամտարար, համեմատարար, տիրարար), -գար (խնկագար, լեզվագար, ցավագար), -գին (լալագին, աղիքագին, թխանձագին, վշտագին, կարտագին, սըրտագին), -գույն (լավագույն, վատագույն, առավելագույն, բարձրագույն, մեծագույն, խոտագույն), -ն (արժամքն, լուսն, մետաքսն, կապրոսն, հրն, բետոնն), -եզ (համեզ, հյուսնեզ, մարմնեզ, ուժեզ, ձայնեզ, գունեզ, նշեզ, վարարեզ), -եկն (նյութեկն, լուսեկն, հրեկն, խոտեկն, քաղաքեկն, ոսկեկն, արծաթեկն, մամանեկն), -եմ (համեմ, վսեմ, խոսեմ), -ենի (հայրենի, համալենի, մայրենի, վայրենի, քաղքենի, խնձորենի, նշենի, ազվեսենի, խորհենի, ձիթենի, տանձենի), -եստ (համեստ, զովեստ, պահեստ, ուսեստ), -եթ (բեղերթ, լեզերթ, տղերթ, ազգեկերթ), -եմ (անօրհներթ, նշաներթ), -գուն (ալլազան, բազմազան, զոնազան, սրբազան), -ի (բռնի, տեկի, կանաչի, ձնազեղի, կահկարասի), -իկ¹ (լավիկ, քաղցրիկ, նուշիկ, սիրունիկ, արաիկ, ալուրիկ), -իկ² (բարեկեցիկ, ազդեցիկ, բազմուկ, բնիկ), -իկ³ (մարդիկ, ուղղիկ, մարտիկ, դարմիկ), -իկ⁴ (խաղիչիկ, դանդիկ, հեղիկ, պարսիկ), -իչ (գրիչ, գործիչ, պատմիչ, սրիչ, հուզիչ, նկարիչ, համողիչ, կրգիչ, ուսուցիչ, բացիչ, մեկուսիչ, հաշվիչ), -իմ (գործիք, բնթիք, կարծիք, կեղծիք, շարիք, բարիք), -վի (թխվիկ, շիկիկ, թմբիկ, կարմիկ), -լուկ (վախուկ, խաբուկ), -կալ (չրտակալ, մազակալու, սառցակալիչ, շաքարակալիչ), -կան (մրտկան, լացկան, մուրացկան, որսկան), -կեն (ծակոսկեն, ճանճկեն, ցանցկեն, հյուսկեն), -կոտ (բարկացկոտ, զայրացկոտ, ալարկոտ), կուն (դիմացկուն, ծիծաղկուն, խաղացկուն), -նար (դանակահար, սրնգահար, ռուսկահար, քանոնահար), -մամ (ամպամամ, թխպամամ, տախտակամամ, փայտամամ), -ման (նշման, վառման, կերման, կեռման), -մունկ (արարմունք, ասմունք, վարմունք, ուսմունք, բաժանմունք, զգացմունք, հարցմունք), -յա (երկաթյա, սպակյա,

փայտյա, հեծյա, նորոյա, մեկհերթյա, հեղատյա, ստորեկտյա), -յալ (արտոնյալ, հեծյալ, ալյալ, անցյալ, հավելյալ, ույալ, հետնյալ, որոյյալ, շեղյալ, կատարյալ), -յակ¹ (որդյակ, հոգյակ, ազափնյակ, պատանյակ, լողուլյակ, սառցուլյակ, վաղբուլյակ), -յակ² (հեղամյակ, հատորյակ, շարաթորյակ, քառյակ, տանյակ, ստանամյակ, ելյակ), -յան (Թորոյանյան, լեկնյան, վեցեկյան), -յուն (գոյուն, հնչյուն, դոփյուն, թնդուն, մոնյուն, պայթյուն, ստափյուն), -ոլ (գրող, մեռչ, մատուցող, առաջնորդող, քննիչող, ուսանող, պատկերող, զոգող, հզոզող), -ուն (ծամուն, գործուն, պարուն, կտրուն, թափուն, շարուն, մանրուն, կոճուն), -ով (դիտով, սիրով, գլխով, շտապով, շուտով, փութով), -ովի (բեկերովի, բերովի, հնարովի, վճարովի, բնտրովի), -ովին (ամբողջովին, բլուրովին, գլխովին, կամովին, փովին, խմբովին, հիմնովին), -սաի (հետսի, ցնցոսի, օտարոսի), -սա (լուստ, բրդոտ, քոտոտ, անկրտոտ, թունտ, վշտոտ), -սրակ (կապտոսրակ, սևոսրակ, սառնոսրակ, թխոսրակ), -տոզ (առաջնորդ, անջորդ, ավելորդ, գնդահորդ, մասնագորդ, նուպանորդ, ձանապարհորդ, լողորդ, վազորդ, վարորդ, ձանրորդ, ցատկորդ, մրցորդ), -տեն (լանտեն, խիզախտեն, աղատտեն, մարդիկանտեն, հետևողականտեն, նկատելիտեն), -ոց (թիկնոց, խալոց, մատնոց, ծաղկոց, սրոց, քորոց, ալնոց, ծանրոց, հնոց, զրոցոց, շրխոց, խշխշոց), -շեմ (գործոշեթ, կարոշեթ, բերոշեթ), -պան (պարտիզյան, կառապան, ալեպյան, բուֆետապան, ուղտապան), -պանակ (թղթապանակ, գրամապանակ, տնտրապանակ, էտրոզապանակ, ժայռապանակ), -պատիկ (քառապատիկ, հարյուրապատիկ, քաղմապատիկ, տասնապատիկ), -պես (առավելապես, հոբեպես, մեծապես, նյութապես), -ստան (ալեքստան, վարդաստան, Պարսկաստան, բուրաստան, Նայաստան), -վամբ (կերտված, փլվածք, սառցվածք, հյուսվածք), -վարի (մարդավարի, քաղաքավարի, բնկերավարի, տեսավարի, զազանավարի), -վետ (Տոտավետ, բուրավետ, մրցավետ, պողավետ, սիզավետ), -վոր¹-(ա)վոր (տնվոր, կենվոր, հայցվոր, գունավոր, բանվոր, բլուրավոր, թունավոր, անավոր, սահավոր, անհավոր, զխավոր), -վուն (կանաչավուն, սևավուն, քաղցրավուն, դեղիսավուն, կապտավուն), -ու (աճու, կծու, ամթու, հատու, ազդու, աճաբու, ալցեբու, վրիժաու, փորձաու, որբիբու, խուլար-

կու), -ուրյուն (մարդկանություն, այցելություն, իշխանություն, պատմություն, մեծություն, ուղղություն, տեսություն, զեղեռություն), -ուլ (Քաթուլ, զանգուլակ), սուրուլիկ), սուլիկ, -ուկ (խենթուկ, մանդուկ, ձագուկ, արդուկ, աճուկ, միջուկ, հորթուկ, պատասուկ, խաչմերուկ), -ունի (աշխերտուհի, մրցավարուհի, շեմպիոնուհի, սիրուհի, իշխանուհի, թաղուհի, բնակչուհի, վանուհի, Աղասուհի), -ուն (զեղում, միտում, փառում, լվացում, ակտիվացում, պահանջում, նվաճում, ամփոփում, հանգում, իջեցում), -ույր (ծորույթ, ավանդույթ, տիրույթ, մրցույթ, հնչույթ, ձևույթ, բնույթ, հանույթ), -ույլ (հանույթ, ինչույթ, կահույթ, պիտույթ), -ուն (զալարուն, իմաստուն, ծաղկուն, պրպտուն), -ունակ (զոհունակ, պարզունակ, շարունակ, մանկունակ, տխրունակ), -ունդ (սնունդ, սերունդ, ծնունդ), -ունի (ծիրունի, Ոչտունի, գեղունի, Պահլա-վունի), -ունիք (արթունք, Պահլավունք, Ոչտունք), -ունիք (աղունք, ծաղկունք, իրավունք, համեմունք, հիմունք, շրթունք, սկզբունք), -ուշ (կենուշ, Ախուշ, մշուշ, Մարգուշ), -ուտ (առտարուտ, ներքուտ, վերուտ, հեռուտ, հարուտ), -ուտ (թրփուտ, մորտ, մահճուտ, տանճուտ, ալաղուտ), -ուրդ (աճուրդ, ժողովուրդ, հարուրդ, պարագուրդ), -ուց (նեղուց, վաղուց, սղուց, հնուց, սպիտակուց), -ուցի (այտուց, այրուց, սերուց), -ուի (զգովուտ, ծեծկուտ, մանրուց, սրտխառնուց), -լ (ծալ, խոսք, շարք, վերիք, վաղք, ճանք, հետք, հոսք, մեք, կլք, գոգք, տեսք, սահք, ջանք, մուտք):

3. ԱՄՆԱԾՆԵՐԻ ԳՄԱՐԿԱՐՈՒՄԸ ԸՍՏ ԽՄԱՍԻ ԵՎ ԶԵՎԻ ՓՈՅՆԱՐԱՆՈՒՄԵՆ

§ 619. Ըստ ձևի և իմաստի կամ արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության, ածանցները բաժանվում են հետևյալ խմբերի. ա) բազմիմաստ և համաձայն ածանցներ, կրթ միևնույն ածանցական ձևի սահմանում հանդես են գալիս մի քանի (մի զեպրտ մտակն և կապված, իսկ մյուսում տարբեր) իմաստներ, բ) մեկիմաստ ածանցներ, կրթ մեկ ածանցական ձևույթն արտահայտում է մեկ բառակազմական իմաստ, գ) համանիշ ածանցներ, կրթ տարբեր ածանցական ձևույթներ:

արտահայտում են միևնույն բառակազմական իմաստը և դ) հականիշ ածանցներ, կրթ տարբեր բառակազմական ձևույթներ արտահայտում են հակադիր իմաստներ:

Բազմիմաստ ածանցներ

§ 620. Բազմիմաստ են այն բառակազմական ձևույթները, որոնք հանդես են գալիս երկու կամ ավելի մտոյի ու կապված իմաստներով և ունեն տարբեր զորմատություն:

Այսպես՝ -ին ածանցը հիմնականում երկու ածանցական իմաստ է արտահայտում. ա) սաստիկական իմաստով ածականներ է կազմում մի շարք ածականները. ինչպես՝ անհեար-անհեարիկ, զվար-զվարիկ, դուր-դուրիկ, լուս-լուիկ, խավար-խավարչուիկ²⁴, խառ-խառիկ, մուր-մուրիկ, նար-նարիկ, նուր-նուրիկ և այլն և բ) տեղի իմաստ ունեցող բաներից ու արմատներից (հիմտ. առտալ(ս), մեք. նեբ(ս), հետ, ստար, վեր, վերջ և այլն) կազմում է ստավի որոշակի անդալին հատկանիշ արտահայտող բաներ. ինչպես՝ առախիկ, միջիկ, ներխիկ, վերջիկ և այլն: Այսպեսով, -ին ածանցը հանդես է գալիս սաստիկական և տեղային որոշակիացնող հատկանշալին իմաստներով:

§ 621. Բազմիմաստությունը գրեթեբոլորով են ստորաբար կենսունակ ածանցները: Ասկայն բազմիմաստ կարող են լինել նաև ամենաարտադրողական և սակավ կենսունակ ածանցները. այսպես՝ քարացած -եստ ածանցը կազմել է ընդամենը մի քանի բառ, սակայն տարբեր իմաստներով. այսպես՝ ա) տեղի իմաստով՝ պահեստ, բ) առարկայացված զորձողության իմաստով՝ գոգեստ (զովարանում, գոգք), գ) հավաքական, քնցհանրական իմաստով՝ ուտեստ, համեստ և այլն: Այդպես էլ սակավ կենսունակ -ածու ածանցով կազմվել են աննի (կատարածու, թեկնածու, ծաղրածու), հավաքական (ժողովածու, հավաքածու) և հատկանշալին (ձևնածու, շիժնու) տարբեր իմաստներով բաներ:

Բազմիմաստ ածանցներից են՝ -ակ, -ական, -ան, -ի, -ուտ, -ուն և այլն:

²⁴ Այստեղ սաստիկական նշանակություն ունեն նաև -չ և -տ ածանցները:

§ 622. —Այլ անանցը հանդես է դադիտ հետևյալ իմաստներով.
 ա) նվազական՝ առվակ, արեգակ, գետակ, քուչակ, լեզվակ, հյու-
 ղակ, լնակ, տնակ և այլն, բ) առարկայացնող. գոյականացնող՝
 պխորակ, բանակ, ազգակ, կակ, հոտակ, կուտակ, հատակ, ան-
 բակ, ռուակ, Բանակ, օրինակ, ցուցակ, պղպղակ, պղպղակ,
 կրկնակ, վերելակ, վիճակ, վերիպակ և այլն, գ) գործողություն
 կատարող անձի՝ բուժակ, գիտակ, գուշակ, նեղակ, նեծելակ,
 սուզակ և այլն, դ) սկզբնական արտահայտած իմաստին որոշ շա-
 չույթ մտտ, հրա նման. ինչպես՝ դժգուժակ (սեկս կյանքի աշխարհում
 դժգուժակ, Իր դարգերն է փոռւմ իմ հոգին», ՎՏ), խառնակ, կա-
 պուտակ, նմանակ և այլն, ե) գործիքի, սարքավորման, նրանց
 որով մասն. ինչպես՝ անկյունակ, արգելակ, քարձակ, եզակ,
 կանգնակ, նեղակ, շափանեղակ, Բարձր և այլն:

Մատեր.— Այլ անանցի վերահիշյալ բոլոր իմաստներն էլ
 անանցվել են առաջին՝ նվազական նշանակությունից և աստիճա-
 նաբար իմաստի փոփոխություն են կրել ու ասացել այլ իմաստ-
 ներ, առանձին դեպքերում՝ վերածվելով համանունների. այսպես՝
 սրանցից առաջին և երկրորդ, առաջին և հինգերորդ, այլն առա-
 ջին և երրորդ իմաստային սարքերակներում առկա են անանցա-
 յին համանունության, իսկ առաջին և չորրորդ, երկրորդ և հինգե-
 րորդ իմաստներում՝ բազմիմաստային երևույթները:

§ 623. —Ական. կերտում է ա) վերաբերական զանազան ի-
 մաստներով (անձի, առարկայի, երևույթի, մասնակի, տեղի,
 դավանանքի, ուսմունքի նկատմամբ) անականները²⁵. ինչպես՝
 ազատագրական, անձնական, գրեխտական, արժատական, բա-
 նասիրական, բուդյայական, զարգացրական, գոյական, դիմա-
 մոյական, դպրոցական, երաժշտական, զբաղաչական, էպիսո-
 կան, բառերական, իդեալիստական, մասնագիտական, կոլտնտեսա-
 կան, կոմկոմբոսական, կոմունիստական, համալսարանական, հիս-
 լոսական, համարական, մարտիստական, մայրական, պլատո-
 նական, վանական, տեղական և այլն, բ) սկզբնականի նշած հաս-
 տատանություններով (անձանի, առարկանի, երևույթի, մասնակի, տեղի, դավանանքի, ուսմունքի նկատմամբ) անականները²⁵. ինչպես՝ ազատագրական, անձնական, գրեխտական, արժատական, բանասիրական, բուդյայական, զարգացրական, գոյական, դիմամոյական, դպրոցական, երաժշտական, զբաղաչական, էպիսոկան, բառերական, իդեալիստական, մասնագիտական, կոլտնտեսական, կոմկոմբոսական, կոմունիստական, համալսարանական, հիսլոսական, համարական, մարտիստական, մայրական, պլատոնական, վանական, տեղական և այլն, բ) սկզբնականի նշած հաս-

²⁵ Այս անանցով կազմված անականներից շատերը (անձանի, առարկանի, երևույթի, մասնակի, տեղի, դավանանքի, ուսմունքի նկատմամբ) վերածվել են գոյականների, իսկ գոյականների մեծ մասը իր մեջ միաստանակ համասեղում է նաև անականական իմաստ (հմտ. սզգական, համալսարանական, կոմունիստական, շինական, դիմական և այլն):

կանիչներն ունեցող անձանուններ (անականներից)՝ ազնվական, պիտոնական, մտավորական, հոգևորական, օտարական, գ) զեր-
 բայական (առավելապես ենթակայական) իմաստ արտահայտող
 գոյականներ (հիմնականում բայարմատներին)՝ գաղթական, գո-
 յական, բափռական, հավաքական, շինական, սիրական, վաճա-
 րական, օգնական, փախստական և այլն, դ) զերբայական նշանա-
 կությամբ անականներ (բայարմատներից և բայահիմքերից)՝
 սրճամուճական, քացատական, գործածական, ծաղրական, հիս-
 ցական, հաղթական, մեղանշական, պատանական, վճարական,
 ցուցական և այլն, ե) բաշխական նշանակությամբ թվականներ
 (թվականներից)՝ երկուական, երեքական, հինգական, հիսունա-
 կան, ինննարյուրական, ութսունական և այլն, զ) տեղի հատուկ
 անուններ (մեծ մասամբ անձի հատուկ անուններից)՝ կիրական,
 Անիական, Օշական, Բյուրական և այլն:

§ 624. —Ան բազմիմաստ անանցով արտահայտվում են հետև-
 յալ բառակազմական իմաստները.

ա) գործիքի, առարկայի կամ միջոցի (որոնց շնորհիվ կա-
 տարվում է գործողություն). ինչպես՝ զլան, գորան, եզան, քացան,
 խրան, կղչան, խցան, ծծան, ծարան, կապան, կարկատան, կուսն,
 ձգան, նսպան, մեքան, պարան, փարսյան, փական և այլն, բ)
 գործողի անվան (ենթակայական զերբայի նշանակությամբ).
 ինչպես՝ դիտաան, դուրեկան, երգաան, զնգզնգան (զնգզնգա-
 ցող), քովաան, խշիչան, ծծան, կծան, նարտաան, նոնոան, նրվ-
 նրվան, սուտաան, տոպխտաան, վազան, փչան և այլն, բ) գոր-
 ժողովյան հետևանքով առաջացած վիճակի. ինչպես՝ շարան, հա-
 ռան, չըջան, տոզան (շարք, ուղիղ դիմ) և այլն, դ) տեղի անվան.
 ինչպես՝ կայան, կիխան, ոլոսան, պատասպաան, օրոսան և այլն:

§ 625. —Ի անանցով արտահայտվում են հետևյալ իմաստները.
 ա) ծառատեսակների (ծառների և բույսերի անուններից). ինչ-
 պես՝ եղևնի, կաղնի, մայրի, տաննի, անկի և այլն, բ) մարդկային
 զրական կամ բացասական հատկանիշի (անականներից և բայ-
 արմատներից). ինչպես՝ արի, բարի, բռնի, գաղտագողի, երկդի-
 մի, ծարավի, կատարի, կարմիր, հանիբավի, մալի, ամառի, Իճնի
 և այլն, գ) որակային և գունային հատկանիշների (գոյականնե-
 րից). ինչպես՝ աղի, անալի, իմանի, ծիրանի, ճարնի, բրի և այլն,
 դ) երկրաչափական մարմինների (թվականներով և անկյուն բա-

ողով բազարված սկզբնածեղից)։ ինչպես՝ բազմակյունի, եսանկյունի, ուղղակյունի, Լառակյունի և այլն, և) շարաքվա անունների (Քվականների և շաբաթ բառով բազարված սկզբնածեղից)։ ինչպես՝ երկուշարքի, երեքշարքի, չարեքշարքի, հինգշարքի և այլն, դ) առարկայացնող, որոշակիացնող։ ինչպես՝ կանկարափ, կանաչի, հաղաբազուկի, ձնագնդի և այլն։

§ 626. - Ենի անանջով արտահայտում են հետևյալ իմաստները. ա) պատկանելության, ծագման, վերաբերության՝ հայրենի, մայրենի, վայրենի, ֆալֆենի և այլն, բ) բուսատեսակների և ծառատեսակների՝ բայենի, բնկուզենի, բզենի, բբենի, խնձորենի, հացենի, եշենի, տանձենի և այլն, գ) կենդանիների մորթուտեսակի՝ աղվեսենի, այծենի և այլն։

§ 627. - Ուտ անանջը արտահայտում է ա) սովորածների նշած առարկայով հարուստ, առատ սնդի, վայրի» (հմտ. ալվազուտ, բացուտ, եղեգնուտ, ծանձաղուտ, ծաղկուտ, կաղնուտ, կնշուտ, աղուտ, վիժուտ, տանձուտ, Բարուտ և այլն), բ) արևէ հատկանիշով հարուստ» (համազոր - առ անանջի նշանակությանը²⁵, հմտ. ծածանուտ, միանուտ, ջրուտ, ջղուտ, շլուտ և այլն) իմաստները։

§ 628. - Ոն անանջը ունի հետևյալ իմաստային տարբերակները. ա) նվաղական՝ մանրոն, կարոն, ձղոն և այլն, բ) որևէ բանից, արտադրությունից, գործողությունից առաջացած մետաղյա և այլ իրերի մեացուկը՝ բափոն (հմտ. սկրեկափիլը ձգուում է նվաղագույնի հասցնել արտադրական թափոնները), են) ջարդան, բղոն, կոնոն և այլն, դ) նվաղական և փաղաքշական. ինչպես՝ աչուն՝ բարոն, ծափոն (կրեխաների ծափ տալը և այլն), զ) գործիքի կամ միջոցի (որևէ գործողություն կատարելու համար), ինչպես՝ գործոն, պարզոն (բարակ լաթ՝ մածոն, կաթ քանկու համար), ծամոն, հաստոն և այլն։

Մեհիմաստ անանջներ

§ 629. Մեհիմաստ են կոչվում այն անանջները, որոնք մեկ բառակազմական իմաստ են արտահայտում։

²⁵ Ուտ անանջի նշանակությամբ գործածվելը կամ նրան համանշ լինելը բնորոշ է նաև հին հայերենին (հմտ. ծաղկուտ, մասոխյուտ, ալվազուտ, Բացխուտ, Առանոն բառարան, էջ 150, 104, 402, 832) և արևմտահայ գրական լեզվին (հմտ. կենդանուտ, ապստամուտ և այլն)։

Մեհիմաստ են հիմնականում իմաստափոխական անանջները և խոսքիմասակներ-իմաստափոխական անանջների մի մասը՝ Այսպես՝ -եղ անանջով կազմվում են հիմնականում անանջանների՝ սովորածների նշած առարկայով (մասամբ նաև հատկանիշով) հարուստ, երանից շատ ունենալուտ իմաստով. ինչպես՝ աննդ, բյուտեղ, գուննդ, զանգվածնդ, զորեղ, րիկնեղ, ծայտեղ, համնդ, հանձարեղ, հյուրեղ, հաննդ, հնչեղ, լուսեղ, լուսեղ... ինձ իսպախն է տանջումս, ՎՏ), շնչեղ, մարմնեղ, վառարեղ, ուսեղ և այլն։

Մեհիմաստ անանջներից են՝ -վուն, -որակ, -անն, -բան, -բար, -յուն, -մունն, -իվ, -եղ, ան-, դո-, ե-, տ-, -ունի, -ույր, -արհ, -յուն, -գործ և այլն։ Օրինակներ՝ -վուն՝ հաստավուն, երհաստավուն, երկարավուն, դեղնավուն և այլն, -որակ՝ քիտուակ, սասնուրակ, սևուրակ, կապուրուրակ և այլն։ -բար՝ աղնվաբար, բարբարախաբար, զոբբարաբար, ընկերաբար, միամտաբար և այլն, -արհ՝ ախտանք, առաջադրանք, արհամարհանք, զրդանք, ընտրանք, երկմտանք և այլն, -յուն՝ դույուն, զոփյուն, զզրղյուն, մարնլլյուն, պայթյուն և այլն, -արհ՝ զործարք, նաարք, լուծարք, ստուգարք և այլն, -իվ՝ կեղծիք, ընթրիք, շարիք, բարիք, գործիք և այլն, ան- անկեղծ, անճար, անարգիտ, անհիմն և այլն, տ-տղետ, տձև և այլն, գործ՝ խաղողագործ, պահածոյագործ, տեքստիլագործ և այլն։

Համանուն անանջներ

§ 630. Համանուն են կոչվում միևնույն հերչունակազմ ունեցող այն անանջական ձևայրերը, որոնցով արտահայտվում են բյուրովի տարբեր բառակազմական իմաստներ։

Համանուն անանջները բազմիմաստ անանջների հետ ունեն այն ինդուստրիությունը, որ միևնույն ձևի (անանջական ձևայրի) սահմանում արտահայտում են մի քանի բառակազմական իմաստ։ Սակայն բազմիմաստ անանջների իմաստային տարբերակները իմաստապես կառված են միմյանց հետ, միմեույն անանջի զրուստերումների են և ծագումնաբանորեն բնդհանուր են, միևնույն համանուն անանջների զեպցում միմեույն հնչյունական ձևի մակարդակում արտահայտվում են միևնույն իմաստային բառակազմական իմաստներ, որոնք առաջանում են և՛ միևնույն ծագումն

ունեցող անանիների իմաստների տարբերացումից ու առանձնացումից և տարբեր ծագում ունեցող անանիների հնչյունակազմների պատահական զուգահեռություններից²⁷։ Այսպիսով, ինեկով ձևով նույնական, համանուն անանիները բարբրովին տարբեր են իրենց բառակազմական իմաստներով և, հետևաբար, տարբեր են նաև իրենց գործառնությունը։

Համանուն անանիներից են՝

§ 631. Ան. այս հնչույթախմբով ունենք և՛ նախածանց, և՛ վերջածանց. ընդ որում ունենք երկու նախածանց և մեկ վերջածանց. այսպես՝ անկիրք, անխոնձ, աննամ, անմեղ, անտղղիչի և այլ բառերի —ան ժխտական կենսունակ նախածանցը և անքիղ, անկողին, անձնոցիկ բառերի բարացած —ան զրտական նախածանցը. վերջիններիս ան— նախածանցը և՛ ծագումով, և՛ իմաստով (վրա) անկախ և տարբեր է ան— համանուն ժխտական նախածանցից։

Մրանց համանուն է նաև —ան վերջածանցը. ինչպես՝ զտելուկան, դերասան, բովան, խլխլան, ճոճան, կծան, սուսխոսան, սուսասան, վազան, փշան, ոչրան, պատպարան, օրբան և այլն։

§ 632. —Անի. այս հնչույթախմբով ժամանակակից հայերենում գործածական են երկու անանիներ. առաջինը (ժունեցողի նշանակությամբ) կենսունակ —անի վերջածանցն է. օրինակ՝ զըլխանի, հինգլխանի, լեզվանի, ճարկանի, ճագանի, գիղանի, պիտանի, երկեհետանի և այլն. երկրորդը ավզանի, ազատանի, նամականի, ընտանի, տեսլանի բառերի համանուն վերջածանցն է, որը ծագումով կազմած է հին հայերենի —անի հոգնակի համարական մասնիկի հետ և այս իմաստով տարբեր է առաջինից։

Ծանոթ. — Մրանց համանուն կարող էր լինել նաև կողմանի, անվանի, ակունի, մատանի բառերում հանդես եկող —անի բաղադրական անանիները։ Այստեղ ա—ն զրաբարբյան ա ներքին հոլովման հույզիչն է, և—ն ակն, մատն, կողմն բառերի վերջին բաղադրիչն է, իսկ ի—ն բառակազմական անանի է (ա + ն + ի > անի)։ Սակայն, այնքան, որքան հըլլալ բառերում —անի անանից իմաստով մտնելում է «ունեցողի» իմաստով առաջին անանիցին

²⁷ Այս եղանակով առաջացած համանուն անանիներից մեկը կարող է լինել նաև փոխառյալ։

(հմտ. երկիզմանի և երկիզմանի, զեղանի և անվանի և այլն), ուստի այն այլևս չի գիտակցվում իբրև համանուն առանձին անանի։

§ 633. —Կառ. այս հնչույթակազմով գործատում են երկու անանի. ա) անականակերտ —կառ անանիցը (սակզրնաձևի նշած հատկությամբ օժտված, «զեղի ավյալ վիճակը հակված» իմաստներով), օրինակ՝ պարհառ, ամաչիտ, մսկոտ, վախկոտ, պարծնեկառ և այլն և բ) բայական բաղադրատեսական —կառ անանիցը. օրինակ՝ բուլխուկ, խլչուսուկ և այլն։

§ 634. —Ցակ. այս անանիցական ձևով ժամանակակից հայերենն ունի երկու համանուն անանի, Առաջինը բաղադրյալ է. առաջացել է արմատական ի վերջնահնչյունի և —ակ անանիցի բաղադրումով (հմտ. ի + ահ > եակ > յակ), առկա է ազավելակ, կղզյակ, կողակ, սրչակ, կատանյակ և այլ բառերում և ունի քաղաքական նշանակություն։ Մրանով վերջերս կազմվել են նաև նոր լողողյակ, վազուղյակ, սառցուղյակ արտաային սերմինները։

Երկրորդը (հին-եակ) կոնկրետ թվային ամբողջությունն արտահայտող սկզբնաձևերից (երբեմն օր, ամիս, ամ (տարի) բառերի բաղադրությամբ) կազմում է արտաբնիկների և մարդկանց որևէ խմբի, ժամանակահատվածի ամբողջություն, հավաքականություն՝ արտահայտող բառեր. ինչպես՝ աշափելյակ, սաափելյակ, երկամյակ, եռամյակ, եռյակ, ճեղամյակ, հատույակ, երկամատույակ, շաբաբույակ, տասնամյակ, տասնօրյակ, վաքուեումյակ, քաղյակ և այլն։

§ 635. —Ացի. այս անանիցական ձևով կա երկու համանուն տարբերակ. առաջինը «որևէ տեղից», «որևէ տեղի բնակիչ» նշանակությամբ զոչականների մասնաբաժանում գործառող —ացի անանիցն է²⁸, որով կազմվել են գյուղացի, խորհնացի, զրացի, վրացի, քաղափացի, գավառացի, իսպանացի և այլն, երկրորդը հատկանշային իմաստ արտահայտող համանուն անանիցն է, որով զոչականներից կազմվել են անականներ և մակբայներ. ինչպես՝ սոսնացի, սրղարացի, բառացի, իրացի, կանացի, նշանացի, տոզացի, փառացի և այլն։

Այս անանիցները թեև ծագումով ընդհանուր են (երկուսն էլ

²⁸ Այժմ այս իմաստով առավել կենսունակ է սրա —ցի տարրերը (հմտ. տոսալալի, ազուսեշի, սունթոկյունցի և այլն)։

ծագել են հին հայերենի ստականի հոգնակի և եղակի թվերի այ և ի վերջավորությունների բազադրությունից (հմտ. իր-աց-ի, նշան-աց-ի²⁹ և բաղաբ-աց-ի, վրաց-ի վերջ բառից, տ՛ս հ 680), սակայն քառակարգման իմաստներով խիստ տարբեր և համա-նուն անանցներ են:

§ 636. Առ այս հերոսներումով ժամանակակից հայերենն ունի մեկ վերջածանց (հմտ. գիտտա, թախտա, կայտառ, տյալտա, ցանցտա և այլն) և մեկ նախածանց (հմտ. առհայտա, առնիշտ, առնզուտ, առափել, առերևույթ, առկայծել, առնակատում և այլն):

§ 637. —Առ այս անանցը ունի համանունական երկու տարբե-րակ. առաջինը հայերենի կենսունակ —առ վերջածանցն է. ինչպես՝ կուճառ, պոչառ, ձեռնառ, հեղեղառ և այլն, երկրորդը՝ փոխառյալ բառերի մեջ դործածվող ու իմաստով առանձնացվող և զիտակ-ցրվող համանուն —առ անանցը. ինչպես՝ զելկանառ, ռեկուրառ, դիպլոմառ, շնամիլառ և այլն:

§ 638. —Իկ կենսունակ անանցը հանդես է գալիս համանունա-կան շարքով և արտահայտում է հետևյալ բառակազմական իմաստները. ա) նվազախաղաքական՝ աշիկ, բշիկ, բոռնիկ, հայ-րիկ, ընամիկ, մտերմիկ, սրտիկ, հեհիկ, Գույրիկ և այլն, բ) նյա-կետային՝ աշխարհիկ, բնիկ, գարմիկ, միամտրիկ, առնամիկ և այլն, գ) սկզբնաձևի (սեփական և փոխառյալ հիմքերով) արտահայտած հատկանիշն ունեցողի՝ աղբատիկ, գռնիկ, բոռացիկ, կանխիկ, զարհուրիկ, ռուռացիկ, տիպիկ, կանճիկ, մողայիկ, պռտիկ³⁰, ալլե ազդեցիկ, անախիկ, բացառիկ, բանագրտիկ, ընթացիկ, բա-փանցիկ, սլացիկ, սրտանմիկ, վաղաներիկ, վաղանցիկ³¹ և այլն:

²⁹ Հատկանշային իմաստ արտահայտող բառեր (հմտ. իրացի, նշանացի, կուճացի և այլն) —այի անանցը սկզբնաղբա առաջանումով հին հայերենի սեռա-կան —աղ է ի հարվածների միացման հիմքով (հմտ. կանացի, նշանացի, երացի և այլն), այնուհետև նմանակությամբ ընդգրկել է նաև ու (ո, ր) հոլովման պատ-հանող բառեր, ինչպես՝ աղացի, բացացի, բերանացի, փաստացի և այլն:

³⁰ Վերջիններս ծագումով և իմաստով կազմված են առաքերենից և նրա մի-ջոցով փոխանված փրիկ, Լպիկ, կելկուրիկ, կնեղտիկ, միպերզիկ, ռաման-տիկ և այլ բառերի համանուն —իկ անանցի հետ, որը իմաստային ընդհանրու-թյուն ունի հայերենի աղբատիկ, բացառիկ, առնմիկ, կանխիկ, և այլ բառերի հա-մանուն անանցի հետ:

³¹ Մրանդե բաշահիճիքից կազմվածները կարող են ունենալ հարստիտար և եկեղանակալան զերբաների իմաստ (հմտ. ազդեցիկ, բնորոշիկ, վաղաներիկ և այլն):

գ) զործող անձի՝ մարգիկ, մարտիկ, շրջիկ, ռազմիկ, և) ազգան-վանական՝ խաղիչիկ, զանդիկ, հնդիկ, պարսիկ և այլն:

Մանր.— Մրանդից 2-րդ և 3-րդ, ալլե 4-րդ և 5-րդ իմաստ-ների միջև զգացմամբ է իմաստային կապ, և դրանցում, բնականա-բար, առկա է բաղմիմաստությունը:

§ 639. —Իչ անանցը հայերենի կենսունակ անանցներից է. այն կազմել է մեծ թվով հատկանշային և առարկայական իմաստ արտահայտող բառեր. ինչպես՝ առնբիչ, ապահովիչ, արգարացու-ցիչ, հմայիչ, արտահոսեիչ, գրավիչ, բնակիչ³², բնորոշիչ, բացիչ, կնկարաշարժիչ, կայունիչ, փոշնծծիչ, հաշվիչ, մամլիչ, հաղու-ղիչ, կցորդիչ և այլն: Այս բառերի —իչ վերջածանցը և ռուսերենից փոխառյալ հայրանունական համանուն —իչ անանցը մահակ կար-պիչ, Սուրեն Սևրդակիչ, Արմեն խորենիչ, Հայկազ Պողոսիչ, Գագիկ Մեսրոպիչ և այլ բառերում համանուններ են: Վերջինս դրվում է հայերեն հայրանունների վրա և առափել լայն տարածում է գտել բանավոր խոսակցական լիզվում:

Համանիչ անանցներ

§ 640. Համանիչ են ձևով (հերյունակադմով) տարբեր, սա-կայն միեկույն և նման բառակազմական նշանակություն ունեցող անանցները:

Անանցների բառակազմական իմաստների նույնությունը և մտորելովությունը հաճախ հանդեսանում է նրանց փոխադարձ փոխա-րինելիությանը (հմտ. բացարձակապես-բացարձակորեն, մե-ծամտաբար-մեծամտորեն և այլն), որը թեև հոմանիշների ըն-թաց յուրահատկություններից մեկն է, սակայն բացարձակ օրինա-չափություն չէ և հատուկ է հիմնականում բացարձակ համանիշնե-րին՝ Լույսանիշներին:

§ 641. Ամանցները համանիշային հարաբերության մեջ են մտնում իրենց բնորոշ տարբեր հատկանիշներով³³, այսպես՝ մի-կենույն խոսքիմասային իմաստի սահմանում բոլոր անանցները գտնվում են նույնանիշային հարաբերության մեջ. ինչպես, օրի-նակ՝ առարկայաբնուող, գոյականացնող նշանակությամբ նույնա-

³² Այս անանցով կազմված գոյականների մեծ մասը առաջացել է հերյու-անանցով կազմված անականների գոյականական կերտությունից:

³³ Տե՛ս Ա. Ա. Գալստյան, Անանցների համանշտությունը և համանիչ անանց-ները (գրասիրտություն), Երևան, 1974:

նիշ են բոլոր գոյականակերտ ածանցները (Նմտ. -ուրյուն, ույր, -ի, -անք, -մունք, -ելիք և այլն)

Նույնանիշային հարաբերություն կարող են ունենալ նաև միևնույն բառակազմական իմաստ ունեցող ածանցները. այսպես՝ «վերաբերության», «պատկանելության» հասկանալային իմաստով նույնանիշ են -ային, -ական, -յան և այլն, «ունեցողի» նշանակությանը՝ -ավոր, -վետ, -անք, -ևի, -ունակ և այլն: Բառակազմական միևնույն իմաստներով խորանորոգ ածանցները, օրինակ՝ «ունեցողի» (Նմտ. (ա)վոր, -վետ, -անք, -եղ և այլն), «որո՞ծողության կատարողի», «վերածության» և այլն, առանձին վերցրած միմյանց նկատմամբ նույնական հարաբերություն մեջ գտնվելով, ածանցավոր կոնկրետ բաղադրություններում մեծ մասամբ արտահայտում են համանիշային հարաբերություն (կապված սկզբը նաձևի և ածանցի բառակազմական իմաստի փոխհարաբերության հետ): Այսպես՝ հայտնի է, որ բոլոր բառակազմական ձևույթները (ածանցները) չէ, որ միանում են ցանկացած սկզբնաձևին. օրինակ՝ «վերաբերության», «պատկանելության» իմաստ ունեցող համանիշ -ային և -ական ածանցներից անձրև բառին միանում է -ային ածանցը (անձրևային), բայց ոչ՝ -ականը, զիբ՝ բառին միանում է -ային ածանցը (զբային) և ոչ՝ -ականը, այդպես էլ մարդկային և ոչ՝ մարդկական և այլն, իսկ էլին միանում են էլ, ապա հաճախ իմաստային տարբերակաձեռքություն են ստանում. ինչպես՝ գրային-գրական, ազգային-ազգական և այլն: Այս տեսակետից համեմատաբար այլնից ազատ են դարձողություն ձևի իմաստ արտահայտող ածանցները (Նմտ. առավելագուստ առավելաբար, խիզախորեն-խիզախաբար և այլն):

§ 642. Ածանցների համանիշությունը դրսևորվում է ա) նույնաձևույթ սկզբնաձևերով և հոմանիշ ածանցներով (Նմտ. բացարձակապես-բացարձակորեն-բացարձակաբար, հետևապես-հետևաբար, առավելագուստ-առավելաբար, վախյուլի-զախիտ, խառնակ-խառնորակ, զավթիչ-զավթող և այլն) և բ) տարաձևույթ, սակայն հոմանիշ սկզբնաձևերով և հոմանիշ ածանցներով (Նմտ. անզթաբար-անխղճորեն, վախկոտ-երիշոտ, անդառնալիտրեն-վերջնականապես, շարունակաբար-մշտապես և այլն):

Փոխադարձ փոխարինելիությունը, որ որոշ շախիվ հատուկ է նաև հոմանիշ բառերին, ածանցավոր հոմանիշների մեջ սահմանափակ-

վում է հենց թեկուզ նույնանիշ կամ համանիշ ածանցների սկզբը նաձևերին միանալու պայմանականությամբ²⁴. քանի որ նույնիսկ բացարձակ նույնանիշ ածանցներն էլ (Նմտ. -յա, -ե, ահ-, դժ-), կազմելով նույնանիշ բառերի փոխադարձ փոխարինելի զույգեր (Նմտ. երկաթյա-երկաթե, սուկյա-սուկե, արժաթյա-արժաթե և այլն), գործառական բոլոր ոլորտներում չեն կարող փոխարինել միմյանց. այսպես՝ չի լինի Երյա, լույսյա, կապարյա, անազյա, այլ՝ հեք, լուսե, կապարե, անազե և այլն. կամ՝ կազմվում են անգույն-զգույն, անբախտ-զոթախտ, բայց չեն կազմվում դժխտ, դժխելք և այլն:

§ 643. Ժամանակակից հայերենի հոմանիշ ածանցները բաժանվում են երկու խմբի՝ նույնանիշներ և նամանիշներ:

Ն ու չ ն ա ն ի շ ա ժ ա ն ց ն ր

§ 644. Նույնանիշ են կոչվում ձեռով (ենշյունակազմով) տարբեր իմաստով նույնական ածանցները:

Նույնանիշ ածանցները համանիշների համեմատությամբ քիչ են, և եղած բոլոր բաղադրություններում փոխադարձ փոխարինելիությունը սակնշատ է:

§ 645. Ժամանակակից հայերենի նույնանիշ ածանցներից են՝
ա) սե-, ապ-, դժ-, ա-, շ- նախածանցները: Սրանք իբրև նույնանիշներ հանդես են գալիս՝ հետևյալ կազմություններում՝ անբախտ-զոթախտ-ապաբախտ, անգույն-զգույն, անկամ-զրկկամ-չկամ, անզեռ-տզեռ, անշոտիկ-ապաշոտեմ, անաբախտ-ապաբախտ, անօրեն-ապօրենի, անհաստ-ապահաստ և այլն:

բ) -Յա և -ե ածանցները (առարկաների, ժամանակորպես մտադրների, նյութիչների հիմքը, նրանք բաղադրությունը ցույց տրվող հատկանշային իմաստով). ինչպես՝ մարմարե-մարմարյա, արժաթե-արժաթյա, Երկաթե-երկաթյա, սուկե-սուկյա, բամբակե-բամբակյա, մագաղաթե-մագաղաթյա և այլն, այսինքն՝ հարաբերական ածանցների կազմության մեջ:

գ) Գործողության ձևի հատկանիշ ցույց տվող մակբայակերտ ածանցները (սակզբնաձևի ցույց տված հատկանիշի նման, իբրև

²⁴ Տե՛ս է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, 1967, էջ 95-96:

այդպիսինս՝ «Երա օրինակով» իմաստով)։ Ինչպես բար-որեն՝ խիզախաբար-խիզախորեն, միամտաբար-միամտորեն, մեծամտաբար-մեծամտորեն, դաժանաբար-դաժանորեն և այլն։

—Բար-վարի-որեն՝ ազոճաբար-ազոճավարի-ազոճորեն, զազոճաբար-զազոճավարի-զազոճորեն, դաժանաբար-դաժանավարի-դաժանորեն, երեսխալաբար-երեսխալալարի-երեսխալալորեն և այլն։

—Բար-պես՝ առավելապես-առավելաբար, մասնավորապես-մասնավորաբար և այլն։

—Բար-պես-որեն՝ բացարձակաբար, բացարձակապես-բացարձակորեն, ուժգնաբար-ուժգնապես-ուժգնորեն, հաստատաբար-հաստատապես-հաստատորեն, ակներևաբար-ակներևապես-ակներևորեն և այլն։

դ) Հատուկնեա կազմութիւններում նույնանիշային հարաբերութիւն են զբանորում նաև և՛ ական և՛-այլին, և՛նք և՛-ուրյուն և՛ անանցները. ինչպես՝ ամանցական-ամանցային, զասարանական-զասարանային, բերկուրյուն-բերկաքան, սխրագործութիւն-սխրաքան և՛ այլն, որոնցից առաջինների նույնանիշութիւնը զայն է հին հայերէնից, իսկ երկրորդներինը (ուրյուն, անք)՝ թերեւս-ուրյուն ամանցավոր բաների երկարահունչ լինելուց և նույն բառակազմական նշանակութիւնն ունեցող անք ամանցի այս ոլորտում ակտիվանալուց։

Նույնանիշ ամանցավոր բաները թիչ են, որովհետև լեզուն նույնանիշներ չի պահում, և ի՞նք մի քանի բաներում նույնանիշութիւնը ակնհայտ է, սպա նույնանիշ բաները, այնուամենայնիք, աստիճանաբար նվազում են և ստանում իմաստային ու կիրառական նուրբ տարբերակում՝ վերածվելով համանիշների։

Հ ա մ ա ն ի շ ա ժ ա ն ց ն ե թ

§ 646. Համանիշ են կաշվում ձևով (հնչյունակազմով) տարբեր՝ իմաստով մտ և նման ամանցները։

§ 647. Համանիշային հարաբերության մեջ են մտնում տարբեր զիրքի և տարբեր հաճախականութիւն ամանցները. այսպես՝ նախածանցը կարող է համանիշ լինել և՛ նախածանցին, և՛ վերջածանցին՝ և՛ բնղհակառակը. իսկ տարբեր իմաստային խմբերում կարող են հանդես գալ և՛ կենսունակ, և՛ սակավ կենսունակ ամանցները։

§ 648. Համանիշ ամանցներով կազմվում են բաղմանդամ և երկամանդամ շարքեր։ Համանիշային մեծ կամ բաղմանդամ շարքեր են կազմվում, երբ ամանցները միավորվում են իրենց բնղհանուր կամ հիմնական բառակազմական իմաստներով (հմմտ. վերարկութեան և պատկանելութեան՝ -ակիան, -այլին, -յուն, -ացի, -աց, տեղի՝ -տան, -արան, -ոց, -ուտ, -անոց, -ուտ և՛ այլն, ունեցողի՝ -ավոր, -վեա, -ախի, -եղ և՛ այլն), սակայն լիզվական իրական զործառութեան մեջ նախանշանում են համանիշային առավել սերտ հարաբերութեան ունեցող ամանցներով կազմված երկամանդամ կամ եռամանդամ շարքեր (հմմտ. -ական և՛ -ավոր, -ական և՛-այլին, -ական և՛-ացի, -ական և՛-արտ և՛ այլն)։

§ 649. Ամանցների մեծ մասի բազմիմաստային յուրահատկութեան շնորհիվ, միևնույն ամանցը համանիշային հարաբերութեան մեջ է մտնում իր բոլոր կամ մի քանի նշանակութիւններով. այսպես՝ -ով բազմիմաստ ամանցը հանդես է զայն և՛ նվազա-փաղաղբանակ հիմաստ ունեցող համանիշ -իկ, -ով ամանցներով բաղադրված բաների շարքում (հմմտ. սեակ-սեկի-սեուկ, ամբոսակ-ամբոսիկ, անտառակ-անտառիկ, և՛ սեղիքնաձևի նշած հատկանիշին նման, դրանից ինչ-որ շափով ունեցողիս իմաստ արտահայտող -յուն, -ուակ ամանցներով բաղադրված բաների շարքում (հմմտ. կապուտակ-կապտոտակ-կապտավուն և՛ այլն)։ Անվերջածանցը՝ «զործողութիւն կատարողիս նշանակութիւնն ունեցող -ող, -ուն ամանցներով բաղադրված բաների շարքում (հմմտ. պսպղան-պսպղուն-պսպղացող, թվալան-թուլալուն-թովաացող և՛ այլն), այլն տեղի իմաստ արտահայտող -ոց ամանցով բաղադրված բաների շարքում (հմմտ. օրրան-օրորոց) և՛ այլն։

Այսպիսով, համանիշ են բազադրութիւններում «նման», «մտ» բառակազմական նշանակութիւն ունեցող ամանցները։

§ 650. Ամանցների համանիշային շարքեր կազմվում են մեծ մասամբ նույնաձևությ սկզբնաձևերից. այսպես՝ -բար, -որեն նույնանիշ ամանցները միանալով միևնույն սկզբնաձևերին, համանիշային շարք են կազմել -զին և՛ -ովին ամանցների հետ։

«Սկզբնաձևի արտահայտած իմաստի նման», «երա օրինակով», «իրեն այդպիսին» բառակազմական իմաստներով առավել

հարուստ բառակազմական կապեր ունի -բար³⁵ ածանցը, որը հանդես է գալիս համանիշային մի քանի շարքերում. այսպես՝ -բար-որեն-զին՝ զվարբար-զվարբաբեն-զվարբագին, մեղմաբար-մեղմորեն-մեղմագին, բախանձարար-բախանձորեն-բախանձագին, խանդաղատարար-խանդաղատորեն-խանդաղատագին և այլն, բար-ովին՝ ամբողջարար-ամբողջովին, լիարար-լիովին, հիմնովին-հիմնարար և այլն:

§ 657. -Ական ածանցը համանիշային հարաբերությունների մեջ է մտնում հետևյալ ածանցների հետ:

-Ական-ային՝ ածանցական-ածանցային, տնական-տնային, խմբական-խմբային, քարեկամական-քարեկամային, գուսանական-գուսանային, տեղական-տեղային, տիգրեական-տիգրեային, անգրական-անգրային, տխրանական-տխրանային, զոխական-զոխային և այլն: Սակայն, եթե հին հայերենում սովորական կրկնույթ էր -ական և -ային ածանցների համանիշային զորածուր-թյունը³⁶, ապա ժամանակակից հայերենում դրանց թիվը սահմանափակվել է, և հիշյալ ածանցներով կազմված բառերը հիմնականում իմաստային տարբերակում են ստացել. ինչպես՝ բնական-բնային, գրական-գրային: Այլևս չեն գործածվում նաև գիշերական, երկրական, ցամաքական, աստվածական և այլն. կենսունակ են դրանց -ային ածանցով ձևերը:

-Ական, -ային, -յան՝ պլատոնական-պլատոնային-պլատոնյան և այլն:

-ական, -(ա)վոր՝ մարմնական-մարմնավոր, հոգեկան-հոգևոր, մշտնջենական-մշտնջենավոր, պարտական-պարտավոր, օրինական-օրինավոր, պատվական-պատվավոր:

-ական, -ացի(-ցի)՝ հայկական-հայացի, լեռնական-լեռնցի:

-ական, -ացի, -երեն՝ նալական-նալացի-նալերեն:

-ական, -ենի՝ հայրական-հայրենի, մայրական-մայրենի:

-ական, -յան (որն է ուսմանըի պատկանելության և տեղանվանական իմաստներով)՝ ամբերիական-ամբերիկյան, մակեդոնական-մակեդոնյան, ամբերիական-ամբերիկյան և այլն:

³⁵ Այս ածանցը -որեն, -սյն ածանցների հետ առավելագույն հանդես է գալիս նույնանիշային շարքում. միևնույն սկզբնաձևերից կազմված է նույնանիշ բառեր, օրինակ § 645:

³⁶ Տե՛ս Մ. Աբելյան, նշված աշխ., էջ 161:

§ 652. -Ային ածանցը համանիշային հարաբերությունների մեջ է մտնում հետևյալ ածանցների հետ:

-ային, -(ա)վոր (սունեցողիս իմաստով)՝ մտային-մտավոր, հեշային-հեշավոր և այլն:

-ային, -եղեն, -ի (սծագումը, «նյութեղեն հիմքը» իմաստով)՝ լուսային-լուսեղեն-լուսե, հեային-հեղեղեն-հեի, հողային-հողեղեն-հողի, ֆայային-ֆարեղեն-ֆարե և այլն:

§ 653. -(Ա)վոր ածանցը «սունեցողի» նշանակությամբ համանիշային հարաբերությունների մեջ է մտնում հետևյալ ածանցների հետ.

-(ա)վոր, -ուն՝ բեղմնավոր-բեղուն:

-(ա)վոր, -յա՝ պաշտոնավոր-պաշտոնյա և այլն:

-(ա)վոր, -վետ՝ արչյունավոր-արչյունավետ, շանավոր-շանավետ, արգասավոր-արգասավետ, զանավոր-զանավետ, բուրումնավոր-բուրումնավետ, համարավոր-համարավետ և այլն:

-(ա)վոր, -ոս՝ կենթավոր-կենոտ, բունավոր-բունոտ և այլն:

-(ա)վոր, -եղ՝ զորավոր-զորեղ, անավոր, անեղ, զանգվածավոր-զանգվածեղ, բաշավոր-բաշեղ և այլն:

-(ա)վոր, -անի՝ զունավոր-զույնանի, երկտեղանի-երկտեղավոր, գեղավոր-գեղանի և այլն:

«Սունեցողի» նշանակությամբ համանիշային կապերի մեջ են մտնում նաև -վետ և -եղ՝ րիկնավետ-րիկնեղ, հանճանչավետ-հանճանչեղ, լուսավետ-լուսեղ, հյուրավետ-հյուրեղ և այլն, -անի և -յա մեկներբանի-մեկներբյա, հազարականի-հազարակնյա (սև՝ իս, անկամորդ ու նախանձ են թշնամիներս հազարակնյա», ՀՇ, Քնար Հայաստանի) և այլն:

§ 654. -Ող ածանցը «գործողություն կատարողի, անողի» նշանակությամբ համանիշային շարքեր է կազմում -արար, -իշ, -կոտ, -որդ, -(ա)վոր, -իկ, -եցիկ, -ան, -կան, -կուն ածանցների հետ:

-Արար, -ող՝ ազմկարար-ազմկող, հավաքարար-հավաքող, կեղծարար- կեղծող, գործարար-գործող, վնասարար-վնասող, փրկարար-փրկող, խոտանարար-խոտանող և այլն:

-Իշ, ող՝ ապահովիչ-ապահովող, ընդունիչ-ընդունող, երգիչ-երգող, բուծիչ-բուծող, փրկիչ-փրկող, կիզիչ-կիզող, հմայիչ-հմայող

յոզ, պատմիչ-պատմող, միավորիչ-միավորող, դյուրիչ-դյուրող և այլն:

-կոս, -ոզ՝ զայրացիոս-զայրացող, պարկոս-պարող, բավանցիկ-բավանցող, մուրացիկ-մուրող (մուրացող) և այլն:

-նրզ, -ոզ՝ անցորդ-անցնող, հանխառդ-հանխաղոզ, հավակնորդ-հավակնող, սավառնորդ-սավառնող, վարուղ-վարող, ժանհոգորդ-ժանհոգող, նասկցորդ-նասկցող և այլն:

(ա)վոր, -ոզ՝ կենվոր-կենցող, հայցվոր-հայցող, բանվոր-բանող, հենվոր-հենող, Բողվոր-Բողող և այլն:

-իկ, -ոզ՝ ազդեցիկ-ազդող, բավանցիկ-բավանցող, միշանցիկ-միշանցող և այլն:

-կան, -ոզ՝ մտկան-մտաղ, մուրացկան-մուրացող (մուրող), խոտվկան-խոտվող, լացկան-լացող և այլն:

§ 655. «Գործողություն», «գործողություն» անունն նշանակությունը համանիշային շարքեր են կազմում -ուրյուն, -ույք, -անք, -ում, -մունք, -յուն գոյականակերտ ածանցներով: Սրանցում առավել ափսոսի և բազմակողմանի համանիշային կապերունի -ուրյուն ածանցը, որը համանիշային շարքեր է կազմում և՛ հիշյալ ածանցներից զրիքն քուրիքի, և՛ այլ ածանցների հետ: Այսպես՝ -ուրյուն և -անք՝ բերկրություն-բերկրանք, շարագրություն-շարագրանք, փրկություն-փրկանք, քննություն-քննանք, կախարչություն-կախարչանք և այլն, -ուրյուն և -ում՝ ալիկոտություն-ալիկոտում, հարարերություն-հարարում, տեղադրություն-տեղադրում և այլն, -ուրյուն և -ույք՝ ավանդություն-ավանդույթ, նուրություն-նուրույթ, կացություն-կացույթ և այլն, -ուրյուն և Ը՝ եկվարություն-եկվայնք, լայնություն-լայնք և այլն, -ուրյուն և -մունք՝ սխալություն-սխալմունք:

Վերահիշյալ կենսունակ ածանցները համանիշային շարքեր են կազմում նաև միմյանց հետ առանց -ուրյուն ածանցի. ինչպես՝ -յուն, -ոց՝ կոնչյուն-կոնչոց, մոնչյուն-մոնչոց, պայթյուն-պայթոց, զղջոյուն-զղջոց (վերջիններս կազմվում են զերազանցպես բուն անանյանական բայերի հիմքերից) և այլն:

-մունք, -ում՝ հիպոսունք-հիպոսում, ուսունք-ուսում, հուզումունք-հուզում, հարցումունք-հարցում, ցուցումունք-ցուցում և այլն:

§ 656. Ան, -ատ ածականակերտ համանիշ ածանցները արտահայտում են ածանցվող հիմքի նշանակությունը շունցող և

զրանից զրկված իմաստները. ինչպես՝ աննայն-ծայնատ, անբերկատ (նաև կոնատ), անարչ-պոչատ, անփայլ-փայլատ, անհունքնատ և այլն:

Ինչպես նկատելի է, ընդված բոլոր համանիշ ածանցներն էլ դրվել են նույնանություն սկզբնածների վրա: Սակայն ածանցավոր համանիշ բառեր կազմվում են նաև տարածություն սկզբնածներից. արանք թվապես աղելի պակաս են, քան նույնանություն հիմքերով և համանիշ ածանցներով կազմվածները:

§ 657. Տարածություն սկզբնածներով և համանիշ ածանցներով կազմված համանիշները են.

-արան, -ուկ (նեցուկ-հենարան), -իկ, -ելի (անտրիկ-անմատնիկ), ա(վոր), -արկու (հայցվոր-խնդրարկու), -արաբ, -ուզ, -իչ (առողջարար-կազդուրիչ, ապաքինիչ-ապաքինող, կազդուրող), -ավար, -գար, -ոտ, -մեռ (ախտավոր-ախտածեռ-ցավագար-ախտոցավոտ), -ելի, -իկ (սարսափելի-զարհուրիկ-զարհուրելի), -վիտ, -ոտ (ծառոտ-անտառավան), -ավար, -անի (պիտանի-հարկավոր), -ավոր, -արար, -իչ (աղետավոր-կործանարար-կործանիչ-ավանիչ), -ուկ, -անք, -որդ (թափթփուկ-տակահար-մնացորդ-ավելցուկավելորդ), -մունք, -անք (աշխատանք-պարսպունք, զբաղմունք), -ուզ, -ուն (կպուն-կպան-փակչուզ), ապ-, ան- (ապերասան-անսանձ), -ուզ, -ախան, -կոտ (շտապողական-փուլկոտ-շտապող), -իկ, -ախան (արթայական-սստանիկ), -ուրյուն, -ելիք (ակնկալություն-սպասելիք) և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ մի շարք ածանցներ, գտնվելով միևնույն իմաստային խմբի մեջ, չունեն, սակայն, նույնանություն սկզբնածներով զուգահեռ համանիշներ. այսպես, օրինակ՝ -ոց և -տտան, -արան և -տտան տեղի իմաստ ունեցող ածանցներով չի կարելի կազմել վարժոց-վարժաստան կամ տեկարան-անկատան և այլն: Նույնը և նվազագույն -ույկ և -յալ ածանցներով չեն կազմվում գրգուլի-գրգուլյակ համանիշները:

Հականիշ ածանցներ

§ 658. Հականիշ են կոչվում ձևով տարբեր և իմաստով նաեւ կապի ածանցները:

Հականիշ ածանցներով միևնույն բառերից կազմվում են հականիշ զույգեր (հմտ. նիշ-համանիշ-հականիշ):

§ 659. Հականիշ անանցներից են՝

Արտ- և ներ՝ արտահանել-ներմուծել, արտագաղթ-ներգաղթ արտադրողական-ներրարտողական, արտագասարանական-ներդաստանական, արտաշնչել-ներշնչել, արտահանել-ներմուծել³⁷ և այլն:

Բազ- և ներ՝ բացակա-ներկա, բացառյալ-ներառյալ և այլն: Հակ- և համ՝ համադրել-հակադրել, համանիշ-հականիշ, համակրել-հակակրել և այլն:

Տար- և համ՝ տարածայն(ություն) — համածայն(ություն), տարակալիք-համակալիք և այլն:

4. ԱՅԱՆՑՆԵՐԻ ԳԱՍԱՆԱՐԳՈՒՄԸ ԷՍՏ ԳՈՐՈՍՍՈՒԹՅԱՆ ԳԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ

§ 660. Լեզվի պատմական զարգացման և փոփոխության բն-
թացքում փոփոխության է ենթարկվում նաև լեզվի անանցական կազմը: Լեզվի զարգացման տարբեր փուլերում անանցները տար-
բեր կենսունակություն և զործառույթյուն են ունենում:

§ 661. Անանցական կազմի տեղաշարժերը ժամանակակից հայերենում բնթանում են հետևյալ ուղղություններով³⁸.

ա) մի շարք սակավ կենսունակ անանցների իմաստի աշխու-
ժացում և ակտիվացում (հմտ. -ույթ, -որդ, -ցի, -յակ, -արկ և այլն), բ) որոշ անանցների իմաստի սահմանափակում, գ) մի շարք փոխառյալ բառերի անանցների իմաստների զիտակցում և առանձնացում, դ) արմատների (պարզ և բարդությամբ վերջում հանդես եկող) և բառահարաբերական մասնիկների իմաստի մը-
թափում և անանցացում, ե) մի շարք անանցների բառակազմա-
կան իմաստի մթադնում ու քարացում:

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում զգալիորեն սահմանադատվեցին կենսունակ (արտադրողական) և անկենսու-
նակ (անարտադրողական) անանցները. մի շարք անանցներ ստա-
ցան զերի և իմաստի կալունացում, շատերը նոր սկսեցին ակտի-

³⁷ Քանզի գրվել են ուղղակի հակառեշ սկզբանների վրա (հմտ. հանկ-
մածել), որ հազվադեպ է պատահում (տե՛ս § 323):

³⁸ Տե՛ս Ս. Ա. Էլյան, Բառապաշարի հարստացումը անանցման միջոցով, ԷՇայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, էջ 75—121:

վանալ, սահմանափակվեց մի մասի բառակազմական զործառույ-
թը և այլն:

Հետևաբար, ժամանակակից հայերենի անանցական կազմի տեղաշարժերի և նրա զործուն օրինաչափությունների պատկերը բացահայտելիս, անհրաժեշտ է ընդգծել, մասնավորապես, ժամա-
նակակից հայերենի սովետական շրջանում դրսևորված և նրան բնորոշ երևույթները:

§ 662. Ըստ կենսունակության աստիճանի կամ բառակազմա-
կան ակտիվության՝ ժամանակակից հայերենի անանցները բեզ-
հանրապես բաժանվում են երեւի հիմնական խմբի՝ կենսունակ և անկենսունակ:

Ա. Կենսունակ անանցներ

§ 662. Կենսունակ (արտադրողական) են այն անանցները, որոնք լեզվի զարգացման համաժամանակյա փուլում ունեն բա-
ռակազմական ակտիվություն, կերտում են մեծ թվով նոր բառեր:

Անանցների կիրառությունների մասին խոսելիս, ընդհանրա-
պես, պետք է նկատի ունենալ, որ անանցների մեծագույն մասը հիմնականում զործառույթ էր նաև հին հայերենում. այսպես՝ ալ-
ժըմյան կենսունակ անանցների մեծագույն մասը. ինչպես՝ -այլին, -ական, -բար, -կիլ, -յան (եան), -պես, -վոր, -ուրյուն, -ում(ումն) և այլն, կենսունակ և զործուն էր նաև հին հայերե-
նում³⁹:

§ 664. Բերներ ժամանակակից հայերենի կենսունակ անանց-
ների ցանկը:

- Ալիլիլի (ձանձրալի, ցանկալի, սիրելի, տանկիլ, նողկալի),
- ակ (զետակ, դոնակ, լճակ), -ակ՞ (աղղակ, բանակ, բոնակ, հե-
նակ), -ակի (գիտակ, գուշակ, բուժակ), -ամո (չափածո, հասածո, դրածո, դոսածո), -ակի (եղակի, անցողակի, երկակի), -ական (անզուգական, հերոսական, հոգեբուրական), ամենա- (ամենասի-
րելի, ամենակենսունակ), -այլին (գարնանայլին, գծային, մարդ-
կային), -ան (ծորան, կռան, կծան), ան- (անմիտ, անսեր), -անի

³⁹ Թեև հնարավոր է կենսունակ անանցներով կազմված մեկ կամ մի քանի բառերի իմաստների հնացում կամ մթադնում և զործառույթունից դուրս մղում, սակայն դա վերաբերում է ավելի անանցավոր կազմություններին միայն և ոչ անանցներին:

գեղանի, լեզվանի, միաշքանի), -անոց (հիմանգանոց, դիմանոց հովանոց), -անե՛ (երկմասնք, միաբանք, տուգանք), -աւար (աղ-մբկարար, գործարար, շինարար), -աւան (բնակարան, բնիկեցա-րան, լսարան), -աւել (հիմնարկ, մեկնարկ, փաստարկ), աւա- (արտաշնչել, արտացոլել), -ացի՛||-եցի՛||-ցի (դուղացի, վրացի, դրացի, իշխանցի, մշեցի), -ացի՛ (խնայցի, իրավացի, քաղաքա-ցի), -ացու (հարսնացու, շորացու), -բար (գիտակցաբար, բարեկա-մարար), գեր- (գերհզոր, գերբարձայիթ, գերակատարել), -գին (կաթնղին, սրտագին), -գույն (լավագույն, բարձրագույն), -եղ (հա-մեղ, հյուսիեղ, գունեղ), -ենի (հարկենի, նշենի, մայրենի), -ի (աղի, կանաչի), -իկ՛ (լավիկ, քաղցրիկ, գնչիկ), -իկ՛ (աշխարհիկ, բը-նիկ, բացառիկ, ազդարիկ), -իկ՛ (պարտիկ, հեղիկ), -ին (դուրսին, ներքին), -իշ (բնակիշ, գործիշ), -իկ (բիկիկ, կարծիկ, շնկիկ)։
 -կոտ (ամառկոտ, վախկոտ), հակ- (հակաբարձ, հակաճանաչել), համ- (համամիտ, համանիշ, համաձայնել), -հար (դակահար, վշտահար), -մու՛նե՛ (ամուսնք, վարժուսք, ուսմուսք), -յա (հեծո-յա, երկաթյա, երկաթորյա), -յակ (աշափեսյակ, հոգւակ, հատոր-յակ), -յուն (ղղղյուն, սոսափյուն), նախ- (նախաշաղիղ, նախա-լեզու, նախասնկյակ), ներ- (ներածութիւն, ներշնչել, ներմուծել), -ոն (գործոն, կարոն, թափոն), -ովի (մտովի, լուրովի, բնկեր-ովի), -ոտ (մրոտ, բրդոտ), -տնն (բնականորեն, վեհորեն), -ոց (ձայնորոց, անցորոց, ծանրորոց), -ոց (ծակոց, շրթիկոց, միտոց), -պն (մշտապն, առանձնապն), -սասն (Հայաստան, վարդաս-տան), -պան (այդեպան, բուժեանապան), -վածք (բանվածք, գործվածք), -վետ (արդյունավետ, բուրավետ, շահավետ), վեր- (վերանորոգել, վերարտադրել, վերակառուցել), -(ա)վար բյու-րավար, հայցվար, տեղավորել), -վուն (կարմրավուն, սևավուն, երկարավուն), -ու (հասու, ահու, քու, շինու), -ուրյուն (ամբու-թյուն, գրություն, բնկերություն), -ունի (հայտնի, շեմպիոնուհի, բնկերուհի), -ում (խմբում, կոստյում, մտորում), -ույր (ձե-վույր, դուրյիթ, սովորույթ), -ուն (գործուն, արթուն, ծաղկուն), -ունե՛ (ծաղկունք, սկզբունք), -ուտ (կաղնուտ, մորուտ), -ուկ (բանուկ, մածուկ, տագուկ), -լ (հոսք, միտք, կրք) և այլն։

Թվարկված ածանցները ժամանակակից հայերենի արդի փու-լում կենսունակութիւն տարրեր աստիճաններ են ունենում։ Սրանց

մի մասը սակավ կամ եվազ կենսունակ է. ինչպես՝ -ածո՝ հանածո, բրածո, շափածո, գոածո, դրածո, կրածո, կաւածո, սպածո, շի-հածո և այլն, -ացի՛՝ աղբուրացի, առնացի, բաւացի, բերանացի, կանացի, տողացի, փաստացի և այլն, -ոն՝ ծամոն, ծղոն, թա-փոն, կարոն, կոնոն, մանրոն, շարդոն և այլն, -ոսակ՝ քիտակ, կապառակ, ստոնոսակ, սեռակ, վստոսակ և այլն, -պանակ՝ գրա-պանակ, դրամապանակ, էսուդապանակ, թրքապանակ, ծայ-րապանակ, անտապանակ և այլն, -ստան՝ այգիստան, Հայաս-տան, Արաստան, Պարսկաստան, Չինաստան, վարդաստան և այլն. մի մասը խիտ կենսունակ է. ինչպես՝ -ակոն, -ային, -յան, -ան, աւե-, գեր-, գույն, -եղիւն, -իշ, համ-, հակ-, -որգ, -ոտ, -ուրյուն, -ունի, -ույր և այլն, իսկ մյուս մասը, կենսունակ չինե-լով հանդերձ, կարող է միասնա՛յ համեմատաբար առավել սահմա-նափակ թվով սկզբնաձևերի. ինչպես՝ -վետ, -վուն, -ովիւն, -պն, -հար, -կոտ, -կուն, -լիկ, -ուկ, -ու և այլն։

Այնուհետև, լեզվի դարգացման ընթացքում կենսունակ ածանցների մի մասը կարող է իմաստի սահմանափակում ստա-նալ և աստիճանաբար դուրս գալ գործածութիւնից՝ իր տեղը զի-ջելով համանիշ այլ ածանցների (հմմտ. պան), անկենսունակ կամ սակավ կենսունակ ածանցները, բնորոշականաբար, իմաստի թարմա-ցում կամ աշխուժացում են ձեռք բերում (հմմտ. -ածո, -ոն, -պանակ և այլն), մյուսները ետք են ժալվալում և քրոզիկում առա-վել մեծ թվով կազմութուններ և այլն։

Բ. Անկենսունակ ածանցներ

§ 666. Անկենսունակ (անարտադրողական) ածանցներով սո-վորաբար նոր բառեր չեն կազմվում։ Սրանք մեծ մասամբ իրենց բառակազմական իմաստով ժամանակակից հայերենի համար հնացած, քարայած և բարբառներից մուտք գործած ածանցներ են ու թեև ընդհանուր են դրաբարի, միջին հայերենի և աշխարհա-բարի համար, սակայն ժամանակակից հայերենում բառակազ-մական ակտիվ դերով այլևս չեն դրոժանում։

Անկենսունակ ածանցները լինում են զիտակցվող և քաւ-ցած։

Գ ի տ ա կ ց վ ո ղ ա ծ ա ն ց ն Ե Ր

§ 667. Գիտակցվող կամ կենդանի են այն ածանցները, որոնց բառակազմական իմաստը չի խամբել և ժամանակակից հայերենում պահպանված են բավական թվով բաղադրություններում⁴⁰:

§ 668. Գիտակցվող ածանցներից են՝

–Ազ. այս ածանցով պահպանված են կախադան, հոսադ, ձանձաղ (հմտ. ձանձորոյթ), կենցաղ, քաղաղ (թակելու փայտ. դործիք) և բարացած խաղաղ, հետպղել բաղադրությունները:

–Այն. կազմել է ամենայն, միայն, միանգամայն, միմիայն և բարացած ոտայն (ոտս = իլիկի վրա հավարված թել), որովայն (հնգվոր. որով արմատից), սակայն, երկայն, ունայն և այլ բառերը:

–Անակ (ան-ակ)՝ զաննանակ, եղանակ, զսպանակ, հոնանակ, մրցանակ, Ելանակ, ցուցանակ, փախանակ և այլն:

–Անդակ՝ այլանդակ, ասպանդակ, սուրհանդակ, օժանդակ:

–Անուտ (ան-ուտ)՝ կիզանուտ, հուսանուտ, հրանուտ, շիջանուտ և այլն:

–Անց. արդի գրական հայերենում դործածական է ստանց կազմության մեջ և առավել կենսունակ է բարբառներում ու ժողովրդագրասակցական լեզվում. ինչպես՝ զլխանց, երեսանց, կող-հանց, մեկանց, նորմեկանց, վերևանց, տակեանց և այլն:

–Աշ՝ մատղաշ, քրվաշ:

–Առ՝ բախառ, կայասա, պայծառ, ցանցառ, զետառ և այլն:

–Առակ (ատ-ակ)՝ հիշատակ, նանատակ, փյառակ, ցախատակ և այլն:

–Ար՝ զարգարել, կերպար, հազգարել, մեծարել, մբարել, տիպար և այլն. բարացած կամ մեռած է արդար, զարար, զպար, երկար և այլ բառերում:

–Արակ (ար-ակ)՝ պահպանված է հասարակ, տափարակ կազմություններում:

–Արդ՝ զմբբարդ, խորհարդ, սեղանարդ, վիմարդ (վեմի և նեկցող):

–Աց՝ դիմաց, կենաց, ձեռաց, ոտաց, ուսաց, վրաց և այլն:

–Ափ՝ խարխափել, խաշափել, խուսափել, սարսափել, շաղափել, շառափ, տարափ և այլն:

–Կար՝ աչագար, զլխագար, խելագար, լեզվագար, ցավագար և այլն:

–Գծ՝ դժբախտ, դժգոհ, զժգույն, դժկերպ և այլն:

–Եթ՝ ձմեր (ձյունին նայելուց առաջացած աչքի հիվանդություն), փաբեր և այլն:

–Եղի՝ աղտեղի, կրեղի, մեղի:

–Եմ՝ խոնմ, համմ, վեմ, նկկոմ (բբբ. սաստիկ ժլատ):

–Եմն, Եմի, Եմնի (Եմ-ն, Եմ-ի, Եմն-ի)՝ երբմն, սուրմն, վաղեմի, երբեմնի և այլն:

–Են՝ նկարեն, ձվեն, նարեն, մեկեն (նորմեկեն), բլրեն (հոտավետ բույս) և այլն:

–Երիմխարիմ՝ հավատարիմ, մտերիմ, դիտերիմ և այլն:

–Երբ՝ ազկերբ, կողբերբ, լնդերբ, ընդերբ և այլն:

–Եցիկ (եց-իկ). այս ածանցի՝ եց բաղադրիչը բայահիմքի անբաժան այն հաղվազուտ ածանցներից է, որ արդեն ձուլվել է իր հետ գործածվող՝ իկ ածանցին. ինչպես՝ զեղեցիկ, երգեցիկ, ընկեցիկ:

–Եվ (եայք > էք)՝ ամենուրեք, դուրպեքեք, նշանդեք, ջրօրնենք, տօհմենք և այլն:

–Զան՝ բազմազան, զանազան, հրաշազան, հնազան(դ), սուրբազան և նոր՝ զունազան (սջարթոնք) և այլն:

–Ժև՝ ամպածեռ, զեղեածեռ, կարմրածեռ (կարմրածեռ), հաղրածեռ, մրեածեռ, ենեզածեռ և այլն:

–Իլ՝ կարիլ, ոչիլ (որչ արմատից), տեսիլ (ծագրամով այս ածանցի հետ է կապված նաև տարմիլ, խնմիլ բառերի ածանցը):

–Իմ՝ նզնիմ, ուշիմ:

–Ին՝ բաղիին, լվին, խառնին (մորեիսի նման մանր միջատ), կտրին, կավին, կապին, նանին, մանին (օրորվելով շարվող), մանին, մեին կամ մունին (ոչիլ, տիլ), ուտին և այլն:

–Իվ (առաջացել է գրաբարյան -ի վերջավորությունը հղու-

⁴⁰ Մասնից մի բանիստ ածանցների իմաստները բարացել են և չեն գիտակցվում:

վաճակերի քարացումից)՝ աղբիվ, լիվիվ, խոխիվ, խտտիվ, հազիվ, հշգրտիվ, հշտիվ, մեզմիվ, շնարհիվ, ստուգիվ, ցրիվ և այլն:

-Ի՛ք՝ ապառի՛ք, ալմառի՛ք, աղգառի՛ք, բազմի՛ք, բարի՛ք, գործի՛ք, եղի՛ք, ընթրի՛ք, բեզառի՛ք (հագուստի թև), կարծի՛ք, կեռի՛ք, նատի՛ք, շարի՛ք, ոտի՛ք և այլն:

-Իցս (սանգամ, պատկեհ նշանակությամբ)՝ բազմիցս, երիցս, երկիցս և այլն:

-Կակ, -կեկ՝ կարմրակակ, բուկեկ, հաստեկ, լայնեկեկ, մանրեկեկ և այլն:

-Կեն՝ ծակտակեն, հյուտակեն, հաննկեն (շերտավոր, բծավոր), ցանցկեն և այլն:

-Կին՝ ճախկին, կրկին (կր բաղադրելու նշանակել է երկու, որ կին ածանցի հետ նշանակել է երկու անգամ նորից):

-Կուն՝ զիմացկուն, խաղացկուն, ծիծաղկուն:

-Մած՝ ամպամած, անճրհամած, զետեամած, քիպամած, խալպարամած, սևամած, տախտակամած, տխրամած, փայտամած և այլն:

-Ման (ստաշացել է զբարբարյան -ումն-ով վերջացող մի շարք բառերի սեռական հոլովաձևերից)՝ ելման, եուման, եփման, կեուման, վաուման և այլն:

-Ոգ՝ նորոգ (նորոգել, նորոգիչ), ստորոգել:

Ո՛ն՝ բղոն, շալպոն, բոլոն և այլն:

-Ո(յ)՝ պահպանված է երեկո և ոճական արժեք ունեցող ավագակարգո, անառակարգո, ցազանարգո, հեկարգո, հեհո, շարարգո և այլ բառերում:

-Ոչ՝ բրդոչ, դանդալոչ, լալոչ, մարոչ, որոչ, պոչ և այլն:

-Ոմ՝ բորչում(ել), խորչում (կեճիտ), խոհում (խոտի խորած)

և այլն:

-Ով՝ զինով, բանով, խոով, կարնով, քափով, սիրով, շապով, կողով, հոլով, խորով և այլն. վերջին երեք բաղադրություններում ածանցը քարացել է և ձուլվել հոլ, կող, խոր արմատների՝ կազմելով նոր սկզբնաձևեր:

-Ոտի՝ հնտաի, ոսկրտաի, շխտաի, սնտաի, ցնցտաի, փուրտաի, օտարտաի և այլն:

-Որ. գործածվում է մեծ մասամբ քարացած ձևերով. ինչպես՝ բուր, զար, բուր, խոյուր, կուր, հատուր, հուր(ել), մուր, մտուր(ել), շեփուր, շուր, պղտուր (պիղծ արմատից), սինլուր, ցնուր, օնուր և այլն: Գիտակցվում է քայլերի մեջ սաստկական ածանցի նշանակությամբ. ինչպես՝ խազմուրել, խառնշտուրել, կապկուրել, շանգաուրել, պաշպուրել և այլն:

-Որայլ. պահպանված է զեղբայլ և ճնացած արտոբայլ,

վանորայլ բաղադրություններում:

-Չեք (չեայ)՝ բերոչեք, կարոչեք, կարոչեք, նայոչեք, շինոչեք և այլն:

-Չյա (չեայ)՝ ավեայա (ավեարեք), առնավաչյա: Այս ածանցի նշանակությամբ խոսակցական լեզվում գործածական է վերահիշյալ -չեք ածանցը, որ բաղադրված է այս և -է ածանցներից (չեայ > չյա + ք > չեք):

-Չանդ՝ արգավանդ, բարձրավանդ, դարավանդ, սարավանդ և այլն:

-Վի (վի). համանիշ է դրական լեզվի -եղ ածանցին և գործածական է զլիտավորապես արևմտահայ գրական լեզվում ու բարբառներում. օրինակ՝ բխնեմվի, ոսկեծամվի, սևաշվի, սերեմվի և այլն:

-Ուր. կենսունակ է բարբառներում և խոսակցական լեզվում. ինչպես՝ անկուր՝ ձերուր, հնուր, մանկուր, մեծուր, մուրուր, փոքուր և այլն:

-Ուլի. գործ է անվում միայն զբուլի, խարուլի, մակուլի և պարուլի կազմություններում:

-Ուլյ. պահպանված է միայն զբարբարից մնացած զանույլ, կանույլ, հանույլ, պիտույլ բառերում:

-Ունի. պահպանված է զբարբարյան արհունի, տերունի բառերի մեջ և հին տաճանունների վերջավորություններում. ինչպես՝ Արծունի, Արշակունի, Բզնունի, Բագրատունի, Ոչտունի և այլն, որոնցում -ունի ածանցը համանիշ է ազգանվանական -յան ածանցին և եթե -ունի-ով վերջացող տաճանունների վրա դրվում է նաև ազգանվանական -յան ածանցը (հմմտ. Արծրունյան), ապա հիմնականում արտահայտում է պատկանելության իմաստ. այսպես՝ Արշակունյան, Բագրատունյան(ց) և այլն, նշանակում են

դրանց հարստութիանը, տոճմին, իշխանութիանը վերաբերող, պատկանող:

-Ունի՞ ածանցը գործածական է նաև ծերունի, զոգունի ածանցավոր բաղադրություններում, ուր սկզբնաձևերի և ածանցի առանձին իմաստները դեռևս դիտակցվում են: Այս ածանցը կենսունակ է բարբառներում (հմմտ. բերունի, պահունի և այլն):

-Ունի՞ խորունկ, պրունկ (հմմտ. պոռոշ):

-Ունի՞ անտերունչ, վավաչունչ:

-Ուզ՞ պառուզ, ցեցուզ:

-Ուշ՞ սրտառուչ, վայելուչ, ընկալուչ և այլն:

-Ուտ՞ գործածվում է միանամուտ, մոճուտ (հմմտ. մորմոր, մրմունջ) և իտակցական ծակուտ կազմություններում:

-Ուտա՞ ապրուստ, գալուստ, կուստ, կերուստ, հագուստ, հարուստ, հեռուստ, պահուստ, վերուստ, փախուստ և այլն:

-Ուրդ՞ անուրդ, ժողովուրդ, խառնուրդ, կցուրդ, հագուրդ, պաբապուրդ և այլն:

-Ուց՞ կազմվել են դեղնուց, այտուց, նեղուց, ողնուց և այլն:

Ուց՞ վազուց, հեռուց⁴¹ և այլն:

-Ուխ՞ գգվուտուխ, գինարուխ, ճանկուտուխ, մանրուխ, մաղբղզուխ, սուխանուխ, փնտրուխ, քուխ և այլն:

Ք ա ր ա ջ ա ծ ա ծ ա ն ց ն ե ր

§ 669. Քարացած են այն ածանցները, որոնց իմաստը ամբողջովին մթադնել է և ձուլվել ածանցվող սկզբնաձևին: Քարացած ածանցներով բաղադրված բառերի ածանցավոր լինելը պարզվում է միայն այնպիսի ստուգաբանություններում:

§ 670. Քարացած ածանցներից են՝ -անդ (արզանդ, եռանդ), -ախ (հաճախ, շարժախ, քոխախ, ուրախ և այլն), -աստ (խմաստ, առադաստ, զգաստ և այլն), -նի (զաղտնի, հայտնի, նախնի), ան- (անձեռոց, անձեռոցիկ, անզոսնել, անկողին, անթեղ և այլն), -իշտ (երամիշտ, նամիշտ), -իբ (առիթ, բլիթ, կենիթ), -յալն (լուսյալն), -ոշ (խոռոշ), -ույբ (կափույբ, պարույբ), -ուբ (բուբ, թափուբ, մորբ և այլն), -ունդ (սը-

⁴¹ Այս և ն ածանցի բաղադրամբ կազմվել է -անց ածանցը, որ առավել զորոգծական է իտակցական լեզվում. ինչպես՝ շուտանց, պղտնուց, պտրունց, փախունց և այլն:

նունդ, ծնունդ, սերունդ և այլն): Քարացած ածանցներ առաջացել են նաև կրտսերյան նախդիրների և հոլովաձևերի իմաստների մթադնումից. այսպես՝ եղակի թվի գործիական լավ (աւ). կանխավ, հարկավ, սակավ, շեռավ, իրավ և այլն⁴², ամբ (աննձամբ, իրավամբ, մասամբ, նկատմամբ, պատահմամբ և այլն), հոգնակի թվի ուղղական ինք (զաշինք, նախատինք, քրտինք), սեռականաց (դիմաց, կենաց, ձեռաց և այլն), հայցական ւ (երկուս, ծախս, մեղսակից, մեղսունակ, շորս) և այլ վերջավորություններից և գ (չայրանալ, գատել, դարգանալ, դարդ, դարթնել, դարմ, դարկ, զգալ, դեղում, դրաղվել և փոփոխել, սթափվել, սրփոխել⁴³), քստ (ստանձնել), ի (իբբ, իդուր և հանցանք, հանկարծ, հանուն, հանիրավի, հարող, հարգարկ, հարգել, հավելյալ և այլն)⁴⁴, ց (ցալոց, ցանկ, ցերեկ) նախդիրներից և այլն:

Անբրածնշտ է նշել, որ ընդհանրապես դժվար է բոլոր ածանցներից որոշակիորեն տեղագործել կենսունակ և ոչ կենսունակ խմբերի մեջ, քանի որ ամենակենսունակ ածանցն անգամ մի քանի կազմություններում կտրող է քարանայ և շփոթակցվել (հմմտ. -ալկ՝ սրակ, քանակ, էակ, -ուկ՝ հեղուկ, արդակ և այլն) և, ընդհակառակը, ամենանկենսունակ ածանցներով էլ կտրող են կազմվել մեկ և մի քանի բառեր. այսպես՝ -առի հնացած և անկենսունակ ածանցով (հմմտ. դեռատի) կազմվել է մատալատի (ԳԹ) բառը, -ուց ածանցով (հմմտ. այտուց, նեղուց, ողնուց և այլն) կազմվեց կապտուց (սմիայն թթիս վրա կապտուց կաս», ԱՀ) բառը և այլն:

Հետևաբար, ածանցներն ըստ դրծածականության կամ ըստ բառակազմական ակտիվության դասակարգելիս, նրանց այս կամ այն խմբի մեջ կարելի է տեղադրել որոշ վերապահություններ միայն՝ նկատի ունենալով նրանց գործառնության ընդհանուր մակարդակը:

⁴² Խուճ. հոլովաձևից է առաջացել նաև -ով (և) ածանցը. ինչպես՝ բարի-աւ>բարևաւ>բարեւ>բարեւ, հետի-հետև և այլն, որոնք դեռևս զբաղաբարձ իմաստի մթադնում էին ստացել և վերածվել սկզբնաձևերի: Այս ածանցի նմանակությունը առաջացել են վերև, ներև, որև, իբև, միելն և այլն:

⁴³ Արքիներում միևնույն գ նախդիր է. սը փ. է. ք բաղաձայններից առաջ խլանում է:

⁴⁴ Մասնում միևնույն կ նախդիր է. որը ձայնավորներից առաջ վերածվում է ե-ի:

ԱՄՆԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՀԱՅՐԵՆՆԻ ԶԱՐԿԱՅՄԱՆ ՍՈՇԱԿԱԿԱՆ ՓՈՒՐՈՒՄ

§ 671. Ածանցական կազմի տեղաշարժերից ժամանակակից հայերենի սովետական շրջանի բառակազմության մեջ նկատելի են հետևյալները.

Ա. Իմաստի սահմանափակում ստացած ածանցներ

§ 672. -Աձ. այս ածանցով ժամանակակից հայերենին են անցել դեռևս զրաբարում գործածված առեղծված, արաբած, արկած, դիպված, զանգված, խառոված, կոտորած, հասած, հաաված, հավիված, հողված, վարված, վերջված գոյականները:

Ժամանակակից հայերենում այս ածանցի բառակազմական դերը սահմանափակվել է դեռևս վաղ աշխարհաբարում գործածության մեջ մտավ սրանով և -ի ածանցով բաղադրված նույնանիշ վածի ածանցը. ինչպես զործվածք, գրվածք, խառնվածք, հորինվածք, խտվածք, կատրվածք, շարդվածք և այլն: Իսկ -ած ածանցը բառակազմության բնագավառից անցավ քերականության բրնագավառը, դարձավ հարակատար դերբայի մասնիկ (հմմտ. բերած, գրած, նկարած, երգած, կատարած և այլն): Այժմ այս ածանցով նոր բառեր կարող են ստացանալ արդեն հարակատար դերբայի գոյականական կամ ածականական կիրառություններից միայն. ինչպես՝ նշանած, սիրած, եկիսած, հոտած և այլն:

§ 673. -Թան. մի շարք բառերից կազմել է սգրազմունքի իմաստ արտահայտող բառեր. ինչպես՝ այգեպան, բակպան, ռոզապան, դոնապան, խաճուրպան, հնոցապան, ձիապան, ջուրեպան, կատապան, պարտիզպան, սայլապան, ուլապան և այլն: Սովետական շրջանում վերոհիշյալ ածանցավոր բառերի իմաստը հնացել է, և այդ բառերի մեծ մասը զուրս է եկել գործածությունից (սեփականատիրական հասկացությունների և -պան ածանցով արտահայտվող որոշ ընդդիմանքների վերացման հետևանքով): Հիշյալ ածանցավոր բառերի հետ, քնականաբար, զուրս է մղվել նաև -պան ածանցը (հմմտ. սայլապան, ուլապան, կատապան, ձիապան, խաճուրպան, ջուրեպան և այլն): Այս

ածանցի իմաստով այժմ գործածական և ակտիվ են -գործ, -արտը, -ող, -բան ածանցները: Այժմ -պան ածանցով գործածվում են հատուկեռ բառեր. ինչպես՝ այգեպան, պարտիզպան, բովետապան, հնոցապան և այլն և ծայրային (շնախազմից կարեկալին ծայրայանների մշակման եղանակը, են) նորարանությունը, որում -պան-ը այլևս անձի իմաստ չունի:

§ 674. -Ուրդ. հանգես է գալիս արձակուրդ, անուրդ, մաղվուրդ, խառնուրդ, խառհուրդ, հագուրդ, պարտաւուրդ և այլ բառերում: Սրանով կազմված մի շարք բառեր, ինչպես՝ համուրդ, հավախուրդ⁴⁵, կացուրդ, կցուրդ, լուրդ, եկագուրդ⁴⁶ և այլն, այժմ զուրս են եկել գործածությունից կամ փոխարինվել են -ույր ածանցով (հմմտ. կացույթ, կցույթ և այլն):

§ 675. -Ենի. այս ածանցը հիմնականում հանգես է գալիս գոյականների մակարդակում (սղոյական սկզբնածինների արտահայտած ծառի, բույսի, թփի տեսակի արտահայտող նշանակությամբ. հմմտ. բալենի, խնձորենի, նշենի, թթենի, թղենի, ձիթենի, վարդենի, տանձենի և այլն): Հետո այն կենսունակ էր նաև հատկանշալին իմաստով (հմմտ. արիկենի, մատաղենի (= մատղաշ), լրբենի, նբենի⁴⁷, թթվենի, մարբենի, քաղցրենի և այլն)⁴⁸, ժամանակակից հայերենի արդի փուլում սահմանափակվել է այս ածանցի հատկանշալին իմաստը և վերոհիշյալ բառերը այժմ հնացած են: Հատկանշալին իմաստով ժամանակակից հայերենում գործածական են միայն հայրենի, մայրենի, բաղբենի և վայրենի բառերը, որոնցում -ենի ածանցը ունի ածականակերտ գործառույթ: Կտրելի է առել, որ սահմանափակվել է նաև այս ածանցի սկենզունների մոթթնո, մսի տեսակի նշանակող իմաստը (հմմտ. արզիսենի, առյուծենի, գալղենի, խոզենի, ընձենի, վագրենի, սամուրենի և այլն), թևն դեռևս սակավ գործածություն կարող են ունենալ աղվեսենի, այծենի, վագրենի և այլն:

⁴⁵ Զուգահեռաբար կար նաև հավախուրդ ձևով:

⁴⁶ Տե՛ս Մ. Արեղյան, նշված աշխ., էջ 275:

⁴⁷ Այս և նախորդ բառը գեղարվեստական գրականության լեզվում կարող է գործածվել ոճական նկատառումներով:

⁴⁸ Տե՛ս Մ. Արեղյան, նշված աշխ., էջ 253:

Ք. Իմաստի աշխուժացում ստացած և նոր
ծավալված ամանցներ

§ 676. Հայերենի շատ ամանցներ, հնում սակավ կենսունակ լինելով, ժամանակակից հայերենի տվյալ փուլում իմաստի թարմացում, աշխուժացում են ապրում և ակտիվացնելով վերածվում կենսունակ ամանցների: Ընդ որում կարող է ստավել ակտիվանալ նաև կենսունակ բազմիմաստ ամանցի իմաստային տարբերակներից մեկը:

Այդպիսի ամանցներից են՝

§ 677. -Ույր. հայերենի սակավ կենսունակ ամանցներից էր. սրանով կազմվել էին երեւոյք (առերևույթ, մակերևույթ), գայրույք, ծածկույք, կացույք, հասույք հացկերույք, ձանձուրույք, մշակույք, ցերեկույք և այլն:

Այժմ -ույք ամանցը զգալիորեն իմաստի աշխուժացում է ապրում և դործ է անվում ստավել մեծ վճով կազմութուններում: -Ույք ամանցի ակտիվացման պատճառները նրկումն են: Առաջինը բխում է -ույք ամանցի ստորկայացնող, գոյականացնող և կոնկրետացնող կարևոր իմաստից, որով բայարմասներից, սակզմվում են գործողութայն ստորկայացված հասկացութայն արտահայտող, գործողութայն անուն հանդիսացող գոյականներ, իսկ գոյական անուններից՝ ընդհանրական, վերացական նշանակութայն գոյականներ. ինչպես՝ բաղադրույք, բառույք, դուայք, էլույք, ձևույք, վարձույք, տիրույք, հանույք, ձողույք, փարույք, ննչույք, արժույք, բաղադրույք, հատույք, իմաստույք, նեույք, էջույք և այլն: Երկրորդ պատճառը -ույքում բաղադրյալ ամանցի (-ույթ+յուն < ույթ+ին) իմաստով, մասամբ նաև նրա փոխարեն գործածվել է. այսպես՝ ավանդույք (ավանդութուն բառի փոխարեն), մրցույք (մրցութուն բառի փոխարեն), վերջակրկնույք, վերջույք (գործածվում է վերջափորութուն բառի ավելի նեղ և կոնկրետ նշանակութուններով՝ «Թղզանիղձի վերջավորութունն» և «Գեղարվեստական երկի եղրափակող վերջաբանը՝ էպիտոզ»):

§ 678. -Արկ ամանցը իմաստով կապված է հին հայերենի արկանի (գցել, նետել, զնել) բայի հետ, որի արմատը ժամանա-

կակից հայերենում պահպանված է (Քեև հին հայերենում առանձին գործածություն չունի): -Արկ ամանցը նախասովետական շրջանում սակավ կենսունակ էր և գործածական էր բայակերտ նշանակութայն (իհարկի, -ել ամանցի հետ). ինչպես՝ առաջարկել, բանարկել, գանգատարկել, րվարկել, րոյարկել, ինկարկել, խաղարկել (խաղարկութուն), խուզարկել, ձևանարկել, սակարկել, փորձարկել և այլն: Սրանով կազմվել են նաև գոյական անուններ. ինչպես՝ ակնարկ, առաջարկ, գլխարկ, ձևնարկ, պահանջարկ, հիմնարկ, փաստարկ, անկարկ, մեկնարկ (տարտ)՝ և այլն:

Հայոց լիզվի զարգացման սովետական շրջանում -արկ ամանցը նկատելիորեն ակտիվացավ բայակերտ նշանակութայն. ինչպես՝ գործարկել, դիտարկել, րոյարկել, լուզարկել («Այդ լուզարկումը շարունակվում է արդեն մտ մեկ միլիոն տարի», եմ), լատարկել, լցարկել, կանոնարկել, մեկնարկել, շանարկել, վանկարկել, վիճարկել, ջրարկել և այլն:

§ 679. -Որզ ամանցը Քեև կենսունակ էր նաև նախասովետական հայերենում, սակայն շուրեն անպիսի լայն ընդգրկում, ինչպիսին ունի այժմ: Սրանով հայտնի էին գոյականներ օսանձիչ և թորեկ հատկանիշ կրող առարկայի իմաստներով. ինչպես՝ անկամորզ, ստաջնորզ, անցորզ, գնորզ, գեղացորզ, կցորզ, կիտորզ, հակառակորզ, հեանորզ, հանապարհորզ, մնացորզ, լծորզ, լազորզ, ձայնորզ, սրտորզ, զլաննորզ և այլն: Այժմ կազմվում են անհի իմաստ արտահայտող բաղաձայնի նոր բառեր. ինչպես՝ դիտորզ, զննորզ, հուպանորզ, վարորզ, սամարզ, կրկնորզ և այլն:

-Որզ ամանցը վերջին տասնամյակներում աշխուժացավ առանձնակապ սպորտային տեղի նախասովետական մեջ: Նրանով կազմվեցին «սպորտի որեկ ձևով գրազվողի» իմաստ ունեցող նոր բառեր. ինչպես՝ զանվարզ, բեքնորզ, բիավարորզ, ծանորզ, ձևնազնորզ, ձիորզ, մուրնորզ, էնտորզ (նիդազաննտորզ, մրձանտորզ), ջրգնորզ, սուզորզ, վագորզ, ցաղորզ և այլն:

§ 680. -Աքի||նցի||-ցի. հիմնականում կազմում են անձնանուններ հասարակ և հատուկ անուններից, որոնք ջույց են տալիս ա) տեղի բնակիչ՝ աշտարակցի, գյուղացի, մշեցի, լեռնցի, վանեցի, Խորենցի, Եվրոպացի, սախացի և այլն, բ) որեկ երկրի բնա-

կիչ և բնակվող ազգ՝ գերմանացի, անգլիացի, ինդոնեզցի, շի-
նացի, վրացի, լատանացի, ֆրանսիացի և այլն:

Հայերենի դարգացման սովետական շրջանում «որն է տեղի
բնակիչ» խոստով առաջին ակտիվացավ նշված ածանցների -ցի
տարրերակը. ինչպես՝ մուսկվացի, բելվինցի, ինդոնեզցի, նաիր-
ցի, կիպրացի, կուրացի, սլավոնացի, պոլիկեցի, լիտվացի և այլն:
Սակայն սովետական շրջանում -ցի ավանցը առավել ակտիվացավ
և ծավալվեց նաև «որն է տեղում աշխատող, սովորող, բնակվող»
(լինի գտ գործարան, ֆակուլտետ, հիմնարկ, թիմ, փողոց և այլն)
նոր խմատներով. ինչպես՝ կոմիտասցի (Կոմիտասի անվան կը-
վարտեռից), սպարտակցի («Սպարտակ» թիմից), կիրովցի (Կի-
րովի անվան դրոժարանից), բամանցի (Համանուն գեղից), կի-
կյանցի (Կիկյան փողոցից), ճիդրահարդրակցի (Հիդրոհարդրակ
գործարանից), սունդուկյանցի (Սունդուկյանի անվան թատրոնից),
համադատարանցի, պոլիտեխնիկից և այլն:

Մանր. — Ացի-ով դեռևս հնում կազմվել էին զավառացի,
վրացի, րադաբացի և այլ գոյականներ, որոնցում -ացի ածան-
ցը առաջացել է հին հայերենի հոգնակի և եզակի թվերի սեռական
-աց և -ի վերջավորությունների ձուլումից և իմաստի մթաղմու-
տից: Սրա հետ ծագումով նույնը լինելով, -ցի (նաև -եցի) ածան-
ցը, ինչպես նկատեցինք, ժամանակակից հայերենի վերջին տա-
նամյակներում առավել ակտիվ է և գործոճ, քան -ացի և -եցի
ածանցները: Այս կարելի է բացատրել մասամբ նրանով, որ նախ՝
շատ աշխարհագրական տեղանուններ վերջանում են և պարմա-
կան ձայնավորով (հմմտ. Սոսկիա, Ռիգա, Պրագա, Անգլիա, Չորանիա,
Լիտվա և այլն), որ այլևս ավելորդ է դառնում -ացի
ածանցի -ա-ի կրկնությունը. մի հանդամանք, որ ավելի է
նպաստում նրա -ցի տարբերակի ակտիվացմանը և տարածմանը:
Եվ հետո՝ այստեղ մասնավորապես կարևոր դեր է կատարում նաև
հայերենի սովետական շրջանում նկատելի ածանցների հնչյունա-
կան կառուցվածքի կրճատման և կրկնությունացման միտումը (հմմտ.
հիդրոհարդրակցի, համադատարանցի, սպարտակցի և ոչ՝ հիդ-
րոհարդրակցի, համադատարանացի, սպարտակացի և այլն), իսկ -ացի և -եցի
ածանցներով կազմված շատ բառերում (հմմտ.
աթենացի, իտրենացի, ռարսեցի, մշեցի, վանեցի, կարկեցի և

այլն) դեր է կատարում նաև լեզվական սովորույթը և -ա, -ե
կապող ձայնավորների աղիցցությունը: Կարճ ասած՝ -ացի ածան-
ցի և նրա -ցի և -եցի տարբերակների մեջ զարգացման տեղեկնքը
տանում է դեպի -ցի տարբերակը:

§ 681. -Արա. իմաստի նկատելի աշխուժացում է ստացել
հիմնականում սովետական շրջանում. սրանով կազմվել են հաշ-
տարա, կազմարա, տնարա, կենտարա, վնասարա, սխո-
վարա և այլ հատկանշալին իմաստ ունեցող բառեր: Այս ածան-
ցով կազմված ածականների մեծ մասը զեռուս ժամանակակից հա-
յերենի նոխարսովետական շրջանում վերածվել է սկզբնաձևի
հատկանիշները կրող անձի իմաստ արտահայտող բառերի, որ տե-
ղի է ունեցել դարձյալ որոշիչ և որոշյալի կապակցության հիմ-
քով՝ որոշյալի կրճատմամբ և որոշիչի խոսքի մասային իմաստի
փոփոխությամբ (գոյականացմամբ). ինչպես՝ արդյունաբար, մա-
տակարար, գեղծարար, շինարար, նորարար և այլն: Ուստի պա-
տահական չէ, որ -արա ածանցով կազմված բառերի մեծադույն
մասը հավասարապես ունի և ածական, և՛ գոյական անվան
իմաստ: Վերջին տասնամյակներում -արա ածանցով կազմվել
են բարձր գործով, մասնագիտությունը զբաղվողի, «որն է գործ
անողի» իմաստով գոյականներ. ինչպես՝ գաղափարար, խոսա-
նարար, ձևարար, փորձարար և այլն:

§ 682. Գեր- ածանցով աշխարհաբարում գործածական էին ոչ
մեծ թվով կազմություններ. ինչպես՝ գերմարզ, գերանաչ, գերիշ-
խանություն, գերանդակ, գերանել, գերագիլով, գերապատիվ, գե-
րառեսուչ և այլն, որոնցում ածանցը ունի վեր, բարձր, բարձրա-
զույն, առավել իմաստները: Նրանով միայն վերջին տասնամ-
յակներում կազմվեցին մեծ թվով նոր բառեր. ինչպես՝ գերարագ,
գերբուլլ, գերխոր, գերմայնային, գերեզրիա, գերզաղտնի, գերի-
բակման, գերլարում, գերզոր, գերհնչյունային, գերնոր (ե՛ն), գե-
րետիվ, գերկարեալիք, գերհակզերթաց և այլն:

§ 683. -Բան. իրես ակտիվացավ և կազմարձակի նշած մասնա-
գիտությունն ունեցող անձի՝ եշանկությունը: Սրանով կազմվել
էին պատմաբան, լեզվաբան, հումաբան, երգծարան, ոճաբան,
մեկնաբան, հագեբան, հայկաբան, կենսաբան և այլն: Նորակազմ
են օրաբան, օդերևութաբան, մոլորակաբան, մարդաբան, ծիրա-
բան, հանգաբան, ուռուցաբան, կառուցվածաբան և այլն:

§ 684. -Յա. այս ածանցը, որ ծագումով -ն ածանցի հնչյունական տարբերակն է, կազմում է հարաբերական ածականներն և այս իմաստով նույնանիշ է -ն-ին. ինչպես՝ արժաբ-արժարյա, ազամաղեի-ազամանդյա, շղարչև-շղարչյա, երկար-երկարյա, բրվե-բրվյա, սակ-սակյա և այլն: Հայոց լեզվի զարգացման վերջին կետարյա զարգացման ընթացքում արդեն կայունացել է -ն և -յա ածանցների գործառնության ոլորտը. հարաբերական ածականներ կիրառելու և առավել կենսունակացել է -ն ածանցը. այսպես՝ մի շարք դուականներից հարաբերական ածականներ են կազմվում միայն -ն ածանցով (Նձմտ, երև, արև, կալե, ֆարև և այլն), այդպես էլ փոխառյալ սերբանականից հարաբերական ածականներ են կազմվում առավելապես -ն ածանցով (Նձմտ, բրունդ, բետոն, գրանիտ, կապրոն, կալվ, ցեմենտ և այլն): Սակայն -ն ածանցը, ընդարձակելով իր կիրառության ոլորտը և ակտիվանալով, մնաց մեկիմաստ (սակզրեանի նշած նյութից, առարկայից պատրաստված, առաջացած լինելու իմաստով), միևնույն -յա ածանցը, որ ընդհանրապես բազմիմաստ էր, ծավալվեց նաև իր մյուս իմաստներով. այսպես՝ ա) սկզբնական նշանով ժամանակաշրջանն ընդգրկող (Նձմախ օր, ամիս, տարի, ժամանակ բառերի բաղադրությանը)՝ ամանորյա, ամենօրյա, երկամյա, երեամյա, քսամյա, եռամյա, կսամյա, երկարօրյա, տասնամյա, միաժամանակյա, երկաժամանակյա, տարժամանակյա և նորակազմ կենցաղ, կենցաղ, մեկերբյա, բազմօրյա և այլն, բ) սկզբնական նշանով տեղի՝ ծովափնյա, ծովկերյա, ընդհատակյա, ստորջրյա, ստորգետնյա, շուրջերկրյա և նորակազմ ընդերկրյա, ընդգետնյա, խորջրյա, շուրջուտնյա, շուրջափառայա, վերգետնյա, վերջրյա և այլն, գ) սկզբնական նշանով հատկանշին ունեցողի՝ գործունյա, երկրնյա, միանննյա, տխուրչյա, սևաչյա, խոշորչյա, եղգանննյա, հազարակնյա (ՀԵ, ՔՀ)⁵⁰ և այլն:

Բազմիմաստ ածանցների իմաստներից մեկի կամ երկուսի աշխուժացումը և ծավալումը արդի հայերենի բառակազմության մեջ կենդանի և գործող օրինաչափություն է և ածանցական կազմի տեղաշարժերի մեջ կական դեր է կատարում, ընդ որում կա-

⁵⁰ Վերջինները նորարանություններ են:

որդ է ակտիվանալ թե՛ կենսունակ ու գործուն իմաստը և թե՛ հազվադեպ գործածական իմաստը:

§ 685. Կան բավական թվով ածանցներ էլ, որ թեև առաջացել են մեր լեզվի հնագույն շրջաններում, եղել են անկենսունակ կամ սակավ կենսունակ, սակայն Ժամայում են գտել մեր լեզվի զարգացման վերջին շրջանում: Այսպես՝ -պստակ անկենսունակ ածանցով կազմվել էին զրապսակ, դրամապսակ, բրապսակ բառերը: Վերջերս այս ածանցով կազմվեցին նաև էտյոպպսակի, տետրապսակի, Ժյուրապսակի նոր բառերը: Անու ածանցի բառակազմական իմաստը ժամանակակից հայերենում հնացած էր, և սրանով գործածական էին միայն հանաձո, ձուպաձո, բրաձո, չափաձո, պանաձո բառեր: Սակայն այս հնացած իմաստը ժամանակակից հայերենի սովորական շրջանում թարմացավ և կազմվեցին դրաձո (50-ական թվականներին), կտրաձո, գտաձո, կաաձո, շինաձո, պեղաձո, տպաձո նոր բառերը, որոնք թվապես զերեկշուտ են այս ածանցով հայերենի հին, միջին և նախաստվենական շրջաններում կազմված բառերին:

Նոր են սկսում ծավալվել նաև հայերենի գրական նախածանցներից մի բաները. ինչպես՝ առ-, երբ-, քնդ-, ստոր-, մակ-, վտխ- և այլն. այսպես՝ երբ- ածանցով կազմված երբարկա, երբարդել, երբալարպետ, երբաստամախին և այլ բառերի կողքին կազմվեցին երբանանձեռնողով, երբարեմա, երբատեխա (подтекст բառի պատճենում) բառերը, քնդ- նախածանցով քնդատակ, քնդզվե բառերի նմանակությանը՝ քնդչրյա, քնդոժյա նոր բառերը, ստոր- նախածանցով (Նձմտ, ստորագրություն, ստորագրյալ, ստորակետ, ստորերկրյա, ստորջրյա և այլն)⁵¹ ստորանաշակ (ՍՀ), ստորգետնյա և այլն, առ- սակավ կենսունակ նախածանցով (Նձմտ. առաժմ, առափել, առափնյա, առնմանություն, առիպձել և այլն)⁵² առափի (ԳԹ), առնետ, առնալունյա, առգավի, առգանդ և այլն, մակ- նախածանցով (Նձմտ. մակարոյժ, մակարդել, մակերևութ, մակընթացություն, մակդիր, մակբայ և այլն)⁵³ մակելի նորակազմ բառը, փոխ- նախածանցով (Նձմտ. փոխզեղապատ, փոխհարաբերություն, փոխազդեցություն և այլն)⁵⁴ փոխախաղան, փոխգործառնություն, փոխազդեցություն, փոխեղանգություն, փոխեղանգություն,

փոխանգառիչ, փոխալսյալնազնորում, փոխանկում («տեղի ունեցած մեքենայական փոխանկում», են), փոխմեկուսացում և այլն:

9. Խոր առաջացած ամանցներ

§ 686. Ժամանակակից հայերենի ամանցների ընդհանուր համակարգը նախատվեալական շրջանի հետ համեմատած քիչ է փոփոխվել, քանի որ բոլորովին նոր ամանցները շատ քիչ են: Սակայն դրա փոխարեն, ինչպես վերևում նշվեց, առավել զգալի են ամանցական կազմի իմաստային տեղաշարժերը և նրանք ամանցների իմաստների ծավալման և զարգացման շնորհիվ բազմաթիվ նոր բառերի ստեղծումն ու դրանցով բառապաշարի հարստացումն ու համալրումը:

§ 687. Նորագույն է -գործ ամանցը, որ առաջացավ հայերենի սովետական շրջանում:

-Գործ-ը առանձին, անկախ կերպով, այլև բարդության մեջ կենտունակ և գործածական է ժամանակակից հայերենում (հմմտ. գործ, գործունյա, ասեղևագործ, գորգագործ, ձևագործ, հանցագործ, շահագործել, հայանագործել, ստեղծագործել և այլն): Գործ-ը լայնորեն ծավալվեց սորելի դրադմոնթ, մասնագիտություն ունեցողի՝ բառակազմական իմաստով՝ այս նշանակությամբ դերազանցելով համանիշ -արար -բան, -իչ, -ող ամանցներին, միաժամանակ ընդգրկելով նաև բազմաթիվ փոխառյալ հիմքեր. ինչպես՝ ավտոդրագործ, այլումիեագործ, սափալագործ, բեռնագործ, գազագործ, գարնիագործ, լրագրագործ, Լեշիկագործ, էլեկտրալամպագործ, բուենիագործ, լուսագործ, խաղողագործ, ձեփագործ, ծխախոտագործ, կաուչուկագործ, կարելագործ, կար-առայագործ, կանյակագործ, նակեղեղագործ, մետախագործ, ներկագործ, պանածոյագործ, պանեագործ, ռետինագործ, տակառագործ, տեխնիկագործ, աբիդոսագործ, ասրիեագործ, բիսիագործ, ցեմենտագործ և այլն:

Գործ-ով բաղադրված մի շարք բառերում, ինչպես՝ ամխագործ, զինագործ (Բաֆֆի, Երկերի ժողովածու), ատաղնագործ, գինեգործ, վախկնագործ և այլն, -գործ-ը զբաղմունքի, մասնագիտություն ունեցողի՝ իմաստով ըմբռնվում էր նաև նախատվե-

տական շրջանում, սակայն նրա ամանցական իմաստը դեռևս չէր կայունացել:

Հայոց լեզվի զարգացման անժամանակ փոխում ամանցացման ճանապարհին է կանգնած -վար արմատը՝ զարձալ զբաղմունքի, մասնագիտություն ունեցողի՝ բառակազմական կարևոր նշանակությամբ, սակայն նրա իմաստը դեռևս լրիվ կերպով չի վերացականացել. ինչպես՝ ապարտաավար, բրիգադավար, բուլղոզերավար, խաղավար, խմբավար, համերգավար, էֆեկավատորավար, կաունկավար, մեջավար, մտաբավար (են) և այլն:

7. Փոխառյալ ամանցներ

§ 688. Հայերենի զարգացման սովետական շրջանում փոխառյալ ամանցներ առաջանում են զերազանցապես փոխառյալ ամանցավոր բառերի ամանցների գիտակցման և առանձնացման ճանապարհով:

Այսպես՝ հնդեվրոպական լեզուների -խտ ամանցը, որ միջազգային տարածում ունի, հայերենին է անցել փոխառյալ մի շարք բառերից, որոնց մի մասը վաղուց էր փոխառված. ինչպես՝ անաբխտ, ակախիտ, ալլիխտ, իլեխիտ, ինտերեցիտ, պրոպախտ, լեխիտ, մատերխիտ, նացիոնախտ, նացիա, պրոպագանդախտ, կինոդրամանախտ, մարաոնխտ, տեառիտ, տուրիտ և այլն, որոնք հայերենին են անցել զերազանցապես ուսուցիչի միջոցով և արտահայտում են սրել ուսմունքի, ուղղության հետևող, ներկայացուցիչ: Իրեն ամանց գիտակցվելով, -խտ-ը աստիճանաբար անշատում է փոխառյալ բառերից և իբրև առանձին, ինքնուրույն ամանց, զբղում նաև հայերեն բառերի վրա. ինչպես՝ մաուգերիտ, կնախտ⁵¹, բառիտ, դուրախտ և այլն:

Նույնը կարելի է ասել և -իզմ ամանցի մասին, որ գործածվում է աշխարհի շատ լեզուներում և լեզվաբանություն մեջ իրա-

⁵¹ Սրանք գործածական էին սովետական կարգերի առաջին տարիներին և այդ հասկացությունների վերացման հետ՝ աստիճանաբար դուրս եկան գործածությունից ու անյան պատիվ բառաչեղի բառերի շարքը:

վամբ համարվում է ինտերնացիոնալ ածանց, Այս ածանցով հայերենին են անցել փոխառյալ կապիտալիզմ, իմպերիալիզմ, լինինիզմ, մարտիզմ, մոդեռնիզմ, ռեալիզմ, ռումանիզմ, տուրիզմ, կլաօֆիզմ, նատուրալիզմ, սոցիալիզմ և այլն, որոնք արտահայտում են դանազան ուղղութիւնների (քաղաքական, գիտական և այլն), հասարակարգ, Արանով գեղես հայերեն սկզբնաձևերով բառեր չեն կազմվել, բացի դաշնակիզմ, հակասովետիզմ⁵⁹ և մի քանի խոսակցական բառերից, սակայն ածանցի իմաստը առանձին կերպով գիտակցվում է:

§ 689. Մի քանի բառերում (մասնագիտական) թերևս փոխառյալ նորագույն ածանց կարելի է համարել -իտ ածանցը, որ զործ է ածվում միայն քիմիական նյութերի նոր անվանումների կերակրիս: Այսպես՝ մամուլում հասնա հենք հանդիպում դուեիտ, կվարցիտ, սինեիտ, սերպենտիտ (քիմիական նյութերի անվանումներ են), գրաֆիտ, րենտոնիտ (կալի նոր տեսակ), սիլիկալցիտ (արհեստական քար), մոլիբդենիտ (արհեստական ձեկի), պեոլիտ (սպիտակեցնող ապակյա նյութ) և այլ տերմիններին: Արանով վերջին տասնամյակներում նոր տերմիններ են կազմվել նաև հայերեն սկզբնաձևերով (գերազանցապես տեղանուններով)՝ այսպես՝ արմենիտ, երևանիտ (քիմիական թել), լորենիտ, նաիրիտ, սևանիտ (են) և այլն:

§ 690. Հայոց լեզվի դարգացման սովետական շրջանում ուսուսերնից և ուսուսերնի միջոցով փոխառյալ մի շարք բառերում սկզբնին առանձին գիտակցվել -ֆիկացիա և -իզացիա ածանցների. ինչպես՝ գազիֆիկացիա, էլեկտրիֆիկացիա, հիդրոֆիկացիա, կլորաֆիկացիա, մորֆիկացիա և այլն: Արանք այժմ գործածական են -ում վերջածանցով. ինչպես՝ գազիֆիկացում, էլեկտրիֆիկացում, կլորացում և այլն: Արանց նմանակությամբ հայերեն հիբրով կազմվել են շերմաֆիկացում (ՍՀ) և հեռախոսաֆիկացում (են) բառերը:

§ 691. Գիտակցվեցին և լայնորեն ծավալվեցին ուսուսերնի հայրանունական -ովնա||-եկնա և -իշ||-ովիշ||-եկիշ ածանցները

(հմմտ. Գուրգեն Կարպիշ, Վարդան Սեդրակովիշ, Լյուսյա Ավետովան և այլն):

§ 692. Փոխառյալ որոշ բառերի հետ գործածվում են մի շարք ածանցներ. ինչպես՝ -իտ՝ պիտեոկրիտ (սՊիտեոկրիտի 50-ամյակը, ՍՀ), -իտեա՝ լենինիտեան, շերպոկրիտեան (սՀայ երգչուհու շերպպիտեանն օժեկերից Լենինգրադը, ՍՀ), -իազա՝ ալպինիազա, օլիմպիազա, սպարտակիազա և այլն, որոնց բառակազմական իմաստները թեև գիտակցվում են, սակայն դեռևս չեն զրվել հայերեն բառերի վրա. բացառությամբ համալսարանիազա բառի (սՊրցավենի էին բուժիկ համալսարանիազայի անցկացվող մրցումներին, ՀՖ), որ առավելագույն գործածական է ունիվերսիազա ձևով:

5. ԱՍՆԱՆՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՐՈՒՄԸ ԸՄՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

§ 693. Ածանցներն ըստ կազմության լինում են պարզ և բազաղրյալ:

§ 694. Պարզ են այն ածանցները, որոնք կազմված են մեկ ձևալից:

Սիբիականը՝ -Ակ, -ած, -ան, -արզ, -արկ, -ար, բաց-, -բար, -գար, գեր-, -գին, -գույն, -ն, -եղ, -եմ, -եսա, -ել, բեղ-, -ի, -իլ, -իկ, -ին, -ին, -իշ, -իվ, -ից, համ-, -հար, -մած, մակ-, -յան, ներ-, -ուշ, -ոն, -ոտ, -ոբ, -որեն, -որդ, -պան, -պն, -ստան, -վետ, վեր-, -ավոր, -ու, -ուկ, -ունի, -ում, -ույկ, -ուն, -ուն, -ուշ, -ուտ, -ուր, -բ և այլն:

§ 695. Բազաղրյալ են այն ածանցները, որոնք առաջացել են մեկից ավելի ածանցների ձուլումից:

Բազաղրյալ ածանցներն են՝
-Ալի||-ելի (ալ-ի||ել-ի)՝ անդառնալի, բունալի, հրաշալի, սիրելի, խոցելի, կարելի, անասուկելի՝ ալի||-ելի|| (ալ-իբ||ել-ի-բ՝ խաղալի, հավառալի, լսելի, շուշալիլի, սպառնալի), -ածու (ած-ու՝ րեկնածու, հավաբածու), -ալին (ա-ին՝ ամառալին, լեռնալին), -անակ (ան-ակ՝ հոնանակ, մրցանակ), -անիք (ան-ի-ք՝ քնտանիք, հարստիք), -անուտ (ան-ուտ՝ հորձանուտ, կիզանուտ), -անք (ան-ք՝ հուսանք, սահանք, փրկանք), -աստի

⁵⁹ Սկզբնաձևը կիսափոխառյալ է:

(աստ-ի՝ հավաստի, հավաստի), -ատակ (ատ-ակ՝ հիշատակ, վեր-լատակ), -արակ (ար-ակ՝ հասարակ, տավարակ), -արան (ար-ան՝ լարան, դասարան), -արեմ||-երեմ (ար-եմ||եր-եմ՝ հու-նարեն, շինարեն, հայերեն), արիմ||երթիմ (ար-իմ||եր-իմ՝ հավա-տարիմ, մտերիմ), -արթ (ար-թ՝ գործարթ, ստուգարթ), -ացի (աց-ի՝ կանացի, խելացի), -ացի՞ (աց-ի՞՝ վրացի, ֆաղափացի), -եղի (եղ-ի՝ աղանղի), -ենի (եան>են-ի՝ հայրենի, բզենի), -ենիք (եան>են-ի-ք՝ հայրենիք, ֆաղցրակենիք), -եցիկ (եց-իկ՝ գեղեցիկ, երգեցիկ), -իք (ի-ք՝ գործիք, բերքիք), -լիկ (լ-իկ՝ բրի-լիկ, շեկլիկ, բլիլիկ), -կակ (իկ-ակ՝ սեկակ, կարմրակակ), -կեկ (իկ-եակ՝ ծանրկեկ, լայնկեկ, բավկեկ), -կիկ (եակ-իկ՝ պատանեկիկ), -կեն (իկ-եան՝ ծակտակեն, հյուսկեն, ցանցկեն), -կոտ (ով-ոտ՝ բարկացկոտ, մրսկոտ, վախկոտ), -մում (ում-մ-ք՝ արամում, վար-մում, ումում), -լակ (ի-ակ>եակ>լակ՝ հոգլակ, աղավջակ, պատանլակ, վազգուլակ, լողուլակ և այլն), -ովի (ով-ի-ն՝ գլխովի, կնարովի), -ովին (ով-ի-ն՝ գլխովին, լիավին), -ոտի (ոտ-ի՝ հետտի, օտարտի), -ոտիք (-ոտ-ի-ք՝ հետտիք, փառտիք), -որակ (որ-ակ՝ ստանորակ, փտտորակ), -պատիկ (պատ-իկ՝ տաս-նապատիկ, կրկնապատիկ), -պեակ (պե-ակ՝ գրապեակ, բրդ-քապեակ), -ված (ու-ած՝ հարված, հողված), -վածք (ու-ած-ք՝ կերտվածք, հյուսվածք, վնասվածք), -վարի (վար-ի՝ բնկերտվա-րի, մարդավարի), -ուրյուն (-ուր-ի-ն՝ բնկերտություն), -ուլք (-ուլ-ք՝ զանուլք, կանուլք), -ունակ (ուն-ակ՝ պարզունակ, շարունակ, զո-հունակ), -ուլք (ուլք-ք՝ սերուլք, մարուլք, այրուլք, ուտուլք):

Մանր.— Բարդ ամանցների հետ շփոթք է շփոթել և զրոյթել մասնի գործածվող ամանցները, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է մաս-նակցում բառիմաստի բազազրոյթյանը: Միասին համախ են գոր-ծածվում -որդ և -ական (հմմտ. երկրորդական, որսորդական), -ող և -ական (դիտողական, լսողական, մտողական), -ական և -որեն (գրտականորեն, մարտականորեն), -ական և -պես (զրպա-նապես, վերջնականապես), -ական և -ուրյուն (իրականություն, պարտականություն), -ող, -ական և -ուրյուն (շտապողականու-թյուն, կատարողականություն, հետևողականություն), -ային և -ուրյուն (բարբառայնություն, մտայնություն, սկզբունքայնու-թյուն) և այլն:

Ս. ԱՍԵՆՅԵՆԻ ԳԻՄՆԱԿԱԿՈՒՄԸ ԸՍՏ ԵՐԱՆԸ ԿՈՍՏՐ ՄԱՍԵՐ ԿՈՍՏՆԻՍ ԵՆԱՆԱԿՈՒԹՅԱՆ

§ 696. Ամանցներն իրենց խոսքիմասակերտ-իմաստափոխա-կան յուրահատկությամբ մասնակցում են բառերի խոսքի մասս-լին իմաստների կազմությանը:

Ամանցների խոսքիմասակերտ նշանակությունը բնորոշ է մասնավորապես վերջածանցներին: Հայերենի նախածանցներից բառերի խոսքիմասային իմաստների կերտմանը մասնակցում են հիմնականում ժխտական նախածանցները (հմմտ. սեր-անսեր, խիղճ-անխիղճ). այս միայն այն դեպքում, երբ նախածանցները միանում են բառերի անվերջածանց հիմքերին, քանի որ նախ-ածանցի և վերջածանցի համատեղ գործածության դեպքում բառի խոսքիմասային նշանակությունը որոշվում է վերջածանցի միջո-ցով (հմմտ. անմիտ-անմտություն, անքտուն-անքնություն տգետ-տգիտություն, ապուշ-ապուշություն և այլն):

§ 697. Ժամանակակից հայերենի ամանցները, ըստ իրենց խոսքիմասակերտ գործառույթի, բաժանվում են երկու խմբի՝

Ա. Մեկ խոսքի մաս կերտող ամանցներ,

Բ. Մի քանի խոսքի մաս կերտող ամանցներ:

Ա. Մեկ խոսքի մաս կերտող ամանցներ

§ 698. Մեկ խոսքի մաս կերտող ամանցները բնդհանրապես մեծ թիվ չեն կազմում: Որքան ամանցը բազմիմաստ է, այնքան ավելի է օժտված տարբեր խոսքի մասեր կերտելու յուրահատկու-թյամբ. թեև բազմիմաստությունը կարող է հասուկ լինել նաև մեկ խոսքի մաս կերտող ամանցներին:

Մեկ խոսքի մասային իմաստ արտահայտող ամանցներից են՝

Գոյակաճակերտ ամանցներ

§ 699. Գոյակաճակերտ են այն ամանցները, որոնք գրվելով տարբեր անունների և բայարմատների վրա, առարկայական իմաստ են հաղորդում նրանց:

Գոյականակերտ նշանակութեամբ հանդես եկող վերջածանցներն են.

—Ալիք|լիքի՛ք հավատալիք, խոսելիք, երաշալիք, հաստենիլք, ստրանալիք, վճարելիք, օժանելիք և այլն:

—Անակ՝ գանձանակ, եղանակ, բնագանակ, հաղարանակ, մրցանակ, նոճանակ, զսպանակ և այլն:

—Անիք՝ բնասելիք, հարսանիք:

—Անի՛ աշխատանք, արհամարհանք, բերկրանք, երգանք, զրկանք, հարմարանք, հորձանք, նախերգանք, վիթվորանք, սանջանք, փշրանք և այլն:

—Անոց՝ արհեստանոց, բանջարանոց, գազանանոց, ծաղկանոց, որբանոց, կոպիկանոց, ատանոց, կիրգրամանոց և այլն:

—Արան (ար-ան)՝ անուններից և բայարմատներից կազմում է՝ ա) գերազանցապես անդի (ար կատարվում կամ գտնվում է մի բան) իմաստ արտահայտող գոյականներ. ինչպես՝ առողջարան, ապաստարան, բնակարան, զանազան, զործարան, զասարան, բանգարան, լսարան, կայարան, ուսումնարան, ննջարան, կախարան, սերարան, տեկարան, նստարան, պահարան, ստանդարան և այլն, բ) գրքի իմաստ ունեցող գոյականներ. ինչպես՝ ավետարան, սաղմոսարան, երգարան, քառարան, հանգարան, բժշկարան, աղարան և այլն:

—Ար՛ գործարք, լուծարք, ստուգարք և այլն:

—Ենիք՛ հայրենիք, հաղջրավենիք:

—Եր՛ ընդերք, լնդերք, կղզիք, սանդղիք և այլն:

—Եր՛ աշխարհակ, նշանդրիք, կողպիք, տնօրենիք:

—Ի՛ կարիք, տեսիլ, խաշիլ:

—Ի՛ք աղիք, խմիչք, քանիչք:

—Իր՛ բարիք, գործիք, ընթիլք, կարծիք, կեզծիք, շարիք:

—Մունք՛ արամունք, սամունք, բամանունք, զգացմունք, հարցմունք, հուզմունք, վարմունք, ցուցմունք և այլն:

—Յակ՛ (հոգյակ, կղզյակ, որդյակ, աղավնյակ, լողուլյակ, վազուլյակ, ստոցուլյակ և այլն):

—Յակ՛2 (նակ՛)՝ եռանդյակ, էռյակ, լուսնյակ, հատորյակ, շաքարոյակ, տասնամյակ, միամյակ և այլն:

—Յուն (նին՛ ին)՝ բայարմատներից և բնաձայնական բառն-

րից կազմում է «գործողութեան առարկայացված անուն» հանդիսացող գոյականների՝ բախյուն, գաշյուն, զոփյուն, զրդյուն, բրնդյուն, կոնջյուն, նողփյուն, ննչյուն, մոնչյուն, շրշյուն, շաշյուն, ստոյուն, պայրյուն, ստափյուն և այլն:

—Ոսիք՛ սկիտաիք, փորոսիք, հետոսիք:

—Ոց (տարբեր խոսքի մասերից կազմում է «տեղի, գործիքի, վրան կրելու առարկայի, գործողութեան անվան» նշանակությամբ գոյականների)՝ խարտոց, կտոց, հաստոց, մխոց, սպոց, ջնոց, կոռոց, սկնոց, ձանոց, գրապանոց, դարբնոց, բիկնոց, կապոց, ձմեռոց, ձեռնոց, մատնոց, հնոց, բախտոց, դպրոց, ծաղկոց, խշխշոց, շրխոց, ջարդոց, դրոցոց, ծլփոց և այլն:

—Չեք՛ ավելչեք, բերողչեք, գործողչեք, կարողչեք և այլն:

—Ված|ված՛ք անդձված, հավելված, հարված, հողված, Բերված, այրված, առցված, գործված, գրծված, խառնված, կավված, հյուսված, կտնուցված, իջված, վնասված, պատմված, կնցված և այլն:

—Ոյ՛ք գանույք, կանույք, խնջույք, հանույք, պիտույք և այլն:

—Ունիք՛ արհունիք, Արշակունիք, Ռշտունիք և այլն:

—Ունե՛ր ակունք, աստղունք, բարձունք, իրավունք, ծաղկունք, համեմունք, հիմունք, շրթունք, պաշտամունք, սկզբունք և այլն:

—Ուրդ՛ անուրդ, արձակուրդ, մոզովուրդ, խառնուրդ, խոհուրդ, կցուրդ, հագուրդ և այլն:

—Ուց՛ք այրուց, մոլուց, սերուց, ուռուց և այլն:

—Ուրյուն. կազմում է բազմաթիվ գոյականներ. ա) վերացական իմաստով (ածականներից, դերանուններից և գոյականներից)՝ ազնուրյուն, դամաճուրյուն, բնկերուրյուն, հիմարուրյուն, բանուրյուն, նորուրյուն, շինդուրյուն, մահուրյուն, նկունուրյուն, ինճուրյուն, սրպիտուրյուն, ոչնչուրյուն, ներսուրյուն, բարեկամուրյուն, գյուղացիուրյուն և այլն, բ) գործողութեան առարկայացված իմաստով (բայահիմքերից, բայարմատներից)՝ ազդեցուրյուն, զովարանուրյուն, հազրուրյուն, պաշտպանուրյուն, սպանուրյուն, ցեճուրյուն, փառաբանուրյուն, փոփոխուրյուն, զրպարուրյուն, ոտնձգուրյուն և այլն, գ) հոգնակի հավաքական իմաստով (գոյականներից)՝ աշակերտուրյուն, արհեստավորուրյուն,

բնավորություն, ուսանողություն, հայություն, զոյգացիություն, ուսուցչություն և այլն, գ) թանձրացածան գոյականների հիմնարկություն, նեոնարկություն, գրականություն, սահմանադրություն, վարչություն, կանոնադրություն և այլն:

-Ունի. կազմում է իգական սեռի հասարակ և հատուկ անձնանունների բժշկանի, դերասանների, արձակագրների (ԳՊ), բազումի, իշխանների, պարուների, հարևանների, հեռախոսավարների, մեջակցների, շնայիսնների, մանկկենների, երգչների, ֆրանսուների, խալսների, Սերուների, Վանուների, Տիգրանների, Վարդների, Նաիրուների, Պերեուների, Շաշուների և այլն:

-Ում. կազմում է բայանունների (բայարմատներից և բայահիմքներից)՝ արգելում, զգացում, զղում, զերում, թեմում, իրականացում, լուծում, կառուցում, կեղեմում, մարմնացում, մտանցում, հերշեղում, ոչեշացում, ամայացում, հեղուկացում, պահանջացում, փոշիացում, սեռացում, օճիպացում⁵³ և այլն:

Ույր՝ սասույր, ավանդույր, էլույր, գործառույր, կցույր, հանույր, նորույր, շահույր, շարույր, սիրույր, հատույր, հեղույր, բռուույր, բաղադրույր, նորույր, սովորույր և այլն:

-Ույկ՝ գրույկ, խառույկ, մակույկ, պարույկ:

-Ույց՝ զեկույց, կառույց, մատույց, սառույց, գրույց, հանգույց և այլն:

-Յի||ացի||-եցի. կազմում է անձի իմաստ արտահայտող գոյականների՝ սորեկ, սեղուտ բնակվող, աշխատող, սովորող, ժաղգի պատկանող իմաստներով: օրինակ՝ լեռեցի, բաղաբացի, երկրացի, մշեցի, տարեցի, սասուեցի, կովկասցի, կիրովցի, վանեցի, սպարտակցի, բամանցի, դաշտեցի, անեցի, կիպրուցի, պրագացի, լիավացի, սուեղուկյանցի, պոլիսխիթիկցի, մսուկացի, կուրսեցի և այլն:

Ք- զանազան խոսքի մասերից (գոյականներից, անականներից, բայարմատներից և բայահիմքներից) կազմում է գոյականներ, որոնցում անանցը կոնկրետացնող, առարկայացնող նշանակություն ունի. ինչպես՝ անցել, աչք, բարբ, աղիք, երկինք, լսելք,

⁵³ Չկրեկներն արդյունաբերական պրոցեսի անվանումներ են:

խնամք, ծայք, կարիք, հանք, հոսք, կայաք, կամք, տարիք, շարիք, հետք, փողք, մեքք, կտրծք, բերքացք, գիրք, բաժինք, գաղաքնիք, մտաք, չանք, հմայք, պլացք, հնաք, կառք, հայացք, վագք, տեսք, հանք, աղբք, էլք, զովք⁵⁴ և այլն:

Փ ո յ ա կ ա ն ն եր ի ա ծ ա ն ց ն եր

§ 700. Մրանք գոյականների մակարդակում զործառող իմաստափոխական անանցներ են և չունեն խոսքիմասակերտ գործառույթ: Մրանք զովքերով գոյական սկզբնածների վրա, կազմում են նոր իմաստով գոյականներ:

-Պան. գոյականներից կազմում է ասկզբնածների նշած գործով, մասնագիտություն գրավողի իմաստ ունեցող գոյականներ (Նմտ. աչքական, կտապան, հեղացան, պարսիկական, սալլացան, ուղտապան, ձիապան, բուժնտապան և այլն):

-պանակ. կազմում է սկզբնածների նշած առարկան պահելու տեղի իմաստով գոյականներ (Նմտ. զրապանակ, զրամապանակ, էտրուզապանակ, թղթապանակ, տետրապանակ և այլն), -ունի. զանազան անձնանուններից կազմել է մասնագիտության, ազգանվանական և այլ իմաստներով իգական սեռի անձնանուններ (Նմտ. իշխանուհի, զբաուհի, երգչուհի, դերասանուհի, հարևանուհի, հեռախոսավարուհի, թագուհի, շնայիտուհի, ֆրանսուհի, հայուհի, վրացուհի, Վանուհի, Վարդուհի, տիրուհի և այլն)⁵⁵,

-սառան. կազմել է գոյականների սկզբնածի նշած առարկայով հարուստ տեղի, այլն աշխարհագրական անդանվան իմաստով (Նմտ. ալբանաան, բուրստաան, ծաղկաստան, վարդաստան, Հայաստան, Վրաստան, Պարսկաստան, քարաստան և այլն):

Գոյականների անանցներ են նաև գոյականների մակարդակում զործառող նվազափազաբշական կամ կրակազվարող անանց-

⁵⁴ Փ անանցի շարիքով առարկայացնող, գոյականացնող իմաստ են ստանում նրա հետ բաղադրված մի շարք անանցներ. ինչպես՝ -աղբք|-էլքք, -անքք, -անք, -արք, -էլքք, -երք, -էք, -իք, -ուլք, -վածք և այլն:

⁵⁵ Այս անանցը խոսքիմասակերտ-իմաստափոխական գործառույթով հանգն է գալիս անական տեսակներից կազմված մի քանի իգական սեռի անանանունների շեք. ինչպես՝ Ազատուհի, Պեղուհի, Մարուհի, Սերուհի և այլն:

ներք, որոնք զոյականներին նորիմատային, նվազական կամ փազաբջական երանք են հաղորդում (հմմտ, մայրիկ, հայրիկ, լըճակ, տնակ, նավակ, զնշիկ, պոռակ, հորթիկ, սրտիկ, գնանակ և այլն):

Իմաստափոխական նշանակությամբ գոյականների մակարդակում հանդես են գալիս նաև զոյականակերտ (խոսքիմասականերտ-իմաստափոխական) ածանցներից շատերը. այսպես՝ -արյուն-ը հավաքական իմաստով զոյականներ է կերտում մի շարք զոյականներից (հմմտ. ընկերություն, գյուղացիություն, ժաանողություն, մարդկություն, հայություն և այլն), -ոց-ը՝ ակնոց, կալոց, անձեւոց, դարբնոց, կապոց, ննձնոց, մատնոց և այլն: Մակայն սրանք հիմնականում խոսքիմասակերտ-իմաստափոխական ածանցներ են:

Ածականակերտ ածանցներ

§ 701. Ածականակերտ ածանցները ածանցվող սկզբնաձևերին հաղորդում են առարկայի որևէ հատկության, որպիսություն կամ վերաբերության իմաստ: Բուն ածականակերտ ածանցներից են՝

